Ա. Ն. Մնացականյան

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
Институт истории

А. Н. МНАЦАКАНЯН

В. И. ЛЕНИН и ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА АРМЯНСКОГО НАРОДА

Издательство АН Армянской ССР
ЕРЕВАН 1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Պատմության ինստիտուտ

3К26
15-29

Ա.Ն. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Վ.Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

А II 28610

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 1963

Ներկա աշխատությունը փաստական հարուստ նյութի հիման վրա լուսաբանում է Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, հայ ժողովրդի որպես ցարական ու սուլթանական բռնակալական լծի տակ ընկած ժողովուրդներից մեկի հերոսական պայքարն իր ազգային ու սոցիալական ազատագրության համար։

Գրքում լուսաբանվում է Վ. Ի. Լենինի դերը հայ ժողովրդի ռևոլյուցիոն-ազատագրական պայքարի կազմակերպելու գործում, ինչպես նաև հայ ժողովրդի կողմից ցարիզմի և կապիտալիզմի դեմ մղած ազատագրական պայքարը, նրա ավանդը սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի գործում։

Գատ. խմբագիր ՄՈՐՈՒՍ ՀԱՍՐԱԹՅԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

ՍՄԿՊ Ծրագրում ընդգծված է, որ մենք անցել ենք «ժողովրդի երջանկության համար պայքարի մարտիկների արյունով ողողված հսկայական մի ուղի, փառապանծ հաղթանակների և ժամանակավոր պարտությունների ուղի, մինչև որ կոմունիզմը, որը մի ժամանակ սոսկ երազանք էր, դարձել է արդիականության մեծագույն ուժը, մի հսկաաբակարգ, որը կառուցվում է երկրագնդի հսկայական տարածություններում»[1]:

Փառապանծ հաղթանակների և ժամանակավոր պարտությունների այդ ուղին մեր երկրի ժողովուրդներն անցել են լենինյան պարտիայի ղեկավարությամբ: Լենինյան պարտիան,— ասված է ՍՄԿՊ XXII համագումարի ընդունած Ծրագրի մեջ,— «Ռևոլյուցիոն մի հոսանքի մեջ միավորեց սոցիալիզմի համար բանվոր դասակարգի պայքարը, խաղաղության համաժողովրդական շարժումը, հողի համար գյուղացիության պայքարը, Ռուսաստանի ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը և այդ ուժերն ուղղեց կապիտալիզմի տապալմանը»[2]:

Ազգային և սոցիալական ճնշման լծից ժողովուրդների ազատագրական պայքարի պատմությունը հետազոտելու մարքսիստական մոտեցման եղակիտը Վ. Ի. Լենինի հետևյալ պատգամն է.

«Սոցիալական անիտիր բոլոր հարցերը վերլուծելիս մարքսիստական թեորիայի անպայմանական պահանջն է՝ այդ հարցերը դնել որոշ պատմական շրջանակների մեջ, և ապա, երբ խոսքը վերաբերում է մի երկրի (օրինակ՝ տվյալ երկրի ազգային ծրագրին), կատարել այն կոնկրետ առանձնահատկությունների հաշվառումը, որոնցով այդ երկիրը, միևնույն պատմաշրջանի սահմաններում տարբերվում է մյուսներից»[3]: Լենինը պահանջում էր

---

[1] *ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը, Երևան, 1962, էջ 424։*

[2] *Նույն տեղում, էջ 430։*

[3] *Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 498—499։*

պատմական որոշակի դարաշրջանի հարցերը քննելիս, անպայման ելնել այն բանից, թե որոնք են տվյալ երկրի, տվյալ ժողովրդի ազգային հարցի և ազգային շարժումների կոնկրետ առանձնահատկությունները[1]:

Լենինյան այդ ելակետից քննելով Սովետական Հայաստանի բազմազգ իրավահավասար ժողովուրդներից մեկի՝ հայ ժողովրդի պատմական բախտը և նրա պայքարն իր ազգային ու սոցիալական ազատագրության համար, ակնհայտ են դառնում այդ բախտի ու պայքարի մի շարք կոնկրետ առանձնահատկությունները, որոնք իրենց դրոշմն են դրել հայ ժողովրդի բախտի, նրա կյանքի ու պայքարի վրա: Լենինյան մեթոդի լույսի տակ բացահայտվում են հայ ժողովրդի ներսում եղած սոցիալական անհաշտելի հակասություններն ու դասակարգային պայքարը, որոնք բնորոշ են եղել բոլոր ժողովուրդների համար:

Հայկական ռեակցիոն պատմագրությունը երկար տարիներ տարածել և այժմ էլ սիյուռքահայության մեջ քարոզում է այն «կոնցեպցիան», որ իբր թե Սովետական պետության հիմնադիր Վ. Ի. Լենինը և նրա կազմակերպած Կոմունիստական պարտիան ժխտողական վերաբերմունք են ունեցել դեպի հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, որ հայ լենինյանների համար «չկա Հայաստան», «չի եղել և չկա հայրենիք», «չի եղել և չկա ազգ և ազգային հարց»: Հայ ժողովրդի վերջին հարյուրամյա պատմության գլխավոր հանրագումարը և փորձը ցույց տվեցին, որ կղերաբուրժուական, դաշնակցական «տեսաբանների» դատողությունները զուրկ են հիմքից և հերյուրանքներ են, որ ճնշված ժողովուրդների թե՛ ազգային և թե՛ սոցիալական ազատագրման, նրանց անկախության ու ազգային պետականության ստեղծման, նրանց տնտեսական ու կուլտուրական առաջընթացը ցույց տվողը կոմունիստական դաղափարախոսությունն է, լենինյան պարտիան:

Վ. Ի. Լենինը և լենինյանները հայ ժողովրդի ազատագրման հարցը համարում էին մեր երկրի բոլոր ժողովուրդների ազատագրման հարցի անբաժան մասը, մի հարց, որը կարող էր լուծել միայն սոցիալիստական ռևոլյուցիան:

Մարքսիստ-լենինյանները տեղյակ էին հայ ժողովրդի պատմությանը, գիտեին, որ հայ ժողովուրդը դարերի ընթացքում անհավասար մարտերում մաքառել էր իր ազատագրության համար, բայց չէր հասել դրան:

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 500.

Հայ ժողովուրդը ճակատամարտել էր Տիգրանակերտում և Ավարայրում, բարձրացրել Զեյթունի և Սասունի ապստամբությունները, արյունահեղ դոյամարտեր է մղել Վանի ինքնապաշտպանության ժամանակ և Սարդարապատի ճակատամարտի օրերին. նրա զավակները ցարական կամ սուլթանական բանտերում, շղթայակապ մնացել են ըմբոստ, բարձրացվել են կախաղան, բայց չեն դրժել Աղատ Հայրենիքի ուխտը, հավատարիմ են մնացել սոցիալական ազատագրության իդեալին: Հայ աշխատավորները դասակարգային հերոսական մարտեր են մղել Մայիսյան հուշակալոր ապստամբության օրերին և քաղաքացիական կռիվների տարիներին: Այդպես ապրել ու պայքարել է հայ ժողովուրդը և ձգտել անկախության ու ազատության, խաղաղ աշխատանքի ու արդար համագործակցության, լույսի և քաղաքակրթության:

«Նոր պատմության մեջ քիչ կան այնպիսի ժողովուրդներ,— գրել է Վ. Ի. Լենինի ականավոր զինակից Սերգո Օրջոնիկիձեն,— որոնք տված լինեին այնպիսի մեծ զոհեր, ինչպես հայերը, և քիչ կան այնպիսի երկրներ, որտեղ թափված լիներ այնքան արյուն, որքան Հայաստանում»[1]: Այնուհետև, հայ ժողովրդի մեծ բարեկամը ցավով նշում է, որ «Վանի շրջակայքում, Ալաշկերտի հովտում և Հայաստանի մյուս վայրերում, ինչպես նաև ամբողջ Անատոլիայում փռված են հայ ժողովրդի ոսկորները»[2], դրա համար սանարգանքի սյունին գամելով Թուրքական ջարդարարներին և հայ ժողովրդի մյուս թշնամիներին:

Հայկական բուրժուական կուսակցությունները հայ ժողովրդի ազատագրական պայքարը մեկուսացնում էին հարևան ժողովուրդների պայքարից, սքողում էին դասակարգային հակասությունները և ձգտում էին հայ աշխատավորությանը ենթարկել բուրժուազիայի ազդեցությանը, խանգարել բոլոր ազգերի աշխատավորների միասնական ազատագրական պայքարը:

Հայ ժողովրդին այդ կորստաբեր ուղուց դուրս գալու և ազգային ու սոցիալական իսկական ազատագրության ուղին ցույց տվեց Վ. Ի. Լենինը:

Վ. Ի. Լենինի ստեղծած բոլշևիկյան պարտիան մեր երկրի ժողովուրդներին առաջնորդեց ռևոլյուցիոն պայքարի, կազմակերպեց ու ղեկավարեց աշխարհում առաջին սոցիալիստական պետությունը, որն ազատություն տվեց ցարիզմի կողմից ճնշված բոլոր ազ-

---

[1] «Заря Востока», 1 դեկտեմբերի 1925 թ.:

[2] Г. К. Орджоникидзе, Статьи и речи, т. 1, М., 1956, стр. 412.

գերի ժողովուրդներին, որոնց շարքում և բազմատանջ հայ ժողովրդին, «Լենինի պայծառ հանճարը, որի անունը կապրի հավիտյան, լուսավորում է մարդկության ուղին դեպի կոմունիզմ»[1]։

Լենինյան հանճարը լուսավորեց հայ ժողովրդին, նրան հաստատեց ազգային ու սոցիալական ազատագրման, ՍՍՌՄ ժողովուրդների ընտանիքում գծեց հայ ժողովրդի հետագա զարգացման ու բարգավաճման ուղին։

Հայ ժողովրդի կյանքում վճռական շրջադարձ կատարելու, նրան մեկուսացումից ու մղձավանջից դուրս բերելու, անվերջ հալածանքներից փրկելու և ապահով, խաղաղ, սոցիալիստական զարգացման լայն ուղի դուրս բերելու գործում Վ. Ի. Լենինի կատարած դերը տարբեր առիթներով նշվել է պատմագիտական ու քաղաքական գրականության երկերում[2]։ Սակայն նշված գրականության մեջ այդ թեմայի մասին խոսվում է Կոմունիստական պարտիայի պատմության և սոցիալիստական ռևոլյուցիայի համար մղված պայքարի հետ կապված ընդհանուր հարցերի տեսանկյունով, ընդգծելով Վ. Ի. Լենինի դերը որպես Կոմունիստական պարտիայի ստեղծողի ու առաջնորդի, որպես սոցիալիստական ռևոլյուցիայի ղեկավարի, որպես աշխարհում առաջին սոցիալիստական պետության կազմակերպչի։

Հարցի նման լուսաբանումը միանգամայն հիմնավոր է և հասկանալի, քանի որ հայ ժողովուրդը ցարական միապետության և սուլթանական միահեծանության լծի տակ ճնշված, իրավազուրկ ժողովուրդներից էր, որն իր սոցիալ-քաղաքական կյանքի պայմաններով բախտակից էր այդ երկրների ժողովուրդներին։ Վ. Ի. Լենինը մշակելով ռուսական ցարիզմի դեմ մղվող ռևոլյուցիոն պայքարի ծրագիրը և իրավազուրկ ժողովուրդների ազատագրման հարցերը, դրանով իսկ ցույց տվեց հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատության ուղին։ Հայ ժողովրդի զարգացման ու նրա պատմական բախտորոշման գործում Վ. Ի. Լենինի կատարած դերը բովանդակում է ընդհանուր հարցերից բացի նաև բազմաթիվ կոնկրետ հարցեր, որոնք վերաբերում են մասնավորապես հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրման, նրա բախտը որոշող

[1] ՍՄԿՊ Ծրագիր, էջ 3։

[2] Մենք նկատի ունենք Գ. Ղարիբջանյանի «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրումը» բրոշյուրը, որը լույս է ընծայել Ուսմանկհրատը 1960 թվականին, Բ. Հ. Լալարեկյանի «Վ. Ի. Լենինը և սովետական կարգերի հաստատումն ու ամրապնդումը Անդրկովկասում» գիրքը (Հայպետհրատ, 1961 թ.), ինչպես նաև այլ գրքույկներ և հոդվածներ, որոնք կհիշատակվեն տեքստի կոնկրետ հարցերի մասին խոսելիս։

կոնկրետ խնդիրներին, նրա անցյալին ու ժամանակակից պայքարին, որոնք կարիք ունեն հատուկ ուսումնասիրության։

«Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը» թեմայով աշխատություն ձեռնարկելով, մենք նպատակ ենք դրել հետազոտել և լուսաբանել՝ Վ. Ի. Լենինի գիտական, ռևոլյուցիոն-պարտիական և պետական բազմակողմանի գործունեության մեջ այն հիմնականը, որն անմիջականորեն վերաբերում է հայ ժողովրդին, նրա պատմության ընթացքում կատարված արմատական շրջադարձին, վեր հանել Վ. Ի. Լենինի դերը հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության գործում։ Դրան զուգահեռ անհրաժեշտ է ցույց տալ հայ ժողովրդի լայն զանգվածների տոգորվելը Լենինի գաղափարներով, հայ աշխատավորների համախմբումը Լենինի գրոշի շուրջը, նրանց պայքարը լենինյան գաղափարների հաղթանակի համար, նրանց ռևոլյուցիոն ազատասիրական տրադիցիաները։

ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեն և Սովետական Միության կառավարությունը բարձր են գնահատել հայ ժողովրդի անշեղ մասնակցությունը լենինիզմի գաղափարները կյանքում կենսագործելու համար մղված պայքարին։ Ն. Ս. Խրուշչովը Երևան քաղաքում արտասանած ճառում 1961 թ. մայիսի 6-ին ասել է. «Մեր երկրի բոլոր հսկայական հաջողությունների մեջ, լենինյան գաղափարների, Մեծ Հոկտեմբերի գաղափարների հաղթանակի համար մղված պայքարում աշխատանքի քիչ բաժին չունի ձեր ռեսպուբլիկայի ժողովուրդը։ Հայ ժողովուրդը դարերով բարեկամության սերտ, անխզելի կապերով է կապված ռուս մեծ ժողովրդի և մեր երկրի մյուս ժողովուրդների հետ։ Այդ բարեկամությունը, որն ըստեղծվել է օտարերկրյա զավթիչների, ցարական ինքնակալության, կալվածատերերի ու կապիտալիստների ճնշման դեմ երկարամյա պայքարում, հատկապես ամրապնդվեց Սովետական իշխանության համար մղված պայքարում, սոցիալիստական շինարարության տարիներին։ Հայաստանի աշխատավորները լուսավոր, ազատ կյանքի են հասել ռևոլյուցիոն պայքարի դժվարին և փշոտ ճանապարհով, Լենինի գրոշով, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները բոլոր հիմքերն ունեն հպարտանալու իրենց ռևոլյուցիոն տրադիցիաներով, իրենց մարտական անցյալով»[1]։

---

[1] Ն. Ս. Խրուշչով, Ճառ Երևան քաղաքում տեղի ունեցած հանդիսավոր նիստում, նվիրված Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման 40-ամյակին, 1961, էջ 6։

Այդ տրադիցիաները ստեղծվել և բազմապատկվել են եղբայրական ժողովուրդների հետ սերտ համագործակցության մեջ։ Հայ ժողովրդի զգալի մասը, հայտնի է պատմությունից, ինչպես ընդգծեց Ն. Ս. Խրուշչովը, զանազան պատճառների ու հանգամանքների բերումով զրկվել է իր Հայրենիքից, «ծանր վիճակը աշխարհով մեկ ցրիվ է տվել հայ ազգը»[1]։ Դա նրա պատմական բախտի յուրահատուկ կողմերից մեկն է։ Այստեղից էլ հետևում է այն, որ հայ ժողովրդի պատմական բախտի մեջ Վ. Ի. Լենինի կատարած դերի և լենինյան գաղափարների կենսագործման համար մղված պայքարում հայ բանվորների ու գյուղացիների ունեցած մասնակցության հարցերը պետք է լուսաբանել ցարական միապետության բոլոր մասերում ռուսների և եղբայրական ուրիշ ազգերի աշխատավորների հետ համատեղ պայքարի մեջ, ցույց տալ հայ աշխատավորության դասակարգային համերաշխությունը այն բոլոր աշխատավորների հետ, որոնք ենթարկվում էին ցարիզմի և կապիտալիզմի ճնշմանը, ձգտում էին հերոսական պայքարով հասնել սոցիալական և ազգային ազատագրության։

ՍՄԿՊ Կենտկոմի 1963 թ. Հունիսյան պլենումը պարտիայի գաղափարական աշխատանքի հիմնական ուղղություններից մեկը, որի վրա պետք է կենտրոնացներ ջանքերը, համարեց «ժողովրդին սովետական հայրենասիրության և սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելը, վճռական պայքարը հակակոմունիզմի, բուրժուական գաղափարախոսության բոլոր ձևերի դեմ»։ Կենտկոմի պլենումը ընդգծեց, որ «Սովետական հայրենասիրության, մեր սոցիալիստական հայրենիքի, Սովետական Միության կոմունիստական մեծ պարտիայի նկատմամբ սիրո դաստիարակությունը գաղափարական աշխատանքի կարևորագույն, առաջնահերթ խնդիրն է։ Սովետական մարդիկ հայրենասիրական հպարտություն են տածում իրենց սքանչելի հայրենիքի համար, իրենց լենինյան մեծ պարտիայի համար»[2]։

«Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը» աշխատությունը հենց այդ մեծ նպատակին է ծառայում։

Աշխատության հիմնական նյութը քաղված է Վ. Ի. Լենինի հրապարակված և չհրապարակված աշխատություններից, պարտիական կենտրոնական արխիվում պահվող Վ. Ի. Լենինի ֆոնդի

---

1 «Պրավդա» թերթը, 7 մայիսի 1961 թ.։

2 «Սովետական Հայաստան», 23 հունիսի 1963 թ.։

նյութերից, Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի արձանագրություններից ու որոշումներից, պարտիայի Կենտրոնական Կոմիտեի ֆոնդերի փաստաթղթերից, հին բոլշևիկների ընկերության ֆոնդի նյութերից, այնուհետև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի կենտրոնական արխիվում պահվող ՌՍՖՍՌ Ժողկոմսովետի ֆոնդից, որտեղ գտնվում են Վ. Ի. Լենինի ստորագրած բոլոր արձանագրությունները, նրա անունով ստացված գրագրությունները, և վերջապես ՌՍՖՍՌ Կենտգործկոմի ֆոնդի գործերից։

Լայն չափով օգտագործված են Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Բաքվի, Երևանի, Կիևի, Օդեսայի, Դնեպրոպետրովսկի արխիվների ֆոնդերի այն նյութերը, որոնք վերաբերում են քննարկվող թեմային։ Օգտագործված են նաև պարբերական մամուլում տպագրված համապատասխան փաստաթղթեր, նամակներ, հոդվածներ, հուշեր, ինչպես նաև թեմային առնչվող հրապարակված գրականությունը։

* * *

Հեղինակը հավակնություն չունի սույն աշխատության մեջ ընդգրկել և լուսաբանել հայ ժողովրդի ազատագրական պայքարի ղեկավարման գործում Լենինի կատարած դերի և հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրության պատմության բոլոր հարցերը։ Դրանք շատ են։ Մեզ համար դեռևս անմատչելի են արխիվային բազմաթիվ փաստաթղթեր, մանավանդ արտասահմանյան աղբյուրներից։ Հետագա ուսումնասիրությունները հնարավորություն կընձեռնեն բարձրացնել քննարկվող պրոբլեմի այլ կողմեր, նոր հարցեր։ Հարկ կլինի ստեղծել հատուկ աշխատություններ, նվիրված հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության առանձին դրվագներին, գրքեր՝ հայ լենինյանների սերընդի մասին, հայ ազգային-ազատագրական շարժման հերոսների մասին։

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ
ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐՆ ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(1890 — 1916)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՃՆՇՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՆՏ». ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՆ «ԲԱՆՏԻ ՄԵՋ ԲԱՆՏ»

Վ. Ի. Լենինը դեռևս իր ռևոլյուցիոն գործունեության վաղ շրջանում խորապես ուսումնասիրելով Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների սոցիալ-տնտեսական վիճակը և մշակելով բանվոր դասակարգի ազատագրման պայքարի հարցերը, այդ պայքարի բաղկացուցիչ մասն էր համարում ճնշված ազգերի ազատագրման խնդիրը։ Լենինն անողոքաբար դիմակազերծ էր անում ցարիզմի քաղաքականությունը Ռուսաստանում ապրող ճնշված ազգերի նկատմամբ։

Ցարական Ռուսաստանը,— գրել է Վ. Ի. Լենինը,— «խաղաղ ժամանակ էլ ազգերի ճնշման համաշխարհային ռեկորդ է շահել շատ ավելի բիրտ, միջնադարյան, տնտեսապես հետամնաց, ռազմա-ֆեոդալական իմպերիալիզմի հիման վրա»[1]։ Վերլուծելով ցարական կառավարության պաշտոնական վիճակագրական տվյալներն ազգաբնակչության կազմի մասին, Լենինը հատուկ կանգ էր առնում այն փաստի վրա, որ ռուսական միապետության տիրապետությանը ենթակա բնակչության միայն 43 % վելիկոռուսներ էին, իսկ 57 % իրավազուրկ, ճնշված ազգերը[2], որոնց ռուս ազնվականներն՝ ցարական սատրապներն անվանում էին «այլազգիներ»։ Նրանց արհամարհում էին, վիրավորում և դաժանորեն շահագործում։ Վ. Ի. Լենինը շատ անգամ օգտագործել է ֆրանսիացի

---

[1] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 22, էջ 484—485։

[2] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 20, էջ 264—265։

գրող Կյուստինի արտահայտությունը, թե Ռուսական կայսրությունը անսահման է, բայց ոչ այլ ինչ է, քան բանտ, որի բանալին գտնվում է կայսրի մոտ։ «Ռուսաստանը ժողովուրդների բանտ է»,— ընդգծում էր Վ. Ի. Լենինը[1]։

Արևելահայ աշխատավորությունն իր վրա կրում էր ցարական «ժողովուրդների բանտի» ամբողջ ծանրությունը։ Սակայն հայ ժողովուրդը դժբախտություն ուներ գտնվելու ոչ միայն ռուսական կայսրության, այլև օսմանյան բռնակալական լծի տակ։ Գիտական կոմունիզմի հիմնադիրներից մեկը՝ Ֆ. Էնգելսը 1894 թվականին ընդգծել է, որ հայ ժողովուրդը դժբախտություն ունի գտնվելու թուրքական բռնապետության Սցիլլայի և ռուսական բռնապետության Խարիբդայի միջև[2]։ Վ. Ի. Լենինը գյուղացիների շահագործման միջնադարյան բարբարոսական ձևերի և ժողովրդի ստրկական վիճակի մասին խոսելիս նշում էր, որ այդ եվրոպական-քաղաքակրթական չէ, «այդ թուրքերեն է»[3]։ Թուրքական բռնապետական լուծը ավելի դաժան և ավելի ծանր էր։

Հայ հանճարեղ երգիծաբանը հաղար անգամ իրավացի էր, երբ ասում էր. «Տանկաստանի մեջ բանտ, բանտի մեջ բանտ»[4]։ Իրոք Թուրքիայում հայերը և մյուս ազգերն անցյալում գտնվում էին, այժմ էլ գտնվում են այդ վիճակի մեջ։ Օսմանյան սուլթանների բռնակալությունը և նրա ժառանգորդ «Երիտասարդ Թուրքերի» դիկտատուրան հանդիսացան համաշխարհային ռեակցիայի հենարանը Մերձավոր Արևելքում։ Նույնը կարելի է ասել ժամանակակից Թուրքիայի կառավարող ռեակցիոն կարգերի մասին։

Այստեղ անհրաժեշտ է փաստական որոշ տվյալներ բերել և դրանց վերլուծման միջոցով լուսաբանել հայ ժողովրդի տնտեսական-քաղաքական կյանքի պայմանները XIX դարի վերջերում և XX դարի սկզբներում, այնուհետև, կոնկրետացնելով, ցույց տալ, որ Վ. Ի. Լենինը մշակելով ցարական Ռուսաստանում ճնշված ազգերի ազատագրման խնդիրները, պարզաբանում էր նաև այդ ազգերից մեկի՝ հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության ուղիները։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 265։
[2] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Երկեր, հատ. 29, էջ 341 (ռուսերեն 1-ին հրատ.)։
[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 228 (ընդգծումը մերն է—Ա. Մ.)։
[4] Հակոբ Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 11, էջ 39։

2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՑԱՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԲՌՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԻ ՏԱԿ

Հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական կյանքը ունեցել է մի շարք առանձնահատկություններ: Ամենից առաջ Հայաստանը, երկար դարեր հանդիսացել է հզոր նվաճողներից կախման մեջ ընկած, ինքնուրույն պետականությունը կորցրած, մասնատված մի երկիր: Վերջին չորս դարերում Հայաստանի Արևմտյան մասը գտնվում էր Թուրքիայի, Արևելյան մասը՝ Իրանի, իսկ XIX դ. սկզբներից Ռուսական կայսրության տիրապետության տակ: Հայ ժողովրդի մի ստվար հատվածը ցրված էր Ասիայի, Եվրոպայի, Ամերիկայի, Աֆրիկայի տարբեր երկրներում, կազմելով հայկական փոքր ու մեծ գաղութավայրեր:

Եվրոպական պետությունների, Ռուսական կայսրության և հայկական եկեղեցու կողմից կատարված մասնակի վիճակագրությունների հիման վրա, շատ անգամ է խոսվել հայ ժողովրդի քանակական կազմի մասին և մեծ մասամբ վիճելի հանրագումարներով: Դրա պատճառը եղել է այն, որ Թուրքիայում ու Պարսկաստանում չեն եղել կանոնավոր մարդահամարներ, իսկ անցյալ դարի վերջերից Թուրքիայի մարդահամարները դիտավորյալ կեղծում էին երկրի ոչ թուրք բնակչության քանակը, խիստ նվազեցնելով այն, մանավանդ երբ խոսքը վերաբերում էր հայերին, հաշվի առնելով հայկական հարցի սրված բնույթը: Համենայն դեպս, դրանք այն հնարավոր աղբյուրներն են, որոնց հետ պետք է հաշվի նստել, քանի որ այլ ստույգ տեղեկություններ հայտնի չեն:

Միջազգային իրավունքի ինստիտուտի անդամ Մ. Գ. Ռոլեն-Ժեկմենը, 1895 թվականին գրած «Հայաստանը և հայերը» հետազոտության մեջ քննելով հայ ժողովրդի քանակական կազմի մասին տարբեր հեղինակների բերած նյութերը, հանգում է այն եզրակացության, որ 1889 թվականին ամբողջ աշխարհում հաշվվում էր մոտ 6.000.000 հայ բնակչություն[1]:

Կարլ Մարքսը արևելյան հարցի պատմությանը նվիրված իր մի հոդվածում 1854 թվականին նշել է, որ Օսմանյան կայսրությանը ենթակա բնակչության մեջ կան 2.400.000 հայ լուսավորչականներ[2]: Նույն տեղում Մարքսը խոսում է 900.000 կաթոլիկների մասին, որոնց կեսից ոչ պակասը նույնպես հայեր են եղել:

---

[1] Տե՛ս «Положение армян в Турции», М., 1896, стр. 10—11.

[2] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 10, М., 1958, стр. 171.

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2 ԱԿԱԴԵՄԻԱ

A 98610

Այսպիսով, ըստ Կ. Մարքսի բերած տվյալների, XIX դարի կեսերին Թուրքական տիրապետության տակ գտնվող հայ բնակչությունը կազմում էր մոտ 3 միլիոն։ Եթե հաշվի առնենք նաև բնակչության բնական աճը, ապա 1900-ական թվականներին Թուրքիայում հայերի քանակը պետք է կազմեր երեք միլիոնից էլ ավելի։

Ստ. Շահումյանին գրած նամակներից մեկում Վ. Ի. Լենինը պահանջում էր վիճակագրական տվյալներ Կովկասի ազգությունների մասին։ Ստ. Շահումյանը 1913 թվականին Վ. Ի. Լենինին ուղարկած նամակներից մեկում հայտնում է, որ Կովկասում հայ բնակչության թիվը կազմում է 2 միլիոն[1]։

Հայեր ապրում էին նաև Ռուսական միապետության այլ նահանգներում։ Բազմահազար բնակիչներով հայկական գաղութներ կային նաև Մոսկվայում, Հյուսիսային Կովկասում, հատկապես Ռոստովի Նախիջևանում, Աստրախանում, Ղրիմում, Բեսարաբիայում, Միջին Ասիայում և Ռուսաստանի այլ վայրերում ու քաղաքներում։

Պրոֆ. Լեոն զանազան աղբյուրների համեմատական ուսումնասիրության միջոցով նշել է, որ դեռևս 1845 թվականին Թուրքիայում հայ բնակչությունը կազմել է 2.500.000 մարդ՝ որը Օսմանյան պետության վիճակագրական պաշտոնական թիվն է։ Իսկ «Հայոց հարցի վավերագրերը» գրքում բազմավաստակ գիտնականը նշել է, որ 1870-ական թվականներին Թուրքիայի տիրապետությանը ենթակա Արևմտյան Հայաստանում, Եգիպտոսում, Բալկաններում և այլ երկրներում ապրում էին ոչ պակաս քան 3.000.000 հայեր[2]։

Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը ոչ միայն գաղթավայրերում, այլև նույնիսկ հայրենի հողի վրա, Արևելյան և Արևմտյան Հայաստանի նահանգներում ապրում էր ոչ թե կոմպակտ, այլ շերտընդմեջ այլ ազգությունների ժողովուրդների, հատկապես թուրքերի, ասորիների, քրդերի և ադրբեջանցիների հետ։ Այսպես, օրինակ՝ 1897 թ. մարդահամարի տվյալներով Երևանի նահանգում հայ հաշվվում էր 439.926 մարդ (կամ բնակչության ընդհանուր կազմի 53,63 %), ադրբեջանցի 313.176 մարդ (կամ 37,75 %), ռուս 15.937 մարդ (կամ 1,92 %), վրացի 588 մարդ (կամ 0,67 %), քուրդ՝ 49.389 մարդ (կամ

---

[1] См. журнал «Исторический архив» № 2, 1957, стр. 50.

[2] Լեո, *Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 83։*

5,96 %) և այլն. Թիֆլիսի նահանգում — հայերը կազմում էին 196.189 մարդ (18,67 %), վրացի 468.537 մարդ (44,49 %), ադրբեջանցի 107.383 մարդ (10,22 %), ռուս՝ 85.772 (8,16 %), օսեր՝ 67.263 (6,4 %). Դանձակի նահանգում— հայ՝ 298.790 (31,49%), ադրբեջանցի 557.882 մարդ (61,52 %), ռուս 19.936 (2,2%). Բաքվի նահանգում—հայ 52.768 (6,48 %), ադրբեջանցի 667.248 (30.72 %), ռուս՝ 78.002 մարդ (9,43 %), վրացի 1.639 (0,19 %). Քութայիսի նահանգում — հայ 24.043 մարդ (2,29 %), վրացի 989.235 մարդ (93 %), ռուս 23.443 մարդ (2,21 %) և այլն[1]։ Այսպիսով, Կովկասում և Արևելյան Հայաստանում բնակչությունն ուներ բազմազգ կազմ և հայերը ցրված էին բոլոր նահանգներում ու գավառներում։

Հայ բնակչության ցրվածությունը բնորոշ էր նաև Արևմտյան Հայաստանի նահանգներում։ Բերենք հայկական վեց վիլայեթների մասին հայկական պատրիարքության վիճակագրության նյութերը։

1. Էրզրումի (Կարինի) վիլայեթում 1881 թվականի տվյալներով ապրում էին հայեր 136.147, թուրքեր՝ 105.565, քրդեր՝ 65.644, կզլբաշներ՝ 23.858, չերքեզներ՝ 1.202, հույներ՝ 1.315 շունչ։

2. Սրվազի (Սեբաստիայի) վիլայեթում — նույն ժամանակ ապրում էին հայեր՝ 243.515, թուրքեր՝ 268.456, քրդեր և կզլբաշներ՝ 337.154, չերքեզներ՝ 88.820, հույներ 5.141։

3. Տիգրանակերտի (Դիարբեքիրի) վիլայեթում — թուրքիայի իրավաբանական մինիստրության 1892 թվականի տվյալներով — հայեր՝ 79.129, թուրքեր 110.644, քրդեր՝ 200.000, չերքեզներ՝ 10.000, սիրիական արաբներ՝ 8.000, այլ քրիստոնյաներ (հույներ, ասորիներ և այլն)՝ 132.549։

4. Խարպուրի (Խարբերդի) վիլայեթում — հայկական պատրիարքության 1881 թվականի տվյալներով — հայեր՝ 107.059, թուրքեր՝ 91.114, քրդեր՝ 78.250։

5. Բիթլիսի վիլայեթում — հայկական պատրիարքության տրվյալներով 1881 թ. եղել են — հայեր՝ 130.460, թուրքեր՝ 8.350, քրդեր՝ 12.771։

6. Վանի վիլայեթում — հայկական պատրիարքության տրվյալներով 1881 թվականին հաշվվում էին հայեր՝ 133.859, թուր-

---

1 Տվյալները բերվում են ըստ Ռուսական կայսրության բնակչության 1897 թ. ընդհանուր մարդահամարի թվերի, հրատ. 1908 թ. ս. Պետերբուրգ (ռուսերեն)։

քեր՝ 18.929, քրդեր՝ 88.047, ասորի-նեստորյաններ՝ 88.338, եզդիներ՝ 5.860, հրեաներ՝ 1.328, չերքեզներ՝ 750 մարդ[1]։

Հայ բնակչությունը ցրված էր նաև Թուրքական միապետության մյուս վիլայեթներում։ Մեծ թվով հայեր էին ապրում Տրապիզոնում, Իզմիրում և մյուս քաղաքներում։ Միայն Կոստանդնուպոլսում 1880-ական թվականներին հաշվվում էր մոտ 150.000 հայ բնակիչ[2]։

Հայկական վիլայեթներում և սանջակներում վարչական բոլոր պաշտոնները գտնվում էին սովորաբար Թուրքերի, իսկ առանձին դեպքերում պետությանը ծառայաղրված — այլազգիների՝ քրդերի և այլոց ձեռքին։ Նույնը պետք է ասել դատական օրգանների մասին։ Ոստիկանությունն ու զորքը կազմված էին Թուրքերից։ Խոսքի, մամուլի, ժողովների, կազմակերպությունների և միտինգների ազատության մասին խոսք լինել չէր կարող։ Աշխատավոր ժողովուրդը զրկված էր քաղաքական իրավունքներից։

Արևմտյան Հայաստանն ուներ բնական անսպառ հարստություններ, համարյա բոլոր տեսակի հանածոներ, սակայն դրանք չէին ծառայում ժողովրդին։ Երկրի հողը, առատ արևը, ջուրը ապահովում էին աճեցնելու ցորեն, խաղող, պտուղներ, բանջարեղեններ և այլն, ամենը՝ ինչ անհրաժեշտ է բարվոք կյանքի համար, որից զուրկ էր աշխատավորությունը։

Թուրքիայի հայ գյուղացին կամ քաղաքի բանվորն ու արհեստավորը տառապում էին կարիքի մեջ։ Հազարավոր վավերագրեր են հրապարակվել ռուսական, եվրոպական, հայկական մամուլում ու գրականության մեջ։ Հայ հրապարակախոսներից մեկը Արևմտյան Հայաստանը «ավերակների և սխրության աշխարհ» է անվանել[3]։ Հայը վճարում էր պետական հարկեր, հարկահանը քմահաճորեն սահմանված կրկնակին ու եռակին էր վերցնում. հայ քաղաքացին մի-մի արդյունագործական, տնայնագործական, առևտրական ձեռներեցություն էր հանդես բերում, «փաշան, կայմակամը, մյուդիրը, փաշայի օգնականը, նրա քարտուղարը... ամենքը իրենց մասն էին պահանջում հայից»[4]։

---

1 «Сборник дипломатических документов», Реформы в Армении, Петроград, 1915, стр. 276—286.

2 «Гранат», т. 13, стр. 59.

3 Ա. Թոխմախյան, *Հայրենիքի պահանջները և հայ գյուղացիք, Թիֆլիս, 1881, էջ 59։*

4 Գրիգոր Աբծուն, *Թուրքահայերի տնտեսական դրությունը, 1894, էջ 30։*

1880 թ. Մուշի հայ բնակչության կազմած հանրագրում ասված է. «...տխուր է հայուն վիճակը Հայաստանում, ամեն տեղ կը տեսնվեն թշվառություն, զրկանք, աղքատություն: Հայն իր ընտանիքին տարիներով հետու ապրելու կամ լավ ևս է ասել՝ փտելու դատապարտված, յուր սեփական արտը և ուրիշ հողերը թյուրքին, քրդին կամ անխիղճ վաշխառուին դիջանելու ստիպված, ծանր պարտուց ներքև ընկճվելով, զանոնք վճարելու համար պանդխտության դիմած է»[1]:

Օսմանյան իշխանությունների թույլտվությամբ բեգերը և պաշտոնյաները զանազան պատրվակներով բացարձակորեն կողոպտում էին աշխատավորներին: Պրոֆ. Լեոն նշում է, որ 1876 թվականին հայաբնակ 276 գյուղերի բնակչության հողերի մեծ մասը զավթել են բեգերն ու թուրք պաշտոնյաները: Նա տեղեկություններ է բերում, որ հափշտակել էին հայերից 26.185 արտ, 2.591 տուն, 1.190 այգի, 2.007 մարգ (բոստան), 1.066 շինություն, 460 արտավայր: Գրավված հողերը կազմում են 1.030.000 օրավար[2]:

Միք. Նալբանդյանը նկարագրելով հայ ազգի թշվառությունները, գրել է. «Մենք սարսափում ենք, երբ աչք ենք ձգում այն անշքացած, անապատացած աշխարհի վերա, ուր երբեմն փոզփոզում էր Արշակունյան հաղթակիր դրոշակը, ուր այժմ մեր խեղճ, անտեր ու անօգնական ժողովուրդը միլիոնավոր բազմությամբ թշվառության, հարստահարության և հուսահատության մինչև հընարավոր ծայրը հասած, փոխանակ արտասուքի, արյուն է քամում աչքերից, երբ լաց է լինում, և ուր... վամպիրները տակավին չեն կշտանում անմեղ զոհի՝ խեղճ ժողովրդի արյունը ծծելուց»[3]:

Տնտեսական հարստահարությանը պետք է ավելացնել ազգային խարականությունը, ճնշումը, հալածանքը, բռնի ասիմիլյացիան, մենթալիտետ ջարդերը:

Չնայած դաժան այդ խրականությանը, աշխատավոր հայ ժողովուրդը մեծ ջանքեր գործադրելով, բոլոր հնարավոր միջոցներով առաջ էր տանում իր կուլտուրական կյանքը: Արևմտյան Հայաստանի տնտեսական կյանքին մոտիկից ծանոթ գիտնականները հետաքրքիր պատկերներ են նկարագրել: Այսպես, օրինակ, այդ գիտնականները հիացմունքով են խոսել այն մասին, թե ինչպես Քյոպ-

---

1 «Մասիս», 1880, № 2644։

2 Լեո, Թուրքահայ հեղափոխական դաղափարախոսություն, Փարիզ, 1924, հատ. Ա, էջ 51։

3 Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, 1940, էջ 103։

րիքեյում հայ վարպետները կառուցել էին մի կամուրջ, որի կամարներն ամբողջ Անատոլիայում իրենց նմանը չունեին։ Սեբաստիայի սուրբ Նշան վանքի ներսի պատերը և ամբողջ հատակը ծածկված էր բարձրարվեստ խճանկարով (մոզաիկայով)։ Պատմագրության և հնագիտական նյութերի մեջ հետաքրքիր փաստեր կան, թե ինչպես Եփրատի ափերին, Կամախի մոտ, հայերը կառուցել էին ժայռափոր ստորերկրյա պալատներ, դահլիճներով, սրահներով, սենյակներով, որոնք հանդիսանում են հայ ժողովրդի ճարտարապետական-կառուցողական հանճարի կոթողներ։

Մինչդեռ թուրքական տիրապետության տակ հայ աշխատավորը զրկված էր իր նախորդների կառուցածները բազմապատկելու, կատարելագործելու և ավելի առաջ տանելու հնարավորությունից։ Ավելին, հայ ժողովրդի անցյալի այդ հրաշալի հուշարձանները կամ ավերվել, կործանվել էին, կամ մատնվել մոռացության ու քայքայման։

Արտադրողական ուժերը կաշկանդված էին արևելյան-ֆեոդալական կապանքներով։

Ի՞նչ ընթացք ունեցավ XIX դարում Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստանի բնակչության կյանքը։ XIX դարի առաջին երեք տասնամյակներում մղված պայքարը հասցրեց Արևելյան Հայաստանի ազատագրմանը իրանական բռնապետությունից և նրա միացմանը Ռուսաստանին։ Դա տեղի ունեցավ մի կողմից ռուսական միապետության դեպի Անդրկովկաս և Մերձավոր Արևելք շարժվելու, նոր տերիտորիաներ նվաճելու, հարավում իր սահմաններն ընդարձակելու ձգտման և մյուս կողմից՝ Ռուսաստանին միանալու համար հայ ժողովրդի մղած համառ ազատագրական պայքարի հետևանքով։

Ռուսաստանին միանալը Արևելյան Հայաստանի պատմության մեջ շրջադարձային նշանակություն ունեցավ։ Հայերը, ինչպես նաև Անդրկովկասի մյուս ժողովուրդները, ոչ միայն պահպանեցին իրենց ազգային կուլտուրան և ավելի զարգացրին այն, այլև հաղորդակից դարձան Ռուսաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքին, հայ ժողովրդի արևելահայ հատվածի բախտը կապվեց ռուս ժողովրդի բախտի հետ։ Հայաստանի միացումը Ռուսաստանին բարերար ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական հետագա առաջադիմության վրա։ Ռուսաստանում ճորտատիրական կարգերի ճգնաժամը հասցրեց 1860—1870 -ական թվականների բուրժուական ռեֆորմ-

ներին, որոնցից հետո ինչպես ցարական միապետության մեջ մըտնող մյուս երկրները, շատ թե քիչ չափով նաև Անդրկովկասը, մտավ կապիտալիստական հարաբերությունների ոլորտի մեջ։

Այստեղ հարկ չկա հանդամանորեն խոսելու Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական առաջադիմական նշանակության մասին, այդ հարցը գիտական անհրաժեշտ խորությամբ և լայնորեն լուսաբանված է սովետահայ գիտնականների պատմական, տնտեսագիտական, գրական, բանասիրական, արվեստագիտական հարցերին նվիրված մի շարք երկերում[1]։

Ռուս ժողովրդի բախտի հետ իր բախտը կապած հայերը զարգացնում էին իրենց տնտեսությունը և կուլտուրան։ Ռուսական միապետության կազմի մեջ մտած Արևելյան Հայաստանի ժողովուրդը, իհարկե, ենթարկվում էր ցարիզմի գաղութարարական քաղաքականությանը և շահագործվում էր մյուս փոքր ազգերի աշխատավորների հետ միասին։ Այդ մասին կխոսվի իր տեղում, այստեղ խոսքը վերաբերում է Հայաստանը Ռուսաստանին միացնելու դրական հետևանքներին, քանի որ այդ միացումը կարևոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի զարգացման, նրա պատմական բախտի համար։

Հայ բնակչությունն Անդրկովկասում և Ռուսական ամբողջ կայսրության մեջ հարևան ժողովուրդների համեմատությամբ ապրում էր ավելի արագ։ Այն տեղի էր ունենում գերազանցապես Արևմտյան Հայաստանից հալածված հայերի փախուստի և Կովկասում վերաբնակվելու հետևանքով։ Կովկասում և Ռուսաստանի մյուս երկրամասերում հայերը վերաբնակվում էին այնտեղ, ուր աշխատանք և ապրուստի միջոցներ էին գտնում, որովհետև Կովկասյան ադմինիստրացիան այդ հարցով ոչ միայն չէր մտահոգված, այլև տրամադրված էր խիստ բացասաբար։

Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական հարաբերությունների

---

[1] В. А. Рштуни, Крестьянская реформа в Армении, *1947, Երևան։* Մ. Դ. Ներսիսյան, *Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ (1850—1880), Երևան, 1956, նույնի՝* «Армяно-русские отношения», ч. I, II, З. Т. Григорян, Присоединение Восточной Армении к России, М., *1959, նույնի՝ «Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը», Երևան, 1960։* Վ. Ա. Պարսամյան, *Դրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1945, նույնի՝ «Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում», 1940։* А. Р. Иоаннисян, Присоединение Закавказья к России..., Ереван, 1958. Աշոտ Հովհաննիսյան, *Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, 1955, գիրք երկրորդ, 1956։*

բնութագրման համար կարևոր է պարզել բնակչության պրոֆեսիոնալ զբաղմունքը և դասակարգային կառուցվածքը, դասակարգային պայքարի բովանդակությունը։ Ցարական կառավարության անցկացրած մարդահամարի վիճակագրությունն հայ ժողովրդի դասակարգային կազմի լրիվ պատկերը չի տալիս, բայց և այնպես հայտնի տվյալներն էլ կարող են հիմք ծառայել մոտավորապես պարզելու բնակչության տարբեր խավերի, նրանց զբաղմունքի և սոցիալ-տնտեսական կյանքի ու պայքարի մի շարք հիմնական հարցերը։

Ըստ 1897 թվականի վիճակագրության, Կովկասում ապրող հայ բնակչության սոցիալական շերտավորումը հետևյալ պատկերն ուներ. 1. գյուղացիներ (ընտանիքի անդամների հետ միասին) 878,186 մարդ, որը կազմում էր Կովկասի նահանգների ամբողջ հայ բնակչության 78,54 %, 2. աղնվական ծագում ունեցողներ՝ 9.318 մարդ, կամ՝ 0,83 %, 3. անձամբ աղնվականներ 4.460 մարդ, կամ՝ 0,41 %, 4. հոգևորականություն՝ 11.907 մարդ, կամ՝ 1,06 %, 5. ծագումով և անձամբ զանազան պատվավոր քաղաքացիներ՝ 6.468, կամ՝ 0,57 %, 6. վաճառականություն՝ 6.001, կամ՝ 0,54 %, 7. բուրժուազիա և քաղքենիություն, քաղաքային արհեստավորություն՝ 123.213, կամ՝ 11,02 %[1]։

Ինչպես երևում է այս տվյալներից, ցարական վիճակագրությունը նույնիսկ առանձին տեղ չի հատկացրել հայ բանվորներին, նրանց մոցնելով գյուղացիների և քաղաքային խառը բնակչության մեջ։ Մարդահամարի մեկ այլ աղյուսակ տալիս է բնակչության զբաղմունքը։ Այսպես, օրինակ՝ 1. գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ և ձկնորսությամբ զբաղվում էին (ընտանիքի անդամներով) 836.012, որը կազմում էր ամբողջ բնակչության 71,27 %, 2. լեռնա-հանքային և ինդուստրիալ արդյունաբերության բնագավառում 123.063 մարդ, կամ՝ 10,58 %. այստեղ մտնում են և՛ բանվորները, և՛ գործարանատերերը, 3. տրանսպորտի և առևտրի գծով՝ 99.757, կամ՝ 8,48 %, 4. տնային ծառայության և վարձու ծառայության՝ 48.405, կամ՝ 4,12 %, 5. ազատ զբաղմունքի և զանազան կարգի հասարակական գործունեության գծով՝ 28.536, կամ՝ 2,42 %, 6. ռենտատուներ և ամեն տեսակի պանսիոներներ՝ 26.279, կամ՝ 2,24 %, 7. տարբեր անհայտ զբաղմունքի տերեր՝ 11.690 մարդ, կամ՝ 1,00 %։ Թե՛ առաջին և թե՛ երկրորդ խմբի

1 Տե՛ս «Первая всеобщая перепись», т. II, стр. 382 и др.

թվերը ցույց են տալիս, որ հայ ժողովրդի հիմնական մասսան զբաղված էր գյուղատնտեսության և սպա արդյունաբերության մեջ, այսինքն արտադրում էր նյութական բարիքներ։ Ազնվականները, կալվածատերերն ու կուլակ-վաշխառուները, կապիտալիստները, վաճառականները և ուրիշի աշխատանքը շահագործող մյուս տարրերը կազմում էին բնակչության չնչին տոկոսը։

Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը խթանեցին 1860—1870-ական թվականների գյուղացիական ռեֆորմները։ Ռեֆորմների հետևանքով կապիտալիստական հարաբերությունները թափանցեցին հայկական գյուղը, ուժեղացավ գյուղի սոցիալական շերտավորումը։ Գյուղում իրար դեմ կանգնած էին մի կողմից կալվածատերերը, կուլակները, վաշխառուները, իսկ մյուս կողմից՝ չքավոր գյուղացիները, բատրակները և այդ երկու խոշոր խմբերի միջև տատանվող մեծաքանակ միջակ գյուղացիությունը։

Անդրկովկասը ևս բռնել էր կապիտալիստական զարգացման ուղին։ XIX դարի վերջերին ռուսական կապիտալը թափանցելով Կովկաս, խորտակում էր Կովկասի նահապետական մեկուսացման պատնեշները և երկրամասը ներգրավում համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ։ Ռուս և եվրոպական կապիտալիստներն իրենց մամլակների մեջ էին առնում Անդրկովկասի ժողովուրդներին, շահագործում էին բանվորական ուժը, երկրի բնական հարստությունները, շուկաներ էին նվաճում իրենց ապրանքը արտահանելու համար, ինչպես նաև հումքի աղբյուրներ ձեռք բերում։

Որպես Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններ աճում էին՝ Բաքուն, Թիֆլիսը, Բաթումին։ Այնտեղ էլ կենտրոնացված էին նաև հայ բանվորները։ Երկաթուղային ցանցի ընդարձակման և լեռնահանքային արդյունաբերության զարգացման հետ, դանդաղորեն աճում էին նաև արդյունաբերական նոր օջախներ Ալեքսանդրապոլը, Երևանը, Ալավերդին, Ղափանը և Կարսը։

Հայ պրոլետարիատը ձևավորվում է 80-ական, 90-ական թվականներին, որպես Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի մի անբաժան մասը։ Սակայն պրոլետարիատն այդ ժամանակ դեռևս շատ փոքրաքանակ էր։ Ավելին, արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող բանվորները մեծ մասամբ դեռևս կարված չէին գյուղից կամ մասնավոր արհեստից, այսինքն կապը լիովին չէին խզել մանր սեփականության հետ։ Հայ իրականության մեջ

քանակով գերիշխողը մանր բուրժուազիան էր և ոչ թե պրոլետարիատը։ Այդ միջավայրը պարարտ հող էր ամեն տեսակ մանրբուրժուական գաղափարախոսությունների համար։

1860-ական, 1870-ական թվականների հայ իրականության մեջ, ինչպես նաև դրան հաջորդող երկու տասնամյակի ընթացքում (1880—1890-ական թթ.) գործում էին գլխավորապես ազգային-քաղաքական ուղղություններին պատկանող մարդիկ, որոնք դուրս էին եկել տարբեր խավերից։ Նրանք հայ ժողովրդի վիճակին ու նրա սոցիալ-քաղաքական պահանջներին մոտենում էին տարբեր հայեցակետերից։ Այստեղից էլ բխում էր այդ քաղաքական կազմակերպությունների, խմբակների ու պարտիաների առաջ քաշած ծրագրերի և պլատֆորմների, հասարակական օրգանների ու նրանց քարոզած հայացքների խիստ բազմազանությունը։

1880-ական թվականներից հայ իրականության մեջ հանդես եկան նարոդնիկները, «արմենականների» և ապա «հնչակյանների» պարտիաները, 1890-ական թվականների սկզբից «դաշնակցություն» պարտիան և այլ խմբեր ու կազմակերպություններ։ 1860—1900 թվականը, այսինքն գյուղացիական ռեֆորմների շրջանից սկսած մինչև ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակը Ռուսաստանում, Կովկասում, Թուրքիայում և հայկական գաղթավայրերում սկսել են լույս տեսնել ավելի քան 220 անուն հայերեն ամսագիր, թերթ, հանդես և այլ պարբերական հրատարակություններ[1], որոնք տարբեր դիրքերից քննարկում ու լուսաբանում էին հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական և կուլտուրական կյանքի այս կամ այն կողմին վերաբերող հարցերը, առաջադրում իրենց ծրագրերը։

Սակայն հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրման հարցի լենինյան սկզբունքները նոր պետք է մշակվեին։

* * *

Հայաստանի և հայ ժողովրդի վիճակը ծանոթ է եղել Կ. Մարքսին և Ֆ. Էնգելսին։ Կ. Մարքսը 1853 թ. մարտին հատուկ հոդված գրեց Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ազգությունների

---

[1] Տե՛ս «Հայոց պարբերական մամուլի լիակատար ցուցակ», կազմեց Դարեգին Լևոնյան, Երևան, 1934, էջ 11—38։

մասին[1]: Այստեղ Մարքսը տվել է Թուրքիայում ապրող ժողովուրդների, որոնց թվում և հայերի վիճակի, ազգային և քաղաքական հարաբերությունների վերլուծությունը, նշել, որ Թուրքիայում «ծագել են նոր հարցեր, նոր հարաբերություններ, նոր շահեր», որ «Թուրքիան քայքայվում է և կքայքայվի», որ Թուրքիայի կառավարության փորձերը «դուրս գալ քաղաքակրթության ուղին, ձախողվում են»: Մարքսը խոսում է «մահմեդական ֆանատիզմի» մասին, որի կրողը թուրքական քաղաքի սև ուժերն են և որն «օգտագործել են Ավստրիայի և Ռուսաստանի օգնությունը միայն այն բանի համար, որպեսզի իշխանության հասնեն և ոչնչացնեն ամեն մի փորձ դեպի առաջադիմություն»: Մարքսը նշել է, որ «Հունաստանը ձգտում է իր անկախությանը, Հայաստանի մի մասն ընկել է Ռուսաստանի իշխանության տակ...»[2], որ Թուրքիան խոչընդոտ է հանդիսանում Հայաստանի առաջադիմությանը:

Մարքսը շեշտում էր, որ Թուրքիայում «մուսուլման ֆեոդալների — զինվորական կալվածատերերի դասակարգն իր ձեռքումն է կենտրոնացրել հասարակական բոլոր ֆունկցիաները»: Մարքսը ընդգծել է Ասիական Թուրքիայի, Հայաստանի և մյուս մարզերի թուրք բնակչության վերնախավերի արտոնյալ վիճակի և հայերի ու մյուս ճնշված ժողովուրդների իրավազրկության փաստը: «Թուրքը,— գրել է Մարքսը,— նայած տեղին ու հանգամանքներին, լինում է բանվոր, ազատ հողագործ, մանր վարձակալող, առևտրական, ֆեոդալիզմի ամենաստորին և բարբարոսական ստադիայում գտնվող ֆեոդալ-կալվածատեր, պաշտոնյա կամ զինվոր, բայց սոցիալական այդ բոլոր տարբեր դրություններում նա պատկանում է տիրապետող կրոնին և ազգությանը: Միայն նա իրավունք ունի զենք կրելու, և ամենաբարձրաստիճան քրիստոնյան հանդիպելիս պետք է ճանապարհ տա ամենացածրաստիճան մուսուլմանին»[3]: Այնուհետև Մարքսը քննադատում է թուրքական կառավարությանը նրա ռեակցիոն դերի և առաջադիմությունն արգելակելու համար, նշելով, որ «թուրքերի ներկայությունը լուրջ խոչընդոտ է» երկրի բնական հարստությունների զարգացման համար, որ «իսլամական ֆանատիզմի կրողը առավելապես... թուրքական խուժանն է»[4]:

Բայց Մարքսը տեսնում էր նաև ապագան, խոսում էր գալիքի

---

1 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Երկեր, հատ. 9, 1933, էջ 371:

2 Նույն տեղում, էջ 374:

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում:

մասին. «Վաղ թե ուշ,— գրել է Մարքսը,— երևան կգա մեր կոնտինենտի ամենագեղեցիկ մասերից մեկն այդ խուժանի տիրապետությունից ազատագրելու բացարձակ անհրաժեշտությունը», մի խուժանի, «որի համեմատությամբ հռոմեական կայսրության ժամանակների խուժանը իմաստունների և հերոսների ժողովուրդ էր»։ «Թուրքիայում պահպանել status quo!։ Այն նույն իրավունքով կարելի է փորձել սատկած ձիու լեշը պահպանել նեխման միևնույն աստիճանի վրա, թույլ շտալով, որ այն լիովին քայքայվի»[1]։

Գիտական կոմունիզմի հանճարեղ ուսուցիչ Կարլ Մարքսը այդպես է բնութագրել Թուրքիան, նրանում իշխող պետական կարգը, թուրքական ազգի տիրապետող դասակարգերին։

Մարքսը «Արևելյան հարցը» խորագիրը կրող հոդվածների շարքում վերլուծում է Մեծավոր Արևելքի հանգույցում կատարվող իրադարձությունները և Հայաստանին վերաբերող հարցեր։ Հոդվածներից մեկում նա խոսում է Ասիական Թուրքիայի, Տիգրիսի և Եփրատի առևտրական ուղիների մասին՝ դեպի Պարսկաստան և Թուրքեստան։ Հայ և հույն առևտրականները, նշում է Մարքսը, մեծ քանակությամբ անգլիական ֆաբրիկանների էժան ապրանքներ են բերում, որոնք իրենց ցածր գների շնորհիվ արագորեն դուրս են մղում ասիական հարեմների տնային ինդուստրիայի արտադրանքները։

Մարքսը խոսելով Թուրքիայի տնտեսական զարգացման մասին, նշում է, որ Թուրքիան Եվրոպայի մի գեղեցիկ անկյուն է։ Ո՞վ է այնտեղ առևտուր անողը, հարցնում է Մարքսը և պատասխանում, որ «համենայն դեպս ոչ թուրքը»։ «Հայերը, սլավոնները և ֆրանկները, որ տեղավորվել են ծովային մեծ նավահանգստներում, իրենց ձեռքն են պահում ամբողջ առևտուրը...», «Թող բոլոր թուրքերին հեռացնեն Եվրոպայից, դրանից առևտուրը չի տուժի։ Իսկ ընդհանուր քաղաքակրթության զարգացո՞ւմը։ Ո՞վ է այն տարածում Եվրոպական թուրքիայի բոլոր մասերում։ Ոչ թուրքերը...»[2]։

Մարքսը քննում է Թուրքիայում Հայաստանին և հայերին վերաբերվող առանձին հարցեր, նշում է, որ «Կարսը, դա Հայաստանի ամենահարուստ և ամենակուլտուրական մասն է...»[3]։ Ռուս-թուրքական պատերազմի մասին հոդվածներում Մարքսը և Էնգելսը

---

[1] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Երկեր, հատ. 9, 1933, էջ 372—373։

[2] Նույն տեղում, էջ 392։

[3] Նույն տեղում, էջ 400։

քաղմիցս անդրադարձել են Հայաստանին։ 1854 թ. հունվարին Մարքսը գրել է. «Թուրքերը դուրս եկան Արդահանից դեպի Ախալցիխի տանող ուղիղ ճանապարհը, երբ նրանց զորքի մյուս խումբը ընտրել է այլ ուղի, որը Կարսից Ալեքսանդրապոլի (Գյումրու) միջով տանում է դեպի Թիֆլիս»[1]։

Մարքսը և Էնգելսը հատկապես ընդգծում էին Հայաստանի ռազմաստրատեգիական կարևորությունը Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և Ասիայի կոմունիկացիաներում։ Կ. Մարքսը Կարսը համարում էր «Էրզրումի բանալին», իսկ Էրզրումը Պոլսի բանալին և Անատոլիայի ստրատեգիական ու առևտրական ճանապարհների կենտրոնակետը[2]։ Այնուհետև նշվում է, որ Ալեքսանդրապոլը մի ամրոց-բերդ է ընդդեմ Թուրքերի։

Մարքսը կանգ է առել անգլիական գեներալ Վիլյամսի մի հաղորդման վրա, որում գեներալը անհանգստանում է «Գյումրու (Ալեքսանդրապոլի) մոտ ռուսական բանակի զգալի ուժեր կենտրոնացնելու առիթով»[3]։ «Կարսի անկումը» աշխատության մեջ Մարքսը և Էնգելսը նշում են Կարսի ռազմա-ստրատեգիական նշանակությունը, այնուհետև մի այլ հոդվածում անդրադառնում են Կարսի և Գյումրու բերդերի, նրանց միջև ընկած ճանապարհների հարցին[4]։

1854—1855 և 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների հետևանքները և կռվող կողմերի ռազմա-քաղաքական ծրագրերը քննարկելով, Մարքսը և Էնգելսը քանիցս գրել են Հայաստանի մասին, բացահայտել նրա ռազմա-ստրատեգիական նշանակությունը, ցույց տվել թուրքական սուլթանական կառավարության և ռուսական միապետության, ինչպես նաև եվրոպական բուրժուական պետությունների հակամարտությունները Հայաստանում։ Մարքսը և Էնգելսը ընդգծում էին, որ թուրքական սուլթանական ռեժիմն անհամատեղելի է ժամանակակից քաղաքակրթության պայմաններում։ Թուրքիայում իշխող կարգերը Կ. Մարքսը բնութագրում էր որպես ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական աստիճան։

Ֆ. Էնգելսը անդրադառնալով թուրքական սուլթանների լծի տակ հեծող հայ, արաբ, քուրդ, ասորի, հույն, բուլղար, ռումին,

---

[1] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Երկեր, հատ. 9, էջ 610։

[2] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, հատ. 10, էջ 553։

[3] Նույն տեղում, 551։

[4] Նույն տեղում, էջ 587։

սերբ և այլ ժողովուրդների ապագային, այն կապում էր պրոլետարիատի շարժման հետ, ուստի ցիոն ճանապարհով սուլթանական ռեժիմը տապալելու հետ: Էնգելսը գտնում էր, որ միայն «պրոլետարիատի հաղթությունն է, որ կազատագրի Թուրքիայի ազգություններին իրապես և անհրաժեշտորեն»: Նույն միտքը Էնգելսն արտահայտում էր նաև ռուսական ցարի տիրապետության տակ գտնվող ազգերի մասին:

Այսպիսով, ինչպես թուրքական սուլթանի, այնպես էլ ռուսական ցարի լծի տակ գտնվող ազգությունների ազատագրման նախնական պայմանը Մարքսը և Էնգելսը համարում էին ցարական և սուլթանական կարգերի տապալումը և ճնշված ազգությունների անկախությունը: Դեռևս 1850-ական թվականներին Էնգելսը առաջ էր քաշում սուլթանական ռեժիմի տապալման և «քրիստոնեական ազատ, անկախ պետությունների» ստեղծման հարցը, որը լիովին վերաբերում էր նաև Հայաստանին:

Ֆր. Էնգելսը հայ ժողովրդի ազատագրման մասին իր կարծիքն ավելի որոշակիորեն արտահայտեց «Կոմունիստական մանիֆեստի» հայ թարգմանիչ Հովսեփ Աթաբեգյանցին գրած պատասխան նամակում, 1894 թվականի նոյեմբերի 23-ին: Այնտեղ Էնգելսը խոսելով հայ ժողովրդի մասին, որը ճնշվում էր թուրքական Սցիլլայի և ռուսական բռնակալության Խարիբդայի միջև, նշում էր, որ հայ ժողովրդի ազատագրումը ցարիզմի և սուլթանի լծից հնարավոր կդառնա, երբ կխորտակվեն միապետական կարգերը[1]:

Մարքսը և Էնգելսը ճնշված ժողովուրդների ազատագրության հարցերին անդրադարձել են և մշակել ելակետային կուռ դրույթներ Իռլանդիան Մեծ Բրիտանիայից անկախ դարձնելու մասին հոդվածում, Հնդկաստանում և Չինաստանում գաղութային ռեժիմի քննադատությանը նվիրված երկերում, Իտալիայի, Լեհաստանի և այլ կախյալ երկրներին նվիրված հոդվածներում: Նրանք պաշտպանում էին կախյալ Իտալիայի պայքարն Ավստրիայի դեմ, Բալկանյան ժողովուրդների և հայ ժողովրդի պայքարն ինչպես ցարիզմի, այնպես էլ սուլթանական Թուրքիայի դեմ, առաջ քաշելով այդ ժողովուրդների անկախության և ինքնորոշման ծրագիրը, որպես մարքսիստների կողմից ազգային հարցի լուծման բանալի:

---

1 Տե՛ս Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Երկեր, հատ. 29 (ռուս. 1-ին հրատ.), էջ 341:

3. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ելակետային դրույթներով ղեկավարվելով, Վ. Ի. Ուլյանովը (Լենինը) 1890—1900-ական թվականներին խորամուտ եղավ ցարական Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակին, նշելով նրանց ազատագրման ուղին։

Դեռևս իր վաղ շրջանի աշխատություններում 1890-ական թվականներին Վ. Ի. Լենինը վերլուծում է ցարական Ռուսաստանի ժողովուրդների սոցիալ-տնտեսական դրության մասին փաստական նյութեր, հաճախ անդրադառնում է նաև Կովկասին, ցույց տալիս Անդրկովկասի ժողովուրդների իրավազուրկ վիճակը, հիշատակելով նաև հայ ժողովրդին վերաբերող հարցեր։

Վ. Ի. Լենինը խոսելով Անդրկովկասի լեռնային արդյունաբերության զարգացման մասին (որում որոշակի կշիռ և կարևոր տեղ էր գրավում Հայաստանի լեռնահանքային արդյունաբերությունը), նշում է արդյունաբերության այդ ճյուղի արագ զարգացումը։ Արագորեն ավելանում էր բանվորների թիվը, որը 1877 թվականին կազմում էր 3.431, իսկ 1890 թ. հասավ 17.603 մարդու, կամ «ավելացավ հինգ անգամ»[1]։ Այստեղ Լենինը նկատի ուներ ոչ միայն Բաքվի նավթը, այլև Ալավերդու և Ղափանի լեռնահանքերը։ Հայաստանի տերիտորիայում կառուցվող երկաթգծի վրա 90-ական թվականներին աշխատում էր մոտ 10.000 բանվոր[2], որոնց զգալի մասը հայեր էին։

Վ. Ի. Լենինի արխիվի նյութերի մեջ է գտնվում Ռուսական միապետության վիճակագրական ժողովածուի 1872 թվականի հրատարակությունը։ Այդ աղբյուրն օգտագործելով, Վ. Ուլյանովը ընդգծել է ոսկու, պլատինի, պղնձի և երկաթի արտադրության մեջ զբաղված բանվորների քանակը եվրոպական Ռուսաստանում, Ուրալի պետական գործարաններում, այնուհետև Ուրալի մասնավոր ձեռնարկություններում և Կովկասի մասնավոր գործարաններում։ Ըստ այդ տվյալների, Կովկասում 1870-ական թվականների սկզբներին պղնձի հանքերում հաշվվում էր 1.064 բանվոր[3]։ Կովկասում

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3 (4-րդ հայ. հրատ.), էջ 636։

[2] Տե՛ս «Մշակ» թերթը, № 90, 1896։

[3] «Լենինյան ժողովածու», հատ. 33, էջ 483։

այդ ժամանակ պղինձ էր հանվում Ալավերդու, Ղափանի, Դիլիջանի շրջանի և մասամբ Գեղարքունիքի հանքավայրերից։

Վ. Ի. Լենինը քննարկելով Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման և միապետության ծայրամասերի գաղութացման պրոցեսը, տալով «գաղութ» հասկացողության վերլուծությունը, նշում է, որ «գաղութի այս հասկացողությունն էլ ավելի հարմարում է մյուս ծայրամասերին, օրինակ՝ Կովկասին», որի քաղաքական նվաճումը շուտ էր կատարվել, սակայն տնտեսական յուրացումը, գաղութացումը շարունակվում էր և Լենինի արտահայտությամբ «Հետևեֆորմյան դարաշրջանում Կովկասը սաստիկ գաղութացման էր ենթարկվում...»[1]։ Լենինը ցույց էր տալիս, որ Անդրկովկասում զարգանում է կապիտալիզմը։ Անդրկովկասը դառնում է նավթի, գինու, ցորենի, ծխախոտի արտադրության երկիր, ֆաբրիկաների երկիր, որի քաղաքների բնակչությունը 1863 թ. 350 հազարից 1897 թվականին աճեց և հասավ մոտ 900 հազարի։ Գյուղում տեղի էր ունենում շերտավորում, հողատերերի զգալի մասը կորվելով կամ զրկվելով հողից, ընկնում էր քաղաք և դառնում պրոլետար։ Ավելի բացահայտ և սուր էին դառնում դասակարգային ներհակությունները Ելիզավետպոլի, Թիֆլիսի, Երևանի և այլ նահանգներում։

Վ. Ի. Լենինի ուսումնասիրած գրքերի և նյութերի մեջ բերված են քաղվածքներ ռազմա-վիճակագրական ժողովածուի Ռուսաստանին նվիրված մասից։ Այդ քաղվածքներում Լենինը նշել է Կովկասի փոխարքայության մեջ մտնող նահանգների տերիտորիաները, բնակչության քանակական տվյալները և մեկ քառակուսի վերստի վրա ապրող բնակչության խտությունը[2]։

Նա քննարկում է նաև Կովկասի արդյունաբերության մեջ շոգու կիրառման, շոգին որպես շարժիչ օգտագործելու և շարժիչների քանակի ավելացման հարցը։ Ավելի հետաքրքիր են 90-ական թվականներին ֆաբրիկագործարանային տեղեկատուից բերված տվյալները, որոնք Լենինը օգտագործել է նարոդնիկների դեմ մղած պայքարում։ Նա տվյալներ է բերել ֆաբրիկաների և գործարանների քանակի մասին, ցույց է տվել նրանց աճման պրոցեսը 50 նահանգներում։ Լենինը տեղեկություններ է բերել Երևանի, Թիֆլիսի, Ելիզավետպոլի, Բաքվի նահանգների և Կարսի մարզի մա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3 (4-րդ հրատ.), էջ 770։

2 «Լենինյան ժողովածու», հատ. 33, էջ 396։

սին, հերքում է նարոդնիկների կարծիքները բանվորների քանակի դանդաղ ավելացման մասին, ցույց է տալիս ամբողջ Ռուսաստանում, ինչպես նաև Հայաստանում դեռևս 1890-ական թվականներին բանվորների քանակի աստիճանական արագ աճը[1]։

Մի այլ աղբյուր՝ ֆինանսների մինիստրության «Ծժեգոդնիկը» կարդալով Վ. Ի. Լենինը հատուկ ուշադրություն է դարձրել 36-րդ էջի վրա, որտեղ զետեղված են տվյալներ աղի և նավթի հանույթի մասին Կովկասյան փոխարքայության գավառներում, ինչպես նաև հանքերում ու գործարաններում բանվորների աճի մասին, Կովկասի արդյունաբերության մեջ ձեռքի աշխատանքի դուրս մղման և իր ժամանակի տեխնիկան կիրառելու մասին։ Վ. Ի. Լենինը նշել է, որ Կովկասի լեռնահանքային արդյունաբերության մեջ և գործարաններում տարեցտարի ավելանում են մեխանիկական շարժիչները։ 1890 թվականին Ռուսաստանի հանքերում և գործարաններում գործադրվում է 2.069 շոգեշարժ մեքենա, որից Կովկասում 371 մեքենա՝ 5.389 ուժով[2]։ Քննելով Մորոզովի մանուֆակտուրայի համար հումքի աղբյուրների հարցը, Լենինը նշում է, ամերիկյանի և եգիպտականի կողքին նաև Անդրկովկասից ստացվող բամբակի հումքը[3]։

Վ. Ի. Լենինը խորը հետազոտել է բանվոր դասակարգի ձևավորման, նրա աճման պրոցեսը Ռուսաստանում, կարևոր տեղեկություններ բերելով նաև Կովկասյան փոխարքայության մեջ մտնող նահանգների մասին։ Ծանոթանալով բանվորների քանակի աճին նվիրված վիճակագրական տեղեկություններին, նա հաշվումներ է կատարում և ցույց տալիս, թե Ռուսաստանի որ նահանգից քանի մարդ է անձնագիր ստացել այդտեղից մեկնելու և բանվորությամբ զբաղվելու համար։ Կովկասի, Սիբիրի և Միջին Ասիայի տվյալներն ամփոփելով, Լենինը ցույց է տալիս դեպի քաղաքները կատարվող բանվորների հոսանքը։ 1905 թվականի վիճակագրական տեղեկությունները վերլուծելով, Լենինը նշում է, որ Եվրոպական Ռուսաստանում կար ընդամենը 6.809.909 գործարանային բանվոր և սպասարկու, որից 498.311 մարդ Կովկասում։ Այդ թվից 407.131 արտադրական բանվոր և 91.180 մարդ վարձու սպասարկու[4]։ Այս քանակի մեջ զգալի էր հայերի թիվը։

---

1 «Լենինյան ժողովածու», հատ. 33, էջ 428—430։

2 Նույն տեղում, էջ 491։

3 Նույն տեղում, էջ 493։

4 Նույն տեղում, էջ 537։

Արդյունաբերության զարգացման և բանվոր դասակարգի աճման հարցերին զուգահեռ, Վ. Ի. Լենինը հետազոտում էր գյուղի վիճակը և ազրարային հարաբերություններն ամբողջ երկրում, ինչպես նաև Անդրկովկասում և Հայաստանում։ Այդ հարցին անդրադառնալուց բացի, Լենինը գրել է հատուկ հոդված «Վերաբնակեցման հարցի» առթիվ, որտեղ խոսում է նաև Արևելյան Հայաստանի գյուղերում տիրող հողատիրության վիճակի մասին։ Լենինը մեջ է բերում ցարական գույքային մինիստրի վկայությունը, որ դեռևս 80-ական թվականներին Կովկասի չորս նահանգներում, միայն պետական հողերի վրա բնակեցված գյուղացիներից կար 22.000 շունչ հողազուրկ[1]։ Լենինը բերում է սենատոր Կուզմինսկու տվյալներն այն մասին, որ «Անդրկովկասում կային հարյուր հազարավոր պետական գյուղացիներ... որոնց առանց չափազանցության կարելի է անվանել բատրակներ»[2]։

Վ. Ի. Լենինը ցիտում է Պետական դումայում բերված փաստերը Զանգեզուրի, Ղարաբաղի և Անդրկովկասի այլ գավառների գյուղացիների հողերի մասին, որտեղ գյուղացու մեկ շնչի հողային ապահովվածությունը հասնում էր 0,6 դեսյատինի, այնուհետև հարց է դնում այն մասին, որ Կովկասում ևս գոյություն ունի սաֆալահողություն, իսկ վերաբնակեցման ֆոնդ է ստեղծվում «բնիկների հողային իրավունքների աղաղակող խախտման միջոցով»[3], որ «վերաբնակեցումը Ռուսաստանից կատարվում է ի փառս «ծայրամասերի ռուսականացման» միևնույն նացիոնալիստական նպատակների»։

Արտագաղթը հատկապես նկատելի էր Հայաստանի աշխատավորների մեջ։ Զանգեզուրի գավառում հաղվագյուտ ընտանիքներ կային, որոնցից որևէ աշխատավոր չմեկներ Բաքու՝ վաստակի համար։ Լոռի-Փամբակի գավառի, Երևանի, Ելիզավետպոլի նահանգների և Կարսի մարզի հայ բնակչության զգալի մասը գյուղում չունենալով ապրուստի միջոցներ, գաղթում էր Բաքու, Թիֆլիս, Բաթում և Անդրկովկասի այլ արդյունաբերական կենտրոնները, համալրում բանվորների շարքերը։

Այսպիսով, հայ բանվորական կադրերը աճում և գործում էին Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններում, ռուս, վրացի, ադրբեջանցի և այլ ազգությունների բանվորական կադրերի հետ,

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 105։

2 Նույն տեղում, էջ 106։

3 Նույն տեղում, էջ 108։

միասնական կոլեկտիվներում, ունենալով դասակարգային պայքարի ընդհանուր խնդիրներ, ընդհանուր շահեր։

Ագրարային հարցին զուգահեռ, Լենինը հետաքրքրվում էր Կովկասյան փոխարքայությանը ենթակա ժողովուրդների նկատմամբ կիրառվող ազգային քաղաքականության և առհասարակ Կովկասում ազգային հարցով։ Ստ. Շահումյանին ուղղած մի նամակում Վ. Ի. Լենինը գրել է. «Անպայմանորեն ավելի շատ նյութեր ուղարկեցեք ազգային հարցի մասին Կովկասում... Կովկասի ազգությունների վիճակագրությունը, և նյութեր Կովկասում, Պարսկաստանում, Թուրքիայում և Ռուսաստանում ազգությունների հարաբերությունների մասին...»[1]։

Սիբիրում՝ աքսորում գտնված ժամանակ Վ. Ի. Լենինը նյութեր էր պահանջում «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գրքի համար։ Իսահակ Լալայանցը այցելում է Հարավային Ռուսաստանի նահանգները, Կովկաս, նյութեր է հավաքում Վ. Ի. Լենինի համար։ Այդ մասին Լալայանցը գրել է. «Ես, իհարկե, ինչ որ հարկավոր էր, ձեռք բերեցի և ուղարկեցի։ Այդ նյութերը նրան հարկավոր էին, նրա «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գրքի համար»[2]։

Վ. Ի. Լենինը ծանոթ էր հայ ժողովրդի պատմական անցյալին։ Լենինյան արխիվում, նրա գրադրությունների և կոնսպեկտների էջերում, նրա օգտագործած գրականության մեջ կարելի է հանդիպել շատ հետաքրքիր նյութերի և փաստերի հայ ժողովրդի բախտի, նրա պատմության մասին։ Վ. Ի. Լենինը կարդացել էր «Ռազմա-պատմական գրադարան» գիրքը և գրանից քաղվածքներ արել ու կազմել հնագույն ժամանակներից սկսած մինչև 1899 թ. տեղի ունեցած պատերազմների ցուցակ։ Այնտեղ, «Հնագույն ժամանակ» բաժնում Լենինը գրել է «41—63 թվականներին հռոմեացիների պատերազմները Հայաստանում»[3]։

1917 թ. Պետրոգրադի «Լենսայա» ընդհատակյա բնակարանում ապրելու օրերին Վ. Ի. Լենինի գրասեղանի վրա եղած գրքերի մեջ էր նաև «Поэзия Армении» գիրքը։ Իսկ ռևոլյուցիայի հաղթանակից հետո, երբ Լենինը արդեն Կառավարության ղեկավարն էր և զբաղվում էր երկրի քաղաքական, տնտեսական ու ռազմական բազմաթիվ հրատապ խնդիրներով, միաժամանակ շարու-

1 «Լենինյան ժողովածու», հատ. 3, էջ 470։

2 Տե՛ս «Пролетарская революция» ամսագիրը, № 1 (84), 1929։

3 «Լենինյան ժողովածու», հատ. 31, էջ 415։

նակում էր հետաքրքրվել հայ ժողովրդի վիճակով։ Ժողկոմսովետի քարտուղարության պահանջով, Համառուսական Կենտգործկոմի կառավարչությունը Վ. Ի. Լենինին է ուղարկել Վ. Բրյուսովի «Հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրություն» գիրքը և «Поэзия Армении» ժողովածուն[1], որոնք գտնվում էին Լենինի անձնական գրադարանում, նրա օգտագործած գրքերի մեջ։

Բացի այդ, Հայկական գործերի կոմիսարիատը Վ. Ի. Լենինին նվիրեց «Поэзия Армении» գրքի մի նոր օրինակ՝ սիրալիր մակագրությամբ[2]։ Այդ գրքերը պատմում էին հայ ժողովրդի անցած երկար, հերոսական, տանջալից ուղու մասին, նրա դարավոր պայքարի, նրա հոգևոր կուլտուրայի գանձերի մասին։

Իր քաղաքական-գիտական գործունեության սկզբից մինչև 1917 թվականը, մինչև Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիան, Վ. Ի. Լենինի հրատարակված գրքերում, հոդվածների ու ճառերի մեջ և գրագրություններում ավելի քան 350 անգամ կոնկրետ հիշատակել է Կովկասի հարցերը, լուսաբանել երկրամասի ժողովուրդների սոցիալ-տնտեսական կյանքի վիճակը, նրանց ազգային ու սոցիալական ազատագրության հարցերը և կովկասցի ռևոլյուցիոն գործիչների հետ կապված խնդիրները։

* * *

Հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության հարցը որպես ճնշված ազգերի ընդհանուր հարցի մասի, իր տեղն է գտել լենինյան երկերում։

Ելնելով Մարքսի հայտնի դրույթից, որ չի կարող ազատ լինել մի ժողովուրդ, որը ճնշում է ուրիշ ժողովրդի, Վ. Ի. Լենինը հենց իրենց, ռուս բանվորների ազատագրության անբաժան մասն էր համարում ցարիզմի կողմից ճնշված ժողովուրդների ազատագրությունը։

Դեռևս 1890-ական թվականների վերջերին Վ. Ի. Լենինը առաջ քաշեց ցարական պետության կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդների ինքնորոշման, այդ թվում նաև հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման լոզունգը, այն համարելով Ռուսաստանի սոցիալ դեմոկրատիայի ծրագրային լոզունգներից մեկը։ «Իսկրա» թերթի էջերում անդրադառնալով հայերի ազգային ազատագրման

1 Մ.Լ.Ի. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 45, թ. 1։

2 Տե՛ս Կրեմլում Վ. Ի. Լենինի տուն-թանգարանում պահվող գրքի օրինակը։

ծրագրին, Լենինը առաջ քաշեց «երկու հիմնական սկզբունք, որոնցով պետք է ղեկավարվեն Ռուսաստանի բոլոր սոցիալ-դեմոկրատներն ազգային հարցում»։ Այդ սկզբունքները հանգում էին հետևյալին. «Նախ ոչ թե ազգային ավտոնոմիայի, այլ քաղաքական ու քաղաքացիական ազատության և լիակատար իրավահավասարության պահանջ» և երկրորդ, «պետության կազմի մեջ մտնող յուրաքանչյուր ազգության ինքնորոշման իրավունքի պահանջ»[1]։ Մի քիչ ուշ, Լենինը հրապարակեց իր «ազգային հարցը մեր ծրագրում» հոդվածը, որի մեջ նորից անդրադառնում է հայ սոցիալ-դեմոկրատների Միության առաջ քաշած հարցին, հիշեցնելով, որ «Իսկրա»-ի № 33-ում քննելով այդ հարցը բացատրվել է ազգերի ինքնորոշման և պրոլետարիատի մերձեցման խնդիրները[2]։

Վ. Ի. Լենինը շովինիստներ որակեց այն ռուս սոցիալիստներին, որոնք չէին պահանջում ռուսական միապետության կողմից ճնշված ուկրաինացիների, լեհերի, ֆիններին, հայերի անջատման ազատություն։ «Ռուսաստանում,— գրում էր Լենինը,— որտեղ ճնշված ազգերին է պատկանում բնակչության 57 տոկոսից ոչ պակասը, 100 միլիոնից ավելին,— որտեղ այդ ազգերի մի մասն ավելի է կուլտուրական, քան վելիկոռուսները,— որտեղ քաղաքական կարգը աչքի է ընկնում իր առանձնապես բարբարոսական և միջնադարյան բնույթով, ... ցարիզմի կողմից ճնշված ազգերի Ռուսաստանից ազատ անջատման իրավունքի ճանաչումը Ռուսաստանում ս.-դ.-ի համար պարտադիր է հանուն իրենց դեմոկրատական և սոցիալիստական խնդիրների»[3]։

Հայ ժողովրդի ինքնորոշման հարցը որպես ազգային հարցի մի անբաժան մաս Վ. Ի. Լենինը ընդգծել է շատ անգամ, տարբեր առիթներով։ Միջազգային սոցիալիստական հանձնաժողովին 1915 թ. սեպտեմբերին գրած նամակում Վ. Ի. Լենինը կարծիք է հայտնում պրոլետարիատի գործողությունների պլանի մասին, ըստ որում հատկապես ընդգծվում է ազգային հարցը «Էլզաս—Լոթարինգիա, Լեհաստան, Հայաստան և այլն»[4]։

Վ. Ի. Լենինը հետևողականորեն և անողոքաբար քննադատում էր ռուսական միապետության քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ։ Արևելյան Հայաստանում և ամբողջ Կովկասում ցա-

---

[1] «Իսկրա», 1 փետրվարի 1903 թ. (Լենին, Երկեր, հատ. 6, էջ 411)։

[2] «Իսկրա», 15 հուլիսի 1903 թ. (Լենին, Երկեր, հատ. 6, էջ 576)։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, էջ 198։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 473։

ռիզմի կողմից կիրառվող ազգային խտրականությունը, հնապանդումներն ու հալածանքները խիստ կերպով դատապարտվեցին Լենինի խմբագրած «Իսկրա» թերթի կողմից։

Ինչպես հայտնի է, ցարական կառավարությունը իրեն հռչակել էր Մերձավոր Արևելքում ապրող քրիստոնյա ժողովուրդների, ամենից առաջ հայ ժողովրդի «հովանավորող»։

Վ. Ի. Լենինը դիմակազերծ անելով «Արյունոտ Նիկոլայի» ագրեսիվ քաղաքականությունը Մերձավոր Արևելքում, ցույց էր տալիս Արևմտյան Հայաստանի նկատմամբ ցարի հավաստիացումների կեղծիքը։ Ցարիզմի ձգտումը դեպի Հայաստան բնութագրելով որպես անեքսիա, Լենինը գտնում էր, որ հայերի ապստամբությունը ցարական անեքսիայի դեմ կհանդիսանա «Հայրենիքի պաշտպանություն»[1]։ Այսպիսով, հայերի ազգային-ազատագրական պայքարը հանդիսանում էր հայրենիքի ազատագրման և հայրենիքի պաշտպանության համար մղվող պայքար։ Դա արդարացի պայքար էր, հեղափոխական պայքար, որը դրսևորվում էր թե՛ սուլթանի և թե ցարական միապետության դեմ։

«Իսկրա»-ի խմբագրությունը ստացել էր ոչ քիչ նամակներ և հոդվածներ, որոնք հաղորդում էին ցարիզմի հայահալած քաղաքականության մասին։ Այսպես, օրինակ, 1883 թվականին ցարին ներկայացրած զեկուցագրերն արդեն տեղեկություններ էին հաղորդում հայերի մեջ առաջ եկած «սեպարատիստական ձգտումների», «անկախություն ստանալու և ազգային պետություն» կազմելու ծրագրերի մասին։ Որպես պատասխան այդ ամենի, Ալեքսանդր 3-րդ ցարի թույլտվությամբ միայն 1885 թ. Կովկասում փակվեց 300 հայկական դպրոց, սահմանափակվեց բարեգործական ընկերությունների, հրատարակությունների և ազգային այլ օջախների գործունեությունը[2]։ 30.000 հայ պատանի զրկվեց դպրոցից։ Ցարական գրաքննությունը զեկույց ներկայացրեց արգելել հայերեն բազմաթիվ գրքեր, որոնց շարքում և Վարդան Մամիկոնյանի նկարը պատկերող մի պլակատ։ Պատճառաբանությունը պարզ էր, «Վարդան Մամիկոնյանը հայերի մեջ համարվում է Հայաստանի ազատության համար մարտնչող»[3], իսկ այդ նշանակում է հայերը ձգտում են ազատության։

---

1 Վ. Ի. Լենին, Ազգային-գաղութային հարցը, էջ 433։

2 «Իսկրա», № 49, 1903։

3 ՊԿՊԱ (Լենինգրադ), ֆ. 777, ց. 4, գ. 10, 1892, թ. 100։

Հայերը հայտարարվել էին խռովարարներ[1]։ 1896 թվականի դեսերին, երբ Թուրքիայում հայերը մարտեր էին մղում սուլթանական ռեժիմի դեմ, հերոսաբար դիմադրում էին ջարդարար ոստիկաններին, Կովկասում փակվում էին հայկական բարեգործական ընկերությունները, դպրոցները և տասնյակ դպրոցներ։ 1900 թ. փակվեց հայկական Հրատարակչական ընկերությունը, որը 20 տարում տպել էր 200 անուն գիրք, որոնց զգալի մասը նվիրված էր ցարիզմի գովերգությանը։

Թե հայերի և մյուս ժողովուրդների անկախության գաղափարն ինչպես էր գաղափեցնում ցարական իշխանություններին, կբերենք ևս մի օրինակ։ «Մշակ» թերթին ներկայացրած մի ֆելիետոնի հեղինակ ստորագրությունը գրել էր «Անկախ» կեղծանունը։ Երբ թերթը լույս է տեսնում, ֆելիետոնը տպված էր «Կախյալ» ստորագրությամբ։ Հեղինակը շարացած վազում է խմբագրություն և ապա դրաքննիչի մոտ, բողոքելով կամայականության դեմ։ Նրան բացատրում են, թե «Ռուսաստանում չկա և չպետք է լինի «անկախ», որ բոլորը կախման մեջ են ցարից, որը ում ուզի, կարող է կախել»[2]։ Հենց այդպես էլ կար։ Վ. Ի. Լենինը Նիկոլայ Թագավորին այլ կերպ չէր բնութագրում, քան «Նիկոլայ կախող», «Թագակիր ավազակ», «Նիկոլայ ջարդարար», «Դահիճ Նիկոլայ»[3]։

«Իսկրա»-ի էջերում 1903 թ. հատուկ հոդված հրապարակվեց ընդդեմ ցարական նոր օրենքի, որով նոր արշավանք էր սկսվում հայկական ազգային հիմնարկների դեմ։ Եկեղեցու գույքի կողոպտում, դպրոցների փակում և եկամուտների հափշտակում, ազգային լեզվի, գրականության հետապնդումներ, ազատագրական շարժումների ճնշում — ահա թե ինչ էր Թելագրում ցարի 1903 թ. հունիսի 12-ի օրենքը։ Լենինյան «Իսկրա»-ի խմբագրությունը անդրադարձավ այդ հարցին և խմբագրության կողմից հայտարարեց, որ մենք պահանջում ենք խոսքի, խղճի և միությունների ազատություն, իսկ ցարը փակում է եկեղեցիները և դպրոցները. «Մենք պահանջում ենք, որ ցարական կառավարությունը չհամարձակ-

---

1 Թե ցարական գրաքննությունն ինչպես է դաժանորեն հետապնդում և լկում հայկական ազգային կուլտուրան, գրականությունը և քաղաքական մտքի արթնացումը, հարուստ փաստերով ցույց է տրված բանասիրական գիտությունների դոկտոր Սալոմե Արեշյանի «Հայ մամուլը և ցարական գրաքննությունը» մենագրության մեջ (ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1957, Երևան, 5—500, ռուսերեն)։

2 Ա. Ջիվելեգով, Հայերը Ռուսաստանում, բրոշյուր, 1906, էջ 25։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 117։

վի ձեռք դնել հայկական եկեղեցական ունեցվածքի վրա»[1]։ «Մենք պաշտպանում ենք յուրաքանչյուր ազգության ինքնորոշման իրավունքը, և հետևաբար, պետք է անպատճառ դեմ կանգնենք զուտ հայերին վերաբերող գործերի մեջ ինքնակալության բռնի ներխուժման դեմ»[2]։

Վ. Ի. Լենինը պաշտպանում էր հայերի ազգային-ազատագրական շարժումներն ընդդեմ ցարիզմի և Թուրքական սուլթանական ռեժիմի։ Որպես օրինակ Լենինն իր «Ուրիշի դրոշի տակ» հոդվածում հիշեցնում է 1877 թվականի ռուս-թուրքական պատերազմի և 1896—1897 թվականների հայկական հուզումների ժամանակ տեղի ունեցած ելույթները։ Վ. Ի. Լենինը գրում է. «Ոչ միայն 1855, 1859, 1864, 1866, 1870 թվականների, այլև 1877 թվականի (ռուս-թուրքական) և 1896—1897 թվականների պատերազմների (Հունաստանի դեմ Թուրքիայի պատերազմի և հայկական հուզումների) ժամանակ, պատմական երևույթների հիմնական օբյեկտիվ բովանդակությունն են եղել ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության «ջղաձգումները»։ Այն ժամանակ խոսք անգամ չէր կարող լինել մի ամբողջ շարք առաջավոր երկրներում ժամանակակից դեմոկրատիայի՝ որևէ իսկապես ինքնուրույն և բուրժուազիայի գերհասունացման ու անկման դարաշրջանին համապատասխանող գործողության մասին։ Գլխավոր դասակարգը, որն այն ժամանակ, այդ պատերազմների ժամանակ և մասնակցելով այդ պատերազմներին, դնում էր վերջնթաց գծով և որը միայն ինքը կարող էր ճնշող ուժով դուրս գալ ֆեոդալական-արտոնյալխաստական հիմնարկությունների դեմ,— բուրժուազիան էր։ Զանազան երկրներում, տարբեր շերտերով ներկայացնելով ունևոր ապրանք արտադրողներին, այդ բուրժուազիան տարբեր աստիճանի պրոգրեսիվ էր, և երբեմն (օր. իտալական բուրժուազիայի մի մասը 1859 թվականին) նույնիսկ ռևոլյուցիոն...»[3]։

* * *

Լենինյան դրույթներից ելնելով պետք է գնահատել Արևմտյան Հայաստանի ազատագրական շարժումները, Թուրքիայի դեմ հայերի մղած պայքարը։

---

[1] «Իսկրա», 1 հոկտեմբերի 1903 թ.։

[2] Նույն տեղում։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 175։

Արևմտյան Հայաստանը տնտեսական տեսակետից շատ ավելի հետամնաց էր, քան Արևելյան Հայաստանը։ Արևմտյան Հայաստանում չկար պրոլետարիատ, բնակչության հիմնական մասսան գյուղացիությունն էր, որ գտնվում էր Թուրքական արևելյան տիպի ֆեոդալական լծի տակ։

Հայ աշխատավորության պայքարը բուրժուական ֆեոդալական բռնապետության դեմ դրսևորվում էր ամենից առաջ ազգային-ազատագրական շարժման ձևով։ Վ. Ի. Լենինի ակնարկը «հայկական հուզումների» մասին վերաբերում է 1890-ական թվականներին Սասունում, Զեյթունում, ինչպես նաև Կոստանդնուպոլսում ու մյուս վայրերում հայերի կողմից Թուրքական բռնությունների դեմ մղված պայքարին։

Դիմակազերծ անելով Արևմտյան Հայաստանը գրավելու ցարիզմի ծրագրերը Վ. Ի. Լենինը առաջ էր քաշում թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Հայաստանի, ամբողջ աշխատավոր ժողովրդի ազատագրման հարցը, ոչ միայն «ռուսական խարիբդայից», այլև «Թուրքական Սցիլլայից»։ Հիշատակենք մի քանի օրինակներ։

Վ. Ի. Լենինը քննադատում էր ցարիզմի, անգլիական, ֆրանսիական, գերմանական և բուրժուական այլ պետությունների ագրեսիվ քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ, դիմակազերծ էր անում Թուրքիան բաժան-բաժան անելու իմպերիալիստական ծրագրերը, դրանով իսկ ցույց տալով բազմազգ Թուրքական բռնապետությանը ենթակա տիրույթներում ապրող ժողովուրդների վրա։ Ծանրացած կրկնակի ճնշման լուծը։ Լենինը Թուրքիան դասում էր կիսագաղութների շարքը, միաժամանակ մերկացնում Թուրքիայում իշխող կարգերի ռազմա-ֆեոդալական, ռեակցիոն բնույթը։ Նա պաշտպանում էր սուլթանական բռնապետության դեմ պայքարող ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ազգային ինքնորոշման, ազգային ազատագրության սկզբունքը։

Մեր պատմական գրականության մեջ սովորաբար Թուրքիան հիշվում է որպես իմպերիալիստական պետությունների նվաճման օբյեկտ, որպես կիսագաղութ, հենվելով Թուրքիայի բաժանման իմպերիալիստական ծրագրերի դեմ Վ. Ի. Լենինի արտահայտած կարծիքների վրա։ Բավարար չափով չի շեշտվում հարցի մյուս կողմը, այն, որ Վ. Ի. Լենինը անողոքաբար մերկացնում էր Թուրքական ռեակցիան, սուլթանական ռեժիմի կողմից ճնշված հայերի, բուլգարների, հույների, ռումինների, արաբների, քրդերի և այլ ազգերի նկատմամբ գործադրած բարբարոսությունները, պաշտ-

պանում էր այդ ժողովուրդների ազատագրման և անկախության իրավունքը։

Վ. Ի. Լենինը անդրադառնալով XX դարի սկզբներում Ռուսաստանում գոյություն ունեցող հողատիրական հարաբերություններին, նշում է, որ դեռևս պահպանվում են «հրեշավոր չափերով ճորտատիրական կարգեր», «որտեղ կալվածատերերը ստրկացնում են գյուղացիներին ինչպես 500 տարի առաջ, որ այդ տնտեսության եվրոպական եղանակ չէ. այդ բուրֆերեն է»[1]։ Լենինը ընդգծել է այդ թեզը, շեշտել Թուրքիայում իշխող կարգերի հրեշավոր լինելը։

Վ. Ի. Լենինը Աբդուլ Համիդին բնութագրեց որպես «թուրքական Նիկոլայ երկրորդ»[2]։ Հետևելով Թուրքիայի ճնշված ժողովուրդների պայքարի զարգացման ընթացքին, Վ. Ի. Լենինը գտնում էր, որ Թուրքիայում ռևոլյուցիան պետք է հասցնի սուլթանական լծի տակ ընկած ժողովուրդների ազատագրմանը և նրանց ինքնորոշմանը։ Սուլթանական լծի տակ ընկած ժողովուրդների քաղաքական ինքնորոշումը և անջատման իրավունքը ավելորդ համարելը Լենինը որակում էր որպես «ամենամեծ անհեթեթություն»[3]։ Ազգերի ինքնորոշման և անջատման իրավունքի բացասումը ըստ Լենինի «հավասարազոր կլիներ... թուրքական... բուրժուա-դեմոկրատական փոխակերպությունն ավարտված համարելուն», իսկ դա կնշանակեր «օպորտունիզմ աբսոլյուտիզմի հանդեպ»։ Այստեղից Լենինը առաջ է քաշում որպես Թուրքիայում բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի ժամանակաշրջանում պրոլետարական պարտիայի ծրագրային լոզունգ «բոլոր ազգերի համար ինքնորոշման իրավունքի ընդունում»։

Վերլուծելով Թուրքիայում կատարվող իրադարձությունները ռուսական առաջին ռևոլյուցիայի էպոխայում, Վ. Ի. Լենինը այդ անցքերի էությունը համարում էր հակառևոլյուցիոն կոալիցիայի ստեղծումն ընդդեմ ռևոլյուցիայի։ Այդ կոալիցիայի մեջ էին մտնում եվրոպական իմպերիալիստները, ռուսական ցարը, թուրքական Նիկոլայ երկրորդը։ Վերջինս, ինչպես ռուսական ցարը, խաբում էր ժողովուրդներին, սահմանադրական խոստումներով աշխատում էր հանգցնել ռևոլյուցիոն կրակը, որը բորբոքվում էր ռուսական ռևոլյուցիայի ազդեցության տակ։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 228։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 15, էջ 216։
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 542։

Թուրքական ռևոլյուցիայի հաջողության կարևորագույն պայմանը հայերի, հույների, բուլղարների, ռումինների, սերբերի, արաբների, ասորիների, քրդերի և այլ ճնշված ժողովուրդների ազգային շարժումները թուրք աշխատավորների պայքարի հետ զուգակցելու մեջ էր։ Այդպիսի զուգակցումը կարող էր անհաղթահարելի հեղեղ առաջացնել Թուրքիայում, որը կսրբեր, կտաներ օսմանյան բարբարոսական ռեժիմը։ Սակայն, այդ ռևոլյուցիայի գլուխ կանգնեց «Երիտասարդ թուրքերի» պարտիան, որը նույնիսկ արժանացավ հակառևոլյուցիոն կոալիցիայի գովեստներին «չափավորության և զսպվածության համար», այն բանի համար, որ դա ոչ թե ռևոլյուցիոն, այլ հակառևոլյուցիոն պարտիա էր, որի գլխավորած թուրքական ռևոլյուցիան Լենինի բնութագրմամբ «թշնամի էր Օսմանյան կայսրության մեջ սկսվող պրոլետարական պայքարին»[1]։ Այդ պարտիան, նրա գլխավորած թուրքական ռևոլյուցիան չէր «արթնացնում ժողովրդի ստորին խավերը», չէր հարուցում «մասսաների իսկական ինքնուրույնությունը», հետևաբար, այդ ռևոլյուցիան բացահայտ թշնամական քաղաքականություն վարեց հայերի և Թուրքիայում իրենց անկախության համար պայքարող մյուս ճնշված ժողովուրդների հանդեպ։ Այլ կերպ ասած, Երիտասարդ թուրքերի ռևոլյուցիան անսասան թողեց սուլթանական բռնակալության սիստեմի հիմքերը, հայերին և այլ ազգերին պահեց ստրկական վիճակում և վերջում, մի քանիսի, մանավանդ հայերի նկատմամբ կիրառեց ֆիզիկապես ոչնչացման քաղաքականություն։ Այդ նրանք, Երիտասարդ թուրքերն էին իրենց պաշտոնաթերթի «Թանի» մեջ գրում. «Հայ ազգային ժողով չի կըրնա գոյություն ունենալ, որովհետև հայ ազգ չկա։ Թուրքիո մեջ մեկ ազգ կա, այն է՝ օսմանցի ազգը»։ «Երիտասարդ թուրքերի» այդ նշանաբանը նույն Աբդուլ Համիդից փոխառնված նշանաբանն էր, նրա ծրագիրը։

Վ. Ի. Լենինը պոկեց ցար Նիկոլայ Ռոմանովի և սուլթան Աբդուլ Համիդի դիմակները և ցույց տվեց նրանց սահարյուրակային հակառևոլյուցիոն դաշնակցությունն ու համագործակցությունն ընդդեմ կախյալ, ճնշված ժողովուրդների ազատագրական շարժման։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի շրջանում, երբ ցարիզմի դեմ զինված պայքարի դուրս եկան բանվորները, գյուղացիները, զորքը երբ ռևոլյուցիան թափանցեց սևծովյան նավատորմը, երբ Ռուսաս-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 15, էջ 268—269 (ընդգծումը մերն է—Ա. Մ.)։

տանի ժողովուրդների ռևոլյուցիոն պայքարի ալիքները հասան թուրքական բռնապետության սահմանները, ռուսական ցարը իր ժողովրդից պաշտպանություն փնտրեց թուրքական սուլթանի մոտ, խնդրելով ռազմական օգնություն ցույց տալ ռևոլյուցիոն նավաստիներին ճնշելու համար։ Լենինը այդ փաստը բնութագրեց որպես ցարիզմի «խայտառակության գագաթնակետ»[1]։ «Թուրքական սուլթանը պետք է պաշտպանի ցարական ինքնակալությանը ռուս ժողովրդից»[2]։ Անգլիական բուրժուական «Թայմս» թերթը գրում էր, որ ռուսական կառավարությունն աղերսում է թուրքական սուլթանին։ Վ. Ի. Լենինը բերում է անգլիական թերթի հաղորդումը, Աբդուլ Համիդից ցարի օգնություն հայցելու մասին։

Այսպիսով, Լենինը հայ ժողովրդի անկախության և ինքնորոշման երկու գլխավոր թշնամիների՝ ցարի և սուլթանի միջև մի ընդհանրություն էր գտնում, դիմակազերծ անում նրանց գործարքն ռևոլյուցիոն ազգային շարժումների դեմ։

Սոցիալ-դեմոկրատ բոլոր գործիչները չէ, որ այդ հարցում կանգնած էին Լենինի տեսակետի պաշտպանության դիրքերում։ Հարցին մոտենալով մեծապետական շովինիզմի տեսակետից, Կարլ Ռադեկը և ուրիշներ բացասաբար էին մոտենում ազգային շարժումներին։ Կարլ Ռադեկը («Պարարելում» կեղծանվան տակ) հոդվածով հանդես եկավ «Բեռներ տարվախտ» («Բեռների ժամանակ») թերթում, որտեղ հայկական հարցը էլզաս-Լոթարինգիայի և այլ հարցերի հետ միասին որակեց որպես «իմպերիալիզմի հարցեր», նրանց պաշտպանությունը համարելով մի փորձ «նա դարձնել պատմության անիվը» դեպի «ազգային պետությունների խղճալը»[3], որոնց դարն իբր թե «արդեն անցել է»։

Վ. Ի. Լենինը կրքոտ կերպով մերկացնում է Ռադեկի սխալ դիրքորոշումը հայկական հարցի վերաբերյալ։ Այդ հարցը ըստ պրոլետարական ռևոլյուցիոն ըմբռնման, հայ ժողովրդի ազգային ազատագրման և ինքնորոշման հարց էր, նրա դեմոկրատական ուժերը միավորելու և միապետական ռեժիմից ազատագրվելու հարց։ Ճնշված ժողովուրդների ազատագրման հարցը դեմոկրատական շարժում էր, սոցիալական ռևոլյուցիայի մի հզոր խթան, նրա հզոր շարժիչ ուժ։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 734։

[2] Նույն տեղում։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 516։

Լենինը գտնում էր, որ «պրոլետարիատը չի կարող հաղթանակել այլ կերպ, քան դեմոկրատիայի միջոցով, այսինքն՝ իրականացնելով դեմոկրատիան լրիվ և իր պայքարի ամեն մի քայլի հետ կապակցելով դեմոկրատական պահանջները...»[1]։ Այնուհետև «անհեթեթություն է սոցիալիստական ռևոլյուցիան և կապիտալիզմի դեմ մղվող ռևոլյուցիոն պայքարը հակադրել դեմոկրատիայի հարցերից մեկին, տվյալ դեպքում ազգային հարցին»։

Լենինը գտնում է, որ «պետք է կապիտալիզմի դեմ մղվող ռևոլյուցիոն պայքարը միացնենք ռևոլյուցիոն ծրագրին և տակտիկային դեմոկրատական բոլոր պահանջների նկատմամբ...»[2]։ Այդպես էլ վարվում էր Լենինյան «Իսկրան», երբ հայկական դպրոցները փակելու, եկեղեցական գույքերը կողոպտելու ժամանակ պաշտպան կանգնեց հայկական դեմոկրատական-ազգային շարժմանը՝ միապետական-ոստիկանական ոտնձգությունների դեմ։

Ինեսսա Արմանդին գրած նամակներից մեկում Վ. Ի. Լենինը քննում է ազգերի ինքնորոշման և ազգային պատերազմների ու հայրենիքի պաշտպանության հարցը և այդ կապակցությամբ Մարքսի և Էնգելսի հարցադրումը մեկնաբանելով, նորից անդրադառնում Կարլ Ռադեկին, որը պնդում էր իր սխալ տեսակետները, նոր առարկություններ անելով Լենինին։ Վ. Ի. Լենինը նշում է, որ Ռադեկը իրեն պահում է որպես «չարչի, լկտի, անպատկառ, հիմար»[3]։ Լենինը խարազանում է «ռադեկյան հիմարիզմը», իսկ Ռադեկին և նրա համախոհներին անվանում «խոճկորներ»։

Պաշտպանելով հայերի և մյուս ժողովուրդների դեմոկրատական, ազգային-ազատագրական շարժումները, Լենինը դրանով չէր առաջարկում սոցիալ-դեմոկրատիային «ձուլվել» ընդհանուր դեմոկրատական շարժման հետ։ «Բուրժուազիան միշտ առաջին պլանի վրա է դնում իր ազգային պահանջները։ Դնում է դրանք անպայման,— գրում էր Լենինը։— Պրոլետարիատի համար դրանք ենթարկված են դասակարգային պայքարի շահերին»[4]։ Պրոլետարիատի պայքարը լուծում էր և ազգային հարցը։

Լենինյան դիրքորոշումից հետևում էր ռևոլյուցիոն միակ ճիշտ տակտիկան՝ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները միավորել բանվորների ու գյուղացիների սոցիալական ազատա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 517։

[2] Նույն տեղում։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 267։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 510—511։

գրության համար մղվող պայքարի հետ, ստեղծելով ճնշված ազգի բոլոր աշխատավորների ռևոլյուցիոն-ազատագրական ընդհանուր ճակատ։ Այստեղից էլ հայ ազատագրական շարժումները, կամ «հայկական հեղափոխությունը», ինչպես ընդունված էր ասել այն ժամանակ, հանդիսանում էին ցարիզմի և սուլթանիզմի դեմ մղված համաժողովրդական ազատագրական պայքարի անբաժան մասը, նրա շարժիչ ուժերից մեկը։ Լենինը «Մարքսիզմի ծաղրանկարի մասին» հոդվածում անողոքաբար մերկացրել է այն ֆրազյորներին, որոնք չէին ընդունում այդ մարքսիստական դրույթը։ Վ. Ի. Լենինը նույնիսկ 1917 թվականին ասում էր[1], որ «միայն Մարսի վրա երաղանքներով ապրող մարդը կարող է ժխտել» ազգային շարժման հեղափոխական նշանակությունը Ուկրաինայում և Բելոռուսիայում։ Այդ դրույթը վերաբերում էր նաև Հայաստանին, հայերի ազգային-ազատագրական պայքարին։

Այլ բան է, թե ո՞վ էր ղեկավարում շարժումը, այն ինչ ընթացքով էր տանում։ Եթե հայկական ազատագրական շարժման ղեկը այս կամ այն տեղում, այս կամ այն էտապում իր ձեռքն էր վերցնում «դաշնակցություն» պարտիան, նա իր նացիոնալիստական գաղափարախոսությամբ ու ավանտյուրիստական տակտիկայով շարժումը շեղում էր ճիշտ ճանապարհից, այլանդակում ազատագրական պայքարի գործիչներին, այդ չի նշանակում թե հայկական-ազգային ազատագրական ամբողջ պայքարը պետք է կապել այդ կուսակցության ավանտյուրիզմի հետ ու նշավակել։

Ընդհակառակը, հայկական ազգային-ազատագրական շարժումը խորապես ժողովրդական, ռևոլյուցիոն շարժում էր, ուղղված թե ազգային և թե ֆեոդալական ճնշման դեմ, հետապնդում էր հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության նպատակը, Հայաստանի ինքնորոշման, նրա անկախության նվիրական իդեալը։ Այդ գաղափարի իրականացման ճիշտ ուղին ցույց էր տալիս ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան։

Վ. Ի. Լենինը սոցիալիստական ռևոլյուցիայի նախօրյակին ազգերի անջատման և ինքնորոշման իրավունքի հարցին անդրադառնալով, տվեց հետևյալ ծրագրային թեզը. «Նվաճելով իշխանությունը, մենք անպայման իսկույն ևեթ կճանաչենք այդ իրավունքը և Ֆինլանդիայի համար, և Ուկրաինայի համար, և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ...»[2]։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 38։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 206 (ընդգծումը մերն է—Ա. Մ.)։

* * *

Այսպիսով, Վ. Ի. Լենինը ճնշված ազգերի, այդ թվում, ուկրաինացիների, բելոռուսների, հայերի և մյուս ժողովուրդների ինքնորոշման և լիակատար ազատագրման համար մղվող պայքարը դիտում էր որպես բանվոր դասակարգի և գյուղացիության կողմից շահագործողների դեմ մղվող հեղափոխական պայքար։ Լենինյան այդ իմաստուն դրույթը մեր օրերում էլ պահպանել է իր կարևորությունը։ ՍՄԿՊ Կենտկոմը քանիցս հայտարարել է, որ «մեր պարտիան ազգային ազատագրական շարժումը դիտում է որպես համաշխարհային ռևոլյուցիոն պրոցեսի բաղկացուցիչ մասը, որպես իմպերիալիզմի ճակատը խորտակող ուժ»[1]։ Այդ դիրքորոշումն ավելի հանդամանորեն շարադրվեց պարտիայի Կենտկոմի գաղափարական և քաղաքական օրգան «Կոմունիստ» ամսագրի «Ազգային-ազատագրական շարժումները համաշխարհային ռևոլյուցիոն պրոցեսի անրաժան մասն են» խմբագրական հոդվածում։ Այնտեղ ասված է. «Կոմունիստները միշտ էլ ազգային-ազատագրական շարժումը դիտել են որպես բանվոր դասակարգի համաշխարհային ռևոլյուցիոն շարժման հարազատ եղբայրը, հավատարիմ դաշնակիցը»[2]։

Այստեղից էլ հետևում էր բոլոր ազգերի սոցիալ-դեմոկրատ ռևոլյուցիոն գործիչների, ռուսների, ուկրաինացիների, վրացիների, հայերի և մյուսների առջև ծառացած խնդիրը, միավորված ուժերով համախմբել բազմազգ աշխատավորներին և համաժողովրդական ռևոլյուցիոն ճակատ կազմել ընդդեմ ցարական միապետության և բոլոր շահագործողների։

Այդ ծրագիրը հայ ժողովրդի փրկության և պայծառ ապագայի նկատմամբ հույս ու հավատ էր ներշնչում նրա զավակներին։ Այդ գաղափարներով էլ տոգորվեցին հայ ժողովրդի բազմաթիվ լավագույն ներկայացուցիչներ, նրա ազգային և սոցիալական ազատագրական պայքարի մարտիկները։

---

1 Տե՛ս ՍՄԿՊ Կենտկոմի հայտարարությունը, «Սովետական Հայաստան» թերթում, № 79, 1963։

2 «Коммунист», № 2, 1962.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՄԻԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԴԵՄ

XIX դարի վերջերում և XX դարի սկզբներում Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ստեղծված սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները միավորվելով, 1903 թվականին, ՌՍԴԲՊ 2-րդ համագումարում հիմնադրվեց մարքսիստական-լենինյան պարտիա։

Ռուսաստանի ս.-դ. բանվորական պարտիայի հիմնադիր համագումարը Վ. Ի. Լենինը անվանել է ռուս, հայ, վրացի, հրեա, ուկրաինացի մարքսիստների բարձրագույն ժողով[1], իսկ նրանում ձևավորված պարտիան որպես «Ռուսաստանի բոլոր ազգությունների պրոլետարների պարտիա»[2]։

Ռուսաստանում ստեղծված մարքսիստական-լենինյան պարտիան լայն գործունեություն ծավալելով, շրջադարձ նշանավորեց ցարիզմի լծի տակ հեծող բոլոր ժողովուրդների ռևոլյուցիոն-ազատագրական պայքարի և միջազգային կոմունիստական շարժման ընթացքի մեջ։ Շրջադարձ կատարվեց նաև հայ ժողովրդի ազատագրական պայքարի ընթացքի մեջ։ Հայ ժողովրդի ազատագրության համար ծավալվող պայքարը մտավ համառուսական ռևոլյուցիոն շարժման հունի մեջ։

Պատմության փորձը ցույց տվեց, որ հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրման գործի իսկական դրոշակակիրները հանդիսացան սոցիալ-դեմոկրատ մարքսիստները, լենինյանները, որոնք Հայաստանի բախտը կապում էին ռուսական ռևոլյուցիայի բախտի հետ, հայ ժողովրդի ազատագրման ուղին տեսնում էին Ռուսաստանի ճնշված ազգերի ազատագրական ընդհանուր պայքարի հաղթության մեջ։

---

[1] Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 20, էջ 555։*

[2] Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 19, էջ 297։*

1. ՀԱՅ ԱԿԱՆԱՎՈՐ ՄԱՐՔՍԻՍՏՆԵՐԸ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Դեռևս 1895 թվականին Լենինը բացատրում էր, որ ռուս բանվորի ընկերներն են Ռուսաստանի այլազգի բանվորները։ «Ռուսաստանում բոլոր ազգությունների բանվորներն այնպիսի տնտեսական ու քաղաքական ճնշման տակ են գտնվում,— ասում էր Լենինը,— որը չկա ոչ մի պետության մեջ, հատկապես այն բանվորները, որոնք ռուս ազգությանը չեն պատկանում»[1]։ Հետևաբար, որքան ավելի ծանր է այդ ճնշումը, այնքան ավելի անհրաժեշտ է սերտորեն միավորել բազմազգ պրոլետարների ուժերը, որովհետև «առանց այդպիսի միավորման անհնար է հաղթական պայքարն այդ ճնշման դեմ»։ Լենինյան այդ ինտերնացիոնալիստական հարցադրումը քաջ գիտակցում էին ճնշված ազգերի աշխատավորները։ Նրանք ձեռք էին մեկնում և միանում ռուս պրոլետարներին։

Ռուսաստանի մարքսիստական-լենինյան պարտիան իր շարքերը ներգրավեց ցարիզմի լծի տակ ճնշված բազմազգ ժողովուրդների ականավոր ներկայացուցիչներին։ Վ. Ի. Լենինի շուրջը համախմբված առաջին ռևոլյուցիոն գործիչներից էին Յա. Մ. Սվերդլովը, Մ. Գ. Ցխակայան, Գ. Մ. Կրժիժանովսկին, Մ. Ի. Կալինինը, Վ. Կ. Կուռնատովսկին, Ի. Վ. Բաբուշկինը, Ն. Կ. Կրուպսկայան, Ն. Է. Բաումանը, Մ. Մ. Լիտվինովը, Ֆ. Ա. Սերգեևը (Արտեմը), Գ. Ի. Պետրովսկին, Ռ. Ս. Զեմլյաչկան, Վ. Վ. Վորովսկին, Ե. Դ. Ստասովան, Ն. Պ. Լեպիշինսկին, Ա. Վ. Լունաչարսկին և ուրիշներ։ Նրանց շարքում արժանավոր տեղ էին գրավել հայ ժողովրդի զավակներ Ի. Խ. Լալայանցը, Բ. Մ. Կնունյանցը, Ս. Գ. Շահումյանը, Ս. Ս. Սպանդարյանը և ուրիշներ, որոնք տարբեր ժամանակներում ընտրվելով բոլշևիկյան պարտիայի Կենտկոմի անդամներ, ղեկավար մասնակցություն ունեցան համառուսական ռևոլյուցիոն շարժմանը, դրանով իսկ պայքարելով նաև հայ ժողովրդի ազատագրման համար։

Անհրաժեշտ է համառոտակի բնութագրել նրանց ռևոլյուցիոն գործունեության գլխավոր կողմերը։

---

[1] Վ. Ի. Լենին, «Հրեա բանվորներին» հոդվածը, Երկեր, հատ. 8, էջ 635։

* * *

Վ. Ի. Լենինի վաղ շրջանի մերձավոր զինակիցներից մեկը հանդիսացել է Խաչիկ Քրիստափորի Լալայանցը (1870—1933)։ Նա ծնվել և մանկությունն ապրել է Կովկասում. հետո փոխադրվել Կազան, ուր սովորել է և մասնակցել ռուս մարքսիստ Ֆեոդոսևի խմբակին, որի գործով ձերբակալվել է և 1889 թ. արտաքսվել Կազանից։

Ժանդարմական փաստաթղթերում տեղեկություններ կան այն մասին, թե Լալայանցը 1891—1892 թթ. Թիֆլիսի կայազորում ծառայել է որպես հրետանավոր, կապեր է ունեցել Շուտգարտի դրքավաճառ Դիցի հետ, նրանից ստացել է Կ. Մարքսի «Փիլիսոփայության աղքատությունը», Ֆ. Էնգելսի «Ընտանիքի ծագումը», Կաուցկու «Կարլ Մարքսի տնտեսական ուսմունքը» դրքերը և այլ աշխատություններ, որոնք թարգմանվել են հայերեն[1]։ Այդ հարցը կարևոր է և արժանի լրացուցիչ ուսումնասիրության[2]։

1893 թվականի փետրվարին Ի. Լալայանցը ծանոթ մարքսիստների հանձնարարականով մեկնում է Սամարա Վ. Ի. Լենինի մոտ։ Ի. Լալայանցը Վ. Ի. Լենինի հետ ծանոթանալու հաջորդ օրը այցելեց նրա ընտանիքը, ծանոթացավ մոր՝ Մարիա Ալեքսանդրովնայի և քույրերի՝ Աննայի ու նրա ամուսին Մ. Ելիզարովի և Մարիա Իլյինիչնայի ու եղբոր՝ Դմիտրի Իլյիչի հետ, այնուհետև Լենինի ընկերոջ՝ Ալեքսեյ Սկլյարենկոյի հետ։ Լենինի, Լալայանցի և Սկլյարենկոյի միջև կար հայացքների լիակատար համերաշխություն։ 1893 թվականի ամռանը ձևավորվեց ռևոլյուցիոն մարքսիստների «Սամարայի եռյակը», որը հանդիսացավ ապագա լենինյան պարտիայի առաջին բջիջներից մեկը։

1894 թվականի մայիսի 24-ին Լալայանցը և Սկլյարենկոն ձերբակալվեցին (Վ. Ուլյանովը մեկնել էր Պետերբուրգ)։ Լալայանցը դատապարտվեց Կազանի խմբակի գործով, 10 ամիս միայնակ խցիկի։ Նրան ուղարկեցին Պետերբուրգի «Կրեստի» բանտը։ Իմանալով այդ մասին, Վ. Ի. Ուլյանովը անտարբեր չմնաց փորձությունների մեջ ընկած ընկերոջ նկատմամբ։ Շուտով բանտում Լալայանցին տեսակցության եկավ նրա «հարսնացուն»՝ Օլգա Զա-

---

[1] Մոսկվայի ՊԿՊԱ, ֆ. ԴՊ, 7, 1892, գ. 237, հատ. 2, թ. 322—325։

[2] Այդ նյութերի հավաքման և ուսումնասիրության հիման վրա մեր կողմից գրվել է աշխատություն Խաչիկ Լալայանցի մասին, որը կհրատարակվի հետագայում։

չինան, որն այնքան հաջող ընտրվել և ուղարկվել էր Լենինի կողմից։ Առաջին տեսակցությունը, երկրորդը, և այդպես Վլադիմիր Ուլյանովը բանտային խցիկում գտնվող ընկերոջն ուղարկում էր գրքեր, նորություններ և այն ամենը, ինչ հնարավոր էր։

Բանտարկության ժամկետը լրանալուց հետո, Լալայանցն ազատ արձակվեց և անմիջապես հանդիպում ունեցավ Լենինի հետ, որովհետև իրավունք չուներ ապրելու Պետերբուրգում, այլ պետք է շուտով գնար Պենզա։ Լալայանցը և Լենինը քննում են առաջիկա աննկիրների պլանը և միասին մեկնում Մոսկվա։ Լալայանցը իր գրքվածքներում ընդգծել է, որ հենց այդ ժամանակ էլ իր «համար բավականին պարզությամբ սկսեց ուրվագծվել Վլադիմիր Իլյիչի ակտիվ և ղեկավար դերը այդ բոլոր աշխատանքներում»։ Մոսկվայում Լալայանցը կանգ առավ Ուլյանովների հյուրընկալ բնակարանում, Լենինի և նրա հարազատների հոգատարությամբ շրջապատված։ Վ. Ի. Լենինը պատրաստվում էր մեկնել արտասահման կապեր հաստատելու «Աշխատանքի ազատագրություն» խմբակի հետ։ Լալայանցի Պենզա մեկնելու օրը բարեկամները բաժանվեցին, մեկը դեպի Պենզա, մյուսը՝ Պետերբուրգ և այնտեղից՝ արտասահման։

1895 թ. սեպտեմբերի սկզբներին Վ. Ի. Լենինն արդեն վերադարձել էր արտասահմանից և Մոսկվայում հետաքրքրվել Լալայանցով, ապա քրոջ ամուսնու՝ Ելիզարովի միջոցով նամակ ուղարկել։ Լալայանցը գաղտնի մեկնում է Մոսկվա և նորից ջերմորեն հանդիպում են գաղափարակից բարեկամները։ Լենինը և Լալայանցը քննում են վերջինիս Եկատերինոսլավ փոխադրվելու պլանը, որտեղ կազմակերպության ղեկին մեծ փորձանք էր եկել և շատ գործիչներ բանտ էին նետվել։ Լալայանցի հետ միասին Եկատերինոսլավ գնալու նախապատրաստություն էր տեսել նաև երիտասարդ մարքսիստ Պրասկովյա Իվանովնա Ելշինան, Լալայանցի հարսնացուն և մարտական ընկերուհին։ Պ. Ի. Ելշինան գրել է, որ մեկնելուց առաջ Լալայանցը «Մոսկվայում հանդիպում ունեցավ Վլադիմիր Իլյիչ Լենինի հետ, որը մեզ ուղարկեց Եկատերինոսլավ»[1]։

Թեև խստագույն հսկողության տակ, բայց Լալայանցը սկսում է գործը, համախմբում դուրսը մնացած մարքսիստներին, հսկիչի

---

[1] Դնեպրոպետրովսկի մարզային Պետարխիվ, «Զարյա» թերթի ֆոնդը 13—6, № 137 (փաստաթուղթը գրված է ուկրաիներեն)։

աչքից ծածուկ, կապեր հաստատում, գրականություն ստանում և տարածում։

Շուտով Պետերբուրգից Եկատերինոսլավ եկավ Լենինի զինակից Իվան Բաբուշկինը։ Այնտեղ էր և ուսուցիչոն գործիչ Յուրի Կուլյաբկոն։ 1897 թվականի կեսերին տարբեր խմբակների ներկայացուցիչները որոշում են միավորել բոլոր խմբակները և կոչել Եկատերինոսլավի «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միություն» Ի. Խ. Լալայանցի, Ի. Բաբուշկինի, Մ. Ցիսակայայի ղեկավար մասնակցությամբ։

Շուտով լրացավ Լալայանցի վրա «բացահայտ հսկողության ժամկետը» և նա իսկույն անհայտացավ Եկատերինոսլավից։

Ժանդարմական կորպուսն ամենուրեք հրահանգ տվեց գտնել Լալայանցին և նրա վրա հաստատել «գաղտնի հսկողություն»։ 1898 թ. հունիսի 30-ին Թիֆլիսի ոստիկանապետն ստացավ գրություն այն մասին, որ Իսահակ Լալայանցն ապրում է Թիֆլիս քաղաքում և առաջարկվում է գտնել ու նրա վրա սահմանել «անհրաժեշտ հսկողություն»[1]։

1898 թվականի երկրորդ կեսին և 1899 թվականին Լալայանցը ապրում էր Թիֆլիսում, որտեղից անցնում է Վորոնեժ և ապա նորից Եկատերինոսլավ, վերսկսելով իր ղեկավար մասնակցությունը ՌՍԴԲՊ տեղական կոմիտեի աշխատանքին։

Շուտով նրա գործոն մասնակցությամբ ստեղծվում է «Յուժնի-ռաբոչի» մարքսիստական թերթը։ Լալայանցը դառնում է նրա խմբագիրներից մեկը։ «Յուժնի ռաբոչի» թերթի № 1-ը լույս տեսավ 1900 թ. հունվարին, երբ Վ. Ի. Լենինը ազատվել էր սիբիրյան աքսորից և հասել Մոսկվա՝ հարազատների մոտ։

1900 թ. մարտի կեսերին Եկատերինոսլավի կոմիտեն որոշեց Մոսկվա ուղարկել Իսահակ Լալայանցին[2], աքսորից վերադարձած Լենինին տեսնելու, նրա հետ խորհրդակցելու՝ կոնսպիրատիվ աշխատանքների մասին։ «Ես շարժվեցի դեպի Մոսկվա, ուղիղ Ուլյանովների մոտ,— գրել է Ի. Լալայանցը,— Վլադիմիր Իլյիչին ես դտա տանը հարազատների մոտ»[3]։ «Վ. Ի. Լենինի կենսագրություն» նոր գրքում այդ մասին գրված է. «Չնայած ոստիկանական արգելքներին, Լենինը գնում է Մոսկվա իր հարազատների մոտ։ Այստեղ տեղի ունեցան նրա հանդիպումները քաղաքական

---

[1] Վրաստանի ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 7, 1898, գ. 205, թ. 84։

[2] Մոսկվայի ՊԿՊԱ, ֆ. 201, 7, ԴՊ, 1900, գ. 234, թ. 40—41։

[3] Տե՛ս «Պրոլետարսկայա ռևոլյուցիա» ամսագիրը, № 1 (84), 1929։

համախոհների հետ, ինչպես նաև Եկատերինոսլավի կոմիտեի ներկայացուցիչ Ի. Խ. Լալայանցի հետ»[1]։

Զինված Վ. Ի. Լենինի ցուցումներով, Ի. Խ. Լալայանցը վերադարձավ Եկատերինոսլավ։ Պարզվեց, որ Ներքին գործերի մինիստրի հրամանով Մոսկվայի ժանդարմական շեֆ Զուբատովն իր առավել հմուտ մարդկանց նետել էր Եկատերինոսլավ, որսալու Վ. Ի. Ուլյանովի կողմնակիցներին։ 1900 թ. ապրիլի 16-ի գիշերը ժանդարմական բանդան հանկարծակի հարձակման անցնելով, ձերբակալում է Ռուսաստանի ամենախոշոր կոմիտեներից մեկի՝ Եկատերինոսլավի կոմիտեի բոլոր ակտիվ գործիչներին՝ 78 մարդ։ Ցուցակն սկսվում է Լալայանցով[2], երկրորդը Մ. Ցխակայան է, ապա Կուլագինը, Մաշեցկին, Տիխոմիրովը, Վիլենսկին, Լալայանց Պրասկովյան և ուրիշներ։ Երկու տարի Լալայանցը տառապում է Մոսկվայի սխրահռչակ Տագանկայի բանտային խցիկներում։

Արտասահման գնալը, այդ «բախտից» փրկեց Վ. Ի. Լենինին։ Եվրոպայից Լենինը հետաքրքրվում էր իր մարտական ընկերների ճակատագրով, օգնում և ուղղություն էր տալիս նրանց գործունեությանը, հարազատներին գրած նամակներում, հատկապես հետաքրքրվում իր մոտ ընկերոջ Լալայանցի առողջական վիճակով և նամակներ գրում նրան[3]։

1902 թ. մարտին, դեռևս մինչև դատական պրոցեսը, Լալայանցն Ուրիցկու և ուրիշների հետ, էտապով ուղարկվում է Արևելյան Սիբիր և իր բացակայությամբ դատապարտվում 5 տարվա աքսորի։ Սակայն հինգ ամիս հետո, աննկուն ռևոլյուցիոնները փախչում է և մեծ տանջանքներով ու դժվարություններով, իրեն նետում արտասահման։

1902 թ. օգոստոսին Ցյուրիխում նա հանդիպում է «Իսկրա»-ի խմբագիրներից Ակսելրոդին, ապա Պլեխանովին։ Ակսելրոդը Լոնդոն ուղարկված նամակով հայտնում է Լենինին Լալայանցների ժամանելու մասին, ինչպես նաև այն մասին, որ Լալայանցի մոտ նկատվում է «ռուսաստանյան պրակտիցիզմի ոգի», որ նրանք մի քանի դիտողություններ են անում «Իսկրա»-ի մասին իրենց և Ռուսաստանում գտնվող այլ ընկերների կողմից[4]։ Այդ դիտողություն-

---

[1] Վլադիմիր Իլյիչ Լենին, Կենսագրություն, 1960, էջ 77։

[2] Մոսկվայի ՊԿՊԱ, ֆ. ԴՊ, 7, գ. 234, ԹԹ. 12—16։

[3] Վ. Ի. Լենին, Նամակներ հարազատներին, էջ 57։

[4] Տե՛ս «Լենինյան ժողովածու», հատ. 4, էջ 157։

ներն, ինչպես պարզվում է Ակսելրոդի նամակից, վերաբերում էին Գ. Պլեխանովի մի հոդվածին և այլ նյութերի։

«Իսկրա»-ի մասին Ի. Խ. Լալայանցը դիտողություններ էր ունել նաև Լ. Մարտովին, որի մասին վերջինս գրում է Լենինին։ Մարտովը պարտության համար մղվող պայքարում «Իսկրա»-ի դիրքերը դերն ուժեղացնելու մասին խոսելով, նշում է, որ «այդ մասին դատում էր Ինսարովի (Լալայանցի) կարծիքի հիման վրա»[1]։ Այնուհետև, նա Լենինին գրում է, որ Լալայանցը պնդում է թերթում «Ռուսական մամուլի» բաժին ստեղծելու, «Պարտության» բաժինը լայնացնելու, տեղական պրակտիկների տակտիկան և ագիտացիան ավելի շատ քննարկելու, տնտեսական բաժին բացելու և այլ հարցերի մասին։ Լենինին հաղորդվել էր, որ Լալայանցի հետ գրույցից հետո եկել ենք այն համոզման, որ անհրաժեշտ է «այժմ ևեթ արտահայտվել» «Օսվոբոժդենիե» լիբերալ բուրժուական օրգանի մասին[2]։

Վ. Ի. Լենինը տեղեկանալով Լալայանցի ժամանելու մասին, իսկույն Ակսելրոդին նամակ է գրում. «Թանկագին Պ. Բ. հենց այս րոպեին հեռագիր ստացա, որ Կոլումբը (Լալայանցը) Ձեզ մոտ է։ Հազար ողջույններ հին ընկերոջս։ Նամակ եմ կցում նրա համար[3]։ Նա հավանական է, մի քիչ կհանգստանա ձեզ մոտ, կնայի,—իսկ այնուհետև ուղիղ կգա մեզ մոտ... Լենին»[4]։

Իսահակ Լալայանցը մեկնեց Ժնև։ Շուտով «Իսկրա»-ի խմբագրությունը ամբողջովին փոխադրվեց այնտեղ, ուր ժամանեց նաև Վ. Ի. Լենինը (1903 թ. ապրիլին)։

Վ. Ի. Լենինի առաջարկով Ի. Խ. Լալայանցը ընդունվեց Ռուսական ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի արտասահմանյան Լիգայի անդամ, այնուհետև «Իսկրա»-ին օժանդակող խմբի անդամ, նշանակվեց «Իսկրա»-ի տպարանի վարիչ[5]։ Այստեղից Լալայանցը կատարում է Լենինի հանձնարարությունները, կազմակերպում է «Իսկրա»-ի և մարքսիստական գրականության հրատարակությունը։ Լալայանցը գրեց առանձին բրոշյուր, որի մեջ նկարագրել է ռևոլյուցիոներներին Սիբիր արտաքսելու պատմությունը, որը կապված էր և իր հետ։ Լենինը շտապեցնում էր այդ բրոշյուրի

---

1 «Լենինյան ժողովածու», հատ. 4, էջ 132։

2 «Լենինյան ժողովածու, հատ. 4, էջ 134։

3 Լենինի այդ նամակը Լալայանցին և ուրիշ նամակներ չեն հայտնաբերվել։

4 «Լենինյան ժողովածու», հատ. 4, էջ 155։

5 Նույն տեղում, էջ 192։

հրատարակումը։ 1902 թ. դեկտեմբերի 14-ին Լոնդոնից Գ. Պլեխանովին գրած նամակում Լենինը հարցնում է. «Ինչ տեղեկություն կա Ժնևի հրատարակությունից։ Վերջապես ե՞րբ լույս կտեսնի Լալայանցի բրոշյուրը»[1]։

Վ. Ի. Լենինը հանձնարարություններ էր տալիս Ի. Լալայանցին Կովկասի, մասնավորապես Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների հարցերի վերաբերյալ։ Լոնդոնում գտնված ժամանակ, 1903 թվականի հունվարի 28-ին, Լենինը Կովկասից ստանալով Հայ սոցիալ-դեմոկրատների Միության օրգան «Պրոլետարիատ» թերթը, իսկույն այն ուղարկեց Ժնև՝ Պլեխանովին հետևյալ նամակով. «Ուղարկում եմ Ձեզ նաև «Պրոլետարիատը»։ Բարի եղեք խնդրել Լալայանցին կամ որևէ մեկին՝ այդ թերթից ամբողջապես թարգմանել այն բոլորը, ինչ վերաբերում է նացիոնալիզմին ու ֆեդերալիզմին և ՇՈՒՏԱՓՈՒՅԹ ուղարկել ինձ։ Հարկավոր է նրանց մասին անպայման հոդված գտնելը»[2]։

ՌՍԴԲՊ 2-րդ համագումարից անմիջապես հետո Վ. Ի. Լենինը ժամանելով Ժնև, նամակ է ուղարկում Ի. Լալայանցին, հայտնելով, որ կարիք ունի անձամբ և շտապ կերպով տեսնվելու նրա հետ և հաջորդ օրը մտադիր է գալ նրա մոտ։ «Հաջորդ օրն առավոտյան Վլադիմիր Իլյիչն իրոք եկավ մեզ մոտ,— պատմում է Լալայանցը—... Շուտով մենք երկուսով միասին «մեկ ժամով» դուրս եկանք զբոսնելու և զրուցելու։ Այդ «մեկ ժամը» տևեց բավական երկար, և ես առն վերադարձա դրեթե երեկոյան»[3]։ Լենինը պատմել է Լալայանցին բոլշևիկների և մենշևիկների ֆրակցիաների առաջացման մասին, պատակտման մասին և ներպարտիական պայքարի այլ կարևոր հարցերի մասին։ Լալայանցն ամբողջովին կանգնեց Լենինի կողմը և մասնակցեց նրա մղած համառ պայքարին ընդդեմ մենշևիկների, ռունդականների և այլ շեղբնթաց խմբերի։

ՌՍԴԲՊ արտասահմանյան լիգայի համագումարում, 1903 թ. հոկտեմբերի 13—18-ին Ի. Լալայանցը Լիտվինովի, Պոլետաևի, Բոնչ-Բրուևիչի, Պրասկովյա Իվանովնա Լալայանցի և ուրիշների հետ հաստատուն կերպով կազմեցին լենինյանների ֆրակցիա և Լենինի գլխավորությամբ վճռական պայքար մղեցին Մարտովի, Պոտրեսովի, Տրոցկու, Դեյչի և ուրիշ կազմալուծիչների դեմ[4]։

---

[1] «Լենինյան ժողովածու», հատ. 4, էջ 182։

[2] Նույն տեղում, էջ 208։

[3] Ի. Լալայանց, Բոլշևիզմի սկզբունքների մոտ, գրակ 2, Մլ, 1931, էջ 15։

[4] «Լենինյան ժողովածու», հատ. 7, էջ 64։

Լիգայի համագումարից հետո Վ. Ի. Լենինը առաջարկեց Լալայանցին մեկնել Ռուսաստան։ Լալայանցի համար անձնագիր ձեռք բերեց Բոգդան Կնունյանցը։

Ի. Խ. Լալայանցի մեկնելը Ժնևից Կիև և նրա հետագա գործունեությունը հարուստ են հետաքրքիր իրադարձություններով, որոնց վրա կանգ չենք առնի, հիշատակենք միայն, որ նոյեմբերի 4-ին Լալայանցը դուրս եկավ Ժնևից, իսկ նոյեմբերի 5-ին Լենինը նամակ է գրել Ռուսաստանում գտնվող Կենտկոմի անդամներին, հայտնելով թե, «Երեկ Ձեզ մոտ մեկնեց Լալայանցը»[1]։ Գալով Կիև, Կենտկոմում զեկուցելով Լենինի հանձնարարությունների մասին, Լալայանցն անմիջապես որոնեց և գտավ Լենինի ընտանիքը, որն ապրում էր Կիևում։ Նա այցելեց Լենինի մորը՝ Մարիա Ալեքսանդրովնային, քրոջը՝ Աննա Իլյինիչնային և եղբորը՝ Դմիտրիին, հաղորդելով Վլադիմիր Իլյիչի կյանքի ու աշխատանքի մասին։ Հանձնարարություն ունենալով գնալ Օդեսա և գլխավորել բոլշևիկների գործունեությունը, Լալայանցը Դմիտրի Իլյիչից ստացավ ընդհատակում գործող վստահելի մարդկանց հասցեներ, կապեր հաստատելու համար։

Օդեսայում Ի. Լալայանցը Վորովսկու և Լեպեշկու հետ միասին 1904 թվականի սկզբներից ակտիվ աշխատանք է ծավալում բոլշևիկյան կոմիտեներ ստեղծելու, ՌՍԴԲՊ 3-րդ համագումար հրավիրելու օգտին ագիտացիա կազմակերպելու ուղղությամբ։ Նա այցելում է Ուկրաինայի նահանգները, լինում է Ղրիմում։ 1904 թվականի սկզբներին Օդեսայի կոմիտեի հանձնարարությամբ, Լալայանցը նորից մեկնում է Շվեյցարիա, Լենինի մոտ, նրան զեկուցում Հարավային նահանգներում բոլշևիկյան կոմիտեների գործունեության մասին[2]։ Վ. Ի. Լենինից ստանալով նոր առաջադրանքներ, Լալայանցը նորից վերադառնում է Օդեսա, շարունակելով պայքարը պարտիայի լենինյան կազմակերպչական սկզբունքները պաշտպանելու և կենսագործելու համար։ Լալայանցը Վորովսկու և Լեպեշկու հետ միասին կազմակերպում է Հարավային բոլշևիկյան կոմիտեների բյուրո, որը հանդիսանում էր Լենինի հենարանը ՌՍԴԲՊ 3-րդ համագումար հրավիրելու և բոլշևիկյան տակտիկայի համար մղվող պայքարում։ Բյուրոյի քարտուղարն էր Պրասկովյա Լալայանցը։

1904 թ. հունիսին Օդեսայի պահնորդական բաժինը ձերբակա-

---

1 «Լենինյան ժողովածու», հատ. 7, էջ 210։

2 ՀԲԿՊՊԱ, ֆ. 619, գ. 1651, թ. 28—29։

լեց Օդեսայի կոմիտեի անդամներին, որոնց թվում և Լալայանցին[1]։ Օդեսայի բանտից հետո էտապային ճանապարհորդություն. Մոսկվա «Բուտիրկի» բանտը, հետո աքսոր Վոլոգդա, կրելու այն 5 տարով դատապարտված աքսորը, որից փախել էր[2]։

1905 թ. փետրվարին Լալայանցը Վոլոգդայում էր։ Հասնելով աքսորավայրը նա տիֆով վարակվեց և մեկ ամիս մահամերձ դալարումների մեջ էր գտնվում, ոստիկան բժիշկների հսկողության տակ։

Ցարական ոստիկանները երկար չկարողացան նրան կաշկանդել։ 1905 թ. ապրիլին, առողջանալուն պես Լալայանցը փախչում է Վոլոգդյան աքսորից և դաղտնի ժամանում Պետերբուրգ։ Դա արդեն ՌՍԴԲՊ 3-րդ համագումարից անմիջապես հետո էր։ Լենինի գլխավորությամբ բոլշևիկները նոր եռանդով պայքար էին ծավալել պարտիայի շարքերի համախմբման և սկսված ռևոլյուցիան գլխավորելու համար։ Լալայանցն անմիջապես անցավ ռևոլյուցիոն գործունեության մայրաքաղաքում։ Այդ շրջանում Ի. Խ. Լալայանցը ինտենսիվ նամակագրություն ուներ Կրուպսկայայի հետ, որի միջոցով Լենինին հաղորդում էր անհրաժեշտ ինֆորմացիա և ստանում դիրեկտիվներ[3]։

Պետերբուրգ ժամանելուն պես Ի. Լալայանցը նշանակվեց ՌՍԴԲՊ Կենտկոմի պրոպագանդիստ։ Այդ մասին գրել է Կենտկոմում աշխատող Դելտան (Ն. Դ. Ստասովան) Պետերբուրգից գրած նամակներից մեկում[4]։ Մի քանի օր դրանից հետո, Ն. Կրուպսկայան նամակ գրեց Ի. Խ. Լալայանցին՝ հետևյալ բովանդակությամբ. «Թանկագին բարեկամ. ինչո՞ւ չեք գրում։ Մեզ գրել են, որ դուք նշանակվել եք պատասխանատու պրոպագանդիստ։ Շատ խնդրում ենք Ձեզ, մանրամասն գրել Ձեր աշխատանքի մասին։ Դուք ըստ երևույթին կմեկնեք այցելության։ Անպայման գրեք Ձեր տպավորությունների մասին»[5]։

Վ. Ի. Լենինը դժգոհ էր, որ ՌՍԴԲՊ Կենտկոմը Լալայանցին նշանակել է միայն որպես պրոպագանդիստ։ Կենտկոմին գրած մի նամակում Կրուպսկայան հայտնում է. «Հղում ենք ջերմ ողջույն Կուրցին և Ինսարովին (Լալայանցին), սպասում ենք նրանցից նա-

---

[1] Օդեսայի մարզային Պետարխիվ, ֆ. 634, ց. 1, գ. 138, թ. 1։
[2] Նույն տեղում, թ. 27։
[3] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 18, ց. 17ն, գ. 1255, թ. 1—12 և այլ էջեր։
[4] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 26, ց. 21ն, գ. 19978, թ. 1։
[5] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 25, ց. 29ն, գ. 19999, թ. 1։

մակներ։ Ֆրեյը (Լենինը) առաջարկում է անմիջապես Ինսարովին վերցնել Կենտկոմի գործակալ»[1]։

Մի քանի օր հետո Վ. Ի. Լենինը նամակ ուղարկեց Կենտկոմին, նրա ընդունած որոշումների և Կենտկոմի կազմում կատարվող լրացումների մասին։ Լենինը գրել է. «Թանկագին բարեկամներ։ Ձեր վերջին նամակների առթիվ պետք է ասեմ, որ համաձայն եմ բոլոր որոշումների հետ, բացի երկուսից։ 1) Մատրոնային (Պ. Դ. Սմիդովիչին) գործակալ նշանակելու դեմ ես վճռականապես բողոքում եմ և թախանձանքով խնդրում եմ վերանայել... Ստանիսլավի վերաբերյալ կենդրեի հաղորդել ինձ, թե ով է նա, ինչ և ինչպես է։ Իսկ իմ կողմից, նույն կերպով երաշխավորում եմ գործակալ նշանակել Լալայանցին, որը Օդեսայում և հարավային բյուրոյում հանդես է բերել առանձնավոր կազմակերպչական ընդունակություններ և բոլորի կարծիքով սահմանելի է դրել կենդանի աշխատանքը։ Նա տեղական ամբողջ աշխատանքի հոգին էր,— այսպես են ասում մի շարք օդեսացիներ, որոնք նույնիսկ բնավ էլ միշտ չեն համակրում «կարծրաքարներին»։ Վերջապես, նա վերին աստիճանի կայուն սկզբունքային մարդ է...։ Ամուր սեղմում եմ ձեր ձեռքը։ Ն. Լենին»[2]։

Կենտկոմը ընդունում է Վ. Ի. Լենինի առաջարկը։ Վ. Ի. Լենինի մոտ գնալով, Դելյան (Ստասովան) հայտնում է, որ Լալայանցը կոոպտացիայի է ենթարկվել Կենտկոմի կազմում։ Վ. Ի. Լենինը 1905 թ. հոկտեմբերի 3-ին Կենտկոմին գրած նամակում Լալայանցին և Լյուբիչին Կենտկոմի կազմում կոոպտացիան «ամբողջովին ողջունում էր» և ընդգծում, որ դա «հավանորեն մեծապես կբարելավի գործը»[3]։

1905 թվականի բուռն օրերն էին։ Լալայանցը որպես բոլշևիկների Կենտկոմի անդամ մեկնեց Հարավ, կատարելու Լենինի հանձնարարությունները։

Ի. Խ. Լալայանցը մեկնեց Ղրիմ նավատորների զինված պայքարի ղեկավարմանը մասնակցելու և մասնավորապես Սևաստոպոլի կոմիտեին օգնելու համար։ «Ղրիմի կազմակերպությունը ձեռքից-ձեռք էր անցնում,— գրել է Ի. Լալայանցը,— նրա համար կատաղի պայքար էր գնում մենշևիկների դեմ»[4]։ Լալայանը Սիմֆե-

---

1 ՄԼԻ ԿՊՍ., ֆ. 25, ց. 21Ն, գ. 19977, թ. 3։

2 «Լենինյան ժողովածու», հատ. 5, էջ 479 (ընդգծումները մերն են—Ա. Մ.)։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 395։

4 «Պրոլետարսկայա ռևոլյուցիա», ժուռնալ, 1930, № 4, էջ 124։

ղոպոլում և Սևաստոպոլում այդ պայքարը գլխավորողներից մեկն էր։ Հին կոմունիստ Մ. Էսսենը, որ ականատես է եղել այդ դեպքերին, իր վերջին նամակներից մեկում գրել է. «Ընկեր Լալայանցը— հիանալի մի կազմակերպիչ է, որը դերազանց կերպով գիտեր այդ ռևոլյուցիոն միջնաբերդի (Սևաստոպոլի) նշանակությունը, հաստատակամորեն կենտկոմից օժանդակություն էր խնդրում՝ Սևաստոպոլի կոմիտեն գրավելու համար»[1]։

Հետագայում Ի. Լալայանցը մեծ բավականությամբ նշում է, թե «Սիմֆերոպոլը մերն է», «Սևաստոպոլը գրավված է»[2], ակնարկելով մենշևիկների պարտությունը և բոլշևիկ-լենինյանների հաջողությունը։

Այնուհետև Լալայանցը մեկնեց Անդրկովկաս։ Լալայանցի Անդրկովկաս գալու մասին մինչև այժմ գրականության մեջ ոչինչ հայտնի չէր։ Այդ փաստն ունի հատուկ կարևորություն։ Այդ օրերին Լալայանցի զինակից և կրակոտ ռևոլյուցիոն գործիչ Պրասկովյա Իվանովնան գրում է, որ Լալայանցը Կենտրոնական կոմիտեի հանձնարարությամբ շրջագայեց Ռուսաստանի շատ քաղաքներ, որ նա «գործուղվեց Հարավային Ռուսաստան և Կովկաս»։ Լալայանցը եղավ Բաքվում և Անդրկովկասի այլ վայրերում, նշում է Կուլյաբկոն։ «Հիշում եմ,— գրում է Պրասկովյա Իվանովնան,— այդ ժամանակ Բաքվում և Անդրկովկասի այլ քաղաքներում ազգամիջյան արյունահեղ ընհարումներ էին տեղի ունենում։ Այդ կապակցությամբ էլ Լալայանցը գնաց Անդրկովկաս»։ Լալայանցի Բաքու ժամանելու, տեղական սոցիալ-դեմոկրատների շրջանում աշխատելու մասին վկայում է նաև հին բոլշևիկ Ա. Բ. Կարինյանը։ Նա հաստատում է, որ «ընդհատակյա շրջաններում ասում էին, որ Ռուսաստանից Բաքու է եկել հայտնի սոցիալ-դեմոկրատ Ի. Լալայանցը։ Բնական է, որ մենք ձգտում էինք տեսնել նրան։ Լալայանցը եղավ նաև Բաքվի դիմնազիստների շրջանում»։

Դա տեղի է ունեցել 1905 թ. գարնանը և ամռանը։ Ինքը, Լալայանցը իր այցելությունների մասին հետո գրել է. «Հարկ եղավ շրջագայել բոլշևիկյան կոմիտեները՝ տեղում պրոպագանդայի դրվածքին ծանոթանալու և անհրաժեշտ հրահանգներ ու դիրեկտիվներ տալու համար»[3]։

---

[1] Էսսենի նամակը գտնվում է մեր տրամադրության տակ։

[2] См. «Революционное движение в Таврической губернии в 1905—1907 гг.», Крымиздат, 1955, стр. 9.

[3] ՀՌՊԿՊԱ., ֆ. 1651, գործ 1651, թ. 28—29։

1905 թ. աշնանը նա Թիֆլիսից վերադարձավ Պետերբուրգ։ Այստեղ էր արդեն և Վ. Ի. Լենինը։ Նոյեմբերին ՌՍԴԲՊ Կենտկոմի վերակազմվելու և բոլշևիկներից ու մենշևիկներից կազմված միացյալ Կենտկոմ ստեղծելու կապակցությամբ, Ի. Խ. Լալայանցը բոլշևիկների կենտրոնի կողմից մտցվեց Կենտկոմի անդամների կազմում։

1906 թվականին որպես ՌՍԴԲՊ Կենտկոմի անդամ «Լալայանցը շրջագայեց մի ամբողջ շարք կոմիտեներ և հրահանգավորեց նրանց կազմակերպական ու պրոպագանդիստական հարցերի շուրջը»[1]։ 1905 թ. վերջերին Լալայանցը ընտրվեց ՌՍԴԲՊ Պետերբուրգի կոմիտեի կազմի մեջ։ 1906 թ. սկզբներին ՌՍԴԲՊ ռազմական կազմակերպության կոմիտեն դրեթե ամբողջովին ձերբակալվեց։ Վ. Ի. Լենինի առաջարկությամբ Ի. Խ. Լալայանցի վրա պարտականություն դրվեց մասնակցել ռազմական կազմակերպության վերականգնմանը, նրան ընտրելով ռազմական կազմակերպության կոմիտեի կազմում։ Կոմիտեն ձեռնամուխ եղավ ռազմական կազմակերպությունների համառուսական կոնֆերանսի նախապատրաստմանը, որը հրավիրվեց 1906 թ. նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 5-ը՝ Տամերֆորսում։

«Լալայանցը,— գրել են Մարիա Ուլյանովան, Դմիտրի Ուլյանովը և մի խումբ այլ բոլշևիկներ,— գործարար մասնակցություն ունեցավ ռազմական կազմակերպությունների համառուսական կոնֆերանսի նախապատրաստմանը և որպես դելեգատ մեկնեց Տամերֆորս։ 1906 թ. վերջերին, հանդես եկավ որպես զինված ապստամբության կազմակերպման գործում զինվորական կազմակերպությունների դերի մասին հիմնական զեկուցողներից մեկը»[2]։

Վ. Ի. Լենինը հետևում էր այդ կոնֆերանսի աշխատանքներին և հատուկ հոդված գրեց «Ռազմա-մարտական կոնֆերենցիայի արձանագրությունների մասին», քննադատելով Լալայանցի զեկուցման և առաջարկած բանաձևի մեջ եղած «ծայրահեղությունները»։

1906 թ. դեկտեմբերի 1-ին, պահնորդական բաժնի տեղեկություններով ժանդարմերիան ձերբակալեց ՌՍԴԲՊ Պետերբուրգի կոմիտեին կից ռազմական կազմակերպության կոմիտեի ամբողջ կազմը, որի մեջ էր նաև Ֆրիդրիխ Կլինկին[3] (Իսահակ Լալայանցը)։

---

1 Տե՛ս «Պրավդա» թերթը, № 197, 19 հուլիսի 1933 թ.։

2 Նույն տեղում։

3 Մոսկվայի Պետական ռազմա-պատմական արխիվ, ֆ. 545 (Լ), ց. 13, գ. 416, հատ. 1, թ. 4։

Երկու տարի Լալայանցը տանջվեց բանտերում։ 1908 թ. սեպտեմբերին Պետերբուրգի օկրուգի ռազմական դատարանը 102 հոդվածով Ի. Ս. Լալայանցին դատապարտեց 6 տարվա տաժանակրության՝ Արևելյան Սիբիրում[1]։

Վ. Ի. Լենինի վինակիցն ու մարտական ընկերը շղթայակապ նետվեց Արևելյան Սիբիր ժանդարմների հսկողության տակ։

* * *

Համառուսական ռևոլյուցիոն շարժման ղեկավարման գործում Վ. Ի. Լենինի հետ ակտիվորեն համագործակցող ռևոլյուցիոն գործիչներից մեկն էլ Բոգդան Միրզաջանի Կնունյանցն է (1878—1911)։

Պատմագիտական գրականության մեջ և ՍՄԿՊ պատմության պաշտոնական հրատարակություններում երկար տարիներ Բ. Կնունյանցի մասին գրեթե ոչինչ չէր գրվում[2]։

Բ. Կնունյանցը ռևոլյուցիոն առաջին մկրտությունն ստացել է Պետերբուրգում, Տեխնոլոգիական ինստիտուտի ուսանողական ընդհատակյա մարքսիստական խմբակի մեջ, այնուհետև մասնակցել ուսանողական ռևոլյուցիոն ելույթներին։ Այդ ցույցերին մասնակցող ընդհատակյա կազմակերպությունների անդամների մեջ տարածվում էին 1894—1896 թթ. Լենինի գրած պրոկլամացիաները։ Կնունյանցը Պետերբուրգից քաղաքական բովանդակությամբ բազմաթիվ նամակներ է ուղարկել հայրենի Շուշի, հարազատներին, որոնք Կնունյանցի անձնական արխիվի և այլ փաստաթղթերի հետ այրվել են 1920 թվականի մարտին, երբ Շուշին հրկիզվեց։ Շուշվա կործանված և մոխրակույտ դարձած հազարավոր շեն օջախներից մեկն էլ Կնունյանցների տունն էր, այն հարկը, որի տակից դուրս եկան եղբայրներ Բոգդանը, Լյուդվիգը, Տիգրանը և քույրը՝ Փառանձեմը (Ֆարոն), որոնք չորսն էլ դարձան ռևոլյուցիոն գործիչներ, նվիրվեցին լենինյան գաղափարների համար մղվող պայքարին։

1901 թվականի սկզբներին Բոգդանը արտաքսվելով Պետերբուրգից, եկավ Բաքու և դարձավ Բաքվի կոմիտեի հիմնադիր անդամներից մեկը։ Բ. Կնունյանցը Լ. Կեցխովելու, Ա. Ենուկիձեի, Վ. Ստուրուայի, Լյուդվիգ Կնունյանցի և ուրիշների հետ, այդ շրջա-

---

[1] Նույն տեղում, թ. 302—305։

[2] 1957 թ. հրատարակվեց Հ. Գ. Ինճիկյանի «Բոգդան Կնունյանց» մենագրությունը, ապա հրատարակվեց Կնունյանցի երկերի մեկհատորյակը։

նից ինտենսիվ կապեր ուներ Լենինյան «Իսկրա»-ի իմբաղրության հետ, մասնակցում էր Բաքվում «Իսկրա» թերթի տպագրության կազմակերպմանն ու տարածմանը։ 1902 թվականին Բ. Կնունյանցն ակտիվորեն մասնակցում է «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» ստեղծմանը։

1903 թ. մարտին երբ ձևավորվեց ՌՍԴԲՊ Կովկասյան Միությունը և ընտրվեց Միության կոմիտե, Բ. Կնունյանցը հանդիսացավ Միության հիմնադիրներից և կոմիտեի ամենագործոն անդամներից մեկը։ Կովկասյան Միության այդ առաջին համագումարն էլ Բոգդան Կնունյանցին ընտրեց ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի պատգամավոր։ Մայիսին Կնունյանցն «Ռուսով» կեղծանունով արդեն ժնևում էր, իսկ հունիսի վերջերին Լոնդոնում, ուր անձամբ ծանոթացավ Վ. Ի. Լենինի հետ։

1903 թ. հուլիսի 30-ից մինչև օգոստոսի 23-ը Կնունյանցն աշխատում է Վ. Ի. Լենինի հետ, մասնակցում ՌՍԴԲՊ համագումարին։ Մինչդեռ նույն ժամանակամիջոցում Թիֆլիսում ոստիկանական պահնորդական բաժինը որոնում էր Կնունյանցին։ Օգոստոսի 7-ին այդ բաժնի կազմած մի փաստաթղթում նշված են Կովկասի քաղաքներում գործող սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ղեկավարները, որոնց թվում Բոգդան Կնունյանցը, նրա եղբայր Լյուդվիգը, նրա կինը՝ Նելիզավետան համարվում են «ակտիվ գործիչներից» և «ենթակա են ձերբակալման»[1]։

ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի 21 նիստերում Բ. Կնունյանցը 45 անգամ ելույթ է ունենում քննարկվող հարցերի շուրջը[2]։ Համագումարում իր ելույթների մեջ Կնունյանցը անողոք քննադատության ենթարկեց Բունդի ծրագիրը, հայտարարեց, որ ինքը կանգնած է այնպիսի տիպի կազմակերպություն ստեղծելու կողմը, որ «ամեն մի քաղաքում, յուրաքանչյուր շրջանում գոյություն ունենային միասնական պարտիայի կազմակերպություններ, որոնք ագիտացիան կմղեն այն լեզուներով, որ կպահանջվի»[3]։ Կնունյանցը պարտիայի «իդեալական կազմակերպություն» էր համարում այն, որ բոլոր քաղաքներում գոյություն ունենային «պարտիայի միասնական կոմիտեներ»։ Այնուհետև նա քննադատում է լիհական ս. դ. պահանջը «ավտոնոմիայի մասին» և վրացական «Սաքարթվելո»

---

1 Մոսկվայի ԿՊՊԱ, ֆ. 102, ԴՊ, 00, 5, մաս 52, թ. 42—43։

2 Տե՛ս «Второй съезд РСДРП», Протоколы, М., 1959 (այսուհետև կարճի հայերեն)։

3 ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի արձանագրությունները, էջ 60։

կազմակերպության պահանջը «վրացական կուլտուրական ավտոնոմիայի մասին», որոնց գործելակերպը, Կնունյանցի արտահայտությամբ, «հակասում է ամբողջ Ռուսաստանի պրոլետարիատի շահերին»[1]: Այդ և մյուս ճառերի մեջ 25-ամյա բոցաշունչ ռևոլյուցիոները՝ Բոգդան Կնունյանցը համառորեն պաշտպանում և հիմնավորում է միասնական-ինտերնացիոնալ պարտիա ստեղծելու Լենինյան պլանը:

Վ. Ի. Լենինը շատ բարձր գնահատական տվեց Կնունյանցի ելույթներին և մի շարք սկզբունքային նշանակություն ունեցող խնդիրների շուրջը արտահայտած կարծիքները բերելով, Լենինը պաշտպանում է դրանք և հերքում մենշևիկների առարկությունները: Լենինը վերլուծելով ՌՍԴԲՊ 2-րդ համագումարում պարտիայի կենտրոնական օրգանների կառուցվածքի շուրջը եղած պայքարը, նշում է, որ «Համագումարում ընկեր Ռուսովը (Կնունյանցը) առաջարկեց ամենից առաջ ընտրել երկու եռյակ»[2], կենտկոմ և կենտրոնական օրգան: Համագումարի մասնակից բոլշևիկ Գուսևը իր ելույթներից մեկում ետ է մղում Կնունյանցի դեմ հանդես եկող մենշևիկներին և ասում, որ Կնունյանցի նախագիծը «բառացիորեն ընկեր Լենինի նախագծի կրկնությունն է»[3]:

Համագումարում Կենտկոմի անդամների ընտրության շուրջը տեղի ունեցած վիճաբանությունների առթիվ հանդես գալով, Վ. Ի. Լենինը ասել է. «Մարտովի առաջարկը ընտրությունը հետաձգելու մասին՝ անհիմն է: Պաշտպանում եմ ընկ. Ռուսովի առաջարկը»[4]:

Լենինը նշում է, որ Կնունյանցի առաջարկի դեմ մենշևիկ Կոլցովի փաստարկը «ուղղակի կեղծիք է»[5]: Տրոցկին, առարկելով Կնունյանցին, հորդորում էր, թե «համագումարը չունի ո՛չ բարոյական, ո՛չ քաղաքական իրավունք վերաձևելու խմբագրությունը», այսինքն կենտրոնական օրգանի կազմում չընտրի նախկին խմբագիրներից ոմանց: Վ. Ի. Լենինը նման հարցադրումը Տրոցկու կողմից ընութագրեց որպես սնանկության խոստովանություն և օպորտունիզմի պարագլուխներից մեկի՝ Տրոցկու հայացքները հերքելու համար դարձյալ քաղվածքներ է բերում Կնունյանցի ելույթից և վերլուծում ու պաշտպանում դրանք որպես բոլշևիկների կողմից առաջ քաշված սկզբունքներ:

---

1 ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի արձանագրությունները, էջ 183, 184:
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 7, էջ 395:
3 Տե՛ս ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի արձանագրությունները, էջ 337:
4 Նույն տեղում, էջ 381:
5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 7, էջ 395:

Բանավիճելով Տրոցկու և մյուս մենշևիկների հետ պարտիայի զեկավար օրգանների հարցի շուրջը, Վ. Ի. Լենինը նշել է, որ Կնունյանցի արտահայտությամբ բոլշևիկները Տրոցկու հարցադրումը բնորոշեցին իսկական բառով՝ քաղքենիություն: Այնուհետև Վ. Ի. Լենինը քաղվածք է բերում Կնունյանցի ճառից. «Ռևոլյուցիոներների բերանում,— իրավացիորեն ասաց ընկ. Ռուսովը,— այնպիսի տարօրինակ խոսքեր են հնչում, որոնք խիստ աննկարագրելիությունների մեջ են գտնվում պարտիական աշխատանքի, պարտիական էթիկայի հասկացողության հետ»[1]:

Կնունյանցի ելույթից ընդարձակ մեջբերում կատարելով, Վ. Ի. Լենինը «Մի քայլ առաջ, երկու քայլ հետ» նշանավոր աշխատության մեջ հիացմունքով է խոսում իր հավատարիմ աշակերտներից մեկի մասին, բարձրացնում նրան, գրոհում մենշևիկների դեմ: «Մենք խորհուրդ կտայինք բոլորին,— գրել է Լենինը,— ովքեր ուզում են ինքնուրույնորեն վերլուծել պարտիական պատակման պատճառները և գտնել նրա արմատները համագումարում, կարդալ և վերստին կարդալ ընկ. Ռուսովի (Կնունյանցի) ճառը...»[2]:

ՌՍԴԲՊ 2-րդ համագումարից հետո Կնունյանցը մի քանի ամիս մնաց Ժնևում. մասնակցում էր ներպարտիական պայքարին: Նա աշխատում էր Վ. Ի. Լենինի հետ, հանդես գալով համագումարի որոշումները խախտող մենշևիկ-կազմալուծիչների դեմ: Ինչպես պրակտիկ գործունեության մեջ, այնպես էլ գրավոր ելույթներում, Կնունյանցը հավատարիմ մնաց Լենինին: 1903 թ. հոկտեմբերի 5-ին գրած մի նամակում Լենինը նշում է, որ մեզ մոտ է Կնունյանցը[3]: Դրանից երկու շաբաթ անց, Լենինը Կովկասյան Միության կոմիտեին տեղեկացնում է, որ Կովկասյան Միության գործերի մասին զեկուցել է Բ. Կնունյանցը[4]:

Շուտով Կնունյանցը ընդարձակ նամակ ուղարկեց Բաքվի կոմիտեին, որի մեջ մի քանի անգամ հիշատակում է Վ. Ի. Լենինին: Նա բաքվեցիներին հաղորդում է, որ համագումարի մասնակիցները խմբավորվեցին կազմակերպության տարբեր սիստեմների ներկայացուցիչներ՝ Լենինի և Մարտովի շուրջը, որ մեծամասնությունը, որին պատկանում էր Լենինը, «ձգտում էր Կենտկոմ ընտրել իսկրայական կազմակերպությունից», մարդկանցից, որոնք «հաս-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 7, էջ 399:

[2] Նույն տեղում:

[3] «Լենինյան ժողովածու», հատ. 6, էջ 274:

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 198:

ատամակամորեն կանգնած են ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքներին»[1]։

Կնունյանցը նամակում Վ. Ի. Լենինին բնութագրել է որպես «պարտիական ականավոր գործիչ»։ Վ. Ի. Լենինի հանդեպ ունեցած խորին հարգանքի և նրա դաղափարների պաշտպանությամբ է տոգորված նաև Կնունյանցի գործունեությունն «Իսկրա»-ի խմբագրությունում։ Բ. Մ. Կնունյանցը գրեց հոդվածներ, որոնք ամբողջովին ներծծված են լենինյան դրույթներով։ Այսպես, օրինակ, 1903 թ. սեպտեմբերի 1-ին տպվեց նրա «Բաքվի բանվորների անընդհատ գործադուլների պատճառները»[2] հոդվածը, որի մեջ զարգացնում է Լենինի կողմից Բաքվի բանվորների վիճակի մասին արտահայտած կարծիքները, ցույց է տալիս բանվորների սոցիալական վիճակը և պայքարը. հոկտեմբերի 1-ին Կնունյանցը տպեց «Նոր ավազակություն»[3] վերնագրով հոդվածը, նվիրված հայկական եկեղեցական գույքի հափշտակման մասին ցարական օրենքի քննադատությանը։ Այդ հոդվածում Կնունյանցը զարգացնում է Լենինի դրույթները ցարիզմի կողմից Անդրկովկասի ժողովուրդների ազգային իրավունքները սահմանափակելու մասին, պաշտպանում է հայերի ազգային-ազատագրական շարժումներն ընդդեմ միապետության։ Հոկտեմբերի 22-ին Կնունյանցը հրապարակեց «Մեր տակտիկայի և կազմակերպության մի քանի հարցերը»[4] հոդվածը, որը մերկացնում է բունդական նացիոնալիստական կոնցեպցիաները և ելնելով Լենինի դրույթներից, պաշտպանում ու պրոպագանդում է միասնական-պրոլետարական պարտիայի ծրագրի սկզբունքները։

Վ. Ի. Լենինի «Իսկրա»-ի խմբագրությունից հեռանալուց հետո Բ. Կնունյանցը ևս հեռացավ։ Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները Ռուսաստանում բոլշևիկների շուրջը համախմբելու նպատակով Վ. Ի. Լենինը Ռուսաստան է ուղարկում մի շարք աչքի ընկնող գործիչների։ Նրանց շարքում էր նաև Բ. Կնունյանցը։ 1904 թ. հունվարի 13-ին Ն. Կրուպսկայան իր նամակներից մեկում հաղորդել է, որ «Լենինի և լենինյան դաղափարների դեմ հալածանքը դնում է բոլոր դծերով. մենշևիկները պատրաստում են պետական հեղաշրջում, ուղղակի ցինիկաբար հայտարարում. «Սպասում ենք առաջին ձախողմանը»... Մերոնցից այժմ Ռուսաստանում են

---

1 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 10, ց. 45, գ. 652 (նույնը Կնունյանցի երկերում, էջ 58, 60)։
2 «Իսկրա», № 47։
3 «Իսկրա», № 49։
4 «Իսկրա», № 51։

Պոլեսաևը, Ռուբենը (Կնունյանցը), Ինսարովը (Լալայանցը), Կովալևսկին. բացի առաջինից, բոլորը տրամադրված են մարտական նորեն»[1]։

Բ. Կնունյանցի հետագա գործունեությունն ընթացել է Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ։ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ Կնունյանցը մասնակցում է ՌՍԴԲՊ 3-րդ համագումարի հրավիրման համար ծավալվող պայքարին։ Բոգդանը աշխատում էր ՌՍԴԲՊ Մոսկվայի Կոմիտեում Բաումանի, Լենգնիկի, Ստասովայի և ուրիշների հետ միասին։ Կնունյանցը Մոսկվայի այն 19 ռևոլյուցիոն գործիչների թվումն էր, որոնք հատուկ կոչ հրապարակեցին ի պաշտպանություն Վ. Ի. Լենինի առաջարկի, բոլշևիկյան համագումար հրավիրելու մասին։ Շուտով նա ձերբակալվեց և նետվեց Մոսկվայի Տագանկա բանտը։

1905 թվականի մարտին Կնունյանցը կանգնեց ցարական դատարանի առաջ։ Մի բացառիկ մեղադրական ճառով նա դաղափարական-բարոյական դատավճիռ կարդաց ցարական դատարանին և պետական կարգերին։ Վ. Ի. Լենինը հավանություն տվեց Կնունյանցի փայլուն ճառին, իր խմբագրած «Վպերյոդ» թերթում (հավելվածով) տպելով այն, վերնագրած «Դատ դատի դեմ»[2]։ Բանտից ազատվելուց հետո Կնունյանցը դարձյալ մեկնում է արտասահման։ Վ. Ի. Լենինից ստանալով նոր հանձնարարություններ, Կնունյանցը կրկին վերադարձավ Ռուսաստան, եղավ Անդրկովկասում, այնուհետև մեկնեց Պետերբուրգ։ Այստեղ ՌՍԴԲՊ Կենտկոմի Ռուսական բյուրոյին կից գործում էր Քարտուղարություն, իսկ նրան կից կազմակերպվել էր հատուկ ագիտացիոն խումբ, որը կազմակերպում և գլխավորում էր ամբողջ պրոպագանդիստական և ագիտացիոն աշխատանքը։ Ագիտացիոն խմբի ղեկավարը հանդիսանում էր Բ. Կնունյանցը[3]։

1905 թ. ռևոլյուցիայի ամենաբուռն օրերին, երբ Վ. Ի. Լենինը տարագրությունից վերադարձավ Պետերբուրգ և անմիջականորեն ղեկավարում էր ՌՍԴԲՊ գործունեությունը ռևոլյուցիայի մեջ, Բ. Կնունյանցը գտնվում էր Պետերբուրգում, աշխատում էր բանվորական դեպուտատների սովետում որպես Սովետի ղեկավարներից մեկը, նախագահի տեղակալը։ Նա միաժամանակ «Նովայա ժիզն» թերթի խմբագիրներից էր։

---

1 «Լենինյան ժողովածու», հատ. 10, էջ 149—150։

2 Տե՛ս «Վպերյոդ», № 16, 17 ապրիլի 1905 թ.։

3 Տե՛ս «Вопросы истории КПСС» ժուռնալը, № 6, 1958, էջ 161։

Այդ ժամանակ Կենտրոնական կոմիտեն ստեղծում է հատուկ «Գործադիր բյուրո», որը նպատակ ուներ օպերատիվ կերպով իրագործել պարտիական ղեկավարությունը։ ՌՍԴԲՊ Կենտկոմի գործադիր բյուրոյի կազմում նշվել էին՝ Ի. Խ. Լալայանցը, Բ. Մ. Կնունյանցը, Ա. Մ. Էսսենը և Մ. Մ. Լիտվինովը[1]։

Միաժամանակ Կնունյանցը հանդես էր գալիս որպես տաղանդավոր պարտիական հրապարակախոս և ժուռնալիստ, իր բազմաթիվ մարտական հոդվածներում և առանձին բրոշյուրներում նա պրոպագանդում էր ռևոլյուցիոն մարքսիզմի գաղափարները։

Հետագայում Բ. Կնունյանցը հմտորեն զուգակցելով պարտիական-պրակտիկ գործունեությունը տեսական-գրական աշխատանքի հետ, գրեց մի շարք նոր գործեր, բրոշյուրներ և հոդվածներ[2]։ Առանձնապես կարևոր է «Բանվորների դեպուտատների առաջին Սովետը» գիրքը, որի մեջ Բ. Ռադինը (Կնունյանցը) հանդես է գալիս որպես լենինիզմի պրոպագանդիստ, բացահայտում է սովետների նշանակությունը որպես պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի օրգաններ։

1905 թ. դեկտեմբերին Կնունյանցը նորից ձերբակալվում է (յոթերորդ անգամ)։ Մինչև 1907 թ. հունիսը նա կրում է բանտարքսորի տառապանքներ, ապա փախչում է աքսորից և մեկնում արտասահման։ 1907 թ. օգոստոսին Կնունյանցն արդեն Լենինի մոտ էր, Շտուտգարդում։ Այնտեղ Լենինի առաջարկությամբ, Կնունյանցը մտցվում է Միջազգային սոցիալիստների (2-րդ ինտերնացիոնալի) կոնգրեսի բոլշևիկ պատգամավորների մեջ և մասնակցում կոնգրեսին Լենինի գլխավորած բոլշևիկների խմբի կազմում։

Շուտով Կնունյանցը վերադառնում է Պետերբուրգ և ապա Անդրբկովկաս։ Աքսորից և ժանդարմական հետապնդումներից տանջված Կնունյանցը Բաքվում ապրում էր անլեգալ պայմաններում։ Սակայն 8 անգամ բանտարկությունը առանց հետևանքի չէր անցել ռևոլյուցիոն մարտիկի համար։ Ստոլիպինյան դաժան ռեակցիան նրան թվում էր խավար դիշեր, որի վերջը չէր երևում։ 1908—1911 թվականներին Կնունյանցի գործունեության թափն զգալիորեն թուլացել էր։

Բ. Կնունյանցի վերջին շրջանի գործունեության մասին Ալ. Մյասնիկյանը գրել է. «Բ. Ռադին-Կնունյանց. կատորժնիկ». «ես

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 26, ց. 30ն, գ. 1002։

[2] Կնունյանցի հոդվածները տե՛ս նաև նրա «Ընտիր երկերի ժողովածուում»։

նրան հանդիպեցի հենց տաժանակրությունից հետո, Բաքվում, 1908 թ. դաժան ռեակցիայի օրերին»[1]։ Մյասնիկյանը Կնունյանցին բնութագրում է որպես «բոցաշունչ հեղափոխական և աննկուն աշխատող»։ «Նա եկավ Բաքու ջարդված և հոգեպես ցնցված...»։ «Մինչև այդ ես նրան չէի ճանաչում,— ասում է Մյասնիկյանը,— բայց ընկերներն այն ժամանակ ասում էին, որ նա իրոք փոխվել է, դա մի հոգնատանջ և հիվանդ մարդ էր։ Նա երկար չօգտվեց ազատությունից։ Շուտով նրա հետքերը դատան։ Եվ նա նորից բանտ նետվեց։ Բայց այս անգամ Բոգդանի հյուծված օրգանիզմը չդիմացավ։ Նա մահացավ բանտում բծավոր տիֆից։

Այսպես ավարտեց իր հաշիվը կյանքի հետ Բոգդան Կնունյանցը, պարտիական աշխատող և գրականագետ Ռադինը, Պետերբուրգի բանվորների սովետի ակտիվ ղեկավարներից և ներկայացուցիչներից մեկը»[2]։

Կնունյանցի մահը խորը վիշտ պատճառեց նրա ընկերներին, պարտիական կազմակերպությանը։ 1911 թ. մայիսի 23-ին Բաքվից Ստ. Շահումյանը հակիրճ նամակ է գրել Ժնև Միխա Ցխակայային. «Թանկագին Միխա. վշտահար՝ մի ամբողջ շաբաթ չէի կարող գրիչ վերցնել... Մահացել է Կնունյանցը, լավագույն ընկերը, լավագույն բարեկամներից մեկը... ծանր է, չեմ կարող շարունակել...»[3]։

Բ. Կնունյանցի մահվան առթիվ Ստ. Շահումյանը գրեց մահախոսական, որը տպվեց արտասահմանում Վ. Ի. Լենինի խմբագրությամբ հրատարակվող «Ռաբոչայա գազետա» թերթում։ Այդ հոդվածի մեջ Բոգդան Կնունյանցը բնութագրվում է որպես «մեր պարտիայում փայլուն դեմք»։ Լենինյան թերթը գրել է, որ Բոգդանը «սիրելի էր իր անձնական բարձր բարոյական մաքրությամբ։ Նրա հիշատակը սուրբ կլինի»[4]։

* * *

Վ. Ի. Լենինի հավատարիմ ընկերների և հետևողական աշակերտների մեջ առաջնակարգ տեղ է պատկանում Ստեփան Գևորգի Շահումյանին, որի ռևոլյուցիոն գործունեությանը և Վ. Ի.

---

1 Տե՛ս «Բուրևեստնիկ» թերթը, № 13, 22 հոկտեմբերի 1917 թ.։

2 Նույն տեղում։

3 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 157, ց. 2, գ. 57, թ. 49։

4 «Рабочая газета», 22 սեպտեմբերի 1911 թ. (նույնը տե՛ս Ստ. Շահումյան. երկեր, հատ. 2, էջ 155)։

Լենինի հետ նրա համագործակցության այս կամ այն կողմերին նվիրված հարուստ գրականություն է ստեղծվել[1]։

Մեր թեմայի ամբողջականությունը պահպանելու նպատակով, սույն բաժնում անհրաժեշտ է հակիրճ կերպով ցույց տալ Վ. Ի. Լենինի և Ս. Գ. Շահումյանի համագործակցությունն աշխատավորների ազատագրական պայքարի ղեկավարման գործում։

Ստ. Շահումյանի համագործակցությունը Վ. Ի. Լենինի հետ գործնական և անմիջական դարձավ 1903 թ. գարնանից, երբ նրանք անձամբ հանդիպեցին Ժնևում և նրանց միջև հաստատվեց անմիջական կապ։ Կրուպսկայան իր հուշերում վկայում է, որ ինքը և Վ. Ի. Լենինը Շահումյանին վաղուց էին ճանաչում, որ ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի շրջանից սկսած Շահումյանը «հարեց բոլշևիկներին»[2], կանգնեց լենինյան դրույթների պաշտպանության դիրքերում։

1903 թ. վերջերին և 1904 թ. սկզբներին, երբ պարտիական ճգնաժամն օրեցօր սրվում էր և մենշևիկները զավթելով «Իսկրա»-ն կրակ էին տեղում Լենինի և լենինյանների դեմ, Շահումյանը գտնվում էր Լենինին հավատարիմ մնացած սոցիալ-դեմոկրատների շարքում։ Նա Լենինի հանձնարարությամբ աշխատում էր ՌՍԴԲՊ Կենտկոմի ստեղծած հանձնաժողովում՝ Ժնևում հայերեն լեզվով մարքսիստական գրականության հրատարակությունը կազմակերպելու գործում։ Վ. Ի. Լենինի հետ աշխատելը, ներպարտիական պայքարում Լենինի հետևողականությունն ու սկզբունքայնությունը դասախարակիչ մեծ նշանակություն ունեցան Շահումյանի համար։ Վերադառնալով Կովկաս, Շահումյանը հանդես է գալիս որպես լենինյան կազմակերպական և տակտիկական սկզբունքների համար ակտիվ պայքարող[3]։

1904 թ. աշնանը Շահումյանը նորից Բեռլինումն է։ Նոյեմբերին Պետերբուրգում սովորող մի խումբ հայ ուսանողներ որոշում են հրատարակել մարքսիստական ժուռնալ, այդ հարցով դիմելով Շահումյանի օգնությանը, հեղինակներ երաշխավորելու համար։ Ստ.

---

1 Տե՛ս Ս. Գ. Շահումյան (1878—1918), Բիբլիոգրաֆիա, Ալ. Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարան, խ. Հ. Բարսեղյանի առաջարանով և խմբագրությամբ, Երևան, 1958։

2 Ն. Կ. Կրուպսկայա, Հիշողություններ, Մոսկվա, 1933, էջ 508։

3 Այդ մասին հանգամանորեն պատմում են Ս. Գ. Շահումյանի նամակները, հասցեագրված Վ. Ի. Լենինին և պարտիայի ուրիշ գործիչներին, որոնք հրապարակել է խ. Հ. Բարսեղյանը «Исторический архив» ժուռնալում, № 2, 1957, էջ 41—64։

Շահումյանը 1904 թ. նոյեմբերի 28-ին սիրալիր նամակով դիմեց «մեծարգո Վլադիմիր Իլյիչին»[1]։ Շահումյանը խնդրում է հոդված գրել, որը «հսկայական նշանակություն կունենա հայ ընթերցողների համար»։ Նամակը ավարտվում է «բարևներով և լավագույն մաղթանքներով՝ Ձեզ նվիրված Ս. Շահումյան» խոսքերով։ Ինչպես ցույց ավեց կյանքը, երիտասարդ ռևոլյուցիոնները մինչև վերջը հավատարիմ մնաց իր ուխտին։

1905 թվականի ռևոլյուցիան ալեկոծում էր Ռուսաստանը։ Շահումյանը նորից Կովկասում է։ Մայիսին նա այցելում է Հայաստան, լինում Ալավերդում, Երևանում, ուղղություն է տալիս Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին, ղեկավար մասնակցություն ունենում ՌՍԴԲՊ Կովկասյան Միության կոմիտեի գործունեությանը, հանդես է գալիս որպես ակտիվ կազմակերպիչ, կապ պահպանելով Վ. Ի. Լենինի հետ, նրան հաղորդելով պարտիական կյանքի կարևոր հարցերի մասին, ստանալով անհրաժեշտ դիրեկտիվներ։ Նույն թվականի հունվարին Վ. Ի. Լենինին գրած նամակում Շահումյանը հաղորդում է դաշնակների կողմից սոցիալ-դեմոկրատների դեմ կատարած ոտնձգությունների մասին, մայիսին Լենինին տեղեկացնում է, որ Կնունյանցը փախել է բանտից և ուղևորվել արտասահման, որ ինքը մեկնում է Ռուսաստան, անհրաժեշտության դեպքում իմ լեգալ հասցեն կարելի է իմանալ «հայ ընկերներից»[2] և այլն։

1906 թվականն է։ Ապրիլի 10—25-ին Շահումյանը Ստոկհոլմում նորից Վ. Ի. Լենինի մոտ է, մասնակցում է ՌՍԴԲՊ 4-րդ («Միավորիչ») համագումարին։ Երկու շաբաթից ավելի աշխատելով Վ. Ի. Լենինի հետ, Շահումյանը վերադառնալով, մամուլում հանդես եկավ հոդվածներով, որոնց մեջ շարադրված են համագումարում լենինյանների առաջ քաշած տակտիկան ու ծրագրային խնդիրները[3]։

1907 թ. ապրիլ-մայիսին Շահումյանը նորից մեկնում է արտասահման, Լոնդոն, որտեղ նա մասնակցում է ՌՍԴԲՊ 5-րդ համագումարին։ Համագումարի ընթացքում Շահումյանը ամեն օր հանդիպումներ է ունեցել Լենինի հետ, ակտիվ կերպով մասնակցել բոլշևիկյան ֆրակցիայի գործունեությանը։ Հանդես գալով համա-

---

1 Ստ. Շահումյան. Նամակներ, էջ 19։

2 Տե՛ս «Исторический архив», № 2, 1957, էջ 45։

3 «Կայծ» թերթ, 1906, № 17 և 18, Շահումյան, Երկեր, հատ. 3, էջ 129—143։

դումարում, Շահումյանը հետաքրքիր տեղեկություններ հաղորդեց Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության, Ալավերդու բանվորների գործադուլային պայքարի մասին, Բորչալուի գավառում սոցիալ-դեմոկրատական աշխատանքների և աշխատավորների մղած պայքարի մասին, ինչպես նաև մենշևիկների կազմալուծիչ գործունեության մի քանի օրինակների մասին[1]։

Համագումարից հետո Ստ. Շահումյանը զինված Վ. Ի. Լենինից ստացած դիրեկտիվներով, 1907 թ. հունիսին վերադառնում է Լոնդոնից և հաստատվում Բաքվում, աշխատում որպես Բաքվի բոլշևիկյան կազմակերպության ղեկավար։ 1907-ից մինչև 1917 թվականը Շահումյանին չվիճակվեց անձնական հանդիպում ունենալ Վ. Ի. Լենինի հետ։ Սակայն Վ. Ի. Լենինի և Շահումյանի միջև այդ շրջանում տեղի էր ունենում նամակագրություն։

1908 թվական։ Ռեակցիան մոլեգնում է, իսկ պարտիական ինտելիգենցիայի շարքերում երևում են լքում և տատանումներ։ Ո՞վ ո՞ւմ հետ է գնում։ Այդ հարցը դրված էր ամենուր, պարտիայի ներսում։ Բաքվի բոլշևիկները քննում էին համառուսական կոնֆերանսի դելեգատ ընտրելու հարցը։ Ստ. Շահումյանն առաջարկեց որպես դելեգատ ընտրել Վ. Ի. Լենինին։ «Մենք որոշեցինք,— գրել է Շահումյանը,—Բաքվի կոնֆերենցիայի մանդատը հանձնել Իլյիչին»[2]։ Մի այլ նամակում Շահումյանը արտասահմանում գտնվող Մ. Ցխակայային խնդրում է. «Հաղորդիր Իլյիչին մեր ողջույնը և հայտնիր մեր վերաբերմունքը ձեզ զբաղեցնող հարցերի նկատմամբ։ Մենք կուզենայինք նամակագրություն ունենալ նրա հետ, ուղարկիր մեզ նրա հասցեն»[3]։ 1908 թ. հուլիսին Ցխակայային գրած նամակում Շահումյանը խոսում է պարտիական ղեկավար շրջաններում նշմարվող հոսանքների մասին և ընդգծում, որ «մենք հաստատ համոզված ենք Իլյիչի դիրքավորման ճշտությանը» և «...մեծ անվստահությամբ ենք վերաբերվում էմպիրիոմոնիզմին»[4]։ Այնուհետև՝ «մենք ամբողջովին Իլյիչի կողմն ենք»։

Շահումյանը հանդես եկավ ամենից առաջ որպես պարտիայի շարքերի կազմակերպական միասնության և մարտունակության գործում Վ. Ի. Լենինի հավատարիմ զինակից։ Նա ամբողջովին

---

1 Տե՛ս ՌՍԴԲՊ 5-րդ (Լոնդոնի) համագումարի արձանագրությունները (ռուսերեն), Մ., 1935, էջ 236—238։

2 «Исторический архив», № 2, 1957, стр. 48.

3 «Исторический архив», № 2, 1957, стр. 47.

4 Նույն տեղում, էջ 46։

նվիրվեց պարտիայի անլեգալ կազմակերպությունները պահպանելու և լիկվիդատորության ամեն գույնի պաշտպանների դեմ պայքար մղելու գործին։

Պարտիայի կազմակերպական սիստեմի պահպանման հետ միասին, Շահումյանը նրա տեսության հարցերում հանդես եկավ Վ. Ի. Լենինի հռչակած սկզբունքների պաշտպանությամբ։

Ստեփան Շահումյանը հայտարարում էր, որ ՌՍԴԲՊ շարքերում առաջ եկած բազմաթիվ հոսանքների, խմբերի, ուղղություններին մեջ, նաև թեորիական տեսակետից, ամենաճշմարիտը Լենինի գլխավորած ուղղությունն է, բազմազան տեսություններից, ամենից հետևողական-մարքսիստականը, ռևոլյուցիոնը՝ լենինյան տեսությունը։ Շահումյանը հանդես է գալիս որպես լենինիզմի թեորիայի ստեղծագործող պրոպագանդիստ և կարևորագույն հարցերի հետագա մշակմանն ու զարգացմանը մասնակցող գործիչ։ Շահումյանը կազմակերպում է «Վոլնա» և «Սովրեմեննայա ժիզն» թերթերը, խմբագրում դրանք, գիմում Վ. Ի. Լենինին և ստանում ու տպագրում բոլշևիկների առաջնորդի հոդվածը՝ ուղղված Ռուսաստանում գործող մենշևիկ-լիկվիդատորների դեմ։ Նրա գրած, խմբագրած և տպած բոլոր հոդվածների մեջ հետևողականորեն անցնում էր լենինյան գիծը։

Վ. Ի. Լենինի և Ս. Շահումյանի համագործակցությունը հատկապես դրսևորում էր ցարական ժանդարմական գործակալների ուշադրությունը։ Ժանդարմական մի փաստաթղթում գրված է. «Գործակալության վերջին տեղեկությունների համաձայն, Շահումյանը համարվում է Կովկասի ամենից զարգացած և փորձված պարտիական աշխատողներից մեկը, որը միավորում է ամբողջ մարզի պարտիական գործիչներին արտասահմանում ապրողների հետ։ Նա համոզված բոլշևիկ է և հայտնի Լենինի կողմնակիցը, որի հետ ունի նամակագրություն»[1]։

1911 թ. վերջերին վրա էր հասնում Ստ. Շահումյանի և Վ. Ի. Լենինի հետ նոր հանդիպման հնարավորությունը։ Շահումյանը Բաքվի բոլշևիկների կողմից ընտրվում է ՌՍԴԲՊ 6-րդ կոնֆերանսի նախապատրաստման համառուսական հանձնաժողովի անդամ, լծվում է այդ գործին։ Սակայն ոստիկանությունը դեռևս 1911 թ. սեպտեմբերի վերջերին ձերբակալեց Շահումյանին, նախ փակեց Բայիլովի բանտում և ապա կառավարությունը նրան Անդրկովկասից

---

[1] ՄԼԻ Հայկական ֆիլիալի պարտադրանքով, ֆ. 7, ց. 1, գ. 57, թ. 3։

արտաքսեց Սստրախան, 5 տարի արգելելով ապրել Անդրկովկասում։ Շահումյանը չկարողացավ աղատվել ոստիկանական հսկողությունից և մեկնել Պրագա՝ Վ. Ի. Լենինի մոտ, կոնֆերանսին մասնակցելու։ Սակայն կոնֆերանսը Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ, ընտրելով պարտիայի Կենտրոնական կոմիտե, այդ ղեկավար կորիզի մեջ մտցրեց նաև Ստ. Շահումյանին։

Այնուհետև գալիս է Վ. Ի. Լենինի և Ս. Գ. Շահումյանի համագործակցության մի նոր էջը։ Դա Վ. Ի. Լենինի կողմից ՌՍԴԲՊ ազգային ծրագրի հետագա կատարելագործման ու խորացման, ազգային քաղաքականության սկզբունքների մշակման գործում Ս. Շահումյանի հանդես բերած ակտիվ մասնակցությունն է։ 1913 թ. ապրիլին Շահումյանը լինելով ազատ աքսորական, Լենինի հանձնարարությամբ մեկնում է Պետերբուրգ և որոշ ժամանակ խմբագրում «Պրավդա» թերթը։ Սակայն նրան արգելում են ապրել Պետերբուրգում և նորից վերադարձնում աքսորավայրը, Աստրախանի մոտ։

1913 թ. հունիսի սկզբին Շահումյանը ստանում է Վ. Ի. Լենինի նամակը, որին պատասխան գրելով, շնորհակալություն է հայտնում, նկարագրում է աշխատանքի դժվարին պայմանները, խոսում է այն սոցիալ-դեմոկրատների մասին, որոնք «անհուսալիորեն խճճվել են աստվածաորոնումների մեջ», միաժամանակ նշում է, որ բանվորները բոլորը «պրավդիստներ են»։ Նույն տարվա օգոստոսի 11-ին Վ. Ի. Լենինը Կրակովում ստանալով Ստ. Շահումյանի նամակը, իսկույն պատասխան է գրում. «Թանկագին ընկեր, վերադառնալով տուն, ես գտա Ձեր նամակը»։ Այդ նամակով Շահումյանը նյութեր էր ուղարկել Լենինին Կովկասում ազգային հարցի մասին։ Լենինը նամակի վերջում Շահումյանին հիշեցնում է, որ ազգությունների մասին նյութերի հավաքման հետ միասին, «մի մոռացեք նույնպես փնտրել այնպիսի կովկասցի ընկերներ, որոնք կարողանային Կովկասում ազգային հարցի մասին հոդվածներ գրել։ Ողջույն և հաջողության ցանկություն։ Ձեր Վ. Իլյին»[1]։

Դրանից երեք շաբաթ անց, սեպտեմբերի սկզբներին Ստ. Շահումյանը նորից գրում է. «Մեծարգո Վլադիմիր Իլյիչին, ուղարկում եմ խոստացածս բրոշյուրը և հայկական գործերի վերաբերյալ երկու զեկուցումների թարգմանությունը»[2]։ Այնուհետև Շահումյանը խոսում է Կովկասի նահանգներում ազգությունների տեղաբաշխման մասին, նշում, որ տվյալներ կարելի է գտնել «Кавказский ка-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 104։
[2] Ստ. Շահումյան, Նամակներ, էջ 32։

лендарь» հրատարակությունում։ Շահումյանը շեշտում է, որ եթե «...ձեզ մոտ հարցեր կծագեն, կպատասխանեմ մեծագույն պատրաստակամությամբ»։ Այնուհետև նա հարցնում է Լենինին առաջիկա պլանների մասին, «թե ի՞նչ է կատարվում այժմ Ձեզ մոտ, ոչ մի պատկերացում չունեմ... Շատ շնորհակալ կլինեի այնտեղից տրվող ամեն տեսակ տեղեկությունների համար... Ձեր անձնվեր» (Շահումյան)։

Ազգային հարցը այդ շրջանում հանդիսանում էր ՌՍԴԲՊ շարքերում ծավալվող տեսական և պրակտիկ նշանակություն ունեցող առաջնակարգ հարց։ Վ. Ի. Լենինը հանդես եկավ «Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին», «Կուլտուր-ազգային ավտոնոմիայի մասին», «ՌՍԴԲՊ ազգային ծրագրի մասին», «Ազգային իրավահավասարություն», «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» և այլ երկերով։ «Ազգերի լիակատար իրավահավասարություն, ազգերի ինքնորոշման իրավունք, բոլոր ազգերի բանվորներին միաձուլում,— ազգային այս ծրագիրն է ուսուցանում մարքսիզմը, ուսուցանում ամբողջ աշխարհի փորձը և Ռուսաստանի փորձը»,— գրում էր Վ. Ի. Լենինը[1]։

Անդրադառնալով Ստ. Շահումյանին, պետք է ընդգծել, որ նա հանդես եկավ որպես լենինիզմի թեորետիկական դրույթների ոչ միայն հմուտ պրոպագանդիստ, այլև ազգային հարցի նշանավոր թեորետիկ։

Վ. Ի. Լենինը բարձր էր գնահատում Ստ. Շահումյանի տաղանդը ոչ միայն ռևոլյուցիոն պրակտիկ աշխատանքի, այլև մարքսիզմ-լենինիզմի տեսության կարևոր հարցերը մշակելու և զարգացնելու գործում։ Դա երևաց թեկուզ այն բանից, որ 1913 թ. սեպտեմբերին Պորոնինոյում ՌՍԴԲՊ Կենտկոմի և պարտիական աշխատողների խորհրդակցությունը, երբ քննեց ազգային հարցում պարտիայի առաջադրանքները և ընդունեց բանաձև, Վ. Ի. Լենինն այդ բանաձևն ուղարկեց Ստ. Շահումյանին ծանոթանալու և նրա մասին եզրակացություն տալու համար։

Ստ. Շահումյանը գոհունակությամբ ընդունեց Վ. Ի. Լենինի հանձնարարությունը։ Նույն թվականի նոյեմբերին նա Վ. Ի. Լենինին ուղարկում է նամակ պարտիայի ազգային ծրագրի մի շարք սկզբունքային հարցերի մասին, որոնք դրված էին նաև Պորոնինոյի խորհրդակցության բանաձևում։

Շահումյանը տեղեկացնում է Վ. Ի. Լենինին, որ ինքը բրոշյուր

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 569։

է գրում ազգային հարցի մասին։ «Ազգային հարցի վերաբերյալ պոպուլյար բրոշյուրը շատ է հարկավոր,— գրել է Լենինը։— Գրեցեք։ Սպասում եմ պատասխանի և ամուր, ամուր սեղմում Ձեր ձեռքը։ Ձեր Վ. Ի.»[1]։ Շահումյանը գրեց «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» բրոշյուրը, որում նա վարպետորեն շարադրել է մարքսիզմ-լենինիզմի թեորիայի մի շարք հարցեր[2]։

1914 թվականի սկզբներին Վ. Ի. Լենինը կազմեց «Ազգերի իրավահավասարության և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության օրենքի նախագիծ»[3], այն ուղարկեց Ստ. Շահումյանին կարծիքի համար։ Ստ. Շահումյանը սրտառուչ նամակ է գրում իր «թանկագին Վլադիմիր Իլյիչին» և հայտնում, որ «Ստացա Ձեր նամակը և օրինագիծը։ Շատ շնորհակալ եմ Ձեզնից վստահության և ուշադրության համար»[4]։ Շահումյանը նշել է, որ «առջևս ունենալով Ձեր պատրաստի նախագիծը, կարող եմ հայտնել լիակատար բավարարվածություն ու համաձայնություն»։

Այս նամակում նորից, ցայտունորեն դրսևորվել է Շահումյանի ստեղծագործական մոտեցումը հարցերին, նրա ինքնուրույն մտածելու կարողությունը։ Վ. Ի. Լենինն իր աշակերտներին դաստիարակում էր հենց այդ ոգով։ Դա երևում է Լենինի և Շահումյանի բարեկամության պատմության շատ օրինակներում։

1915 թ. հոկտեմբերին Ս. Շահումյանը ծածկագիր նամակ է ուղարկել Վ. Ի. Լենինին և Ն. Կ. Կրուպսկայային։ Այդ նամակից երևում է, որ Լենինը Շահումյանին ուղարկել է նաև այլ նամակներ, որոնք դեռևս մեզ հայտնի չեն։ «Ինձ հիշելու և նամակի համար շատ շնորհակալ եմ Ձեզանից,— գրել է Շահումյանը,— Ձեր նամակները, խորհուրդները և ցուցումները ինձ համար միշտ ամենքանից թանկ են եղել»[5]։

Վ. Ի. Լենինը ցանկություն էր հայտնել իմանալ թե Շահումյանն ի՞նչ է անում և ի՞նչ է մտածում նոր պայմաններում։ Պատասխանը պարզ էր. «Ձեզ հետ միանման եմ մտածում»։ Եվ երբ նա ստացել է Լենինի կողմից այդ բանի հաստատումը, «շատ երջանիկ զգացի ինձ» գրել է Շահումյանը։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 627։

2 Բրոշյուրը հրատարակվել է Ստ. Շահումյանի հատորներում և առանձին գրքով։ Տե՛ս հատ. 2, էջ 272—327։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 345—347։

4 Ստ. Շահումյան, Նամակներ, էջ 46։

5 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 348։

Այսպիսով, Ս. Գ. Շահումյանը ՌՍԴԲՊ շարքերը մտնելու առաջին օրերից սկսած հաստատուն լենինյան էր. ներպարտիական պայքարում և ռևոլյուցիոն մասսաների հետ կատարած աշխատանքում նա աճեց, կոփվեց, Լենինի կողմից դաստիարակվեց և դարձավ նրա հավատարիմ զինակիցը։ Ստ. Շահումյանը համագործակցելով Վ. Ի. Լենինի հետ, ամբողջովին նվիրվելով լենինիզմի ստրատեգիայի և տակտիկայի կենսագործմանը, հանդիսացավ Կոմունիստական պարտիայի ակտիվ կառուցողներից և ցարիզմի դեմ մղվող մարտերում ժողովրդական մասսաների ղեկավարներից մեկը։

* * *

Աշխատավորների ազատագրական պայքարը կազմակերպող և գլխավորող լենինյան հին գվարդիայի ակտիվ գործիչներից է Սուրեն Սպանդարի Սպանդարյանը (1882—1916)։

Նրան վիճակվեց Վ. Ի. Լենինի հետ հանդիպումներ ունենալ և անմիջականորեն համագործակցել կարճ ժամանակ, սակայն ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի շարքերում իր գործունեության ամբողջ ժամանակամիջոցում, 1902 թվականից մինչև մահը Սպանդարյանը թե գաղափարապես և թե կազմակերպական-պրակտիկ աշխատանքով ամբողջովին տոգորված էր Լենինի գործով։

Թշնամիները բնութագրելով Սպանդարյանի քաղաքական դեմքը, նրա մասին ասել են. «Եթե քրքրեք Տիմոֆեի (Սպանդարյանի) ուղեղը, այնտեղ կարելի է գտնել միայն Լենին»[1]։

Հայտնի է, որ Սուրեն Սպանդարյանը ծնվել և հասակ է առել մի ընտանիքում, ուր իշխող մթնոլորտը հագեցած է եղել նրա հոր, «Նոր Դար»-ի խմբագիր Սպանդար Սպանդարյանի գաղափարներով։ Սակայն Սուրենի քաղաքական-հասարակական հայացքները ձևավորվում են ռևոլյուցիոն-ազատագրական պայքարի մեջ լենինյան գաղափարների ազդեցության տակ[2]։ Դեռևս գիմնազիայի աշա-

---

[1] ՄԱԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 6, գ. 488, թ. 1։

[2] Սուրեն Սպանդարյանի կյանքը և ռևոլյուցիոն գործունեությունը լուսաբանվել է Մորուս Հասարջյանի կազմած Ս. Սպանդարյանի հոդվածների և նամակների ժողովածուում, որը հրատարակվել է հայերեն և ռուսերեն (1939, 1940)։ Վ. Ավետիսյանի «Սուրեն Սպանդարյան» մենագրության մեջ (հայերեն և ռուսերեն հրատարակությունները, 1945, 1957) և ուրիշ գրքույկներում ու հոդվածներում։ Մանրամասն տե՛ս «Սուրեն Սպանդարյան. 1882—1916, Բիբլիոգրաֆիա». խմբագրությամբ և առաջաբանով Խ. Հ. Բարսեղյանի, 1958։

կերա Սպանդարյանը «Իսկրա» թերթում կարդում է Վ. Ի. Լենինի հոդվածները։

Մոսկվայի համալսարանում գործող ընդհատակյա սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունն իր շարքերում դաստիարակում է բոցաշունչ Սուրենին։ Նա այնտեղ կարդում է Վ. Ի. Լենինի «Ինչ անել» աշխատությունը, որի գաղափարները թափանցել էին շատ սոցիալ-դեմոկրատ ուսանողների մեջ։ Համալսարանից դուրս ևս նա կապեր է հաստատում սոցիալ-դեմոկրատների հետ և մասնակցում ընդհատակյա ռևոլյուցիոն գործունեության[1]։ Նա այրվում էր Լենինին տեսնելու կարոտով։

Ս. Սպանդարյանը մեկնում է արտասահման, լինում է Բեռլինում և Մյունխենում, հետո գնում Հայդելբերգ քաղաքը, ընդունվում համալսարան, միաժամանակ կապեր հաստատում գերմանական սոցիալիստների հետ, ավելի մոտիկից ծանոթանում մարքսիզմի ուսմունքին։ Այստեղ Սպանդարյանը սովորում է գերմաներեն։ Նա ծանոթանում է բոլշևիկների և մենշևիկների միջև մղվող պայքարին, Վ. Ի. Լենինի դիրքը համարում է ամենաճիշտը և մասնակցում այն պայքարին, որ մղվում էր մենշևիկների դեմ։

Շուտով Ս. Սպանդարյանը վերադառնում է Անդրկովկաս և տեսնում ծավալվող ռևոլյուցիոն փոթորիկը, իսկույն ընտրվում է Կովկասյան Միության կոմիտեի կազմում[2]։ Նրան դիտում են որպես «Մոսկվայից եկած հայտնի սոցիալ-դեմոկրատ», «արտակարգ ընդունակություններով օժտված մի անձնավորություն»[3], հաստատուն լենինյան։

1905 թ. հոկտեմբերին Սուրեն Սպանդարյանը նորից Մոսկվայում է, նոյեմբերի սկզբներին գնում է Պետերբուրգ, իսկ դեկտեմբերյան ապստամբության օրերին Մոսկվայում, Կրասնայա Պրեսնյայում բարիկադների վրա մարտնչող բանվորների մեջ։ Հետևանքը պարզ էր. համալսարանից վտարում և վերադարձ Թիֆլիս։

Այդ փորձությունը նրա մեջ ավելի ամրապնդեց հավատը դեպի Վ. Ի. Լենինը։ Հին բոլշևիկ Վերա Շվեյցերը, որ լավ տեղյակ էր ընդհատակի ծանր տարիների պայքարի դժվարություններին[4], գրել է. «Սուրեն Սպանդարյանը պարտության մեջ իր աշխատանքի առաջին օրերից առանց տատանվելու գնաց Լենինի ետևից»[5]։

---

[1] Архив МИУ, Студенческие дела, № 22.

[2] Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 14, թ. 39։

[3] Տե՛ս «Սուրեն Սպանդարյան», Մոսկվա, 1927, էջ 17։

[4] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 2136, թ. 1—5։

[5] ՄԼԻ Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 6, գ. 488, թ. 1։

Անդրկովկասում Ս. Սպանդարյանը գործում էր որպես Լենինյան գաղափարների պրոպագանդիստ, բոլշևիկյան կազմակերպությունների համախմբման համար պայքարող։ Նա մոտիկից շփվում է Ստ. Շահումյանի, Մ. Ցխակայայի, Ա. Ջափարիձեի և ուրիշ բոլշևիկների հետ։ Սպանդարյանը կլանվում է պարտիական կազմակերպական և հրապարակախոսական լայն գործունեության մեջ, ակտիվորեն պայքարում Վ. Ի. Լենինի մշակած թեորիական ու տակտիկական դրույթների կենսագործման համար։ Սպանդարյանը Անդրկովկասի բոլշևիկների ղեկավարների շարքումն է, մասնակցում է հայերեն և ռուսերեն բոլշևիկյան մի շարք թերթերի խմբագրմանը, գրում է բազմաթիվ հոդվածներ, մասնակցում ընդհատակյա պարտիական աշխատանքներին, շրջում է երկրամասում և հանդես գալիս բանվորների առաջ, ամենուրեք պաշտպանում ՌՍԴԲՊ մեծամասնականների — լենինյանների դիծը, հակահարված տալիս բոլշևիկների հակառակորդներին։

Խոշոր է բացառիկ հրապարակախոս, աննկուն ռևոլյուցիոներ-մարտիկ Ս. Սպանդարյանի դերը հայ աշխատավորության մեջ Վ. Ի. Լենինի գաղափարները պրոպագանդելու, հայ ռևոլյուցիոն գործիչներին Լենինի շուրջը համախմբելու և բուրժուական ու մանրբուրժուական պարտիաների գործունեության վնասակար հետևանքները բացահայտելու գործում։ Հայ մարքսիստական-լենինյան մամուլում Սպանդարյանը տպել է բազմաթիվ հոդվածներ, որոնք Հայաստանի աշխատավորներին բացատրել են Վ. Ի. Լենինի մշակած ստրատեգիական ու տակտիկական լոզունգները։

Վ. Ի. Լենինի հետ Սուրեն Սպանդարյանի համագործակցության ամենահարուստ և կարևորագույն ժամանակամիջոցը պարտիայի համար պատմական մեծ նշանակություն ունեցող Համառուսական 6-րդ (Պրագայի) կոնֆերանսի նախապատրաստման և անցկացման շրջանն է։

Սուրեն Սպանդարյանի՝ որպես Վ. Ի. Լենինի զինակցի և լենինյան պարտիայի ակտիվ կառուցողներից մեկի դերն առանձնապես բեղմնավոր էր այդ շրջանում։ Նա կանգնած է լենինյան պողպատյա գվարդիայի առաջին շարքում, Շահումյանի, Օրջոնիկիձեի, Սվերդլովի, Կալինինի, Դուբրովինսկու, Բուբնովի, Զերժինսկու և ուրիշների հետ միասին։

1911 թ. հունիսին Վ. Ի. Լենինը Փարիզում հրավիրեց ՌՍԴԲՊ Կենտկոմի անդամների խորհրդակցություն, որը որոշեց ստեղծել Արտասահմանյան Կազմակերպական Հանձնաժողով՝ ՌՍԴԲՊ Հա-

մառուսական կոնֆերանս հրավիրելու նպատակով։ Վ. Ի. Լենինը խնդիր դրեց ստեղծել նաև Ռուսական կազմակերպական հանձնաժողով (ՌԿՀ)։ Այդ նպատակով Վ. Ի. Լենինի հանձնարարականով արտասահմանից Ռուսաստան եկավ Գ. Կ. Օրջոնիկիձեն, որը գլխավորում էր ՌԿՀ գործունեությունը։ Սուրեն Սպանդարյանը մտցվում է ՌԿՀ-ի կազմում և Օրջոնիկիձեի հետ մասնակցում կոնֆերանսի նախապատրաստմանը։ Վ. Ի. Լենինը տեղեկանալով, որ արդեն ռուսական կազմակերպական հանձնաժողով է ստեղծվել, որի կազմում աշխատում են Ս. Շահումյանը, Ս. Օրջոնիկիձեն, Ս. Սպանդարյանը և ուրիշներ, ուրախանում է և գրում «Պարտիական կրիզիսի լուծումը» հոդվածը։ «ՌԿՀ-ի ստեղծմամբ,— գրում էր Լենինը,— ակնհայտորեն վրա է հասնում եթե ոչ կրիզիսի վախճանը, ապա համենայն դեպս մի նոր ու վճռական բեկում դեպի լավը՝ պարտիայի զարգացման ասպարեզում»[1]։

ՌՍԴԲՊ կազմակերպությունները համառուսական կոնֆերանսի պատգամավորներ էին ընտրում։ Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպությունն Սպանդարյանին ընտրում է Համառուսական 6-րդ կոնֆերանսի պատգամավոր։ Բաքվի բոլշևիկները պատգամավոր են ընտրում Ս. Շահումյանին, սակայն շուտով Շահումյանը ձերբակալվում է և չի կարողանում մասնակցել կոնֆերանսին։

ՌՍԴԲՊ 6-րդ կոնֆերանսի նիստերը ղեկավարում էր Վ. Ի. Լենինը։ Սպանդարյանը հունվարի 5—17-ին (18—30-ին) ամեն օր հանդիպում էր Վ. Ի. Լենինին և աշխատում նրա հետ։ Հունվարի 10-ին Սպանդարյանը զեկուցում է Անդրկովկասի կազմակերպությունների գործունեության մասին։ ՌՍԴԲՊ 6-րդ կոնֆերանսն ընտրեց Կենտրոնական կոմիտե՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ։ Կենտկոմի անդամների մեջ էին Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ս. Սպանդարյանը և ուրիշներ։

Պրագայի կոնֆերանսը ավարտված է։ Սպանդարյանը աշխատում է նորընտիր բոլշևիկյան Կենտկոմում, կատարում է Լենինի հանձնարարությունները, այցելում Եվրոպայի քաղաքները։ 3-րդ Պետական դումայի պատգամավորներ Պոլետաևը, Մուրանովը և Պետրովսկին չկարողացան ժամանակին Պրագա մեկնել և մասնակցել կոնֆերանսին։ Այդ պատճառով ՌՍԴԲՊ բոլշևիկյան Կենտկոմը լիազորում է Վ. Ի. Լենինին և Ս. Սպանդարյանին մեկնել Լայպցիգ, ուր գտնվում էին Դումայի պատգամավորները և նրանց

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 421։

հետ խորհրդակցություն ունենալ, կոնֆերանսի որոշումներն ընդհանուր հավանության արժանանալու նպատակով։ Այդ խորհրդակցությունում Վ. Ի. Լենինը և Ս. Սպանդարյանը հանդես են գալիս զեկուցումներով Պրագայի կոնֆերենցիայի հանրագումարների և ռուսական կազմ. հանձնաժողովի գործունեության մասին[1]։

Կենտկոմի հանձնարարականը հաջող կատարվեց։ ՌՍԴԲՊ նորընտիր Կենտկոմին անհրաժեշտ էր բանակցություններ վարել գերմանական սոցիալ-դեմոկրատական պարտիայի և 2-րդ ինտերնացիոնալի գործիչներ Կ. Կաուցկու, Ֆ. Մերինգի և Կ. Ցետկինի հետ նրանց պահ տրված ՌՍԴԲՊ դրամական միջոցներն ստանալու և պարտիայի կարիքներին տրամադրելու նպատակով։ ՌՍԴԲՊ բոլշևիկյան Կենտկոմն առանձնացնում է ներկայացուցիչներ, որոնց մեջ Վ. Ի. Լենինի առաջարկությամբ մտցվում է և Ս. Սպանդարյանը։ Նա գնում է Բեռլին, հանդիպումներ է ունենում այդ սոցիալիստների հետ, այնուհետև մեկնում Փարիզ և նորից Ռուսաստան, ավելի լայն գործունեություն ծավալելու համար։

Վ. Ի. Լենինը ճանաչելով և գնահատելով Սպանդարյանին, նրան բարձրացրեց համառուսական մասշտաբի զեկավարի աստիճանի։ Ս. Սպանդարյանը Վ. Ի. Լենինի գլխավորած Կենտրոնական կոմիտեի առաջադրանքով Ռուսաստանում աշխատանք ծավալեց նախ Պետերբուրգում, ապա Մոսկվայում, Ռիգայում, այնուհետև մեկնեց Անդրկովկաս, ուր հանդես եկավ զեկուցումներով Պրագայի կոնֆերանսի մասին, շարադրելով Վ. Ի. Լենինի կողմից առաջադրված խնդիրները։

Սակայն բախտը երկար չժպտաց Սուրեն Սպանդարյանին։ Պարզվեց, որ Պրագայի կոնֆերանսի մասնակիցների մեջ թափանցել էր մի խոշոր պրովոկատոր (Մալինովսկի), որը ժանդարմական պահնորդական բաժնին հայտնել էր Ռուսաստան վերադարձած լենինյանների մասին։ 1912 թ. մարտի 31-ին Բաքվում Սուրեն Սպանդարյանը ձերբակալվում է, հետո «երաշխավորագրով» ազատ արձակվում, մեկնում է Թիֆլիս, որտեղ նորից ձերբակալվում է և նետվում Մետեխի բանտը։ Պետերբուրգում ձերբակալվեց Գ. Կ. Օրջոնիկիձեն և ուղարկվեց Սիբիր։ Նույն վիճակին արժանացավ և Յակ. Սվերդլովը։

Թիֆլիսում տեղի ունեցավ դատ Ս. Սպանդարյանի նկատմամբ։ Նույն գործով դատավճռին նաև Ե. Դ. Ստասովան, Վ. Լ. Շվեյցերը,

---

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, 1939, էջ 368։

Ա. Ս. Հովվյանը[1]։ Դատական գործի մեջ եղած մեղադրանքի ձևակերպումները և փաստաթղթերը նույնպես ցույց են տալիս Ս. Սպանդարյանի կյանքի կարևորագույն կողմը, նրա համագործակցությունը Վ. Ի. Լենինի հետ, նրա անսահման նվիրվածությունը Վ. Ի. Լենինի գործին։ Սպանդարյանը շղթայակապ ուղարկվեց հեռավոր Սիբիր։

Վ. Ի. Լենինը տեղեկանալով Սպանդարյանի ձերբակալման մասին, խիստ անհանգստացել էր։ Մայիսի 5-ին Վ. Ի. Լենինը և Ն. Կ. Կրուպսկայան այցելում են Սպանդար Սպանդարյանին «ավելի մանրամասն տեղեկանալու» Սուրենի ձերբակալման հանգամանքների մասին[2]։ Վ. Ի. Լենինը նամակ է գրում Բեռլինում ապրող Ոսկի Տեր- Հովհաննիսյանին (Սպանդարյանների ընտանիքի մտերիմ բարեկամին, գրող Մուրացանի կնոջը) Սպանդարյանին հասած արհավիրքի առիթով։ «Չգիտեմ հայտնի՞ է արդյոք Ձեզ մի տխուր լուր մեր ընդհանուր բարեկամի՝ Սուրեն Սպանդարյանի մասին... նա Բաքվում ձերբակալված է։ Նրա կինը գրում է հորը, որ նրա մասին հոգ տանող չկա, որ նա անկողին, որևէ բան չունի։ Մարդ չկա, որ նրան կաթ տանի...»[3]։ Լենինի մեծ սիրտը այրվում էր Սպանդարյանին օգնելու ցանկությամբ։ Նա դրամական օգնություն է ցույց տալիս Սուրենի հորը, որի դրությունը «նույնիսկ հուսահատական էր», միաժամանակ Տեր Հովհաննիսյանից ցանկանում է իմանալ ո՞ւմ կարելի է նամակ գրել, դիմել «խնդրել հոգ տանելու Սուրենի մասին»։ Սիբիրից Սպանդարյանը նամակներ է գրում Լենինին և երբեմն պատասխան ստանում։

1914 թ. մարտի 15-ին նա գրում է նամակ՝ «Թանկագին Վլադիմիր Իլյիչ։ Հղում եմ Ձեզ և Նադեժդա Կոնստանտինովնային հազարավոր ողջույններ»[4]։ Այնուհետև նամակում Սպանդարյանը պատմում է իր կյանքի և սպասելիքների մասին. «... ապրում եմ մի խուլ գյուղում... անասելի ձանձրույթ է և սպանիչ օրերն անցնում են իրար ետևից։ Պարապել չի կարելի, որովհետև չկան գրքեր, անհրաժեշտ ձեռնարկներ, իսկ դուրս գրել ոչ մի կերպ հնա-

---

1 Վերջերս հին բոլշևիկ Ռ. Պ. Քաթանյանը հրապարակեց «Սպանդարյանի պատավարությունը» խորագրով բացառիկ կարևոր փաստաթղթերը («Պատմա-բանասիրական հանդես», №.1, 1960, էջ 139—148)։

2 Տե՛ս Ն. Կ. Կրուպսկայա, Հիշողություններ, էջ 339։

3 «Լենինյան ժողովածու», հատ. 13, էջ 205։

4 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 17, ց. 11, գ. 47743, թ. 1 (նույնը զետեղվել է Սպանդարյանի երկերի հատ. 2-ում, էջ 273)։

բավոր չէ... Էհ, այս բոլորը գրողի ծոցը։ Ես այնուամենայնիվ հաստատապես հուսով եմ, որ «օրը» հեռու չէ և որ մենք դեռ կպատրաստվենք գործի համար...»։ Սպանդարյանը Լենինից խնդրում է տեղեկացնի պարտիայի գործերի, մասնավորի, նոր հրատարակությունների մասին, «եթե մի քանի խոսք գրեք ինձ, շատ և շատ շնորհակալ կլինեմ Ձեզնից... Ձեր Սուրեն»[1]։

Հոկտեմբերի 11-ին Սպանդարյանը դարձյալ գրում է Լենինին, «Բարեկամներ, Ձեր 2 VIII նամակը ստացանք։ Նա շատ վնասվել է երկարատև ճանապարհորդությունից դեպի մեր բևեռային երկրները, այդ պատճառով էլ շատ նման է Ասորեստանի թագավորների դժվար վերծանելի բևեռագրերին։ Այնուամենայնիվ շնորհակալություն տեղեկության համար... Ձեր Սուրեն»[2]։

1916 թ. հունիսի 10-ին Սպանդարյանը Վ. Ի. Լենինին գրում է վերջին նամակը. «Թանկագին բարեկամներ։ Ձեզ ամենաբոցավառ ողջույնն ենք հղում մեր սառն երկրներից։ Մենք ողով արի ենք և նույնն ենք ցանկանում Ձեզ։ Գրեք թեկուզ ոչ հաճախ։ Տեղեկացրեք քիչ-քիչ գործերի մասին, Ձեր կյանքի-ապրուստի մասին... Նորից ողջույններ ընկերներին և մտերիմներին։ Սուրեն Սպանդարյան»[3]։

1916 թ. սեպտեմբերի սկզբներին Սպանդարյանի վիճակը խիստ վատանում է։ Ընկերները նրան փոխադրում են Կրասնոյարսկի հիվանդանոցը։ Նրա հետ աքսորում գտնվող Վերա Շվեյցերը գրել է, որ Սպանդարյանը չնայած հոգեպրքի մեջ էր, սակայն փակելով աչքերը, նորից ու նորից կրկնել է՝ «կանդնեցեք Լենինի գրոշի տակ...»[4]։

* * *

Այսպիսով, հայ առաջին ականավոր ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատները համակվելով լենինյան գաղափարներով և համագործակցելով Վ. Ի. Լենինի հետ, նրա քարոզած կոմունիստական հաղթական ռևոլյուցիայի մեջ տեսան բոլոր ազգերի աշխատավորների, այդ թվում և հայերի ազատագրությունը։ Ի. Լալայանցը, Բ. Կնունյանցը, Ս. Շահումյանը, Ս. Սպանդարյանը մասնակցելով համա-

---

[1] Նույն տեղում, էջ 274։

[2] ՄԼԻ ԿՊՍ., ֆ. 17, ց. 14, գ. 27234, թ. 1 (տե՛ս նաև նույն հատորը, էջ 277)։

[3] Նույն տեղում, գ. 27233, թ. 1 (հատորում՝ էջ 278)։

[4] Տե՛ս «Комсомольский пропагандист и агитатор» ժուռնալը, 1937, № 13:

ռուսաստանյան ռևոլյուցիոն շարժման ղեկավարմանը, Հանդիսացան հայ և ռուս, վրացի և ադրբեջանցի, ուկրաինացի և բելոռուս, ուզբեկ և լատիշ ժողովուրդներին ցարիզմի լծից ազատագրելու մեծ պայքարի գործիչներ։ Նրանք ամբողջ ժողովրդի ազատագրման գործին անձնվիրության օրինակ, ռևոլյուցիոն սխրագործության օրինակ։ Լենինի և նրա զինակիցների այդ օրինակը, նրանց գաղափարական և կազմակերպչական անգուլ գործունեությունը հայ ժողովրդի հաղարավոր զավակների համախմբեց մարքսիզմի-լենինիզմի դրոշի ներքո, նրանց ոգեշնչեց և պայքարի մղեց բռնակալության դեմ։

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՆԻՆՅԱՆ Ս. Դ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԱՐԻԶՄԻ ԴԵՄ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի մեջ բեկում կատարվեց ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին, երբ սոցիալ-դեմոկրատական շարժումը տարածվեց հայ իրականության մեջ։

1890-ական թվականների վերջերում և 1900-ական թվականների սկզբին,— գրել է Շահումյանը,— հայ բանվորները ներգրավվեցին ռևոլյուցիոն շարժման մեջ. «Հայերի մեջ ծնունդ առան առաջին սոցիալ-դեմոկրատական խմբակները, որոնք հայ բանվորներին մի ընդհանուր բանակի մեջ կապեցին վրացի, ռուս և այլ բանվորների հետ և նրանց առաջ դրեցին լայն ռևոլյուցիոն խնդիրներ»[1]։

Լենինյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրական պայքարը տարան ռևոլյուցիոն ուղիով, որը ցույց էր տալիս լենինյան պարտիան։

1902 թվականի գարնանը ստեղծվեց հայ ռևոլյուցիոն մարքսիստների առաջին կազմակերպությունը, որը հայ ժողովրդի ազատագրական պայքարը կապեց ռուսական ռևոլյուցիայի հետ։ Դա հայ սոցիալ-դեմոկրատների միությունն էր։

Այդ Միության կազմակերպողներն էին Արշակ Զուրաբյանը, Բոգդան Կնունյանցը, Ստեփան Շահումյանը, Աշոտ Խումարյանը, Արամայիս Երզնկյանը, Դանուշ Շահվերդյանը, Սերգո Խանոյանը

---

1 Ստ. Շահումյան, *Երկեր*, հատ. I, էջ 284։

և ուրիշներ։ Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը կազմակերպվեց Վ. Ի. Լենինի գիտությամբ, նրա աշակերտների նախաձեռնությամբ։ 1903 թ. սկզբներին Վ. Ի. Լենինը գրել է, որ Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը, ինչպես մեզ հայտնի է, ավելի քան կես տարի է, ինչ սկսել է իր պրակտիկ գործունեությունը[1]։

Արշակ Գերասիմի Զուրաբյանը (1873—1920) որպես մարքսիստ սոցիալ-դեմոկրատ ձևավորվեց Պետերբուրգում սովորելու ժամանակ, 1890-ական թ. սկզբներին։ Նա հանդես եկավ որպես հայ առաջին մարքսիստներից մեկը։ 1895 թվականին Զուրաբյանը ներգրավվում է «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միության» մեջ և այդ ժամանակ էլ ծանոթանում է Վ. Ի. Լենինի ծրագրերին, դաստիարակվում նրանց ոգով։ Վերադառնալով Կովկաս, նա աշխատում էր կապեր ստեղծել տեղում գործող հատ ու կենտ սոցիալ-դեմոկրատների հետ, ծավալել կազմակերպական և պրոպագանդիստական գործունեություն։ Ա. Զուրաբյանը ծանոթ էր Ստ. Շահումյանին և Բ. Կնունյանցին։ 1902 թվականի սկզբներին ցարական բանակի Թիֆլիսի և Գորիի կայազորներում ծառայելիս, Զուրաբյանը ծանոթանում է նաև Աշոտ Խումարյանի հետ, որը 1895—1898 թթ. Մետեխի բանտում նստելուց հետո աքսորվել էր Վյատկայի նահանգը[2], այնտեղ երեք տարի ապրել ավելի քան 30 մարքսիստների հետ, որոնց մեջ են եղել Բաումանը, Ներժինսկին և ուրիշ լենինյաններ[3]։ Այստեղ Խումարյանը, ինչպես ինքն է գրել, «եփվում է մարքսիստական կաթսայում» և 1898 թվականից մտնում ՌՍԴԲՊ շարքերը, դառնալով «գիտակից մարքսիստ»[4]։

Ա. Խումարյանը գրել է, որ ինքը Թիֆլիսում Ստ. Շահումյանից նամակ է տարել Արշ. Զուրաբյանին «ապագա սոցիալ-դեմոկրատական գործունեության մասին»[5]։

1902 թ. գարնանը, զատկի օրը, Թիֆլիսում Արշ. Զուրաբյանի բնակարանում տեղի է ունենում հայ մարքսիստ-սոցիալ-դեմոկրատների հավաք, որտեղ քննվում է միասնական կազմակերպություն և օրգան ունենալու հարցը։ Աշ. Խումարյանը ուղարկվում է Բաքու՝ Բոդդան Կնունյանցի մոտ, Շահումյանի նամակով։ Կնունյանցը՝ որ «այդ ժամանակ Բաքվի կազմակերպության հոգին էր և

---

1 Տե՛ս «Իսկրա» թերթը, № 33, 1 փետրվարի 1903 թ.։

2 Մոսկվայի ԿՊՊԱ, ֆ. 102, ԴՊ, ց. 137, գ. 245, հատ. 1, թ. 172։

3 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 64, ց. 1, գ. 169, թ. 117։

4 Նույն տեղում։

5 «Մարտակոչ», № 4, 4 հունվարի 1924 թ.։

ամենափայլուն կազմակերպիչն առհասարակ Անդրկովկասում», ինչպես գրել է Խումարյանը,—«մեծ հավանություն տվեց» ձեռնարկած գործին[1]։ Նա օգնում է ձեռք բերել անհրաժեշտ միջոցներ, նամակ է գրում Թիֆլիսի ծանոթներին։

«Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» գործի է անցնում 1902 թ. մայիս-հունիսին՝ Ջուրաբյանի, Կնունյանցի և Շահումյանի անմիջական ղեկավարությամբ։ Նրա ակտիվ գործիչներից էին նաև Աշ. Խումարյանը, Ռուբեն Դաշտոյանը, Դանուշ Շահվերդյանը, Սերգո Խանոյանը, Արամայիս Երզնկյանը և ուրիշներ։ «Միությունն» ստեղծում է գաղտնի տպարան, հիմնում է «Պրոլետարիատ» թերթը, որը լույս է տեսել 1902 թ. հոկտեմբերին։ Թերթի ճակատին գրված է «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն», «Պրոլետարիատ»[2], «Օրգան հայ սոցիալ-դեմոկրատների միության»[3]։

«Պրոլետարիատ»-ը հրապարակեց Հայ սոցիալ-դեմոկրատների Միության մանիֆեստը, որը «ծրագրային փաստաթուղթ էր» և նշում էր հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրության ռևոլյուցիոն ուղին։ «Առաջին համարի առաջնորդողը»,— գրել է Միության անդամ Աշ. Խումարյանը,— կազմում էր մեր մարքսիստական հավատամքը»։

Մանիֆեստը հայտարարվել է որպես հայ սոցիալ-դեմոկրատիայի ծրագրի հիմք։ «Միությունն» իրեն համարել է ՌՍԴԲՊ-ի ճյուղերից մեկը և Մանիֆեստում ձևակերպել իր ծրագրի հիմնական սկզբունքները։ «Պրոլետարիատ»-ի էջերում զետեղված են նաև ուրիշ հոդվածներ, որոնք թերթում տպված են անստորագիր։

Աշ. Խումարյանը նշել է, որ Արշակը գրել է «Ներքին տեսություն» հոդվածը, ինքը՝ Խումարյանը մի արձակ բանաստեղծություն «Դեպի մարտ» վերնագրով և մեկ ուրիշ թղթակցություն։ «Մի հոդված ունի Շահումյանը, մի հոդված Գնունյանը»։

Հայ սոցիալ-դեմոկրատների միությունն իր թերթը, ուր տպված էին նրա ծրագրային դեկլարացիաները, անմիջապես ուղարկեց Լոնդոն՝ Վ. Ի. Լենինին։ 1903 թ. հունվարի 28-ին Վ. Ի. Լենինը

---

1 Նույն տեղում։

2 «Պրոլետարիատ» թերթի № 1-ը տե՛ս ՄԼԻ ԿՊԱ և Հայկական ֆիլիալի պարտարխիվներում։

3 Հայկական «Պրոլետարիատ» թերթի առաջին համարը լույս ընծայելուց հետո վրացական «Բրձոլա»-ի ճակատին նույնպես, № 5-ից սկսած, տպվում է պարտիայի անունը և «Օրգան վրաց սոցիալ-դեմոկրատների միության» բառերը։ (Տե՛ս ԻՄԼ ԿՊԱ, ֆ. 64, ց. 1, գ. 169, թ. 117)։

գրել է, որ «Հայկական «Պրոլետարիատ»-ը... ես արդեն մի քանի օր է ստացել եմ...»[1]։ Վ. Ի. Լենինը Պլեխանովին գրում է, որ ստացել է նաև մի ձեռագիր հոդված, «Հայ սոց. դեմ. միության» օրգան «Պրոլետարիատի» մասին, սակայն ինքը դեռ չի ուսումնասիրել և չի պարզել այդ հոդվածի էությունը։ Վ. Ի. Լենինը Լոնդոնից ժնև Պլեխանովին է ուղարկում «Պրոլետարիատ» թերթը, ինչպես նաև նրա մասին ձեռագիր հոդվածը, խնդրելով թարգմանել թերթի նյութերը։

Պլեխանովը վերադարձնելով հոդվածը, գրում է. «Թանկագին Վ. Իլյիչ... ուղարկում եմ հայկական եղբայրական օրգանի մասին թղթակցությունը...»., և հայտնում, որ «նրա հեղինակն ըստ երևույթին «տուշինոյան թռչող է», այնուհետև խոսում է նրա քաղաքական երկդիմության մասին և դեմ է արտահայտվում այդ հոդվածը տպելուն։ Հոդվածի տպագրությունը բարեբախտաբար մերժվում է։ Սակայն նկատի ունենալով հարցի կարևորությունը, Վ. Ի. Լենինը ինքն է գրում «Հայ սոցիալ-դեմոկրատների մանիֆեստի մասին» պատմական հոդվածը, որը տպվեց «Իսկրա» թերթի 1903 թ. փետրվարի 1-ի համարում[2]։

Այդ հոդվածով Լենինը վերլուծեց Հայ սոցիալ-դեմոկրատների միության ծրագիրը, գնահատեց նրա հռչակած պլատֆորման, նշեց հայ սոցիալ-դեմոկրատների խնդիրները։ Վ. Ի. Լենինը ամենից առաջ ընդգծում է այն կարևոր մոմենտը, որ Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը (այսուհետև կրճատ ՀՍԴՄ) ի հակադրություն բունդական, լեհական, լատիշական և այլ ազգային ս. դ. կազմակերպությունների, իրեն համարում է ՌՍԴԲՊ-ի ճյուղը և լիովին համերաշխ է նրա հետ։ Ցիտելով Մանիֆեստի ընդհանուր քաղաքական մասը, Լենինը հավանություն է տալիս Միության հայտարարությանը, որ «Նա իր մերձավորագույն խնդիրն է համարում հայ պրոլետարիատի քաղաքական դաստիարակությունը և նրան ամբողջ ռուսաստանյան պրոլետարիատի պայքարին մասնակից դարձնելը, ցարական ինքնակալությունը տապալելու համար»։

Վ. Ի. Լենինը խոր կերպով քննում է ազգային հարցի մասին ՀՍԴՄ մոտեցումը, հավանություն է տալիս ազգերի ինքնորոշման իրավունքի մասին ձևակերպմանը, այն համարելով «ազգային հարցի ճիշտ դրվածք տալու ուշագրավ փորձ»։ Լենինը ցան-

---

[1] «Լենինյան ժողովածու», հատ. 4, էջ 207։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 408—412։

կություն է հայտնում, որ այդ ճիշտ հարցադրումը հայ սոցիալ-դեմոկրատները հասցնեն մինչև վերջը։ «Երկու հիմնական սկզբունք, որոնցով պետք է ղեկավարվեն Ռուսաստանի բոլոր սոցիալ-դեմոկրատներն ազգային հարցում, Միությունը միանգամայն ճիշտ է նշել,— գրում է Լենինը։— Այդ, նախ, ոչ թե ազգային ավտոնոմիայի, այլ քաղաքական ու քաղաքացիական ազատության և լիակատար իրավահավասարության պահանջն է. այդ, երկրորդ, պետության կազմի մեջ մտնող յուրաքանչյուր ազգության ինքնորոշման իրավունքի պահանջն է»։ Այդ հարցերի մասին խոսելով, Լենինը գտնում էր, որ դրանք դեռևս ոչ լրիվ հետևողականորեն են տեղ դրել Մանիֆեստում, ուստի Միությունը պետք է այդ հարցերը հասցնի մինչև վերջը։

Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը ճշտորեն կռահում էր ապագա սոցիալիստական Ռուսաստանի պետական կառուցվածքը։ ՀՍԴՄ մանիֆեստից Վ. Ի. Լենինը ցիտում է. «Մենք անհրաժեշտ ենք գտնում ֆեդերատիվ ռեսպուբլիկայի հիմնումը ապագա ազատ Ռուսաստանում»։ Վ. Ի. Լենինը ֆեդերատիվ բառը ընդգծել է, առաջարկելով ծրագրից հանել ֆեդերատիվ ռեսպուբլիկայի պահանջը և սահմանափակվել «առհասարակ դեմոկրատական ռեսպուբլիկայի պահանջով»։ Վ. Ի. Լենինը ընդգծում է, որ «մենք հույս ունենք դեռ վերադառնալու ֆեդերատիվության և ազգության հարցին»։

Նույն տարվա հուլիսին գրած «Ազգային հարցը մեր ծրագրում» հոդվածի մեջ Լենինը հիշատակում է Հայ սոցիալ-դեմոկրատների մանիֆեստի մասին իր հոդվածում արտահայտած կարծիքը, որպես ՌՍԴԲՊ ծրագրային մի պահանջ։ Այնտեղ Լենինն ասել է. «Պարտիայի ծրագրի նախագծում մենք առաջադրել ենք ռեսպուբլիկայի պահանջ դեմոկրատական կոնստիտուցիայով, որ ի միջի այլոց ապահովում է «այն բոլոր ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումը, որոնք մտնում են պետության կազմի մեջ»։ Այսպիսի ծրագրային պահանջը շատերին թվացել է ոչ բավականաչափ պարզ, և № 33-ում («Իսկրա»-ի) խոսելով Հայ սոցիալ-դեմոկրատների մանիֆեստի մասին, մենք հետևյալ կերպով ենք բացատրել այդ կետի նշանակությունը»[1] և այլն։

Հետագայում ֆեդերացիայի մասին պարտիայի դրույթը մշակվեց, ճշտվեց և ռևոլյուցիայից հետո Վ. Ի. Լենինը հանդիսացավ սովետական ֆեդերատիվ պետության ստեղծողն ու դաղափարական ոգեշնչողը։

---

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 6, էջ 578։

Վ. Ի. Լենինը հիշատակել է նաև «Պրոլետարիատ»-ի մեջ զետեղված «մի շարք հոդվածների», «հաղորդումների» և «թղթակցությունների» մասին, «որոնք պարզում են «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» գոյության կոչված հասարակական ու քաղաքական պայմանները և ընդհանուր գծերով նշում նրա գործունեության ծրագիրը»: Լենինի կողմից հավանության արժանացած հոդվածների կապակցությամբ անհրաժեշտ է հատկապես շեշտել մի կարևոր հարց:

Հայ ազգայնական պարտիաները շարունակ աղմկում էին այն մասին, որ իբր թե հայ սոցիալ-դեմոկրատ լենինյանները անտեսել և նույնիսկ ժխտել են հայ ազգային ազատագրական շարժումները, չեն զբաղվել արևմտահայության ազատագրության հարցով և այլն: «Պրոլետարիատի» № 1-ում, 1902 թվականին տպված ծրագրային փաստաթղթերն այդ զրպարտությունների ամենալավագույն հերքումն են:

Այսպես, օրինակ, Լենինի հավանությանն արժանացած «Սոցիալ-դեմոկրատիան և իրականությունը» ընդարձակ հոդվածում, «Պրոլետարիատ»-ը քննելով Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման և պրոլետարիատի սոցիալ-տնտեսական կյանքի պայմաններն ու դասակարգային պայքարի խնդիրները, հատուկ կանգ է առնում Կովկասի և մասնավորապես հայ ժողովրդի ազատագրական պայքարի վրա: «Մեր բուրժուազիան դեռ սաղմնային դրության մեջ էր,— գրել է «Պրոլետարիատ»-ը,— երբ գրականության և հրապարակախոսության մեջ սկսվեց բուրժուական ազատամտական հոսանք»: Այնուհետև նշվում է, որ «եվրոպական լուսավորության և գլխավորապես ռուսական 40-ական թվականների նույնանման շարժման ասպարեզ եկան մեզ մոտ գրականության և հրապարակախոսության մեջ դեռևս 50—60-ական թվականներին»:

Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը խաչատուր Աբովյանին, Ստեփանոս Նազարյանին և Գրիգոր Արծրունուն համարում է որպես հայկական «ազատամտական շարժման գլխավոր առաքյալները»: «Այդ շարժումը մեծ ծառայություն մատուցեց ազգային ինքնաճանաչության զարգացման և նվիրեց ազգին շքեղ գրականության ու բանաստեղծության այնպիսի ներկայացուցիչներ, ինչպես Բաֆֆի, Պռոշյան, Շիրվանզադե, Պատկանյան, Սմբատ Շահազիզ և ուրիշներ»[1]:

---

[1] Տե՛ս «Պրոլետարիատ», № 1, 1902:

«Պրոլետարիատը» զարգացնում է իր միտքը և վերլուծում հայ կյանքում կատարված փոփոխությունները, նշում է «Հայ հասարակության սթափվելը յուր խոր քնից» և «յուր տաճկահայ եղբայրների գոյության հարցով» զբաղվելը. այնուհետև ընդգծում է, որ ուս հեղափոխականների գաղափարակից հայ երիտասարդները սկսեցին խմբեր ու կուսակցություններ կազմակերպել Տաճկա-հայաստանում ինքնավարություն ստանալու նպատակով։ «Այսպիսով, սկսվեց հայկական շարժումը, որ մինչև օրս էլ շարունակվում է»[1]։ Լենինյան ուղղության առաջին հայկական օրգանը, նրա շուրջը համախմբված գործիչները ճիշտ մոտենալով ազգային ազատագրական շարժմանը, դեռևս 1902 թվականին խրախուսանքի ջերմ խոսքեր ասացին հայկական շարժման մասին։

Այնուհետև «Պրոլետարիատ» թերթը ցույց է տալիս «գաղափարների խառնուրդ» առաջ գալը հայ կյանքում, քննադատում է դաշնակների ծրագիրն ու գործելակերպը, ցույց է տալիս նրանց իդեալների գաղտղությունների մեջ եղած անհեթեթությունները։ «Մեր դրոշակի վրա արձանագրված կլինեն այն բոլոր քաղաքական սոցիալական պահանջները, որոնց ներկայացնում է Ռուսիայի սոցիալ-դեմոկրատիան,— ավարտում է հոդվածը.— այդ պահանջներին մենք, իհարկե, կավելացնենք այն բոլորը, ինչ որ հատուկ է բացառապես Կովկասին»։

Այս տեսակետից կարևոր են նաև «Ներքին տեսություն» հոդվածում ռուսական ցարի, Թուրքական սուլթանի և պարսկական շահի սուր, դավադիր գործերի մերկացումները։ Միության օրգանը քննում է տաճկահայ գաղթականների հայրենիք վերադառնալու հարցը։ Դրանք 1890-ական թթ. սարսափելի ջարդերի ժամանակ Արևմտյան Հայաստանից փախած հայերն էին։ Ցարը Ռուսաստան եկած գաղթականներին թույլ տվեց վերադառնալ Արևմտյան Հայաստան, իրենց օջախները։ Թերթը ցույց է տալիս, որ ցարը խաբում էր դժբախտ փախստականներին, ծաղրում նրանց, մինչդեռ ներքուստ սուլթանի հետ դավեր էր սարքում հայերի դեմ։ «Սուլթան մարդասպանը»,— գրում է «Պրոլետարիատ»-ը, «ձեռք մեկնեց» ցարին, փակեց Թուրքիայի սահմանը։

Այսպիսով, թեկուզ այս նյութերի մեջ, որոնք հայ սոցիալ-դեմոկրատական առաջին թերթի էջերում են տպվել, երևում է, թե ինչպես էր ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան հետևում հայ ժողովրդի կյանքին և մերկացնում նրա թշնամիներին, իսկ մի երկու

---

[1] ՏԼ՚ «Պրոլետարիատ», № 1, 1902։

ամիս հետո, «Պրոլետարիատ» թերթի հաջորդը՝ «Պրոլետարիատի կռիվը», անդրադառնալով արևմտահայ ժողովրդի պայքարին, գրել է. «Ուղարկելով Տաճկաստանում կռվող եղբայրներին մեր սոցիալիստական ողջույնը, մենք բացարձակ կերպով հայտարարում ենք մեր համակրությունը բազմաչարչար տաճկահայ ժողովրդի ազատարար գործին և մեր անկեղծ ցանկությունն է, որ այդ ազատությունը հասնի որքան կարելի է շուտ»[1]։

Այսպիսով, լենինյան ուղու վրա կանգնած հայ սոցիալ-դեմոկրատիան հանդես եկավ հայ ժողովրդի ազատագրման ծրագրով։

Առանձին ուշադրության է արժանի «Նամակ Բաքվից» սերիայի առաջին նամակը, որը մենք վերարտադրում ենք Բ. Կնունյանցի գրչին ու մտքին։ Ողջունելով Միության օրգանին, նամակում ասված է, որ «այժմ մենք էլ, հայ սոցիալ-դեմոկրատներս, կարող ենք հուսալ» ընթերցողներին ծանոթացնելու մեր ծրագրի, մեր հեռավոր, վերջնական և մոտակա նպատակների հետ։ Նամակում տրվում է Կովկասի պրոլետարիատի բնութագրությունը, խոսվում է Բաքվի սոցիալ-դեմոկրատների մի տարվա գործունեության ընթացքում ստացած տպավորությունների մասին, հայ, վրացի, ադրբեջանցի, լեռնցի, պարսիկ հասարակ մշակների մասին, ռուս բանվորների մասին, նրանց դասակարգային շահերի նույնության մասին։ Հոդվածում խնդիր է դրվում առանց ազգի խտրության, կռիվ հայտարարել ամեն տեսակ շահագործման դեմ։ Շահերի այդ միասնությունն ու հետաքրքրությունը «միանգամայն կապեցին հայ բանվորին ռուսի հետ»,— ասված է թերթում։

ՀՍԴՄ օրգան «Պրոլետարիատը» կազմված էր 24 էջից։ Թերթը հրատարակվել է դժվարին պայմաններում, պրիմիտիվ տեխնիկայով։ Արշակ Զուրաբյանը գրել է, թե «Պրոլետարիատ»-ի տպագրությունը կատարվել է ձեռքով, տևել է մեկ ամիս։ Թերթի տպաքանակը եղել է 240 օրինակ և տարածվել Անդրկովկասի բանվորական կենտրոններում և Հայաստանի տարբեր շրջաններում, այնտեղ առաջնորդելով հայ ժողովրդի ազատագրական պայքարի նոր խոսքը, ռևոլյուցիոն-մարքսիստական ծրագիրը, որ գալիս էր լենինյան «Իսկրա»-ից։

Հայ աշխատավորության մեջ տարածվում էր լենինյան «Իսկրա»-ն։ 1902 թվականից Պլեխանովի խնդրանքը, «Իսկրան», հարավից Անդրկովկաս և Ռուսաստան առաքվում էր գաղտնի փոստի միջոցով՝ Թավրիզի վրայով։ Ինչպես հայտնի է, Վ. Ի. Լենինը կազմա-

---

[1] Տե՛ս «Պրոլետարիատի կռիվը» թերթը, № 2—3, 1903։

կերպով «Իսկրա»-ի առաքումն արտասահմանից, իսկ այնուհետև Բաքվում «Իսկրա»-ի տպագրությունը 50.000 տիրաժով։ Վ. Ի. Լենինի առաջադրանքներով Բաքվում «Իսկրա»-ն բաղմացնելու և տարածելու գործում անգնահատելի ծառայություններ ունեն Լ. Կեցխովելին, Բ. Կնունյանցը, Բ. Կրասինը և Բաքվի կազմակերպության մեջ աշխատող ուրիշ ղեկավար գործիչներ։

Հայաստանում և Անդրկովկասում գործող սոցիալ-դեմոկրատները 1902—1903 թթ. ստանում էին լենինյան «Իսկրա» թերթի համարները։ Հայաստանի և Վրաստանի պետական արխիվներում պահպանվող գրագրությունը[2] Երևանի նահանգապետի և Երևանի փոստ-հեռագրատան պետի միջև ցույց է տալիս, որ «Իսկրա»-ի այլ համարների թվում, Հայաստանում ստացվել է նաև 33-րդ համարը[3], որում տպված էր Վ. Ի. Լենինի վերոհիշյալ հոդվածը։ Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի մարքսիստ-լենինյանները իրենց հետագա գործունեությունը ծավալեցին Վ. Ի. Լենինի հոդվածում առաջադրած խնդիրների համաձայն։

«Հայ սոցիալ-դեմոկրատների միության» հետագա պատմությունը առանձին հրատարակություններում մեկնաբանվում է ոչ ճիշտ փաստարկումներով։ Տարածված կարծիք է, որ իբր թե «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» ստեղծվել է Թիֆլիսի կոմիտեի որոշմամբ, նրան կից, որ «1902 թ. աշնանը «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» ձուլվել է Թիֆլիսի կոմիտեի մեջ»։

Այդպիսի պնդում տեղ է գտել Երևանում և Թբիլիսիում տպագրված շատ գրքերում, որտեղ շոշափվում է այդ հարցը։

Հեղինակները հենվում են «Իսկրա» թերթի 1903 թվականի № 32-ում տպված մի երկտողի վրա, որտեղ խոսելով Ադելխանովի գործարանի դերձակների գործադուլի մասին, ասված է, թե «գործադուլը ղեկավարում էին պարտիայի կոմիտեն և հայ սոցիալ-դեմոկրատների խմբակը, որը հետո մտավ կոմիտեի մեջ»[4]։

Այդ երկտող խրոնիկայում նույնիսկ չի ասված թե խոսքը ո՞ր կոմիտեի մասին է և հայ սոց. դեմոկրատների ի՞նչ խմբակի մասին

---

[1] Այդ մասին վկայում է Վ. Ստուրուան «Զարյա Վոստոկա» թերթի 1933 թ. հունիսի 30-ի համարում՝ «Իսկրա»-ի Բաքվի ընդհատակյա տպարանի մասին հոդվածում։

[2] Տե՛ս ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 122, գ. 3, թ. 52, 53, 59, 62, 69 և այլն (փաստաթղթերը տպված են «Լենինյան ուղիով» ամսագրի 1957, № 10-ում, Խ. Հ. Բարսեղյանի հոդվածը)։

[3] Տե՛ս «Исторический архив» ժուռնալը, № 2, 1959:

[4] Տե՛ս «Իսկրա»-ի № 32-ը, վերահրատարակված, պրակ 5, 1928, էջ 35։

է։ Թերևս այնտեղ նկատի է առնվել Կովկասյան Միությա՞ն կոմիտեն կամ գուցե ս.դ. մի ա՞յլ խմբակի կամ խմբի մասին է ակնարկել «Խրոնիկա» գրողը։

Այլապես, ինչպե՞ս կարող էր պատահել, որ Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը 1902 թվականի հոկտեմբերին «ձուլվեր Թիֆլիսի կոմիտեի մեջ», իսկ 1903 թվականի հունվարի 28-ին Վ. Ի. Լենինը նամակագրություն վարեր Պլեխանովի հետ այդ Միության գործունեության և նրա օրգանին անդրադառնալու մասին[1], իսկ 1903 թ. փետրվարի 1-ին հանդես գար հայտարարելով, որ «Կովկասում երևան է եկել մի նոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը»[2], որ «Այդ Միությունը, ինչպես մեզ հայտնի է, ավելի քան կես տարի է, ինչ սկսել է իր պրակտիկ գործունեությունը և արդեն ունի իր օրգանը հայերեն լեզվով»։ Եթե հավատանք, որ իրոք ՀՍԴՄ-ն Թիֆլիսի կոմիտեի մեջ ձուլվել է 1902 թ. աշնանը, կստացվի, որ Վ. Ի. Լենինը դրանից մոտ 4—5 ամիս հետո գրում էր մի կազմակերպության մասին և ողջունում նրա հանդես գալը, մինչդեռ այդպիսի կազմակերպություն արդեն չկար, նա արդեն «ձուլվել էր»։

Ահա թե ինչու մեր կարծիքով, Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը Թիֆլիսի կոմիտեի մեջ ձուլելու մասին դատողություններն անհիմն են։

Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը գոյություն է ունեցել և գործել մինչև Կովկասյան Միության ստեղծումը և հանդիսացել է նրա նախաձեռնողներից ու հիմնադիրներից մեկը։

Կարող են մեզ առարկել, բերելով Արշակ Զուրաբյանի մի հայտարարությունը ՌՍԴԲՊ 2-րդ համագումարում այն մասին, թե «Ի միջի այլոց, պետք է ասեմ, որ Հայ սոցիալ-դեմոկրատների միություն գոյություն չի ունեցել և գոյություն չունի։ Դա եղել է միայն ցուցանակ»[3]։

Զուրաբյանի նման հայտարարությունը պետք է բացատրել այն իմաստով որ, իրոք, Միությունը չի եղել ավտոնոմ մի կազմակերպություն, այլ եղել է պարտիայի անբաժանելի կազմակերպություններից մեկը։

Բանն այն է, որ թե՛ Բունդի լիդերները և թե՛ լեհական ու լիտվական ազգային սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարները Հայ սոցիալ-դեմոկրատների միության երևան գալը և նրա ծրագրի մասին

---

[1] Տե՛ս «Լենինյան ժողովածու», հատ. 4, էջ 207—210։

[2] Տե՛ս «Իսկրա», № 33, 1 փետրվարի 1903 թ.։

[3] «Второй съезд РСДРП», Протоколы, 1959, М., стр. 79.

Վ. Ի. Լենինի տված կարծիքն ընկալեցին բոլորովին սխալ։ Նրանք ՀՍԴՄ-ն պատկերացնում էին որպես ՌՍԴԲՊ-ից անջատ մի ազգային ս. դ. կազմակերպություն, որն իբր թե պետք է ֆեդերատիվ սկզբունքներով մտներ ՌՍԴԲՊ-ի մեջ, ինչպես Բունդը պահանջում էր իր համար։

Բունդի լիդերներից՝ մեկը Լիբերը (Գոլդմանը) առարկելով ՌՍԴԲՊ կառուցման լենինյան կազմակերպական սկզբունքին և պաշտպանելով Բունդի համար ավտոնոմ հատուկ տեղ պարտիայի մեջ, դիմում էր անալոգիաների, բերում Կովկասի և Հայ սոցիալ-դեմոկրատների միության օրինակը։ Նույն քայլը կատարեց Լեհաստանի և Լիտվայի սոցիալ-դեմոկրատական պարտիան, որն իր օրգանում տպագրեց հատուկ հոդված «Կովկասի սոցիալիստական շարժումներից» վերնագրով։ Այդ հոդվածի դեմ հանդես եկավ Բ. Վնունյանցը, ցույց տալով, որ Կովկասում առանձին պարտիա, անջատ ՌՍԴԲՊ-ից՝ չի եղել, այլ եղել են և կան ՌՍԴԲՊ-ի Կովկասի կազմակերպություններ[1]։

Միայն այդ նկատառումներով Ա. Զուրաբյանը կարող էր անել վերևում բերված հայտարարությունը, ետ մղելով Բունդի և նրա կողմնակիցների սխալ հարձակումները, ցրելով նրանց ոչ ճիշտ պատկերացումները և պաշտպանելով ՌՍԴԲՊ կառուցման լենինյան ինտերնացիոնալիստական սկզբունքները։

Անկասկած է, որ ՀՍԴՄ-ը գործում էր Անդրկովկասում որպես ՌՍԴԲՊ տեղական կազմակերպություն, սակայն նա Թիֆլիսի կոմիտեին կից չէր, այլ դեռևս առանձին կազմակերպություն էր։ Իհարկե, ՀՍԴՄ-ն սերտորեն կապված էր և՛ Թիֆլիսի կոմիտեի, և՛ Բաքվի կոմիտեի և այլ կոմիտեների ու խմբերի հետ։ Հայ սոցիալ-դեմոկրատներից միության հիմնադիր անդամներից մեկը՝ Արշակ Զուրաբյանը 1902 թվականից Թիֆլիսի կոմիտեի անդամ էր, իսկ Բոգդան Կնունյանցը՝ Բաքվի կոմիտեի ղեկավարն էր։

Վրացական մարքսիստների օրգան «Բրձոլա» թերթը ՀՍԴՄ-ի և նրա «Պրոլետարիատ» թերթի երևան գալու առթիվ գրել է. «Ողջունում ենք մեր նոր եղբայրներին։ Ողջունում ենք նրանց ասպարեզ մտնելը մեզ հետ միասին... ահա ձեզ եղբայրներ, մեր ձեռքը և մեր սիրտը»[2]։

[1] Կնունյանցի հոդվածը տպվել է «Իսկրա»-ի № 50-ում, 15 հոկտեմբերի 1903 թ.։

[2] Տե՛ս «Բրձոլա», № 4, 1902 թ. դեկտեմբեր։ Ցիտվում է ըստ՝ Г. Жвания, Большевистская печать Закавказья, Тбилиси, 1958, стр. 71. Հիշատակենք, որ սույն ողջույնը նույնպես հերքում է ՀՍԴՄ-ը Թիֆլիսի կոմիտեի մեջ «ձուլելու» վերսիան։

* * *

Այսպիսով, հայ ժողովրդի ազատագրական պայքարը զուգորդվում էր Անդրկովկասի մյուս ժողովուրդների պայքարի հետ։ Անդրկովկասի ժողովուրդների ինտերնացիոնալ համախմբումը և ազգային մեկուսացման անջրպետների հաղթահարումը ցարիզմի դեմ մղված պայքարի կարևորագույն պայմանն էր։ Այդ խնդիրը կարող էր իրագործվել կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ջանքերը միավորելու միջոցով։

Համակովկասյան մի կազմակերպություն, ՌՍԴԲՊ-ի Կովկասյան «շրջանային մի մարմին» ստեղծելու հարցը դրվեց հենց Հայ սոցիալ-դեմոկրատների միության ղեկավարների կողմից[1]։ Միավորման հարցը լիովին հավանություն գտավ Թիֆլիսի և Բաքվի կոմիտեների կողմից։ Նրանց նախաձեռնությամբ «Պրոլետարիատ» և «Բրձոլա» թերթերի խմբագրություններին կից ստեղծվեց կազմբյուրո, Կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հիմնադիր համագումարը նախապատրաստելու համար[2]։ Այդ համագումարի հրավիրումը և Կովկասում ՌՍԴԲՊ միասնական կազմակերպության ստեղծումը հանդիսանալու էր լենինյան գծի յուրջ հաղթանակը և նոր հարված բունդական ու լեհ-լիտվական սեպարատիստներին, ինչպես նաև հայ և վրացի նացիոնալիստներին։

Կովկասի ս. դ. կազմակերպությունների առաջին համագումարը տեղի ունեցավ 1903 թ. մարտին, անլեգալ պայմաններում։ Համագումարը կանգնեց լենինյան «Իսկրա»-ի մշակած սկզբունքների վրա։ Ի դեպ, համագումարի մասին «Վրաստանի Կոմպարտիայի պատմության ուրվագծեր» գրքում տրված է որոշ միակողմանի բացատրություն։ Այսպես, այդ գրքում ասված է. «Ի. Վ. Ստալինը այդ ժամանակ գտնվում էր Բաթումիի բանտում, իսկ Լադո Կեցխովելին՝ Մեսխետում։ Համագումարը ղեկավարում էին Մ. Ցխակայան և Ս. Ծուլուկիձեն»[3]։ Այնտեղ նույնիսկ չի ասվում, թե Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը մասնակցել է համագումարին, չեն նշվում

---

[1] Տե՛ս Ս. Խումարյանի «Անցած օրերից», հուշագրությունները, «Մարտակոչ», № 3, 1924։

[2] Տե՛ս Գ. Ժվանիայի նշված աշխատությունը, էջ 72։ Նույնը տե՛ս նաև «Վրաստանի Կոմպարտիայի պատմության ուրվագծերի» 1-ին մասում, էջ 78։

[3] Տե՛ս «Վրաստանի Կոմպարտիայի պատմության ուրվագծերի» 1-ին մասը, էջ 72 և 78։

այն գործիչների անունները, որոնք ակտիվ, ղեկավար մասնակցություն են ունեցել այդ գործում։ Մինչդեռ գիտական ճշմարտությունը պահանջում է ասել, որ Կովկասյան ս. դ. կազմակերպությունների առաջին համագումարում հավատարիմ լենինյաններ Ցխակայայի և Ծուլուկիձեի հետ ղեկավար աշխատանք էին կատարում Բ. Կնունյանցը, Ա. Զուրաբյանը, Ա. Խումարյանը և ուրիշներ։

Կովկասում ռևոլյուցիայի վետերաններից մեկը, Միխա Ցխակայան քանիցս ընդգծել է, որ Կովկասյան Միության ստեղծման նախաձեռնողը եղել է Բոգդանը, նա էր ղեկավարում համագումարը և նա էլ հանդիսացավ փաստական նախագահը։ Նրա բացակայության ժամանակ Միությունը ղեկավարում էր Ցխակայան, մինչև Շահումյանի արտասահմանից վերադառնալը[1]։

Համագումարում որոշվեց միավորել Կովկասում գործող սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունները և ստեղծել Կովկասյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների միություն։

Կովկասյան միություն կազմելու մասին նրա ծրագրի նախագծում ասված է[2]. «...Թիֆլիսի, Բաքվի և Բաթումի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, «Պրոլետարիատ»-ի[3] և «Բրձոլա»-ի խմբագրությունները հարկ համարեցին միանալ և մի ընդհանուր միություն կազմել։ Վերոհիշյալ կազմակերպությունների ներկայացուցիչները, ընդհանուր ժողով գումարելով, վճռեցին կազմել Կովկասյան միությունը, որը ներկայանալու է իբրև «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության մի ճյուղը»։

Այսպիսով, «Պրոլետարիատ» թերթը, որը նույն Հայ սոցիալ-դեմոկրատների միությունն էր ներկայացնում, Թիֆլիսի և Բաքվի կոմիտեների, և «Բրձոլա»-ի խմբագրության հետ հանդիսացավ Կովկասյան միության հիմնադիրը, նրա առաջին համագումար նախապատրաստող և անցկացնող կազմակերպություններից մեկը և որպես ինքնուրույն միություն վերացավ, ձուլվելով Կովկասյան միության մեջ, նրան ժառանգելով իր «Հայ սոց. դեմ. միություն»

---

[1] Դեռևս 1928 թվականին Թրիլիսիի հեղափոխության թանգարանը պատրաստել էր Կովկասյան Միության Կոմիտեի անդամների կոմպոզիցիոն նկար, որի կենտրոնում էր Բ. Կնունյանցը (տե՛ս «Զարյա Վոստոկա», № 174, 1928)։

[2] Տե՛ս Նախագիծ ծրագրի, ժնև, (իրականում Թիֆլիս), 1903, տպարան ՊՍԴՐԿ Միության, էջ 6։

[3] «Պրոլետարիատ»-ի խմբագրությունը դա հենց ինքը՝ Հայ սոցիալ-դեմոկրատների միությունն է։

անունը, մասնակցելով «Կովկասյան միություն» կազմակերպելուն։ Այդպես ստեղծվեց Կովկասյան միությունը, Կովկասում լենինյանների առաջին շտաբը, որն ուղղություն էր տալիս Կովկասի աշխատավորների համագործակցությանը և նրանց ազատագրման համար մղվող պայքարին։

Համագումարում ընտրվեց Միության կոմիտե, որի առաջին կազմում ընտրվեցին 9 հոգի, բայց ոչ միայն Ցխակայան, Մուլուկիձեն, Մախարաձեն և Կնունյանցն, ինչպես ասված է վերևում նշված գրքերում, այլև Արշ. Զուրաբյանը, Աշ. Խումարյանը, Ս. Խանոյանը և ուրիշներ։

Այնուհետև պետք է նշել, որ համագումարն ընտրեց ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի պատգամավորներ 3 հոգի վճռական և 1 հոգի խորհրդակցական ձայնով, ըստ որում՝ Անդրկովկասից գնացած պատգամավորներ Բ. Կնունյանցը և Ա. Զուրաբյանը (երկուական ձայնով), Դ. Թոփուրիձեն (2 ձայնով) և Ն. Ժորդանիան (խորհրդակցական ձայնով) հարեցին երկու ֆրակցիաների։ Բ. Կնունյանցը և Ա. Զուրաբյանը կանգնեցին Վ. Ի. Լենինի կողմը, իսկ Դ. Թոփուրիձեն և Ն. Ժորդանիան հանդես եկան ընդդեմ Լենինի, պաշտպանելով մենշևիկյան դիծը[1]։

Վ. Ի. Լենինը ՌՍԴԲՊ 2-րդ համագումարն անվանեց «... և՛ վելիկոռուս, և՛ հրեա, և՛ վրացի, և՛ հայ մարքսիստների բարձրագույն ժողով...»[2]։

Հետաքրքրական է համագումարում Ա. Զուրաբյանի և Բ. Կնունյանցի իրար ցույց տված օգնությունն ընդդեմ Տրոցկու։ Կենտրոնական օրգաններ ընտրելու հարցը քննելիս, ինչպես ասվեց նախորդ բաժնում, Կնունյանցը հանդես էր եկել Վ. Ի. Լենինի հետ համերաշխ։ Տրոցկին համագումարի 30-րդ նիստում իր ճառում հեգնանքով ասում է. «Ես ուզում եմ առարկել «երիտասարդ ռևոլյուցիոներ» Ռուսովին» (Կնունյանցին)։ Պատգամավորներն աղմկում են։ Ա. Զուրաբյանը տեղից ընդհատելով Տրոցկուն, հայտարարում է. «Խնդրում եմ չգործածել այդպիսի արտահայտություններ, ինչպես՝ «երիտասարդ ռևոլյուցիոներ»։ Դեռ հարց է, թե ո՞վ է երիտասարդ, նա՞, թե՞ դուք»[3]։

---

[1] Տե՛ս ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի արձանագրությունները, էջ 79, 186, 279, 256, 364, 444 և այլ էջեր։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 555։

[3] ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի արձանագրությունները, էջ 364։

Հետագայում Վ. Ի. Լենինը մի քանի անգամ անդրադառնում է համագումարում մղված պայքարի վերլուծմանը, քննարկում է պատգամավորների վերաբերմունքը։ ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի արձանագրությունների տպվելուց հետո, նրանց հիման վրա Վ. Ի. Լենինը բնութագրել է պատգամավորների դիրքը, նշելով, որ Բ. Կնունյանցը և Ա. Զուրաբյանը հիմնական հարցերում ընթացել են բոլշևիկների հետ ընդդեմ մենշևիկների[1]։

Այսպիսով, Հայ սոցիալ-դեմոկրատների միության երկու ղեկավար գործիչները (Ա. Զուրաբյանը և Բ. Կնունյանցը) որպես Կովկասյան միության ներկայացուցիչներ, ՌՍԴԲՊ 2-րդ համագումարում հանդես եկան Վ. Ի. Լենինի հետ, մասնակցելով այն թեժ պայքարին, որ Լենինը մղում էր մենշևիկների և ամեն տեսակի այլ օպորտունիստների դեմ, հանուն բոլշևիկյան պարտիայի ստեղծման, նրա հաղթանակի։

Անհրաժեշտ է կանգ առնել Կովկասյան միության մի շատ կարևոր փաստաթղթի՝ նրա ծրագրի նախագծի պատմության վրա։ 1903 թվականին Կովկասյան միությունը հայերեն լեզվով առանձին բրոշյուրով տպեց Կովկասյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների միության ծրագրի նախագիծ։ Այդ նախագիծը մարքսիստական-լենինյան ոգով դնում է հայ ժողովրդի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների ազատագրական պայքարի կարևորագույն հարցերը։ Նախագիծը գրվել է նույն ոգով, ինչ ՀՍԴՄ Մանիֆեստն էր։ Կան ոչ միայն նախադասությունների կամ պարբերությունների, այլև կոնցեպցիաների և գրեթե բոլոր ծրագրային թեզերի նույնություններ[2]։ Մեզ թվում է, որ այդ ծրագրի նախագիծը գրել են նույն մարդիկ, ովքեր կազմել էին Մանիֆեստը։

Ինչպես Կովկասյան միության առաջին համագումարի որոշման մեջ, այնպես էլ «Ծրագրի նախագծում» գրվեց, որ Կովկասյան միությունը կունենա իր օրգանները հայերեն և վրացերեն՝ «Պրոլետարիատի կռիվ», որոնք Միության այլ հրատարակությունների հետ կաշխատեն լուսաբանել և տարածել մեր ծրագիրը և կռիվը»[3]։

Վ. Ի. Լենինը գրավոր զեկուցում է ստանում Ա. Զուրաբյանից Կովկասյան միության գործերի մասին[4]։ Վ. Ի. Լենինը Գ. Վ. Պլե-

---

[1] Տե՛ս «Լենինյան ժողովածու», հատ. 11, էջ 289, 290, 307։

[2] Տե՛ս «Նախագիծ ծրագրի, Կովկասյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների միության», ժնև, տպարան ԿՍԴԲԿ Միության, 1903, էջ 1—14, Համեմատ. ՀՍԴՄ Մանիֆեստի հետ։

[3] Տե՛ս «Ծրագրի նախագիծը», էջ 14։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 198։

խանովի հետ այդ օրերին Կովկասյան Միությանն կոմիտեին ուղարկած նամակում գրել են. «Կովկասյան ընկերներին հղում ենք ողջույն և ջերմորեն ցանկանում ենք հաջողություններ», «Թող Կովկասի ընկերները հաստատորեն ընթանան այն ուղիով, որի վրա նրանք կանգնել են»[1]։

Վ. Ի. Լենինը մեծ կարևորություն էր տալիս ՌՍԴԲՊ ծրագրային փաստաթղթերի հայերեն հրատարակությանը։ Նա 1903 թ. հոկտեմբերին գրում է, որ «մենք այժմ եռանդուն մտածում ենք այստեղ վրացական և հայկական գրականության հրատարակության կազմակերպման մասին։ Այդ գործին ձեռնամուխ են եղել ձեռնհաս ընկերներ»[2]։ Խոսքը վերաբերում էր Ս. Շահումյանի ղեկավարությամբ ժնևում հայկական գրականության հրատարակությանը, որը կարևոր նշանակություն ունեցավ մարքսիզմ-լենինիզմի գաղափարները հայ աշխատավորների մեջ տարածելու գործում։

1904 թ. սկզբներին արդեն հայերեն հրատարակվեցին ՌՍԴԲՊ Ծրագիրը՝ 7000 օրինակով, ՌՍԴԲՊ Կանոնադրությունը՝ 700 օրինակով, ՌՍԴԲՊ Կենտկոմի կոչն ուղղված «Ռուս պրոլետարիատին»՝ 7000 օրինակով, ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի բանաձևերը 2300 օրինակով և այլն։ Այդ հրատարակությունները Վ. Ի. Լենինի ցուցումներով ուղարկվում էին Կովկաս, տարածվում հայ աշխատավորության մեջ։ Հրատարակվեցին Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական Մանիֆեստը» և մի շարք այլ աշխատություններ։

Կովկասյան միության հրատարակչական գործունեությունն ավելի ծավալվեց 1905 թվականին։ Վ. Ի. Լենինը «Պրոլետարի» թերթի էջերում ինֆորմացիա տպեց Կովկասյան միության հրատարակությունների մասին։ Այդ ինֆորմացիայում բերված են տեղեկություններ, որ 1905 թվականի հունվարից մինչև հունիսը հայերեն հրատարակվել են՝ «Պահնստայիններին» կոչը՝ 400 օրինակ, «Գյուղացիներին» կոչը՝ 3000, «Ի՞նչ պարզվեց» կոչը՝ 5000, «Զինվորներին» կոչը՝ 3000, «Բոլոր բանվորներին և բանվորուհիներին» կոչը՝ 2500, «Մայիսի մեկը» կոչը՝ 2500 օրինակ, «Սոցիալիզմի մասին» բրոշյուրը՝ 2500 օրինակ, «Ով ինչով է ապրում» բրոշյուրը՝ 2000, «Սարդեր և ճանճեր» բրոշյուրը՝ 6000, «Օպորտունիզմի այլասերակությունը» բրոշյուրը՝ 1000 օրինակ և այլն[3]։ Բացի այդ,

---

1 Նույն տեղում։

2 Նույն տեղում, էջ 199։

3 Տե՛ս «Պրոլետարի» լենինյան թերթը, № 15, 5 սեպտեմբերի 1905 թ., ժնև։

Կովկասյան միությունը 1903—1905 թվականներին հրատարակել է 206 պրոկլամացիա, թռուցիկ, թերթիկ, կոչ և դիմում, որոնք բացի ռուսերենից, վրացերենից և թուրքերենից (ադրբեջաներենից), մեծ մասը տպվել են նաև հայերեն, տարածվել հայ աշխատավորության մեջ[1]։

Հայ և կովկասի մյուս ազգերի աշխատավորների ազգային և սոցիալական ազատագրման համար մղվող պայքարի կազմակերպումը հանդիսանում էր Կովկասյան միության կոմիտեի կարևոր անելիքներից մեկը։ Հայ աշխատավորներին ռևոլյուցիոն շարժման մեջ ներգրավելու գործում կարևոր նշանակություն ունեցան հատկապես Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունները ու տարածումը հայ իրականության մեջ։

Այդ գործում պատմական նշանակություն ունեցող դեր կատարեցին Հայկական սոցիալ-դեմոկրատական թերթերը՝ «Պրոլետարիատի կռիվ» (1903—1905), «Պրոլետարիատի կռվի թերթիկ» (1903—1904), «Բանվորի ձայն» (1906), «Կայծ» (1906), «Նոր խոսք» (1906), «Կոչ» (1906), «Օրեր» (1907), «Նոր խոսք» (1912), «Մեր խոսք» (1914) և ուրիշներ, որոնք իրենց էջերում թարգմանաբար տպել և տարածել են Վ. Ի. Լենինի մի շարք աշխատությունները կամ վերապատմել նրանց բովանդակությունը[2]։

Այսպիսով, օրինակ, 1903 թ. ապրիլին տպվել է Վ. Ի. Լենինի «Միապետությունը տատանվում է...» հոդվածը, հունիսին՝ Վ. Ի. Լենինի դրած «Երրորդ համագումարի որոշումը Կովկասում պատահած անցքերի առթիվ» և «Երրորդ համագումարը» հոդվածը, հուլիսին՝ «Հեղափոխական պրոլետարիատի դեմոկրատական նպատակները» հոդվածը և այլն։ 1905 թ. հայերեն հրատարակվեց Վ. Ի. Լենինի «Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի մասին» բրոշյուրը, «Պետական կազմի 3 կոնստիտուցիա կամ 3 կարգ» լիստովկան։ Լենինի սույն աշխատությունը հայերեն տպվել էր 1500 օրինակ։ Բոլշևիկյան «Նոր խոսք» թերթը 1906 թ. № 6-ում իր ընթերցողներին հանձնարարում է հայերեն Վ. Ի. Լենինի «Փոթորկից առաջ» հոդվածի թևա-

---

[1] «Листовки Кавказского союза РСДРП 1903—1905 гг.», Москва 1955, стр. 15—436.

[2] Տե՛ս Ս. Հ. Բարսեղյան, *Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, Երևան, 1959*, Ե. Խալեյան, *Հայ բոլշևիկյան մամուլն Անդրկովկասում ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, ԴԱ հրատ., 1955, Երևան։*

վոր խոսքերը, ռևոլյուցիայի մրրկահավի արտահայտությամբ, «թող ուժգին թնդա վոլթորիկը»։

Լենինյան «Իսկրա», «Վպերյոդ», «Պրոլետարի» թերթերը, Վ. Ի. Լենինի աշխատությունները հայ սոցիալ-դեմոկրատ գործիչներին վիճեցին դասակարգային պայքարի ուսմունքով, որն ուղեցույց հանդիսացավ հայ ժողովրդի ազատագրական շարժումները ռևոլյուցիոն ճիշտ հունով զարգացնելու համար։

* * *

Հայաստանում ՌՍԴԲՊ տեղական կազմակերպությունների ձևավորումը տեղի է ունեցել պարտիայի 2-րդ համագումարից հետո, Վ. Ի. Լենինի մշակած ծրագրային ու կազմակերպական սկզբունքների հիման վրա։

Մինչև ՌՍԴԲՊ 2-րդ համագումարը Հայաստանում գործել են առանձին մարքսիստական խմբակներ (օրինակ, դեռևս 1899 թվականին Ստ. Շահումյանը Ջալալօղլիում (Ստեփանավան) կազմակերպել է մարքսիստական առաջին խմբակը, այնուհետև 1902—1903 թվականներին բանվորական մարքսիստական խմբակներ են գործել Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում և այլն)։ Սակայն այդ խմբակները թույլ էին, նրանց գործունեությունը չէր կրում սիստեմատիկ բնույթ, նրանք չունեին շատ թե քիչ ազդեցություն աշխատավորական լայն մասսաների վրա։

Վ. Ի. Լենինը 1903 թ. հոկտեմբերի 15-ին իր խմբագրած «Իսկրա» թերթում տպել է Բ. Կնունյանցի նամակը «Իսկրա»-ի խմբագրությանը։ Նամակում խոսելով ռևոլյուցիոն շարժման տարածման մասին, ասված է, որ «Բուն հայկական պրովինցիաներում (Երևան, Կարս և այլն) մինչև այժմ էլ դեռ չեն հիմնադրված սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ»[1]։

Հայաստանում, ամենից առաջ Երևանում, ՌՍԴԲՊ տեղական կազմակերպությունները ձևավորվել են Վ. Ի. Լենինի հետ տեսակցություններ ունեցած և համապատասխան ցուցումներ ստացած մարքսիստների նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ։

1904 թվականի ամռանը Ստ. Շահումյանը մոտ երեք ամիս գտնվում էր Հայաստանում։ Հունիսի վերջերին գալով Ջալալօղլի, նա ծանոթանում է գավառի բնակչության վիճակին։ Այնուհետև

---

[1] «Իսկրա», № 50, 15 հոկտեմբերի 1903 թ., նույնը տե՛ս նաև ««Революционное движение в Армении 1905—1907 гг.», Ереван, 1955, стр. 86.

Շահումյանն այցելում է Հայաստանի նաև այլ շրջաններն ու Երևան քաղաքը, որտեղ մնում է մինչև սեպտեմբերը։ Շահումյանը մեծ աշխատանք է կատարում տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն ամրապնդելու ուղղությամբ, նրանց հաղորդում է այն պայքարի մասին, որ ծավալում էին Վ. Ի. Լենինը և նրա կողմնակիցները, մենշևիկների դեմ։

Ստ. Շահումյանը «Երևանից» վերնագրով հատուկ հոդված գրեց ՌՍԴԲՊ Կովկասյան միության օրգան «Պրոլետարիատի կռվի թերթիկի» համար։ Հոդվածը «Հայ իրականությունից» վերնագրով տպվեց այդ «Թերթիկ»-ի 1904 թ. հոկտեմբերի 1-ի համարում[1]։ Շահումյանը համառոտակի վերլուծում է հայկական պրովինցիայի քաղաքական կյանքի մի շարք կարևոր հարցեր, քննադատում է ցարիզմի ավազակային քաղաքականությունը Հայաստանում և ցույց տալիս ժողովրդական մասսաների մեջ առաջ եկած «խորը վրդովմունքը ցարիզմի քաղաքականության դեմ»։ Այնուհետև Շահումյանը անողոք քննադատում է բուրժուա-նացիոնալիստական դաշնակցություն կուսակցության «Ներկայումս ամենաուժեղ և գործունյա, բայց և ամենից ավելի անսկզբունք և ռեակցիոն»[2] կուսակցության գործելակերպը, ցույց տալով սոցիալ-դեմոկրատիայի դեմ նրա ձեռնարկած խարդախ մեքենայությունները։

Միաժամանակ Ստ. Շահումյանը գրում է Հայկական պրովինցիայում ձևավորվող և գործող սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մասին, որոնք կապված են ՌՍԴԲՊ Կովկասյան միության կոմիտեի հետ, ստանում են մարքսիստական դրականություն և «լարված ուշադրությամբ հետևում են հայ և այլազգի բանվորների հերոսական պայքարին»։

Ս. Շահումյանը լենինյան հստակությամբ ու խորաթափանցությամբ նշում է հայ աշխատավորների պայքարի հեռանկարները և սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները Հայաստանում։ «Այս պայքարը-— գրել է Շահումյանը,— արդեն բաղմաթիվ փայլուն հաղթանակներ է տարել. նա հաղթանակ կտանի նաև այժմ մոլեգնող, սիրտ կտրատող հայկական ռեակցիայի դեմ։ Սոցիալ-դեմոկրատիան, իր համարձակ պրոպագանդայով, «պայծառ ճառագայթի նման» կթափանցի հայկական պրովինցիայի այդ «մթին թագավորությունը». բնակչությանը կստիպեցնի մտածել քաղաքականո-

---

[1] Տե՛ս «Листок борьбы пролетариата», № 12—13, նույնը՝ Երկեր, հատ. 1, էջ 48—52։

[2] Նույն տեղում, էջ 49։

ռեն և գործել քաղաքականորեն, իր դրոշի տակ կկազմակերպի նրա պրոլետարական և կիսապրոլետարական մասսաներին և վճռական բոլորին նրանց կատանի գրոհելու ինքնակալության դեմ, եղբայրաբեն միացած հենց այն ռուս ժողովրդի հետ[1]։

Երևանից գրած այդ հոդվածը Հայաստանում սոցիալ-դեմոկրատներին Լենինի դրոշի շուրջը համախմբելու համար կատարվելիք աշխատանքի լավագույն ծրագիր էր։ Այդ ոգով էլ գնաց ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատների գործունեությունը Հայաստանում, դրվեցին նրանց կազմակերպական ձևավորման հիմքերը։

Երևանի լենինյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ձևավորման և ՌՍԴԲՊ Երևանի կոմիտեի ստեղծման գործը նախաձեռնեց Ստ. Շահումյանը 1904 թվականին։ Այդ գործին ակտիվ մասնակցություն ունեցավ Գեորգի Նիկոլաևիչ Սոկոլովսկին (1879—1939), որն այդ ժամանակ աշխատում էր Երևանի գիմնազիայում։

1904 թվականի «ամբողջ ամառը և ձմեռը,— գրել է Սոկոլովսկին,— ես աշխատանք էի տանում տեղական խմբակներում, շեշտը դնելով ՌՍԴԲՊ գործունեության և բանվորական շարժման պատմության բնութագրման հարցերին»[2]։

Սոկոլովսկին վկայում է, որ Ստ. Շահումյանի ժամանումը և աշխատանքը Երևանի ս. դ. լենինյան կազմակերպության ուժերը համախմբելու գործում ունեցավ բացառիկ նշանակություն։ Շահումյանը համախմբում է ուժերը, հրահանգավորում, սերտ կապ ստեղծում Երևանի և Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միջև։ «Ստեփան Շահումյանը դարձավ իմ լավագույն բարեկամը և մեր Երևանի կազմակերպության բարեկամը»,— գրել է Սոկոլովսկին։ Այնուհետև նա ավելացրել է, որ հետագայում ամբողջ կազմակերպական աշխատանքը ծավալվում էր Ստ. Շահումյանի և ուրիշների աջակցությամբ ու ղեկավարությամբ։

Կովկասյան միության կոմիտեի կողմից, Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ուժեղացման նպատակով, Երևան են ուղարկվում ՌՍԴԲՊ շարքերում կռվված լենինյաններ Ալեքսանդր Մալխասյանը, Մարտիրոս Միրաքյանը (Շանթ), Բ.

---

1 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 52։

2 Գ. Սոկոլովսկին 1932 թ. գրել է «Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության պատմության համառոտ ուրվագիծ (1904—1910)», որի ձեռագիրը գտնվում է Մշի Հայկական ֆիլիալի արխիվում, Սոկոլովսկու գործում, իսկ մի հատվածը տպվել է «Հին բոլշևիկների հիշողություններ» ժողովածուում, առաջին գիրք։

Կնունյանցի Բաքվի առաջին խմբակի անդամ Լևոն Հովսեփյանը, Ասքանազ Մռավյանը և ուրիշներ։

Ալեքսանդր Մալխասյանը Երևանցի էր, մեկնել էր Ռուսաստան սովորելու, 1900 թ. մտել ՌՍԴԲՊ շարքերը և հարել լենինյան թևին, 1903 թ. Տոմսկից արտաքսվել է Երևան[1], ուր նա վերադարձավ որպես կրթված մարքսիստ։ Նա քաջ ծանոթ էր Վ. Ի. Լենինի աշխատություններին։ Մարտիրոս Միրաքյանը («Բանվոր Շանթ» ծածկանունով) ծնվել է Շուլավերում, բանվորությամբ զբաղվել Թիֆլիսում և Բաթումիում, այնտեղ էլ 1900 թվականից մտել ռևոլյուցիոն շարժման մեջ, հետո դարձել ՌՍԴԲՊ Կովկասյան միության ակտիվ, մարտական գործիչներից մեկը։ Միրաքյանը շրջագայում էր Թիֆլիսից Բաքու, Բաթումի, Ալեքսանդրապոլ, Երևան, տարածում էր լենինյան «Իսկրա»-ի համարները, պրոկլամացիաներ, մարքսիստական գրականություն[2], որի մեջ և Վ. Ի. Լենինի երկերը։

Վ. Ի. Լենինը կազմակերպելով պայքար ՌՍԴԲՊ 3-րդ համագումար հրավիրելու համար, հատուկ ուշադրություն էր դարձնում Անդրկովկասի բոլշևիկների գործունեությանը։ 1904 թ. դեկտեմբերի 12-ին Կովկասյան միությանը գրած նամակում Վ. Ի. Լենինը առաջարկում է կազմակերպել մենամասնակցանների կոմիտեների բյուրո, աշխատանք ծավալել 3-րդ համագումարը նախապատրաստելուն, աջակցել, «Վպերյոդ» բոլշևիկյան թերթին։ Մի քանի օր հետո Լենինը նորից է գրում Կովկասի սոցիալ-դեմոկրատներին, խնդրելով արձագանքել բոլշևիկյան օրգանի հրատարակությանը, ուղարկել «ավելի շատ բանվորական թղթակցություններ»։ Լենինը գրում է թե «այժմ առանձնապես Ձեզանից է կախված օրգանի հաջողությունը, որովհետև սկիզբն առանձնապես դժվար է»[3]։

Կովկասի բոլշևիկները եռանդուն պայքար ծավալեցին Վ. Ի. Լենինի պահանջները կատարելու համար։ «Վպերյոդ» թերթում տպված հոդվածները պատմում էին այդ աշխատանքի մասին։ ՌՍԴԲՊ 3-րդ համագումարի շրջանում և նրանից հետո Հայաստանում բոլշևիկների գործունեությունն ավելի լայն ծավալվեց։

1905 թվականի մայիսի 12-ին Երևանի սոցիալ-դեմոկրատ բոլշևիկները հավաքվում են ժողովի։ Կովկասյան միությունից ժողովին մասնակցելու համար ժամանում է Ստ. Շահումյանը, ժողովական-

---

[1] Ալ. Մալխասյանի մասին տե՛ս «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.» փաստաթղթերի ժողովածուն, էջ 167, 433։

[2] Վրաստանի ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 27, ց. 1, գ. 344, թ. 4։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 315։

ներին պատմելով ՌՍԴԲՊ 3-րդ բոլշևիկյան համագումարի մասին, Վ. Ի. Լենինի գրած բանաձևով Կովկասի ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատների գործունեությանը բարձր գնահատական տալու մասին։ Վ. Ի. Լենինը Կովկասի կազմակերպությունները համարում էր «մեր պարտիայի ամենամարտական կազմակերպությունները»[1]։

Այդ գնահատականը վերաբերում է Բաքվի, Թիֆլիսի, Բաթումիի, Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին, որոնք գործում էին Կովկասյան միության մեջ, նրա կոմիտեի ղեկավարությամբ։

Երևանի սոցիալ-դեմոկրատների շարքում էին Գեորգի Սոկոլովսկին, Ալեքսանդր Մալխասյանը, Լևոն Յաղուբյանը, Արամ Շուշանյանը, Լևոն Տեր-Հովսեփյանը, Վարդան Բաբայանը, Արամ Հախումյանը, Գեորգ Թուխունջյանը, Պյոտր Կուզնեցովը, Արշավիր Տեր-Ղազարյանը, Ասք. Մռավյանը, Մարտիրոս Միրաքյանը, Գեորգի Օրբելիձեն և ուրիշներ[2]։ Գ. Սոկոլովսկին իր գրառումների մեջ նշում է, թե 1905 թ. սկզբներին Երևանի կազմակերպության մեջ արդեն հաշվվում էր մինչև 150 անդամ[3]։

Երևանի բոլշևիկների 1905 թ. մայիսի 12-ի ժողովը գումարվել է Կողեռում, կոնսպիրատիվ պայմաններում, որտեղ Ստ. Շահումյանի ղեկավարությամբ տեղի է ունեցել ՌՍԴԲՊ Երևանի անջատ կազմակերպությունների միավորումը և ձևավորվել է ՌՍԴԲՊ Երևանի կոմիտե։ Կոմիտեի նախագահ է ընտրվում Գ. Ն. Սոկոլովսկին, որը մշտական կապեր էր պահպանում Ստ. Շահումյանի և Կովկասյան միության ուրիշ ղեկավարների հետ. նրանցից ստացած ցուցումներով ղեկավարում էր Երևանի բոլշևիկների գործունեությունը։

Հայաստանում բոլշևիկյան կազմակերպություններ են ձևավորվում նաև Ալեքսանդրապոլում, Կարսում, Սանահնում, Հաղպատում, Բորչալուում, Ղափանում և այլ շրջաններում։ Այդ կազմակերպությունների գործունեության մասին քիչ չի գրվել և մենք խնդիր չունենք անդրադառնալ բոլոր հարցերին։ Ստորև կաշխատենք լուսաբանել հարցի մի կողմը՝ Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությունը Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների

---

1 Վ. Ի. Լենին, ՌՍԴԲՊ 3-րդ համագումարը, Երևան, 1941, էջ 169։

2 ՌՍԴԲՊ Երևանի կազմակերպության անդամների մի ցուցակ է կազմել Ս. Բագրատունին, 1932 թ. պարտ. պատմության ինստիտուտի հանձնարարությամբ (տե՛ս Պարտարխիվ, Բագրատունու նյութերը)։

3 Մշի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, Սոկոլովսկու ֆոնդ, դ. 1, թ. 41

նկատմամբ և վերջինների մասնակցությունը համապարտիական կյանքին, Վ. Ի. Լենինի հետ նրանց համագործակցությունն ու պայքարը հակալենինյան խմբերի դեմ։

1906 թվականի սկզբներին ռևոլյուցիայի կորագիծն իջնում էր։ ՌՍԴԲՊ բոլշևիկյան և մենշևիկյան ֆրակցիաների միջև «միավորման» տենդենցներն ավելի էին ուժեղանում։ Նախապատրաստվում էր ՌՍԴԲՊ 4-րդ միավորիչ համագումար։ Գնում էր պատգամավորների ընտրություն։ Ո՞ւմ ուղարկել համագումար, Վ. Ի. Լենինի կողմնակիցներին, թե նրա հակառակորդներին։

Թիֆլիսի կազմակերպությունն ուղարկեց 1 բոլշևիկ և 7 մենշևիկ, Քութայիսը՝ 2 մենշևիկ, Բաթումը՝ 1 մենշևիկ, Բաքուն՝ 2 բոլշևիկ և 1 մենշևիկ, Երևանը՝ 1 բոլշևիկ՝ Ստ. Շահումյանին։ Տաշքենդի ս. դ. կազմակերպությունից պատգամավոր էր ընտրվել Ա. Գ. Զուրաբյանը, որն այդ ժամանակ արդեն մենշևիկ էր[1] և գործում էր Գ. Վ. Պլեխանովի հետ։

Երևանի կազմակերպության ներկայացուցիչը մեկնեց արտասահման և ապրիլի սկզբներին ներկայացավ Վ. Ի. Լենինին։

Համագումարը տեղի էր ունենում ապրիլի 10—23-ին։ Նրա կազմում մենշևիկները գերակշռում էին, բոլշևիկ-լենինյանների պատասխանատվությունը մեծ էր։ Առաջին նիստում ստեղծվեց մանդատային հանձնաժողով — մենշևիկների ֆրակցիայից երկու հոգի և բոլշևիկների —2. ըստ որում լենինյաններն առաջարկեցին Շահումյանին և մեկ ուրիշ ընկերոջ։ Համագումարի 27-ի նիստում լարված պայքար էր մղվում մի կողմից Վ. Ի. Լենինի և նրա կողմնակիցների և մյուս կողմից՝ մենշևիկների միջև։

Համագումարի 10-րդ նիստում մենշևիկները քննարկման են դնում Երևանի կազմակերպության մանդատի օրինականության

---

[1] Ա. Գ. Զուրաբյանը ՌՍԴԲՊ 2-րդ համագումարից հետո Կովկաս եկավ և բոլշևիկյան ոգով զեկուցումներ տվեց։ 1906 թ. նա փոխադրվեց Միջին Ասիա, հարեց մենշևիկյան ֆրակցիային։ Ընտրվելով 2-րդ Պետական դումայի պատգամավոր, նա դումայում հանդես եկավ խիզախ ռևոլյուցիոն ճառերով, բանտ նետվեց և Սիբիր աքսորվեց։ Համաշխարհային պատերազմի ժամանակ դարձավ սոցիալիստ-ինտերնացիոնալիստ և պառակտվեց մենշևիկների լիդերների հետ։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո ակտիվորեն պայքարում էր մենշևիկների ու դաշնակների դեմ, հանուն Սովետական իշխանության հաղթանակի և ՌՍՖՍՌ-ի հետ եղբայրական միասնության։ Մահացավ Երևանում 1920 թ. հունվարին։ Նրա դին Երևանից Թիֆլիս ուղարկելիս, որը կազմակերպել էին Երևանի բոլշևիկները, երիտասարդ սպարտակյանների հետ, հանդիսացավ Երևանի բոլշևիկների մի թաղաքական դեմոնստրացիա՝ ընդդեմ դաշնակցական իշխանության և վրաց մենշևիկների։

հարցը, և այն հետաձգվում է։ Պահանջում են լրացուցիչ տեղեկություններ Երևանի կազմակերպության մասին։ Ժորդանիան լկտի հարձակումներով շինծու մեղադրանքներ է նետում Շահումյանի հասցեին։

Համագումարի 12-րդ նիստն է։ Նախագահում է Վ. Ի. Լենինը։ Նորից դրվում է Երևանի կազմակերպության ներկայացուցչության հաստատման հարցը[1]։ Մի խումբ մենշևիկներ մրցընում են զրավոր առաջարկություն, որը լի էր անհիմն մեղադրանքներով և զրպարտանքներով Երևանի կազմակերպության հասցեին։

Երևանի կազմակերպության շուրջը ծավալված պայքարի մասին Ստ. Շահումյանը ՌՍԴԲՊ հաջորդ համագումարին ներկայացրած բացատրության մեջ գրել է հետևյալը. «Ես հանդիսանում էի ոչ թե միայն Երևանի քաղաքային կազմակերպության ներկայացուցիչը, այլև մի ամբողջ շարք փոքր կազմակերպությունների, որոնք Կենտկոմի գործակալի և Կովկասյան մարզային կենտրոնի որոշմամբ միավորվել էին մի ընտրական կուրիայի մեջ Հայկական պրովինցիա անվան տակ»[2]։ Այնուհետև Շահումյանը նշում է, որ իրեն ՌՍԴԲՊ 4-րդ համագումարի պատգամավոր ընտրելու օգտին քվեարկել են Երևանի կազմակերպությունում և Ուլուխանլուում 240 ձայն, Ալեքսանդրապոլի կազմակերպությունում 60 և Երևանի նահանգի զինվորական կազմակերպությունից 100 ձայն, որը կարող են հաստատել այդ կազմակերպությունները[3]։

Համագումարը հակառակ Կովկասի մենշևիկների ճիգերի, հաստատում է Շահումյանի ներկայացուցչությունը։ Շահումյանը համագումարում մի քանի անգամ ելույթներ է ունենում, տարբեր հարցերի մասին արտահայտում իր կարծիքը, ամենուրեք ընթանալով Վ. Ի. Լենինի հետ։ Համագումարի 24-րդ նիստում լիտվական ս. դ. կազմակերպության հարցի կապակցությամբ Շահումյանի առաջարկի դեմ առարկություններից հետո նախագահող Վ. Ի. Լենինը բացատրում է Շահումյանի մտցրած ուղղումը և նրա իմաստը[4]։

---

1 Четвертый (Объединительный) съезд РСДРП. Протоколы. 1959, стр. 184.

2 «Протоколы пятого съезда РСДРП», Партиздат, 1955, стр. 669.

3 Նույն տեղում։

4 Տե՛ս ՌՍԴԲՊ 4-րդ համագումարի արձանագրությունները, էջ 420։

Քննվում է ագրարային հարցը, Շահումյանը Լենինի հետ է քվեարկում, ազգային կազմակերպությունների հարցը՝ նույնպես, Պետական դումայի նկատմամբ ուննեալիք վերաբերմունքի հարցը՝ նույնպես։ Հանդես գալով Հայկական պրովինցիայի սոցիալ-դեմոկրատների անունից, նա ցույց է տալիս, որ Հայաստանի ռևոլյուցիոն մարտիկները դնում են Լենինի հետ։

ՌՍԴԲՊ 4-րդ համագումարից հետո Վ. Ի. Լենինի ցուցումներով գինված Ս. Շահումյանը վերադառնում է Կովկաս, ուր նոր ուժով բորբոքվում էր պայքարը լենինյանների և հակալենինյանների միջև։ Շահումյանը զեկուցումներով է հանդես գալիս Կովկասի կազմակերպություններում, անցկացնելով լենինյան գիծը։ 1906 թ. մայիսին Շահումյանը ժամանում է Երևան սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ժողովում զեկուցում համագումարի արդյունքների մասին, Երևանի կոմունիստներին պատմում Վ. Ի. Լենինի մասին։

«Ստեփանը պատմեց, որ Լենինը հրաժարվել է մտնել մենշևիկյան մեծամասնություն ունեցող Կենտկոմի օրգանի խմբագրության կազմի մեջ և հայտարարել է, որ գերադասում է ունենալ իր բոլշևիկյան թերթը», որ «Բոլշևիկները զենքը վար չեն դնում և չեն կարող երկար ժամանակով տանել մենշևիկյան Կենտկոմի զեկավարությունը», որ «Լենինը կհենվի Պետերբուրգի ու Մոսկվայի կազմակերպությունների վրա, որ բոլշևիկյան են...»[1]։ Ասք Մռավյանը վերհիշելով Շահումյանի զեկուցման մասին, գրել է թե Ստեփանի խոսքը մի կատարյալ հայտնություն էր Երևանի երիտասարդ կազմակերպության անդամների համար։

Երևանի բոլշևիկները համերաշխ պաշտպանում են Շահումյանի զեկուցումը։ Նրա զեկուցման մեջ շարադրված թեզերն էլ կազմեցին նրա «ՌՍԴԲՊ վերջին համագումարը» հոդվածաշարի բովանդակությունը, տպվելով «Կայծ» հայերեն թերթի էջերում[2]։ Այդ հոդվածաշարում նա հայ աշխատավորներին բացատրում է Վ. Ի. Լենինի վարած ներպարտիական պայքարի իմաստը և նրա առաջադրած ռևոլյուցիոն ծրագրերը Ռուսաստանի ճնշված բոլոր ժողովուրդների, որոնց թվում և հայ ժողովրդի համար։

---

1 Ա. Մռավյան, *Ստեփան Շահումյանը Երևանում, Հուշեր, զետեղված նրա հոդվածների ժողովածուում, Երևան, 1930, էջ 34—35։*

2 *Հոդվածը տպվել է «Կայծ»-ի 1906 թ., 13, 17, 18 համարներում (Երկեր, հատ. 1, էջ 129—143)։*

ՌՍԴԲՊ Երևանի կազմակերպությունը աճում և ամրապնդվում էր։ Նրա շարքերում, ըստ Երևանի կոմիտեի նախագահ Գ. Սոկոլովսկու տվյալների, 1907 թ. սկզբներին հաշվվում էր 300 անդամ։

ՌՍԴԲՊ. 5-րդ (Լոնդոնի) համագումարի նախապատրաստման շրջանում Երևանի կազմակերպությունը հանդես եկավ, ընտրեց իր պատգամավորը՝ Գ. Սոկոլովսկուն։ ՌՍԴԲՊ 5-րդ համագումարում դելեգատներ ընտրվեցին նաև Բորչալուի — Լոռվա կազմակերպություններից՝ բոլշևիկներ Ստ. Շահումյանը, Ա.ս. Կախոյանը և Մ. Ցխակայան։ Այսպիսով, Հայաստանի ս. դ. կազմակերպությունները ՌՍԴԲՊ 5-րդ համագումար ուղարկեցին 4 բոլշևիկ պատգամավորներ և մեկ մենշևիկ խորհրդակցական ձայնով (Ա. Երզնկյանին)։

Դեռևս ճանապարհին, Կոպենհագենում Հայաստանից մեկնած բոլշևիկ պատգամավորները հանդիպում ունեցան Վ. Ի. Լենինի հետ։ Այնտեղ հավաքվել էին բոլշևիկ պատգամավորները առանձին ժողովի։ Այդ ժողովը կազմակերպել էր Վ. Ի. Լենինը բոլշևիկյան ֆրակցիայի ուժերը համախմբելու և համագումարում ավելի կազմակերպված հանդես գալու համար։ Երևանի և Բորչալուի կազմակերպությունների պատգամավորները ևս մասնակցում են դրան և լսում ժողովի նախագահ Վ. Ի. Լենինի զեկուցումը։ Նա ձայն է տալիս նաև ՌՍԴԲՊ Երևանի կազմակերպության պատգամավոր Գ. Սոկոլովսկուն, որը իր ելույթում հաղորդում է Երևանում բոլշևիկների գործունեության մասին։ Նա խիստ հարձակումներ գործելով մենշևիկների դեմ, հուզվում է։ Ժողովի նախագահ Վ. Ի. Լենինը ունկնդրելով Երևանից եկած պատգամավորի ելույթը, ըստ երևույթին նախօրոք հարցնելով նրա ով լինելու մասին, մոտենում է Գ. Սոկոլովսկուն և ուղեկցում մինչև իր նստելու տեղը բոլշևիկների ֆրակցիայում։ Վ. Ի. Լենինը, գրել է Սոկոլովսկին, միայն նրան հատուկ շատ բան ասող ժպիտով ասել է՝ «իսկ դուք, ընկեր, երևի մանկավա՞րժ եք»[1]։

Այսպիսով, Հայաստանի բոլշևիկների պատվիրակները դեռևս համագումարն սկսելուց առաջ հանդիպումներ ունենալով Վ. Ի. Լենինի հետ, նրան պատմում են Կովկասի և Հայաստանի մասին, պարտիական աշխատանքի մասին, հակառակորդների մասին։

---

[1] ՄԼԻ Հայկական ֆիլիալի պարտարխիվ, Սոկոլովսկու գործը, էջ 17։

Կովկասյան մենշևիկները կատաղի պայքար էին մղում Լենինի կողմնակիցների դեմ, դիմելով ամենախարդախ միջոցների։ ՌՍԴԲՊ 5-րդ համագումարում մենշևիկների պարագլուխ Ռամիշվիլին նորից քննարկման դրեց Երևանի ս. դ. կազմակերպության իրավասության հարցը, փորձեց վերանայել նույնիսկ Նախորդ (4-րդ) համագումարում Ս. Շահումյանին տրված պատգամավորական մանդատի հարցը, այնուհետև Բորչալուի կազմակերպության կազմի և նրա՝ տվյալ համագումարի համար ընտրած պատգամավորների հարցը[1]։ Մենշևիկները ձգտում էին ամեն կերպ արգելակել Վ. Ի. Լենինի կողմնակիցների համախմբմանը, հարվածն ուղղում էին հատկապես Ս. Շահումյանի դեմ։

Համագումարի ժամանակ Ս. Շահումյանը, Ա. Կախոյանը, Գ. Սոկոլովսկին, Ա. Երզնկյանը Լոնդոնում հանդիպում են ունենում Վ. Ի. Լենինի հետ։ Հետաքրքիր է Ա. Կախոյանի զրույցը։ Համագումարից առաջ նա շատ էր ուզում տեսնել Լենինին։ «Նրա մասին շատ էի լսել, մանավանդ Վ. Կուրնատովսկուց»,— գրել է Կախոյանը։ Հարմար մոմենտը եկել էր։ Համագումարից առաջ Կախոյանը գնում է պատգամավորների հավաքված շենքը, սակայն նա դեմքով Լենինին չէր ճանաչում։ Մոտենալով Մ. Ցխակայային, նա մասնակցում է խմբված պատգամավորների զրույցին։ Ցխակայան Կախոյանին ներկայացնում է Մ. Գորկուն, հայտնում, որ նա բանվոր է, Հայաստանից։

Պատգամավորներից մեկը «շեկ մազերով, կարճահասակ և արագաշարժ» իմանալով, որ Կախոյանը եկել է Կովկասից, մոտենում է նրան և զրույցի բռնվում։ «Նրա տված հարցերն էին,— գրել է Կախոյանը,— քանի՞ հոգի էիք, ո՞ր գծով եկաք, քանի՞սն էին մենշևիկ և քանիսը՝ բոլշևիկ, ի՞նչ նյութի մասին էիք վիճում, դելեգատներից քանի՞սն էին բանվոր և քանի՞սը ինտելիգենտ. վիճաբանության ընթացքում մենշևիկ բանվոր դելեգատներից չթեքվեցի՞ն բոլշևիկների կողմը»[2]։ Կախոյանը պատասխանում է հարցերին, բայց դանդաղորեն։ «Այդ մարդու վարմունքն ինձ վրա տարօրինակ տպավորություն թողեց,— գրել է

---

[1] Տե՛ս «Протоколы пятого (Лондонского) съезда РСДРП», էջ 242—245 և այլ էջեր։

[2] Ա. Կախոյանի հուշագրությունները տպվեցին «Հին բոլշևիկների հիշողություններ» ժողովածուում, առաջին գիրք, 1958, էջ 69—70։ Օրերս լույս տեսավ նաև առանձին գրքույկով։

Կախոյանը,— նրա այնքան արագ հարցերին դանդաղ էի պատասխանում։ Նա բերանիս կիսատ խոսքերից ըմբռնելով ասելիքս, նոր հարց էր տալիս»։ Կախոյանը մոռանում է Մ. Ցիակայային և հարցնում,— ո՞ւր է Լենինը.

— Чудак, Ленин говорил с тобой,— պատասխանում է Միխան։ Կախոյանը մի պահ շփոթվում է, հետո անցնում նիստի։

Համագումարում Ստ. Շահումյանի ոսնեցած ելույթում բացահայտվում է Կովկասի մենշևիկների մեքենայությունները, նա ցույց է տալիս, թե ինչպես դեռևս ՌՍԴԲՊ 4-րդ համագումարից առաջ Կովկասի մենշևիկյան կենտրոնը տեղեկանալով, որ Երևանի կազմակերպությունը ՌՍԴԲՊ համագումարի պատգամավոր է ընտրել բոլշևիկի, հատուկ մարդ է ուղարկում այդ ընտրությունը ձախողելու համար. նման խարդախություններ մենշևիկները կատարում են Ելիզավետպոլի և Բաքվի նկատմամբ. իսկ ՌՍԴԲՊ 5-րդ համագումարում էլ նույն մենշևիկները փորձեցին ձախողել Հայաստանից համագումար ուղարկած բոլշևիկ պատգամավորներին[1]։ Նրանք ամեն կերպ ճգնում էին ապացուցել, որ Երևանում և հայկական ամբողջ պրովինցիայում չկան սոց. դեմոկրատական կազմակերպություններ, չկա պրոլետարիատ և հետևաբար այդ մարզերից ներկայացած պատգամավորների լիազորությունները անօրինական են։ Դա մի անարդ ոտնձգություն էր Հայաստանի աշխատավորների դեմ, որոնք համախմբվել էին ՌՍԴԲՊ-ի դրոշի շուրջը և իրենց բախտը կապել լենինյան պարտիայի հետ։

Ստ. Շահումյանը պատմում է Հայաստանում սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունների ակտիվ աշխատանքի մասին, հարուստ փաստերով հերքում է մենշևիկների պրպարտանքները։

Կովկասյան մենշևիկների կողմից Հայաստանի ս. դ. կազմակերպությունների բոլշևիկ պատգամավորների դեմ ձեռնարկած դավադիր գործերի դեմ մղվող պայքարում Հայաստանի բոլշևիկ պատգամավորները ջերմ պաշտպանություն էին գտնում Վ. Ի. Լենինի կողմից։ Նրանց հետ միասին էին հանդես գալիս նաև Մ. Ցիակայան և ուրիշներ։

Թե՛ Երևանի և թե՛ Բորչալուի — Լոռվա բոլշևիկների պատգամավորների հարցում Կովկասյան մենշևիկները կատարյալ

---

[1] Ստ. Շահումյանի ելույթը ՌՍԴԲՊ 5-րդ համագումարում, տե՛ս Համագումարի արձանագրությունները, էջ 239—242, (նույնը՝ Երկեր, հատ. 1, էջ 307—313)։

ՀԽՍՀ-ման ենթարկվեցին, այդ պատգամավորները հաստատունկերպով կանգնեցին Վ. Ի. Լենինի կողմնակիցների շարքում, վերադարձան Կովկաս, նոր եռանդով զեկավարելու աշխատավորների ազատագրական պայքարը[1]։

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները հաղթահարելով մի կողմից ցարիզմի հետապնդումներն ու հալածանքները և մյուս կողմից ներպարտիական պայքարի դժվարությունները, պահպանում էին իրենց կադրերը, աշխատանք էին ծավալում նոր ուժեր համախմբելու համար։ Միաժամանակ Հայաստանի բոլշևիկները ակտիվորեն մասնակցում էին համապարտիական այն մեծ պայքարին, որ մղում էին Վ. Ի. Լենինը և բոլոր բոլշևիկները՝ ընդդեմ ՌՍԴԲՊ ներսում եղած կազմալուծիչների և օպորտունիստների, հանուն բոլշևիկյան պարտիայի թեորիայի ու տակտիկայի հաղթանակի։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին և ռևոլյուցիայի օրերին, այսպիսով, Հայաստանի բոլշևիկները համախմբվեցին Վ. Ի. Լենինի շուրջը, նրա զեկավարությամբ մեծ աշխատանք կատարեցին հայ աշխատավորությանը ռևոլյուցիոն ազատագրական շարժման մեջ համախմբելու համար։

Հայ ժողովուրդը, որ իրավազուրկ, խաբված և մոլորված էր իր հույսերի և ապատեղիքների մեջ, հարազատ միջավայր հանդիսացավ Վ. Ի. Լենինի դաղափարները սերմանելու և տարածելու համար։

Վ. Ի. Լենինի զեկավարած այդ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները Հայաստանի աշխատավորներին բացատրում էին, որ հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազա-

---

[1] Պատմական բախտը Լոնդոն էր՛տարել գրող Բաֆֆու ընտանիքին։ Համագումարից հետո Բաֆֆու տղաները՝ Արշակը և Արամը հայ սոցիալ-դեմոկրատներին հրավիրում են հայկական գաղութում կազմակերպված հավաքին, որին ներկա էին եղել մոտ 30 հայեր։ Հրավիրվածների մեջ էին ՌՍԴԲՊ 5-րդ համագումարի պատգամավորներ Ս. Շահումյանը, Ա. Կախոյանը, Ա. Երզնկյանը, այնուհետև սոց. դեմ. բանվ. հայ կազմակերպության պատվիրակներ Նարիման և Ղազար Տեր-Ղազարյանները և բժ. Տիգ. Խախանյանը։ Հայկական գաղութի անդամները հետաքրքրվում են ռուսական ռևոլյուցիայի և հայ-թուրքական հարաբերությունների հարցերով, որոնց մասին զեկուցում է տալիս Ա. Երզնկյանը։ Նույթ է ունենում նաև Շահումյանը։ Հավաքույթը զեկավարել է Արամ Բաֆֆին։ Զեկուցումից հետո հյուրերը հրավիրվում են Ար. Բաֆֆու բնակարանը, որտեղ նրանք գրույց են ունենում մեծանուն վիպասանի կնոջ հետ։ Բաֆֆիների ընտանիքը Ստ. Շահումյանին, Ա. Կախոյանին, Ար. Երզնկյանին և մյուս հյուրերին ընդունում է ջերմությամբ և հյուրասիրում (տե՛ս Կախոյանի և Ա. Երզնկյանի հուշերը)։

տագրությունը հնարավոր է նվաճել ռուսական ռևոլյուցիայի հաղթության միջոցով, կոչ անելով նրանց, ձեռք մեկնել ռուս, վրացի, ադրբեջանցի և այլ ազգերի աշխատավորներին և նրանց հետ միասին գնալ դեպի պայքար ու հաղթանակ։

3. ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԵԼՔԸ

Հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության հարցը ռուսական ռևոլյուցիայի բախտի հետ կապելը նոր ընթացքի մեջ դրեց այդ պայքարը։

1905—1907 թթ. ռևոլյուցիան Հայաստանում հարցի վերաբերյալ մեր պատմաբանները գրել են մի շարք աշխատություններ[1]։

Այստեղ մենք կաշխատենք լուսաբանել, թե Վ. Ի. Լենինն ինչպես էր հետևում հայ աշխատավորության կողմից ցարիզմի դեմ մղած ազատագրական պայքարին և լուսաբանում այն, ինչպե՞ս էր դնում հայ դեմոկրատական ազգային-ազատագրական շարժումները պրոլետարական ռևոլյուցիոն շարժման հետ միացնելու հարցը, ինչպե՞ս էր Վ. Ի. Լենինը դասախարակում հայ ռևոլյուցիոն գործիչների կադրերին և աշխատավորական մասսաներին, Վ. Ի. Լենինն ինչպես էր մերկացնում հայ ժողովրդի և նրա հարևանների միջև թշնամանք սերմանող և ընդհարումներ կազմակերպող ռեակցիոներներին և կոփում ժողովուրդների ինտերնացիոնալ միասնությունը։

* * *

Ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին և նրա ընթացքում Վ. Ի. Լենինը քաջատեղյակ էր հայ, վրացի, ադրբեջանցի և այլազգի պրոլետարների ու մյուս աշխատավորների պայքա-

---

[1] Փաստաթղթերի ժողովածու, «Революционное движение в Армении 1905—1907 гг.», Айпетрат, 1955. А. Б. Арутюнян (Аренц), Революционное движение в Армении 1905—1907 гг., 1957, Ս. Պ. Աղայան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում, ԳԱ Հրատ., 1955, Վ. Պարսամյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Պետ. համալսարանի Հրատ., Երևան, 1955, Գ. Հարությունյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Հայպետհրատ, 1956, Շ. Հարությունյան, Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն 1901—1917 թթ., Երևան, 1955, ինչպես նաև հոդվածների ժողովածուներ և այլն։

ին։ Պահպանվել է Կենտրոնական օրգանի և Կենտկոմի նամակագրությունը ՌՍԴԲՊ Կովկասյան Միության հետ։ Ն. Կրուպսկայան Կովկասից ստացած նամակներից, հոդվածներից և այլ աղբյուրներից քաղվածքներ է արել և մի տետրակի մեջ ամփոփել ժամանակակից տեղեկություններ հայ ժողովրդի վիճակի և ազգամիջյան հարաբերությունների մասին[1]։ Այդ նյութերը Կրուպսկայան հավաքում էր Վ. Ի. Լենինի համար, որը Անդրկովկասի ռևոլյուցիոն գործիչների հետ ունեցած անձնական հանդիպումների միջոցով, իր աշխատություններում, համագումարներում ունեցած ելույթների մեջ, իր խմբագրած բոլշևիկյան թերթերի էջերում և նամակներում ուղղություն էր տալիս Կովկասի ժողովուրդների, նրանց թվում և հայ ժողովրդի ռևոլյուցիոն պայքարին։

Ինչպես հայտնի է, Թիֆլիսում աշխատող մի խումբ հայ բանվորներ դեռևս 1898 թվականին ստեղծել էին ընդհատակյա ռևոլյուցիոն խմբակ, որի կազմում մտնում էին Մելիք Մելիքյանը (Դեդուշկան), Պողոս Փիլոսյանը (նույնը և Հայկ Ադամյան), Գրիգոր Մկրտումյանը, Աս. Կախոյանը, Լևոն Յաղուբյանը և ուրիշներ։ Խմբակը գործել է մինչև 1901 թվականը, նրա անդամները մտան ՌՍԴԲՊ շարքերը։

«Իսկրա»-ի էջերում Վ. Ի. Լենինը տպել է մի շարք հոդվածներ և նամակներ, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդել հայ ժողովրդի տրամադրությունների և ձգտումների մասին։

1901 թ. Թիֆլիսի հայ և վրացի բանվորների ելույթներին անդրադառնալով, «Իսկրա»-ն գրում էր, թե «Կովկասում սկսվում է բացահայտ ռևոլյուցիոն շարժումը»։ 1901 թ. մայիսի 1-ին Թիֆլիսում տեղի ունեցած բանվորական ցույցի ժամանակ, հայ, ռուս, վրացի բանվորները բախվում են ցարական ժանդարմների հետ։ Ցուցարարների առջևից գնում է դրոշակակիրը՝ հնագույն ռևոլյուցիոն բանվոր Առաքել Օքոնը (Օքոյանը)։

Առաքելը ամենահին գործիչներից մեկն էր և 1898 թվականից մտել էր ՌՍԴԲ պարտիայի մեջ, հանդիսանալով ակտիվ բանվոր-կազմակերպիչներից մեկը, ինչպես և Մելիք Մելիքյանը (Դեդուշկան)։ Օքոնը ցուցարարների առջևից գնում էր վրացի բանվոր Մամալաձեի հետ, բարձր պահած կարմիր դրոշը։ «Իսկրան» հաղորդել է թե ինչպես ժանդարմների հարձակման պահին «հաղթա-

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 26—75, դ. 26751, թ. 4—22։

մարմին դրոշակակիր Առաքելը (հայ) մի ձեռքով բռնում է իր գլխին բարձրացված սուրը և ջարդում երկու մասի»[1]։

Լենինյան «Իսկրան» հիացմունք է հայտնում հայ, վրացի, ռուս բանվորների այդ առաջին ելույթի առթիվ, նշելով, որ երեկվա երկչոտ, «անտիրտ հայ կամ վրացի բանվորը այսօր հերոս է, պատրաստ է թափելու իր արյունը և տանջանքներ կրելու, հանուն ընդհանուր սուրբ գործի»։

Որոշ ժամանակից հետո «Իսկրան» նորից անդրադառնում է իր գովերգած հերոսին, արդեն նշում է, որ 1902 թ. փետրվարի պիշերը ոստիկանությունը ձերբակալել է ռևոլյուցիոն ելույթների շատ մասնակիցների, որոնց մեջ են եղել Գ. Ղարաջյանը, Առաքելը և ուրիշներ[2]։

1903 թ. հուլիսի 1-ին Թիֆլիսի կայարանում տեղի է ունենում վրացի, հայ, ռուս 400 բանվորների բողոքի ցույց ցարական իշխանությունների կողմից սոցիալ-դեմոկրատ ռևոլյուցիոներներ Վարդանյանցին, Ղարաջյանին, Միքաձին և Ջաբլաձին աքսոր ուղարկելու դեմ[3]։ Ցուցարարների և ոստիկանության միջև տեղի է ունենում զինված ընդհարում։ Սպանվում է բանվոր Բագրատ Գալուստովը։ Լենինյան «Իսկրան» Բագրատ Գալուստովին բնութագրեց որպես «մարտի դաշտում ընկած առաջին մարտնչող-հերոսի»[4]։ Այդ հերոսի մասին ամենաջերմ զգացմունքներով էին արտահայտվում նրա հետ պայքարող ռուս, վրացի և այլ բանվորները, որոնց համատեղ պայքարի մասին ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեն բաց թողեց հատուկ թռուցիկ[5]։

Վ. Ի. Լենինի խմբագրական փոստում նամակներ էին ստացվում Անդրկովկասի տարբեր շրջաններից։ Այդ նամակների մեջ հաղորդվում էր Անդրկովկասի բոլոր նահանգներում հայ և մյուս ազգերի աշխատավորների համերաշխության և ռևոլյուցիոն ելույթների մասին։

1903 թ. հունվարի վերջերին Վ. Ի. Լենինը անդրադառնալով հայ սոցիալ-դեմոկրատների խնդիրներին, դրանցից մեծավորագույնը համարել է «Հայ պրոլետարիատի քաղաքական դաստիարակությունը և նրան ամբողջ Ռուսաստանյան պրոլետարիատի

---

[1] «Իսկրա», № 6, 1901։

[2] «Իսկրա», № 18, 1902։

[3] Մոսկվայի ԿՊՊԱ., ֆ. 102, ԴՊ, 4 մ. 31, թ. 51, 68։

[4] «Իսկրա», № 47, 1903։

[5] См. «Листовки Кавказского Союза РСДРП. 1955 г.», стр. 33—34.

պայքարին մասնակից դարձնելը, ցարական ինքնակալությունը տապալելու համար»[1]։ Նույն տեղում Լենինը շարունակում է. «Պրոլետարիատի գործն է ավելի սերտորեն համախմբել բոլոր և ամեն տեսակ աղքատությունների բանվորների, որքան կարելի է ավելի լայն մասսաներին, համախմբել՝ ենթարկելով շատ ավելի լայն ասպարեզում պայքարելու համար հանուն դեմոկրատական ռեսպուբլիկայի և հանուն սոցիալիզմի»[2]։

Հայ բանվորների լայն մասսաների սոցիալական-դասակարգային պայքարը շոշափում էր հայ ժողովրդի բոլոր աշխատավորական մասսաների շահերն ու կարիքները։ Վ. Ի. Լենինը պարզաբանում էր ՌՍԴԲՊ ծրագիրը. այն պետք է կայանա քաղաքացիների, այդ թվում, հայերի «լիակատար իրավահավասարության և ազատ դեմոկրատական ինքնորոշման իրավունք պահանջելու մեջ»[3]։ Դա հայ ժողովրդի պատմական բախտը որոշող նոր ծրագիր էր։

Լենինյան այդ դրույթով ղեկավարվելով, «Իսկրա»-ի խմբագրությունը 1903 թվականին խորամուխ եղավ հայ ժողովրդի կյանքի և պայքարի կոնկրետ հարցերին, թերթի էջերում լայն տեղ տվեց հայերի կողմից ցարիզմի քաղաքականության դեմ ուղղված ելույթներին, որոնք ձուլվում էին Ռուսաստանի բոլոր ժողովուրդների կողմից մղվող պայքարի հետ։

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի նոր պոռթկում տեղի ունեցավ ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին։ 1903 թ. հունիսի 12-ին ցարական կառավարությունը օրենք հրատարակեց հայոց եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու մասին, որը փաստորեն նշանակում էր փակել բոլոր ծխական դպրոցները և ընդհանրապես հայկական դպրոցները։ Դա ցարիզմի դաղութարարական քաղաքականության կոնկրետ արտահայտություններից մեկն էր։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միությունը 1903 թ. ամռանը հրապարակեց «Ինքնակալությունը և հայերը» վերնագրով հատուկ պրոկլամացիա, որի մեջ բացահայտվել է Հայաստանում ցարական կառավարության վարած քաղաքականության ենթադրությունները, միաժամանակ ցույց են տրվել հայ ժողովրդի ազատագրական պայքարի նոր խնդիրները։

---

1 «Իսկրա», 1903, № 1, (Երկեր, հատ. 6, էջ 409)։

2 Նույն տեղում, էջ 411։

3 Նույն տեղում, էջ 412։

Պրոկլամացիայում բացատրվում է, որ հայ եկեղեցու գույքը դա հավատացյալների համայնքի գույքն է, որ ցարական կառավարությունը խլում է այդ հարստությունը, որ դրանով կաշառի ռեակցիոն հոգևորականներին, նրանց դարձնի ցարի հլու ծառաներ։ Կովկասյան միությունը նշել է, որ «Հայերը շատ լավ հասկանալով ցարի հետին նպատակները՝ արդեն բարձրացրել են կրոնի դրոշը. նրանց արյունը արդեն թափվել է»[1]։ Կովկասյան միության կոմիտեն 1903 թվականին հրատարակած թռուցիկներից մեկում ընդգծել է, թե «երեկվա խաղաղ հայ մարդը այսօր ազատության մարտիկ է դարձել... կուրծքը բաց դուրս է դալիս ցարի դաշանների դեմ...»[2]։

Կովկասյան Միությունը դիմեց հայ բանվորներին ու գյուղացիներին, կոչ արեց զենքի դիմել. ռուս, լեհ, հրեա, վրացի «առաջավոր մարդկանց հետ», դեն նետել «ցարի խայտառակ լուծը»։

Հայերի ազատագրական շարժման մասին տեղեկությունները հասան Վ. Ի. Լենինի գլխավորած «Իսկրա»-ի խմբագրության։ Որոշվում է «Իսկրա»-ում հոդված տպել։ Բ. Կնունյանցը գրեց «Նոր ավազակություն» նշանավոր հոդվածը, որն անմիջապես տպվեց «Իսկրա»-ում[3]։ Հոդվածի մեջ նշված է, որ հայ ժողովրդի ամենալայն խավերը վրդովված են ցարական կառավարության կամայականությունների դեմ։ Երևանում, Կարսում, Ալեքսանդրապոլում, Բաքվում, Թիֆլիսում, Շուշիում, Ելիզավետպոլում, գյուղերում ժողովուրդը «զենքը ձեռքին էր դիմավորում ցարական աստիճանավորներին,— գրել է հոդվածագիրը,— «ամենուրեք եղան ընդհարումներ զորքերի հետ»։ «Իսկրա»-ն նշում է, որ Շուշի քաղաքում հայ բնակչությանը սանձելու համար «այնտեղ ուղարկվեց հրետանի». «Թիֆլիսում նույնպես... հրանոթներ են ուղարկվել քաղաք, իսկ Բաքվում կասպիական նավատորմը մոտեցվել է ափին»։

Լենինյան «Իսկրա»-ն «խմբագրության կողմից» ընդարձակ մեկնաբանություններ տվեց այդ հարցի առթիվ։ Այդ մեկնաբանությունների հեղինակը դեռևս չի ճշտվել, հայտնի չէ, թե ո՞ր

---

[1] «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ» ժողովածու, էջ 41, Երևան, 1960 (կազմել և խմբագրել Լ. Խ. Բարսեղյանը)։

[2] Նույն տեղում, էջ 42։

[3] Տե՛ս Բ. Կնունյանց, Ընտիր երկեր (ռուս.), էջ 40։ Նույնը տե՛ս նաև Լենինյան «Իսկրա»-ն Անդրկովկասի մասին» ժողովածուն, որը կազմել է Հ. Խաչակյանը, Երևան, 1960, էջ 159։

խմբագիրն է դրել «Խմբագրության կողմից»-ը։ Սակայն նրա ամբողջ բովանդակությունը հագեցված է Լենինյան ոգով։

«Իսկրա»-ի խմբագրությունը գտնում է, որ հայ սոցիալ-դեմոկրատները ճիշտ են գնահատել հայ եկեղեցու դեմ ցարական արշավանքի քաղաքական նշանակությունը։ «Սոցիալ-դեմոկրատները չէ, որ պետք է պաշտպանեն եկեղեցու արտոնությունները»։ Սոցիալ-դեմոկրատիան պահանջում է եկեղեցու անջատում պետությունից, քննադատում է կրոնական ռեակցիոն պրոպագանդան, որը բթացնում է ժողովրդին, պահանջում է «եկեղեցական ունեցվածքի էքսպրոպրիացիա ժողովրդական (դեմոկրատական) կառավարության կողմից՝ ժողովրդի օգտին...»։ Այդպես դրեց հարցը «Իսկրա»-ն։

Միաժամանակ խմբագրությունը նշել է, որ սոցիալ-դեմոկրատիան պայքարում է խոսքի, խղճի և միությունների լրիվ ազատության համար, «բոլոր, ամեն տեսակ միությունների համար», այդ թվում և «եկեղեցական միություններին»։ Լենինյան «Իսկրա»-ն կոչ է անում ապստամբվել «միայն հայերին վերաբերվող գործերի մեջ ինքնակալության բռնի ներխուժման դեմ»։

Լենինյան սոցիալ-դեմոկրատական ծրագիրը այդ հարցում հանգում էր այն բանին, որ թույլ տրվի հայ ժողովրդին ինքը տնօրինի եկեղեցու հարստությունները «ժողովրդի կարիքների համար», որ «հայ պրոլետարները միավորվեն իրար և ռուս բանվորների հետ» պայքարեն կալվածատերերին ու կապիտալիստներին էքսպրոպրիացիա անելու համար։

Լենինյան «Իսկրա»-ի այդ կոչի մեջ ասվում է, որ «ռուսական սոցիալ-դեմոկրատիան ոստիկանների բռնություններից պետք է պաշտպանի և կպաշտպանի ոչ միայն հայ պրոլետարիատին, այլև հասարակության բոլոր դասակարգերին, այդ թվում նույնիսկ քահանաներին»[1]։

Սոցիալ-դեմոկրատիայի խնդիրը համարվեց գլխավորել հայերի այդ ազատագրական շարժումը, այն տանել ճիշտ հունով։ Հայկական եկեղեցական ռեակցիոն միություններ դեմ «մենք ցանկանում ենք պայքարել հայկական ազատ բանվորական միությունների միջոցով,— ընդգծել է «Իսկրա»-ի խմբագրությունը,— իսկ ինքնակալական, ոստիկանական բռնության դեմ մենք պետք է պայքարենք առաջին շարքերում, ժողովրդի որ շերտերում և ինչ

---

1 Տե՛ս «Իսկրա», № 49, 1 հոկտեմբերի 1903 թ.։

պատճառով էլ որ այդ բռնությունը հանդես դա» և «...միայն այս պայմանով մեզ կպատկանի ցարիզմի դեմ պայքարի հեգեմոնիան»[1]:

Լենինյան «Իսկրա»-ն հետագա համարներում նորից անդրադարձել է Հայաստանում և Կովկասի հայաբնակ մյուս վայրերում տեղի ունեցած հուզումներին։ Էջմիածնում, Աշտարակում, Երևանում, Կարսում, Ջալալօղլիում, Ալեքսանդրապոլում, Շուշիում, Թիֆլիսում, Բաքվում, Ախալքալաքում, Ախալցիխեում, և այլ շրջաններում հայ ժողովրդի ամենալայն մասսաները ոստիկանության հետ ղինված ընդհարումներ ունեցան[2]։ Երևանում, Էջմիածնում, Շուշիում, Կարսում, Բաքվում, Թիֆլիսում և այլ վայրերում տեղի ունեցած ընդհարումների հետևանքով սպանվում են ցարական իշխանության շատ ներկայացուցիչներ, ոստիկաններ։ Երևանում ցարական բանակի զինվորների սպանություններ տեղի ունեցան հայերին ազգային վիրավորանք պատճառելու հողի վրա։ 1903 թվականի հոկտեմբերի 14-ին հայկական աղատագրական շարժման մասնակիցները ահաբեկման հանդուգն փորձ կատարեցին Կովկասի կառավարչապետ Գոլիցինի վրա։ Բոլշևիկները հրատարակեցին հատուկ կոչ, գրվատելով ցարիզմի սատրապի վրա հարձակված մարտիկների սխրագործությունը[3]։ Հայկական պրովինցիան քաղաքական կյանքի էր արթնացել։ Ինչպես գրել է Ստ. Շահումյանը, հայերը տեղ-տեղ զենքը ձեռքին դուրս եկան կեղեքիչների դեմ[4]։ «1903 թվականը շրջադարձային կետ դարձավ կովկասահայերի պատմության մեջ»[5]։ Պետք է ընդգծել, որ հայերի այդ ազգային-աղատագրական շարժումները հանդիսացան ժողովրդական մասսաների մի ռևոլյուցիոն պոռթկում, ցարիզմի դեմ ուղղված մի զինված ելույթ, անկախ նրա անմիջական առիթի բնույթից։

«Իսկրա» թերթը հաղորդել է, որ 1903 թ. մարտին լիկվիդացիայի ենթարկվեցին հայկական բարեգործական ընկերությունները և Բաքվի հայկական մարդասիրական ընկերության հայկական գրադարան-ընթերցարանը։ «Իսկրա»-ն գրել է, որ գրադարան-ընթերցարանը փակվել է նրա շենքի մոտ ցույց տեղի ունե-

---

[1] Տե՛ս «Իսկրա», № 49, 1 հոկտեմբերի 1903 թ.։

[2] «Իսկրա», № 50, 15 հոկտեմբերի 1903 թ.։

[3] Տե՛ս «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ» ժողովածուն, էջ 62—65։

[4] Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 285։

[5] Նույն տեղում, էջ 284։

նալու պատճառով և որ այդ բոլորի հետևանքով քաղաքում ժողովրդի մեջ «կա ուժեղ վրդովմունք»[1]։

Այդպիսի մի «ուժեղ վրդովմունք էր» նաև Հաղպատի գյուղացիների, այս անգամ ագրարային հարցի պատճառով ծագած ռևոլյուցիոն ելույթը 1903 թ. նոյեմբերին, կազակների հետ նրանց զինված ընդհարումը, որի ընթացքում գյուղացիներից ոմանք սպանվեցին կամ վիրավորվեցին։ Այդպիսի մարտեր էին տեղի ունենում հայկական երեկվա հնազանդ գյուղում։

Գնահատելով հայկական գյուղերում տեղի ունեցող իրադարձությունները, լենինյան «Իսկրա»-ն նրանց արդյունքներից մեկն է համարել «ռևոլյուցիոն գիտակցության աճը, «անհաշտ» թշնամական տրամադրության աճը ինքնակալության դեմ նույնիսկ խուլ գյուղերում»[2]։

Հայ ժողովրդի ընդերքում եղած ագրարային և ազգային ազատագրական շարժումները չէին հակասում հասունացող և վեր բարձրացող պրոլետարական-ռևոլյուցիոն շարժմանը։ Ընդհակառակը ցարական բռնապետության դեմ հայերի ազատագրական պայքարը պրոլետարական ռևոլյուցիայի կարևոր և հզոր ռեզերվն էր, մանավանդ, որ այդ մարտական շարժումները XX դարի սկզբին Կովկասի առաջին գյուղացիական մասսայական ելույթներն էին, որոնք միաժամանակ համընկան Կովկասում և Հարավային Ռուսաստանում ծավալված (1903) բանվորական հզոր ելույթներին ու գործադուլներին։

Վ. Ի. Լենինը գյուղացիական և ազգային-ազատագրական շարժումները գնահատում էր որպես դեմոկրատական շարժումներ, պրոլետարիատի առջև խնդիր դնելով այդ շարժումները միավորելու և ժողովրդական ռևոլյուցիայի ընդհանուր հոսանքի մեջ դըլխավորելու այն և տանելու ճիշտ հունով՝ պրոլետարական հունով։ Ազգային հարցը և ազգերի ազատագրման համար ծավալվող պայքարի դրոշը Լենինը համարում էր մի կարևոր լծակ, մի խոշոր ազդակ ռևոլյուցիոն պրոլետարիատի բանակի ուժերը կրկնապատկելու՝ նոր դաշնակիցներով։

ՌՍԴԲՊ Կովկասյան միությունը զարգացնելով Վ. Ի. Լենինի դրույթները հայերի ազատագրական պայքարի մասին, մերկացնում էր ռուսական ռեակցիոն մամուլի և ոստիկանության պրովոկացիոն հերյուրանքները հայ ժողովրդի հասցեին և հայ ազգայ-

---

1 «Իսկրա», 1903, № 37։

2 «Իսկրա», 1903, № 1։

նականների հակառևոլյուցիոն գործելակերպը, որով նրանք ձգտում էին հայ ժողովրդի պայքարին տալ ազգայնական-հակառուսական բնույթ, ատելություն սերմանել դեպի այն ամենը, ինչ ռուսական է։

Կովկասյան միությունը հրատարակում էր հատուկ թերթիկներ, իր օրգանի էջերում տպում էր հոդվածներ, լույս էր ընծայում բրոշյուրներ և պրոպագանդայի ու ագիտացիայի միջոցով պարզաբանում էր լենինյան դրույթները, նշելով, որ հայերի ելույթներն ուղղված են ցարական բռնակալության դեմ։

«Այժմ ասացեք, ռուս բանվորներ,— գրված է Կովկասյան Միության մի կոչում[1],— արդյոք դրա համար դուք ատելությո՞ւն պետք է տածեք դեպի հայ ժողովուրդը։ Արդյոք չպե՞տք է մենք, ընդհակառակը, ողջունենք խիզախ հայ ժողովրդին, որպես մի նոր դաշնակցի մեր դժվարին պայքարում։ Չէ՞ որ ռուս ժողովուրդը ոչինչ չի շահում հայերին ճնշելուց։ Ուրեմն արհամարհանքով մերժենք ոստիկանության բոլոր հրամաններն ընդդեմ հայերի։ Ցարական կառավարությունը տեսնում է, որ ավելի, մտրակի ուժով այլևս անհնարին է ճնշել բանվորների հզոր միությունը... և ահա նա ամեն կերպ աշխատում է խառնակչություն մտցնել բանվորների շարքերը և ջլատել նրանց համերաշխությունը։ Մեզ մոտ, Կովկասում, նա ցանկանում է ռուս բանվորներին հրահրել հայերի դեմ»։

Կովկասյան Միությունը դիմում է հայ բանվորներին, հայ ժողովրդի ամենալայն խավերին. «Իսկ դուք՝ պայքարող հայեր, հիշեցեք, որ դուք պայքարում եք ոչ ռուս ժողովրդի դեմ, որ նա մեղավոր չէ ձեր ճնշման գործում, որ ձեր միակ թշնամին ցարական կառավարությունն է, ռուս ժողովուրդը ձեր բնական դաշնակիցն է այդ պայքարում»։ Հայ աշխատավորներն արձագանքում են այդ կոչերին։

* * *

Հայ ժողովրդի անձնվեր զավակները Կովկասի և Ռուսաստանի բանվորական կենտրոններում ռուսների, վրացիների և մյուս ազգերի ռևոլյուցիոն մարտիկների հետ միասնաբար էին կռվում ցարիզմի դեմ։ Այդ ժամանակ էլ հարյուրավոր հայ մարտիկներ մտան լենինյան պարտիայի շարքերը, ռևոլյուցիոն շարժման մասնակցելով որպես մասսաների կազմակերպիչներ և ղեկավարներ։

---

[1] ՄԼԻ Վրացական ֆիլիալի արխիվ, պրոկլամացիաների ֆոնդ, № 89, թ. 1։

Վերջիններ Թբիլիսիում և Վրաստանի մյուս քաղաքներում ռևոլյուցիոն պայքարին մասնակցած ընկերների օրինակը։ Այստեղ վրացի ռևոլյուցիոն ակտիվոր գործիչներ Մ. Ցխակայայի, Ֆ. Մախարաձեի, Ա. Ծուլուկիձեի, Մ. Դավիդաշվիլու, Ա. Էլբակիձեի և ուրիշների հետ լենինյան դրոշի տակ կանգնեցին բազմաթիվ հայ մարտիկներ։ Դրանցից էին Արշակ Սիմոնի Ալեքսանդրյանը[1] և Աբրահամ Կալամի Գրիգորյանը[2], որոնք լենինյան-իսկրայական ուղղության մեջ էին մտել 1900 թվականին։ Նրանց վիճակվեց ընկնել Մետեխի բանտը, հետո դատապարտվել տաժանակրության և շղթայակապ ուղարկվել Սիբիր։ Թբիլիսիի բոլշևիկ-լենինյանների կոլեկտիվում կռվեցին Գերասիմ Մելիք-Գրիգորյանը, որի բնակարանը 1902 թվականից հանդիսանում էր ընդհատակյա գրականության պահպանման և տարածման հենարան։ Նույն տարին ՌՍԴԲՊ-ի շարքերը մտավ Իվան Բաղդասարի Կարապետյանը։ 1903 թվականին լենինյան գվարդիայի շարքերն անցած մարտիկներից էին՝ Արտեմ Թամազի Թորոսյանը, Կամոյի մոտիկ ընկերը, զինվորական կազմակերպության ակտիվիստներից մեկը[3], Մինաս Իգնատի Միքայելյանը, Արամ Սերգեյի Մինասյանը և ուրիշներ։ Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցի բանվոր-փականագործ Հովհաննես Գևորգի Հունանյանը 1903 թվականից ծանոթանում է Վիկտոր Կուռնատովսկու և Վանո Ստուրուայի հետ, մտնում լենինյան բանակի շարքերը[4]։ 1904 թվականն է։ Զգացվում է վերահաս ռևոլյուցիայի շունչը։ Թիֆլիսի բոլշևիկ-լենինյանների շարքերն են մտնում Սարգիս Տեր-Գասպարյանը (Կասյանը), Հմայակ Մակարի Նազարեթյանը, Բենիամին Եգորի Սահակյանը, Իոսիֆ Ալեքսանդրի Ղազարյանը, Ասատուր Վարդանի Գրիգորովը և ուրիշներ։ Բանատեղծ Հակոբ Մինայի Հակոբյանը, որ նախկին նարոդնիկ էր, արդեն տեսել էր Մետեխի բանտի խցիկները, 1904 թվականին մտավ լենինյան պարտիայի մեջ։ Նա թարգմանեց «Մարսելյոզը», բանվորների համար կարդում էր լենինյան «Վպերյոդ» թերթը[5]։

1905 թվականի սկզբներից Ռուսաստանում սկսված ռևոլյուցիոն պայքարի ալիքները հասան Կովկաս։ Բազմաղգ Թիֆլիսի

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 29, թ. 1—5։
[2] ՄԼԻ Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 93, ց. 1, գ. 126, թ. 24։
[3] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 822, թ. 1, 8։
[4] ՄԼԻ Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 11, ց. 1, գ. 228, թ. 27—31։
[5] ՄԼԻ Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 93, ց. 1, գ. 93, թ. 11—15։

պրոլետարները բարձրացնում են աղատագրական պայքարի դրոշները։ Հայ ժողովրդի զավակները ռևոլյուցիոն մարտերի մեջ դաստիարակվում և դառնում են ակտիվ լենինյաններ։ Վասիլ Հակոբի Խաչատրյանը, որ մինչ այդ դաշնակցական էր, հրաժարվում է նացիոնալիստական այդ կուսակցությունից և 1905 թ. մտնում բոլշևիկ-լենինյանների շարքը[1]։ Նախկին հայտնի հնչակյան գործիչներ Գրիգոր Մինասի Վարդանյանը[2], Գաբրիել Ավետի Սաղաթյանը[3], Անարոն Միրզոյի Անարոնյանը[4] և ուրիշներ համոզվեցին, որ հայ ժողովրդի աղատագրության ուղին լենինյանների մղած պայքարի ուղին է։ Նրանք հեռացան հնչակից և մտան ՌՍԴԲՊ շարքերը։ Ռևոլյուցիոն փոթորկալի օրերին, Թբիլիսիի մենշևիկների դեմ մղվող պայքարում դաստիարակվեցին և լենինյաններ դարձան Սերգեյ Տեր-Մինասյանը, Իվան Սիմոնի Ֆրանգուլյանը, Աշոտ Հովհաննեսի Թումանյանը, Հայկ Հովհաննեսի Յաղուբյանը, Ասատուր Եփրեմի Տեր-Վարդանյանը և ուրիշներ։

Թիֆլիսում և Վրաստանի մյուս կենտրոններում ռևոլյուցիոն պայքարին ակտիվ մասնակցություն են ունեցել մի խումբ հայ կանայք, որոնցից կնշենք՝ Նինա Նիկիտի Ալաջալովային[5] (պարտիայի մեջ մտավ 1902 թվականին), որը կովկասյան միութենական կոմիտեի մշտական աշխատողներից էր, Վառոն Միքայելի Խոջայանը (հետագայում Ջափարիձե), որը իր ամուսնու՝ Ալյոշա Ջափարիձեի մարտական ընկերն ու զինակիցն էր[6]։ Բոլշևիկ-լենինյանների մեջ աչքի էր ընկնում Ջավանիր Տեր-Պետրոսյանը[7], Կամոյի քույրը, որը կապ ուներ Ն. Կրուպսկայայի հետ, նրա սխրագործությունների մասին տեղյակ էր անձամբ Վ. Ի. Լենինը։ Ռևոլյուցիոն պայքարի ակտիվ մասնակիցներից էին նաև Արմենուհի Հովյանը, Նինա Խանոյանը, Մարո Զուրաբյանը, Անահիտ Նասյանը և շատ ուրիշներ։

Այսպես, Թիֆլիսում և Վրաստանի բանվորական մյուս կենտրոններում հայ ժողովրդի բաղմաթիվ զավակներ, ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին, սոցիալ-դեմոկրատական ինտեր-

---

1 ՄԼԻ ԿՊԱ., ֆ. 124, ց. 1, գ. 2044, թ. 7—10։
2 Նույն տեղում, գ. 308, թ. 1—9։
3 Նույն տեղում, գ. 1697, թ. 4—5։
4 Նույն տեղում, ց. 2, գ. 2, թ. 6։
5 ՄԼԻ ԿՊԱ., ֆ. 124, ց. 1, գ. 28, թ. 2։
6 ՄԼԻ Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 93, ց. 1, գ. 131, թ. 2—7։
7 ՄԼԻ ԿՊԱ., ֆ. 124, ց. 1, գ. 2057, թ. 9—19։

նացիոնալ կազմակերպություններում դաստիարակվում էին և ըմբոստանում միապետական ռեժիմի դեմ։ Այդպես էր դրությունը նաև Կովկասի մյուս կենտրոններում, որոնց մասին կասվի հետագա էջերում։

* * *

Վ. Ի. Լենինը դեռևս արտասահմանում գտնված ժամանակ տեղեկություններ էր ստանում Ռուսաստանում և Կովկասում սկսված ռևոլյուցիոն ելույթների մասին։ Ողջունելով ցարիզմի դեմ բարձրացող մասսաներին, Վ. Ի. Լենինը գրում էր. «Հրեան ու քրիստոնյան, հայն ու թաթարը, լեհը և ռուսը, ֆինլանդացին ու շվեդը, լատիշն ու գերմանացին — բոլորը, բոլորը գնում են միասին՝ սոցիալիզմի մեկ ընդհանուր դրոշի ներքո»[1]։

1905 թ. հունվարի 22-ին Վ. Ի. Լենինը նյութեր հավաքելով Ռուսաստանում սկսված ռևոլյուցիայի մասին, «Առաջին դասերը» հոդվածի կոնսպեկտում նշել է Պետերբուրգից հետո շարժման տարածումը այլ շրջաններում՝ Մոսկվա, Հարավ, Կովկաս, Լեհաստան[2]։ Նախապատրաստվելով ՌՍԴԲՊ 3-րդ համագումարին, Վ. Ի. Լենինն իր կոնսպեկտների մեջ նշում է Կովկասում կատարվող իրադարձությունների մասին։ Համագումարում զինված ապստամբության հարցի առթիվ ճառի մեջ, ինչպես նաև այլ ելույթներում քանիցս անդրադառնում է Կովկասում ռևոլյուցիոն շարժումներին, հատկապես ընդգծելով «Կովկասի պրակտիկների և բանվորների փորձը»[3]։

Վ. Ի. Լենինի ղեկավարած «Вперед» թերթում հրապարակվեցին շատ նյութեր Կովկասի ռևոլյուցիոն շարժումների մասին։ Մի հոդվածում նշված է, որ գյուղացիական շարժումը «...հատուկ ուժով ընդգրկել է հայերով բնակեցված, գերազանցապես սահմանամերձ տեղերը Երևանի նահանգում և Կարսի մարզում»[4]։

Երբ ՌՍԴԲՊ Կովկասյան Միությունը դիմեց Վ. Ի. Լենինին «Вперед» բոլշևիկյան թերթը Կովկասում թարգմանելու և հայերեն ու վրացերեն վերահրատարակելու մասին, Լենինի կողմից Կրուպսկայան հայտնում է, որ «...մենք շատ ուրախ կլինենք, որ «Вперед»-ը թարգմանվի և վերահրատարակվի Կովկասում»[5]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 439։

[2] «Լենինյան ժողովածու», հատ. 16, էջ 44։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 468։

[4] Տե՛ս «Вперед», 10 մարտի 1905 թ.։

[5] Տե՛ս журнал «Пролетарская революция», № 5, 1925.

Վ. Ի. Լենինը Կովկասի ժողովուրդների ռևոլյուցիոն ելույթներին տվեց բացառիկ կարևոր նշանակություն, բոլշևիկների պարտիայի 3-րդ համագումարում նախագիծ առաջարկեց հատուկ բանաձև ընդունել հայ, վրացի, ադրբեջանցի և Անդրկովկասի այլ ժողովուրդների ռևոլյուցիոն ելույթների մասին։ Այդ բանաձևում Վ. Ի. Լենինը գրել է.

«Կովկասի ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ (ընդգծումը մերն է — Ա. Մ.) մեծամասնության ռևոլյուցիոն տրամադրությունը ինչպես քաղաքներում, այնպես և գյուղերում, արդեն հասել է համաժողովրդական ապստամբության ընդդեմ ինքնակալության»[1]։

Ձևակերպելով ՌՍԴԲՊ 3-րդ համագումարի բանաձևի այդ կետը, Վ. Ի. Լենինը նկատի ուներ Բաքվի պրոլետարիատի 1904 թվականի դեկտեմբերյան գործադուլը, Թիֆլիսի և Բաթումի բանվորների ելույթները, Գուրիայի և Մինգրելիայի գյուղացիական շարժումները, հայ աշխատավորների պայքարը, որի մասին նշվեց վերևում։

Վ. Ի. Լենինը կազմեց համագումարի դիրեկտիվը Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին, հայ, վրացի, ադրբեջանցի և Կովկասի այլ բանվորներին ու գյուղացիներին ռևոլյուցիոն շարժման մեջ ավելի լայնորեն ներգրավելու մասին։ Այդ դիրեկտիվի և ողջույնի մեջ ասված է.

«Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի 3-րդ համագումարը Ռուսաստանի գիտակից պրոլետարիատի անունից ջերմագին ողջույն է հղում Կովկասի հերոսական պրոլետարիատին և գյուղացիությանը, պարտիայի Կենտկոմին ու տեղական կոմիտեներին հանձնարարում է ամենահանդգուն միջոցներ ձեռք առնել՝ Կովկասի գործերի դրության մասին ամենալայն կերպով տեղեկություններ տարածելու բրոշյուրների, մանիֆեստների, բանվորական ժողովների, խմբակային զրույցների և այլ միջոցներով, ինչպես նաև ժամանակին աջակցություն ցույց տալու Կովկասին զինված ուժով»[2]։

Լենինյան այդ ողջույնը և բարձր գնահատականը հասցվեց Անդրկովկասի գիտակից բանվորներին ու գյուղացիներին։ Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպություն-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 536։

2 «ՍՄԿՊ-ն բանաձևերում և որոշումներում», հատ. 1, էջ 84 (նույնը Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 536—537)։

ները հրատարակում էին թռուցիկներ, տարածում էին բոլշևիկյան թերթեր, բանվորների և գյուղացիների ավելի ու ավելի լայն խավեր էին ներգրավվում ռևոլյուցիոն շարժման մեջ, արձագանքելով Ռուսաստանի և Անդրկովկասի կենտրոնների պրոլետարիատի ռևոլյուցիոն ելույթներին։

«Հայ ժողովուրդն էլ դուրս եկավ իր նահապետական, սահմանափակ «ազգային» կյանքի շրջանակներից և կապվեց լայն, լուսավոր քաղաքակիրթ աշխարհի հետ»[1],— գրել է այդ օրերին Ստ. Շահումյանը։

Եվ իսկապես, եթե ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին հայ սոցիալ-դեմոկրատ ռևոլյուցիոն գործիչներն առանձին անհատներ կամ փոքր խմբեր էին, գերազանցապես Ռուսաստանի կենտրոններում կամ Եվրոպայում սովորելու գնացած երիտասարդներից, որոնք այնտեղ, Շահումյանի խոսքերով ասած, «ճաշակելով եվրոպական քաղաքակրթության պտուղները», դալիս էին մեզ մոտ «քարոզիչների», «լուսավորիչների» դերով, ապա ռևոլյուցիայի շրջանում հազարավոր հայ բանվորների ու գյուղացիների կյանքում խոր հեղաշրջում կատարվեց։ Նրանք արթնացան նահապետական կյանքի անդորր քնից, իրենց տնտեսական ու քաղաքական զարգացման օբյեկտիվ բերումով հանդեցին ռևոլյուցիոն շարժման մեջ մտնելուն։

Ռուսական ռևոլյուցիան իր դրոշմը դրեց հայ իրականության վրա, քաղաքական պայքարի մեջ ներքաշեց հայ ժողովրդի զգալի մասին։ Հայ աշխատավորներն, այսպիսով, ռուսական պրոլետարիատի ծավալած ռևոլյուցիոն պայքարի մեջ տեսնելով ցարիզմի նկատմամբ մոտակա հաղթանակը, իրենց ազատագրության բախտն ամբողջովին կապեցին ռուսական ռևոլյուցիայի հետ և ակտիվորեն արձագանքեցին իրենց ռուս և այլազգի եղբայրների պայքարին։

«Կովկասում ժողովրդական ապստամբության դեմ ինքնակալության հաղթությունը, որը հեշտանում է այնտեղի բնակչության այլացեղ կազմով,— գրում է Վ. Ի. Լենինը,— ամենամնասակար հետևանքներն է ունենալու ապստամբության հաջողության համար ամբողջ Ռուսաստանում»[2]։ Կովկասում ռևոլյուցիայի զարգացման ընթացքը խիստ անհանգստացնում էր ցարական իշխա-

---

[1] «Կայծ», № 1, 1 ապրիլի 1906 թ.։

[2] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 8, էջ 536։

նությունները։ Լենինյան «Պրոլետարի» թերթը գրում էր, «Կովկասը կարծես թե ռուսական ռևոլյուցիայի առաջապահ պոստը է»[1]։

Ռևոլյուցիոն ելույթները Բաքվում, Թիֆլիսում, Բաթումիում, Երևանում, Կարսում, Գուրիայում, Լոռվա գավառում, ագրարային շարժումները Հայաստանի և Վրաստանի գյուղերում կատարյալ տագնապ էին առաջ բերել փոխարքայության պալատում։

Կառավարությունը ոստիկանական և ժանդարմական լրտեսներից ամեն օր զեկույցներ էր ստանում ժողովրդի մեջ աճող վրդովմունքի և պայքարի նոր վերելքի մասին։ Ցարական կառավարությունը դիմում էր ամենանենգ միջոցներին՝ կանխելու ժողովրդի նոր ելույթները, ճնշելու դրանք։

Վ. Ի. Լենինը խորամուխ լինելով Կովկասում ցարական կառավարության կիրառած քաղաքականությանը, բացահայտեց Նիկոլայ 2-րդի նենգությունները և հրեշավոր շարագործություններն ուղղված ամենից առաջ հայ ժողովրդի, ինչպես նաև ադրբեջանական և վրաց ժողովուրդների դեմ։

1905 թ. փետրվարին Վ. Ի. Լենինը հանդես եկավ «Ոստիկանության դեպարտամենտի դիրեկտոր Լոպուխինի զեկուցագիրը» վերնագրով բրոշյուրի առթիվ։ Այդ զեկուցագրում ոստիկանների գլխավոր պետը մշակել էր ժողովրդի ճնշման նոր, վայրի ձևեր և միապետական կարգերի «ուժեղացրած պահպանության արտակարգ միջոցները»։ Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ ցարական կառավարությունը չկարողացավ ոստիկանական ռեպրեսիաների միջոցով կանխել ժողովրդական ռևոլյուցիան։ «Ոստիկանական մեխանիզմների զսպանակները» անկարող եղան ռազմական ուժով ճնշել դասակարգային պայքարը, ուստի կառավարությունը մտածում է այլ միջոցների մասին։ Այդպիսի միջոցը, մատնանշում է Վ. Ի. Լենինը, հանդիսացավ ազգային ռասսայական թշնամանքի բորբոքումը։

Ոստիկանապետ Լոպուխինի նոր ծրագրերը բացահայտելով, Լենինը դրանք ձևակերպում է հետևյալ բառերով. «Պետք է բորբոքել ազգային, ռասսայական թշնամություն, պետք է «սև հարյուրակներ» կազմակերպել քաղաքային (և ապա, հասկանալի է, նաև գյուղական) մանր բուրժուազիայի ամենից նվազ զարգացած խավերից, պետք է փորձել դահի պաշտպանության համար

[1] «Пролетарий», № 19, 1905.

համախմբելու բուն իսկ բնակչության մեջ եղած բոլոր ռեակցիոն տարրերին, պետք է խմբակների դեմ ոստիկանության մղած պայքարը դարձնել ժողովրդի մի մասի պայքար ժողովրդի մյուս մասի դեմ։ Հենց այդպես է այժմ վարվում կառավարությունը, Բաքվում թաթարներին գրգռելով հայերի դեմ...»[1]։

Այնուհետև, Վ. Ի. Լենինը մի այլ աշխատության մեջ, բոլշևիկների կենտրոնի կողմից հրատարակված «Մայիսի մեկը» սլոգանում նորից դիմակազերծ է անում ցարական կառավարության խարդախությունները հայ ժողովրդի դեմ։ Այսպես, Վ. Ի. Լենինը գրում էր. «Ցարական կառավարությունը ջանում է մի ժողովուրդը գրգռել մյուսի դեմ, նա կոտորած է սարքել Բաքվում՝ հայերին զրպարտելով թուրքերի առաջ»[2]։

Անհրաժեշտ է հանգամանորեն ասել, թե ինչո՞ւ և ինչպե՞ս ցարական կառավարությունը «զրպարտում էր հայերին», կազմակերպում նրանց ջարդերն ամենից առաջ Բաքվում։

Դեռևս 1905 թ. ռևոլյուցիայի նախօրյակին Կովկասի փոխարքայության գրասենյակը տասնյակ զեկուցագրեր էր ստանում Երևանի, Բաքվի, Ելիզավետպոլի, Թիֆլիսի և այլ նահանգների ու գավառների իշխանություններից՝ հայ աշխատավորության մեջ տեղի ունեցող ռևոլյուցիոն խմորումների մասին։

Ճիշտ է, հայ բուրժուազիան, առևտրականները, խոշոր հողատերերը և ցարական միապետությանը ծախված այլ տարրեր ռևոլյուցիայի առաջին օրերից ներկայանալով փոխարքային, հայտնում էին իրենց հավատարմությունը և նվիրվածությունը ռուսական ինքնակալությանը։ Սակայն նրանք չէին արտահայտում հայ ժողովրդի լայն մասսաների տրամադրություններն ու ցանկությունները։

Ռևոլյուցիայի անմիջական նախօրեին Երևանի նահանգապետը փոխարքային ներկայացրած զեկուցագրերից մեկում հաղորդում էր «Հայերի գլխովին զինվելու մասին» և նրանց «կատարելագործված զենքի պահեստներ ունենալու»[3], «ժողովրդական մասսայի տրամադրության մեջ առաջ եկած արմատական հեղաշրջման»[4] և առաջիկայում «նոր հուզումների հնարավորության մասին»։ Նահանգապետը անհրաժեշտ է համարում մտածել և գտնել «արմատական միջոցներ» հայկական շարժումները կանխելու հա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 247։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 442։

[3] ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 39, ս. գ. 598, թ. 44։

[4] Նույն տեղում, էջ 46։

մար, հայտնաբերել այն ռևոլյուցիոն օջախները, որոնցից դուրս է գալիս հայկական ժողովրդական մասսաների գրգռման նախաձեռնությունը[1]։

Ռևոլյուցիայի առաջին ամիսներին Ալեքսանդրապոլի գավառի ժանդարմական վարչությունը զեկուցագիր ներկայացրեց Կովկասյան իշխանություններին Ղարաքիլիսայի մոտ Սիսիմատանի լեռնային գործարանի պահեստից պայթուցիկ նյութերի անհայտացման մասին[2]։ Գրեթե նույն ժամանակ Կովկասյան զինվորական օկրուգի շտաբի տեղեկությունների հիման վրա Երևանի նահանգապետը հրահանգ է ուղարկել էջմիածնի և այլ գավառների պետերին՝ նրանց իշխանության շրջաններն ուղարկված զենքի տրանսպորտը հայտնաբերելու մասին[3]։ Այսպիսով, հայկական հուզումները ռևոլյուցիայի նախօրյակին չէին մոռացվում և ոստիկանական իշխանություններն զգաստ հետևում էին հայ աշխատավորությանը։

Ցարական իշխանությունն առանձնապես անհանգստանում էր արդյունաբերական կենտրոններում կատարվող իրադարձություններից։ Բաքուն գտնվում էր ոստիկանական կորպուսի ուշադրության կենտրոնում։ Բաքվի պրոլետարիատի մասսայական գործադուլները 1903 և 1904 թվականներին տագնապ էին առաջ բերել Կովկասյան ժանդարմների մեջ։ Բաքվի պրոլետարիատը, անկախ նրա բազմազգ կազմից, համախմբվում էր ՌՍԴԲՊ դրոշի ներքո և հանդես գալիս դասակարգային համերաշխ պայքարով։ Նույնպիսի ինտերնացիոնալ միասնությամբ պայքարի ելան Բաթումի, Թիֆլիսի, Կարսի, Ալավերդու, Երևանի և այլ քաղաքների բանվորները, Կովկասյան երկաթգծի աշխատողները, Անդրկովկասի գիտակից գյուղացիները։

Աշխատավորների միասնական ելույթներից սարսափած ցարական իշխանությունները որոնում էին գործնական միջոցներ, դիմում էին նենգությունների՝ ջլատելու այդ միասնությունը։ Ն. Կրուպսկայան Կովկասից ստացած նամակներից քաղվածքներ անելով Վ. Ի. Լենինի համար բերել է 1905 թ. փետրվարի 9-ին Բաքվից Վիբերի գրած նամակը։ Վիբերը հաղորդել է, որ Բաքվում տեղական իշխանություններն աշխատում էին թույլ չտալ հայ, ռուս, մուսուլման բանվորների միասնական ելույթները։ Ժանդարմական

---

1 ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 39, ս. գ. 598, էջ 49։
2 ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, ս. գ. 62, թ. 7—10։
3 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 102, գ. 79, թ. 48։

գնդապետ Բուլնացկին, ինչպես վկայում է նամակի հեղինակը, հեռագիր է ուղարկել ցարին, հայտնելով, որ «եթե հայերն ու թաթարները (ադրբեջանցիները) միավորվեն», իրենք «Կովկասում կյանք չեն ունենա...»[1]։ Նամակում հաղորդածի հիման վրա Ն. Կրուպսկայան տետրակում գրանցել է այն մասին, թե ոստիկանությունը Բաքուն հեղեղել է զորքերով և լրտեսներով։ «Բանտերը լեփ-լեցուն են», փողոցներում «երևում է հրետանի»։

Ցարական կառավարությունը պատրաստվում էր գլխավոր հարվածը հասցնել Բաքվի պրոլետարիատին։ Դրանով ցարիզմը ձգտում էր ջախջախել Անդրկովկասի ռևոլյուցիոն պրոլետարիատի և դյուղացիների ավանգարդին։

* * *

Անհրաժեշտ է հատուկ շեշտել Բաքվի պրոլետարիատի դերը, որպես ամբողջ Կովկասի ռևոլյուցիոն պայքարի առաջամարտիկի։ Եթե Կովկասը, լենինյան «Պրոլետարի» թերթի արտահայտությամբ, հանդիսանում էր ռևոլյուցիայի մի «առաջապահ պոստ», ապա Կովկասում Բաքուն ռևոլյուցիայի գլխավոր օջախն էր։

Բաքվի պրոլետարիատի մասին վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ նրա կազմի 72 % քաղաքային իշխանություններում հաշվի էին առնվել որպես «ժամանակավոր ապրողներ»։ Դրանց զգալի մասը Հայաստանից և Կովկասի այլ շրջաններից գաղթած և Բաքվում ապրուստի միջոցներ վաստակելու գնացած բանվորներն էին։ Հայերը կազմում էին Բաքվի ամբողջ պրոլետարիատի մի խոշոր հատվածը։ Այսպես, ըստ 1909 թ. հրապարակված տվյալների, Բաքվի բանվորների ազգային կազմն ուներ հետևյալ պատկերը. հայեր 25 %, ադրբեջանցիներ՝ 20, ռուսներ՝ 18, կազանի թաթարներ՝ 13, վրացիներ, պարսիկներ, դաղստանցիներ և այլ ազգություններ՝ 24 %[2]։

Բաքվի բանվորների ընդհանուր թիվը 1907 թ. կազմում էր 49.948 մարդ, որոնց մեջ արտադրական և քաղաքական առավել ակտիվ դեր էին կատարում վարպետները։ Վիճակագրական տեղեկություններով վարպետների 57,9 % կազմում էին ռուսները, 31 % հայերը, 9,5% ադրբեջանցիները և 1% այլ ազգերից[3]։

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 26—75, գ. 26751, թ. 31։

[2] См. В. Семенович, Нефть и нефтяная промышленность в России, СПб, 1909, стр. 184.

[3] Այս թվերը բերվում են ըստ՝ М. Казиев, Из истории революционной борьбы бакинского пролетариата, Баку, 1956, стр. 17.

Բանվորների բոլոր շերտերի ընդհանուր կազմի մեջ ռուսները կազմում էին 25,2, հայերը՝ 24,4%, ադրբեջանցիները, Կազանի թաթարները, պարսիկները և այլ մահմեդականները միասին վերցրած՝ 48,8%։

Բաքուն հանդիսացավ ոչ միայն ռուս, ադրբեջանցի և այլ ազգի բանվորների, այլև հայ պրոլետարիատի մի ստվար ջոկատի դարբնոցը։ Բաքվի բոլշևիկյան-լենինյան կազմակերպությունն էլ հանդիսացավ մի դպրոց, որտեղ ներգրավվեցին և դաստիարակվեցին հայ բանվորների ու գյուղացիների լավագույն ներկայացուցիչները, համալրելով լենինյան գվարդիայի շարքերը։ Հայ մարտիկներն այնտեղ ձեռք-ձեռքի տված գործում էին Ա. Ջափարիձեի և Մ. Ազիզբեկովի, Ի. Ֆիոլետովի և Ս. Խանլարի, ռուս, վրացի, ադրբեջանցի հազարավոր ռևոլյուցիոն մարտիկների հետ։

Բաքվի բանվորները 1903 և 1904 թվականների հայտնի գործադուլների ժամանակ ռուս, հայ, ադրբեջանցի, վրացի և ուրիշ հազարավոր աշխատավորների հետ համերաշխ կերպով իրենց ուժը հակադրեցին շահագործողներին։

Բաքվի բոլշևիկների շարքերում հռչակված հայ հնագույն բանվոր ռևոլյուցիոն-գործիչներից և հավատարիմ լենինյաններից մեկը եղել է Մելիք Մելիքյանը («Դեդուշկան»), որը Ավել Ենուկիձեի, Բոգդան Կնունյանցի, Լադո Կեցխովելու և ուրիշների հետ եղել է Բաքվի կոմիտեի հիմնադիրներից մեկը, շատ անգամ է ընկել բանտ, աքսորվել, բայց Մելիքյանը մնացել է անընկճելի և շարունակել պայքարը ցարիզմի դեմ[1]։

Բաքվի պրոլետարիատի շարքերում կոփված հայ լենինյաններից էր Սահակ Միրզոյի Տեր-Գաբրիելյանը։ Նա իր ծննդավայր Շուշի քաղաքից Բաքու էր տեղափոխվել դեռևս պատանի հասակում, այնտեղ դաստիարակվել պրոլետարական միջավայրում։ 1902 թվականին նա մտնում է ՌՍԴԲՊ շարքերը, իսկ 1903 թ. հարում բոլշևիկ-լենինյանների ֆրակցիային[2]։ Նրան անձամբ ճանաչում էր Լենինը։ Տեր-Գաբրիելյանը մինչև կյանքի վերջը հաստատակամ ընթացավ Վ. Ի. Լենինի նշած ուղով։

Բաքվի բոլշևիկյան կազմակերպության ակտիվ գործիչներից մեկը դարձավ բանվոր Սերգեյ Նիկոլայի Մարտիկայանը։ Նա պա-

---

1 Տե՛ս Ա. Փիրուզյան, Մելիք Մելիքյան, Հայպետհրատ, 1961։
2 Մլի ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 1913, թ. 1։

տանեկան տարիներին Բալախանում բանվոր էր, իսկ 1892 թվականից «Հայ բանվորական ռևոլյուցիոն Ասոցիացիայի» անդամ։ 1895 թվականին Սերգոն գնում է Թուրքահայաստան սուլթանական ռեժիմի դեմ պայքարելու համար, ձերբակալվում և նետվում թուրքական բանտ[1]։ Մեկ տարի հետո աղատվելով բանտից, Պարսկաստանով վերադառնում է Բաքու, 1901 թ. մտնում ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի շարքերը։ Սերգոն կազմակերպում է նիկելապատման փոքրիկ արհեստանոց և զբաղվում բանվորությամբ, այդ արհեստանոցը դառնում է ընդհատակյա բոլշևիկյան աշխատանքի մի հենակետ։ Այդ արհեստանոցում ընդհատակյա գործիչները դաղտնի հանդիպում էին իրար, գումարում պարտիական ժողովներ, կազմակերպում թերթերի և պրոկլամացիաների տպագրության գործը[2]։ Բաքվի բոլշևիկները շափազանց բարձր էին գնահատում փայլուն ընդհատակյա «տեխնիկ» ընկ. Սերգո Մարտիկյանի անթերի, հստակ աշխատանքը[3]։

ՌՍԴԲՊ 2-րդ համագումարից հետո Բաքվում բոլշևիկների ծավալած աշխատանքը, պարտիայի լենինյան դրոշի շուրջը համախմբեց բազմաթիվ նոր բանվորների։ Բաքվի առաջավոր բանվոր Ներսես Քրիստափորի Բարգամյանը ՌՍԴԲՊ շարքերն ընդունվեց 1903 թվականի վերջերին, ամբողջովին նվիրվելով աշխատավորների ազատագրական պայքարին։ 1903 թվականից բոլշևիկ լենինյանների շարքը կանգնած ընկերներից էր նաև Բագրատ Արտեմի Բորյանը[4]։ ՌՍԴԲՊ պառակտման և բոլշևիկների ու մենշևիկների բաժանումից անմիջապես հետո բոլշևիկ-լենինյանների շարքը մտան բանվորներ՝ Արտաշես Սերգեյի Տրդատյանը (Բաքու էր գնացել Նախիջևանից), Աղասի Մկրտչի Մարտիրոսյանը[5] (Բաքու բանվորության էր գնացել Ղափանից), Իսահակ Թադևոսի Բաղդասարյանը (Բաքու էր գնացել Լեռնային Ղարաբաղից), Դավիթ Ավագի Տեր-Եղիազարյանը[6] (Բաքու էր մեկնել Կուբա քաղաքից, սկզբում հարել դաշնակցությանը), Լևոն Վահանի Օհանջանյանը[7] (ծնված էջմիածնում, գնացել էր Բաքու բանվորության),

---

1 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 1211, թ. 7—8։

2 Նույն տեղում։

3 Տե՛ս «Սովետական Հայաստան», 15 մայիսի, 1957։

4 Ավագ եղբոր՝ Բագրատի ազդեցությամբ բոլշևիկ-լենինյաններ դարձան նաև Արմենակ և Խորեն Բորյանները։

5 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 1214։

6 Նույն տեղում, գ. 1914։

7 Նույն տեղում, ց. 2, գ. 425։

Միքայել Սիմոնի Առուշանովը[1] (ծնված Ղարաբաղում, գնացել էր Բաքու և աշխատում էր որպես հորատող վարպետ), Շաքի Վլասի Իսանենիսյանը, Գրիգոր Ֆեոդորովիչ Թարխանովը և ուրիշներ։

1905—1906 թվականներին ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեին կից գործում էր Հայկական սեկցիա։ Հայկական սեկցիան քիչ ծառայություններ չի մատուցել Բաքվում հայ բանվորներին համախմբելու լենինյան դրոշի շուրջը։ Այդ սեկցիան բանվորներին բացատրում էր հայ ժողովրդի ազատագրական պայքարի խնդիրները, ակտիվ պայքար մղում դաշնակցության դեմ, բանվորներին հեռու պահելով նացիոնալիստական զաղափարների ազդեցությունից։ Սեկցիայի անդամները գնում էին գործարանները, ելույթներ էին ունենում բանվորական ակումբներում, պրոֆմիության ժողովներում, բանվորներին համախմբում լենինյանների շուրջը։

Բաքվի պրոլետարիատի լավագույն կադրերը, նրանց մեջ բազմաթիվ հայ բանվորներ ճիշտ հասկանալով հայ ժողովրդի ազատագրության ուղիները, մտնում էին բոլշևիկ-լենինյանների շարքերը և մասնակցում դաշնակ նացիոնալիստների դեմ մղված պայքարին։

Բերենք բնորոշ երկու օրինակ։ Մուկուչ Թևոսի Արզանյանը (1886—1938) հայրենի խնձորեսկ գյուղից Բաքու գնաց և իր հորեղբայրների մոտ սկզբում աշխատում էր սևագործ բանվոր։ Արզանյանի կյանքը դառն էր, տանջալի։ Նա 1903 թվականին առաջին անգամ մասնակցում էր Բաքվի բանվորների մեծ գործադուլին, հիանում էր, որ բազմազգ պրոլետարներն առանց ազգային խտրության, միահամուռ պայքարի էին դուրս եկել։ Արզանյանը շփվում է հայտնի բոլշևիկներ Դեղուշկայի, Բորյանի, Սերգո Մարտիկյանի, Ջափարիձեի և ուրիշների հետ, դաստիարակվում է որպես գաղափարական մարտիկ։ 1905 թ. սկզբներին Արզանյանը արդեն համոզված ռևոլյուցիոներ-լենինյան էր, ՌՍԴԲՊ-ի անդամ[2]։ Հետագա տարիներին նա անխոնջ կերպով մասնակցում էր ռևոլյուցիոն պայքարին, Ստ. Շահումյանի ղեկավարությամբ իր ուժերը նվիրելով աշխատավորների ազատագրման գործին։ Մ. Արզանյանը հիանալի ինտերնացիոնալիստ կոմունիստ էր, նրան սիրում ու հարգում էին հայ և ուրիշ ազգերի բանվորները, որոնց մեջ ապրում և գործում էր անձնվեր ռևոլյուցիոները։ Սոցիալիստական

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 85, թ. 5—7։
[2] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 76, թ. 2։

ռևոլյուցիայի շրջանում Արզանյանը կարմիր գվարդիական էր, Բաքվի կոմունայի մարտիկներից, իսկ Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակից հետո Ղարաբաղի մարզի պարտիական և պետական ղեկավար գործիչներից մեկը։

Ահա մեկ ուրիշ զանգեզուրցի, Լևոն Առուստամովը (1886—1938), որը Քարահունջ գյուղից Բաքու էր գնացել փոքր հասակից, դարձել բանվոր։ Բաքվի բանվորների մեջ Լևոնը շուտով աչքի է ընկնում։ Նա մտերմանում է Մոնտինի, Էֆենդիևի, Զարգարովի և ուրիշ բանվորների հետ, ապրելով նրանց միջավայրում, մասնակցելով նրանց ընդհանուր պայքարին[1]։ 1904 թ. Առուստամովը բոլշևիկյան պարտիայի մեջ մտավ և ամբողջովին նվիրվեց ժողովրդի ազատագրության պայքարին։ Նա ընկավ բանտ, հրեց տառապանքներ, բայց մնաց անընկճելի, տոկուն։ Այդ բանվոր հեղափոխականը իր քաղաքական գործունեության սկզբից կանգնեց Լենինյան բանակի շարքերում, մինչև կյանքի վերջը աղնվորեն ապրելով և գործելով որպես հավատարիմ լենինյան։

Հայկական սեկցիայի ակտիվ աշխատողներից Պետրոս Մնացականյանը, ինչպես նաև բանվոր Մինաս Սարգսյանը, Սիմոն Սուլթանյանը, Ավետիս Գևորգյանը (Բալախանսկին), Նիկոլայ Կոստանյանը և ուրիշներ, որոնք մինչև ռևոլյուցիան հարում էին հնչակյան պարտիային, ռուսական առաջին ռևոլյուցիայի սկզբից մտան բոլշևիկ-լենինյանների շարքերը։

Բաքվի պրոլետարիատի դասակարգի պայքարը հզոր ազդակ հանդիսացավ Անդրկովկասի ճնշված ազգերի ազատագրական շարժման համար։ Հայ բանվորներն ու գյուղացիները տեսան և համոզվեցին, որ բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարը միաժամանակ կլուծի ազգերի ազատագրման խնդիրը։

1905—1906 թվականներին Բաքվում բոլշևիկ-լենինյանների շարքերը մտան բանվոր Երվանդ Դավթի Պողոսյանը, Հովսեփ Վարդազարի Ավակիմովը, Սիմոն Բոգդանի Գեոդակչյանը, Ալեքսանդր Զախարի Վարդանյանը, Արարատ Արտեմի Մռավյանը, Ալեքսանդր Զարգարովը, Աղասի Թորոսի Վարդանյանը, Միքայել Ալեքսանդրի Կարագոզովը, Ավետիս Հակոբի Շահումովը, Գեորգի Իվանի Հարությունյանը, Հակոբ Քրիստափորի Դավթյանը և ուրիշներ։

Վ. Ի. Լենինը սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ-

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 48, թ. 11—14։

րի ուշադրությունը հրավիրում էր կանանց ռևոլյուցիոն շարժման մեջ ներգրավելու խնդրի վրա։ Բաքվում և Կովկասի մյուս կենտրոններում բոլշևիկյան կազմակերպությունները հրավիրում էին կանանց ժողովներ, ագիտատորներ էին ուղարկում բանվորուհիների մեջ, կանանց ներգրավելով ռևոլյուցիոն մարտիկների շարքերը։ Բաքվում այդ տարիներին քաղաքական ակտիվ աշխատանք էին կատարում Փառանձեմ (Ֆարո) Մինայի Կնունյանցը *(Ռիզել),* Ալեքսանդրա Բոգդանի Խեչումյանը, Ելենա Արտեմի Բեգզադյանը *և ուրիշներ։*

Ֆարոն դաստիարակվել էր եղբոր՝ հայտնի լենինյան Բոգդան Կնունյանցի մոտ, նրանից շատ անգամ էր լսել Վ. Ի. Լենինի մասին, տեղյակ էր Լենինի հետ Կնունյանցի ունեցած կապերին, 1904 թ. մտել էր ՌՍԴԲՊ շարքերը։ Պետերբուրգում սովորելիս, Ֆարոն Վարյա Կասպարովայի *և* Հայկանուշ Անանյանի *հետ մասնակցում է 1905 թ. հունվարի 9-ի հռչակավոր ցույցին, ականատես լինում Սենատի հրապարակում տեղի ունեցած արյունահեղությանը։ Ռևոլյուցիոն այդ ելույթին մասնակցելու համար Ֆարոն շատ ուրիշների հետ ձերբակալվում է և Պետերբուրգից արտաքսվում Կովկաս։ Հաստատվելով Բաքվում, անվեհեր ռևոլյուցիոնները շարունակում է պայքարը։ Նույնպիսի անձնվիրությամբ էին գործում Ելենա Բեգզադյանը, Ալ. Խեչումյանը, Վարյա Կասպարովան և հայ ժողովրդի բազմաթիվ ուրիշ դուստրեր։*

Այսպիսով, ռևոլյուցիայի նախօրյակին և 1905—1906 թվականներին Անդրկովկասի բանվորական կենտրոններում հայ աշխատավորությունը ապրեց քաղաքական ակտիվության բուռն վերելք, ազգային ազատագրական շարժումը զուգորդելով պրոլետարիատի դասակարգային պայքարի հետ, դարձավ ռևոլյուցիայի զարգացման բաղկացուցիչ մասը։ Հայ աշխատավորության բազմաթիվ ներկայացուցիչներ կանգնեցին լենինյան ռևոլյուցիոն բանակի շարքերում։

* * *

Հայ բանվորների և բոլոր աշխատավորների դասակարգային համերաշխությունը ռուսների, վրացիների, ադրբեջանցիների և Կովկասի մյուս ժողովուրդների զավակների հետ, նրանց միասնական ելույթները սարսափ էին տարածել ցարական իշխանությունների և բոլոր շահագործողների մեջ։

Ցար Նիկոլայ 2-րդը և նրա ամբողջ պետական մեխանիզմը

ցանկանում էին սեպ խրել բազմազգ պրոլետարների միջև և նրանց բաժան-բաժան անել, որը բացահայտեց Վ. Ի. Լենինը։ Նիկոլայ 2-րդը խոսելով Կովկասի ազգությունների փոխհարաբերությունների մասին, ասել է. «Իմ վաղուցվա անձնական կարծիքով, ոչ մի վստահություն չի կարելի տածել հայերի նկատմամբ։ Անվերապահորեն նրանք են գլխավորում վրդովմունքի ամբողջ դավադրությունը Կովկասում»[1]։ Կայսրը այնուհետև նշում է, թե մինչև այժմ առավել հնազանդները հանդիսանում են մահմեդականները և «աստված չանի, որ նրանք զայրանան, միապետության հզորության դեմ»։ Ցարը տեղեկանալով, որ մահմեդական աշխատավորության գիտակից տարրերը միանում են հայ աշխատավորների հետ և համերաշխաբար հանդես են գալիս տիրող կարգերի դեմ, խոր ափսոսանք էր հայտնում այդ առթիվ։ «Շատ ափսոս, որ մահմեդականները, նախապատվությունը տալիս են հայերին»,— ասում էր թագավորը։ Այնուհետև ինքնակալն ընդգծում էր, որ «նույնիսկ թուրքերը մեր երեսով են տալիս անկարգություններին վերջ տալու մեր անշնորհքությունը և դա անախորժ գիտակցություն է...»[2]։

Ցարական կառավարությունն իր հերթին դիմեց թուրքական և ռումինական իշխանություններին, խնդրելով օգնություն Սև ծովում ռուս նավաստիների ռևոլյուցիոն ելույթները ճնշելու համար։ Վ. Ի. Լենինը դիմակազերծ արեց ցարական կառավարության այդ գործարքը սուլթանի հետ։ Վ. Ի. Լենինը 1905 թ. հունիսին գրեց և տպագրեց «Ռուսական ցարը իր ժողովրդից պաշտպանություն է փնտրում թուրքական սուլթանի մոտ»[3] նշանավոր հոդվածը։

Ցարը պահանջում էր, որ սուլթանը ծովում խեղդամահ աներ ռուս ապստամբ նավաստիներին, սուլթանը պահանջում էր, որ ցարը արյան մեջ խեղդեր անհնազանդ և «խռովարար» հայերին։

Այսպիսով, Նիկոլայ 2-րդը ոչ միայն իր մինիստրների և ոստիկանապետների, այլև թուրքական սուլթանի հետ էր խորհրդակցում Կովկասի ժողովուրդների ելույթների և նրանց դեմ ձեռնարկվող միջոցների մասին։

Վ. Ի. Լենինը հեռավոր տարագրությունից հետևում էր Անդր-

---

1 Տե՛ս ՍՍՌՄ ռևոլյուցիայի թանգարան, ինվ. 2դ—1939, № 16692, 48, Դ. 7, 38—Ա։

2 Նույն տեղում։

3 Տպվել է «Պրոլետարիա» թերթում, № 7, 1905 (երկեր, հատ. 8, էջ 734)։

կովկասում տեղի ունեցող իրադարձություններին, հետաքրքրվում էր հայ ժողովրդի բախտով ու վիճակով։ Այդ կապակցությամբ առանձնապես հետաքրքիր են լենինյան «Պրոլետարի» թերթում տպված նյութերը, որոնք վերաբերում են հայ ժողովրդին վիճակված ողբերգությանը։ Այդ թերթում աշխատում էին Վ. Ի. Լենինը, Ա. Վ. Լունաչարսկին, Վ. Վ. Վորովսկին, Օլմինսկին։ Լունաչարսկու վկայությամբ, «Պրոլետարի» թերթի երկու երրորդը կազմում էր Լենինը, իսկ մեկ երրորդը՝ մյուս աշխատողները»[1]։ «Պրոլետարի» թերթում տպվել է Վ. Ի. Լենինի 50 հոդված։ Վ. Ի. Լենինը որպես այդ թերթի խմբագիր, «շատ լուրջ էր վերաբերվում յուրաքանչյուր հոդված գրելուն»,— պատմում է Ն. Կրուպսկայան։ «Պրոլետարի» էջերում տպվող հոդվածների մասին խոսելով, Կրուպսկայան գրել է, որ Վ. Ի. Լենինը «հատուկ ուշադրություն էր դարձնում թեմայի ընտրությանը, նրա մշակմանը և գրական խմբագրմանը»[2]։

Անհրաժեշտ է կանգ առնել «Ռևոլյուցիա և հակառևոլյուցիա»[3] հոդվածի վրա, ուր տրվել է Բաքվում հայ-թաթարական ընդհարումների և առաջին կոտորածների պատճառների մեկնաբանությունը, բացատրվել է հայ պրոլետարիատի դերը Կովկասի ռևոլյուցիոն շարժման մեջ, որի համար էլ ցարիզմը հարվածն ուղղեց նրա դեմ, նպատակ ունենալով աղգերին բաժանել իրարից և ջլատել ռևոյյուցիայի ուժերը։

Այդ հոդվածը տպելուց առաջ Վ. Ի. Լենինի գլխավորած խմբագրությունը Կովկասից ստացել էր շատ նամակներ, որոնցից մեկի հեղինակը «Բ. Կ.» ստորագրությամբ նշել է. «...Այն, ինչ մենք այստեղ վերապրեցինք չորս օրում... բառացիորեն անհնարին է նկարագրել»։ Նամակում նկարագրված են 1905 թ. փետրվարի 6—9-ին Բաքվում հայ և ադրբեջանցի աշխատավորների դեմ ստիկանության կազմակերպած դավադրական ակտերը։ «Խնդրում եմ ներեք անփութության համար,— գրել է նամակի հեղինակը,— հավատացեք, ես այնքան հուզված եմ, որ չեմ կարող գրել, ձեռքերս դողում են...»[4]։

Ինչպե՞ս էր դնում հարցը լենինյան «Պրոլետարի» թերթը 1905 թվականին, ռևոլյուցիայի բուռն վերելքի օրերին։ Նա վերլուծում

---

[1] Зародов, Ленинская газета «Пролетарий» (1905), М., 1955, стр. 17.

[2] Նույն տեղում, էջ 18։

[3] Տե՛ս «Պրոլետարի» թերթը, № 19, 1905։

[4] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 26—75, գ. 26751, թ. 56—59։

է ցարիզմի քաղաքականությունը և ցույց տալիս ռևոլյուցիոն շարժումները ճնշելու համար ցարիզմի կողմից հակառևոլյուցիոն ուժերի մոբիլիզացիան և մասսաների շարժման դեմ գործադրած դաժան մեթոդները նախ Քիշինևում, այնուհետև Կուրսկում, Նիժնի-Նովգորոդում և այլն, և Ներքին Ռուսաստանում՝ «անվերջ»[1]։

Այնուհետև «Պրոլետարի» թերթն անդրադառնում է Կովկասին և շարունակում. «Սակայն ոչ մի տեղ ռեակցիան ուժերի մոբիլիզացիան չի հասցրել այնպիսի կատաղի պայքարի և այնպիսի կործանիչ հետևանքների, ինչպես Կովկասում։ Կովկասը կարծես թե ռուսական ռևոլյուցիայի առաջապահ պոստն էր։ Բնակչության առանձին խմբերի տնտեսական հակասությունները, որոնք սրվել էին ազգային կոտորածներով, այստեղ քաղաքական իրավազրկության ուժեղացող ճնշման տակ դրսևորվեց վառ, ցայտուն կերպով արտահայտված ռևոլյուցիոն ձևով։ Դրա հետևանքն եղավ այն, որ ժողովրդական շարժման մեջ ղեկավար դերը վիճակվեց ամենառևոլյուցիոն, ամենածայրահեղ տարրին՝ սոցիալ-դեմոկրատիային։ Բավական է մատնանշել այն վճռական դերը, որ Անդրկովկասի գյուղացիական շարժման մեջ խաղում էր մեր պարտիան, որպեսզի հասկանանք, թե ինչպես պետք է վերաբերվի պարտիային ցարական կառավարությունը...»[2]։

Այնուհետև հոդվածում ընդգծվում է, որ «այդ ռևոլյուցիոն ուժի դեմ պայքարելու համար մոբիլիզացվում է Կովկասի բնակչության այն մասը, որն իր... կրոնական հավատով ամենից շատ էր տարբերվում հայերից—թաթարներին»։ Հարցի նման մեկնաբանությունը միանգամայն տրամաբանական է և պատճառաբանված։

«Կառավարությունը,— կարդում ենք նույն հոդվածում,— փետրվարին այդ հակառևոլյուցիոն ուժերի փորձնական մոբիլիզացիա կատարեց, կազմակերպելով Բաքվի հայտնի կոտորածը։ Բաքվի նահանգապետի և ոստիկանության (որի մեջ շատ թաթարներ կան) դերը ժամանակին դիմակազերծ է արվել։ Սակայն դա չխանդարեց նորից դիմել նույն փորձված միջոցին, միայն ընդարձակելով դրեթե ամբողջ Անդրկովկասում և հասցնելով մինչև հրեշավոր չափերի»։

Սա իսկապես, որ ազգամիջյան կոտորած չէր, ոչ էլ մեկ ազգի ձգտումը՝ իշխել մյուսի վրա, ինչպես փորձում էին մեկնաբանել ցարական գործակալները։ Անտարակույս, ինչպես հայկական բուր-

---

[1] Տե՛ս «Պրոլետարի», № 19։

[2] Նույն տեղում։

ժուական-նացիոնալիստները՝ դաշնակների գլխավորությամբ, այնպես էլ մահմեդական-պանիսլամիստական տարրերը ազգայնական կրքեր և ատելություն բորբոքելով, նպաստում էին ցարիզմի քաղաքականությանը և ջլատում աշխատավորների դասակարգային միասնությունը։ Սակայն հայ-թաթարական ընդհարումները կազմակերպում էին ցարական իշխանությունները։

Ինչպես գրել է լենինյան «Պրոլետարի» թերթը, «թաթարներին լիակատար ազատություն էր տրվել կողոպտել, բռնություններ գործադրել, սպանել։ Եվ այստեղ ռեակցիան շտապեց առաջինը հարձակվել ռևոլյուցիայի վրա»[1]։

Լենինյան թերթի թեզը դրված է ՌՍԴԲՊ Բաքվի, Թիֆլիսի, Երևանի, Բաթումիի, Ալեքսանդրապոլի կոմիտեների և Կովկասյան մարզային կոնֆերանսի որոշումների ու կոչերի հիմքում, Անդրկովկասում հրատարակվող բոլշևիկյան թերթերի գործունեության հիմքում։ Այդ թեզից ելնելով, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները մասսաներին բացահայտում էին հակառևոլյուցիոն դավադրության կազմակերպողների ստոր նպատակները, հսկայական ջանքեր գործ դնելով ազգամիջյան ընդհարումների փոխարեն հայ, ադրբեջանցի, վրացի, ռուս և այլազգի աշխատավորների միասնական ռևոլյուցիոն նոր, վճռական պայքարը գլխավորելու գործում։

«Տարբեր ազգություններին մեկը մյուսի դեմ լարելով կառավարությունը ձգտում է,— ասված է ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեի կոչերից մեկի մեջ,— մի կողմից ամբողջ բնակչության ուշադրությունը հեռացնել ժողովրդի իսկական թշնամուց, որը կառավարությունն է, և մյուս կողմից, հույս ունի այդ ճանապարհով ուժասպառ անել ռևոլյուցիոն կազմակերպությունները»[2]։ Նույն ոգով են տոգորված ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեի «Կեցցե միջազգային եղբայրությունը»[3] նշանավոր պրոկլամացիան և շատ այլ կոչեր։

Կովկասի բոլշևիկների կոնֆերանսը քննարկեց այդ հարցը և որոշում ընդունեց «հայ-մուսուլմանական ընդհարումների մասին»։ Այդ որոշման մեջ կոնֆերանսը դիմակազերծ է անում հայ-թաթարական ընդհարումները կազմակերպող ցարական իշխանությունների պրովոկացիոն գործունեությունը և բուրժուական նացիոնալիստների հակառևոլյուցիոն գործելակերպն ու նրանց իդեոլոգիա-

---

[1] Ընդգծումը «Պրոլետարի» թերթի խմբագրությանն է։

[2] Տե՛ս Լենինյան «Вперед» թերթը, № 3, 1905։

[3] Տե՛ս «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ» ժողովածուն, էջ 110։

յի ռեակցիոն բովանդակությունը։ Կոնֆերանսը խնդիր դրեց Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների առաջ՝ իրենց ձեռքը վերցնել բոլոր ազգերի պրոլետարներին համախմբելու, նրանց ներկայացուցիչների ջանքերը միավորելու գործը, ընդհարումների կազմակերպողների դեմ վճռական պայքար մղելու համար, աշխատավորների ուշադրությունը բևեռելով ռևոլյուցիոն պայքարի խնդիրների վրա[1]։

Լենինյան «Պրոլետարի» թերթը 1905 թ. հունիսին հատուկ հոդված է տպել Երևանի նահանգում հայ-թաթարական ընդհարումների մասին, նշելով, որ այնտեղ կրկնվում են Բաքվի սարսափները[2]։ Թերթը պատմում է Երևանում ստեղծված «սարսափելի լարված վիճակի» մասին, «որը ճիշտ կլիներ անվանել զինված խաղաղություն»։ «Ռուս սպաները,— գրված է «Պրոլետարի» թերթում,— գրգռում են թաթարներին», «նրանց սովորեցնում են հրացանից կրակել»։ Թերթը ցույց է տալիս, թե ինչպես են հակառևոլյուցիոն տարրերը օգտագործում ստեղծված իրադրությունը՝ ավելի բորբոքելու ազգային թշնամանքը։ Նրանք հրահրել են քրդական խմբերին, գրգռել են հարձակվել Նախիջևանի վրա, իսկ վրացիներին աշխատում են պրովոկացիայի ենթարկել և հանել հայերի դեմ այն բանի համար, որ հայերը հանդգնել են ձեռք բարձրացնել ցարական սատրապների վրա[3]։

ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեն բացահայտեց թշնամական պրովոկացիան, վրացի աշխատավորներին ճիշտ կողմնորոշեց և հեռու պահեց ցարական գործակալների հրահրած ազգամիջյան ընդհարումներից։

Վ. Ի. Լենինի առաջ քաշած կոչերի ոգով հանդես եկավ Մաքսիմ Գորկին և գրեց հատուկ դրքույկ՝ «Կովկասյան իրադարձությունների մասին»[4]։ Գորկու բրոշյուրն սկսվում էր «Ի՞նչ եմ մտածում ես Կովկասյան իրադարձությունների մասին» հարցով և նրան տրված պատասխանով։ «Լինելով Կովկասում,— գրել է Գորկին,— ամենուրեք ես տեսել եմ թե ինչպես կողք կողքի, համերաշխ և խաղաղ աշխատում էին հայը, վրացին, թաթարը, ինչպես նրանք նրեխաների նման ուրախ և պարզ կատակում էին, երգում և զվարճանում»։ Գորկին ցավով նշում է, որ այդ եղբայրակից բա-

---

[1] Տես «Кавказский рабочий листок», № 9. 1905.

[2] Տե՛ս «Պրոլետարի» թերթը, № 5, 13 հունիսի 1905 թ.։

[3] Տե՛ս նույն տեղում։

[4] Տե՛ս М. Горький, О Кавказских событиях, Женева, 1905.

բեկամները բաժանվել են իրարից, նրանց մեջ անտագոնիզմ է բորբոքվել, անարգում է այն չարագործներին, որոնք անպատիժ կերպով անասնական բացահայտությամբ և ցինիզմով ամեն ինչ արել են, որ «սպանեն ժողովրդի ստեղծագործական ոգին»[1]։

Մաքսիմ Գորկին կոչով դիմում է Կովկասի ժողովուրդներին՝ «Մեր բոլորիս թշնամին մեկն է. և բոլոր նրանք, ում միտքը պայծառ է, ում կամքը չի ենթարկվում ստրկացման, պետք է միավորվեն մեկ ընտանիքի մեջ այն չար ու անմիտ ուժի դեմ պայքարելու համար, որը հավասարապես ճնշում է մեզ բոլորիս։ Բոլորիս թշնամին մեկ է»[2]։

Վ. Ի. Լենինի աշակերտներն Անդրկովկասում անդուլ աշխատանք էին կատարում առաջնորդի դիրեկտիվները կատարելու համար։ Ս. Շահումյանը, Մ. Ցխակայան, Ա. Ջափարիձեն, Կամոն, Մ. Ազիզբեկովը, Ս. Սպանդարյանը և ուրիշներ ղեկավարվելով լենինյան դրույթներով, անդուլ կերպով աշխատում էին աղգամիջյան հարաբերությունները բարելավելու և տարբեր ազգերի պրոլետարներին համախմբելու միասնական ռևոլյուցիոն ջոկատների մեջ։

Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության համար ակտիվ մարտնչողներից մեկը՝ Ա. Ստեպանին Վ. Ի. Լենինին ուղարկած մի նամակում հաշիվ է տվել Բաքվի բանվորների ինտերնացիոնալ համախմբման գծով տարվող աշխատանքի մասին, նշելով, որ բանվորները պահանջում են իրենց շրջանից «վտարել ազգային խտրականությունները» և հաղորդում է, որ բանվորների մեջ «հեռուորներդ հանդես են գալիս տեղական բոլոր լեզուներով»[3]։

Ադրբեջանական աշխատավորներին ապակողմնորոշող պանիսլամիստների և ցարական այլ գործակալների դեմ հանդես գալով, Մ. Ազիզբեկովը 1905 թ. իր ելույթներից մեկում ասում էր. «Դուք աշխարհի կեղծ արարիչներդ, դուք պատասխան կտաք չքավորության արյան համար։ Ձեզ մի ձևացրեք ժողովրդականներ։ Նակաշիձեի հետ միասին դուք նախապատրաստում էիք կոտորածը, որանով իսկ դուք Անդրկովկասի աշխատավոր մասսաներին շեղում էիք Ռուսաստանի բանվորների ընդհանուր պայքարից, բայց մի մոռանաք, որ վրեժի օրը առջևումն է»։ Այդ ոգով էին ստ-

---

1 Նույն տեղում, էջ 7։

2 Նույն տեղում, էջ 12։

3 Տե՛ս «Пролетарская революция», № 5 (40), 1925, стр. 35.

գորված ռուս, հայ, վրացի, ադրբեջանցի լենինյանների ելույթները։

Վ. Ի. Լենինը ստացել էր Անդրկովկասի տարբեր շրջաններից ուղարկած նամակներ, աշխատավորների համերաշխության մասին։ «Մենք՝ վրացիներս, ռուսներս, հայերս, թաթարներս, եղբայրներ ենք,— ասված է մի նամակում,— մենք չենք ընդհարվի, թող կառավարությունը զուր տեղը չճգնի... մենք միանում ենք մեր ռուս եղբայրներին»[1]։ Այդպիսի նամակներ, հոդվածներ, զեկուցագրեր շատ էին գնում Անդրկովկասից Վ. Ի. Լենինին, Կենտրոնական օրգանի խմբագրությանը, Կենտրոնական Կոմիտեին։

Վ. Ի. Լենինի կոչերը պրոլետարիատի դասակարգային համերաշխության մասին հազարավոր օրինակներով բազմացվում էին Անդրկովկասի ժողովուրդների լեզուներով և տարածվում երկրամասում։ Աշխատավորներն ավելի ու ավելի էին համոզվում դասակարգային համերաշխության անհրաժեշտության մեջ, աճում էր ատելությունը դեպի ազգային թշնամանք բորբոքողները։

Վ. Ի. Լենինը նորից ու նորից առաջ էր քաշում ցարական իշխանության «բաժանիր և իշխիր» քաղաքականությանը՝ պրոլետարիատի զինված պայքարով պատասխանելու խնդիրը։ Լենինյան «Պրոլետարի» թերթը նշում էր, որ «Կովկասի դեպքերը վիթխարի նշանակություն ունեն ռուսական ռևոլյուցիայի համար», որ Կովկասի դեպքերը լավ դաս հանդիսացան մասսաների համար, մոբիլիզացրին ռևոլյուցիոն ուժերը։ «Այժմ արդեն հայերի զգալի մասը զինված է և եռանդուն կերպով ետ է մղում հարձակվողներին։ Ջարդերը վերածվում են քաղաքացիական .պատերազմի»[2]։

Սակայն լենինյան «Պրոլետարի» թերթը վերլուծելով այդ պատերազմի տակտիկան, նկատում է, որ «ռևոլյուցիոն տարրերի կողմից պատերազմն առայժմս պաշտպանողական է», սակայն «ռևոլյուցիոն պայքարի դիալեկտիկան անխուսափելիորեն պաշտպանությունից կբերի հարձակման... նախաձեռնող գործողությունների, զինված ապստամբության»[3]։ Այստեղ բերված է Մարքսի և Լենինի հայտնի թեզը. «պաշտպանությունը դա ամեն մի զինված ապստամբության մահն է»։ Այնուհետև, հայ և Կովկասի այլազգի աշխատավորներին կոչ է արվում ստիպել թշնամուն, որ նա նահանջի, դրա համար գործել այնպես, ինչպես ասում էր ռևո-

---

[1] Տե՛ս «Вперед» թերթը, 1905, № 12։

[2] «Пролетарии» от 20 сентября 1905 г.

[3] Նույն տեղում։

լյուցիայի մեծ վարպետ Դանտոնը՝ «համարձակություն, համարձակություն և նորից համարձակություն»։

Լենինյան Կենտրոնական օրգանը Կովկասի դեպքերը, հայ ժողովրդի դեմ կազմակերպված ոստիկանական դավերի հետևանքները վերլուծելով, աշխատավորների առաջ դնում է ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի երեք լոզունգը—«զինված ապստամբություն, ռևոլյուցիոն բանակ, ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարություն»։

Ցարական կառավարությունը մոբիլիզացրեց հակառևոլյուցիոն սև ուժերին և դիմեց պրովոկացիաների հայերի կոտորածներ կազմակերպելու, հայ-ադրբեջանական աշխատավորների դասակարգային միասնությունը ջլատելու համար։ «Կովկասում հակառևոլյուցիան և ռևոլյուցիան բախվեցին զինված պայքարում»[1], ահա այդպես գնահատեց Լենինյան «Պրոլետարի»-ն Կովկասում ազգամիջյան ընդհարումների շուրջը կատարվող իրադարձությունները։

«Բաքվի ջարդի հետևանքները,— գրել է Լենինը,— տասնապատկեց բոլոր խավերի ռևոլյուցիոն տրամադրությունները ընդդեմ ցարիզմի»[2]։ «Կառավարությունը մտածում էր ժողովրդին վախեցնել արյան տեսքով և փողոցամարտերի բազմաթիվ զոհերով», իրականում ժողովուրդը դասեր առավ և նոր ուժով սկսեց պայքար հանուն ռևոլյուցիայի հաղթանակի։

Անդրկովկասի ռևոլյուցիոն աշխատավորությունը, հայ աշխատավորները ցարիզմի դավադիր քաղաքականությունից զայրացած, ավելի ակտիվորեն ծավալեցին պայքարը ցարիզմի դեմ։ Հայ ժողովրդի նորանոր-լավագույն զավակները համալրեցին ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի շարքերը։ Ցարիզմը փորձեց ահաբեկել հայ ժողովրդին, բայց ժողովուրդն ավելի ըմբոստացավ նրա դեմ։

4. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԿՈՓՎԱԾ ՀԱՅ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՆՈՐ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսական առաջին ռևոլյուցիան թեև պարտվեց, բայց մեծ դաս տվեց ցարիզմի լծի տակ հեծող ռուս ժողովրդին և կախմանմեջ գտնվող ճնշված ազգերին։ Աշխատավորների աղատագրման

---

[1] «Пролетарии» от 20 сентября 1905 г.

[2] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 8, էջ 248։

համար պայքարը շարունակվեց փոխելով մեթոդները, տակտիկան։

Ռեակցիայի շրջանում, ռևոլյուցիոն շարժման նոր վերելքի և իմպերիալիստական պատերազմի տարիներին ցարական ժանդարմերիան կատաղի մոլեգնությամբ հետապնդում էր ազատագրական պայքարի մարտիկներին։ Միապետական կարգերի դեմ պայքարող հազարավոր մարտիկներ նետվեցին բանտերը, ենթարկվեցին խոշտանգումների։ Վ. Ի. Լենինը ստիպված, նորից հեռացավ Ռուսաստանից և մինչև 1917 թ. մարտի վերջն ապրում էր արտասահմանում տարագրության մեջ, այնտեղից ուղղություն տալով ցարիզմի դեմ մղվող ռևոլյուցիոն պայքարին։

Ռեակցիայի շրջանում ռևոլյուցիոն-ազատագրական շարժումների մասնակիցներից շատերը չդիմացան ցարական ժանդարմական ճնշմանը, վհատվեցին, կորցրին հեռանկարը։ Միայն ժողովրդի ազատագրման իդեալին մինչև վերջ նվիրված մարտիկները հավատարիմ մնացին Վ. Ի. Լենինին, համախմբվեցին լենինյանների գվարդիայի մեջ և շարունակեցին պայքարը։ Այդ պայքարում էլ իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ։

Խոշոր է Վ. Ի. Լենինի դերը հայ ռևոլյուցիոն մարտիկների այդ սերնդի համախմբման ու կոփման գործում։ Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ հայ աշխատավոր մասսաների շահերը կարող են բավարարություն ստանալ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ռևոլյուցիոն պայքարի հաղթանակի հետևանքով։ Ուստի «Կովկասյան սոցիալ-դեմոկրատները պետք է պարտավորվեն չխախտել յուրաքանչյուր քաղաքի միասնական ինտերնացիոնալ կազմակերպության սկզբունքը, ոչ մի դեպքում, ոչ քաղաքական, ոչ պրոֆեսիոնալ կազմակերպության մեջ չանցնելով բանվորների բաժանմանն ըստ ազգությունների»[1]։

Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Վրաստանի, Ադրբեջանի արդյունաբերական կենտրոններում, քաղաքներում և գյուղերում ապրող հայ ռևոլյուցիոն գործիչները, ռուսների, ուկրաինացիների, վրացիների, ադրբեջանցիների և ուրիշների հետ միավորվում և աշխատում էին ՌՍԴԲՊ-ի տեղական կազմակերպությունների մեջ, որոնք կառուցված էին լենինյան սկզբունքների վրա։ Վ. Ի. Լենինը մատնանշում էր որպես օրինակ սոցիալ-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 660։

դեմոկրատ-բանվորների ինտերնացիոնալ միասնության սկզբունքը, «մի սկզբունք, որ այնքան փայլուն կերպով ստուգված է Կովկասում՝ սկսած 1898 թվականից»[1]։ Վ. Ի. Լենինը կոչ էր անում «Ռուսաստանի բոլոր ազգությունների բանվորներին», «ամենավճռական հակահարված տալ ռեակցիայի մարմնացող նացիոնալիզմին»[2], «ս. դ. բանվորներին տեղերում ամենասերտ կերպով համախմբվելու ու միաձուլվելու ՌՍԴԲՊ-ի միասնական կազմակերպությունների մեջ», իրոք կենսագործել «միասնությունը ներքևից, ինչպես այդ վաղուց ի վեր տեղի է ունենում Կովկասում»[3]։

Հայ սոցիալ-դեմոկրատ լենինյանները հատկապես մեծ ակտիվություն էին հանդես բերում Կովկասում, Պետերբուրգում, Մոսկվայում, Կիևում, Դոնի Ռոստովում և այլ վայրերում։ Հայ լենինյանները համառորեն գործում էին տարագրության մեջ, արտասահմանյան երկրներում։ Հայ վտարանդիներից շատերն անմիջական կապեր ունեին Վ. Ի. Լենինի հետ և աշխատում էին նրա ղեկավարությամբ, կատարում նրա հանձնարարականները։

Անցնելով ռևոլյուցիոն պայքարի լենինյան դպրոցը, հայ լենինյանները մասնակցելով ցարիզմի դեմ մղվող մարտերին, պայքարում էին բոլոր ճնշված ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ազատագրման համար։ Այդ պայքարը չուներ և չէր կարող ունենալ ազգային շրջանակներ. գլխավորը դասակարգային մոտեցումն էր։ Հայ ժողովրդի թե՛ ազգային և թե՛ սոցիալական ազատագրության շահը պահանջում էր, որ հայ ժողովրդի զավակները հանդես գային ռևոլյուցիոն պայքարի ինտերնացիոնալ ջոկատներում։ Ահա թե ինչու Վ. Ի. Լենինի հայ աշակերտների և հետևորդների ձևավորման ու դաստիարակության հարցերը, ռևոլյուցիայի հաղթանակի համար մղված պայքարին նրանց ունեցած մասնակցության հարցերը ամբողջովին վերաբերում են նաև հայ ժողովրդի պատմությանը, կազմում այդ պատմության նվիրական էջերը։ Բերենք մի քանի դրվագներ այդ պայքարից։

* * *

Ստոլիպինյան ռեակցիան Կովկասում առաջին հարվածը հասցրեց Բաքվի լենինյաններին։ 1907 թ. մայիսի 5-ին ժանդարմական բանդան ներխուժում է Բաքվի բոլշևիկյան կոմիտեի ընդ-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 655։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 589։

[3] Նույն տեղում, էջ 590։

հատակյա բնակարանը, ձերբակալում Սլավա Կասպարովին, Մուսաբեկ Հաջի Կասումովին, Սերգեյ Ալելուևին, Ավել Ենուկիձեին, Սահակ Տեր-Գաբրիելյանին, Սիմոն Ժղենտիին, Բորիս Լեգրանին, Նիկոլայ Սոլովյովին, կին ռևոլյուցիոն գործիչներ Ելենա Բեգզադյանին, Ալեքսանդրա Խեչումյանին, Օլգա Ենշմենին և ուրիշների[1]։ Բաքվից հետո ժանդարմերիան հարձակումներ գործեց Թբիլիսիի, Երևանի, Քութայիսիի և մյուս քաղաքների բոլշևիկ-լենինյանների դեմ։

Ռևոլյուցիոն-ազատագրական պայքարի մարտիկներն ամենուրեք շարունակում են պայքարը։ Դեռ ավելին, լենինյանների շարքերն են մտնում ինչպես ռուս, վրացի, ադրբեջանցի, այնպես էլ հայ շատ բանվորներ, գյուղացիներ, ուսանողներ։ 1906 թվականին և հետագայում, ռեակցիայի տարիներին, Բաքվում լենինյան պարտիայի շարքերը ներհոսեցին բազմաթիվ բանվորներ և աշխատավոր այլ խավերի ներկայացուցիչներ։ Դրանցից էին Գրիգոր Իսահակյանը, Միքայել Ծատուրի Մանուչարյանը, Սրմբատ Արտեմի Մարգարյանը, Բոգդան Համբարձումի Ավշյանը, Իսահակ Իվանի Դովլաթյանը, Եղիա Գրիգորի Բաղդասարյանը, Անդրեաս Վարդազարի Ապրիյանը, Թեադոս Կոնստանտինի Միրզաբեկյանը, Դարսեան Արամի Վարդանյանը, Արշակ Զիլֆուղարի Աբգարյանը, Գրիգորի Խոսրովիշ Սարկիսովը, Ալեքսանդր Սիմոնի Բաղդասարովը, Հայկազ Սերգեյի Մեսրոպովը, Երեմիա Սայադի Բակունցը (պարտանդամ 1913 թ.) և ուրիշներ։

Անդուլ կերպով աշխատում էին Շուշի քաղաքի ռևոլյուցիոն մարտիկները։ Շուշու բոլշևիկների ղեկավարներից էր Լյուդվիգ Կնունյանցը (1876—1951), այնուհետև նա եղել է հայ-ադրբեջաններն «Կոչ-դևեթ» և հայերեն «Բանվորի ձայն» բոլշևիկյան թերթերի խմբագրությունների անդամ։ Լյուդվիգն աշխատում էր Մ. Ազիզբեկովի, Ս. Կասյանի, Ա. Էֆենդիևի, Ս. Սուլթանյանի և ուրիշ բոլշևիկների հետ, հանդես էր գալիս «Մյոմա» և «Կորյավի» ծածկանուններով, կատարելով Բաքվի կոմիտեի պատասխանատու առաջադրանքները[2]։ Կնունյանցների մյուս եղբայրը՝ Տիգրանը (1881—1956) նույնպես ակտիվ մասնակցություն է ունեցել ցարիզմի դեմ մղվող ռևոլյուցիոն մարտերին։

---

[1] См. «Арест актива бакинских большевиков», 5 мая, 1907. Баку, 1927, стр. 8.

[2] Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 8, թ. 42։

Շուշու բոլշևիկյան կազմակերպության ակտիվ գործիչներից էր նաև Սարգիս (Սամո) Համբարձումյանը, որը պարտիայի շարքերն էր անցել դեռևս 1903 թվականից։ Նա մինչև իր կյանքի վերջը հավատարմորեն ծառայեց լենինյան գրոշին։ Շուշիում առաջին ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատական դասերն առան՝ Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը, Հայկ Գաբրիելի Գյուլիմխյանը, Հակոբ Գարեգինի Հովհաննիսյանը և ուրիշներ։

Գանձակ քաղաքի բանվորների և աշխատավորների ծոցից ելած ռևոլյուցիոն գործիչները ևս քիչ չէին։ Այնտեղ ռևոլյուցիոն միտքը թափանցել էր պրոլետարների և աշխատավոր մյուս շերտերի գիտակից մասի շրջանը դեռևս ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին։ Գանձակում գործում էր ՌՍԴԲՊ տեղական կազմակերպություն, որի մեջ աշխատում էին ռուս, հայ, ադրբեջանցի սոցիալ-դեմոկրատներ։ Գանձակի բոլշևիկյան կազմակերպության միջոցով դեռևս ռուսական առաջին ռևոլյուցիայի օրերից գործում էին Պավել Վերդյանը, Գեորգի Սահակյանը, Գուրգեն Ստեփանյանը և ուրիշներ։ Գանձակի բոլշևիկյան կազմակերպության մեջ ակտիվ ղեկավար դեր էին կատարում Վահան Հովսեփյանը, Մռավյան եղբայրները՝ Ասքանազը և Արարատը, որոնք լինում էին նաև Գանձակում, Թիֆլիսում, Բաքվում, Երևանում։ 1912 թվականին ՌՍԴԲՊ շարքերն է ընդունվում կրտսեր եղբայրը՝ Վաղինակ Արտեմի Մռավյանը։

Հայ ժողովրդի անվեհեր զավակների մի հիանալի ջոկատ աճեց և կոփվեց Թիֆլիսի ու Վրաստանի բանվորական մյուս կենտրոններում։ Նրանք վրացի եղբայրների հետ միասնաբար, պայքար էին մղում ցարիզմի դեմ։ Դրանց մեջ էին Հովսեփ Գերասիմի Լազյանը (ծնված 1887 թ. Ախալցխա քաղաքում, բանվորի ընտանիքում), որը 1907 թ. մտել է տեղի բոլշևիկյան կազմակերպության մեջ և աշխատանք ծավալել բանվորների ու գինվորների շրջանում։ Ռեակցիայի տարիներին պարտիայի մեջ մտան նաև Հարություն Հովակիմի Սոլովյանը, Ալեքսանդր Գրիգորի Ղամբարյանը, Ալեքսանդր Արտեմի Շանսուվարյանը, Գարսևան Արամի Վարշամյանը, Արտեմ Գրիգորի Ակոպովը, Շավարշ Իվանի Գարագաշը, Ներսես Իվանի Ներսիսյանը և ուրիշներ։ 1912 թ. Թբիլիսիում ՌՍԴԲՊ-ի շարքերը մտան Ներսիսյան դպրոցի աշակերտներ Շավարշ Սմիրխանյանը, Գառնիկ Ղազարյանը և ուրիշներ, որոնք հաստատուն բռնեցին բոլշևիկ-լենինյանների ուղին։

Անդրկովկասի աշխատավորների ազատագրական պայքարի

մասին բոլշևիկները սիստեմատիկ զեկուցագրեր էին ուղարկում Վ. Ի. Լենինին, գործում նրա խորհուրդներով։ Կոնսպիրատիվ հանձնարարությունների կատարումը տրվում էր ամենից հավատարիմ և նվիրված կոմունիստներին։ Թբիլիսիի կազմակերպության մեջ գործող այդպիսի ռևոլյուցիոն գործիչներից էր Արշակ Նազարի Աթաբեկյանը (Աթաբեկովը), որը սովորել է Թբիլիսիում, այնուհետև Տարտուի համալսարանում ու Պետերբուրգում և կրկին վերադարձել Կովկաս, 1904 թ. մտել ՌՍԴԲՊ մեջ[1]։ Ռևոլյուցիոն ընդհատակյա գործունեության ընթացքում Աթաբեկյանը հաճախ հանդիպումներ է ունենում Շահումյանի, Էլիավայի և ուրիշ բոլշևիկների հետ, կատարում նրանց հանձնարարությունները, մասնավորապես, գրականություն տարածելու գծով։ Որոշ ժամանակ Արշակ Աթաբեկյանն ուղարկվում է Երևան և աշխատում Երևանի բոլշևիկների շարքերում[2]. Աթաբեկյանը Շահումյանին համարում էր իր ուսուցիչը և հաճույքով էր կատարում նրա հանձնարարությունները։

1907 թվականի աշնանը Ստ. Շահումյանը կազմում է Կովկասի քաղաքական դրության և ռևոլյուցիոն պայքարի մասին հաշվետվություն՝ Վ. Ի. Լենինին ուղարկելու համար։ Ստ. Շահումյանն իր մոտ է կանչում Արշակ Աթաբեկյանին և նրան հանձնարարում մեկնել Պետերբուրգ, այնտեղից Ֆինլանդիա պարտիական փաստաթուղթը Լենինին հասցնելու համար։ Շահումյանը հանձնում է Պետերբուրգում ներկայանալու կոնսպիրատիվ հասցե (Բասեյնայա փող. № 10) Անդրյուշա Բեբուրիշվիլուն, որի միջոցով կապ էր պահպանվում ՌՍԴԲՊ Կենտկոմի և Վ. Ի. Լենինի հետ։ Աթաբեկյանը գրել է, թե «Շահումյանի հանձնարարությունը՝ Կովկասի բոլշևիկյան կոմիտեների գործունեության մասին հաշվետվությունը մեր պարտիայի Կենտկոմի, ավելի ճիշտ ընկ. ընկ. Լենինի և Բոգդանովի համար... իմ կողմից կատարվեց արագ և ճշտությամբ»[3]։

Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարի և բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության մասին Վ. Ի. Լենինին զեկուցելու համար 1907 թ. վերջերին Թբիլիսիից Ֆինլանդիա մեկնեցին Ռուբեն Պավելի Քաբանյանը և Սուրեն Սայանդար-

---

1 ՄԼԻ Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 93, ց. 1, գ. 98, թ. 2—3։
2 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 91, թ. 10 և 12։
3 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 91, թ. 8։

յանը[1]։ Պատվիրակությունը Ֆինլանդիա էր մեկնել պրոֆմիությունների հարցի շուրջը հրավիրված խորհրդակցությանը մասնակցելու համար։ Ժամանելով Ֆինլանդիա, Քաթանյանը և Սպանդարյանը Վ. Ի. Լենինին զեկուցում են Անդրկովկասում պրոֆմիությունների գծով տարվող աշխատանքների մասին։ Խորհրդակցության աշխատանքներն ընթացել են Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ։ Խորհրդակցությունը բանաձև է ընդունում պրոֆմիություններում կատարվող աշխատանքի մասին, մեջ հետ ունեցած զրույցում, ասել է Ռ. Քաթանյանը։ Այնուհետև նա հայտնում է, որ Կրուպսկայան խորհրդակցությունից հետո Լենինի կազմած այդ բանաձևը հանձնում է Քաթանյանին, որը բերում է Կովկաս։ Թբիլիսիում Առաքել Օքոևի բնակարանում հրավիրվում է ընդհատակյա ժողով, որտեղ լսվում է Քաթանյանի զեկուցումը Ֆինլանդիայում Լենինին այցելելու և պրոֆմիությունների հարցի շուրջը տեղի ունեցած խորհրդակցության որոշումների մասին։ Խորհրդակցությանը մասնակցել են Ե. Ստասովան, Գ. Սագարաշվիլին, Վ. Նոնեիշվիլին և ուրիշներ։

Իրավաբանությամբ զբաղվելու հետ միաժամանակ Ռ. Պ. Քաթանյանը շարունակում է պարտիական գործունեությունը։ Նա բոլշևիկների գրական բյուրոյի անդամ էր, Ջափարիձեի, Շահումյանի, Սպանդարյանի, Ստասովայի և ուրիշների հետ մասնակցում էր Անդրկովկասի բոլշևիկների կազմակերպական-պրոպագանդիստական աշխատանքներին։ Ռեակցիայի տարիներին Քաթանյանն այցելում է Երևան, Էջմիածին, տեղական սոցիալ-դեմոկրատների հետ ունեցած հանդիպումների ժամանակ նրանց պատմում Վ. Ի. Լենինի մասին, տարածում պարտիական ընդհատակյա գրականություն։

Քաթանյանը հետագայում պարտիական պատասխանատու առաջադրանքներ կատարեց Հոկտեմբերյան ռևոլյուցիայի մարտերում։

* * *

Հայ ժողովրդի զավակներից շատերը որպես ռևոլյուցիոն-ազատագրական պայքարի մարտիկներ կռվեցին ռուսական միապետության վարչական և բանտորական խոշոր կենտրոններում՝

1 Ս. Սպանդարյանի մասին եղած գրական աղբյուրներում չի խոսվում նրա 1907 թ. Լենինի մոտ գնալու և նրա հետ ունեցած հանդիպման մասին։ Սակայն Ռ. Պ. Քաթանյանը հաստատում է, որ ինքը նրա հետ միասին գնացել է Ֆինլանդիա, ականատես է եղել Լենինի և Սպանդարյանի այդ հանդիպմանը։

Պետերբուրգի, Մոսկվայի, Կիևի, Խարկովի և այլ քաղաքների պրոլետարների շարքերում։

Պատմական բախտի բերումով հարյուր հազարավոր հայեր բանադրվելի հետևանքով հեռացել էին Հայաստանից և ապաստան գտել ռուս ժողովրդի հյուրընկալ ընտանիքում։ Երկար ժամանակների ընթացքում այդ ճանապարհով առաջացել են Ռուսաստանի հայկական բնակավայրերը և հայ գաղութները։ Այնտեղ հայ աշխատավորությունը մերձեցել է ռուս աշխատավորության հետ, հաղորդակից եղել ռուս պրոլետարիատի և ռևոլյուցիոն դյուղացիության կյանքին ու պայքարին։

Մասնակցելով Ռուսաստանի կենտրոններում ցարիզմի դեմ մղվող պայքարին, հայ աշխատավորության ներկայացուցիչները ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների և այլ ժողովուրդների ներկայացուցիչների հետ գիտակցում էին, որ Ռուսաստանի ճընշված ժողովուրդների ազատագրության բախտը հնարավոր է որոշել միայն ռևոլյուցիոն պայքարի հաղթանակի ճանապարհով։

Ռևոլյուցիոն պայքարի վետերանների առաջին խոշոր դպրոցը հանդիսացել է Պետերբուրգը — Պետրոգրադը։ Դեռևս 1905 թ. ռևոլյուցիայի շրջանում Պետերբուրգում ազատագրական պայքարի մեջ մտան հայ ժողովրդի շատ զավակներ։

Պետերբուրգում Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ ռևոլյուցիոն գործունեություն ծավալած Բ. Կնունյանցի, Ի. Լալայանցի, Ա. Զուրաբյանի և ուրիշների մասին խոսվեց նախորդ ենթագլխում։

Վ. Ի. Լենինի աշակերտների և մերձավոր ընկերների շրջանում դաստիարակվեց նաև հայ ռևոլյուցիոներ Պյոտր Ստեփանի Արարատյանը (Արարատովը). ծնվել է Թիֆլիսում, սովորել Պետերբուրգում։ Այնտեղ նա ծանոթանում է ուսանողական ս. դ. կազմակերպությունների ղեկավար Ելենա Դմիտրիևնա Ստասովայի, այնուհետև Էսսենի, Էլիավայի և ուրիշների հետ։ Ելենա Դմիտրիևնա Ստասովան կապեր ուներ Վ. Ի. Լենինի հետ, նրանից ստանում էր «Իսկրա» թերթը և գրականություն, կազմակերպում նրանց ուսումնասիրումը ուսանողների կողմից,— գրել է Արարատյանը։ Այնուհետև նա ընդգծում է, որ Ստասովային «ես համարձակորեն կարող եմ համարել իմ ղեկավարը, դլխավորապես նրան եմ պարտական, որ ես դարձա մարքսիստ»[1]։

Ե. Ստասովան գրել է. «ընկ. Պյոտր Ստեփանի Արարատովին

---

1 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, դ. 73, թ. 7։

ճանաչում եմ Պետերբուրգում համատեղ աշխատանքից, երբ ես ՊԿ քարտուղարն էի և միաժամանակ վարում էի ամբողջ տեխնիկան...»։ «Ես մշտապես կապեր եմ ունեցել ընկ. Արարատովի հետ և կարող եմ համարձակորեն երաշխավորել նրան որպես նվիրված և կայուն պարտիականի»[1]։

Պետրոգրադի բոլշևիկյան ընդհատակի ակտիվ մասնակից Հակոբ Քրիստափորի Դավթյանը ծնվել է Երևանի նահանգի Ագուլիս գյուղում։ Պետերբուրգ փոխադրվելով, ռուսական առաջին ռևոլյուցիայի օրերին նա մասնակցում է ուսանողական շարժումներին, 1905 թ. մտնում բոլշևիկյան պարտիայի մեջ։ Դավթյանը մասնակցում էր ՌՍԴԲՊ ՊԿ-ին կից գինվորական կազմակերպության աշխատանքին, տարածում էր «Գոլոս կազարմի» թերթը, որի էջերում պրոպագանդվում էին Լենինյան լոզունգները[2]։

Պետերբուրգի բոլշևիկների շարքում ռևոլյուցիոն դաստիարակություն ստացան շատ հայ ուսանողներ։ Առանձնապես կարևոր է Պետերբուրգի համալսարանում սովորող մի խումբ հայ և ուրիշ ազգերի երիտասարդ մարքսիստների օրինակը։

Ռեակցիայի տարիներին և բանվորական շարժման նոր վերելքի ժամանակ Պետերբուրգի համալսարանում սովորում էին մի քանի տասնյակ հայեր, որոնց մեջ կային զանազան պարտիաներին պատկանող մարդիկ։ ՌՍԴԲՊ Պետերբուրգի կոմիտեն հատուկ աշխատանք էր կատարում ուսանողության մեջ, երիտասարդությանն ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի շուրջը համախմբելու համար։

Պետերբուրգում իր ռևոլյուցիոն կոփվածքն ստացած գործիչներից է՝ Արտաշես Բալասանի Կարինյանը, որը ծնվել է 1886 թ. Բաքու քաղաքում, սովորել Բաքվի գիմնազիայում, այնուհետև, 1906—1910 թթ.՝ Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում։ 1907 թ. Ա. Կարինյանը ընդունվում է ՌՍԴԲՊ շարքերը. նա կարդում է Վ. Ի. Լենինի հոդվածներն ու գրքերը, լսում առաջնորդի գործունեության մասին։ Հետագայում Ա. Կարինյանը աշխատակցում է Լենինյան «Պրավդա» թերթին։ Առանձնապես կարևոր են Կարինյանի գրաքննադատական հոդվածները լիկվիդատորական ընկերատիկայի դեմ, Մ. Գորկու «հերետիքների» մասին, պրոլետարական գրականության մասին։ Հետագա-

---

1 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 73, թ. 7։

2 Նույն տեղում, գ. 556, թ. 6։

յում Ա. Կարինյանը Ստ. Շահումյանի հանձնարարությամբ գրել է «Ռևոլյուցիան և օրինականությունը» հոդվածը, որը ներկայացվել է Վ. Ի. Լենինին, արժանացել հավանության և տպվել «Պրավդա»-ում՝ 1917 թվականին։

Պետերբուրգի համալսարանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության աչքի ընկնող անդամներից էին Սարգիս Լուկյանի Սրապիոնյանը (պարտիական ծածկանունը՝ Լուկաշին), Սարգիս Հայկի Բաղդասյանը, Դանել (Դանուշ) Ալեքսանդրի Շանվերդյանը և ուրիշներ։

Պետերբուրգի համալսարանում և ուրիշ բարձրագույն դպրոցներում սովորելու մեկնած հայ երիտասարդներից շատերը նույնպես ներգրավվեցին ռևոլյուցիոն շարժման մեջ թե՛ բոլշևիկ-լենինյանների շարքում և թե՛ ՌՍԴԲՊ այլ ֆրակցիաների մեջ։ Դրանցից կարելի է նշել Տիգրան Տեր-Ղևոնդյանին, Գիգո Մելիք-Բաղդասարյանին, Հովհաննես (Օնիկ) Դուրգարյանին, Մելիք-Շահնազարյան եղբայրներին, Արմենակ Մկրտչի Կարագյոզյանին և ուրիշներին։ Պետերբուրգում գործող ակտիվ բոլշևիկներից էր նաև Մելիք Հովսեփյանը, մի ցայտուն հռետոր և պրոպագանդիստ, որը դեռևս 1890-ական թվականներից մասնակցել էր «Պետերբուրգի բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միությանը»։

Պետերբուրգի հայ ռևոլյուցիոն գործիչների մասին այս հակիրճ խոսքը կվերջացնենք մի խումբ երիտասարդների Վ. Ի. Լենինի հետ ունեցած զրույցի համառոտ շարադրանքով։

Ինչպես բոլոր սոցիալ-դեմոկրատ-բոլշևիկները, այնպես էլ Պետերբուրգի հայ մարքսիստները 1907 թվականի վերջերին արդեն տեղյակ էին պարտիայի շարքերում առաջ եկած տատանումներին, մտածում էին իրենց հետագա անելիքների մասին, ռևոլյուցիայի և ժողովրդի բախտի մասին։

Պետերբուրգի համալսարանի կովկասցի մի խումբ ուսանողներ դիմում են ՌՍԴԲՊ Պետերբուրգի կոմիտեին, խնդրելով կազմակերպել նրանց հանդիպումը Վ. Ի. Լենինի հետ, որն այդ ժամանակ ապրում էր Ֆինլանդիայի Տերիոկի քաղաքում։ Երիտասարդ սոցիալ-դեմոկրատների այդ խմբի մեջ մտնում էին Սարգիս Սրապիոնյանը (Լուկաշինը), Արտաշես Կարինյանը, Տիգրան Տեր-Ղևոնդյանը, Գիգո Մելիք-Բաղդասարյանը, Դանուշ Շանվերդյանը. Շալվա Էլիավան, Սերգեյ Քաֆթարաձեն։ Նրանց միանում են ուսանողներ ռուս Կոբլենկոն, ուկրաինացի Սլինկոն և ուրիշներ։ «Մենք, տակավին երիտասարդ, հեղափոխական ռոմանտիկներ.

երազում էինք տեսնել պրոլետարիատի աննկուն ղեկավարին և լսել նրա կենդանի խոսքը»,— գրել է Ա. Կարինյանը։

ՌՍԴԲՊ Պետերբուրգի կոմիտեն բանակցում է Վ. Ի. Լենինի հետ և ստանալով համաձայնություն կովկասցի երիտասարդ սոցիալ-դեմոկրատների հետ հանդիպում ունենալու մասին, նրանց տալիս է կոնսպիրատիվ «ազդանշանը» («պարոլ») և խումբ-խումբ ուղարկում Ֆինլանդիա։ Ժամանելով կայարան, Կարինյանը, Լուկաշինը, Մելիք-Բաղդասարյանը, Տեր-Ղևոնդյանը և մյուսները նկատում են «ազդանշանի» համաձայն իրենց դիմավորող անծանոթ մարդուն, որը ցույց է տալիս, թե ուր պետք է գնալ։

Ահա թե ինչ է գրել այդ մասին շատ տարիներ առաջ Ա. Կարինյանը.

«Հասնում ենք Տերիոկի կեսօրին, և ապա կայարանից ոտքով ուղիղ գնում ենք դեպի ինչ-որ մի անշուք շենք։ Դա մի փայտաշեն տուն էր, որտեղ գտնվում էր տեղական ակումբը։ Սենյակներից մեկը, որ ծառայում էր որպես դահլիճ, կահավորված էր փայտե հասարակ նստարաններով։

Մեզանից առաջ հասած խումբն արդեն հավաքված էր։ Այնտեղ՝ հենց խմբի մեջտեղում կանգնած էր Լենինը։ Առաջին տպավորությունը չէր համապատասխանում այն մտապատկերին, որ մեզնից յուրաքանչյուրը կազմել էր նրա մասին։ Մեր առաջին կանգնած էր պարզ հագնված, կեպկան գլխին՝ միջահասակ մի մարդ, որ խոսում էր այնքան մտերմական, ընկերական տոնով, որ կարծես ուզում էր ձուլվել ունկնդիրների հետ»[1]։ Այնուհետև Կարինյանը գրի է առնում այն, ինչ շատ լավ է տպավորվել իր հիշողության մեջ, թե ինչպես Վ. Ի. Լենինը «պարզ առանց որևէ պոզայի, սկսեց իր զեկուցումը և հենց սկզբից լարեց մեր ուշադրությունը և մինչև վերջը պահեց մեզ սպասողական, լարված դրության մեջ։ Դա ավելի շուտ զրույց էր, քան զեկուցում։ Մեզ թվում էր, թե Լենինը դեռևս իր զեկույցի ներածական մասն է ասում, տալիս է նրա նախաբանը։ Սակայն այդ նախաբանի մեջ հենց նա արդեն հիմնավորում, ընդգծում էր զեկուցման հիմնական միտքը... այստեղից մեկնելով Լենինն անցավ արդեն դասակարգերի, դասակարգային պայքարի, բանվորական շարժման վերլուծման, հեղափոխության զրոհի անխուսափելիության...»։

---

[1] Տե՛ս «Լենինի զեկույցը կովկասցի ուսանողների համար» Ա. Կարինյանի հուշերը Լենինի մասին, գրված է 1934 թվականին։

Ա. Կարինյանը պատմում է Լենինի հռետորական արվեստի մասին, նրա մեթոդի, ունկնդիրներին գերելու մասին։

Վ. Ի. Լենինի զեկուցումը լիովին համակում է կովկասցի երիտասարդ մարքսիստներին։ Նրանք կլանվում են Լենինի տրամաբանությամբ։ «Մոտ երեք ժամ խոսեց Լենինը, կամ ավելի ճիշտ զրուցում էր, որովհետև նա շարունակ հարցեր էր տալիս և ինքն էր պատասխանում, պատասխաններ, որոնք հիմնված էին փաստերի, թվերի, արտադրողական ուժերի դիալեկտիկական զարգացման տրամաբանության վրա,— գրել է Կարինյանը։— Մենք լսում էինք առանց հոգնելու, լսում և համոզվում էինք, չէինք կարող չհամոզվել, որովհետև ամեն ինչ մաթեմատիկորեն ճիշտ էր և հստակ, ինչպես տաղանդավոր վարպետի ներդաշնակ կառուցվածքը։

Այո, ռևոլյուցիան անխուսափելի է։ Նա ջախջախված չէ, այլ պարտված է ժամանակավորապես, նա աճում է, ամրանում է ավելի ուժեղ ալիքի վերածվելու համար...»։

Հանդիպումը վերջանում է։ Կովկասցի մարքսիստները բաժանվում են առաջնորդից։ Ֆին բանվորները շրջապատում են Իլյիչին և տանում նրան, իսկ կովկասցի մարքսիստներին պատվիրում են հեռանալ մաս-մաս, աննկատելիորեն, որը և կատարվում է ճշտությամբ։

Վ. Ի. Լենինի հետ ունեցած հանդիպումից հետո Սարգիս Լուկաշինի, Ա. Կարինյանի, Շ. Էլիավայի, Ս. Քաֆթարաձեի, Նիկոլայ Կոլենկոյի և մյուսների գործունեության մեջ ավելի հստակ և ուժեղ է զրսևորվում նրանց հավատարմությունն ու նվիրվածությունը լենինյան թեորիայի ու տակտիկայի սկզբունքներին, նրանց պայքարն այդ սկզբունքները կենսագործելու համար։

Բնորոշ մեկ փաստ կհիշատակենք։ 1911 թվականի նոյեմբերին լույս տեսավ «Նոր խոսք» սոցիալ-դեմոկրատական ամսագրի № 1—2-ը, որում զետեղված հոդվածների մեջ էր նաև Ա. Կարինյանի մի հոդվածը։ Այնտեղ արդեն Ա. Կարինյանը մեջբերում է կատարում Վ. Ի. Լենինից՝ ընդդեմ գյուղական համայնքն իդեալականացնող գյուղացիական իդեոլոգների և պրոպագանդում է լենինյան դաղափարները[1]։

Վ. Ի. Լենինի հետ ունեցած հանդիպումն անջնջելի հետք թողեց երիտասարդ մարքսիստների վրա և կարևոր նշանակություն ունեցավ նրանց՝ որպես հավատարիմ լենինյանների հետագա ամբողջ գործունեության համար։

1 Տե՛ս «Նոր խոսք» ժուռնալը, 1911, գիրք № 1—2, էջ 3։

* * *

Հայ ժողովրդի ռևոլյուցիոն զավակներից շատերը մարտական-քաղաքական մկրտություն են ստացել Մոսկվայի ռևոլյուցիոն պրոլետարիատի շարքերում։

Ամենից առաջ Մոսկվայի համալսարանի սանների մասին[1]։

Ուսանողության վրա ազդեցություն ձեռք բերելու համար պայքարում էին բոլշևիկների պարտիան, կադետները, էսեռները, մենշևիկները, բուրժուական նացիոնալիստները։

Մոսկվայի համալսարան մտած հայ երիտասարդության լավագույն ներկայացուցիչները քաղաքական այդ սուր պայքարի մեջ կողմնորոշվեցին դեպի ՌՍԴԲՊ-ն, մտան նրա շարքերը, դարձան Վ. Ի. Լենինի աշակերտներ ու հետևորդներ։

Մոսկվայի համալսարանում սովորելու տարիներին ռևոլյուցիոն մկրտություն ստացավ Ս. Սպանդարյանը, որի մասին ասվեց վերևում։ Այդտեղ կոփվեցին Ալեքսանդր Ֆեոդորի Մյասնիկյանը, Սուրեն Գրիգորի Հովսեփյանը, Գրիգորի Նիկոլայի Կորգանովը, Հովհաննես Հակոբի Ալիբեկյանը, Իվան Սիմոնի Ֆրանգուլյանը, Գևորգ Ալեքսանդրի Աբարբեկյանը, Հայկ Ալեքսանդրի Հովսեփյանը և ուրիշներ։

Համալսարանից բացի շատ հայ ուսանողներ մասնակցում էին ուրիշ բարձրագույն դպրոցներում գործող ընդհատակյա բոլշևիկյան կազմակերպություններին։ Մի խումբ հայ երիտասարդներ մարքսիստական-լենինյան դաստիարակությամբ զինվում են Առևտրական ինստիտուտում սովորելիս։ Դրանցից մեկը Ստեփան Կարապետի Ալավերդյանն էր, որը Մոսկվա էր մեկնել Անդրկովկասից, այնտեղ դարձել ակտիվ բոլշևիկ-լենինյան։ Նա 1914 թ. գրել է Մոսկվայում բնակարանային հարցի շուրջը աշխատությունը, որի 143 էջերում շարադրել է Էնգելսի և Լենինի դրույթները բնակարանային հարցի մասին։ Այնտեղ բոլշևիկյան կոփվածք ստացավ Հարությունի Գրիգորի Հակոբյանը, Հովսեփ Համբարձումի

---

1 Պրոֆ. Ա. Մ. Արշարունին հետազոտել է Մոսկվայի համալսարանի կատարած դերը հայ կուլտուրայի գործիչների պատրաստման գործում և գրել «Մոսկվայի համալսարանը և հայ ինտելիգենցիան» աշխատությունը, որի մեջ ցույց է տալիս, թե ինչպիսի գործիչներ են անցել այդ համալսարանի բովով՝ սկսած XIX դարի սկզբներից։ Դեռևս 1905 թ. Մոսկվայի համալսարանում սովորող 5489 ուսանողից 194 հոգի հայեր էին. 1907—1916 թվականներին այդ համալսարանն ավարտել են 432 հայ երիտասարդներ։

Պողոսյանը, Հովհաննես Մինասի Վարդանյանը, Գուրգեն Սերգեյի Հայկունին և ուրիշներ։

Խարկովի և Կիևի համալսարաններում սովորող երիտասարդ սոցիալ-դեմոկրատների մեջ ևս կային հայ մարքսիստներ, լենինյաններ։ Դրանցից էր Միխայել Իվանի Կարապետյանը, որը այնտեղ գնացել էր Անդրկովկասից, ռեակցիայի տարիներին մտել ՌՍԴԲՊ մեջ, աքսորվել էր Սիբիր և փախել աքսորից, լծվել ռևոլյուցիոն գործունեության Ուկրաինայի քաղաքներում։ Կիևում մարտական մկրտություն ստացավ ուսանող Դրաստամատ Տեր-Սիմոնյանը։ Խարկովի երիտասարդ մարքսիստ-լենինյանների մեջ աչքի ընկնող տեղ էր գրավում Գաբրիել (Գարի) Գրիգորյանը։

Եվ այսպես, կարելի է բերել նաև շատ ուրիշների օրինակը, սակայն բավարարվենք դրանցով։ Լենինյան գվարդիայի մարտիկներից ամեն մեկի կյանքն ու պայքարը, նրանց սխրագործությունները լի են հերոսական դրվագներով։ Սույն աշխատության շրջանակները թույլ չեն տալիս հանգամանորեն կանգ առնել պատմության այդ փառավոր էջերից յուրաքանչյուրի վրա։ Բերված փաստերը վառ կերպով ցույց են տալիս, որ հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ համալրեցին լենինյան գվարդիայի շարքերը և հաստատուն կանգնեցին մարտական դիրքերում։

Լենինյան գվարդիայի պայքարը մղվում էր ցարիզմի լծի տակ գտնված բոլոր ժողովուրդների ազատագրման համար։ Դա միաժամանակ մի պայքար էր հանուն հայ ժողովրդի ազատագրման, հանուն նրա պատմական բախտի մեջ ռևոլյուցիոն շրջադարձի, մի այնպիսի շրջադարձի, որը մատնացույց էր անում Վ. Ի. Լենինը։

5. ՀԱՅ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԳՈՐԾԻՉՆԵՐՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ, ՏԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վ. Ի. Լենինի երկրորդ տարագրության ժամանակ, որը տևեց 1907 թ. վերջերից մինչև 1917 թ. գարունը հայ գործիչներից շատերը գնում էին նրա մոտ, մասնակցում ռուս վտարանդիների կյանքին ու պայքարին, անձամբ կապեր ունենին Վ. Ի. Լենինի հետ։

Հայտնի է, որ այդ ժամանակամիջոցում ցարական և սուլթանական իշխանությունների կողմից հետապնդվող շատ քաղաքական գործիչներ, այդ թվում և հայեր, ապրում էին Եվրոպայի երկրներում որպես վտարանդիներ։ Բացի այդ, Ռուսաստանից և

Կովկասից Եվրոպական համալսարաններն ուսման էին գնացել շատ հայ երիտասարդներ։ Ինչպես վտարանդի, այնպես էլ ուսանող հայերը Եվրոպայում ակտիվ կերպով մասնակցում էին ռևոլյուցիոն գործունեության, կապեր ունեին միջազգային սոցիալիստական շարժման ղեկավար գործիչների հետ, որը մի հարուստ և հետաքրքիր ուսումնասիրության նյութ է։

Այստեղ համառոտակի նշենք հայ ռևոլյուցիոն գործիչներից մի քանի ընկերների և Վ. Ի. Լենինի հանդիպումների ու նրանց կապերի մասին, որոնք աշխատավորների ազատագրական պայքարի կարևոր էջեր են։

* * *

Հայ նշանավոր լենինյաններից մեկը, որին բախտ է վիճակվել արժանանալ Վ. Ի. Լենինի սիրուն, առաջադրանքներ ու հանձնարարություններ ստանալ պարտիայի առաջնորդից ցարիզմի դեմ մղվող պայքարին մասնակցելու գործում եղել է Սիմոն Տեր-Պետրոսյանը (Կամոն)։

Ո՞վ էր Կամոն, մի գաղափարական կոմունիստ-լենինյա՞ն, թե տրամադրություններով ու սենսացիոն արկածներով ոգևորվող մի խելահեղ մարդ։

Դժբախտաբար հարցի երկրորդ կողմն ավելի է շեշտված Կամոյի մասին եղած հոդվածների, հիշողությունների, գեղարվեստական գրականության մի շարք գործերի, ինչպես նաև կինոյում և բեմադրությունների մեջ[1]։

Օրինակ, Մկրտիչ Կորյունի «Կամո» վեպի[2], Վիլ Օրջոնիկիձեի «Тифлисский рассвет, рассказы о Камо»[3] մասսայական գրքե-

---

[1] Այդ չի վերաբերում Մաքսիմ Գորկու «Կամո» ուրվագծին, որում հանճարեղ գեղագետը հակիրճ ձևակերպումներով տվել է Կամոյի, որպես ռևոլյուցիոն գործչի համառոտ բնութագիրը և բացահայտել նրա նկարագրի գլխավոր գծերը։ Այդ չի վերաբերում նաև ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանի «Կամո» հուշագրությանը (զետեղված է «Հին բոլշևիկների հիշողություններ» գրքում, 1957 թվականին), որտեղ տրված է Կամոյի որպես լենինյան մարտիկի հակիրճ, խորաթափանց բնութագրությունը։ Բացառություն են կազմում նաև երկու մենագրություններ Կամոյի մասին։ Առաջինը Լևոն Ստեփանի Շահումյանի գիրքն է, որը լույս տեսավ ռուսերեն՝ Մոսկվայում, 1959 թ., այնուհետև թարգմանվեց և հրատարակվեց ուրիշ ժողովուրդների լեզուներով։ Երկրորդը՝ Ա. Բ. Հարությունյանի «Կամո» գիրքն է, որը հրատարակել է Երևանի Պետական համալսարանը հայերեն և ռուսերեն, 1957 թվականին և վերահրատարակել 1958 թվականին։

[2] Հայպետհրատ, 1958։

[3] Изд. «Молодая гвардия», М., 1959.

րի և մի քանի այլ հեղինակների ակնարկների կամ հուշերի մեջ Կամոյի գաղափարական ձևավորման մասին ոչ ճիշտ պատկերացում է տրվել։ Նույնիսկ այն աստիճան, որ Սիմոն Տեր-Պետրոսյանը դարձավ ռևոլյուցիոներ, որովհետև ծնվել էր Կոբայենց (Ի. Ստալինի) տնից քիչ այն կողմը գտնվող տանը... և բազմաթիվ այլ հերիաթների ու զավեշտական բացատրությունների շարանները։

Ինչ խոսք, որ Կամոն աճել և ձևավորվել է որոշակի միջավայրում, որտեղ նրա հետ շփում ունեցող գործիչները, այդ թվում և Սոսոն-Կոբան կարող էր լինել։ Բայց օբյեկտիվ իրողությունը այլ է։ Սիմոն Տեր-Պետրոսյանը մեծացել է հայ հոգևորականի ընտանիքում։ Սկզբում նա խոսում էր հայերեն և վրացերեն։ Պապը, որ հայ հոգևորական էր, խորհուրդ է տվել թոռնիկին ուղարկել Մոսկվա հայկական Լազարյան ճեմարանում սովորելու, սակայն մայրը չի ցանկացել բաց թողնել միակ տղային և նրան տալիս են հայկական ուսումնարանում սովորելու[1]։ Կամոյի մայրը՝ Մարո Տեր-Պետրոսյանը մի բարի հայ կին էր, որը շատ էր սիրում իր միակ տղային, աշխատում էր նրա և շորս աղջիկների մեջ զարդացնել լավագույն գծեր։

Դպրոցում Սիմոնը ուսուցիչների պատմածներից սովորում էր պատմություն, աշխարհագրություն, գրականություն, լեզուներ, ծանոթանում էր երկրի ու ժողովուրդների կյանքին, շփվում էր մեծ մասամբ հայերի և վրացիների հետ։

Կամոն գրել է, որ ինքը «ժամանակին տարված է եղել «Վաթան» գնացող հայ հայդուկներով»[2]։ 1890-ական թվականներն էին։ Հայկական հուզումների մասին լուրերը տարածվում էին ամբողջ Կովկասում։ Հայ պարտիզանների մասին գրական երկերը և ժողովրդական պատմությունները զրաղեցնում էին ոչ միայն հասակավորների, այլև հատկապես երիտասարդության միտքը։ Հայ հայդուկներն «ինձ համար եղել են ռևոլյուցիոն հերոսների տիպարներ»[3],— գրել է Կամոն։ Այնուհետև նա ասել է. «լուրեր էին գալիս տաճկական սուլթանի սև համհարզների բռնությունների մասին։ Խոսում էի լուրեր բուլղարական և մակեդոնական խիզախ հայդուկների մասին։ Ինձ էլ թվում էր, որ տաճկական սուլթանի դեմ կռվելու նպատակով սահմանն անցնող հայ հայդուկները

---

1 Տե՛ս Լ. Շանումյան, Կամո, էջ 7։

2 Տե՛ս Ա. Կարինյան, Կամո (նշված ժողովածուն), էջ 134։

3 Նույն տեղում։

բուլղարական և մակեդոնական հայդուկների նման գործիչներ են։ Դուր էր գալիս դրանց խիզախությունը, անձնազոհությունը, հերոսությունը։ Եղել է նույնիսկ մոմենտ, երբ ես էլ մտածել եմ անցնել սահմանը և միանալ այդ խորհրդավոր հայդուկներին՝ թուրքահայերին օգնելու համար...»։ Կամոն իրավացիորեն շեշտում է, թե «ինչո՞ւ ծածկել։ Ինձ շրջապատող ծանոթ հայերից շատերն էին... այդպես մտածում»։

Սակայն Կամոյի կյանքն այլ ընթացք ստացավ։ Մոր մահից հետո նա փոխադրվում է Թիֆլիս, ապրում մորաքրոջ՝ Էլիզավետա Բախշինյանցի մոտ, պատրաստվում է ընդունվելու Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը։ Կամոն ծանոթանում է Թիֆլիսի բանվորների կյանքին, տեսնում է հայ, ռուս, վրացի բանվորների միատեսակ ծանր կյանքի պայմանները և շփվում առաջավոր բանվորների հետ։

1901 թ. մայիսի 1-ին Թիֆլիսի բանվորների նշանավոր ցույցի ժամանակ 19-ամյա Կամոն հանդիսացել է դրոշակակիր Առաքել Օքոյանի (Օքուշվիլու) օգնական[1]։ Ցույցի ժամանակ, երբ արյունոտ ընդհարում տեղի ունեցավ կազակների հետ, Կամոն առաջին դասն ստացավ։ Նրա մեջ ավելի բորբոքվեց ատելությունը դևպի ցարական կարգերը։ Շուտով Կամոն «Իսկրա» թերթում կարդում է ցույցի մասին հաղորդագրությունները և Վ. Ի. Լենինի հոդվածները։ Նա տոգորվում է լենինյան գաղափարներով, ամբողջովին կլանվում ռևոլյուցիոն գործունեությամբ։ 1901 թվականին Կամոն ընդունվում է ՌՍԴԲՊ շարքերը[2]։ Այդ ժամանակներից նա դարձավ պրոֆեսիոնալ պարտիական գործիչ։ Իր լրացրած անկետաներից մեկի «մասնագիտությունը» հարցին Կամոն պատասխանել է՝ «ռևոլյուցիոներ»։ Դիպուկ բնորոշում։

Կան նաև տարբեր կարծիքներ Կամո — ռևոլյուցիոների բնութագրման մասին։ Ինչպիսի՞ ռևոլյուցիոներ էր Կամոն։ «Անարխիստ ռևոլյուցիոներ»— այդպես է անվանել նրան Գևորգ Ղարաջյանը։ Իսկ Հակոբ Հակոբյանն ուղղակի գրել է, որ Կամոն «Կովկասյան Բլանկին» էր, «մեր տաք գլուխ Բլանկին», «անդուսպ Բլանկին»[3]։ Դժբախտաբար այդ վերաբերում է ինչպես գեղարվես-

---

1 Լ. Շահումյան, *Կամո*, էջ 12։
2 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, դ. 815, թ. 1։
3 Տե՛ս «Մարտակոչ» թերթը, 1923, № 118։

տական որոշ գործերի, այնպես էլ «Ճանաչում եմ անձամբ» կինոֆիլմին[1]։

Այդպիսի որակումները միայն խեղաթյուրում են Կամո-Լենինյանի կերպարը, սխալ են մեկնաբանում նրա գործունեության իմաստը։ Կամոն ամենից առաջ գաղափարական մարդ էր։ Նա ձևավորվեց որպես ռևոլյուցիոներ Թիֆլիսի պրոլետարիատի մղած մարտերում։

Նա հանդես եկավ որպես լենինյան գաղափարների պրոպագանդիստ, դարձավ «անլեգալ դրականության տաղանդավոր էքսպեդիտոր»[2]։ Նա Կովկասյան Միության կոմիտեի անդամների՝ Շահումյանի, Կնունյանցի, Զուրաբյանի, Ենուկիձեի, Ծուլուկիձեի և ուրիշների հետ մեծ ջանք է թափում բոլշևիկների տպագիր խոսքը լայնորեն տարածելու Անդրկովկասի ժողովուրդների մեջ։

1903 թվականից Կամոյի հետ անմիջական կապ հաստատեց ՌՍԴԲՊ Կենտկոմի գործակալ Ս. Դ. Պոստոյովսկին։ Կամոն, ինչպես պատմում է Ռ. Պ. Քաթանյանը, հաճախ լինում էր Կենտկոմի անդամ Պոստալովսկու մոտ, որը նրան հաղորդում էր Վ. Ի. Լենինի կողմից առաջադրված խնդիրների մասին։ Կամոն ղեկավարում էր ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեին կից մարտական խումբը։ Կամոն իրականացնում է առաջին էքսպրոպրիացիան, փող է ձեռք բերում պարտիայի համար։ Կամոն կազմակերպում է զենքի և պայթուցիկ նյութերի կուտակումը[3]։ Կամոն մարտական ջոկատի գլուխը էր կանգնած և կատարում էր պարտիական կոմիտեի առաջադրանքները՝ Թիֆլիսում կանխել հայ-թաթարական կոտորածը։ Բացի այդ, միտինգում Կամոն ճառ է ասում ընդդեմ կոտորածներ հրահրողների։

Կամոն վառվում էր Վ. Ի. Լենինին տեսնելու ցանկությամբ։ Այդ ցանկությունն իրականացավ 1906 թ. փետրվարի վերջերին և մարտի սկզբներին։ Կամոյին հանձնարարվեց Կովկասից մեկնել Պետերբուրգ, այնտեղից Ֆինլանդիա՝ Լենինի մոտ։ Կամոն պատրաստություններ էր տեսնում առաջնորդի մոտ գնալու։ Պարտիական կոմիտեի հանձնարարություններն իրենց հերթին, բայց անձամբ, Կամոն ինչո՞վ պետք է ներկայանա։ Նա որոշում է հետը

---

1 «Լենինյան ուղիով» ամսագրի 1957 թ. № 2-ում տպվել է Ե. Ն. Խալեյանի դրախոսական հոդվածը Կամոյի մասին վեպի վերաբերյալ։ Այդ հոդվածում ճիշտ կերպով նշվել է Կամոյի կերպարի ոչ ճիշտ մեկնաբանումը։

2 Տե՛ս Ա. Կարինյան, Կամո, էջ 135։

3 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 815, թ. 1։

տանել մեկ տկճոր, ընկույզի մուրաբա, խնամքով պահպանված թարմ ձմերուկ ու այլ մրգեր և դա փետրվարին։

Կամոն հասնում է Կուոկալա, «Վաղա» ամառանոցը, գնում է Վ. Ի. Լենինի մոտ։ Կամոն հանձնում է դրամը, ինչպես նաև ինֆորմացիա է տալիս Անդրկովկասում ՌՍԴԲՊ 4-րդ համագումարի նախապատրաստման առթիվ ծավալվող լայն աշխատանքի մասին։ Վլադիմիր Իլյիչը այդ օրերին մշակում էր համագումարի որոշման նախագծերը և Կովկասից բերված տեղեկությունները շատ տեղին էին[1]։ Այնուհետև, ինչպես գրում է Լ. Շահումյանը, «Վլադիմիր Իլյիչը երկար ծիծաղում է, երբ Կամոն տկճորից դատարկում է թանկագին խմիչքը։ Այնուհետև նա մանրամասն հարց ու փորձ է անում Անդրկովկասում պարտիզանական կռվի մասին»[2]։

Կամոյի այցելություններից մեկի մասին գրել է Ն. Կրուպսկայան, որ այդ հանդիպումը նշանակված է եղել մի ռեստորանում, որտեղ բազմաթիվ անծանոթներ էին հավաքվել։ Այնտեղ էին եղել Լենինը, Կրասինը, Կրուպսկայան և ուրիշներ։ Գալիս է Կամոն իր բեռով։ «Կովկասյան շքեղ զգեստով, նա անձեռոցիկի մեջ ինչ որ գնդաձև իր ուներ։ Բոլոր ճաշողները դադարեցին ուտել ու սկսեցին դիտել արտասովոր հաճախորդին։ «Ռումբ է բերել», երևի մտածեցին ոմանք, բայց այդ ռումբ չէր, այլ ձմերուկ։ Կամոն Իլյիչի և մեզ համար նվեր էր բերել ձմերուկ և ինչ որ շաքարած ընկույզներ։ «Մորաքույրս է ուղարկել»— ամաչկոտությամբ բացատրեց Կամոն»[3]։

Առաջին հանդիպումից իսկ Վ. Ի. Լենինի և Կամոյի միջև բռնկվում է մի սրտակից և անկաշկանդ բարեկամություն։ Իլյիչը սիրում է խոհեմ, համարձակ, խիզախ մարտիկին, Կամոն իր համեստությամբ, հնարամտությամբ, ռևոլյուցիոն անսահման նվիրվածությամբ ու խիզախությամբ շահում է Իլյիչի վստահությունը։ Նա Ֆինլանդիայում մնում է որոշ ժամանակ և «ջերմորեն կապված էր Իլյիչի հետ»,— ինչպես գրել է Կրուպսկայան։ Նա «Քնքուշ ընկեր էր», ապրելով Կուոկալայում, «լինում էր մեզ մոտ», շարունակում է Նադեժդա Կոնստանտինովնան, «մտերմացավ մորս հետ, պատմում էր նրան իր մորաքրոջ, իր քույրերի մասին»։ Կամոն Լենինի հանձնարարություններով մեկնում է տարբեր քաղաք-

---

1 Լ. Ս. Շահումյան, *Կամո*, էջ 45։

2 *Նույն տեղում*։

3 Н. К. Крупская, Воспоминания о Ленине, М., 1957, стр. 124.

ներ և Պետերբուրգ, նորից վերադառնում Կուոկալա։ «Կամոն հաճախ գնում էր Ֆինլանդիայից Պետեր,— գրել է Կրուպսկայան,— միշտ իր հետ զենք էր վերցնում և մայրս ամեն անգամ առանձին խնամքով ատրճանակներ էր կապում նրա մեջքին»[1]։

Վ. Ի. Լենինի հետ ունեցած զրույցները պարտիայի խնդիրների և ռևոլյուցիայի մասին մեծ դաս հանդիսացան խիզախ ռևոլյուցիոնների համար։

Կամոն նոր ուժով ու եռանդով նետվում է պայքարի մեջ, լինում Սկանդինավյան երկրներում, հետո Բեռլինում, մեկնում է Բալկաններ, զենք հայթայթում Կովկաս ուղարկելու համար։ Նրա կյանքը դառնում է անվերջ բորբոքված մի ռևոլյուցիոն քուրա և գերազանցում առասպելին, միշտ մնալով բոլշևիկյան գաղափարայնության առաջավոր դիրքերում։

«Ռեակցիա էր։ Դաժան ռեակցիա,— գրել է Կամոն։— Այդ ռեակցիան ուժեղանում էր ամենուրեք։ Ծանր էր պարտիայի կացությունը։ Դրամ չկար։ Սկսվել էին անկումային հոսանքներ։ Սկսվել էր որոշ դեմորալիզացիա նույնիսկ ռևոլյուցիոն շարքերում»։ Ի՞նչ անել և ինչպե՞ս։ Ոչ թե «բլանկիստը», «անարխիստը» կամ «տաքգլուխ արկածախնդիրը», այլ բարձր գաղափարական ռևոլյուցիոնները, հավատարիմ լենինյանը կարող էր այդպիսի դժվարին պահին խորհել համապարտիական մեծ նպատակների մասին։

Անհրաժեշտ էր ցնցել նիհիլիստներին,— գրել է նա։— Անհրաժեշտ էր դրսևորել ցարիզմի թուլությունը։ Անհրաժեշտ էր, վերջապես, հերոսական մի հարված ուղղել այդ ցարիզմին և ապացուցել նիհիլիստներին, որ նորից պիտի ամրանա ռևոլյուցիան և նորից պիտի կոփվեն ռևոլյուցիոն շարքերը։ Միաժամանակ այդ հարվածը պարտիային պիտի տար դրամական միջոցներ՝ ռևոլյուցիոն գրականության հրատարակության համար[2]։

Այդպես էր գնահատում Կամոն 1907 թ. հունիսի 13-ի իր կազմակերպած հռչակավոր էքսպրոպրիացիան։ Դա էր նրա գործելակերպի տեսական-գաղափարական ուղեցորդը, նրա հայեցակետը։

Կամոն ապրում էր մեծ կարիքի մեջ, միշտ կրելով զրկանքներ, բայց ցարական բանկից գրաված 250,000 ռուբլին նա լրիվ

---

[1] Նույն տեղում, էջ 124։

[2] «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք առաջին, էջ 137։

հանձնեց պարտիային, առանց մեկ կոպեկ ծախսելու անձնական նպատակի համար։

Թիֆլիսի Երևանյան հրապարակի այդ ակտը ցնցել էր ոչ միայն «նիրհողներին», այլև ցարական ոստիկանական արթուն ժամապահներին, խուճապ առաջ բերել նրանց շտաբներում։

Կամոն շտապ մեկնում է Կովկասից նախ Պետերբուրգ, հետո Ֆինլանդիա, դարձյալ Վ. Ի. Լենինի մոտ։ Վլադիմիր Իլյիչը ընդունում է Կամոյին և պահում իր բնակարանում, երկու ամիս։ Ոստիկանական հատուկ բաժնի մի հաղորդագրության մեջ ուղղակի ասված է, որ 1907 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Կամոն «ապրել է Լենինի (Ուլյանովի) մոտ Ֆինլանդիայում»[1]։ Դժբախտաբար Կամոյի երկու ամիս Վ. Ի. Լենինի մոտ ապրելու, նրանց զրույցների մասին գրավոր ոչ մի հետք չի մնացել։

1907 թ. սեպտեմբերին Կամոն Ֆինլանդիայից մեկնում է Բեռլին, հետո լինում Վիեննայում, Բելգրադում, Սոֆիայում, Ցյուրիխում, նորից վերադառնում Բեռլին, տեսնվում միջազգային սոցիալ-դեմոկրատիայի մի շարք գործիչների հետ։ Հասկանալի է, որ այդ կապերի ընթացքում նա անդրադառնում է Վ. Ի. Լենինից ստացած ցուցումներին ու հանձնարարություններին։ Կամոն «Դմիտրի Միրսկի» ծածկանունով աշխատում է Բեռլինում մինչև նոյեմբերի սկզբները։ 1907 թ. նոյեմբերի 9-ին ժանդարմական ծպտյալ լրտեսի մատնությամբ Կամոն ձերբակալվում է, նետվում բանտը և սկսվում է նրա տասսպելական տանջանքների շարանը։

Վ. Ի. Լենինը տեղեկանալով Կամոյին ձերբակալելու մասին, իսկույն դիմում է միջոցների։ Նրա հանձնարարականով Բեռլին են մեկնում պարտիայի նշանավոր գործիչներ Լ. Բ. Կրասինը, այնուհետև Մ. Ն. Լյադովը և Կարլ Լիբկնեխտի հետ քննում Կամոյին փրկելու հարցը։ Կամոյի պաշտպանությունը դրվում է միջազգային սոցիալ-դեմոկրատիայի սեղանին։

Վ. Ի. Լենինը և Կարլ Լիբկնեխտը միջոցներ էին որոնում նրա փախուստը կազմակերպելու համար, բայց կերմանական իշխանությունը Կամոյին հանձնում է ցարական ոստիկանությանը։ Նրան սպասում էր զինվորական դատարանի վճիռը՝ մահապատիժ։ Դա ավելի է անհանգստացնում Վ. Ի. Լենինին, Կամոյի բարեկամներին և ընկերներին։ Կամոյի քույրերը՝ Ջավահիրը, Արուսյակը, Սանդուխտը հեռագիր-հեռագրի նամից են ուղարկում ուր որ հնարավոր է, խնդրում փրկել նրա կյանքը։

---

[1] Մոսկվայի ԿՊՊԱ, Ֆ. Դ. Պ. 00, 1909, գ. 252, թ. 54։

Գերմանական դեմոկրատական մամուլը լայն կամպանիա է ծավալում ի պաշտպանություն Կամոյի։ Վ. Ի. Լենինի խնդրանքով հանդես են գալիս Ռոզա Լյուքսեմբուրգը և Կարլ Լիբկնեխտը, բողոքում են ռուսական իշխանությունների դեմ։ «Ֆորվերտսը», «Նեյե Ցրեյե Պրեսը», «Բեռլիներ տագեբլատը» և այլ թերթեր բազմաթիվ մերկացնող հոդվածներ են տպում։ «Ռուսական կամխաղանը և պրուսական ատիկանը» դրված է մի հոդվածի վերնագրում։ «Ռուսական ատրուբյունը՝ գերմանացիների օգնությամբ» վերնագրված է մի այլ հոդված։ 1910 թ. հունիսի 2-ին Կարլ Լիբկնեխտը ելույթ ունեցավ պրուսական պարլամենտում, դիմակազերծ արեց ցարական լրտեսների և գերմանական ատիկանների կապերը, պաշտպանելով ռուս ռևոլյուցիոներներին, մասնավորապես վերլուծելով Կամոյի գործը։ Կամոյին փոխադրում են Թիֆլիս։

Թիֆլիսի Մետեխի բանտում այդ օրերին Կամոյի հետ փակված էին նաև շատ ուրիշ գործիչներ։ Հին բոլշևիկ Վասիլի Խաչատրյանն իր հուշագրություններում և կենսագրության մեջ հաղորդում է, թե ինչպես նա հանկարծ «մահվան միջանցքում» տեսել է շղթայակապ Կամոյին։ «Մենք փոխանակում ենք հայացքներով, իսկ Կամոն վեհորեն ասում է՝ «մի՛ վախենա, քաջ եղի՛ր»։ Այնուհետև Խաչատրյանն այդ մասին հաղորդում է բանտում գտնվող մյուս բոլշևիկներին, բոլորն ամենագաստացած են Կամոյի բախտով, նրան «մահ է սպասում»։ «Խորհում ենք փախուստի մասին»[1],— գրել է Խաչատրյանը։

Վասիլի Խաչատրյանը գրում է, թե այդ բանտի «մահվան միջանցքում» նստած էր նաև Սարգիս Կուկունյանը[2], Հայտնի հայդուկը, որը Տաճկաստան անցնելիս գոտեմարտի էր բռնվել ցարական սահմանապահ կազակների հետ, բանտարկվել, ուղարկվել աքսոր՝ Սախալին, հետո ազատվել, նորից բանտարկվել և փակվել Մետեխի «մահվան միջանցքում»։ Խաչատրյանը գրում է, թե նա Կուկունյանից ստանում է մորֆիով պատրաստած ծխախոտ, որով կարելի էր հյուրասիրել բանտի պահակին և թմրեցնել նրան։ Այնուհետև Խաչատրյանը վկայում է, թե նա Կուկունյանից ստացել է նաև «անգլիական բարակ սղոցներ» Կամոյին հանձնելու, նրա շղթաները և խցիկի լուսամուտի երկաթի ձողերը կտրատելու նպատակով[3]։ Ա. Կարինյանը փաստեր է բերել, որ

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 2044, թ. 7—8։

[2] Վ. Խաչատրյանի գրանցումները տե՛ս «Մարտակոչ» թերթը, 1923, № 118։

[3] Նույն տեղում։

բանտային վերակացու ժդանովը, որ համակրում էր բոլշևիկներին և օգնում նրանց, Կամոյի քույրերից, գլխավորապես Ջավահիրից, ստացել է 48 բարակ սղոց և հանձնել կալանավորին[1]։ Բանտապետն իմանում է Կուկունյանի մտադրությունների մասին։ Վ. Խաչատրյանը գրում է, որ Կուկունյանին «մահվան միջանցքից փոխադրեցին կարցեր, բանտի մեջ բանտ»։

Կամոն շարունակում է սիմուլյացիան. Նա Միքայելյանի հիվանդանոցումն է, բայց շղթայակապ։ 1911 թ. օգոստոսի 15-ին Կամոն փախչում է բանտից։ Նա խնդրում է Թիֆլիսից, մեկնում արտասահման։ Օգոստոսի վերջերին Կամոն Փարիզում էր՝ Վ. Ի. Լենինի մոտ։ Այդ մասին Ն. Կրուպսկայան գրել է, որ 1911 թվականին Փարիզ եկավ Կամոն «...նա եկել էր Փարիզ՝ Իլյիչի հետ խոսելու...»[2]։

Կամոն խոսում է Իլյիչի հետ։ «Կամոն խնդրեց ինձ, որ իր համար նուշ առնեմ,— պատմում է Նադեժդա Կոնստանտինովնան,— նստած Փարիզի մեր հյուրասենյակ-խոհանոցում, նա նուշ էր ուտում, ինչպես իր հայրենիքում և պատմում Բելգիայում կալանավորվելու մասին, պատմում սիմուլյացիայի տարիների մասին, երբ խելագար էր ձևացել... Իլյիչը լսում էր և խորապես խորհում այդ անձնվեր համարձակ մարդուն... որն ուներ ջերմ սիրտ, պատրաստ էր մեծամեծ քաջություն կատարելու»[3]։ Իր մասին պատմելուց հետո Կամոն հետաքրքրվում է պարտիայի գործերի վիճակով։ Կամոն դիմում է Լենինին իր հետագա անելիքների մասին։ Նա ներկայացնում է մի պլան, որը Կրուպսկայան անվանել է «ֆանտաստիկական»։ Սակայն «Իլյիչը չէր առարկում, աշխատում էր երկիր իջնցնել նրան»։

Վ. Ի. Լենինին ամենից առաջ զբաղեցնում է Կամոյի առողջության վիճակը։ Բանտերը հյուծել էին նրա օրգանիզմը։ Նա կարիք ուներ հանգստանալու։ Վ. Ի. Լենինն առաջարկում է Կամոյին մեկնել Բելգիա բուժվելու, որից հետո նորից Կովկաս վերադառնալ։ Ն. Կրուպսկայան պատմում է նաև մեկ ուրիշ սքրտաշարժ դեպքի մասին։ Բելգիա մեկնելուց առաջ Վ. Ի. Լենինը նայում է Կամոյի հագուստին, հարցնում է, թե «Ո՞ւմի արդյոք նա տաք վերարկու», որ եղած հագուստով, «տախտակամածի վրա

---

[1] Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողություններ», էջ 143։

[2] Ն. Կ. Կրուպսկայա, Հիշողություններ, Երևան, 1933, էջ 311։

[3] Նույն տեղում։

զբոսնելիս ցուրտ կլինի»։ «Ինքը Իլյիչը, երբ ճանապարհորդում էր ծովով, անդադար ման էր գալիս» նավի տախտակամածի վրա։ «Եվ երբ պարզվեց, որ Կամոն ուրիշ վերարկու չունի, Իլյիչը տվեց նրան իր փափուկ գորշ թիկնոցը, որը մայրն էր ընծայել նրան Ստոկհոլմում և որն առանձնապես դուր էր գալիս Իլյիչին։ Իլյիչի հետ ունեցած խոսակցությունը, նրա փայփայանքը մի քիչ հանգստացրին Կամոյին»[1]։

Արխիվային նյութերի մեջ տեղեկություններ կան, որ Կամոն Փարիզում Վ. Ի. Լենինի մոտ ապրել է մոտ երկու ամիս[2]։ Այնտեղ Կամոն հանդիպումներ է ունենում իր հայրենակից և հին ընկեր Սերգո Օրջոնիկիձեի հետ։

Վ. Ի. Լենինը Կամոյին նոր առաջադրանք է տալիս և նա վերադառնում է Անդրկովկաս։ Կամոն ճանապարհորդում էր Լենինի հետ ունեցած զրույցների տպավորության տակ։ Եվ երբ Սոֆիայում բուլգարական ոստիկանները Կամոյին ձերբակալում են՝ կասկածելով Թուրքական ռազմական լրտեսության մեջ, Կամոն հավատացնում է, թե ինքն ուսս սոցիալ-դեմոկրատ է, նրանից պահանջում են ասել տեղական սոցիալ-դեմոկրատի անուն։ «Ես սկզբում ուզում էի ասել Լենին»,— գրել է Կամոն, սակայն հետո ասել է Բլագոև, որը նշանավոր ռևոլյուցիոն գործիչ էր և բուլգարական պառլամենտի անդամ, որի հետ չէր կարելի հաշվի չնստել։ Իսկ երբ ոստիկանները Կամոյին տանում են Բլագոևի մոտ ստուգելու համար, առաջին իսկ հանդիպման պահին Կամոն նկատում է դեպի Բլագոևը, գրկում նրան և ականջին շշնջում, թե «եկել եմ Լենինի հանձնարարությամբ»[3]։

Կամոն ազատվում է ոստիկանների ճանկից, վերադառնում Կովկաս, տեղական սոցիալ-դեմոկրատներին հաղորդում կատարած աշխատանքի մասին, Լենինի հետ ունեցած զրույցների և առաջնորդի ցուցումների մասին։ Սակայն շուտով ոստիկանությունը գտնում է Կամոյի հետքերը։ Նորից բանտ, Մետեխի խցիկ, դատ, մահավճիռ, տաժանակրություն։

Կամոյի կյանքն մի անդադար պայքար էր ռոմանովների միապետական ռեժիմի դեմ։ Կամոն դեպի ցարիզմը ատելության մի կրակ էր, որը պատրաստ էր այրել այդ բռնակալական կարգերի հիմքերը։

---

1 Ն. Կ. Կրուպսկայա, *Հիշողություններ*, էջ 312։
2 Վրաստանի ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 23, գ. 011, թ. 20։
3 Լ. Ս. Շահումյան, *Կամո*, էջ 182։

...Կամոն ձերբակալվել է վեց անգամ, նրա մասին մանվան դատավճիռ է կայացվել չորս անգամ: Նա բուրքական սուլթանական բանտն էլ է ընկել, բայց մնացել է անընկճելի: Դա միայն խորթակես գաղափարական ռևոլյուցիոնները կարող էր անել: 17 տարի (1900—1917) Կամոն անդադրում կռվեց ցարիզմի դեմ: Նրան այդ կռվում առաջնորդում էին Լենինի օրինակը և լենինյան ծրագրերը:

Կամոն իրեն իրավունք էր վերապահում, օրինակ Բլագոևի հետ խոսելիս, հանդես գալ Լենինի անունից: Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Ռումինիայում և այլ երկրներում (Կամոն եղել է 19 երկրներում), նա գործում էր որպես Լենինի պատվիրակը, որպես համոզված ռևոլյուցիոներ, որը տեսնում էր պայքարի հեռանկարը, երազում էր տեսնել ցարիզմը խորտակված, ժողովուրդները, որոնց թվում և իր մայր—հայ ժողովուրդն ազատագրված: Հանուն այդ մեծ նպատակների Կամոն կատարեց իր հռչակավոր սխրագործությունները:

Գորկին նշել է, որ Կամոն դա այն ռևոլյուցիոներներից էր, որոնց համար ապագան դա ռեալ ներկան էր[1]:

Կամոյի ռևոլյուցիոն սխրագործությունների աղբյուրը ժողովրդն՝ առելությունն էր դեպի ցարական կարգերը, Կամոյի գաղափարական հագեցվածությունը լենինյան ռևոլյուցիոն աշխարհայացքով, ճնշված ժողովուրդների ազատագրության գործին նրա անձնվիրությունը:

Վ. Ի. Լենինը և պարտիան Կամոյին՝ Սիմոն Տեր-Պետրոսյանին, դաստիարակեցին որպես գաղափարական ռևոլյուցիոնների և նա գործեց ու ապրեց որպես այդպիսին:

1917 թ. մարտի 6-ին ցարի անկումից հետո Կամոն ազատվեց Խարկովի տաժանակրային բանտից: Նա ազատ, լիաթոք շնչեց, մի շրջագայություն կատարեց դեպի Կովկաս, հանդիպում ունեցավ Ստ. Շահումյանի հետ: Կամոյի մտքում դարձյալ Լենինն էր: Կամոն ուղևորվեց Պետրոգրադ Լենինի մոտ, պարզելու իր անելիքը: Ինքը զրկարաց ընդունում և փայփայում է Կամոյին: «Կամոն գտավ իր «տեղը», նորից սկսեց ցույց տալ հերոսության հրաշքներ»[2], որոնք նա կատարում էր ռևոլյուցիայի հաղթանակի և սովետական կարգերի հաստատման համար ծավալվող մարտերում:

---

[1] М. Горький, Соч., том 17, стр. 344.

[2] Ն. Կրուպսկայա, Հիշողություններ, էջ 312:

* * *

ՏԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ վ. Ի. Լենինի հետ անմիջական կապեր ունեցող և նրա ղեկավարությամբ գործող հայ ռևոլյուցիոն գործիչներից է նաև Վլադիսլավ Մինասի Կասպարյանցը (1884—1917)։ Նրա կյանքի և ռևոլյուցիոն գործունեության մասին լուրջ մենագրություն չի հրատարակվել։ Առանձին թռուցիկ տեղեկություններ կան զանազան հրատարակությունների ծանոթագրություններում։ Մինչև Կասպարովի և վ. Ի. Լենինի նամակագրությունը ներկայացնում է մի առանձին հետաքրքրություն։

Վլադիսլավ Կասպարյանցի (պարտիայում հայտնի է որպես Սլավա Կասպարով) քաղաքական հայացքները ձևավորվել են հայրենի Շուշի քաղաքում՝ Բ. Կնունյանցի հետ համատեղ ռևոլյուցիոն աշխատանքում, որ նրանք տանում էին Ղարաբաղի բնակչության մեջ։ Այնուհետև Սլավա Կասպարովը փոխադրվում է Բաքու, շարունակում ռևոլյուցիոն գործունեությունը. սովորում է Պետերբուրգի համալսարանում, ձերբակալվում և արտաքսվում է մայրաքաղաքից։ Սլավան վերադառնում է Անդրկովկաս։

«Բաքվի առաջավոր բանվորներից ո՞վ չէր ճանաչում Սլավային, անսովոր համեստ, անխոնջ աշխատող, պարզ այդ ինտելիգենտին։ Ո՞վ չէր լսել նրա զրավիչ, ոգևորող, խորապես դաղափարական, միաժամանակ պարզ և մատչելի ելույթները, զեկուցումները, դասախոսությունները, որոնցում նա պաշտպանում էր բոլշևիկյան պարտիայի ծրագրային պահանջները, ջախջախում մենշևիկներին, էսեռներին և ամեն դույնի նացիոնալիստներին»[1]։ Սլավան գտնվում էր Բաքվի ընդհատակյա նշանավոր գործիչների շարքում. նա լիովին նվիրվում է Լենինին, տոգորվում լենինյան թեորիայով ու տակտիկայով։ Սլավան 1911 թ. նորից ձերբակալվում է, նետվում Բայիլովի բանտը։ 1912 թ. Կասպարովն ազատվում է և հեռանում Բաքվից։ Այնուհետև պարտիական ակտիվ աշխատանքի է անցնում Դոնի Ռոստովում։ Այստեղ ևս նրա հետքերով գնում են ոստիկանական գործակալները։

Կասպարովը 1913 թ. սկզբներին մեկնում է արտասահման։ «1913 թվականին, պատերազմից առաջ, Կասպարովն ապրում էր Բեռլինում,— գրել է Ն. Կրուպսկայան։— Նրա մասին Իլյիչը գիտեր մեր բաքվեցիների—Ենուկիձեի, Շահումյանի և այլոց պատմածներից»[2]։ Կասպարովը ինտենսիվ նամակագրություն է վա-

---

[1] Տե՛ս «Կոմունիստ» թերթը, 1957, № 225, Գ. Հարությունյանի հոդվածը։

[2] Ն. Կրուպսկայա, Հիշողություններ, էջ 426։

ռում Վ. Ի. Լենինի հետ, դառնում նրա մերձավոր աշխատակիցներից մեկը։

Պորոնինոյից Վ. Ի. Լենինը 1913 թ. հունիսի 14-ին Կասպարովին գրել է. «Թանկագին ընկեր. բարի եղեք ինձ ուղարկել «Պրավդայի» այն համարը, որտեղ զետեղված է «Կասկածելի վրիպում» հոդվածը։ Ես մինչև այժմ չեմ տեսել։ Շատ կպարտավորեցնեք։ Ձեր Լենին»[1]։

Վ. Կասպարովը սիրով կատարում է Լենինի խնդիրը, ուղարկում «Պրավդա» թերթը, որի համար Լենինը շնորհակալություն է հայտնում։ Միաժամանակ Լենինը խնդրում է Կասպարովին հանձն առնել իրազեկ պահել իրեն «Ռուսաստանում ռևոլյուցիոն օրերի ընթացքի մասին։ Նստած ենք առանց լրագրերի։ Խնդրում եմ Ձեզ...»[2]։ Շուտով Կասպարովը Լենինին ուղարկում է նոր նյութեր։ Ամենից առաջ նա գրում է Բաքվում լույս տեսնող մենշևիկյան վրացատառ «Ծղարա» ժուռնալում տպված Ն. Ժորդանիայի հոդվածների մասին, որոնք նվիրված էին «Կուլտուր-ազգային ավտոնոմիայի լոզունգի» պաշտպանությանը։ Այնուհետև հաղորդում է Ս. Տ. Արկոմեդի (Գ. Ղարաջյանի) «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» գրքի առաջաբանի դեմ եղած առարկություններին մասին։ Այդ առաջաբանը գրել էր Պլեխանովը։

Վ. Ի. Լենինը մեծ շնորհակալություն է հայտնում Կասպարովին Ժորդանիայի մասին գրած տեղեկությունների համար և պահանջում այդ նյութերը թարգմանել վրացերենից իր համար, ինչպես նաև Ղարաջյանի գրքի պլեխանովյան առաջաբանի դեմ եղած առարկությունները։ Կասպարովը կատարում է Լենինի հանձնարարականը, միաժամանակ Լենինին ուղարկում հոդված ազգային հարցի մասին «Պրոսվեշչենիե» ժուռնալում տպելու համար։ Վ. Ի. Լենինն իսկույն արձագանքում է հոդվածին։ «Իմ կարծիքով թեման վերցված է լավ և մշակված է ճիշտ»[3],— գրել է Լենինը։ Միաժամանակ Վլադիմիր Իլյիչը, խստապահանջ և հոգատար խմբագիրը, նշում է, որ հոդվածը «գրական տեսակետից բավականաչափ հղկված չէ։ Զափազանց շատ կա—ինչպե՞ս այդ ասեմ—«ագիտացիա», որը չի սազում թեորիական հարցի վերաբերյալ գրած հոդվածին»։ Լենինը խորհուրդ է տալիս Կասպարովին «ինքներդ վերափոխեք» կամ «մենք կփորձենք»։

---

[1] *«Լենինյան ժողովածու», հատ. 13, էջ 218։*

[2] *Ն. Կ. Կրուպսկայա, Հիշողություններ, էջ 427։*

[3] *Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 36, էջ 280։*

Սլավա Կասպարովին ընդունելով որպես իր աշակերտի և կրտսեր ընկերոջ, Վ. Ի. Լենինը երբեմն հանդիմանում է նրան, դիտողություն անում թերությունների համար, սովորեցնում է լինել ճշտապահ, խելացի։ 1913 թ. օգոստոսի 21-ին Պորոնինոյից գրած նամակում Լենինը նշում է, որ Կասպարովը չի հաղորդել այն տեղեկությունները, ինչ պահանջվում էր. «Կարևոր հանձնարարությունը կատարելիս,— գրել է Լենինը Կասպարովին,— հարկավոր է լինել ճշտապահ, եթե ոչ, Դուք 100 անգամ մեղավոր կլինեք... Իսկույն ևեթ ուղղեցեք սխալը։ Ձեր Լենին»[1]։

Չորս օր հետո Վ. Ի. Լենինը նորից գրում է Կասպարովին, պահանջելով «անմիջապես ուղարկել» «Սևերնայա Պրավդա»-ի և «Նովայա բաբոչայա գազետա»-ի բոլոր համարները. «Ես ոչինչ չեմ տեսել» շեշտված գրում է Լենինը։ «Խնդրեցեք Ավելին (Ենուկիձեին) Պիտերից ամեն օր բանդերոլով ինձ ուղարկի» բուրժուական թերթերից։ Սեպտեմբերի 11-ին Լենինը կրկին գրում է Կասպարովին, հայտնում, որ պահանջած թերթերը այդպես էլ չի ստացել, որը «միայն դժբախտություն է», այնուհետև նորից հանձնարարում է «խնդրել Ավելին ուղարկել ինձ Պիտերից, ուղիղ ամեն օր։ Ծախսերը կծածկենք։ Ձեր Լենին»[2]։

Կասպարովը կատարելով Լենինի հանձնարարությունները, միաժամանակ աշխատում էր գերմանական գրադարաններում և արխիվներում, նյութեր էր հավաքում իր տեսական զբաղմունքների համար։ Այդ հարցով նա դիմել է Վ. Ի. Լենինին և ստացել հատուկ երաշխավորագիր-նամակ գերմանական ս. դ. պարտիայի արխիվում ռուսական ս. դ. պարտիային վերաբերվող նյութերի վրա աշխատելու համար[3]։

Համաշխարհային պատերազմի նախօրյակին Վ. Ի. Լենինը և Սլավա Կասպարովը ավելի մտերմացան։ Կրուպսկայան գրել է որ «Իլյիչը միանգամից բարդում է Կասպարովի վրա մի շարք գործեր»[4], իրեն հետաքրքրող նյութեր է պահանջում, «հավատացած լինելով, որ Կասպարովը ինքը կնկատի ամենակարևորը, ամենաէականը»։ 1914 թ. հունվարին Վ. Ի. Լենինը գրել է Կասպարովին Բեռլին գնալու և «իրենց տեսակցություն ունենալու ան-

---

[1] «Լենինյան ժողովածու», հատ. 13, էջ 222։
[2] Նույն տեղում, էջ 223։
[3] Նույն տեղում, էջ 225։
[4] Ն. Կրուպսկայա, Հիշողություններ, էջ 426։

հրաժեշտության մասին»[1]։ Կասպարովի ամբողջ գործունեությունը, նրա բախտը լիովին կապվում է Լենինի հետ։

«Մինչև այդ, Իլյիչը Կասպարովին նամակ գրելիս, սկսում էր «թանկագին ընկեր» խոսքերով,— գրել է Կրուպսկայան։ Սակայն անձնական հանդիպումից հետո Լենինը նրան դիմում էր «թանկագին բարեկամ» սիրալիր տոնով։

1914 թվականի հուլիսի կեսերին Վ. Ի. Լենինը զանազան աղբյուրներից տեղեկանում է Բուսաստանում, մասնավորապես Պետրոգրադում տեղի ունեցած ուսուցչուհու նյութերի մասին։ Այդ հարցերն ավելի խորն ուսումնասիրելու համար Վլադիմիր Իլյիչը դիմում է Կասպարովին, հայտնում, որ խիստ անհրաժեշտ է (և կենտրոնական օրգանի և այլ աշխատանքների համար) կազմել թերթերից կտրված հոդվածների կոմպլեկտ և «ուղարկել մեզ»։ Վ. Ի. Լենինը թվարկում է, թե որ թերթերից, ինչ կարգի նյութեր են հարկավոր իրեն, այնուհետև ընդգծում է, թե «Շատ կպարտավորեցնեք, եթե հավաքեք նաև բուրժուական թերթերից նյութեր Պետերի այժմյան բուռն իրադարձությունների մասին։ Շտապեցեք։ Սպասում եմ պատասխանի։ Ձեր Լենին»[2]։

Համաշխարհային պատերազմի բռնկումից հետո ռուսահպատակ սոցիալ-դեմոկրատների գործունեությունը Գերմանիայում ավելի դժվարացավ։ Կառավարությունն ամեն տեսակի կասկածներ էր հարուցում նրանց նկատմամբ։ Վ. Ի. Լենինի խորհրդով Սլավա Կասպարովը Բեռլինից փոխադրվեց Շվեյցարիա, Բեռն քաղաքը, որտեղ աշխատում էր Լենինը։ «Հանդիպումը բարեկամական էր,— պատմում է Ն. Կրուպսկայան,— Բեռնում տեսնվում էինք ամեն օր։ Շուտով Կասպարովը դարձավ մեր խմբի ամենամոտ ընկերներից մեկը»[3]։ Նա լինում էր Բեռնում, այցելում Ցյուրիխ, Ժնև, հանդիպումներ էր ունենում սոցիալ-դեմոկրատ վտարանդիների հետ, մասնակցում բոլշևիկների ժողովներին։

Վ. Կասպարովը բազմակողմանի գործունեություն է ծավալում Շվեյցարիայում, հանդիսանում է Վ. Ի. Լենինի մերձավորագույն օգնականներից մեկը, իրագործում է դաղտնի կապը պարտիայի արտասահմանյան կենտրոնի և Կովկասյան կազմակերպությունների միջև, մասնակցում է գրական աշխատանքներին և

---

1 Ն. Կրուպսկայա, Հիշողություններ, էջ 427։

2 «Լենինյան ժողովածու», հատ. 13, էջ 242։

3 Ն. Կրուպսկայա, Հիշողություններ, էջ 428։

մենշևիկ-լիկվիդատորների դեմ մղվող պայքարին, հանդես է գալիս պատերազմի հարցերում լենինյան տակտիկայի ու թեորիայի պաշտպանությամբ։ Վ. Ի. Լենինի աշակերտների վրա հատկապես մեծ պարտավորություններ դրվեցին ձախ սոցիալիստների Բեռնի կոնֆերենցիայի նախապատրաստման շրջանում, 1915 թվականի առաջին կեսերին։ Վ. Կասպարովը ակտիվորեն մասնակցում էր բոլշևիկների կողմից կոնֆերենցիայի նախապատրաստման գծով տարվող աշխատանքներին։

Բեռնի կոնֆերենցիայի նախօրյակին Վ. Ի. Լենինը գրեց իր «Սոցիալիզմը և պատերազմը» նշանավոր աշխատությունը, որը պետք է հասցվեր կոնֆերենցիային բոլշևիկների տեսակետն ավելի լայնորեն պրոպագանդելու համար։ Լենինը խնդիր է դնում այդ գիրքը հրատարակել նաև գերմաներեն[1]։

1915 թ. օգոստոսի վերջերն էին։ Բոլշևիկները պատրաստվում էին ավելի կազմակերպված հանդես գալ սեպտեմբերին Բեռնում կայանալիք սոցիալիստների կոնֆերենցիային։ Վ. Ի. Լենինը օգոստոսի 19-ին առանձին նամակ ուղարկեց Վ. Մ. Կասպարովին։ «Թանկագին Կասպարով։ 5/IX Բեռնում կլինի ձախերի կոնֆերենցիան։ Զավազանց կարևոր կլիներ, որ մեր բրոշյուրը գերմաներեն լիզվով լույս տեսներ մինչև այդ ժամանակը։ Արդյոք դուք չե՞ք կարող աջակցել դրան»։ Լենինը հանձնարարում է Կասպարովին հոգ տանել թարգմանությունն արագացնելու մասին, տպարանի հետ պայմանագիր կնքել և այլն, նշելով, որ «Գործը արտակարգ է, կարևոր. հարկավոր է շուտափույթ օգնություն... Շուտով պատասխան գրեցեք բացիկով։ Շատ և շատ ողջույններ։ Ձեր Լենին»[2]։

Վ. Ի. Լենինի հանձնարարությունը կատարվեց ճշտությամբ. «Սոցիալիզմը և պատերազմը» («ՌՍԴԲՊ վերաբերմունքը դեպի պատերազմը») գիրքը լույս տեսավ ռուսերեն և գերմաներեն, հետո նաև ֆրանսերեն, բաժանվեց սոցիալիստների կոնֆերենցիայի պատգամավորներին, որոնց մեջ էր նաև Կասպարովը։ Այդ կոնֆերենցիայում ստեղծվեց ՌՍԴԲՊ Արտասահմանյան կազմակերպությունների Կոմիտե Վ. Ի. Լենինի գլխավորությամբ։ Վ. Մ. Կասպարովն ընտրվեց ՌՍԴԲՊ Արտասահմանյան կազմակերպության կոմիտեի անդամ և ամենամոտ մասնակցություն ուներ համապարտիական ղեկավար գործերին։

---

[1] «Լենինյան ժողովածու», հատ. 14, էջ 177։

[2] Նույն տեղում, էջ 177—178։

Վ. Կասպարովը թեև վատառողջ էր և հյուծված, բայց չէր կտրվում պարտիական բուռն կյանքից։ Նա 1915 թ. վերջերին և-ռանդուն կերպով մասնակցում էր բոլշևիկյան ժուռնալ հիմնելու գծով տարվող աշխատանքներին։ 1916 թ. հունվարին Ն. Կրուպսկայան ընկերուհուն գրած նամակում հարցնում է, թե «Զգիտեմ արդյոք Ինեսսան գրե՞լ է Ձեզ. կամ Կասպարովը պատմել է, որ կարգի է դրվել միջազգային ժուռնալի գործը (որը լույս կտեսնի Բեռնում)»[1]։

1916 թ. հունիսին Կասպարովը հիվանդանում է։ Կոկորդի պալարախտը տանջում էր ռևոլյուցիոն մարտիկին։ Հարկավոր էր բուժման գնալ, միջոցներ չկային։ Կասպարովը դիմում է Լենինին։ 1916 թ. հուլիսի 1-ին Ն. Կրուպսկայան հայտնում է Կասպարովին, թե «մենք դրամ ենք ձեռք բերել, անհրաժեշտ է, որ դուք անմիջապես մեկնեք բուժման... Ո՞րտեղ եք մտադիր գնալ»[2]։ Նույն տարվա սեպտեմբերի 15-ին Նադեժդա Կոնստանտինովնան նորից զբաղվում է մարտական բարեկամի վիճակով։ «Թանկագին Կասպարյանց,— գրում է նա,— ինչպե՞ս եք ապրում Դուք։ Եղա՞ք կոկորդի բժշկի մոտ։ Ի՞նչ ասաց նա... մենք արդեն փոխադրվեցինք Ցյուրիխ»։ 1916 թ. սեպտեմբերի 21-ին Վ. Ի. Լենինը գրել է. «Թանկագին Կասպարով. հղում եմ ամեն տեսակի ողջույններ և առողջության ցանկություններ։ Բուժվեցեք լրջորեն և հանգիստ տեղեկացրեք։ Ձեր Լենին»[3]։

Վ. Մ. Կասպարովը բուժվում էր։ Նրա սիրան ու հոգին ուժ ու կորով էին ստանում առաջնորդի սրտաշարժ նամակներից և հոգատար վերաբերմունքից։ Դավոս քաղաքից, որտեղ բուժվում էր Կասպարովը, նա գրում էր Լենինին իր վիճակի մասին։ 1916 թ. աշնանը ուղարկած մի նամակում Կասպարովը հաղորդել է, որ առողջանում է, մտադիր է վերադառնալ աշխատանքի և շարադրում է իր պլանները[4]։

Վ. Ի. Լենինը և Ն. Կրուպսկայան խիստ ուրախացել էին ստանալով Կասպարովի մասին բարի լուր։ «Սիրելի Կասպարով,— գրում է Նադեժդա Կոնստանտինովնան 1916 թ. դեկտեմբերի 31-ին,— անչափ ուրախ եմ Ձեր նամակի համար։ Շատ լավ է, որ Դուք առողջանում եք և պլաններ կազմում։ Սրտանց ցանկանում

---

[1] «Լենինյան ժողովածու», հատ. 11, էջ 199։

[2] «Կոմունիստ», № 225, 1957։

[3] «Լենինյան ժողովածու», հատ. 13, էջ 251։

[4] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 17, ց. 7, գ. 27012—27028։

եմ, որ դրանք իրականանան։ Բայց դրանց մասին մենք դեռ մանրամասն կխոսենք»։ Այդ նամակի վերջում Վ. Ի. Լենինը ավելացնում է. «Սիրելի Կասպարով։ Շնորհավոր նոր տարին։ Ամենալավագույն մաղթանքներ և ողջույններ։ Ձեր Լենին»[1]։

Եկավ 1917 թվականի փոթորկոտ տարին։ Կասպարովը մաքառում էր հիվանդության դեմ, բայց նրա դրությունը արմատապես չէր բարելավվում։ Նա երբեմն արյուն էր թքում, սակայն երազում էր շուտով շարք վերադառնալ։

1917 թ. մարտն է. միապետության փլատակների վրա նոր բարիկադներ են բարձրանում։ Լենինը և լենինյանները պատրաստվում էին մեկնել Հայրենիք։ Մինչդեռ Կասպարովի առողջությունը կրկին վատանում էր։ «Ինձ վշտացնում է, որ Դուք նորից պառկում եք,— գրում է Ն. Կրուպսկայան մարտի 17-ին,— գոնե հարկավոր է մի քիչ խնայվել, հատկապես երբ հնարավորություն է ստեղծվել մեկնել Ռուսաստան... այսօր ուղարկում եմ 60 ֆրանկ...»[2]։

Անցավ ևս մեկ տասնօրյակ։ Վ. Ի. Լենինը 32 վտարանդիների հետ պատրաստ էին վերադառնալ Ռուսաստան։ Մարտի 27-ին, մեկնելուց առաջ Վ. Ի. Լենինը և Ն. Կ. Կրուպսկայան նորից դրեցին իրենց բարեկամ և ընկեր Վ. Մ. Կասպարովին, որը դամված էր անկողնուն և չէր կարող նրանց հետ մեկնել հայրենիք։ «Սիրելի Կասպարյանց,— սկսել է իր նամակը Նադեժդա Կոնստանտինովնան,— այսօր մենք պետք է մեկնենք... Ռուսաստանից շտապեցնում են գնալ... Պլաններն իհարկե, բազմաթիվ են... մտքերով ապրում ենք Ռուսաստանում։ մտածում ենք, թե ի՞նչ է կատարվում այնտեղ և ի՞նչպես... Նու, ամուր, ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը, շուտով առողջացեք։ Կտեսնվենք Ռուսաստանում։ Ն. Կրուպսկայա»[3]։ Նամակը շարունակել է Վ. Ի. Լենինը. «Սիրելի Կասպարով խոսքերով, ամուր, ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը, ցանկանում եմ առողջություն։ Պետք է համբերել։ Հուսով եմ, որ Պետերում կհանդիպենք և այն էլ շուտով։ Նորից լավագույն ողջույններ։ Ձեր Լենին»[4]։

Այդպես ավարտվեց Վ. Ի. Լենինի և Վ. Մ. Կասպարովի նամակագրությունը, այդպես էլ բաժանվեցին նրանք իրարից։

---

[1] «Լենինյան ժողովածու», հատ. 13, էջ 253։

[2] Բերվում է ըստ Դ. Հարությունովի «Սլավա Կասպարով» հոդվածի։

[3] «Լենինյան ժողովածու», հատ. 13, էջ 271։

[4] Նույն տեղում, էջ 272։

Աննկուն բոլշևիկ-լենինյանը վարվում էր Ռուսաստանում սկսված ռևոլյուցիայի կրակով։ Բայց Դավոսի բժիշկները չկարողացան բուժել 33 տարեկան երիտասարդ ռևոլյուցիոնիստին։ 1917 թ. սեպտեմբերի 6-ին Վ. Մ. Կասպարովը վախճանվեց օտարության մեջ, Շվեյցարական Դավոս քաղաքում, հարազատներից ու բարեկամներից հեռու[1]։

Սլավա Կասպարովը լենինյանների համատեղության մեջ արժանավոր տեղ է գրավում։ Նա իր ամբողջ գիտակցական կյանքում առաջնորդվեց լենինյան գաղափարներով, աննկուն պայքար մղեց այդ գաղափարների կենսագործման համար։

* * *

Տարագրության մեջ գտնված տարիներին Վ. Ի. Լենինի հետ անմիջական կապեր ունեցող և նրա ղեկավարությամբ աշխատող գործիչներից մեկն է Ալեքսանդր Սարեմի Բեգզադյանը (1881—1937)։

Ալ. Բեգզադյանի ռևոլյուցիոն գործունեությունը կապվում է Վ. Ի. Լենինի անվան հետ դեռևս 1901 թվականից, երբ նա Կիևի Պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող էր, «մատնակցել էր գաղտնի ուսանողական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին» և իր մոտ պահել ու տարածել «հանցավոր հրատարակություններ»[2]։ Այդ հրատարակությունների մեջ եղել են լենին-

---

[1] Վ. Մ. Կասպարովը խոշոր ազդեցություն է ունեցել իր հարազատներից շատերի վրա և օգնել նրանց դառնալու ռևոլյուցիոն ակտիվ գործիչներ։ Նրա քույրերը՝ Զինա Մինասովնան և Եվգենիա Մինասովնան ռևոլյուցիոն ակտիվ գործունեություն էին ծավալում Ռուսաստանում։ Նրա մոտ ազգական Վանյա Կասպարովը ևս գնաց նույն ուղիով։ Ռոզա Կասպարովան բաղարացիական կռիվների բաջարի հերոսներից է, որն ընկավ դենիկինյան բանդաների ձեռքը, խոշտանգումների ենթարկվեց ու սպանվեց 1919 թվականին։ Մանյա Կասպարովան 1917 թվականից ռևոլյուցիոն պայքարի մեջ էր, ակտիվ կոմունիստ, այժմ անհատական թոշակառու։ Սլավա Կասպարովի ընդհատակյա աշխատանքի մարտական ընկերն էր, նրա կինը՝ Վասիլիսա (Վարյա) Կասպարովան, որը ՌՍԴՐՊ անդամ էր 1905 թվականից։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նախօրյակին Սլավայի տրագիկ մահը ծանր տանջանքներ պատճառեց Վարյային, սակայն չընկճեց նրա ոգին։ Վարյան մասնակցեց ռևոլյուցիային, իսկ բաղարացիական կռիվների ժամանակ պատասխանատու պաշտոն էր վարում Կարմիր Բանակի քաղ. վարչությունում։ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Վասիլիսան աշխատում էր Հայկական ՍՍՌ-ի Մոսկվայի լիազոր-ներկայացուցչի (Ս. Տեր-Դարբինյանի) տեղակալի պաշտոնում։

[2] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 153, էջ 16։

յան «Իսկրա» թերթի համարները։ Կիևում նա մի քանի հայ ուսանողների հետ ստեղծում է խմբակներ և 1901—1902 թթ. հրատարակում հայերեն սոցիալ-դեմոկրատական խմբագիր կոչեր։ Բեգզադյանը որպես պրոպագանդիստ մասնակցում էր բանվորական խմբակներում լենինյան-իսկրայական հայացքների տարածման գործին։ Կիևում 1901 թ. ապրիլին նա ակտիվ մասնակցություն է ունենում մայիսմեկյան ցույցի նախապատրաստման գործին[1], վտարվում է ինստիտուտից և արտաքսվում Կովկաս։

Բեգզադյանը 1902 թվականից հաստատվում է Բաքվում, մտցվում ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեի կազմի մեջ, ծանոթանում է Լ. Բ. Կրասինի հետ։ Բեգզադյանը Բոգդան և Լյուդվիգ Կնունյանցների, Վանո Սուրուպյանի և այլոց հետ, «պաշտպանում է պարտիայի կառուցման այն սխեման, որը մշակել էր ընկեր Լենինը»[2]։ Ալեքսանդրը ձերբակալվում է։ Փախչելով բանտից, կազմակերպության հանձնարարությամբ Բեգզադյանն անցնում է պետական սահմանը։

1906 թվականի մայիսին Բեգզադյանը («Յուրի» կեղծանունով) արդեն ժնևում էր։ Տարագրության մեջ նա մնաց մոտ 9 տարի, մինչև 1914 թ. վերջերը։ Նա սովորում և 1911 թվականին ավարտում է Ցյուրիխի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։

Արտասահմանում Ալ. Բեգզադյանը մոտիկից ծանոթանում է Վ. Ի. Լենինի հետ, աշխատում նրա անմիջական ղեկավարությամբ, մասնակցելով բոլշևիկների ղեկավար կենտրոնի գործունեությանը։

Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ Բեգզադյանը կազմակերպում է Պետական դումայի ընտրությունների առթիվ ՌՍԴԲՊ պլատֆորմի տպագրության գործը[3]։ Լենինը առավել գնահատում էր «սիրելի Յուրիի» մարտական ոգին ու համարձակությունը։

Նրը Փարիզում բոլշևիկների ղեկավար կենտրոնը ստեղծում է հատուկ հանձնաժողով («Նոյակ») պրովոկատորների դեմ պայքարելու համար, այդ նոյակի մեջ մտցվում է նաև Ա. Բեգզադյանը[4]։

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 153, թ. 4։

[2] Նույն տեղում, էջ 5։

[3] Տե՛ս «Համառոտ տեղեկություններ Ա. Ա. Բեգզադյանի մասին», կազմել է Մարիա Սեմյոնովնա Բեգզադյանը։ Ձեռագիր՝ էջ 4—5։

[4] ՄԼԻ Վրացական ֆիլիալի արխիվ, Ֆ. 93, ց. 1, գ. 104, թ. 1։

Ալ. Բեգզադյանը 1909 թվականին Ցյուրիխի բոլշևիկյան սեկցիայի ակտիվ գործիչներից էր, նրա աշխատանքն արժանանում է Վ. Ի. Լենինի հավանությանը և Իլյիչն ավելի պատասխանատու առաջադրանքներ է տալիս նրան։

1912 թվականի նոյեմբերի 24-ին Բազելում գումարված 2-րդ ինտերնացիոնալի միջազգային կոնգրեսի բոլշևիկների Կենտկոմի ՌՍԴԲՊ պատվիրակության կազմում վճռական ձայնով ընտրվում է և Ալ. Բեգզադյանը[1]։ Բազելի կոնգրեսից որոշ ժամանակ անց, Վ. Ի. Լենինը Կրակովից նամակ է ուղարկում Բեռն Շկլովսկուն և հանձնարարում նամակն ուղարկել Ցյուրիին (Բեգզադյանին), որ նա ուղարկի Փարիզ և Վիեննա։ Այդ նամակի մեջ Լենինը պահանջում է Բազելի կոնգրեսի մասին հաշվետվություն տալ, գրել «Պրավդա»-ին և ցուցումներ տալ պարտիայի մի շարք անհետաձգելի գործերի վերաբերյալ[2]։

1913 թվականին ՌՍԴԲՊ բոլշևիկյան Կենտկոմը, որին գլխավորում էր Վ. Ի. Լենինը, հրավեր է ստանում պատվիրակ ուղարկել գերմանական սոցիալ-դեմոկրատների Ենայի համագումարին։ Ալ. Բեգզադյանն ընտրվում է ՌՍԴԲՊ կողմից պատգամավոր և մասնակցում այդ համագումարին[3]։

Վ. Ի. Լենինը Պորոնինոյից 1913 թ. սեպտեմբերի 12-ին նամակ էր գրել Գանեցկուն, Ա. Բեգզադյանի հետ հանդիպելու մասին։ «Հարգելի ընկեր,— գրել է Լենինը,— եթե լինեք Ենայում, անպայման ծանոթացեք մեր ներկայացուցչի (Բեգզադյանի) հետ... Նրա հետ խոսեցեք բոլոր գործերի մասին...»[4]։ Լենինը հանձնարարում է Գանեցկուն, որ նա Բեգզադյանին ծանոթացնի Պաննեկուկի, Մերինդի և մյուս ձախերի հետ, եթե նա ինքը չի կատարել այդ բանը։

Բեգզադյանը Լենինի հանձնարարությամբ, հանդես է գալիս Կ. Կաուցկու, Ֆ. Մերինդի և Կ. Ցետկինի մոտ պահ տրված ՌՍԴԲՊ-ի գումարների նկատմամբ բոլշևիկների ունեցած իրավունքի հարցի շուրջը, պաշտպանում բոլշևիկների պահանջն այդ ժառանգությունից բաժին ստանալու համար[5]։

Վ. Ի. Լենինը Ա. Բեգզադյանին ներգրավում էր նաև այլ աշ-

---

1 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 153, թ. 16։
2 Տե՛ս «Լենինյան ժողովածու», հատ. 13, էջ 213։
3 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 153, թ. 16 (հակ. ներ.)։
4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 36, էջ 284։
5 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 153, թ. 4։

խատանքների մեջ, հանձնարարություններ էր տալիս նրան բոլշևիկյան օրգաններին աջակցություն ցույց տալու գծով։ Այդ մասին է վկայում 1913 թ. հուլիսի 20-ին Բեռնից գրած նրա նամակը։ Վ. Ի. Լենինը Գ. Սաֆարովին տեղեկացնում է իրեն ուղարկած մի հոդվածի մասին, որը պետք է տպվեր «Պրավդա»-ում։ «Ուկրաինացու հոդվածը, շատ լավն է»,— գրում է Վ. Ի. Լենինը։ «Անպայման անհրաժեշտ է, որ Դուբ և Յուրին (Բեգզադյանը) մոտիկից ծանոթանան նրա հետ...»[1]։ Այնուհետև Լենինը նշում է, որ Ուկրաինացին պետք է գրի մեկ ուրիշ հոդված էլ, որի մասին գրում էր, խնդրում է, որ նամակը կարդան Սաֆարովն ու Բեգզադյանը։ Վ. Ի. Լենինի կողմից Ալ. Բեգզադյանին հանձնարարություններ տալու մասին հիշատակումներ կան նաև այլ փաստաթղթերում և աղբյուրների մեջ[2]։

Ալ. Բեգզադյանն իր հերթին անսահման սիրով և նվիրվածությամբ էր տոգորված դեպի Վ. Ի. Լենինը։ 1914 թվականի ամառը, պատերազմն սկսվելու օրերին, ավստրիական ոստիկանությունը ձերբակալեց Վ. Ի. Լենինին, կեղծ զեկույցի հիման վրա նրան կասկածելով ցարական լրտես լինելու մեջ։ Վ. Ի. Լենինի պաշտպանությունը, նրան սպառնացող զինվորական դատարանի վտանգից փրկելը հանդիսանում էր միջազգային ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի ընդհանուր գործը։ Հանդես եկան լավագույն մարդիկ լեհերից, ավստրիացիներից։ Տագնապի մեջ էին Ն. Կրուպսկայան, Ուլյանովների ամբողջ ընտանիքը։ Նրա ազատագրման համար ծավալված պայքարի ակտիվ մասնակիցներից մեկն էլ եղել է Ալ. Բեգզադյանը։ Հնարավոր եղավ ապացուցել ավստրիական ոստիկանությանը, որ Վ. Ի. Ուլյանովը ցարական կառավարության թշնամի է, ոչ թե նրա լրտեսը։ Օգոստոսի 7-ից 19-ը բանտարկվելուց հետո Վ. Ի. Լենինն ազատվեց։

Վ. Ի. Լենինը շտապում է Ավստրիայից մեկնել Շվեյցարիա։ Ժնևի կայարանում նրան դիմավորելու եկած հարազատների, ընկերների և բարեկամների մեջ էր նաև Ալ. Բեգզադյանը։ Վ. Ի. Լենինը սրտառուչ հանդիպում է ունեցել մերձավորների հետ և կայարանից ուղիղ մեկնել այն բնակարանը, որտեղ ապրում էր Ալ. Բեգզադյանը՝ որոշ ժամանակ ապրել է այնտեղ։

Այդ օրերին Վ. Ի. Լենինը գրեց «Պատերազմը և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան» վերնագրով ՌՍԴԲՊ Կենտկոմի նշա-

---

[1] Տե՛ս «Լենինյան ժողովածու», հատ. 13, էջ 229։

[2] Նույն տեղում, էջ 220—221։

նավոր մանիֆեստը, որը Բեռն քաղաքում օգոստոսի 24-ին քննվեց բոլշևիկների ժողովում և արժանացավ հավանության։ Ժողովին մասնակցում էր Պետական դումայի անդամ բոլշևիկ Ֆ. Ն. Սամոյլովը, որին և հանձնարարվում է բանաձևը տանել Ռուսաստան, հանձնել ՌՍԴԲՊ Դումայական Ֆրակցիային, որպեսզի բաղմացվեր և տարածվեր երկրում։ Այդ պատասխանատու խնդիրը Վ. Ի. Լենինը հանձնարարեց նաև Ալ. Բեգզադյանին, որը եկավ Կովկաս, իր հետ բերելով Կենտկոմի մանիֆեստը[1]։

1915 թ. սկզբներին Ալ. Բեգզադյանն արդեն Բաքվում էր։ Նա հանդիպումներ է ունենում Ստ. Շահումյանի և Բաքվում գործող ուրիշ բոլշևիկների հետ, որոնց հաղորդում է արտասահմանյան բոլշևիկյան վերաբանդինների, մասնավորապես Վ. Ի. Լենինի մասին, մանիֆեստի մասին[2]։

1915 թ. հունվարին (կամ փետրվարին) Ալ. Բեգզադյանը նորից ձերբակալվեց և նետվեց բանտ։ Մինչև ռևոլյուցիայի հաղթանակը Ալ. Բեգզադյանը 6 անգամ ձերբակալվել է, երկու անգամ տարբեր ժամանակներով դատապարտվել բանտարկության, բայց մնացել է աննկուն և միշտ հաստատապես ընթացել լենինյան ուղիով։ Ալ. Բեգզադյանին ցարական զնդանից ազատեց միայն 1917 թվականի փետրվարյան ռևոլյուցիան։

Տարագրության մեջ Վ. Ի. Լենինի հետ անձամբ ծանոթ աշխատակիցներից էր նաև Արշավիր Միքայելի Մելիքյանը (1879—1938)։

Արշ. Մելիքյանը ծնվել է Երևանի նահանգի Շարուր-Դարալագյազի գավառի Փաշալու (այժմ Ազիզբեկով) գյուղում։ Ավարտելով Երևանի գիմնազիան, նա մեկնում և ընդունվում է Խարկովի համալսարանը, որտեղ սովորում է մինչև 1901 թվականը։ Այնտեղ էլ Մելիքյանը ներգրավվում է ուսանողական ռևոլյուցիոն խմբակների մեջ։ 1901 թվականին Մելիքյանը վտարվում է Խարկովի համալսարանից և մեկնում արտասահման, ապրում է Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում և Իտալիայում։

Ռուսաստանում և արտասահմանյան երկրներում ապրելով, Արշ. Մելիքյանը խորապես ուսումնասիրում է մարքսիզմը։ Նա 1901 թվականին մտնում է ՌՍԴԲՊ շարքերը։ Արշավիր Մելիքյա-

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 153, թ. 6—7։

[2] Մարիա Սեմյոնովնա Բեգզադյանը գրավոր հայտնել է, որ Ալ. Բեգզադյանը մանիֆեստը հանձնել է Ստ. Շահումյանին։ Տե՛ս ձեռագիրը, որ գտնվում է ՄԼԻ Հայկական ֆիլիալում և Ռևոլյուցիայի թանգարանում։

նը անձնական ծանոթություն է հաստատում Վ. Ի. Լենինի հետ։ Առաջնորդը հատկապես գնահատում է Մելիքյանի ընդունակությունները և մեծ էրուդիցիան մարքսիզմի փիլիսոփայական մտքի տիրապետման ու պրոպագանդի առպարեզում։

Ռեակցիայի տարիներին Իտալիայում գտնված ժամանակ Արշ. Մելիքյանը հրավիրվում է Կապրի, պարտիական դպրոցում աշխատելու համար։ Հետագա տարիներին, երբ Լենինն ապրում էր Շվեյցարիայում, Արշ. Մելիքյանը աշխատում էր Վ. Ի. Լենինի մոտ գրականություն ընտրելու և գրադարանը վարելու գծով։ Միաժամանակ Ա. Մելիքյանը Վ. Ի. Լենինի մոտ սովորում ու դաստիարակվում է որպես մարքսիստ տեսաբան։

Արշ. Մելիքյանը Ռուսաստան վերադարձավ. հաստատվեց Երևանում և ծավալեց իր ռևոլյուցիոն գործունեությունը։ Նա հանդիսացել է «Խոսք» թերթի խմբագիրը և Երևանի երիտասարդ մարքսիստների ուսուցիչներից մեկը։

Այսպիսով, հայ սոցիալ-դեմոկրատ վտարանդիները՝ Սլավա Կասպարովը, Սիմոն Տեր-Պետրոսյանը, Ալեքսանդր Բեգզադյանը, Արշավիր Մելիքյանը և ուրիշներ, աշխատելով Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ, ռևոլյուցիոն պայքարի մեջ ավելի կոփվեցին որպես աներեր բոլշևիկներ, օտարության մեջ ևս գործեցին որպես ռևոլյուցիայի վետերաններ, իրենց ուժերը նվիրելով ցարիզմի տապալման և աշխատավորների ազատագրման մեծ պայքարին։ Նրանք հանդիսացան Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության անվեհեր մարտիկներ, որոնց անուններն անջնջելի տառերով գրվել է հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆՐԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում սոց-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծումը, հայ լենինյանների կուսումը և աշխատավորների ներգրավումն ռևոլյուցիոն-ազատագրական պայքարի մեջ տեղի է ունեցել հայկական ազգայնական պարտիաների և մանրբուրժուական հոսանքների դեմ մղված համառ պայքարում։ Այդ պայքարը ղեկավարում էր Վ. Ի. Լենինը։

Վ. Ի. Լենինի և լենինյանների կողմից դեպի հայկական բուրժուական և մանրբուրժուա-նացիոնալիստական կուսակցություններն ու ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները ունեցած վերաբերմունքը, նրանց նկատմամբ կիրառված հմուտ տակտիկան կարևոր նշանակություն ունեին հայ ժողովրդի ազատագրական պայքարը ճիշտ ուղիով տանելու, այն միապետության դեմ մղվող համաժողովրդական ռևոլյուցիոն պայքարի մեջ միավորելու գործում։ Բոլշևիկյան պարտիան քննադատեց ազգային բուրժուազիայի ռևակցիոն գործելակերպը, այդ թվում և հայկական ազգային բուրժուազիայի, քննադատեց ազգային պարտիաների ու հոսանքների ծրագիրն ու տակտիկան, ցույց տալով, որ նրանց ընտրած ուղիները հայ ժողովրդի ազատագրման ուղիներ չէին։

1

Հայ իրականության մեջ հանդես եկած ամենամոլի ազգայնական կուսակցության՝ դաշնակցության հակառևոլյուցիոն գործելակերպի մասին Վ. Ի. Լենինը և նրա աշակերտները արտա-

հայտվել են շատ անգամ, մերկացրել դաշնակների սոցիալ-քաղաքական դեմքը, ցույց տվել, որ այդ կուսակցությունը հայ ժողովրդի ազատագրական շարժումը մեկուսացնում է մյուս ժողովուրդների պայքարից, աշխատավորների գիտակցության մեջ սերմանում է ազգայնական հակառևոլյուցիոն գաղափարներ և հանդես է գալիս որպես Հայաստանը գաղութացնող իմպերիալիստական պետությունների կամակատար։

Վ. Ի. Լենինը գիտեր, որ դաշնակցություն պարտիան պայքարում է սոցիալ-դեմոկրատիայի դեմ, ազգասիրական դեմագոգիկ լոզունգներով ձգտում է հայ աշխատավորներին տանել իր ետևից։

1905 թ. հունվարին Վ. Ի. Լենինը ստացել էր Ստ. Շահումյանի մի նամակը, որում խոսվում էր հենց այդ մասին։ «Դրոշակ»-ի դեկտեմբերյան համարում,— գրել է Շահումյանը,— մի մեծ հոդված է տպված ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մասին «Աղանդավորությունը ռևոլյուցիոն շարժման մեջ» վերնագրով[1]։ Դաշնակների կենտրոնական օրգանի մեջ տպված այդ հոդվածում, ինչպես նաև այլ հոդվածներում շարադրված էին ամեն տեսակի հերյուրանքներ սոցիալ-դեմոկրատների հասցեին։ Շահումյանը Վ. Ի. Լենինին հայտնում է, որ «Ես հիմա թարգմանում եմ այդ հոդվածը, մոտ օրերս կուղարկեմ Ձեզ թարգմանությունը, շատ լավ կլիներ, եթե Դուք պատասխանեիք նրան»[2]։

Վ. Ի. Լենինը անդրադառնալով դաշնակցություն պարտիայի գործունեությանը, 1907 թ. գրում էր, որ Ռուսաստանի յուրաքանչյուր ազգության մեջ երկու պարտիա են պայքարում պրոլետարիատի վրա ազդեցություն ձեռք բերելու համար, ռուսների մեջ՝ սոցիալ-դեմոկրատիան և սոցիալիստ ռևոլյուցիոներները, լեհերի մեջ՝ լեհական սոցիալ-դեմոկրատիան և լեհական սոցիալիստական պարտիան, լատիշների մեջ՝ լատիշական սոցիալ-դեմոկրատիան և լատիշական էսերները, հայերի մեջ՝ հայ սոցիալ-դեմոկրատիան և դաշնակցականները[3]։

Այսպիսով, Լենինը հայ պրոլետարիատին և բոլոր աշխատավորներին ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի դրոշի ներքո համախմբելու գործի գլխավոր հակառակորդը համարում էր դաշնակների պարտիան։ Եվ իրոք, այդ պարտիան իր սկզբնավորման

---

[1] Շահումյանի նամակը տե՛ս «Исторический архив» ժուռնալը, № 2, 1957, էջ 44։

[2] Նույն տեղում։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 99։

օրերից հայ պրոլետարիատի և գյուղացիության գիտակցության մեջ ներարկում էր բուրժուական գաղափարներ, պայքար մղում մասսաների դասակարգային կազմակերպման դեմ, ռևոլյուցիոն-ինտերնացիոնալիզմի գաղափարներին հակադրելով նացիոնալիզմի գաղափարը։ Դաշնակցությունը հանդես եկավ որպես հայ բուրժուազիայի հարազատ զավակը, ասում էր Ս. Շահումյանը։

Հայ իրականության մեջ սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների և դաշնակցականների միջև պայքարը մղվում էր ռևոլյուցիայի բոլոր էտապներում, հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության կարևորագույն հարցերի շուրջը։ Իր առաջին ծրագրային փաստաթղթում, 1890 թվականին հրապարակած «Մանիֆեստ»-ում դաշնակցություն պարտիան սքողելով հայ իրականության մեջ եղած դասակարգային հակասությունները և պայքարը, կոչ արեց հայ աշխատավորին և հարուստին, հայ հոգևորականին և մտավորականին, համախմբվել ազգային դրոշի տակ, պայքարելու «ընդհանուր ազգային թշնամիների» դեմ, հանուն «ընդհանուր ազգային իդեալի»։ Դաշնակցություն պարտիայի ծննդի առաջին փաստաթուղթը, այսպիսով ուներ զուտ բուրժուա-նացիոնալիստական բովանդակություն։

Դաշնակցություն պարտիան հայտարարեց, որ նրա նպատակը է «Թուրքահայաստանի քաղաքական և տնտեսական ազատությունը»[1]։ Այդ հայտարարության բովանդակությունն ավելի պարզ շարադրվեց դաշնակցություն պարտիայի ծրագրի մեջ։ Դաշնակցություն պարտիայի ծրագրի «քաղաքական պահանջներ» բաժնում, ասված է, թե «Թուրքահայաստանը պիտի կազմի օսմանյան սահմանադրական պետության անբաժան մասը, հիմնված տեղական լայն ինքնավարության վրա»[2]։ «Թուրքա-Հայաստանը,— ասված է այդ ծրագրի հաջորդ կետում,— Թուրքիայի մյուս շրջանների պես, իրև օսմանյան պետության մեկ մասը, ազատություն պիտի վայելի իր ներքին գործերի մեջ»։ Այսպիսով, դաշնակցություն պարտիան Արևմտյան Հայաստանի «քաղաքական տնտեսական ազատություն» լոզունգը հասկանում էր որպես սոսկ հայկական տեղական ինքնավարություն, այսինքն՝ «կուլտուր-ազգային ավտոնոմիա», մի լոզունգ, որի բուրժուական էությունը խիստ կերպով քննադատվում էր լենինյանների կողմից։ Դա ըստ

---

[1] Տե՛ս «Դաշնակցության Ա. Մանիֆեստը», 1890։

[2] Տե՛ս «Դաշնակցության ծրագիրը», Թիֆլիս, 1917, էջ 22։

էության թուրքական բուրժուական ռեժիմի հետ համակերպվելու մի ծրագիր էր։

Այդ ծրագրի ոգով ղեկավարվելով, դաշնակները գործարքի մեջ մտան թուրքական բուրժուա-նացիոնալիստական «իթթիհատ» պարտիայի հետ, 1908 թվականին օժանդակեցին «իթթիհատականներին» իշխանության հասնելու։ Թուրքական բուրժուազիայի պարտիան իշխանության հասնելով, կազմակերպեց հայ բնակչության ջարդեր 1909 թվականին Ադանայում, 1915 թվականին ամբողջ Թուրքիայում։ Բոլշևիկյան «Պրավդա» թերթը խիստ կերպով դատապարտեց դաշնակների համագործակցությունը թուրքական բուրժուազիայի հետ, քննադատեց նրանց ծրագիրը՝ «հանուն կոնստիտուցիոն-դեմոկրատական ռեժիմի», «հանուն օսմանյան կայսրության անձեռնմխելիության և հանուն Հայաստանի ավտոնոմիայի Թուրքիայի կազմում»[1]։

Դա արևմտահայերի ազատագրման ծրագիր չէր։

Արևելյան Հայաստանում նույնպես դաշնակցությունը չէր դնում հայ ժողովրդի ինքնորոշման, նրա անկախ պետություն ստեղծելու խնդիր։ Դաշնակցություն պարտիայի 1917 թվականին վերահաստատված և հրատարակված ծրագրի «բաղաքական պահանջներ» բաժնում ասված է, որ Անդրկովկասը պետք է կազմվի որպես ռամկավար հանրապետություն, որը հանդիսանալու է բուրժուական Ռուսաստանի անբաժան մասը։ Այնուհետև, ընդգծված է, որ Անդրկովկասը միայն «ներքին գործերի մեջ» կլինի անկախ, ինքնավար։

Այսպիսով, ռուսական բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիաների ժամանակաշրջանում, դաշնակցություն պարտիան չուներ հայկական անկախ պետություն ստեղծելու ծրագիր։ Այդ հարցը չէին դրել դաշնակցություն պարտիայի ոչ Արևելյան բյուրոն և ոչ էլ Արևմտյան բյուրոն։

Ինչպիսի՞ն էր դաշնակցություն պարտիայի տնտեսական ծրագիրը։ Այստեղ դաշնակցությունը հանդես էր գալիս սոցիալիստական ֆրազեոլոգիայով, որդեգրելով էսեռական ծրագիրը—հողերի և բնական հարստությունների համայնացում, գյուղական համայնքի պահպանում։

Վ. Ի. Լենինը քննադատել է դաշնակցություն պարտիայի ագրարային ծրագիրը, որը նա պաշտպանում էր ռուսական բուրժուա-

---

[1] Տե՛ս «Պրավդա», 27 հուլիսի 1913, «Փոքր Ասիա և Հայկական հարցը» հոդվածը։

դեմոկրատական ռևոլյուցիայի ժամանակաշրջանում և ռեակցիայի տարիներին։

Դաշնակների ագրարային ծրագրին Վ. Ի. Լենինն անդրադառնում է իր «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905—1907 թվականների ռուսական առաջին ռևոլյուցիայի մեջ» աշխատության 5-րդ գլխում, որը նվիրված է ագրարային հարցի վերաբերյալ տարբեր դասակարգերի և պարտիաների ծրագրերի վերլուծությանը։ Վ. Ի. Լենինը օգտագործում է երկրորդ Դումայի սղագրական հաշվետվությունը, որտեղ ֆրակցիաների պայքարի մեջ դրսևորվել էր նաև պարտիաների քաղաքականությունն ագրարային հարցում, նրանց ծրագիրը։ «...Հարկավոր է առանձնացնել յուրաքանչյուր նշանակալի և յուրահատուկ դումայական ֆրակցիա և այն բնութագրել քաղվածքներ բերելով ագրարային հարցի գլխավոր կետերի վերաբերյալ գլխավոր ճառերից», գրել է Լենինը[1]։

Դումային մասնակցած պարտիաները դասակարգելով 9 խմբերի, Վ. Ի. Լենինը դաշնակների ծրագիրը քննում է «սոցիալիստա-ռևոլյուցիոներների» պարտիայի և «ոչ ռուս ժողովուրդների ներկայացուցիչների»—«նացիոնալները» շարքում։

Դաշնակցություն պարտիան պաշտպանում էր էսհռակոն ագրարային ծրագիրը, կառչելով գյուղական համայնքից, կոչ անելով պաշտպանել և փրկել արդեն քանդվող համայնքը։ Վ. Ի. Լենինը հատուկ կանգ է առնում դաշնակցության կողմից Երևանից Դումայի պատգամավոր ընտրված Սաղաթելյանի ճառի վրա, վերլուծում նրա էությունը։ Լենինը նշում է, որ Սաղաթելյանը գնում է «համայնքի հարցը»[2]։ Հռետորը բավականին նախիլ կերպով ենթատում է,— գրել է Լենինը,— որ իբր Թն հողի ազգայնացման թեորիան զարգացնելով, թույլ է ընդգծվում «կենդանի մնացած ինստիտուտը, որի հիման վրա կարելի է միայն առաջ շարժվել... Այդ բոլոր սարսափներից (Եվրոպայի սարսափները, մանր տնտեսության ավերումը և այլն) պաշտպանում է համայնքը»։

Դաշնակցական Սաղաթելյանին անվանելով «Համայնքի պատվարժան ասպետ», Վ. Ի. Լենինը հեգնում է նրա «սրտացավությունը» համայնքի մասին։ Վ. Ի. Լենինը շեշտում է, որ Սաղաթելյանը Դումայում ագրարային հարցի շուրջը հանդես եկած

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 468—469։

[2] Նույն տեղում, էջ 513։

26-րդ հոնտորն է եղել, որից առաջ ելույթ ունեցողներից ոչ մեկը այդպիսի «սրտացավությամբ» չի ընդգծել «կենդանի մնացած ինստիտուտի» հարցը։

Վ. Ի. Լենինը գրում էր, որ Սաղաթելյանից «...առաջ արտահայտվեցին ոչ պակաս, քան 14 ձախեր, տրոտսկիներ և այլն, և նրանք բոլորը «թույլ էին ընդգծում կենդանի մնացած ինստիտուտը»։ «Սրտացավելու» շատ բան կա, տեսնելով դումայական գյուղացիների նույնպիսի անտարբերությունը համայնքի նկատմամբ, ինչպիսին հայտաբերեցին նաև Գյուղացիական միության համագումարները։ Սաղաթելյանը և Ուսպենսկին համայնքին ձեռնարկեցին՝ որպես իսկական ազանդավորներ գյուղացիական ռեակցիայի մեջ, որը չի ցանկանում ճանաչել նին հողային միությունները։ «Ես զգում եմ, որ որոշ վտանգ կա համայնքի համար», ողբում է Սաղաթելյանը, «Հատկապես այժմ պետք է ինչ կերպ էլ լինի փրկել համայնքը»։ «Այդ ձևը (այսինքն՝ համայնքը) կարող է ծավալվել—վերածվել համաշխարհային շարժման, որն ի վիճակի է մատնանշելու բոլոր տնտեսական հարցերի լուծումը»։ Համայնքի վերաբերյալ այդ բոլոր դատողությունները պ. Սաղաթելյանը ըստ երևույթին անում էր «տրոտսկիին և անտեղի»[1]։

Այսպիսով, դաշնակցությունը գնում էր ռուսական էսեռների հետքերով։ Այդ միտքը Լենինը կրկին ընդգծել է նաև իր աշխատության «Նացիոնալները» բաժնում։

«Ոչ-ռուս ժողովուրդների ներկայացուցիչներից,— գրել է Վ. Ի. Լենինը,— Դումայում ագրարային հարցերի շուրջը արտահայտվեցին լեհերը, բելոռուսները, լատիշներն ու էսեռները, լիտվացիները, թաթարները, հայերը, բաշկիրները, կիրգիզները, ուկրաինացիները»[2]։ Լենինը քննադատում է Ելիզավետպոլից Դումայի պատգամավոր Խան Խոյսկու ելույթը, որը խոսել է մուսուլմանների անունից, այնուհետև նորից անդրադարձել դաշնակցության ներկայացուցիչների ելույթներին։

Վ. Ի. Լենինը գրել է. «Կովկասյան գյուղացիների կողմից,— մեր պարտիական ս. դ.-ից բացի.. խոսեց վերոհիշյալ Սաղաթելյանը (Երևանի նահ.), որը կողմնակից է էսեռների տեսակետին։ Դաշնակցություն պարտիայի մյուս ներկայացուցիչը՝ Տեր-Ավետիքյանցը (Ելիզավետպոլի նահ.) արտահայտվեց նույն ոգով՝ «հողը համայնական սեփականության սկզբունքներով պետք է պատկա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 513—514։

[2] Նույն տեղում, էջ 519։

նի աշխատավորներին, ասինքն՝ աշխատավոր ժողովրդին և ուրիշ ոչ ոքի»[1]։

Այնուհետև Լենինը բերում է Տեր-Ավետիքյանցի ճառի մի այլ հատվածը, որում ճառախոսը ասել է. «Ամբողջ Կովկասյան գյուղացիության անունից ես հայտարարում եմ... վճռական մոմենտին ամբողջ Կովկասյան գյուղացիությունը ձեռք-ձեռքի տված կգնա իր ավագ եղբոր—ռուս գյուղացիության հետ և ձեռք կրերի հող ու ազատություն»[2]։ Լենինը քաղվածքներ է բերում նաև բաշկիր, ուկրաինացի և այլ պատգամավորների ճառերից, օգտագործում է այդ նյութերը, հիմնավորում հողի աղգայնացման մասին բոլշևիկյան ծրագիրը, հերքում է մենշևիկ Մասլովի առարկումները և նորից ու նորից ապացուցում ինչպես մենշևիկների, այնպես էլ էսեռական-դաշնակցական ագրարային ծրագրերի ռեակցիոն բովանդակությունը։

Պատմական փորձը ցույց տվեց, որ դաշնակցությունը պարտիան հասնելով իշխանության, ավելի քան երկու տարիների իր տիրապետության ընթացքում ոչ մի քայլ չկատարեց նույնիսկ էսեռական հողային ծրագիրն իրագործելու համար։ Կալվածատիրական և վանքապատկան հողերը չխլվեցին, հողաբաժանություն չկատարվեց գյուղերում։ Խոշոր հողատերերի կալվածքները բռնագրավելու աշխատավոր գյուղացիների փորձերը ճնշվում էին դաշնակների կողմից։

Այսպիսով, դաշնակները, որ իրենց ծրագրում հայտարարում էին հողի սեփականությունը վերացնելու, հողի առ ու ծախն արգելելու մասին, իշխանության հասնելով, անխախտ թողնցին հողի մասնավոր սեփականությունը լինելը, հանդիսացան կուլակների և մյուս խոշոր հողատերերի պաշտպանները։ Դեռ ավելին, դաշնակների հովանավորությամբ կուլակները շնչին վճարով սովահար գյուղացիներից զավթում էին նրանց վարելահողը, այգին, ունեցվածքը։ Դաշնակցություն պարտիայի ծրագրի «տնտեսական պահանջներ» բաժնի բոլոր կետերը մնացին որպես մեռած տառ։

Դաշնակցություն պարտիան հեռու էր արտադրության միջոցները խոշոր սեփականատերերից խլելու մտքից։ Դաշնակ «պատմագիր» և «թեորետիկ» Միք. Վարանդյանը 1906 թվականին գրել է. «...Հայ պրոլետարիատին բնավ ձեռնտու չէ հայ բուրժուա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 524։

[2] Նույն տեղում։

գիայի տնտեսական քայքայումը», այնուհետև, հայ պրոլետարիատը «չպիտի ցանկանա որ այդ համացեղ արդյունաբերող դասակարգը տնտեսական կորստյան մատնվի։ Գուցե ոչ մի տեղ պրոլետարիատը իր կենսական շահերով այնքան սերտ կապերով չէ կապված իր ազգակից բուրժուազիայի հետ, ինչպես հայերիս մեջ»[1]։ Այդպիսի սկզբունք պաշտպանող պարտիան 1918—1920 թթ. իշխանության գլուխ անցնելով, բուրժուազիայի շահերը պաշտպանեց պրոլետարիատի դեմ։

Բանվորների և չքավոր գյուղացիների շահագործումն ավելի խստացավ։ Դաշնակցություն պարտիան իր քաղաքականությամբ մի ավելորդ անգամ ցույց տվեց, որ նա հանդիսանում էր շահագործողների շահերի արտահայտիչը և աշխատավորների թշնամին։ Այդ ճշմարտությունը հաստատվել է ոչ միայն դաշնակների պարտիայի սոցիալ-քաղաքական և սոցիալ-տնտեսական ծրագրերի բովանդակությամբ, այլև նրա տակտիկայով, նրա գործելակերպով։

Դաշնակցություն պարտիայի գործելակերպն սկզբից ևեթ ընդունեց ավանտյուրիստական բնույթ։ 1891 թվականին սկսվեց հրատարակվել «Դրոշակ» թերթը, որի առաջին համարում գրված է. «Դաշնակցությունը հայ ազգի բողոքի ու վրեժխնդրության ոգին է. այս է նրա սկզբունքն ու նպատակը»։

Դա սոսկ հայտարարություն չէր։ Իրոք, դաշնակցություն պարտիան վրեժխնդրությունը, տեռորը, արկածախնդրությունը դարձրեց իր գործունեության «սկզբունքն ու նպատակը»։ Ըստ սրում, անհրաժեշտ է նշել, որ տեռորիստական մեթոդը դարձնելով քաղաքական գործունեության սկզբունք, դաշնակներն այն կիրառում էին ոչ միայն ցարիզմի և սուլթանական կարգերի ներկայացուցիչների դեմ, այլև ներպարտիական պայքարի մեջ, անկյունից սպանում էին իրենց կազմակերպության անցանկալի անդամներին, սպանում էին այլ պարտիաների այս կամ այն գործիչին, տեռորի էին ենթարկում երբեմն նույնիսկ այն բանվորներին ու գյուղացիներին կամ մտավորականության ներկայացուցիչներին, որոնք հրաժարվում էին կատարել դաշնակցականների պահանջները, չէին ենթարկվում նրանց կամայականություններին։

Դաշնակցություն պարտիայի գործելակերպի բացահայտ ռեակցիոն կողմերից մեկն էլ նրա ատելությունն էր դեպի հարևան

---

[1] Միր. Հովհաննիսյան (Վարանդյան), Դաշնակցությունը և նրա հակառակորդները, էջ 87։

ազգերի աշխատավորները։ Դաշնակները խանգարում էին հայ աշխատավորների դասակարգային համերաշխությանը իրենց այլազգի ընկերների հետ, բորբոքում էին ազգային թշնամանք։ Դրանով իսկ դաշնակները պանիսլամիստների, մուսավաթականների և վրացական նացիոնալիստների նման գործիք էին դարձել ցարական ժանդարմերիայի ձեռքին, Անդրկովկասում ազգամիջյան կռիվներ բորբոքելով, փաստորեն օժանդակում էին ցարզմին «բաժանիր և իշխիր» գաղանային քաղաքականությունը կիրառելու գործում։

Դիպուկ է բնութագրել Ստ. Շահումյանը դաշնակցություն պարտիայի սոցիալ-քաղաքական դեմքը դեռևս 1904 թվականին։ Շահումյանը գրել է. «Այսպես, «Դրոշակի» պարտիան,— ներկայումս ամենաուժեղ և գործունյա, բայց և ամենից ավելի անսկզբունք և ռեակցիոն պարտիան է»[1]։

Դաշնակցություն պարտիան հեշտությամբ փոխում էր իր գույնը, քամելյոնից էլ արագ վերագունավորվում, հարմարվելով ժամանակի ոգուն։ Լավ է գրել ականավոր բոլշևիկ Արսեն Ամիրյանը[2], 1907 թվականին, թե դաշնակների «լեքսիկոնի մեջ ամենքան կարելի է գտնել—և ազգ, և դասակարգ, և լիբերալիզմ, և սոցիալիզմ, և կրոն, և անաստվածություն, և համազգային համերաշխություն, և դասակարգային պայքար։ Կայսրին նրանք տալիս են կայսեր, աստծունը—աստծուն, սոցիալիզմինը—սոցիալիզմին։ Տեղը եկավ նրանք ազգային են, տեղը եկավ՝ սոցիալիստ, տեղը եկավ՝ նույնիսկ կղերական»[3]։

Դաշնակցություն պարտիան ռուսական առաջին ռևոլյուցիայի շրջանում մի կողմից կազմակերպում էր ցարական իշխանությունների այս կամ այն ներկայացուցիչների սպանություններ, մասնակցում հակացարական շարժումներին, մյուս կողմից գործակցում Կովկասի փոխարքա Վորոնցով Դաշկովի հետ։

1914 թվականին դաշնակցություն պարտիան, նրա տխրահռչակ Արևելյան Բյուրոն սուտ գործարքի մեջ մտավ ցարական միապետության և նրա բանակի ռեակցիոն գեներալների հետ, զինվորագրվեց նրանց մղած ավազակային պատերազմին։

---

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 49։

[2] Արսեն Ամիրյանը մինչև 1910 թ., եղել է դաշնակցություն պարտիայի շարքերում, հրաժարվել է և 1910 թվականին անցել բոլշևիկների շարքերը։

[3] Մուսվյան (Արսեն Ամիրյան), Դաշնակցության կրիզիսը, 1907, էջ 13։

Հենց որ սկսվեց համաշխարհային պատերազմը, դաշնակցություն պարտիայի Արևելյան Բյուրոն և Թիֆլիսի Կենտրոնական կոմիտեն նախաձեռնեցին հայկական կամավորական խմբերի կազմակերպումը ցարիզմին օգնելու համար։ Արևելյան Բյուրոն ստեղծեց «կարգադրիչ մարմին», որի մեջ մտնում էին Սիմոն Վրացյանը, Արմեն Գարոն, բժ. Հ. Ջավարյանը, Աբ. Գուլխանդանյանը և ուրիշներ։ Նրանք սերտորեն համագործակցում էին կովկասյան փոխարքայի և կովկասյան բանակի հրամանատար գեներալ Յուդենիչի, Կովկասի ժանդարմական շեֆերի և ոստիկանապետների հետ։ Ս. Վրացյանը մի աչքը փակում էր, իբր թե չէր տեսնում, որ Յուդենիչը ցարական զորքերն առաջ ու ետ շարժելով, հայկական շրջանները մտնելով և այնտեղից նահանջելով, նպաստում էր թուրքերի կողմից հայ բնակչության անողոք ջարդերին, որ Յուդենիչը Հայաստանի գավառները հայ բնակչությունից ամայացնելով, արդեն գործնական քայլեր էր կատարում իրագործելու «Հայաստանն առանց հայերի» դավթելու ծրագիրը և «Հայաստանը կազակներին» լոզունգը։

Դաշնակցություն պարտիան հայ ժողովրդի լայն մասսաներից թաքցնում էր ցարիզմի դավթողական նպատակները և իր հանցագործ մասնակցությունը ցարական կառավարության գործարքներին։ Նույնը պետք է ասել ցարի տապալումից հետո դաշնակցության համագործակցության մասին ժամանակավոր կառավարության հետ։ Դաշնակները կապվեցին իշխան Լվովի և կադետ Միլյուկովի հետ, մենշևիկ Չխեիձեի և էսեռ Կերենսկու հետ, պատրաստակամություն հանդես բերեցին Ռուսաստանի իմպերիալիստական բուրժուազիայի հավատարիմ գործակիցը լինել, հույս ունենալով, թե Միլյուկով — Կերենսկու հովանավորությամբ կարող են իրագործել իրենց ծրագիրը։

Կյանքը դաժան դաս տվեց։ Ժամանակավոր կառավարությունը Արևմտյան Հայաստանը դարձրեց նվաճված մարդ, այնտեղ հաստատեց ռազմական դիկտատուրա, Արևմտյան Հայաստանի Գերագույն Կոմիսարի անսահման իշխանությամբ։

1918—1920 թվականներին դաշնակցություն պարտիայի վարած քաղաքականությունը հանդիսացավ նախորդ ժամանակաշրջաններում այդ պարտիայի կիրառած ավանտյուրիստական գործելակերպի շարունակությունը, պարտիայի հակառևոլյուցիոն, հակաժողովրդական բնույթի նոր արտահայտությունը։ Ասվեց, որ դաշնակցություն պարտիան Հայկական անկախ հանրապետու-

թյուն ստեղծելու ծրագիր չուներ, նա պաշտպանում էր ռուսական բուրժուական պետության կազմում Կովկասյան ավտոնոմիայի տեսակետը։ Սակայն Կովկասում քաղաքական իրադարձություններն այնպիսի ընթացք ստացան, որ 1918 թվականի մայիսին Անդրկովկասը տրոհվեց, մենշևիկները հայտարարեցին Վրաստանը անկախ հանրապետություն, իսկ մուսավաթականները Թուրքիայի օգնությամբ Ադրբեջանում զավթեցին իշխանությունը։ Դաշնակցություն պարտիան որոշեց ետ չմնալ իր դաշնակիցներից և դասակարգային եղբայրներից — մենշևիկներից ու մուսավաթականներից։ Ստեղծվեց «Հայկական հանրապետությունը», որի գլուխը կանգնեց դաշնակցություն պարտիան։

Երկու տարուց ավելի ղեկավարելով իշխանությունը, երկրի ներքին կյանքում դաշնակները չլուծեցին սոցիալական ոչ մի հարց, ոչ գյուղացիության հարցը և ոչ էլ բանվոր դասակարգի հարցերը։ Պահպանվեցին ցարիզմի և ժամանակավոր կառավարության օրենքները։

Դաշնակցություն պարտիան չկարողացավ ստեղծել շատ թե քիչ կայուն պետական իշխանություն։ 1918 թվականի հունիսից մինչև 1920 թվականի նոյեմբերը դաշնակների կառավարության կազմը 9 անգամ վերակազմվեց, ստեղծվեցին նոր կաբինետներ։ Երկու տարում 9 կառավարություն — դա իշխանություն չի եղել, այլ մինիստրական կատարյալ իծաշարուկ։

Այդ փաստը բավական է, որպեսզի պատկերացնենք դաշնակների Կենտրոնական Կոմիտեի, կամ նրա Արևելյան Բյուրոյի սնանկությունը։ Այդ ղեկավար օրգանները կազմված էին պետական մտածողությունից զուրկ մարդկանցից, որոնք զբաղվում էին ամեն ինչով, բայց ոչ պետական շինարարությամբ, ոչ ժողովրդի կարիքներով, ոչ ազգային շահերով։ Այդ վերջին հարցն ավելի ցայտուն երևաց դաշնակցություն պարտիայի արտաքին քաղաքականության մեջ։

Դաշնակցություն պարտիայի արտաքին քաղաքականության գլխավոր գիծը եղել է նրա կողմնորոշումը դեպի արևմուտքի իմպերիալիստական պետությունները։ Իշխանության գլուխ անցնելու օրերից դաշնակցական պարագլուխների պատվիրակությունները քարշ էին գալիս նախ թուրքական, գերմանական, ապա ամերիկյան, ֆրանսիական, անգլիական դիվանագետների ընդունարաններում։ «Մարդիկ շարունակ երազել են, դիմել, խնդրել ու

փղել բուրժուաների ոտները՝ առանց լրջորեն մտածելու այն մասին, թե որն է խնդրի լուծման հարազատ ղեկանակը»[1]։

Մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիան, դաշնակցություն պարտիան երբեմն կողմնորոշվում էր դեպի ցարական կամ բուրժուական Ռուսաստանը, սակայն Սովետական իշխանություն հաստատվելուց հետո բոլորովին երես դարձրեց Ռուսաստանից։ Նախընտրելով Արևմտյան բուրժուական օրիենտացիա, դաշնակցական կառավարությունը միաժամանակ հրաժարվեց Սովետական Ռուսաստանի հետ դաշնակցելու հնարավորությունից, մերժեց Սովետական իշխանության առաջարկները կարմիր բանակի զորամասերի օժանդակությամբ Հայաստանի սահմանների պաշտպանությունը կազմակերպելու մասին։ Ընդհակառակը, դաշնակցական պարագլուխները դիվանագիտական բանակցություններ էին վարում Սովետական Ռուսաստանի թշնամիների հետ, փաստորեն գտնվում էին դաշինքի մեջ Դենիկինի հետ։

Հայաստանում դաշնակները ոստիկանական ռեժիմ էին հաստատել և հալածում, սպանում էին սովետական կարգերի համար պայքարող հայ աշխատավորներին։ Դաշնակ մաուզերիստների տեռորի զոհերը շատ են. մայիսյան ապստամբության և դաշնակների փետրվարյան խռովության ժամանակ ընկած կարմիր մարտիկները, Գնդեվազի և Տաթևի ժայռերից անդունդ նետած, դաշնակների բանտերում խոշտանգված կոմունիստներն ու նրանց համակրողները։

Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում վերջ դրեց դաշնակների խժդժություններին։ Ժողովրդի կողմից ջախջախված դաշնակ թափթփուկները փախչելով կապիտալիստական երկրները, այնտեղ գործակցում են հակասովետական ուժերի հետ, դավեր նյութում Սովետական Հայաստանի դեմ և պայքարում դաղութահայ պրոգրեսիվ ուժերի դեմ։

Դաշնակների բարոյական կոդեքսը բուրժուական նացիոնալիզմն է։ Բայց երբ խոսքը վերաբերում է Հայկական ՍՍՌ-ի դեմ, կոմունիզմի դեմ պայքարելուն, դաշնակ նացիոնալիստները դառնում են ամենաանարդ կոսմոպոլիտները, համագործակցում են ամերիկյան գործակալների հետ, նույնիսկ սերտաճում պանթուրքիստների հետ և ատելությամբ լցված թշնամանք քարոզում Սովետական Հայաստանի հայ աշխատավորների դեմ։

---

[1] Տե՛ս «Դաշնակցական կառավարության դոկումենտներից», ժողովածուի Ալ. Մյասնիկյանի առաջարանը, Երևան, 1922, էջ 3։

Այսպիսով, դաշնակցություն պարտիայի ամբողջ պատմությունը նրա ավանտյուրիզմի, արկածախնդրությունների և իմպերիալիստների ձեռքին գործիք լինելու պատմություն է։ Ներկայումս այդ պարտիան սովետական կարգերի երդվյալ թշնամիների մի բանդա է, ծառայագրված ամերիկյան իմպերիալիզմին։

2

Հայ իրականության մեջ գործող ազգային պարտիաներից է Ռամկավարական պարտիան, որը վերջնականապես ձևավորվեց 1908 թվականին, երբ Թուրքիայի սահմանադրությամբ Արևմտյան Հայաստանում լեգալ գործելու իրավունք ստացավ։

Ռամկավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ) 1908 թվականին ընդունեց իր ծրագիրը, որի մեջ պարզ դրսևորվեց նրա սոցիալ-քաղաքական դեմքը։ Ծրագրում ասված է, որ ռամկավարական պարտիան ազգային պարտիա է, ազգային նկարագրով, «հանդիսանում է ազգային քաղաքականության արտահայտիչը»։ Նրա «մշտական ջանքը պիտի ըլլա, համերաշխություն գոյացնել հայ ազգին բոլոր դասակարգերուն մեջ, կարելի եղածին չափ՝ ներդաշնակել անոնց շահերը»[1]։ Այսպիսով, պարտիան իր առաջին ծրագրային փաստաթղթում նպատակ էր դրել սքողել հայ ժողովրդի մեջ եղած դասակարգային ներհակությունները և պայքարը։

Հետագայում այդ պարտիայի ղեկավարությունն ընդունեց և հրատարակեց «Ռամկավար ազատական կուսակցություն, իր այսօրը և վաղը» ծրագրային բանաձևումները։ Այնտեղ ուղղակի ասված է, որ «Ռամկավար ազատական կուսակցությունը եղած է ու կը մնա ազգայնական կուսակցություն», որ «դասակարգային արհամարհանքը և ատելությունը ընկերությունը կրծող, դժբախտացնող թույն է»[2]։ Դժվար չէ հասկանալ, այդ թեզի զուտ բուրժուական էությունը։

Ռամկավարների ծրագրի և գաղափարախոսության բուրժուական սկզբունքներն ավելի բացահայտ են սոցիալ-տնտեսական հարցերում։ Այսպես, «տնտեսական հարցին մեջ մեր կուսակցության հիմնական սկզբունքները կը մնան անհատական սեփականությունը...»։ Այսպիսով, ռամկավարների տնտեսական սկզբուն-

---

[1] Տե՛ս «Ծրագիր Հայ ռամկավար ազատական կուսակցության», կետ 4։

[2] «Ռամկավար ազատական կուսակցությունը, իր այսօրը և վաղը», Պոսթըն, 1927, էջ 5, 14։

քը մասնավոր սեփականության վրա հիմնված, հետևաբար, շահագործման կարգերի պաշտպանությունն է։

Գաղափարական այդպիսի սկզբունքներ ունեցող բուրժուական պարտիան հանդես գալով, հայտարարեց, որ նրա նպատակն է հայկական դատի պաշտպանությունը, հայկական հարցի, կամ արևմտահայերի ավտոնոմիայի հարցի լուծումը, Արևմտյան Հայաստանի ազատագրումը։ Դնելով այդ հարցը, ռամկավարներն ընտրեցին նրա լուծման բուրժուական-դիվանագիտական ուղին։ Ռամկավարները միշտ էլ կողմնորոշվել են դեպի արևմուտքի բուրժուական պետությունները — Ֆրանսիան, Անգլիան, Ամերիկան, հավատացած լինելով և ժողովրդին հավատացնելով, թե այդ պետությունները պետք է «հովանավորեն արևմտահայերին, պաշտպանեն և փրկեն»։ Ռամկավարների լիդերներ Պողոս Նուբարը, Արշակ Չոպանյանը և նրանց գործակիցները կազմելով ազգային պատվիրակություններ, տարիներ շարունակ բանակցում էին արևմուտքի իմպերիալիստական տերությունների դիվանագետների հետ և հայցում նրանց օգնությունը։

Ռամկավարները հանդես էին գալիս որպես այդ պետությունների հավատարիմ գործակիցները։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նրանք գտնվում էին Անտանտի լագերի կողմը, կազմակերպում էին հայկական լեգեոններ, կամավորական ջոկատներ, նյութական հատկացումներ էին կատարում Անտանտի պետությունների զինված ուժերի օգտին, օժանդակում էին նրանց, հույս ունենալով, թե ֆրանսիական բանակը կազատագրի Կիլիկիան, իսկ ցարական բանակը՝ Արևմտյան Հայաստանը, և ռամկավարների պարտիան Հայաստանում կկանգնի իշխանության գլուխ։

Իմպերիալիստական պետությունների դիվինագիտությունը շարաչար խաբեց ռամկավարներին, նրանց բոլոր ձգտումներն ու հույսերը թողեց անկատար, հուսախաբ արեց հայ ազգայիններին նաև այդ հոսանքին։ Ռամկավարները իրենք ևս պատմության փորձով տեսան ու համոզվեցին դրանում։ Այդ պատճառով էլ ռամկավարների ստեղծած «ազգային պատվիրակությունները» քայքայվեցին, ինքնավերացման ենթարկվեցին։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի և Հայկական ՍՍՌ-ի ստեղծման նկատմամբ ռամկավարները հանդես բերեցին յուրովի վերաբերմունք։ Տեսնելով հայկական պետականության վերածնունդը և ժողովրդի խաղաղ աշխատանքը, ռամկավարները սկզբից ևեթ սկսեցին բարյացակամ տոնով խոսել Սո-

վետական Հայաստանի մասին, նույնիսկ քննադատեցին դաշնակների թշնամական գործելակերպը Հայկական ՍՍՌ-ի նկատմամբ։ Բայց ռամկավարները Հայաստանում սովետական ռևոլյուցիան համարեցին «նվազագույն չարիք» նրան սպառնացող «առավելագույն չարիքների տեղ»[1]։

Ռամկավարների լիդերները գրում էին, թե «Ռամկավար կուսակցությունը... առանց բոլշևիզմի ընկերական ըմբռնումներուն համախոհ ըլլալու, մենք պարտինք Հայաստանի արդի կառավարության օգնել իր վերաշինության գործին մեջ»[2]։

Խնդիրը գաղափարական սկզբունքների հակոտնյա լինելու մեջ է։ Ռամկավարական պարտիայի և բոլշևիկյան պարտիայի գաղափարախոսությունները, նրանցից յուրաքանչյուրի աշխարհայացքը իրար հակադիր բևեռներ են, երկու ծայրագույն եզրեր։

Գաղափարական հակադիր տեսակետներ ունենալով, այնուամենայնիվ, ռամկավարական պարտիան բարեկամական վերաբերմունք ունի դեպի Սովետական Հայաստանը։ Ռամկավարական մամուլը պրոպագանդում է Հայկական ՍՍՌ-ի նվաճումները և դիմակազերծ անում դաշնակցական ստախոսներին։

Ռամկավարական ուղղության առաջադեմ գրող Անդրանիկ Անդրեասյանը իր աշխատություններից մեկում գրել է. «տարակույս չկա, թե ներկա Հայաստանի ստեղծության մեջ բախտորոշող ազդակ մը հանդիսացավ Ռուսական հեղափոխությունը։ Որովհետև, Հոկտեմբերյան հեղաշրջումին արյունալի, ցավագին երկունքեն ծնավ նոյեմբերի 29-ը, որ Մոսկվայի ահով կասեցուց Թրքական բանակին ջարդարար դրոհը Երևանի վրա և մահիկի ու յաթաղանի զարհուրելի վերջնական բնաջնջումեն փրկեց հայ ժողովուրդը»[3]։

3

Բոլշևիկները սիստեմատիկաբար, սկզբունքային դիրքերից քննադատում էին հայ իրականության մեջ գործող ազգային ինքնակյան պարտիայի գործելակերպը։

---

[1] Տե՛ս նույն գրքում, էջ 24—25։

[2] Մեջ է բերվում ըստ Ալ. Մյասնիկյանի «Կուսակցությունները գաղութահայության մեջ» գրքի, էջ 19։

[3] Ա. Անդրեասյան, Խոհեր, Պեյրութ, 1961, էջ 247.

Ստեփան Շահումյանն անդրադառնալով Հնչակյան պարտիայի սոցիալ-քաղաքական բնույթին, 1905 թվականին գրել է, որ «Հնչակյան պարտիան չնայած իր հնամենի սոցիալիստական «պիտակին» և գրական առաջնորդների բարի կամքին, ընդհանուր առմամբ և ամբողջովին վերցրած մինչև այժմ եղել է և մնում է նացիոնալիստական պարտիա...»[1]։ Շահումյանի տված այդ բնութագիրը բխում էր ամենից առաջ նրանից, որ Հնչակյան պարտիայի կազմակերպական սկզբունքները հենում էին ազգային մոմենտից, այսինքն պարտիան կազմված էր ազգային հատկանիշներով, միմիայն հայերից։ Պարտիայի ծրագրի և գործելակերպի մեջ ևս ազգային շեշտն է դրված առաջին պլանի վրա։

Հնչակյան պարտիան հիմնադրվեց 1887 թվականին Ժնևում, մի խումբ հայ ինտելիգենտ էմիգրանտների կողմից։ Նրանք փոխառան ռուսական ռևոլյուցիոն դեմոկրատ Գերցենի «Կոլոկոլ» թերթի անունը և հրատարակեցին «Հնչակ» թերթը, որի անունով էլ կոչվեց պարտիան։

«Հնչակ» թերթն սկսեց պրոպագանդել ռուսական նարոդնիկության գաղափարները ու տակտիկան և այդ տեսանկյունից էլ դնում էր հայերի ազգային-ազատագրության հարցը, առաջ քաշում Արևմտյան Հայաստանում «Հայկական հեղափոխություն» կազմակերպելու ծրագիրը. «Այն ժամանակ,— գրել է Ալ. Մյասնիկյանը,— Հնչակյանները եղել են ազգային-ազատագրական շարժման ղեկավարները»[2]։

Հայ բանվորներին և գյուղացիներին իրենց կողմը գրավելու նպատակով, Հնչակյանները 1890-ական թվականներին սկսեցին թարգմանել հայերեն և տպագրել գիտական սոցիալիզմի առանձին երկեր, «Կոմունիստական Մանիֆեստը» և այլն։

1890-ական թվականներին Հնչակյան պարտիան պառակտվեց երկու մասի՝ արևմտահայ և արևելահայ թևերի, որոնցից առաջինի գլուխ կանգնեցին գրող Արփիար Արփիարյանը, Միհրան Տամատյանը, Անտոն Ռշտունին և ուրիշներ, իսկ երկրորդի ղեկավարներն էին Մաթևոս Սարգսյանը (Փարամազ), Ավետիս և Մարո Նաղարբեկյանները և ուրիշներ։

Արևելահայ թևի վրա իշխում էին Հնչակյան կովկասյան կազմակերպությունները, որոնք հակում ունեին դեպի բանվորական

---

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 3, էջ 429։

[2] Ալ. Մատտունի (Ա. Մյասնիկյան), Կուսակցությունները գաղութահայության մեջ, էջ 101—102։

շարժումը և ձգտում էին համագործակցել ու միաձուլել ՌՍԴԲՊ-ի տեղական կազմակերպությունների հետ։ Սակայն նրանք էլ չէին հրաժարվում անհատական տեռորի տակտիկայից և պարտիայի կառուցման հարցում պաշտպանում էին բունդական-սեպարատիստական սխալ տեսակետը, որը մերժվել էր ՌՍԴԲՊ-ի կողմից։

Արևմտահայ թևը կամ «վերակազմյալ» հնչակյաններն արտահայտում էին Արևմտյան Հայաստանում և արտասահմանյան երկրներում գործող կազմակերպություններում իշխող տրամադրությունները, շարունակում էին նացիոնալիստական գաղափարների քարոզը և սոցիալիզմի գաղափարների մասին լսել չէին ուզում։ Սրանք, դաշնակցականների և ռամկավարների նման, հայկական շարժումը, արևմտահայության ազատագրումը կապում էին միմիայն եվրոպական պետությունների միջամտության հետ։ Այդ հնչակյանները կազմալուծիչ դեր էին կատարում հայ ազատագրական շարժման մեջ։ Նրանք ձգտում էին հայ աշխատավորներին ետ պահել ցարիզմի դեմ մղվող ռևոլյուցիոն պայքարից և սոցիալիզմի գաղափարներից, պայքարում էին ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի դեմ։ Հնչակյանների այդ վնասակար գործելակերպն անողոք քննադատության էր ենթարկվում բոլշևիկ-լենինյանների կողմից։

Հնչակյան պարտիայի նկատմամբ ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատների վերաբերմունքը տարբեր առիթներով արտահայտվել է ՌՍԴԲՊ խորհրդի նիստում, բոլշևիկների 3-րդ համագումարում, Վ. Ի. Լենինի խմբագրությամբ հրատարակված թերթում զետեղված հոդվածների մեջ, Ստ. Շահումյանի նամակներում, որոնք ուղարկվել են Վ. Ի. Լենինին և պարտիայի բարձրագույն օրգանների մի շարք փաստաթղթերում։

1904 թ. հուլիսի 31-ին ՌՍԴԲՊ խորհրդի նիստում քննվել է հայկական հնչակյան պարտիայի հարցը, որին մասնակցել է Վ. Ի. Լենինը, ելույթ է ունեցել և կարծիք հայտնել։ ՌՍԴԲՊ խորհրդի նիստում այդ հարցի մասին զեկուցել է Լ. Մարտովը և հայտնել, որ հնչակյանները դիմել են ՌՍԴԲՊ Կենտկոմին, ցանկություն հայտնելով մտնել ՌՍԴԲՊ-ի մեջ։ Մարտովը հայտնում է, որ այդ հարցով իրեն դիմել է Ա. Նազարբեկը, նա ծրագրել է պարտիայի իր ղեկավարած թևն անջատել տաճկահայերից (որոնք դեմ են միավորմանը) և միավորվել ՌՍԴԲՊ-ի մեջ, որ նրա օրգանը սոցիալ-դեմոկրատական է և այլն. նա առաջարկ է մտցնում խորհրդի նիս-

տում «ցանկություն հայտնել մեր պարտիային հնչակյանների միացման մասին»[1]։

Խորհրդի նիստում հանդես է գալիս Վ. Ի. Լենինը։ Արձանագրության մեջ նշված է, որ «Լենինը միացավ Մարտովի առաջարկին»[2]։ Այնուհետև Լենինը դիտողություն է անում, որ հնչակյանների օրգանը «բոլոր դեպքերում չէ, որ եղել է սոցիալ-դեմոկրատական», ուստի, այդ օրգանի վրա պետք է հաստատել վերահսկողություն[3]։

ՌՍԴԲՊ Խորհուրդը՝ Վ. Ի. Լենինի, Գ. Վ. Պլեխանովի, Լ. Յու. Մարտովի կազմով միաձայն ընդունել է որոշում. «Սովետը հանձնարարում է Կ. Կ.-ին համաձայնության մեջ մտնել պարտիայի Կովկասյան Միության հետ նրա կազմի մեջ ընդունելու «հնչակյանների» այն կազմակերպություններին, որոնք կցանկանան մտնել պարտիայի մեջ»[4]։

Հնչակյան պարտիայի նկատմամբ բոլշևիկների վերաբերմունքի հարցը արծարծվեց նաև ՌՍԴԲՊ 3-րդ համագումարում, որը տեղի էր ունենում Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ։ Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատգամավորներից՝ Ալ. Ջափարիձեն համագումարին ներկայացրած իր զեկուցման մեջ պատմում է դեմոկրատական ուժերը միավորելու գծով բոլշևիկների գործունեության մասին և այդ կապակցությամբ անդրադառնում է հնչակյան պարտիային ցույց տրված վերաբերմունքին։

Ջափարիձեն հաղորդում է, որ Կովկասում «կապիտալիստների վրա ավելի ուժեղ ազդելու համար գործադուլային կազմակերպության մեջ ներգրավվեցին հնչակյանները»[5]։ Այնուհետև ասում է, որ զինված ապստամբություն նախապատրաստելու, ինչպես նաև նոր կոտորածների դեպքում ուժեղացող պրովոկացիաներին և լրտեսներին հակահարված տալու գործում նախաձեռնող կոմիտեի մեջ են ներգրավվում «տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները», որոնց շարքում նշում է նաև հնչակյաններին[6]։

---

[1] «Լենինյան ժողովածու», հատ. 15, էջ 61։

[2] Նույն տեղում։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8 (5-րդ հրատ.), էջ 433։

[4] «Լենինյան ժողովածու», հատ. 15, էջ 62։

[5] «Протоколы третьего съезда», 1937, стр. 345.

[6] П. Джапаридзе, Избранные статьи, речи, письма. М., 1958, стр. 17. (Ժողովածուն կազմել, առաջաբանը և ծանոթագրությունները գրել է Սերգեյ Ստեփանի Շահումյանը)։

Համագումարի ապրիլի 23-ի նիստում նախագահում էր Վ. Ի. Լենինը։ Քննվում էր ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը։ Ջափարիձեն հանդես գալով, ընդգծում է, թե մեզանում, «Կովկասում կան տարբեր ազգային կազմակերպություններ, ասենք «դրոշակիստների» պարտիան և «սաքարթվելիստները»։ Ուրիշ բան է «հնչակիստների» պարտիան, որը ընդունել է մեր ծրագիրը և իր գործունեությունը համաձայնեցնում է մերի հետ»[1]։ Ջափարիձեն համագումարի պատգամավորներին ասում է, թե «սաքարթվելիստների»... դեմ պետք է պայքարել... իսկ համաձայնության մասին առայժմս, համենայն դեպս, նույնիսկ խոսք լինել չի կարող։ Իսկ «հնչակյանների» հետ մենք համաձայնություններ ունեցել ենք, և առաջիկայում էլ անհրաժեշտ է նրանց հետ մտնել համաձայնության մեջ»[2]։ Ջափարիձեն խնդիր է դնում, որ հնչակյանների հետ համաձայնությունը իրականացվի Կենտկոմի ղեկավարությամբ, այլապես, ասում է նա, «մեզ մոտ Կովկասում... Բաքվի կոմիտեն մտել է համաձայնության մեջ «հնչակյանների» հետ, իսկ Թիֆլիսում նրանց ճանաչել չէին ուզում և այդ պատճառով տեղի ունեցան անցանկալի բախումներ»։

Համագործակցության հարցը դնելով, բոլշևիկները նկատի ունեին այն հնչակյաններին, որոնք 1905 թ. ռևոլյուցիայի ժամանակ միացան հակացարական ռևոլյուցիոն պայքարին և իրենց հայտարարեցին սոցիալ-դեմոկրատներ։ Դա տեղի ունեցավ Երևանում, Բաքվում, Բաթումիում և Անդրկովկասի այլ քաղաքներում, որտեղ հնչակյան կոմիտեները սկսեցին համագործակցել տեղական սոցիալ-դեմոկրատական կոմիտեների հետ, և համատեղ հրատարակեցին մի շարք պրոկլամացիաներ, մասնակցեցին գործադուլների կազմակերպմանը և այլն։ Հնչակյան պարտիայի Կովկասյան կազմակերպությունների համագումարը որոշում ընդունեց ՌՍԴԲՊ հետ ավելի մերձենալու, նրա ծրագրին հավանություն տալու մասին։

Հնչակյան պարտիայի կովկասյան կազմակերպությունների կողմից դեպի սոցիալ-դեմոկրատները հանդես բերած մերձեցման մասին 1905 թ. հունվարին Վ. Ի. Լենինին ուղարկած մի նամակում Շահումյանը գրել է. «Շատ հարգելի Վլադիմիր Իլյիչ։ Ուղարկում եմ Ձեզ Նազարբեկի նոր օրգանի մասին մի փոքրիկ հոդված։ Դրժ-

---

[1] П. Джапаридзе, Избранные статьи, речи и письма, М. 1958, стр. 17.

[2] Նույն տեղում, էջ 19։

բախտաբար, առողջությունս թույլ չի տալիս ավելի մանրամասնորեն արտահայտվել ընդհանրապես հնչակյանների և մասնավորապես նրանց օրգանի, ինչպես նաև հայկական շարժման բազմաթիվ այլ հարցերի մասին, որոնց առթիվ պետք էր խոսել մեր թերթում»[1]։

Վ. Ի. Լենինը ստանալով Ստ. Շահումյանի հոդվածը հնչակյանների «Ապագա» թերթի մասին, հավանություն տվեց հոդվածին և այն տպեց բոլշևիկյան «Вперед» թերթի 1905 թ. փետրվարի առաջին իսկ համարներից մեկում։ Վ. Ի. Լենինի կողմից հավանության արժանացած և տպագրված հոդվածում Շահումյանը հաղորդում է, որ հնչակյանները սկսել են հրատարակել «Ապագա» նոր օրգանը, որը «նպատակ է դնում սոցիալ-դեմոկրատական պրոպագանդա մղել Կովկասի հայ բանվորների շրջանում»[2]։

Լենինյան «Վպերյոդ» թերթը ցիտում է հնչակյան «Ապագա» թերթի նյութերը, մասնավորապես Կովկասյան համագումարի որոշումները ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի ընդունած ՌՍԴԲՊ ծրագիրն ընդունելու մասին։ Սակայն Շահումյանի հոդվածում նշված է, որ հնչակյանների համագումարը չի դրել անմիջապես ՌՍԴԲՊ-ի հետ միավորելու գործնական խնդիրը։ Այդ հարցում հնչակյանների համագումարը ընդունեց կիսատ-պռատ որոշում։ «Վպերյոդ»-ում տպված հոդվածում ասված է, որ «Հնչակի» համագումարը որոշել է. «Ընդունել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի ծրագիրը...», այնուհետև «ինչպես նաև ընդունել պարտիայի կազմակերպական կանոնադրությունը, որոնք այսպիսով «Հնչակ» պարտիայի Կովկասյան կազմակերպությունների ծրագիրն ու կանոնադրությունն են դառնում»։ Սակայն համագումարը վերապահում է արել այդ որոշումների անմիջական գործնական կենսագործման հարցում, գտնելով որ «Հնչակի» կովկասյան կազմակերպությունները պետք է առայժմ սահմանափակվեն համերաշխ գործունեություն մղելով Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի հետ միասնական տակտիկայի հողի վրա, միաժամանակ բոլոր ջանքերը գործադրելով որքան կարելի է արագ կենսագործելու միաձուլումը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի հետ։ Որոշման

---

[1] Ստ. Շահումյան, Նամակներ, էջ 21։

[2] Газ. «Вперед», № 7, 1905.

մեջ արտահայտված այդ տարակարծիքությունը քննադատվում է Շահումյանի կողմից[1]։

Լենինյան թերթը ցանկություն է հայտնում, որ հնչակյանները որքան կարելի է արագ ազատվեն իրենց հին, նացիոնալիստական բեռից և մտնեն ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի շարքերը։ Սակայն հնչակյան պարտիայի ղեկավար գործիչները չազատվեցին իրենց ազգայնական գործելակերպից, մնացին նեղ ազգային սահմանափակության շրջանակներում. նրանք չհասան պրոլետարական ինտերնացիոնալիզմի վեհ գաղափարների ըմբռնմանը։

1905 թ. հունիսին Փարիզում տեղի ունեցավ հնչակյանների միացյալ համագումարը։ Հնչակյան կենտրոնը, որ կազմված էր միմիայն նացիոնալիստական տարրերից, դեմ արտահայտվեց ՌՍԴԲՊ-ի հետ համագործակցելուն։ Հնչակյան պարտիայի հին գործիչներից Ավետիս Նազարբեկյանը հետագայում անդրադառնալով այդ շրջանի հարցերին, ընդգծել է, պարտիայի հետագա պառակտման և նացիոնալիստների քայքայիչ գործունեության փասը[2]։

1905—1907 թվականների ռևոլյուցիայի ժամանակ հնչակյան պարտիայի անդամներից շատերը հեռացան հնչակյան կազմակերպություններից և մտան ՌՍԴԲՊ շարքերը։ Օրինակ, Երևանի հնչակյանները 1905 թվականի դեկտեմբերի 18-ի ժողովում քննելով ՌՍԴԲՊ-ի Երևանի կազմակերպության հետ միավորման հարցը, որոշում է ընդունում դատապարտել նացիոնալիստական տարրերի պառակտողական գործունեությունը և միանալ ՌՍԴԲՊ-ի Երևանի կազմակերպության հետ[3]։

Նրանք նվիրվեցին ռևոլյուցիոն-ազատագրական պայքարի այն գործին, որ վարում էր բոլշևիկների պարտիան։ Սակայն հնչակյան պարտիայի այն մասը, որ շարունակեց իր առանձին գոյությունը, մնաց իր նախկին նեղ-ազգայնական դիրքերում և գնաց մոլոր ուղիներով։

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին հնչակյան պարտիան պաշտպանում էր աջ սոցիալիստների քաղաքականությունը։

Հնչակյան պարտիայի ղեկավար կենտրոնը կոչեր հրապարա-

---

[1] Газ. «Вперед», № 7, 1905.

[2] ՏԵ՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 375, ց. 1, գ. 19, էջ 4։

[3] ՏԵ՛ս ՎՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 5, գ. 23, թ. 13։

կեց իմպերիալիստական պատերազմում Անտանտայի կողմը կանգնելու ոգով, ստեղծեց հնչակյան կամավորական ջոկատ, այն տրամադրեց ցարական բանակի դաշտային շտաբին։ Հնչակյանները հավատում էին, թե ռուսական ցարը և սահմանադրական, միապետական բուրժուազիան Կովկասում պատերազմ են մղում նաև «հայերի ազատագրման համար», ուստի իրենց ուժերը նվիրում էին ցարական կառավարությանն օգնելուն[1]։ Դրանով էլ «Հնչակը» դարձավ պաշտպանողական պարտիա, դնաց երկրորդ ինտերնացիոնալի սոցիալ-շովինիստների հետքերով։

Բնորոշ է հետևյալ փաստը։ Հնչակյանների ամենահայտնի ղեկավարներից և տեսաբաններից մեկը, Սաբահ-Գյուլյանը, 1915 թվականին հրատարակած «Արևելյան խնդիր» գրքում պնդում էր, թե Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը պատերազմում «փոքր ազգերի ազատագրության գործի մեջ մեծ դեր են խաղացած»[2]։ Նույն Սաբահ-Գյուլյանը 1916 թվականին Ամերիկայում հրատարակեց «Սոցիալիզմ և հայրենիք» գիրքը, որում զետեղել է Գ. Պլեխանովի, Էդ. Բերնշտայնի, Վ. Վանդերվելդիի, Ա. Բեբելի և երկրորդ ինտերնացիոնալի այլ լիդերների հոդվածները, նվիրված պատերազմի ժամանակ հայրենիքի պաշտպանությանը։ Սաբահ-Գյուլյանը հատուկ սիրով գովերգում է աջ սոցիալիստներին, լիովին համերաշխում նրանց պաշտպանողական քարոզներին, սերտաճելով սոցիալ-շովինիստների հետ։

Սաբահ-Գյուլյանը կոչ էր անում օրինակ վերցնել Պլեխանովից, Բեբելից, Վանդերվելդիից, համագործակցել պատերազմող կապիտալիստների հետ։ Պատերազմի ժամանակ ըստ Սաբահ-Գյուլյանի, «դասակարգային կռիվը կամ մեղմանում, դադար է առնում և կամ բոլորովին չքանում, երկրորդ գծի վրա է անցնում...», դասակարգային կռվի փոխարեն առաջ է քաշում «դասակարգերի համագործակցություն», «հրացան առնելու և պատերազմի դաշտ դուրս գալու» անհրաժեշտությունը[3]։ Այնուհետև նա գրում է. «Բոլոր դասակարգերը, ընկերային բոլոր շերտավորումները, մայրհայրենիքի և նրանից հեռու դտնվող բոլոր հայերը, առանց դա-

---

[1] Տե՛ս ՎՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 2, գ. 3539, թ. 16։

[2] Տե՛ս «Արևելյան խնդիր», էջ Դ, Ե, Զ, Կահիրե, 1915։

[3] Ս. Սապահ-Գյուլյան, Սոցիալիզմ և հայրենիք, պրակ 2, Փրավիդենս, 1916, էջ 14—15։

սակարգի և սեռի խտրության» պետք է գործեն համերաշխ, միասին, «մեկը մյուսին դերազանցելով»[1]։

Վ. Ի. Լենինը և լենինյանները քննադատելով բուրժուական և մանրբուրժուական պարտիաների պատերազմական քաղաքականությունը, դատապարտում էին նաև հնչակյան պարտիայի գործելակերպը և նրա անցումը սոցիալ-շովինիզմի դիրքերը։

Պատերազմի հարցում հնչակյան պարտիայի տակտիկան լիովին համընկավ դաշնակցություն պարտիայի տակտիկայի հետ և ցարական իշխանությանն օգնելու նպատակով երկու պարտիաները հիմնականում վարում էին նույն քաղաքականությունը։ Այդ նկատի ունենալով Ստ. Շահումյանը 1916 թվականին քննադատում էր հայկական ազգային պարտիաների գործելակերպը պատերազմին օժանդակելու հարցում. «Ի՞նչ տվեց հայ ժողովրդին հնչակյան-դաշնակցական քաղաքականությունը, ի՞նչ բարիքներ ստեղծեց հայ ժողովրդի համար,— հարցնում է Շահումյանը և ապա պատասխանում,— միմիայն դժբախտություն, կոտորածներ ու ավերումներ»[2]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան փշրեց ազգային ճնշման շղթաները և ցույց տվեց ճնշված ժողովուրդների ազատագրման ճիշտ ուղին։ Հնչակյան պարտիայի շարքերում եղած առողջ տարրերը ճիշտ դասեր առան սոցիալիստական ռևոլյուցիայից և դրանց հիման վրա վերագնահատման ենթարկեցին իրենց անցյալ գործունեությունը. նրանք հասկացան, ինչպես այդ 1919 թվականին գրել է հնչակյան պարտիայի կովկասյան կենտրոնի օրգան «Գործավոր» թերթը, որ «Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը նոր դարագլուխ, պատմական նոր դարաշրջան է բաց արել համաշխարհային պատմության մեջ»։ Այնուհետև նա հայտարարեց, որ Ռուսաստանի բազկացուցիչ երկրամասերն ու ազգերը ընտրություն անելու դեպքում Դենիկինի և Լենինի միջև ընտրել են Լենինին, որովհետև «նա տալիս է ազգերի իրձերի ոչ միայն մինիմումը, այլ նույնիսկ մաքսիմումը»[3]։

Կովկասյան հնչակյան մասնաճյուղը միակը չէր։ Նրան հետևեցին նաև ուրիշ երկրներում գտնվող հնչակյաններից շատերը։ Այս տեսակետից հատկանշական է Փարիզի հնչակյան մասնա-

---

1 Ս. Սապաճ-Գյուլյան, *Սոցիալիզմ և հայրենիք*, պրակ 2, Փրավիտելնս, 1916, էջ 95։

2 Ստ. Շահումյան, *Երկեր*, հատ. 2, էջ 407—408։

3 Տե՛ս «Գործավոր» թերթը, Թիֆլիս, 24 մարտի 1919։

ճյուղի օրինակը. նա 1921 թվականին Հայաստանի կոմունիստական պարտիայի ղեկավարությանն ուղղած նամակում դրվատելով կոմունիստական պարտիայի իմաստուն քաղաքականության արդյունքները, միաժամանակ շեշտել է, թե «ոչինչ պետք է սպասել Եվրոպայեն, որը միշտ էլ դավաճանել է մեր շահերուն, այժմ ավելի քան երբեք Եվրոպան մեր արյունը կը շահագործե»[1]։

Սակայն հնչակյան պարտիայի բոլոր գործիչները չէ, որ հասկացան այդ ճշմարտությունը։ Նրանցից շատերը ճիշտ եզրակացություններ չհանեցին և շարունակեցին ընթանալ տրորված ուղիներով, սեթևեթելով բուրժուական դիվանագետների հետ։ Ամերիկյան վերակազմյալ հնչակյան կենտրոնը 1919 թվականին ընդունած իր ծրագրում հայտարարեց, որ իր «աշխարհայացքը ազգայնականությունն է» և իրեն հորջորջեց «ամբողջ ազգի կուսակցություն»[2], անընդհատ գունազարդելով իր երբեմնի անցյալը։ Այդ առթիվ տեղին է հիշել Ալ. Մյասնիկյանի խոսքերն այն հնչակյանների մասին, որ սիրում են «տեղի-անտեղի հիշեցնել մեզ իրենց անփառունակ անցյալը, շարունակ խոսել իր նախորդներից, նման Հռոմի սագերի (մեր պապերը Հռոմն ազատեցին)...»[3]։

Հնչակյան արդի գործիչներից մեկը, Արսեն Կիտուրը, անդրադառնալով հնչակյան պարտիայի անցյալին, 1953 թվականին գրած իր «Հանուն արդարության» հոդվածում իրավացի բողոքելով հնչակյան պարտիան դաշնակների հետ նույն շարքը դնելու և «անգլո-ամերիկյան իմպերիալիզմի գործակալություն» որակելու սխալ թեզի դեմ, ինքն էլ ոչ միայն խոհեմություն հանդես չի բերում քննադատաբար վերլուծելու հնչակյանների գործունեությունը, այլև գոհունակությամբ և պարծանքով շեշտում է հնչակյան պարտիայի մոտիկ անցյալի այն կողմը, որ նա «սկսած առաջին համաշխարհային պատերազմեն, ան կեցած է հառաջադիմական պետություններու կողքին, և պայքարած է հետադիմական պետություններու դեմ»[4]։

Հարց է առաջ գալիս, Արսեն Կիտուրը այդ ո՞ր պետությունն է

---

1 Մեջ է բերվում ըստ Ալ. Մարտունիի (Ա. Մյասնիկյան) «Կուսակցությունները գաղութահայության մեջ» գրքի, էջ 103։

2 Տե՛ս «Ծրագիր վերակազմյալ հնչակյան (ազգայնական-ազատական) կուսակցության», Պոսթըն, 1919, էջ 6, 7։

3 Ալ. Մարտունի (Ա. Մյասնիկյան), Կուսակցությունները գաղութահայության մեջ, էջ 115։

4 «1903—1953. Հիսնամյակ Երիտասարդ Հայաստանի, Պոսթըն, 1953, էջ 70։

դասում «առաջադիմականների» շարքը. Նիկոլայ երկրորդ թագավորությո՞ւնը. Կերենսկու բուրժուական կառավարությո՞ւնը. Կլեմանսոյի կաբինե՞տը, թե՞ Լլոյդ Ջորջի գլխավորած անգլիական իմպերիալիստական կառավարությունը, կամ Վիլսոնի կոնգրեսը:

Նրանցից որին էլ նկատի ունենա Արսեն Կիտուրը, միևնույն է: Սակայն կա մի անհերքելի ճշմարտություն, որը մոռանում է պարոն Կիտուրը. այդ ճշմարտությունն այն է, որ նշված պետությունները կամ բոլորովին հաշվի չէին առնում, որ իրենց կողքին «կեցած են հնչակյանները», կամ նրանց, լավագույն դեպքում, օգտագործում էին իրենց իմպերիալիստական շահերի համար:

Բարեբախտաբար հնչակյան պարտիային հարող աշխատավորական խավերի շատ մասը, առողջ տարրերը, ճիշտ դասեր առնելով պատմական փորձից, Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ազդեցության տակ վերափոխվեցին, վերադաստիարակվեցին, ողջունեցին սովետական կարգերի հաստատումը Հայաստանում և կանգնեցին Հայկական ՍՍՌ-ի բարեկամների դիրքերում:

Նկատի ունենալով այդ հանգամանքը և ելնելով կոմունիստական պարտիայի քաղաքականությունից, «որի նպատակն է ամրապնդել կապերն այն բոլոր առաջադիմական կազմակերպությունների հետ, որոնք պայքարում են խաղաղության համար, ռեակցիայի, իմպերիալիզմի և պատերազմի դեմ բոլոր առաջադիմական ուժերի միասնական ճակատ ստեղծելու համար», ՀԿՊ 22-րդ համագումարը անդրադարձավ նաև հնչակյան պարտիային, ըստ արժանվույն գնահատելով նրա ներկայիս առաջադիմական գործունեությունը:

«Ներկայումս, օրինակ, հնչակյան պարտիան վարում է Սովետական Հայաստանին աջակցելու դիծ, պրոպագանդում է մեր ռեսպուբլիկայի նվաճումները, պայքար է մղում դաշնակ թափթփուկների դեմ, հանդես է գալիս իմպերիալիզմի դեմ հանուն խաղաղության...»[1]: Համագումարում նշվեց, որ «մենք ողջունում ենք նրանց հայրենասիրական գործունեության համար», միաժամանակ ՀԿՊ համագումարը միանգամայն տեղին ընդգծեց, որ մենք մտադիր չենք որևէ զաղափարական զիջում անել հնչակյաններին: Իդեոլոգիայի հարցերում համատեղ գոյակցությունը անհամատեղելի է մարքսիզմ-լենինիզմի ոգու հետ:

---

1 Տե՛ս Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը ՀԿՊ XXII համագումարին. Յա. Ն. Զարոբյանի զեկուցումը: Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 122, 123:

* * *

Այսպիսով, պրոլետարիատի դիկտատուրայի համար բոլշևիկների մղած պայքարի ժամանակաշրջանում, բոլշևիկ-լենինյանները քննադատելով հայկական ազգային պարտիաների ծրագրերը և գործելակերպը, ցույց էին տալիս, որ հայ ժողովրդի թե սոցիալական և թե ազգային ազատագրական հարցերը կարող են իրենց լուծումը գտնել միմիայն ռուսական ռևոլյուցիայի հաղթանակի մեջ։ Պատմության փորձը լիովին հաստատեց բոլշևիկյան պարտիայի կողմից հայկական ազգային պարտիաների ծրագրերի ու գործելակերպի քննադատության ճշտությունը։

Հայ իրականության մեջ եղած ազգայնական պարտիաներից բացի, բոլշևիկների դեմ հանդես էին գալիս նաև բանվորական շարժման ներսում դրսևորվող մենշևիկյան, սոցիալիստական և այլ օպորտունիստական հոսանքները, էսեռական-անարխիստական խմբերը և այլ մանրբուրժուական կազմակերպություններ, որոնք ձգտում էին հայ աշխատավորությանը շեղել ռևոլյուցիոն պայքարի ուղուց և տանել մոլոր ճանապարհներով։

Ցարիզմի և կապիտալիզմի դեմ մղված դաժան պայքարում ստուգվեց մի կողմից բոլշևիկյան պարտիայի, և մյուս կողմից ազգայնական բուրժուական ու մանրբուրժուական հոսանքների ծրագրերն ու տակտիկան։ Ազգայնական պարտիաներն ու մանրբուրժուական խմբերն իրենց մերկացրին որպես հակաժողովրդական բնույթի ուղղություններ։ Նրանց ծրագրերը և տակտիկական գործելակերպը քննություն չբռնեցին, սնանկ դուրս եկան։

Այդ բանը քաջ գիտակցեցին ազգայնական պարտիաների նախկին շատ գործիչներ, որոնք դեռևս 1905—1917 թթ. անցան ՌՍԴԲՊ-ի շարքերը, կանգնեցին լենինյան դրոշի ներքո։

Իհարկե, առանձին կամ մի խումբ գործիչների հեռանալը ազգային պարտիաներից չփոխեց այդ պարտիաների բնույթը։

«Անձնավորությունները և խմբերը կարող են անցնել մեկ կողմից մյուսը,— ասում է Վ. Ի. Լենինը,— այդ ոչ միայն հնարավոր է, այդ նույնիսկ անխուսափելի է յուրաքանչյուր խոշոր հասարակական «ցնցման» ժամանակ. հայտնի հոսանքի բնույթը դրանից ամենևին չի փոխվում· չի փոխվում նաև որոշակի հոսանքների գաղափարական կապը, չի փոխվում նրանց դասակարգային նշանակությունը»[1]։

---

1 Վ. Ի. Լենին, Ուրիշի դրոշի տակ, Երկեր, հատ. 21, էջ 183։

Բոլշևիկյան-լենինյան պարտիան մերժեց հայ ժողովրդի ազատագրական պայքարի այն ուղին, որ ընտրել էին ազգայնական պարտիաները, հայ ժողովրդի ազատագրման հարցը դարձրեց ցարիզմի կողմից ճնշված բոլոր ժողովուրդների ազատագրման հարցի անբաժան մասը։ Բոլշևիկյան պարտիան դիմակազերծ արեց իմպերիալիստական պետությունների և նրանց հետ գործակցող ազգայնական կազմակերպությունների հակաժողովրդական քաղաքականությունը։ Նա ցույց տվեց, որ հայ ժողովրդին մեկուսացնելու, հարևան ազգերի հետ թշնամացնելու քաղաքականությունը հակաժողովրդական քաղաքականություն է, որը Հայաստանին և նրա ժողովրդին պատճառել է անհամար դժբախտություններ։

Միայն հայ բոլշևիկ-լենինյաններն էին, որ հայ ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրական պայքարը դիտեցին որպես համառուսական ռևոլյուցիոն պայքարի հզոր հորձանքի մի անբաժան մասը և միայն լենինյան սկզբունքի հաղթանակն էր, որ փրկություն բերեց հայ ժողովրդին։

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՒԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

(1917 — 1920)

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՇՆԱՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐԿԱՅՈՒՄԸ

1

Հայ ժողովրդի բախտը մեծագույն փորձությունների ենթարկվեց համաշխարհային առաջին պատերազմի տարիներին։ Վ. Ի. Լենինը վերլուծելով 1914—1918 թթ. համաշխարհային իմպերիալիստական պատերազմի պատճառները, պատերազմող պետությունների ծրագրերը և դիմված կոնֆլիկտները, անդրադառնալով Ռուսաստանի և Թուրքիայի միջև մղվող պայքարին, հատուկ տեղ էր հատկացնում Հայաստանին։ Պատերազմի Կովկասյան հանդույցի հակասությունների էությունը քննելով, Լենինը լուսաբանել է Արևմտյան Հայաստանի գրավման համար մղված պայքարը։

1915 թվականի մայիս-հունիսին գրած «Հ-րդ ինտերնացիոնալի կրախը» աշխատության մեջ, Վ. Ի. Լենինը նշել է, որ կոնֆլիկտները Բալկանների համար՝ Ավստրիայի և Սերբիայի միջև, Այբանիայի համար՝ Ավստրիայի և Իտալիայի միջև, շուկաների և առհասարակ գաղութների համար՝ Անգլիայի և Գերմանիայի միջև, Հայաստանի ու Կոստանդնուպոլսի համար՝ Ռուսաստանի և Թուրքիայի և այլոց միջև, որ պայթեց 1914—1915 թվականներին իմպերիալիստական կոնֆլիկտներ են[1]։

Վ. Ի. Լենինի հարցադրումից մենք շեշտում ենք հատկապես իմպերիալիստական կոնֆլիկտը Հայաստանի համար՝ Ռուսաստանի և Թուրքիայի *միջև։*

---

[1] *Տե՛ս* «Коммунист» *ժուռնալը, 1915, № 1—2,* (Վ. Ի. Լենին, *երկեր, հատ. 21, էջ 257)։*

Լենինը անողոքաբար դիմակազերծ արեց ցարական Ռուսաստանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, ցույց տվեց, որ «ցարիզմը պատերազմը մղում է Գալիցիան գրավելու և ուկրաինացիների աղատությունը վերջնականապես խեղդելու համար, Հայաստանը, Կոստանդնուպոլիսը գրավելու համար»[1]։

Վ. Ի. Լենինը «թագակիր ավազակ»[2] անվանեց ռուսական կայսրին, որը ձգտում էր գավթել Արևմտյան Հայաստանը։ Բացահայտելով իմպերիալիստական պետությունների միջև կնքված գաղտնի պայմանագրերը, Լենինը հետևյալ կերպ է ձևակերպում նրանց բովանդակությունը. «Դու կստանաս նեղուցները, դու Հայաստանը, դու Գալիցիան, դու՝ Էլզաս-Լոթարինգիան, դու Տրիեստը, իսկ մենք վերջնականապես կբաժանենք Պարսկաստանը»։ Ցարական Ռուսաստանի կնքած պայմանագրերը Վ. Ի. Լենինը համարել է պայմանագրեր, որոնք «ամենաավազակային ճանապարհով կնքել է Նիկոլայ Արյունարբուն»[3]։

Վ. Ի. Լենինը իր «Հ-րդ ինտերնացիոնալի կրախը» նշանավոր աշխատության մեջ մերկացրեց իմպերիալիստների գավթողական ծրագրերը պաշտպանող սոցիալ-դեմոկրատներին, որոնք վերածել էին սոցիալ-շովինիստների։ Լենինը հատկապես շեշտում էր, որ ռուսական սոցիալիստները շատ անգամ են մերկացրել ցարիզմի նվաճողական ծրագրերը Հայաստանի նկատմամբ, որի մասին Պլեխանովը լռում է։ Ռուսաստանի կողմից մղվող պատերազմի էությունը քննելով, Լենինը 1915 թվականին այն բնութագրում է որպես անդուսպ ձգտում՝ գավթել Հայաստանը և այլ տերիտորիաներ, որպես ցարիզմի և պուրիշկևիչների խարդավանք՝ Հայաստանում և այլուր[4]։ Անողոքաբար անարգելով մենշևիկ-սոցիալ-շովինիստներին, Վ. Ի. Լենինը հերքում է իմպերիալիստների արդումենտները նոր տերիտորիաների գրավման և միավորման անհրաժեշտության մասին, որն իբր թե անհրաժեշտ էր Ռուսաստանի զարգացման համար։ «Ունեցե՞լ է արդյոք արիություն մեր բաջ Պլեխանովը նախապես հռչակելու թե Ռուսաստանի զարգացման համար անհրաժեշտ է նվաճել Գալիցիան, Ցար-

---

[1] Տպված է «Социал-демократ» թերթի 1915 թ. հրատ. բրոշյուրում (Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 388)։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 24, էջ 515։

[3] Նույն տեղում, էջ 516։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 335։

դրադը, Հայաստանը, Պարսկաստանը և այլն»[1]։ Այդպես էր դնում հարցը Վ. Ի. Լենինը 1915 թ. փետրվարի 1-ին «Սոցիալ-դեմոկրատ»-ի մեջ տպած իր հոդվածում և ցույց տալիս, որ ռուսական բուրժուազիան անգլո-ֆրանսիական բուրժուազիայի հետ է միացել, որ «ռուսական կապիտալն անգլո-ֆրանսիական կապիտալի մասնակիցն է։ Ռուսաստանը պատերազմ է մղում Հայաստանը, Թուրքիան, Գալիցիան թալանելու համար»[2], ռուսական բուրժուազիան պատերազմ է մղում «ցանկանալով հարստանալ Հայաստանի, Կոստանդնուպոլսի, Գալիցիայի և ուրիշների կողոպտումով»[3]։

Լենինի երկերից կարելի է բերել նաև շատ ուրիշ քաղվածքներ, որոնց մեջ շեշտակի ընդգծված է ռուսական ցարական կառավարության և նրան դաշնակից Անտանտի մյուս պետությունների, մասնավորապես անգլիական ու ֆրանսիական կառավարությունների՝ Հայաստանի նկատմամբ վարած քաղաքականության իմպերիալիստական, զավթողական, ավազակային բնույթը։

Վ. Ի. Լենինը հետազոտել, բացահայտել և քննադատել է նաև գերմանա-ավստրա-թուրքական եռյակ պետությունների քաղաքականության իմպերիալիստական բնույթը, մասնավորապես Հայաստանում այդ «դաշնակից» պետությունների կիրառած ծրագրերի ավազակային, կողոպտչական նպատակները։

Այդ հարցը կարևոր է դնել, նկատի ունենալով, որ պատմագրության մեջ կան կարծիքներ, որոնք Թուրքիան համարում են ինքնուրույն քաղաքականությունից զուրկ պետություն, որն իբր թե պատերազմի ժամանակ միայն «անմեղ զոհ» էր և Հայաստանում թուրքական կառավարության կիրառած քաղաքականությունը հանդիսանում էր սոսկ որպես պատասխան Թուրքիային «սպառնացող» վտանգի հանդեպ։ Մոտավորապես այդ կոնցեպցիան է տեղ գտել Ա. Զայոնչկովսկու «Мировая война 1914—1918 гг.» գրքում (1932), Ա. Ֆ. Միլլերի «Очерк новейшей истории Турции» գրքում (1958) և նույն հեղինակի ուրիշ հոդվածների մեջ[4]։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 139։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 448։

3 Նույն տեղում, էջ 474։

4 Նկատի ունենք պրոֆ. Ա. Ֆ. Միլլերի «Вступление Турции в первую мировую войну» հոդվածը, տե՛ս «Известия АН СССР», № 4, 1946, стр. 321, ինչպես նաև «Всемирная история» գիտական մեծ հրատարակության VIII հատորում (14, 117, 448, 454 և այլ էջերում) տեղ գտած առանձին կոնցեպցիաներ, որոնք ճիշտ չեն։

Այդ տեսակետին է հանգում «Раздел Азиатской Турции» փաստաթղթերի ժողովածուի ներածական ընդարձակ հոդվածի հեղինակը[1], որտեղ վերլուծելով Թուրքիայի բաժանման վերաբերյալ իմպերիալիստական պետությունների գաղտնի պայմանագրերը և մերկացնելով այդ գավազրությունը, բոլորովին անտեսում է Թուրքական կառավարության դերը պատերազմի մեջ որպես կայսերական Գերմանիայի դաշնակցի և ակտիվ ագրեսորի Կովկասի ու մասնավորապես Հայաստանի նկատմամբ։ Իսպառ չի խոսվում նաև Թուրքիայի կառավարության ավանտյուրիստական ծրագրերի մասին։

Ուստի լսենք Վ. Ի. Լենինին, թե ինչպես էր նա գնում Գերմանիայի դաշնակիցների, նրանց թվում և Թուրքիայի հարցը։

1914 թվականի ամառը Վ. Ի. Լենինի գրած «Պատերազմը և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան» մանիֆեստում խոսվում է պատերազմող երկու խմբերի մասին, Գերմանիայի և նրա դաշնակիցների (Թուրքիա և Ավստրո-Հունգարիա) և Անգլիայի-Ֆրանսիայի-Ռուսաստանի ու նրանց դաշնակիցների մասին[2]։

1915 թ. հուլիսին գրած «Սոցիալիզմը և պատերազմը» գրքում Վ. Ի. Լենինը դարձյալ անդրադառնում է պատերազմող Անգլիայի ու Գերմանիայի կառավարություններին՝ «նրանց այժմյան դաշնակիցներով հանդերձ»[3]։

Անդրադառնալով պատերազմող պետությունների խմբերի ներքին գաղտնի պայմանագրերի բնույթին, Վ. Ի. Լենինը նշել է, որ «Գերմանական ավազակ կապիտալիստների և նրանց ավազակ կայսր Վիլհելմի պայմանագրերն իրենց դաշնակիցների հետ» նույնպիսի ոճրագործ, կողոպտչական պայմանագրեր են, ինչպես այն պայմանագրերը, որոնք կնքել էր ցար Նիկոլայ Ռոմանովը Անգլիայի ու Ֆրանսիայի կապիտալիստների հետ Կոստանդնուպոլիսը, Արևմտյան Հայաստանը և Գալիցիան գրավելու համար։

Այսպիսով, Վ. Ի. Լենինը մի կողմից ցույց էր տալիս Թուրքիայի բաժանման ծրագրերի իմպերիալիստական ոճրագործ բնույթը, մյուս կողմից բացահայտում Վիլհելմ կայսրի և նրա թուրք դաշնակիցների միջև եղած պայմանագրերի ավազակային բնույթը։ Իսկ Վիլհելմյան Գերմանիայի դաշնակիցների մեջ Թուր-

---

[1] Տե՛ս «Раздел Азиатской Турции по секретным документам», М., 1924, под ред. Е. А. Адамова.

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 17—19։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 389։

քիան հանդես էր գալիս ոչ վերջին տեղում, ուներ իր ագրեսիվ, ավազակային պլանները։

Դեռևս 1912 թվականին Թուրքական բանակի շտաբը մշակել էր առաջիկա ռազմական գործողությունների պլանը դեպի Անդրկովկաս։ Դա մի ավանտյուրիստական, ավազակային պլան էր։ Այդ պլանի մի վարիանտում ասված է.

«Հարձակումն սկսել հետևյալ ուղղությամբ. 11 և 12-րդ բանակային կորպուսները, որ գտնվում են Պարսկաստանի սահմանում, Մակուի վրայով կգնան... շրջանցելով Արարատ սարը, կհարձակվեն Շահթախթի վրա, հեշտությամբ կմտնեն Նախիջևան, պարզացնելով հարձակումը, կգրավեն Երևանը, Անդրկովկասը, Կովկասը»[1]։

Թուրքական բանակի ստրատեգները, հույս էին դրել ռուսական բանակի թիկունքի տեղական բնակչության «ապստամբությունների» վրա, ինչպես նաև այն բանի վրա, թե արևմտյան ճակատում, հատկապես Լեհաստանում, Ավստրո-գերմանական բանակների հարձակումը «կթուլացնի ռուսական բանակը և կխորտակի պետությունը»[2]։

Ահա թե ինչպիսի ախորժակ ունեին Թուրքական զավթիչները։

1914 թ. օգոստոսի 2-ին, այսինքն համաշխարհային պատերազմն սկսելու երկրորդ օրը, Թուրքիան կայսերական Գերմանիայի հետ գաղտնի պայմանագիր ստորագրեց Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ մտնելու և Սև ծովում ու Անդրկովկասում հարձակման անցնելու մասին[3]։ Թուրքական բանակի գլուխ կանգնած էին գերմանական տասնյակ գեներալներ Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ։ Թուրքիան Ռուսաստանի դեմ պատերազմ սկսեց 1914 թվականի հոկտեմբերին, Սև ծովում և Կովկասյան ուղղությունում։

Հայաստանը դարձավ պատերազմի թատերաբեմ՝ երկու բանակների գործողությունների համար։ Ցարական բանակը ձգտում էր գրավել Արևմտյան Հայաստանը, Թուրքական բանակը՝ Արևելյան Հայաստանը և շատ ավելին։

---

[1] Տե՛ս ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 85, գ. 107, թ. 90—91։

[2] Նույն տեղում։

[3] Հիշենք, թե ինչպես Թուրքիան հիտլերյան պետության հետ դաշինք կնքեց 1941 թ. հունիսի 18-ին, Գերմանիայի կողմից ՍՍՌՄ-ի վրա հարձակվելու նախօրյակին և կնոջ չեզոքություն պահպանելով, իրականում պատրաստվում էր ավազակային հարձակում գործել սոցիալիզմի երկրների վրա, նրա մասերը զավթելու նպատակով։

Համաշխարհային իմպերիալիստական պատերազմն սկսելու առաջին օրերին Վ. Ի. Լենինը գրեց մի խումբ ռուս սոցիալ-դեմոկրատների խորհրդակցության բանաձևը, որում ընդգծեց պատերազմի մասնակցող պետությունների ձգտումը՝ ճնշել երկրի ներսում դեմոկրատական և ռևոլյուցիոն շարժումները, խաբել և հիմարացնել պրոլետարիատին, բաժան-բաժան անելու ազգերին և մի ազգի վարձու ստրուկներին դրդռելու մյուսի դեմ[1]։ Լենինը գրում էր պատերազմող պետությունների գաղանությունների և «անվերջ դաժանությունների»[2], ռազմաբեմերում մարդկային սպանդի մասին։

Ժողովրդին խաբելու, նրա նկատմամբ դաժանություններ և գաղանություններ գործադրելու, երկրում իսկական մարդկային սպանդ սարքելու մասին Վ. Ի. Լենինի խոսքերն ամբողջովին վերաբերում են ամբողջ հայ ժողովրդին ու Հայաստանին։

Անտանտի գլխավոր պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները հանդես եկան Հայաստանը և հայ ժողովրդին «պաշտպանելու» մեծամեծ խոստումներով։ Ցարական կառավարությունը և նրա դաշնակիցները հավաստիացնում էին հայ ժողովրդին, որ նրանց մղած պատերազմի կարևոր նպատակներից մեկը Թուրքահայաստանի ազատագրումն է։ Հայ ժողովուրդը հավատում էր դաշնակից պետությունների կառավարությունների այդ հավաստիացումներին։

Ռուսաստանի հայերից ցարական բանակում 1915 թ. հաշվվում էր (պարտադիր զորահավաքի օրենքով) 120.000 զինվոր, որից 80.000 գտնվում էր ավստրո-գերմանական ռազմաճակատում և 40.000 մարդ Թուրքական ճակատում[3]։ Բացի այդ, հազարավոր հայեր էին կանչվել Ֆրանսիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի և Անտանտի բլոկի այլ պետությունների բանակները։

Համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքական տիրապետություններում ապրող ճնշված ժողովուրդների մեջ աշխուժացան հակաթուրքական ազգային-ազատագրական շարժումները։ Գլուխ բարձրացրեց ամբողջ արաբական արևելքը, ձգտելով դուրս գալ օսմանյան միապետության գերիշխանությունից, ձեռք

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 4։

[2] Նույն տեղում, էջ 19։

[3] Տե՛ս Վրաստանի ԿՊՊԱ, ֆ. 2 (գ), գործ 3595, թ. 25—28։

բերել անկախություն։ Արաբական երկրների ժողովուրդների հակաթուրքական շարժումները գլխավորում էին արաբական երկրների ազգային լիդերները։ Թեև Անգլիայի և Ֆրանսիայի գործակալներն աշխատում էին արաբական կախյալ ժողովուրդների շարժումներն օգտագործել իրենց նպատակների համար (գնդապետ Լոուրենսի միսիան) և ամրապնդել իրենց տիրապետությունը Մերձավոր Արևելքում, սակայն արաբների ազատագրական շարժումներն ունեին այլ նպատակ՝ այն էր դուրս գալ իմպերիալիզմի տիրապետությունից և հատկապես օսմանյան ռեժիմի ճիրաններից, հասնել անկախության և դեմոկրատական կարգերի հաստատման։

Գրեթե նույն երևույթն էր տեղի ունենում նաև Հայաստանում։ Օսմանյան միապետության լծի տակ գտնվող արևմտահայ ժողովուրդը երազում էր հասնել ազգային անկախության և ինքնուրույնության։ Արևմտահայերի ազատագրական շարժումները լայն արձագանքներ էին գտնում նաև Ռուսաստանի և Կովկասի հայերի մեջ։ Սակայն համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Թուրքիան մտավ պատերազմի մեջ ընդդեմ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի, երբ գերմանական դիշատիչ իմպերիալիզմի հետ դաշնակցած հանդես եկավ նոր տերիտորիաներ զավթելու ծրագրերով, Թուրքիայի հայ բնակչությունը լոյալ դիրք բռնեց, թեև Հայաստանի բնակչությունը վաղուց համակված էր ազգային-ազատագրական գաղափարներով։ Այդ ներքուստ իշխող, բայց խիստ զսպված տրամադրությունները փորձեցին օգտագործել հատկապես հայկական ազգային պարտիաները և ռուսական իշխանությունները, կազմակերպելով հայկական կամավորական ջոկատներ և դրանք ուղարկելով կովկասյան ճակատ։ Հայ երիտասարդության մի որոշ մասը հին տրադիցիաներին հավատարիմ, նորից կանգնեց ռուսական բանակի դրոշի ներքո, ունենալով իր ուրույն ազգային-ազատագրական ծրագիրն ու սպասելիքները։

1914 թվականի վերջերին և 1915 թ. սկզբներին կամավորական շարժման պրոպագանդան տարածվեց հայ բնակչության մեջ։ Կամավոր գրվող երիտասարդները, փոքրիկ խմբերով հավաքվում էին Կովկասից, Ռուսաստանից, գալիս էին նույնիսկ Հյուսիսային և Հարավային Ամերիկայից, Իրանից։ Էջմիածնի հոգևոր ճեմարանի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի և Մոսկվայի, Պետրոգրադի, Կիևի համալսարանների հայ ուսանողներից բավական երիտասարդներ նույնպես մտան կամավորական ջոկատների մեջ։ Բայց

և այնպես, ընդհանուր առմամբ, այդ կամավորական ջոկատները միասին հավասար էին ռուսական երկու գնդի, այսինքն՝ շուրջ 10000 մարտիկ[1]։

ՌՍԴԲՊ տեղական կազմակերպությունները, Անդրկովկասի բոլշևիկները՝ Ստ. Շահումյանի գլխավորությամբ, սկզբից ևեթ բացասաբար վերաբերվեցին կամավորական շարժմանը, այն համարելով նաև որպես օժանդակություն գաղութարար ցարիզմին և հավելյալ գրգռիչ ուժեր թուրքական բռնակալների համար։

Վատ զինված և վատ հագնված, կիսաքաղց կամավորները արհամարհելով մահն ու դժվարությունները, մեկնեցին ռազմաճակատ, ցարական բանակի հետ միասին «փրկելու Հայաստանը»[2]։

Սակայն հայերին ազատագրելու և նրանց սպառնացող վտանգներից պաշտպանելու մասին Անտանտի պետությունների կառավարությունների հավաստիացումները խաբուսիկ էին։ Պատերազմը հայ ժողովրդին, հատկապես ողջ արևմտահայությանը, բերեց մեծ արհավիրք, բռնի գաղթ և մասսայական կոտորած, նույնիսկ Արևմտյան Հայաստանից դուրս, հեռավոր վիլայեթներում ու մայրաքաղաք՝ Պոլսում։

Հայ ժողովրդի պատմական բախտի նշանավոր հետազոտողներից մեկը, ռուս բանաստեղծ Վալերի Բրյուսովը խոսելով 1915 թվականի հայ բնակչության տեղահանման և բնաջնջման մասին, շեշտում էր, որ այդ աներևակայելի դաժանությունները ոչ մի «պետական անհրաժեշտություն» չէին, ինչպես պատճառաբանել են նրա նախաձեռնողները, որ ոչ ոք չի կարող արդարացնել «մասսայական ջարդերը և ամբողջ նահանգների ամայացումը»։ Բրյուսովը նշել է, որ ոչ թե ֆանատիկ, այլ ռեալ հաշվումները ցույց են տվել, որ պատերազմի սկզբին Թուրքիայի նահանգներում գլխատումից, սպանություններից, սովից, հյուծումից, հրկիզումներից և անապատներն աքսորելուց զոհվել է մեկ միլիոնից ավելի հայ բնակչություն, իսկ ուրիշ աղբյուրներ էլ ցույց են տալիս երկու միլիոն մարդ[3]։

Մարքսիստ-լենինյաններն ինչպիսի՞ բացատրություն էին տալիս այդ եղեռնին։ Ո՞րն էր հայ բնակչության տեղահանման և ջարդերի գլխավոր շարժառիթը և հիմնական պատճառը։

---

[1] Վրացական ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 9, գ. 81, թ. 99։

[2] Նույն տեղում, ֆ. 2 (գ), գործ 3595, թ. 25—28։

[3] В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, стр. 115.

Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտներից և բոլշևիկյան պարտիայի ականավոր գործիչներից մեկը՝ Ս. Մ. Կիրովը, աշխատելով Կովկասում, մոտիկից տեղյակ էր Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին և դեռևս 1915 թվականի վերջերին և 1916 թվականի սկզբներին հանդես եկավ հոդվածներով, որոնց մեջ ելնելով Վ. Ի. Լենինի ընդհանուր թեզերից ու դրույթներից, բացատրեց հայկական եղեռնի պատճառները և տվեց նրա գնահատականը։ Կիրովը գրեց «Տառապյալ ժողովուրդ» հոդվածը, որի մեջ փաստեր է բերում Հայաստանում տեղի ունեցած դաժանությունների մասին։ «Թուրքերը փայփայում են մի հրեշավոր երազանք,— գրում էր Ս. Մ. Կիրովը 1916 թ. հունվարին,— բնաջնջել ամբողջ հայ բնակչությունը։ Այդ մասին մենք լսում ենք միանգամայն պաշտոնական հայտարարություններ»[1]։ Կիրովը գրել է, որ «Թուրքիայի հետ պատերազմի առաջին օրերից մենք գիտենք, որ թուրքերն աներևմտորեն արդարացնում են կատարված խայտառակությունը։ Օր-օրի Թուրքահայաստանից գալիս են միևնույն մղձավանջային տեղեկությունները։ Թե ի՞նչ են արել այնտեղ թուրքերն, այդ չեն կարող պատմել հայ կանանց և երեխաների արցունքները, իսկ բարբարոսների ձեռքով աներևակայելի սարսափներ և տառապանքներ վերապրած խաղաղ հայ բնակչության թափած արյունը տալիս է միմիայն որոշ, հնարավոր պատկերացում հայ ժողովրդի գողգոթայի մասին»[2]։ Անդրադառնալով պատերազմի պատմության և հայ ժողովրդի վերապրած աղետի մասին պատմագրության մեջ տեղ հատկացնելուն, Ս. Մ. Կիրովն ասում է. «Այդ պատկերը կմտցնեն մեծ պատերազմի պատմության մեջ, բայց ոչ ամենքն ուժ կունենան ուշադիր կանգ առնել դրա վրա, որովհետև դա կլինի մի համատարած մղձավանջ»։

Ականավոր լենինյան Կիրովը գրում էր, թե դժվար է լիովին բնդգրկել և ներկայացնել հայ ժողովրդի տառապանքները, որ «թերևս հետագայում, երբ մարդկային արյան գետի հոսանքը կկանգնեցվի, նոր Դանտեն կպատկերացնի միլիոնավոր մարդկանց տանջանքները»[3]։

Նույն մտքերով և տպավորություններով են հագեցած նաև Կիրովի ուրիշ հոդվածներ։ Ամբողջ հոգով ու սրտով ապրելով հայ

---

1 «Терек» թերթ, 1916, № 417։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

ժողովրդի ծանր վիճակը, Կիրովն անդրադարձել է գաղթականների հարցին, նրանց, ովքեր հրաշքով փրկվելով Թուրքական սրից, եկել էին Կովկաս և Ռուսաստան ու ապաստան էին որոնում։ Նրանց մասին Կիրովը գրել է. «Երեխաները կորցրել են իրենց հայրերին, քույրերը չգիտեն թե ո՞ւրտեղ են գտնվում իրենց եղբայրները, կործանվել են ամբողջ ընտանիքներ և կորստյան է մատնվել նրանց ամբողջ ունեցվածքը։ Դրությունն իրոք որ սարսափելի է...»[1]։ Սրտի անհուն կսկիծով է Կիրովը խոսում հայ կանանց և երեխաների մասին. «Գաղթականների տրամադրությունը ծանր է, հիվանդոտ, կեղտոտ, քրքրված շորերով նրանք նայում են շրջապատողներին։ Նրանց աչքերը որ լեցուն են վշտով, երբեմն նույնիսկ արտահայտում են ցասում։ Առանձնապես ծանր էր տեսնել երեխաներին, որոնք թոշնած և անտարբեր էին, միշտ տխուր, անսիրալիր»։

Ս. Մ. Կիրովը ռուսական հողի մարդկանց, ռուս հասարակությանը կոչ է անում օգնել գաղթականներին և թեթևացնել նրանց վիշտը. «Անհրաժեշտ է զգուշություն և սրտագին ջերմ մոտեցում նրանց նկատմամբ, որպեսզի գոնե որոշ չափով մեղմացվի նրանց դժբախտությունը... Նրանք այնտեղ, Հայրենիքում կորցրել են ամեն ինչ, կարողացել են պահպանել միայն իրենց կյանքը և այստեղ, մեզ մոտ պետք է գտնեն մնացածը։ Չէ՞ որ նրանք մեզ մոտ են գալիս այն վայրերից, որտեղ ուղում են նրանց բնաջնջել, իսկ մենք պետք է նրանց դիմավորենք և ջերմացնենք»։ Այս էր Կիրովի կոչը։

Նա գրում է, որ Թուրքիան այդ ոճրագործությունը կատարում է իր դաշնակից Գերմանիայի աչքի առաջ, նրա հավանությամբ, այն բանի համար, որ հայերը արգելք են հանդիսանում գերմանական պլաններին՝ նվաճել Թուրքիան և Մերձավոր Արևելքը, իսկ մենք կավելացնենք՝ ինչպես նաև թուրքական պլաններին—նվաճել Անդրկովկասը։ Այդ կապակցությամբ տեղին է հիշել թուրքական գեներալ Ալի Իխսան փաշայի մի հայտարարությունը. «Երբ շինեին հայերը, մենք կգրավեինք Կովկասը»[2]։

Հայ ժողովրդի նկատմամբ Թուրքական կառավարության կիրառած քաղաքականության մերկացմամբ հանդես է եկել Վ. Ի.

---

[1] Տե՛ս «Терек» թերթը, 25 փետրվարի 1916 թ.։

[2] Henry Adams gibbons, Armenia in the World war, New York, 1026, p. 127.

Լենինի հայ աշակերտներից Ա. Ի. Միկոյանը՝ ռևոլյուցիայի տարիներին։ Նա գրել է, որ մինչև համաշխարհային առաջին պատերազմը, Արևմտյան Հայաստանում հայերը կազմում էին բնակչության սոլիդ տոկոսը և հայերի ազգային ազատագրական շարժումները ընդդեմ թուրքական ֆեոդալական-բռնակալական ռեժիմի օբյեկտիվորեն հանդիսանում էր ռևոլյուցիոն գործոն[1]։

Միկոյանը շեշտել է, որ Հայկական հարցը շատ անհանդուրժացնում էր Թուրքական կառավարությանը, որը որոշեց այդ հարցը «լուծել արմատապես...», այսինքն «Թուրքական կառավարությունը հաստատակամորեն կիրառեց Թուրքահայաստանի տերիտորիայում ապրող հայերին ամբողջովին կռապաշտաբար ոչնչացնելու քաղաքականություն, կրակին ու սրին մատնելով մեկ միլիոնից ավել մարդու»[2]։

Հայ ժողովրդի նկատմամբ Թուրքական կառավարության գործադրած բնաջնջման քաղաքականության մերկացմամբ հանդես եկավ Վ. Ի. Լենինի գաղափարական, մարտական զինակից, գերմանական պրոլետարիատի առաջնորդ Կարլ Լիբկնեխտը։ Նա արիաբար դիմակազերծ արեց համաշխարհային պատերազմի կազմակերպողներին, անարգանքի սյունին գամեց կայսերական Գերմանիայի կառավարողներին ու նրանց թուրք ու ավստրիացի դաշնակիցներին։

Լիբկնեխտը ռազմաճակատից Բեռլին մեկնելով, 1916 թվականի հունվարի 11-ին Ռայխստագի նիստում հանդես եկավ Հայաստանի վիճակի, հայ ժողովրդի նկատմամբ գործադրվող դաժանությունների մասին հարցապնդումներով։ Լիբկնեխտը պահանջեց, որ կանցլերը բացատրություն տա իր դաշնակից Թուրքական կայսրության մեջ հարյուր-հազարավոր հայ բնակչության տեղահանման և սպանությունների մասին։ «Ի՞նչ քայլեր է արել դաշնակից թուրք կառավարության առաջ կանցլերը,— ասել է Լիբկնեխտը ռայխստագի նիստում,— որպեսզի հատուցում ձեռք բերի դրա համար, որպեսզի մարդավարի դրություն ստեղծի մնացած հայ ազգաբնակչության համար Թուրքիայում և որպեսզի

---

[1] Ա. Միկոյանի չհրապարակված զեկուցագրից, որը կազմվել է 1919 թվականին «Կովկասյան հարցի վերաբերյալ», որի մեջ կա հատուկ բաժին «Հայկական հարցի մասին» (փաստաթուղթը գտնվում է ՄԼԻ Ադրբեջանական ֆիլիալի պարտաբիտիվում)։

[2] Նույն տեղում։

առաջն առնի նման սարսափելի կրկնության»[1]։ Առաջին հարցապնդումին տրված պատասխանները լսելուց հետո Կարլ Լիբկնեխտը կրկին ձայն է խնդրում և հենվելով պրոֆ. Լեպսիուսի վրա. հայտնում է, որ Թուրքիայում հայ բնակչության այդ վիճակի պատասխանատվությունն ընկնում է գերմանական կառավարության վրա։ Ռայխստագի նախագահը հանդիսարին արգելում է ծավալվել այդ հարցի շուրջը և նրան թույլ չի տալիս շարունակել իր ճառը։

Ռայխստագի նիստում Կարլ Լիբկնեխտի հարցապնդմանը պատասխանելու համար հանդես եկող գաղտնի խորհրդական բարոն ֆոն Շտամմը հայտարարում է, որ Հայաստանում ապրստամբություն է տեղի ունեցել, որն իբր առիթ է տվել թուրքական կառավարությանը «արտաքսել հայ բնակչությանը որոշ շրջաններից նոր բնակավայրեր», և որ գերմանական ու թուրքական կառավարությունների միջև «կարծիքների փոխանակություն է» տեղի ունեցել այդ մասին, և վերջապես, որ «հետագա մանրամասնությունները չեն կարող հաղորդվել»[2]։

Բարոն ֆոն Շտամմը կրկնելով գերմանական ուրիշ հայատյացների և նրանց թուրք դաշնակիցների՝ Էնվերի, Թալեաթի և Ջեմալի հորինած վերսիաները, փորձում էին ցրել Կարլ Լիբկնեխտի հարցապնդումների տպավորությունը, ցույց տալ, որ իբր թե հայերն իրենք են մեղավոր կոտորածների համար, որ նրանք չկազմակերպեին կամավորական խմբերը և վանում հայերը չդիմեին զենքի, թուրքերը նրանց ձեռք չէին տալու։ Այդ պատասխանը կեղծիք էր։

Թուրքիայում հայերի մեթոդիկ ջարդեր տեղի էին ունենում դարերի ընթացքում, այն սև օրերից սկսած, երբ հայ ժողովուրդը բաժան-բաժան եղավ և ընկավ թուրքական լծի տակ, երբ նրա շարքերում դեռ չկային քաղաքական պարտիաներ և նա չէր ծավալել կամավորական շարժում։ Եվ վերջապես, վերը բերված տվյալներից մենք տեսանք, որ կամավորների թիվը կազմում էր մի քանի հազար մարդ, մինչդեռ անկախ այդ շարժումից, պարտադիր զինվորական ծառայության օրենքով, հայերից միայն ռուսական բանակ կանչվածների թիվը ավելի էր 10—11 անգամ՝ շուրջ 120.000 մարդ։

---

[1] Կարլ Լիբկնեխտի ելույթները բերվում են ըստ Կոպենհագենի «Կ. Մ.» թերթակցի հաղորդման, որը տպվել է «Մշակ»-ում, 22 հունվարի 1916 թ.։

[2] Նույն տեղում։

Քիչ չէին հայերը նաև օսմանյան բանակում։ Չէ՞ որ տասնյակ հազար հայ զինվորներ և նավաստիներ, հարյուրավոր հայ սպաներ պատերազմի սկզբից զորակոչվեցին Թուրքական բանակից, արտաքսվեցին կամ սպանդանոց ուղարկվեցին։ Դրանցից ոչ մեկը չի «ապստամբվել»։

Նույնը պետք է ասել նաև Վանի բնակչության 1915 թվականի հերոսական մարտերի մասին։ Այնտեղ ժողովուրդը տեսնելով Թուրքական ոստիկանության և կանոնավոր զորքի գործադրած բռնությունները, բնակչության տեղահանումը, կողոպուտը և այլ դաժանություններն ու գազանությունները, դիմեց ինքնապաշտպանության, որը վերածվեց հերոսական դիմադրության։ Դրա շնորհիվ միայն Վանի վիլայեթի և հատկապես Վան քաղաքի բնակչության որոշ մասը կարողացավ փրկվել կոտորածից և ռուսական բանակի օգնությամբ անցավ Կովկաս և Ռուսաստան։

Իսկ ի՞նչ կատարվեց Կոստանդնուպոլսում, որտեղ հայերը հեռու էին կամավորական շարժումից և ապստամբությունից։

1914 թվականին Կոստանդնուպոլսում ապրում և աշխատում էին հայ ինտելիգենցիայի հազարավոր ներկայացուցիչներ, որոնցից նշենք մի քանի ճյուղերի մասնագետների. ուսուցիչներ՝ 176, էարտարապետներ՝ 67, նկարիչներ՝ 168, երաժիշտներ (կատարողներ և ստեղծագործողներ միասին վերցրած)՝ 565, գրողներ՝ 196, իրավաբաններ՝ 160, դերասաններ՝ 64, բժիշկներ և ատամնաբույժներ՝ 300 և այլն[1]։ Ինտելիգենցիայի այդ ստվար զոկատը կառուցում էր տներ, դպրոցներ, ստեղծում էր հոգևոր կուլտուրա, սպասարկում հայ և թուրք բնակիչների կուլտուրական պահանջները։ Այդ ժամանակ Պոլսում ոչ մի «խռովություն» և ոչ մի «դավադրություն» չի եղել։ Ուստի «Երիտասարդ Թուրքերի» կազմակերպած հայկական եղեռնը բացատրել հայկական ազատագրական շարժման «հանցանքով», նշանակում է կեղծել պատմությունը, որը վաղուց կատարում են Թուրքական ռեակցիոն պատմագիրները։

Հայկական եղեռնի ելակետային պատճառի մասին Երիտասարդ Թուրքերը շատ անգամ ասել են բացեիբաց։ «Թան» պաշտոնաթերթը սուրակելով հայկական ռեֆորմներին և ազգային ժողով կազմելուն, գրում էր. «Հայ ազգային ժողով չի կրնար գո-

---

[1] Տվյալները բերվում են ըստ «Արևմտահայ աշխարհ» գրքի, Ս. Մ. Սոֆիկյան, Նյու-Յորք, 1947, էջ 569—605։

յություն ունենալ, որովհետև հայ ազգ չկա։ Թուրքիո մեջ մեկ ազգ կա, այն է՝ օսմանցի ազգ»։ Մյուս ազգերը, ըստ երիտասարդ Թուրքերի, կամ պետք է ձուլվեին օսմանցիների հետ, կամ... նրանց առջև անդունդ էր փորված։

1915 թ. ապրիլի 24-ի գիշերը, Թուրքական ոստիկանական կորպուսի գործակալներն ու զինված բանդաները ներխուժեցին հայ ինտելիգենցիայի ներկայացուցիչների օջախները, շղթայեցին շատերին, նետեցին բանտերը, կախեցին և սպանեցին հարյուրներին, աքսորում մահվան դատապարտեցին մնացածներին կամ խոշտանգումների ենթարկեցին։ Նահատակվածների մեջ էին ազգային դեմոկրատ գործիչներ Սիամանթոն, Դ. Վարուժանը, Ռ. Չարդարյանը, Գ. Զոհրապը, Հ. Ջհանգուլյանը, Հ Բոյաճյանը (Մուրադը) և ուրիշներ։

1915 թվականի մայիսին Պոլսի զինվորական ատյանը մահապատիժ կայացրեց հայ ազգային շարժման քսան գործիչների նկատմամբ, որոնք ձերբակալվել էին պատերազմից առաջ, հուլիսի 15-ին։ Մահվան դատապարտված քսաններից էին մեղրեցի Մաթևոս Սարգսյանը (Փարամազ), հայտնի բժիշկ Թորոս Պենեն, Արամ Աչըկբաշյանը, Մուրադ Չաքարյանը, Ռուբեն Կարապետյանը, Հրանտ Եկավյանը, Երիմիա Մանուկյանը, Գեղամ Վանիկյանը, Երվանդ Թոփուզյանը, Գառնիկ Բոյաջյանը, Հովհաննես Եղիազարյանը և ուրիշներ։ Մահվան դատավճռի մեջ ասված է, որ քսանները կախաղանի են դատապարտվել «ստնկախ և ինքնավար Հայաստան» կազմելու ձգտումներ ունենալու համար[1]։ Այդպես կախվեցին նոր քսաններ, հիսուններ, հարյուրներ։

Այդպես, ուրեմն, երիտասարդ Թուրքերը հայ գործիչներին կոխում էին ինքնավար Հայաստանի դաղափարին հետևելու համար։ Այդ դատավճռից նույնպես երևում է հայկական եղեռնի իսկական պատճառը։

Վերհիշենք Կիրովի խոսքերը. «Թուրքերը մտադիր են իրագործել իրենց վաղեմի երազանքը՝ լիովին բնաջնջել հայ բնակչությանը, որը չի ձուլվում մուսուլմանական մասսայի հետ...[2]։

Սա է հարցի մարքսիստական գիտական բացատրությունը։

---

[1] Դատավճիռը հրապարակվել է օսմանյան մամուլում։

[2] Տե՛ս Ս. Մ. Կիրովի հոդվածը «Терек» թերթ, 14 փետրվարի 1916 թ. (ընդգծումը մերն է—Ա. Մ.)։

3

Վ. Ի. Լենինը հետևում էր Հայաստանում և ամբողջ Կովկասում կատարվող իրադարձություններին։ Հատկապես 1917 թվականի փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո, երբ երկրում իշխում էր Ժամանակավոր կառավարությունը, Վ. Ի. Լենինը բազմիցս անդրադարձել է Հայաստանի նկատմամբ իմպերիալիստական պետությունների կիրառած թշնամական քաղաքականության մերկացմանը։

1917 թ. մարտի 7-ին Վ. Ի. Լենինը դեռևս տարագրության մեջ գտնվելով, տալով Ռուսաստանում ստեղծված Ժամանակավոր կառավարության բնութագրությունը, նշել է, որ «Նա պատերազմի կառավարություն է, իմպերիալիստական սպանդը շարունակելու կառավարություն, կողոպուտի կառավարություն, որն ուզում է կողոպտել Հայաստանը...»[1] և ուրիշ երկրներ։

«Նամակներ հեռվից» հոդվածաշարի չորրորդ հոդվածում Վ. Ի. Լենինը կրկին ընդգծում է, որ «Ռուսաստանը պատերազմ է մղում Հայաստանը, Թուրքիան, Գալիցիան թալանելու համար»[2], որ Միլյուկովը իր կոմպանիայի հետ չի հրապարակում ցարի կընքած պայմանագրերը, որոնց մեջ խոսվում է իմպերիալիստական տերությունների կողմից այլ երկրները գաղութացնելու և կողոպտելու մասին, այդ երկրների թվում հիշատակում է Հայաստանը[3]։ Լենինը նշում էր, որ Գուչկով-Միլյուկովի կառավարությունը «հետապնդում է ավազակային նպատակներ», որոնցից մեկն էր Հայաստանի նվաճումը[4]։

Մարտի 17-ին Յա. Գանեցկուն գրած նամակում Վ. Ի. Լենինը ընդգծում էր, որ Ռուսաստանի կողմից մղվող պատերազմը չի դադարել իմպերիալիստական լինելուց և չի դադարի, քանի իշխանությունը գտնվում է բուրժուազիայի ձեռքին և նրան օգնում են էսեռներն ու մենշևիկները, քանի Հայաստանը և այլ տերիտորիաներ նվաճելու կողոպտչական պայմանագրերը չեն ոչնչացված[5]։

Ռուսաստան վերադառնալուց մի քանի օր հետո Վ. Ի. Լենինը

---

1 Տե՛ս «Պրավդա» թերթը, 1917, № 15։

2 Վ. Ի. Լենին, Երկեր հատ. 23, էջ 448։

3 Նույն տեղում, էջ 449։

4 Նույն տեղում, էջ 485—486։

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20 (3 հրատ.), էջ 54—55։

հանդես եկավ Հայաստանի նկատմամբ ժամանակավոր կառավարության քաղաքականության քննադատությամբ։ Լենինը «Պրավդա» թերթի ապրիլի 13-ի համարում տպած իր հոդվածում ցիտում է Միլյուկովի հայտարարությունը Հայաստանի և Լեհաստանի նկատմամբ ժամանակավոր կառավարության վարած քաղաքականության սկզբունքների մասին, բացահայտում է Միլյուկովի կեղծավորությունը և նշում, որ նրա ծրագիրը Լեհաստանի, Հայաստանի ու այլ տերիտորիաների հավիշտակումն է։

Պատմության փորձը ցույց տվեց, որ Հայաստանի երկու մասերի միացման մասին ցարական Ռուսաստանի դիվանագետների հայտարարություններն անհիմն էին և սուտ։ Արևմտյան Հայաստանը գրավելով, ռուսական բանակն այդ երկրամասում հաստատեց զուտ զինվորական դիկտատուրա։

Ռուսական գլխավոր շտաբի գրագրությունների մեջ խոսք կա այն մասին, թե ցարի տապալումից հետո «պետական և վարչական կառավարման նոր կարգեր են մտցվում» և այդ նոր կարգերի համաձայն, ինչպես պետք է կառավարվի ռուսական զորքի կողմից գրավված Արևմտյան Հայաստանը[1]։

Դեռևս 1916 թվականին ցարական իշխանությունները հաստատել էին «Թուրքահայաստանը կառավարելու ժամանակավոր կանոնադրություն»։ Թուրքահայաստանում որպես բարձրագույն իշխանություն հաստատվել էր «զինվորական գեներալ-նահանգապետություն»[2]։ Զինվորական գեներալ-նահանգապետը ենթակա էր Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը։ Գեներալ-նահանգապետի ֆունկցիաներն իրագործում էր Կովկասյան բանակի հրամանատար գեներալ Յուդենիչը, որի առաջին գործերից մեկը եղավ հրատարակել հատուկ հրաման Այաշկերտի հովտում և հայկական մյուս հողերում ռուս կալվածներ վերաբնակեցնելու մասին, այսինքն գործնականորեն ձեռնարկեց Արևմտյան Հայաստանի գաղութացմանը։ Մի ծրագիր, որը վաղուց մշակել էին Կովկասի փոխարքան և հողագործության մինիստր Կրիվոշեինը։

Ժամանակավոր կառավարության ստեղծումից հետո այն ձեռնարկեց Արևմտյան Հայաստանի և մյուս գրավված մարզերի կառավարման սկզբունքների մշակման գործը։

Կազմվեց Արևմտյան Հայաստանի կառավարման կանոնա-

---

[1] Տե՛ս ЦГВИА, ф. 2003, д. 19։

[2] Նույն տեղում։

գրության նախագիծ[1]։ Այդ կանոնադրության համաձայն, նախկին գինվորական գեներալ-նահանգապետի փոխարեն հաստատվեց Արևմտյան Հայաստանի գերագույն կոմիսարի պաշտոն։ Գերագույն կոմիսարը նշանակվում էր անմիջականորեն ժամանակավոր կառավարության կողմից, որին և ենթարկվում ու ներկայացնում էր հաշվետվություն իր գործունեության մասին։ Կանոնադրության 21-րդ հոդվածում ասված է, որ «Գերագույն կոմիսարին է պատկանում ամբողջ քաղաքացիական բարձրագույն իշխանությունը»[2]։

Արևմտյան Հայաստանի ամբողջ տերիտորիան բաժանվում էր հետևյալ վարչական միավորումների. մարզ, օկրուգ և բաժին, որոնց կառավարման համար գերագույն կոմիսարը նշանակում էր համապատասխան կոմիսարներ։ Գերագույն կոմիսարը, այսպիսով, ժողովրդի փոխարեն, ինքն էր նշանակում մարզերի, օկրուգների և բաժինների կառավարողներին, որոնք հաշվետու չէին բնակչությանը և անկախ էին նրանից։

Գերագույն կոմիսարը սահմանում էր հարկերը, որոշում նրանց չափը և գանձման կարգը։ Կանոնադրությունը չէր նախատեսում ո՛չ հայ բնակչության վերադարձն իր բնակավայրը, ո՛չ նրա հողային ու գույքային իրավունքների վերականգնումը, ո՛չ նրա սոցիալական կյանքի պայմանների մասին որևէ փոփոխություն։ Կանոնադրությունը չէր դնում ազգային փոխհարաբերությունների կարգավորման ոչ մի հարց։

Արևմտյան Հայաստանի կառավարման մասին ժամանակավոր կառավարության սահմանած օրենքները նվաճող դաշնակցության օրենքներ էին, իսկ իշխանության օրգանները դաշնակցության քաղաքականությանը համապատասխան օրգաններ։

1917 թվականի օգոստոսին Արևմտյան Հայաստանի գերագույն կոմիսարը ժամանակավոր կառավարությանը ներկայացրեց գեկուցագիր[3] և «Թուրքահայաստանի մարզային ու քաղաքային միլիցիայի մասին ժամանակավոր կանոնադրության նախագիծ»[4]։ Այդ կանոնադրությունը նույնպես նախատեսում էր օկուպացիոն իշխանություն, նրա միլիցիայի ամբողջ սիստեմը, կառավարման ձևերը, հաստիքները, վարձատրության չափը և այլն։

---

[1] ՎՍՍՌ ՀՈԿՊԱ, ֆ. 154, դ. 1, 1917, էջ 3—43։

[2] Նույն տեղում, էջ 7։

[3] ЦГВИА ф. 2003/с, оп. 1, д. 19, л. 172—177.

[4] Նույն տեղում, էջ 178—183։

Կերենսկու գլխավորած ժամանակավոր կառավարությունը Թուրքահայաստանի գերագույն կոմիսար նշանակեց Պ. Ավերիանովին, նրա օգնական՝ Ի. Կարցևաձեին, Էրզրումի մարզի կոմիսար՝ Յա. Գլոտովին[1], Էրզրումի կայազորի պետ՝ գեներալ Օգեշլիձեին և այլն։ Ժամանակավոր կառավարության այդ չինովնիկները Հայաստանում հանդես էին գալիս որպես ռուսական իմպերիալիստական բուրժուազիայի շահերի արտահայտիչներ ու նպատակներն իրագործողներ։

Վ. Ի. Լենինը նշում էր, որ Ռուսաստանի պրոլետարները, կիսապրոլետարները և չքավոր գյուղացիները, որոնցից կազմված է բնակչության հսկայական մեծամասնությունը, շահագրգռված չեն ժամանակավոր կառավարության իմպերիալիստական քաղաքականությամբ, բանկային կապիտալի շահույթներով «Գալիցիայում կամ Հայաստանում եղած եկամտաբեր պաշտոններով...»[2]։

Այդ պաշտոնները գրավող կադետ կամ էսեռ և մենշևիկ գործիչները հայատյաց մարդիկ էին և ոչնչով չէին տարբերվում ցարական կառավարության այն ծառաներից, որոնք ազգային փոքրամասնությունների կամ ինչպես իրենք էին արտահայտվում «տուզեմցի»-ների (տեղացիների) մասին խոսում էին միայն արհամարհանքով։

Ժամանակավոր կառավարությանը փույթ չէր, որ ժողովուրդները, մասնավորապես հայ ժողովուրդը, նամյա պատերազմում արյունաքամ էր եղել և անհամբեր սպասում էր պատերազմի ավարտման ու խաղաղ կյանքի պայմաններ ստեղծելուն։

Բերենք մեկ օրինակ, Հին Բայազետի օկրուգի հայ բնակչության ներկայացուցիչների դիմումից՝ ժամանակավոր կառավարության կոմիսարներին, փետրվարյան ռևոլյուցիայից հետո Հայաստանի շրջաններում և գյուղերում նոր վարչական օրգանների կատարած խժդժություններ մասին։ Հայ բնակչության ընտրած լիազորները գրել են.

«Ռուսաստանի ներքին կյանքում կատարված հեղաշրջումը ոչ մի փոփոխություն չմտցրեց մեր օկրուգի վարչական և իրավական կարգերի մեջ։ Այն ժամանակ, երբ անծայրածիր Ռուսաստանի բոլոր, նույնիսկ ամենահեռավոր անկյուններում հեղափոխությունը վերացրել է հին վարչական օրգանները և ժողովրդից

---

[1] ՎՍՍՌ ՀՊԿՊԱ, ֆ. 154, ց. 1, գ. 4, թ. 63։

[2] Տե՛ս «Պրավդա», 5 մայիսի 1917 թ. (Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 24, էջ 249)։

ստեղծել է տեղական գործադիր կոմիտեներ, մեզ մոտ դեռևս շարունակում է գործել հին ադմինիստրացիան, որը ղեկավարվում է հին կառավարության կործանարար հրահանգներով, անհամար վնասներ է հասցնում բնակչությանը, ամեն կերպ ահաբեկում է տեղական բնակիչներին և ճնշում գործադրում այն անմեղ մարդկանց վրա, ովքեր ցանկացել են ծպտուն հանել նոր ռեժիմի մասին։

Հենց նույն այդ ադմինիստրացիան շտապեց իր շարքերից և մի քանի զինվորական դեպուտատներից կազմակերպել գործադիր կոմիտե, առանց բնակչության ներկայացուցիչների։ Այդ հակաժողովրդական կոմիտեի առաջին «լիբերալ» ակտը վերաբերում էր ամբողջ օկրուգի հայ բնակչությանը զինաթափելու հարցին և հին ռեժիմի ժանդարմներն ու ստրաժնիկները հատուկ եռանդով ձեռնամուխ եղան Բայազետ քաղաքի գործադիր կոմիտեի առաջին որոշման կենսագործմանը։

Տեղական հայ բնակչությունը զինվել էր կորպուսի հրամանատարի շտաբի պետի և գումարտակային մասերի պետերի թույլտվությամբ... խաղաղ գյուղացիական բնակչությանը վիճակված էր դաշտային աշխատանքները կատարել լիովին զինված, որպեսզի թույլ չտա իր քաշող անասունների հափշտակումը։ Եվ ահա Ռուսաստանում կատարված ռևոլյուցիայի առաջին ռեալ հետևանքը տեղական խաղաղ բնակչության համար «գործադիր կոմիտեի» ոչնչով չբացատրվող որոշումն է՝ բնակչությանը անհապաղ զինաթափելու մասին։ Առաջինը զինաթափեցին Աստվածածնի հայ բնակչությանը։ Հետևյալ օրը՝ մարտի 23-ին այդ գյուղի վրա հարձակվեցին Արարատյան լեռնալանջերի քրդական ջոկատները հափշտակեցին մոտ 200 գլուխ եղջյուրավոր անասուն և վիրավորեցին մի բնակիչ։ Մեկ օր անց, նույն քրդերը հարձակվեցին եղիդական Կամարջուղ գյուղի վրա և հափշտակեցին անպաշտպան բնակչության ոչխարների հոտը։

Հին ոստիկանությունը նոր «գործադիր կոմիտեի» հովանավորությամբ կրկնակի եռանդով և անպատիժ կերպով շարունակում է իր բռնի գործողությունները բնակչության նկատմամբ»[1]։

Վ. Ի. Լենինը տեղյակ էր ժամանակավոր կառավարության այդ քաղաքականությանը և դիմակազերծ էր անում նրա հեղինակներին։

---

[1] Վրացական ՍՍՌ ՀՈԿՊԱ, ֆ. 41 («գ»), գ. 177, թ. 45—46։

ՌՍԴԲՊ 7-րդ (Ապրիլյան) կոնֆերանսում Վ. Ի. Լենինը անողոքաբար դիմակազերծ արեց «պատերազմ մինչև հաղթանակը» լոզունգի հեղինակներին, ցույց տալով, որ այդ լոզունգի տակ թաքնված է «...Ռուս կապիտալիստների ձգտումները՝ թալանելու և խեղդելու Հայաստանն ու Պարսկաստանը և այլն»[1]:

Այնուհետև կոնֆերանսի մի բանաձևում, որի նախագիծը գրել էր Վ. Ի. Լենինը, դատապարտվում է բուրժուական երկրների դիվանագետների գործարքները, «օրինակ, Հայաստանը «տալիս են» ռուս կապիտալիստներին...»[2]:

Վ. Ի. Լենինը հատուկ հոդված գրեց «արտաքին քաղաքականության գաղտնիքների» վերաբերյալ, որում կրկին անդրադարձել է Հայաստանի անեքսիայի մասին բուրժուական մամուլի, մասնավորապես «Речь» թերթի նյութերին, բացահայտելով դրանց ռեակցիոն բնույթը[3]: Նույն օրը նա կրկին անդրադառնում է Հայաստանը զավթելու մասին եղած դաղտնի պայմանագրերից մեկին, այն անվանելով «կինոտուտ», «կողոպտչական» պայմանագիր[4]:

Վ. Ի. Լենինը բացահայտում էր ժամանակավոր կառավարության կողմից պատերազմը շարունակելու քաղաքականության հետևանքները: Նա պահանջում էր դադարեցնել պատերազմը, արդար խաղաղություն հաստատել:

Վ. Ի. Լենինը դիմելով Կերենսկուն, Ծերեթելուն, Չեռնովին և Սկոբելևին, որպես բուրժուազիայի հետ համակերպված «սոցիալիստների» նրանց անարգանքի սյունին էր դամում, որ իշխանության գլուխ անցնելով, նույնիսկ չեն բարձրացրել «ռուսական Իռլանդիայի, ռուսական Ալժիրի հարցերը, այսինքն՝ Թուրքեստանի, Հայաստանի, Ուկրաինայի, Ֆինլանդիայի...»[5] հարցերը:

Այսպիսով, Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ կալվածատերերի ցարական կառավարության տապալումից հետո երկրի կառավարումը իր ձեռքը վերցրած ռուսական բուրժուազիայի ժամանակավոր կառավարությունը (որի մեջ դաշինք կապած հանդես էին դալիս կադետները և էսեռա-մենշևիկյան պարտիաները) Հայաստանի նկատմամբ շարունակեց նույն դաղութարարական քաղա-

---

[1] Տե՛ս ՌՍԴԲՊ 7-րդ (Ապրիլյան) կոնֆերանսի սղագրական հաշվետվությունը:

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 24, էջ 304:

[3] Տե՛ս «Պրավդա», 23 մայիսի 1917 թ.:

[4] Հոդվածը տպվել է «Պրավդա»-ի 1917 թ. մայիսի 23-ի համարում:

[5] «Պրավդա», 1 հունիսի 1917 թ. (Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 24, էջ 718):

գականությունը։ Վ. Ի. Լենինը բացատրեց Հայաստանում ժամանակավոր կառավարության հաստատած նոր ռեժիմի բնույթը, մի ռեժիմ, որը հայ ժողովրդին բերում էր նոր շղթաներ։

Միաժամանակ Վ. Ի. Լենինն իր ելույթներում, հոդվածների մեջ, ճառերում ու զեկուցումներում որոշակի դնում էր Հայաստանի նկատմամբ բոլշևիկյան պարտիայի քաղաքականության հանգուցային հարցերը։ Անհրաժեշտ է հատուկ ասել, թե Վ. Ի. Լենինը, մերժելով ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, ինչպիսի՞ կոնկրետ ծրագրեր էր առաջ քաշում։

4

Հայաստանի հարցը Վ. Ի. Լենինը մի քանի անգամ արծարծեց ՌՍԴԲՊ(բ) 7-րդ (Ապրիլյան) կոնֆերանսում։

Ազգային հարցի մասին պատմական ճառում Վ. Ի. Լենինը վերլուծում էր բոլշևիկյան պարտիայի ազգային ծրագիրն ու ազգային քաղաքականությունը, սկսած 1903 թվականից մինչև 1917 թվականը, կրկին դատապարտում Հայաստանի, Լեհաստանի, Ուկրաինայի և ուրիշ երկրների նկատմամբ կիրառած գաղութարարական, ճնշման քաղաքականությունը և առաջ քաշում այդ երկրների ազատ ինքնորոշման հարցը։

«Եթե վաղը Սովետն իշխանությունն իր ձեռքը վերցնի...,— ասում էր Լենինը կոնֆերանսի մայիսի 12-ի նիստում,— այն ժամանակ մենք կասենք՝ Գերմանիա, ղորքերդ դուրս Լեհաստանից, Ռուսաստան ղորքերդ դուրս Հայաստանից»[1]։

Կոնֆերանսին ներկայացրած բանաձևի մեջ Լենինը խնդիր էր դնում, որ թե՛ գերմանական ու նրա դաշնակցային և թե՛ ռուսական զորքերը դուրս բերվեն գրավված երկրներից, որպեսզի այդ երկրների ժողովուրդների վրա ոչ մի կողմնակի ուժ չգործադրվի և նրանք հնարավորություն ստանան իրենց կամքով որոշելու իրենց բախտը։ Լենինը կոնֆերանսում ընդունված բանաձևում դրել է, որ այդ տեսակետը պետք է տարածել «ամբողջ Հայաստանի» նկատմամբ[2]։ Բոլշևիկների Ապրիլյան կոնֆերանսի որոշումների մեջ Հայաստանի ազատագրման հարցը ստացավ իր ձևակերպումը։ Հետագայում Վ. Ի. Լենինը շարունակում էր մշակել և ավելի

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 24, էջ 367։

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 305։

կոնկրետացնել Հայաստանի նկատմամբ բոլշևիկյան պարտիայի քաղաքականությունը։

Սովետներում ընտրվող դեպուտատներին տրվող նակազի մեջ Վ. Ի. Լենինը 1917 թ. մայիսին ընդգծում էր, որ մեր դեպուտատը պետք է պահանջի, որպեսզի Ռուսաստանի կառավարությունը առանց ձգձգումների հաշտություն կնքի «բոլոր ճնշված կամ անիրավահավասար ազգությունների առանց որևէ բացառության ազատագրելու պայմանով»։ Եվ այնուհետև Լենինը գրել է. «Դա նշանակում է՝ վիլիկոռուսները բռնորեն չեն պահի ոչ Լեհաստանին, ոչ Կուրլանդիային, ոչ Ուկրաինային, ոչ Ֆինլանդիային, ոչ Հայաստանին»[1]։

Անդրադառնալով ազգերի ինքնորոշման իրավունքի շուրջը դաշնակից պետությունների գործիչների հայտարարությունների հարցին և այդ մասին ժամանակավոր կառավարության ղեկավարների կարծիքներին, Վ. Ի. Լենինը 1917 թ. հունիսի 14-ին «Պրավդա»-ում տպած հոդվածում գրում էր. «...մեզ համար շատ հետաքրքիր կլիներ լսել նաև Կերենսկու, և Ծերեթելու, և Չեռնովի, և Սկոբելևի կարծիքը Հայաստանի... «ինքնորոշման» մասին»[2]։ Լենինը նշում էր, որ ռուսական այդ մինիստրները խճճվել են, չեն գնում և չեն կարող գնել Հայաստանի, Ուկրաինայի, Թուրքիստանի և այլ երկրների ազատագրման և անկախության հարցերը։

Այդ հարցերին Վ. Ի. Լենինը կրկին անդրադառնում է, այս անգամ բանվորների և զինվորների Սովետների Համառուսաստանյան առաջին համագումարում՝ 1917 թվականի հունիսին. «Պատերազմի մասին» ճառի մեջ, հունիսի 9-ին Վ. Ի. Լենինը հատուկ կանգ է առնում Հայաստանի ինքնորոշման, նրա պետական կառուցվածքի ձևի, հայ ժողովրդի անկախության կոնկրետ հարցերի վրա, ձևակերպելով բոլշևիկյան պարտիայի տեսակետն այդ հարցում։

Սովետների Համառուսաստանյան առաջին համագումարում արտասանած իր ճառի մեջ, դեռևս 1917 թվականի հունիսի 9-ին, Վ. Ի. Լենինն առաջին անգամ կարծիք հայտնեց Հայաստանն անկախ հայկական ռեսպուբլիկա դարձնելու մասին[3]։

Վ. Ի. Լենինը նշում էր, որ թուրքական ռազմաճակատում

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 24, էջ 440։

[2] Նույն տեղում, էջ 717։

[3] Տե՛ս Սովետների Համառուսաստանյան առաջին համագումարում Լենինի ճառը, «Պրավդա», 1917, № 97 (նույնը՝ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 25, էջ 37)։

կանգնած էր միլիոնավոր զորք։ Այդ բանակը, ասում էր Լենինը, որն այժմ պահվում է Հայաստանում և անեքսիաներ է կատարում, եթե «Հայաստանը դարձներ անկախ հայկական ռեսպուբլիկա» այդ լավ կլիներ[1]։

Վ. Ի. Լենինը չի խոսում հայկական սովետական ռեսպուբլիկայի մասին, որովհետև սովետական ռեսպուբլիկա դեռ չէր ստեղծվել նույնիսկ Ռուսաստանում, սակայն պարզ է, որ խոսելով «Հայկական անկախ ռեսպուբլիկա» ստեղծելու մասին, Լենինը նկատի ուներ աշխատավորներից կազմված կառավարություն ունեցող ռեսպուբլիկա, անկախ ռեսպուբլիկա, ազատ թուրքական յունագատիչներից և ռուսական գաղութարարներից։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նախօրյակին Վ. Ի. Լենինը հրապարակեց «Ռևոլյուցիայի խնդիրները» ծրագրային հոդվածը, որում ասում էր, որ «մենք պարտավոր ենք իսկույն եթե բավարարել ուկրաինացիների և ֆինլանդացիների պահանջները, ազատվել նրանց, ինչպես և բոլոր այլազգիներին Ռուսաստանում, լիակատար ազատություն, մինչև անջատման ազատությունը, կիրառել նույն այդ բանն ամբողջ Հայաստանի նկատմամբ»[2]։ Վ. Ի. Լենինն ամբողջ բառն ընդգծել է։ Հասկանալի է, որ Վ. Իլյիչը «ամբողջ» Հայաստանը շեշտելով, խոսում է թե Արևմտյան և թե Արևելյան Հայաստանի մասին, նրանց վերամիավորման և միասնական Հայկական անկախ ռեսպուբլիկա ստեղծելու ծրագրի մասին։

Նույն հարցը Վ. Ի. Լենինը ձևակերպեց 1917 թվականի հոկտեմբերին «Պարտիայի ծրագրի վերանայման շուրջը» հոդվածի մեջ։ Այստեղ Վ. Ի. Լենինն ուղղակի ասել է. «1917 թվականի ռևոլյուցիայի կես տարվա փորձից հետո հավատ թե կարելի է վիճել, որ Ռուսաստանի ռևոլյուցիոն պրոլետարիատի պարտիան, մի պարտիա, որն աշխատում է վելիկոռուսներին լեզվով, պարտավոր է ճանաչել անջատման իրավունքը» և այնուհետև՝ «նվաճելով իշխանությունը» մենք անպայման իսկույն եթե կճանաչենք այդ իրավունքը և՛ Ֆինլանդիայի համար, և՛ Ուկրաինայի համար, և Հայաստանի համար, և ցարիզմի (ու վելիկոռուսական բուրժուազիայի) կողմից ճնշված ամեն մի ժողովրդի համար»[3]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 25, էջ 37։

[2] Տե՛ս «Рабочий путь» թերթում, 1917 թ. հոկտեմբերի 9-ին և 10-ին տպված հոդվածը (Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 58)։

[3] Տպվել է 1917 թ. հոկտեմբերին «Պրոսվիշչենիե» ժուռնալի № 1—2-ում (Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 206)։

* * *

Այսպիսով, Վ. Ի. Լենինը քննադատելով իմպերիալիստական պետությունների դավթողական քաղաքականությունը Հայաստանում, դիմակազերծ անելով գերմանա-թուրքական և անգլո-ֆրանսիա-ռուսական բուրժուական կառավարությունների բլոկների ներքին գործարքները ճնշված ժողովուրդների դեմ, այդ թվում և հայ ժողովրդի դեմ, առաջ քաշեց մասնատված Հայաստանի վերամիավորման, նրա ժողովրդի ինքնորոշման և Հայկական ինքնուրույն ռեսպուբլիկա ստեղծելու ծրագիրը։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի նախօրյակին լենինյան այդ ծրագիրը որոշակիորեն ձևակերպված և հրապարակ էր նետված բոլշևիկյան պարտիայի կենտրոնական օրգանի էջերից։ Լենինի մշակած այդ ծրագիրը առաջ քաշվեց ՌՍԴԲՊ(բ) Ապրիլյան կոնֆերանսում և Սովետների Համառուսաստանյան առաջին համագումարում։

Վ. Ի. Լենինի մշակած ծրագիրը Հայաստանի ինքնորոշման և Հայկական ինքնուրույն ռեսպուբլիկա ստեղծելու մասին լիովին համապատասխանում էր հայ ժողովրդի ամենալայն զանգվածների շահերին, արտահայտում էր նրանց իղձերը։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1

Ռուսաստանում 1917 թ. հոկտեմբերին, երբ հաղթեց սոցիալիստական ռևոլյուցիան և բոլշևիկները դարձան կառավարող պարտիա, ստեղծվեց աշխարհում առաջին բանվորա-գյուղացիական կառավարությունը՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, հռչակվեց կապիտալիզմի կործանման և սոցիալիզմի դարաշրջանին անցնելու սկիզբը, նոր հորիզոններ ուրվագծվեցին Հայաստանի և հայ ժողովրդի համար։

Բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների Սովետների Համառուսաստանյան երկրորդ համագումարի, հոկտեմբերի 25-ին ընդունած առաջին փաստաթղթում, աշխատավորներին ուղղված դիմումի մեջ ձևակերպվեցին Սովետական Ռուսաստանի Կառավարության քաղաքականության գլխավոր սկզբունքները և մերձակա խնդիրները՝ դեմոկրատական հաշտություն բոլոր ազգերի համար, պատերազմի վերջ, հողերի բռնագրավում և դրանց հանձնումը գյուղացիներին, բանվորական վերահսկողություն արտադրության և բաշխման վրա, Ռուսաստանի պետությանը ենթակա նախկինում ճնշված բոլոր ազգերի ժողովուրդների լիակատար ինքնորոշման իրավունքի և անկախության ապահովում, քաղաքի և գյուղի բնակչության առաջին անհրաժեշտության առարկաների և հացի կարիքների բավարարում[1]։

Այդ դիմումի և Վ. Ի. Լենինի գրած «Հաշտության մասին» ու «Հողի մասին» դեկրետների մեջ հայտարարվում էր, թե ինչ են

---

1 *Տե՛ս «Պրավդա», 1917, № 170։*

խոստանում Ռուսաստանի սովետական ռևոլյուցիոն կառավարությունը և նրա ղեկավար՝ Վ. Ի. Լենինը հայ ժողովրդին։

Նոյեմբերի 2-ին հրապարակվեց Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան, որի մեջ Վ. Ի. Լենինը ձևակերպել էր Սովետական կառավարության ազգային քաղաքականության սկզբունքները։ Այնտեղ հիշեցվում էր, որ ցարիզմը Ռուսաստանի ժողովուրդներին լարում էր մեկը մյուսի դեմ, որի հետևանքով տեղի էին ունենում կոտորածներ և ազգամիջյան կռիվներ։ Նոր կառավարությունը խնդիր էր դնում անմիջապես ձեռնարկել Հիշված ազգերի ինքնորոշմանը և նրանց ազատագրմանը վերջնականապես, հանձնարարելով Ազգությունների գործերի Հանձնաժողովին (հետո վերակազմվեց Ժողկոմատի) անմիջապես մշակել համապատասխան դեկրետներ[1]։

Վ. Ի. Լենինի բազմակողմանի տիտանական գործունեությունն ընդգրկում էր բովանդակ Ռուսաստանի բազմամիլիոն մասսաների ռևոլյուցիոն պայքարի գլխավորումը. հին կարգերի հեղաշրջումը և նոր, սոցիալիստական Ռուսաստանի կազմակերպումը. իշխանությունն իր ձեռքը վերցրած կառավարող պարտիայի ղեկավարումը և բուրժուական աշխարհի շատ երկրների նոր ձևավորվող կոմունիստական կազմակերպություններին ուղղություն տալը. ռևոլյուցիոն նոր բանակի ստեղծումը և տապալված շահագործողների ու նրանց օգնության եկած օտարերկրյա ինտերվենտների դեմ մղվող դժվարին պայքարի կազմակերպումը, գիտական պարապմունքները և տնտեսական-հրապարակախոսական ելույթները. աշխատանքը անտեսական փլուզումը հաղթահարելու, նոր էկոնոմիկայի և կուլտուրայի հիմքերը դնելու ուղղությամբ։ Միաժամանակ Վ. Ի. Լենինը կոնկրետացնում և լուծում էր տալիս առանձին երկրների և առանձին ազգերի հարցերին, ավյալ դեպքում Հայաստանի և հայ ժողովրդի հարցերին, նրա վիճակին ու ապագային։

2

Անհրաժեշտ է կանգ առնել Հայաստանի նկատմամբ Վ. Ի. Լենինի մշակած և հուշակած քաղաքականության հիմնական հարցերի վրա։

---

[1] Տե՛ս «Հոկտեմբերյան ռևոլյուցիայի դեկրետները», 1, Մ., 1933 (ռուս.), էջ 28—30։

Բազմազան փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ երևում է, թե ինչպես ռևոլյուցիայից անմիջապես հետո ՌԿ(բ)Պ Կենտկոմի գործունեության մեջ, պարտիայի համագումարներում ու կոնֆերանսներում, ՌՍՖՍՌ Ժողկոմսովետի և Պաշտպանության խորհրդի նիստերում, Ազգությունների ժողկոմատի և կառավարական այլ օրգանների աշխատանքում, Վ. Ի. Լենինի անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ, տարբեր հարցերի քննարկման ժամանակ, որպես ինքնուրույն հարց, քննարկման առարկա են դարձել նաև Հայաստանի անկախության, հայ ժողովրդի ինքնորոշման և նրա ազգային ու սոցիալական ազատագրման կոնկրետ խնդիրները։

Հարկավոր է նկատի ունենալ, որ Հայաստանի հարցը ամենաբարդ հարցերից մեկն էր և սխալ կլինի կարծել, թե սկզբից ևեթ այդ հարցը բոլորի համար պարզ ու հստակ էր և միայն ցանկություն էր պետք, դրանք մի հարվածով լուծելու համար։

Վ. Ի. Լենինը, որպես Ժողկոմսովետի նախագահ, Հայաստանի հարցին անմիջականորեն անդրադարձել է 1917 թվականի նոյեմբերին, երբ Սմոլնիում ընդունել և զրույց է ունեցել Սարգիս Օրասիանյանի (Լուկաշինի) և Վահան Տերյանի հետ[1]։ Զրույցը վերաբերել է ամենից առաջ Արևմտյան Հայաստանին։ Այդ հանդիպումից հետո Վ. Տերյանը Ժողկոմսովետին ներկայացրել է զեկուցագիր «Տաճկահայաստանի մասին»[2]։ Կոմունիստ բանաստեղծը միաժամանակ ներկայացնում է «Տաճկահայաստանի մասին» Ժողկոմսովետի դեկրետի նախագծի նախնական մի վարիանտ։

1917 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Վ. Ի. Լենինը մի քանի անգամ, տարբեր առիթներով զբաղվում է Կովկասին և մասնավորապես Հայաստանին վերաբերող հարցերով։ Դեկտեմբերի 16-ին Ժողովրդական Կոմիսարների Սովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ որոշում է ընդունում Կովկասյան գործերի ժամանակավոր Արտակարգ կոմիսար նշանակել Ստ. Շահումյանին, «մինչև Կովկասում երկրային Սովետական իշխանության կազմակերպումը»։ Երկու օր հետո, դեկտ. 18-ին Վ. Ի. Լենինը մանդատ ստորագրեց Շահումյանին այդ պոստում նշանակելու մասին։

Այսպիսով, Կովկասի հարցը հատուկ քննարկման առարկա դարձնելով, Ժողովրդական Կոմիսարների Սովետը, Վ. Ի. Լենինի

---

[1] Տե՛ս Պ. Մակինցյանի «Լենինը և հայկական հարցը» հոդվածը, «Նորք», 1925, № 6։

[2] Տե՛ս Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 4, 1925, էջ 392, 402։

անմիջական ղեկավարությամբ, դրեց ամբողջ Կովկասում հենց այդ ժամանակ իշխանությունը գրավելու և սովետական կարգեր հաստատելու խնդիրը։ Կովկասում Սովետական իշխանություն կազմակերպելու մասին ձևակերպումը վերաբերում էր թե՛ Վրաստանին, թե՛ Ադրբեջանին և թե՛ Հայաստանին։

Կովկասին վերաբերող ընդհանուր հարցից բացի, Հայաստանի վերաբերյալ կար նաև արևմտահայերի հարցը, որը դրվեց ժողկոմսովետի քննարկմանը։

Դեկտեմբերի 20-ին ժողովրդական Կոմիսարների Սովետի նիստի օրակարգում մտցված էր Արևմտյան Հայաստանի հարցը։ Այդ հարցի քննարկումից առաջ Վ. Ի. Լենինը կրկին ընդունել է Վ. Տերյանին և զրուցել նրա հետ Հայաստանի ինքնորոշմանը վերաբերվող հարցերի մասին։ Բանասաղեղի երկերի առաջին հրատարակության մեջ բերված է Տերյանի հաղորդումը Լենինի հետ ունեցած զրույցի մասին։ Ահա այն.

«Լենինը հարցրեց, ի՞նչ են ուզում հայերը։ Ուզում են ջոկվել ռուսներից, թե՞ ուզում են միանալ։ Ասի ռուսահայերը չեն ուզում ջոկվել, իսկ տաճկահայերը ուզում են անկախ լինել։— Ինչպե՞ս, ուրեմն երկո՞ւ մաս լինել, հարցրեց Լենինը։ Ասացի ըստ երևույթին առայժմ այդպես կլինի և պարզեցի, որ ես անձնապես կողմնակից եմ, որ միանան երկու հատվածները և հետո ինքնորոշվեն, որ լինելու է ըստ իս, ինքնորոշում Ռուսաստանյան օրինակացիայով»[1]։ Այնուհետև նա գրել է Վ. Ի. Լենինից ստացած իր տպավորությունների մասին, որ «Լենինը շատ պայծառ է և զարմանալի», «լավն է և պարզ»։

Վ. Տերյանը Պ. Մակինցյանին գրած մի նամակում հայտնում է, որ «զրույց ունեցա այդ տոթիվ ընկեր Լենինի հետ», մոտակա նիստում կքննվի Հայաստանի հարցը։ Ժողկոմսովետի դեկտեմբերի 23-ի նիստում Հայաստանի ինքնորոշման հարցը դրվում է քննարկման Վ. Ի. Լենինի մասնակցությամբ, սակայն հարցը հետաձգվում է լրացուցիչ նախապատրաստական աշխատանքի համար։

Ժողկոմսովետի նիստը դեկտեմբերի 29-ին Վ. Ի. Լենինի նախագահությամբ վերջնականապես հաստատում է «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որում ասված է.

«Ժողովրդական Կոմիսարների Սովետը հայտարարում է հայ

---

[1] Տե՛ս Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 409—410։

ժողովրդին, որ Ռուսաստանի Բանվորական և Գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն։

Ժողովրդական Կոմիսարների Սովետը գտնում է, որ այդ իրավունքի կենսագործումը հնարավոր է միայն մի շարք նախնական երաշխիքների պայմաններում, որոնք բացարձակապես անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ հանրաքվեի համար։

Ժողովրդական Կոմիսարների Սովետը այդպիսի երաշխիքներ է համարում՝

1. Զորքերի դուրս բերումը «Թուրքահայաստանից» և հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմակերպումը, «Թուրքահայաստանի» բնակիչների անձնական ու գույքային անվտանգությունը ապահովելու նպատակով։

2. Տարբեր երկրներում ցրված գաղթական-հայերի, ինչպես նաև վտարանդի հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները։

3. Պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Թուրքիայի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները, որի վրա Ժողովրդական Կոմիսարների Սովետը պետք է պնդի թուրքական իշխանությունների հետ ունենալիք խաղաղ բանակցությունների ժամանակ։

4. «Թուրքահայաստանի» ժամանակավոր ժողովրդական Կառավարչության կազմակերպումը՝ դեմոկրատական հիմունքներով ընտրված Հայ ժողովրդի Դեպուտատների Սովետի ձևով։

Կովկասի Գործերի Արտակարգ ժամանակավոր Կոմիսար Ստեփան Շահումյանին հանձնարարվում է ամեն տեսակ օգնություն ցույց տալ «Թուրքահայաստանի» բնակչությանը 2-րդ և 3-րդ կետերի իրականացման գործում, ինչպես նաև ձեռնամուխ

Մաքրություն.— «Թուրքահայաստանի» աշխարհագրական սահմանները որոշվում են հայ ժողովրդի՝ դեմոկրատականորեն ընտրված ներկայացուցիչների կողմից, խառը և վիճելի (մուսուլմանական և այլ) օկրուգների դեմոկրատականորեն ընտրված ներկայացուցիչների համաձայնությամբ՝ Կովկասի գործերի Արտակարգ ժամանակավոր Կոմիսարի հետ միասին»[1]։

---

[1] «Образование СССР» փաստաթղթերի ժողովածու, 1917—1924 թթ., 1949, էջ 27—28։

լինել խառը հանձնաժողով ստեղծելու «Թուրքահայաստանի» սահմաններից ղորքերը հանելու ժամկետն ու եղանակները սահմանելու համար (կետ 1-ին)։

Ժողովրդական Կոմիսարների Սովետի դեկրետը հանդիսացավ Հայաստանի նկատմամբ Վ. Ի. Լենինի կիրառած ազգային քաղաքականության իրավական ձևակերպումը և հռչակումը։

Լենինյան դեկրետն առաջ բերեց լայն արձագանքներ թե՛ հայ ժողովրդի, նրա կարեկից բարեկամների, և թե՛ նրա թշնամիների մեջ։ Հայ ժողովրդի գիտակից մասն այդ դեկրետի մեջ տեսավ Սովետական Ռուսաստանի ռևոլյուցիոն կառավարության խոստումը, Հայաստանի մասին նրա կիրառելիք քաղաքականության սկզբունքները, հույսով ու հավատով լցվեց դեպի իր մոտալուտ ազատագրումը և ինքնուրույն ժողովրդական ռեսպուբլիկայի ստեղծման հեռանկարը։

«Բանվորի խոսք» հայատառ բոլշևիկյան թերթն սկսեց լույս տեսնել 1918 թվականի փետրվարին և հենց առաջին համարում հանդես եկավ «Տաճկահայաստանի ինքնորոշման հրովարտակ» հոդվածով, ընթերցողներին պատմելով լենինյան դեկրետի մասին։ Դեկրետի տեքստը հրապարակվեց նաև հայկական մամուլի ուրիշ օրգաններում։

Մինչդեռ հայ մենշևիկյան «Պայքար» թերթի էջերում և այլ հակասովետական օրգաններում հանդես եկան մարդիկ, չարությամբ լցված, կեղծելով ակնհայտ իրողությունները, սկսեցին զրպարտիչ հերյուրանքներ տարածել Վ. Ի. Լենինի կողմից հայերի նկատմամբ ձեռնարկած առաջին քայլերի մասին։ «Պայքարի» մենշևիկ հրապարակախոսները և այլ կեղծ սոցիալիստներ շարամտորեն բամբասում էին, թե իբր այդ դեկրետը զուտ մի դիվանագիտական քայլ է «տաճկահայերին բոլշևիկ դարձնելու համար»[1], որ այնուհետև, իբր թե Վ. Ի. Լենինը դնելով Հայաստանից ռուսական զորքը դուրս բերելու հարցը, դրանով իսկ «Հայաստանը տալիս է Թուրքիային» և այլ հերյուրանքներ[2]։

Այդպիսի դատողություններ անողներն իրենք էին հորինել նման վերսիաներ և դրանք վերագրել Սովետական կառավարությանը։ Այդ վերսիաների հեղինակները կամ լենինիզմի հակառա-

---

1 Տե՛ս «Բանվորի կոիվ», 1918, № 27։

2 Տե՛ս ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68/200 («Ս»), գ. 338, թ. 6, կամ ֆ. 88/222, գ. 13, թ. 57։

կորդների լագերում գտնվող, կամ անտեղյակ մարդիկ էին, որոնք աղավաղված են ներկայացրել թե՛ Ժողկոմսովետի Դեկրետը և թե՛ Լենինի ասույթները Հայաստանի մասին։

Նախ պետք է հասկանալ Ժողկոմսովետի Դեկրետի այն կետը, որտեղ ռուսական զորքը Հայաստանից հանելու հարցը հանձնարարվել էր Կովկասյան զորքերի Արտակարգ Կոմիսար Ստեփան Շահումյանին, որպեսզի նրա ղեկավարությամբ հանձնաժողով ստեղծվի ռուսական զորքերը դուրս բերելու ժամկետի ու եղանակի մասին։ Երկրորդ՝ Ազգությունների գործերի ժողկոմի հայտարարությունը, որը մեկնաբանում էր Դեկրետը, ուղղակի դատապարտում էր «գերմանա-թուրքական իշխանություններին», որոնք «նավատարիմ իրենց իմպերիալիստական բնույթանը» ձգտում էին օկուպացրած մարզերը կրկին իրենց ձեռքը գցել բռնությամբ, այսինքն դրանով իսկ խնդիր դնելով, որ բոլոր օկուպացված մարզերից, ինչպես նաև Հայաստանից իրենց զորքերը պետք է հեռացնեին ոչ միայն Ռուսաստանն, այլև Թուրքիան։

Այսպիսով, լենինյան քաղաքականությունը լիովին բացառում էր Հայաստանում թուրքական զորք մտցնելը, բացառում էր Հայաստանը նորից թուրքական բռնակալների լծի տակ գցելը։ Արևմտյան Հայաստանից զորքերի հանելու հարցը դնելով, Վ. Ի. Լենինը ենթադրում էր հայ ժողովրդին տալ լիակատար ինքնուրույնություն, որ նա տնօրինի իր բախտը, որոշի կառավարման ձևն առանց կողմնակի ուժի հարկադրանքի։

Այդ տեսակետից հետաքրքիր է Վ. Տերյանի հաղորդումը Վ. Ի. Լենինի հետ ունեցած զրույցի մասին։ 1917 թ. նոյեմբերին կամ դեկտեմբերին Վ. Տերյանը գրել է. «Այսօր զրույց ունեցա այդ առթիվ ընկ. Լենինի հետ, որին բացատրեցի թե ինչո՞ւ անհրաժեշտ է առայժմ զորքերը չհանել Հայաստանից և պայմանավորել Հայաստանի ինքնորոշումը աքսորվածների և փախստականների վերադարձով ու այլ գարանտիաներով»։

Այնուհետև նա ընդգծում է, թե Վ. Ի. Լենինը «շատ լավ վերաբերվեց և պարզեց, որ երբ ինքն ասում է զորքերը հանել Հայաստանից, դրանով ուզում է ասել, թե երբ հայերը պահանջեն այդ, որպեսզի նրանց վրա ճնշում չլինի Ռուսիայի կողմից և նրանք ստիպված չլինեն ռուսական օրենսացիա ընդունելու։ Իսկ հայերի ապահովության համար, եթե նրանք այդ կամենան, նա բնավ դեմ չէ, որ մնան հարկավոր եղած զորամասեր»[1]։

---

[1] Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 402—403։

Վ. Ի. Լենինը հոկտեմբերյան ռևոլյուցիայի օրերին գրած պարտիայի ծրագրի վերանայման շուրջը աշխատության մեջ մի քանի անգամ կրկնում է այն թեզը, որ Ռուսաստանի ռևոլյուցիոն պրոլետարիատի պարտիան, որն աշխատում է վիլիկոռուսների լեզվով, պարտավոր է ճանաչել անջատման իրավունքը։ Լենինը նշում էր, որ «մենք ուզում ենք ռևոլյուցիոն-պրոլետարական միասնություն, միացում». «մենք ուզում ենք ազատ միացում». ուզում ենք, որ ռուսական «ռեսպուբլիկան դեպի իրեն գրավեր այլ ազգեր, բայց ինչո՞վ։ Ոչ թե բռնությամբ, այլ բացառապես կամավոր համաձայնությամբ»[1]։

Լենինյան դեկրետները, ավելի դեպքում Արևմտահայաստանի մասին դեկրետը, ելնում էր այդ սկզբունքից։

Լենինյան դեկրետը հրապարակվեց Կովկասյան մամուլի մի շարք օրգաններում, թարգմանվեց հայերեն և տարածվեց Հայաստանի աշխատավորների մեջ։

3

Հայաստանի նկատմամբ լենինյան քաղաքականությունն արտահայտվեց ոչ միայն Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ստեղծված նոր Կառավարության դեկրետների և դեկլարացիաների մեջ, այլև Ժողովրդական Կոմիսարների Սովետի ուրիշ ձեռնարկումներում։

Վ. Ի. Լենինի մշակած քաղաքականության կիրառման կոնկրետ քայլերից մեկը հանդիսացավ Հայկական Գործերի Կոմիսարիատի ստեղծումը, որը մտնում է ՌՍՖՍՌ Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի մեջ որպես նրա բաղկացուցիչ մասը։ Այդպիսի Կոմիսարիատի ստեղծումով Վ. Ի. Լենինի ղեկավարած կառավարությունը ելնում էր այն հանգամանքից, որ Հայաստանն ունի բազմաթիվ յուրահատկություններ, որոնք անծանոթ են կենտրոնական սովետական հիմնարկներին և օրգաններին, որ առանց հատուկ Հայկական Գործերի Կոմիսարիատի, դժվար կլինի հաշվի առնել Հայաստանի սոցիալ-քաղաքական կյանքի առանձնահատկությունները, անհնարին կլինի լուրջ օգնություն ցույց տալ հայ ժողովրդին։

Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ կազմակերպված Հայկական Գործերի Կոմիսարիատի առջև խնդիր դրվեց նախապատրաս-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 207։

տել և կառավարությանը ներկայացնել անհրաժեշտ զեկուցագրեր և նյութեր Հայաստանի մասին, հայ ժողովրդի կարիքների մասին։ Այնուհետև Հայկական Գործերի Կոմիսարիատին տրվեցին ֆինանսական միջոցներ, կենսամթերքներ և արդյունաբերական ապրանքներ, հայ գաղթականների առաջին անհրաժեշտության կարիքները բավարարելու համար, նրանց համար բնակարանային պայմաններ ստեղծելու, աշխատանքի մեջ ներգրավելու, ինչպես նաև հայրենադարձության գործը նախապատրաստելու համար։

Ժողկոմսովետը Հայկական Գործերի Կոմիսարիատի վրա պարտականություն դրեց նաև կուլտուրական աշխատանքի գծով։ Կոմիսարիատը աշխատանք ծավալեց հայ բնակչություն ունեցող վայրերում հայկական դպրոցներ, ակումբներ, թերթեր և կուլտուրայի այլ օջախներ կազմակերպելու համար, որոնք հանդիսանում էին Սովետական Ռուսաստանի լենինյան քաղաքականության պրոպագանդայի հենակետեր և հայ ժողովրդի մեջ տարածում էին Վ. Ի. Լենինի աշխատությունները, Կոմունիստական պարտիայի և ՌՍՖՍՌ կառավարության դիրեկտիվներն ու որոշումները։

Հայ ժողովրդի ազատագրման հարցում լենինյան քաղաքականության կարևոր խնդիրներից մեկն էլ բուրժուա-նացիոնալիստական հակառևոլյուցիոն օրգանների և կազմակերպությունների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցն էր։ Ինչպես հայտնի է, դեռևս ցարական իշխանության ժամանակ և ժամանակավոր կառավարության իշխանության ամիսներին Ռուսաստանում և Անդրկովկասում բուրժուազիան ստեղծել էր զանազան անուններ կրող հիմնարկներ և կազմակերպություններ, որոնք կատարում էին շահագործողների դասը և ռուսական հակառևոլյուցիոն ուժերի առաջադրանքները։

Այդպիսի օրգաններից մեկը հանդիսանում էր Սահմանադիր ժողովի կոմիտեն, որի կազմումն էին Վ. Վոլսկին, Վ. Ալմազովը, Վ. Աբրամովը, Ն. Լաղարևը, Ս. Նիկոնովը և ուրիշներ։

Սահմանադիր ժողովի կոմիտեն 1918 թվականի սկզբներին հատուկ կոչով դիմեց հայ ժողովրդին, փորձելով նրան շեղել ռևոլյուցիոն պայքարի ուղուց, ոտքի հանել Սովետական իշխանության դեմ։ Կոմիտեի դիմումի մեջ հայ ժողովրդին «խոստում է տրվում» երկրում հաստատել «Սահմանադիր ժողովի անդամների կոմիտեի իշխանություն», «համառ կռիվ մղել բոլշևիզմի դեմ», «վերականգնել նախկին դաշնակիցների հետ կապերը»[1] և այլն։

[1] ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 746, թ. 1, 2, 3։

Այսպիսով, Սահմանադիր ժողովի անդամների մի խումբ իրենց կամավոր հայտարարելով կոմիտե և հանդես գալով իշխանության հավակնություններով, ջանքեր էին թափում հայ ժողովրդի նկատմամբ Սովետական կառավարության վարած ռևոլյուցիոն քաղաքականությանը հակադրել իրենց հակառևոլյուցիոն քաղաքականությունը, հայ ժողովրդին նորից նետել Անտանտայի դիվանագետների խճճած ցանցի մեջ։

Վ. Ի. Լենինի կիրառած վճռական դիծը՝ Սահմանադիր ժողովը ցրելու և նրա անդամների հակառևոլյուցիոն գործունեությանը ջախջախիչ հարված տալու գործում, միաժամանակ վերջ տվեց բուրժուազիայի գործակալներից կազմված այդ «կոմիտեի» ոտնձգություններին՝ հայ ժողովրդի դեմ։ Վ. Ի. Լենինը Ռուսաստանի ժողովուրդներին, հայ ժողովրդին ցույց տվեց, որ Վոլսկու և նրա կամպանիայի ջանքերն ուղղված են ռևոլյուցիայի դեմ, նպատակ ունեն խաբել աշխատավորներին։

ՌՍՖՍՌ Ժողկոմսովետը ցրեց Մոսկվայում գործող այսպես կոչված «Հայաստանի պաշտպանության խորհուրդը», որը կազմված էր նախկին միապետականներից և պաշտպանողական-բուրժուական գործիչներից։ Հանդես գալով «Հայաստանի պաշտպանության» մեծադղորդ հայտարարություններով, ամբողջովին կտրված Հայաստանից ու հայ ժողովրդից, այդ սնամեջ խորհուրդը ստեղծված էր պաշտպանելու բուրժուազիայի շահերը[1]։

Վ. Ի. Լենինը դիրեկտիվ տվեց վերացնել Պետրոգրադում ցարական գեներալ Բագրատունու գլխավորությամբ գործող Հայկական ռազմական կոմիսարիատը, որը սպիտակգվարդիական գեներալների հետ կապեր ուներ և օժանդակում էր բուրժուա-նացիոնալիստական կազմակերպություններին, գործում էր «դաշնակցություն» պարտիայի դիրեկտիվներով։

Այդ մասին Ժողկոմսովետն ընդունեց հատուկ որոշում.

«Հայկական ռազմական կոմիսարիատը (որ տեղավորված է Տրոիցկու փողոցում, Տոլստոյի տանը) սույնով վերացվում է։ Բոլոր գործերը, փաստաթղթերը, գույքը, կապիտալները, ինչպես նաև հիշյալ Կոմիսարիատի շենքը հանձնվում են Աղգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատին կից Հայկական Գործերի Կոմիսարիատին։

Ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահ՝
Ուլյանով (Լենին)»[2]։

---

[1] Տե՛ս ՍՍՌՄ ՀՌԿՊԱ, ֆ. 1318, ց. 1, գ. 40, թ. 48—49։

[2] Նույն տեղում, ֆ. 1235, ց. 93, գ. 163, թ. 58։

Վ. Ի. Լենինի ստորագրությամբ հատուկ որոշում հրապարակվեց Հայկական Ազգային Խորհուրդները, Կոմիտեները, Պաշտպանության խորհուրդները և բուրժուա-նացիոնալիստական այլ կազմակերպությունները ցրելու մասին։ Այդ որոշման մեջ ասված է.

«Նկատի ունենալով, որ Ռուսաստանի Սովետական Սոցիալիստական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկայի զանազան քաղաքներում գոյություն ունեցող հայկական ազգային խորհուրդները, ինչպես նաև Հայաստանի Պաշտպանության խորհուրդների կամ Ռազմահեղափոխական կոմիտեների, կամ այլ անունների տակ իրենց թաքցնող կազմակերպությունները—բուրժուական կազմակերպություններ են, որ այդ բուրժուական կազմակերպությունները փաստորեն հանդիսացել և հանդիսանում են անդրկովկասյան հակառևոլյուցիոն կառավարության հետ կապի մեջ գտնվող Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհրդի ֆիլիալային բաժանմունքներ, այլև նկատի ունենալով, որ այդ բուրժուական կազմակերպությունները, որոնց կազմի մեջ մտնում են ակնհայտ հակառևոլյուցիոն տարրեր, թաքնվելով Հայաստանի պաշտպանության կեղծ խոսքերով, դրամական հանգանակություններ են կատարում և ջոկատներ կազմակերպում Հայոց Հակառևոլյուցիոն Ազգային Խորհրդի տրամադրության տակ ուղարկելու համար և ագիտացիա են մղում Սովետական իշխանության դեմ, առաջարկվում է՝

1. Բոլոր վերոհիշյալ Հայկական Ազգային Խորհուրդները, Կոմիտեները, Պաշտպանության Խորհուրդները, Ռազմառևոլյուցիոն Կոմիտեները և այլն—վերացնել։

2. Վերը հիշված Հայկական Ազգային խորհուրդների, Կոմիտեների և այլնի բոլոր գործերը, փաստաթղթերը, գույքը, կապիտալները, ինչպես նաև շենքերը հանձնել Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատին կից Հայկական Գործերի Կոմիսարիատին։ Իսկ այն քաղաքներում, որտեղ Հայկական Գործերի Կոմիսարիատի բաժանմունքներ չկան, վերոհիշյալ գույքը, կապիտալները, գործերն ու փաստաթղթերը պետք է հանձնվեն Բանվորների և Գյուղացիների դեպուտատների տեղական Սովետներին, որոնց պարտավորեցվում է այս առթիվ բանակցել Հայկական Գործերի Կոմիսարիատի հետ։

Ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ՝
Վ. Ուլյանով (Լենին)»[1]։

---

1 Տե՛ս «Известия ВЦИК» թերթը, Մոսկվա, 1918, № 151։

Վ. Ի. Լենինը սույն որոշման մեջ և այլ փաստաթղթերում բացահայտեց Հայկական Ազգային խորհուրդների քաղաքական-դասակարգային դեմքը, ցույց տվեց, որ ազգային խորհուրդները չեն արտահայտում աշխատավոր մասսաների շահերը, ազգի շահերը։ Հայկական Ազգային խորհուրդները փաստորեն հայ ժողովրդին մեկուսացնում էին հարևան ժողովուրդներից և նրան նորից իմպերիալիստական պետությունների դիվանագետների խարերայական խոստումներով կերակրում։

ՌՍՖՍՌ կառավարության լենինյան քաղաքականությունը մերժում էր հայկական ինքնակոչ ազգային խորհուրդների քաղաքականությունը, նրանց ձգտումը երկրում բուրժուազիայի հակառևոլյուցիոն դիկտատուրա հաստատելու ուղղությամբ, աշխատավորներին կոչ անելով հաստատել Սովետական իշխանություն։

Հայ ժողովրդի կարիքների նկատմամբ լենինյան քաղաքականության մասին են վկայում նաև հայկական կուլտուրայի ժառանգության և կուլտուրական օջախների պահպանման մասին որոշումներն ու կարգադրությունները։ Վ. Ի. Լենինը Ժողկոմսովետում և Աշխատանքի ու Պաշտպանության խորհրդի նիստերում կտրականապես դնում և անցկացնում էր որոշումներ ու կարգադրություններ ազգային կուլտուրայի դանձերը պահպանելու մասին, դրանք ժողովրդի սեփականությունը դարձնելու համար։

Դրա լավագույն օրինակն է հանդիսանում Հայկական Լազարյան ճեմարանի մասին ընդունված որոշումը և Վ. Ի. Լենինի հաստատած Կանոնադրությունը։ Ժողկոմսովետը քննելով Մոսկվայում արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտի հարցը, նշել է, որ այդ ինստիտուտը ծառայում է հայ աշխատավորների կուլտուրական-լուսավորության կարիքներին և հաստատել է նրա կանոնադրությունը, որի տակ ստորագրել է Վ. Ի. Լենինը։ Կանոնադրությամբ սահմանվել է ինստիտուտում դասավանդման կարգը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով. ինստիտուտը ղեկավարում էր Հայկական Գործերի Կոմիսարիատը։ Նախկին Լազարյան ճեմարանի ամբողջ գույքը, շենքը, միջոցները համարվեցին Հայկական ինստիտուտի սեփականություն և հանձնվեցին Հայկական Գործերի Կոմիսարիատի տնօրինությանը։ Որոշվեց ինստիտուտի միջոցներով պահպանել հայկական թանգարան, գրադարան և հրատարակել գրքեր հայոց լեզվի և գրականության պատմության վերաբերյալ։ Լենինյան այդ պատմական որոշման մեջ հատուկ կետ կա այն մասին, որ այդ դպրոցի ֆակուլտետների պահպանման համար ան-

հրաժեշտ միջոցները տրամադրում է Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատը՝ ազգային փոքրամասնությունների լուսավորման կարիքների համար նախատեսված ծախսերից[1]։

ՌՍՖՍՌ կառավարությունը ելնելով Լենինի այդ դրույթներից. Ռուսաստանի այլ քաղաքներում գոյություն ունեցող հայկական դպրոցները[2], ինչպես նաև Մոսկվայի և Պետերբուրգի հայկական եկեղեցիների կապիտալները հայտարարեց որպես հայ ժողովրդի սեփականություն[3]։

Հայաստանի նկատմամբ Սովետական Ռուսաստանի կառավարության լենինյան քաղաքականության կարևորագույն հարցերից մեկն էլ ուրիշ պետությունների կողմից Հայաստանի վերաբերյալ ունեցած ծրագրերի և նրանց գործադրման ուղղությամբ կիրառված գործնական միջոցների նկատմամբ հանդես բերած վերաբերմունքն էր։

Թե ի՞նչպես էր Վ. Ի. Լենինը գնահատում Անտանտի պետությունների զավթողական ծրագրերը Մերձավոր Արևելքում և Հայաստանում, դրա մասին խոսվեց նախորդ բաժնում։ Լենինը խիստ բացասաբար էր վերաբերվում նաև Թուրքիայի նկատմամբ եղած նվաճողական ծրագրերին, դրանք անվանելով ավազակային, կողոպտիչ։

Իսկ ինչպե՞ս գնահատեց Վ. Ի. Լենինը Թուրքիայի կողմից Հայաստանում կիրառվող քաղաքականությունը՝ ռևոլյուցիայի շրջանում, 1917 թ. վերջերին և 1918 թվականին, մանավանդ Բրեստի հաշտության շուրջը մղվող դիվանագիտական պայքարի շրջանում։

Թուրքական դիվանագիտական ներկայացուցիչներն ինչպես Բրեստում, այնպես էլ Տրապիզոնում և Բաթումիում վարվող բանակցությունների ժամանակ լավ գիտեին, որ Վ. Ի. Լենինի ղեկավարած կառավարությունը դեմ է Թուրքիայի կողմից Հայաստանն օկուպացնելուն, սակայն նրանք վաղուց պնդում էին, որ ռուսական բանակը շուտով հեռանա Հայաստանից և Սովետական Ռուսաստանը չմիջամտի արևմտահայերի գործերին։ Թուրքական դիվանագետներից մեկն ուղղակի գրել է.«Հայաստանի ինքնորոշման հարցը պետք է հանվի օրակարգից, Թուրքիան թույլ չի տա այդ հարցի քննարկումը»[4]։ Թուրքիան պահանջում էր, որ Հայաս-

---

[1] Տե՛ս ՍՍՌՄ ՀՈԿՊԱ, ֆ. 130, ց. 4, դ. 496, թ. 178։

[2] Նույն տեղում, ֆ. 1235, ց. 93, դ. 258, թ. 90։

[3] Նույն տեղում, ֆ. 1318, ց. 1, դ. 40, թ. 77։

[4] Տե՛ս Բ. Բորյանի նշված գիրքը, մաս 2, էջ 52—53։

տանը թողնվի բախտի քմահաճույքին, մատնվի թուրքական բանակի հոշոտմանը։

Արևմտյան Հայաստանի անկախության և ազատ ինքնորոշման մասին Լենինի հրովարտակից հետո, երբ թուրքական բանակը ներխուժեց Հայաստան, այն օկուպացնելու համար, Վ. Ի. Լենինի ղեկավարած կառավարությունը վճռականորեն դատապարտեց թուրքական օկուպանտներին, դիմակալերծ արեց նրանց գազանությունները։ Հատուկ հայտարարությամբ հանդես գալով, ՌՍՖՍՌ կառավարությունը անհանդուրժած «հայերի հետագա ճակատագրի» վիճակով, նշեց, որ թուրքական բանակը «վրեժի ու չարության հողի վրա» էքսցեսներ է կատարում, Բրեստի հաշտության պայմանագիրը դարձնելով հայ ժողովրդի համար «անթիվ թշվառությունների աղբյուր»[1]։

Վ. Ի. Լենինի ցուցումով ՌՍՖՍՌ Արտաքին գործերի ժողկոմ Չիչերինը հեռագրով գերմանական իշխանություններից պահանջեց ազդել իրենց դաշնակից Թուրքիայի վրա, անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել վերջ դնելու Հայաստանում թուրքական բանակի գազանություններին, դադարեցնել հայ խաղաղ բնակչության ոչնչացումը[2]։

Սովետական Ռուսաստանի համար բացառիկ ծանր օրերին, 1918 թվականին, երբ իմպերիալիստական զավթիչների բանակներն օղակել էին երկիրը և գրավում էին նրա մասերը, Վ. Ի. Լենինը հետևում էր Անդրկովկասում կատարվող իրադարձությունների, անդրադառնում Հայաստանի նկատմամբ թուրքական քաղաքականության մերկացմանը։ «Մենք լավ տեսանք,— ասում էր Վ. Ի. Լենինն այդ օրերին, Մոսկվայի աշխատավորների միտինգում արտասանած մի ճառի մեջ,— թե ինչ էր տեղի ունենում և տեղի է ունենում Կովկասում, որտեղ կովկասյան մենշևիկները դաշինք են կնքել ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՀԵՏ»[3] (ընդգծումը մերն է—Ա. Մ.)։

Այսպիսով, Վ. Ի. Լենինը թուրքական քաղաքականությունը Հայաստանում և ամբողջ Կովկասում դիտում էր որպես իմպե-

---

1 Տե՛ս ՀՍՍՌ ԿՊԿԱ, ֆ. 114, դ. 229, թ. 1։

2 Հեռագիրը տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» ժողովածուի 211 էջում (1960)։

3 «Պրավդա», 23 հոկտեմբերի 1918 թ. (Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 562)։

ռիալիստական քաղաքականություն, իսկ Թուրքական կառավարությունը՝ որպես իմպերիալիստական կառավարություն: Թուրքիան հանդես եկավ որպես ժանդարմ Անդրկովկասում։

* * *

Այսպիսով, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի մեջ, Սովետական Ռուսաստանի կառավարության 1917—1918 թթ. հրապարակած դեկրետների և որոշումների մեջ, ինչպես նաև ՌՍՖՍՌ կառավարության միջոցառումներում հստակ կերպով արտահայտվեցին Վ. Ի. Լենինի կողմից Հայաստանի ինքնորոշման և հայ ժողովրդի ազգային ու սոցիալական լիակատար ազատագրման քաղաքականության սկզբունքները։

Վ. Ի. Լենինը հռչակեց այդ քաղաքականությունը, որը հայ ժողովրդին ցույց էր տալիս փրկության և վերածնունդի ուղին։ Հայ ժողովուրդը լենինյան քաղաքականության մեջ տեսավ իր ազատագրության միակ ելքը։

ԳԼՈՒԽ ՎԵՑՆԵՐՈՐԴ

ՀԱՅ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՄԱՐՏԵՐԻՆ 1917—1918 ԹԹ.

1

Կարլ Մարքսը Վ. Լիբկնեխտին գրած նամակներից մեկում, խոսելով ռևոլյուցիոն ճգնաժամի պահին ժողովրդի դիրքի մասին, ասել է թե կորած է այն ժողովուրդը, որը գերագույն ճգնաժամի պահին չի կարողանում հեղափոխականորեն հանդես գալ։

Այստեղ մեզ զբաղեցնում է այն հարցը, թե ինչպես Վ. Ի. Լենինի գաղափարները և նրա ռևոլյուցիոն վերափոխող ծրագրերը թափանցեցին հայ աշխատավորության մեջ, քաղաքականորեն լուսավորեցին նրան, ինչպես հայ ժողովուրդն ընկալեց Լենինի ծրագրերը, նրա պայքարի կոչերը և նրա ղեկավարած կառավարության վարած քաղաքականությունը և ինչպե՞ս հեղափոխականորեն հանդես եկավ 1917—1918 թթ. «գերագույն ճգնաժամի» պահին, նրա գավակներն ինչպե՞ս համալրեցին լենինյանների շարքերը և մասն ռևոլյուցիոն պայքարի հորձանուտը, հայ ժողովուրդն ի՞նչ ավանդ մուծեց սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար մղված պայքարում։

Փետրվարյան ռևոլյուցիայից հետո Անդրկովկասը դեռևս հանդիսանում էր մեկ վարչական երկրամաս, որտեղ ապրող հիմնական ժողովուրդները՝ հայերը, վրացիները, ադրբեջանցիները չունեին տերիտորիալ որոշակի սահմանազատումներ։ Ուստի նրանց մեջ տարվող ռևոլյուցիոն գործունեությունն ընթանում էր համակովկասյան, համենայն դեպս Անդրկովկասյան մասշտաբով։

Հայ բոլշևիկ լենինյանների գերակշռող մեծամասնությունը գործում էր Թիֆլիսում, Բաքվում, Շուշիում, Բաթումիում, Գանձա-

կում, ինչպես նաև Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Երևանում և այլ քաղաքներում ու շրջաններում։ Պետք է նկատի ունենալ, որ 1916 թ. տվյալներով Թիֆլիս քաղաքում բնակվում էր 149.000 հայ[1], իսկ Երևանի ամբողջ բնակչությունը կազմում էր ոչ ավելի քան 30.000 մարդ։ Վրաստանում նույն ժամանակ ապրում էր 454.000 հայ, Ադրբեջանում՝ 432.000 հայ[2], ՀՍՍՌ տերիտորիայում այն ժամանակ տեղական բնակչությունը կազմում էր մեկ միլիոնից քիչ ավելի, գումարած մոտ 300 հազար ներգաղթած հայեր[3]։

Հայ բոլշևիկ լենինյանները հաշվի էին առնում երկրամասի բնակչության ազգային կազմի յուրահատկությունը, գործում էին բոլոր նահանգներում և շրջաններում, մասնավորապես որտեղ բնակվում էին հայ բանվորներ ու գյուղացիներ։

Այստեղից էլ հայ աշխատավորության մեջ Վ. Ի. Լենինի գաղափարների պրոպագանդան, նրանց կազմակերպման և ռևոլյուցիոն շարժման մեջ ներգրավելու հարցերը կրում էին համակովկասյան բնույթ։

Վ. Ի. Լենինը Անդրկովկասի բոլշևիկների գործունեությունը կազմակերպում և ուղղություն էր տալիս նրանց ղեկավարների հետ ունեցած հանդիպումների միջոցով, նամակագրությամբ, Կենտրոնական Կոմիտեի դիրեկտիվներով, բոլշևիկյան մամուլի էջերում տպած իր աշխատություններով։

Դեռևս 1917 թվականի մարտին էմիգրացիայից վերադառնալիս Վ. Ի. Լենինի հետ Պետրոգրադ եկավ և ապա Անդրկովկաս ուղարկվեց Միխա Ցխակայան, որը Լենինից մանրամասն ցուցումներ ուներ Անդրկովկասի բոլշևիկների կոնկրետ խնդիրների մասին։ Ապրիլյան կոնֆերանսին մասնակցող Կովկասի դելեգատները վերադառնալով Բաքու և Թիֆլիս, հաղորդեցին Լենինյան պլատֆորմի մասին։ Մամուլի էջերից Կովկաս են հասնում Լենինի Ապրիլյան թեզիսները և դեկուցումները։

Վ. Ի. Լենինի կողմից Անդրկովկասի բոլշևիկների գործունեությանն ուղղություն տալու հարցերը մանրակրկիտ քննվել են 1917 թվականի հունիսի 4—24-ին, երբ Ստ. Շահումյանը գտնվում էր

---

1 Տե՛ս «Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջանում», Պ. Արելյանի կազմած վիճակագրական տվյալները, Երևան, 1931, էջ 69։

2 Նույն տեղում, էջ 70։

3 Նույն տեղում, էջ 56. 62։

Պետրոգրադում, աշխատում էր Վ. Ի. Լենինի հետ միասին և մասնակցում բանվորների, զինվորների ու գյուղացիների դեպուտատների Սովետների առաջին համագումարին։ Ն. Կրուպսկայան գրել է, թե «Իլյիչը 1917 թվականին ուրախ էր տեսնվելու Ստեփանի հետ և խոսելու ընդհուպ այն բոլոր խնդիրների մասին, որոնք այնպես համառ կերպով ծառացել էին բոլշևիկների առաջ»[1]։ Պետրոգրադում Վ. Ի. Լենինը Ստ. Շահումյանի հետ հանդիպումներ էր ունենում ամեն օր։ Պարտիայի ղեկավար գործիչների հետ Շահումյանը Լենինին տեսնում էր սովետների բոլշևիկյան Ֆրակցիայի նիստերում, համագումարում, այնուհետև Կենտկոմում, բնակարանում։ Վ. Ի. Լենինը և Ն. Կ. Կրուպսկայան Ստ. Շահումյանի հետ հաճախ Պետրոգրադում գնում էին զբոսանքի։ Ինչպես պատմել է Կրուպսկայան, մեկ անգամ Շահումյանը զբոսանքի ժամանակ Լենինին հանձնում է կարմիր նշաններ, որոնք նրա որդիները ուղարկել էին և խնդրել՝ հանձնել սիրելի Իլյիչին։ Կրուպսկայան սիրով պատմում է այդ մասին, նշում, որ «Իլյիչը ժպտաց», իհարկե, ընդունելով նվերը։

Սովետների Համառուսաստանյան առաջին համագումարում Ստ. Շահումյանն ընտրվել էր Կենտգործկոմի անդամ։ Զինված Վ. Ի. Լենինի ցուցումներով և ծրագրային դիրեկտիվներով, նա վերադառնում է Անդրկովկաս՝ գլխավորելու բոլշևիկների պայքարը աշխատավորներին համախմբելու համար։

Անդրկովկասի բոլշևիկներն, այսպիսով, իրենց ղեկավարներին ուղարկելով Վ. Ի. Լենինի մոտ, նրանից ստանում էին դիրեկտիվներ և ցուցումներ։ Անդրկովկաս էին գալիս Կենտկոմի ներկայացուցիչները, ստացվում էին նամակներ, պրոկլամացիաներ, կենտրոնական պարբերականներ՝ Վ. Ի. Լենինի հոդվածներով։

Անդրկովկասի բոլոր աշխատավորներին, նրանց շարքում և հայերին ռևոլյուցիոն պայքարի մեջ ներգրավումը տեղի էր ունենում Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ, նրա զինակիցների և աշակերտների գործունեության շնորհիվ։ Ստորև կշարադրենք մի շարք նյութեր, որոնք ցույց են տալիս Վ. Ի. Լենինի դերը հայ աշխատավորության ռևոլյուցիոն դաստիարակության և նրան սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար ծավալված պայքարին մասնակից դարձնելու գործում։

---

1 Ն. Կրուպսկայա, Հիշողություններ, էջ 510։

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ։ Ներկայումս ՀՍՍՌ մեջ մտնող շրջանների տերիտորիայում 1917 թվականի Փետրվարյան ռևոլյուցիայից հետո փոքրաթիվ սոցիալ-դեմոկրատները դուրս գալով ընդհատակից, վերականգնում են սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, ստեղծում նորերը և անցնում եռանդուն աշխատանքի։ Հայաստանի տերիտորիայում գործող բոլշևիկ սոցիալ-դեմոկրատները դեռևս հանդես էին գալիս մենշևիկների հետ մի կազմակերպության մեջ։ Շատ ընկերներ դեռ հստակ պատկերացում չունեին մենշևիկների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի մասին։

Վ. Ի. Լենինի Ապրիլյան թեզիսներից և Ապրիլյան կոնֆերանսի որոշումներից հետո միայն Հայաստանի բոլշևիկները ճիշտ կողմնորոշում ունեցան այս և այլ հարցերում։

Բոլշևիկ-լենինյանների մի խումբ աշխատում էր Էջմիածնում դեռևս 1916 թվականից։ Այնտեղ Գևորգյան ճեմարանում գործում էր ընդհատակյա բոլշևիկյան խմբակ, որը կազմվել էր մեծ մասամբ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցից, Շուշու և Երևանի թեմական դպրոցներից եկած մարքսիստ աշակերտներից։ Այդ խմբի մեջ մտնում էին Անաստաս Միկոյանը, Սարգիս Դանիելյանը, Արտակ Ստամբոլցյանը, Արամ Շահգելդյանը, Ենոք Մկրտումյանը, Հայկազ Յոստանյանը, Աղասի Խանջյանը, Արտո Ղազարյանը, Արաքս Մուրադյանը, Պապիկ Մկրտչյանը, Դառնիկ Ղազարյանը, Գևորգ Ղևոնդյանը, Նահապետ Կուրղինյանը և ուրիշներ։ Խմբի մեջ մտնողները կապ ունեին Թիֆլիսում և Բաքվում գործող բոլշևիկների հետ, կարդում էին բոլշևիկյան թերթեր և հանդես էին գալիս հոդվածներով։

Ուսանող մարքսիստները կապ ունեին նաև դասախոս բոլշևիկ Աշոտ Հովհաննիսյանի, ինչպես նաև էջմիածին քաղաքում ապրող կոմունիստներ Գևորգ Աթաբեկյանի, նրա քրոջ՝ Էմմա Աթաբեկյանի, նրանց եղբոր՝ Լիպարիտ Աթաբեկյանի[1] և ուրիշների հետ։ Վ. Ի. Լենինի Ռուսաստան վերադառնալու և նրա շուրջը մամուլում տպված նյութերի կապակցությամբ մարքսիստ-ուսանողները ժողով են գումարում և հրավիրում Ա. Գ. Հովհաննիսյանին զեկուցելու Վ. Ի. Լենինի մասին։ Հետագա ամիսներին այդ մարքսիստները ցրվեցին Անդրկովկասի կենտրոնները, մասնավորապես Թիֆլիս ու Բաքու, ռևոլյուցիոն աշխատանքը շարունակելու համար։

[1] Լիպարիտ Աթաբեկյանը ակտիվ մասնակցել է քաղաքացիական կռիվներին, հետո Մոսկվայում վարել է ղեկավար պաշտոններ, իսկ այժմ անհատական թոշակառու է։

Հայաստանում Վ. Ի. Լենինի դիրեկտիվները կիրառելու գործում որոշակի նշանակություն է ունեցել 1917 թվականի ամառը ՌՍԴԲՊ Կենտկոմի ներկայացուցչի ժամանումը և Ալեքսանդրապոլում ու Երևանում պարտիական կոնֆերանսների գումարումը։

1917 թվականի հունիսին Պետրոգրադից Անդրկովկաս է գալիս ՌՍԴԲՊ Կենտկոմի ներկայացուցիչ Բագրատ Բորյանը, որը Պետրոգրադի կոմիտեի անդամ էր։ Մեկնելուց առաջ Վ. Ի. Լենինը Բորյանին հրահանգներ էր տվել Անդրկովկասի պարտիական կազմակերպություններում ելույթներ ունենալու պարտիային հուզող հարցերի շուրջը։ Վ. Ի. Լենինի 1917 թ. ապրիլ-հունիսի «հասցեների գրքույկում» նշված է. «Բագրատ Բորյան (կարելի է և հանձնարարական տալ Շահումյանի համար). Բալախանի, նավթարդյունաբերողների Համագումարի խորհրդի տեխնիկական վերահսկիչ. Բագրատ Բորյանին»[1]։ Լենինն անձամբ գրել է հասցեները և դրանք գտնվում էին նրա ձեռքի տակ։ Բորյանը ժամանում է Բաքու։ 1917 թ. հուլիսի 4-ին ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեն հետևյալ մանդատն էր տվել Բ. Բորյանին.

«Սույն վկայականը տրվում է ընկ. Բագրատ Բորյանին այն մասին, որ նա Կենտրոնական Կոմիտեի հանձնարարությամբ ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեի կողմից լիազորվում է այցելել Կովկասի պարտիական կազմակերպությունները, նախապատրաստելու Համառուսաստանյան պարտիական համագումարը, որը հրավիրվում է Պետրոգրադում ս. թ. հուլիսի 25-ին։ Խնդրվում է կազմակերպություններին, անհրաժեշտության դեպքում ընկ. Բորյանին ցույց տալ օգնություն։

Նախագահ՝ Ս. Շահումյան»։

Բ. Բորյանը հանդես է գալիս Անդրկովկասի խոշոր քաղաքներում գործող պարտիական կազմակերպություններում։

Ալեքսանդրապոլում հուլիսի 16-ին գումարվում է քաղաքի սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների ժողով, որտեղ Կենտկոմի ներկայացուցիչը հանդես է գալիս զեկուցումով Վ. Ի. Լենինի կողմից առաջադրված լոզունգների մասին, տալիս է ընթացիկ մոմենտի բնութագրությունը, շարադրում է լենինյան ստրատեգիայի ու տակտիկայի հիմնական հարցերը տվյալ էտապում։ Ալեքսանդրապոլի բոլշևիկների ժողովին ներկա են եղել այն ժամանակ այնտեղ աշխատող բոլոր աշխի ընկնող ռևոլյուցիոն գործիչները՝ Պ. Արվելաձեն, Ա. Սաամբոլյանը, Բ. Ղարիբջանյանը, Էդ. Ամատունին,

[1] «Լենինյան ժողովածու», հատ. 21, էջ 85։

Գ. Հանեսօղլյանը, Գ. Հայկունին, Ի. Կորոստելենկոն, Վարդուշ Տարախչյանը, Ն. Լեժավան, Գ. Աթարբեկյանը և ուրիշներ։ Ալեքսանդրապոլի բոլշևիկները միահամուռ պաշտպանում են Կենտկոմի ներկայացուցչի վեկուցման մեջ շարադրված լենինյան թեզերը։

Վ. Ի. Լենինի դիրեկտիվից ելնելով, Ալեքսանդրապոլի բոլշևիկները անջատվում են մենշևիկների հետ ունեցած ձևական միավորումից, ընտրում են բոլշևիկյան կոմիտե, որի կազմում մտել էին՝ Պ. Արվելաձեն, Բ. Ղարիբջանյանը, Ամաշակելին (զինվոր), Հովհաննիսյանը (բանվոր), Լեժավան (մեքենավար), Տարախչյանը (ուսուցչուհի), Կորոստելենկոն, Մակարովը և Շապովալովը (կայազորի զորամասերից)։ Ալեքսանդրապոլի բոլշևիկները պրոպագանդում էին լենինյան լոզունգները։ Նրանք կապ էին պահպանում հեռավոր Պետրոգրադի հետ, Լենինի հետ։

Վերջերս Խ. Հ. Բարսեղյանը Մոսկվայի արխիվներում գտել է և հրապարակել երկու կարևոր փաստաթուղթ այդ հարցի մասին[1]։

Առաջինը Բագրատ Բորյանի Ալեքսանդրապոլից 1917 թ. նոյեմբերի 6-ին գրած նամակն է ուղարկված Վ. Ի. Լենինին.

«Ընկեր Լենին.

Ողջունելով Ձեզ, ես չեմ կարող նկարագրել իմ հրճվանքը։ Կովկասի ընկերները հաստատ կանգնած են իրենց դիրքում և պետք է հուսալ, որ մենք կկարողանանք լրիվ անցկացնել բոլշևիզմի գիծը։ Ես եղա Կովկասի շատ քաղաքներում և հարկավոր է ասել, որ զինվորական մասսան ամենուրեք մեր կողմն է։ Մանրամասնորեն կգրեմ Բաքվից։ Ընկեր։ Բանն այն է, որ մեր ընկերներից մեկը՝ Ղարիբջանյանը, որ Ալեքսանդրապոլի քաղաքային դումայի անդամ է, Ալեքսանդրապոլ քաղաքի Զինվ. և Բանվ. Դեպ. Սովետի Գործկոմի անդամ և այլն, և այլն, ցանկանում է նամակագրություն ունենալ Ձեզ հետ Կովկասի կյանքի մի քանի հարցերի վերաբերյալ և ինչպես ես գիտեմ Ձեզ, Դուք իհարկե չեք զլանա Ձեր օգնությունը ցույց տալ մեր ընկերոջը։ Ընկերական ողջույններով Բ. Բորյան»։

Երկրորդը Բորյանի նամակին կցված Բ. Ղարիբջանյանի հետևյալ նամակն է.

«Ընկեր Լենինին.

Կովկասյան լեռների վրայով Ձեզ հետ պատիվ ունի խոսելու Բ. Ղարիբջանյանը։ Տեսած չլինելով և ծանոթ չլինելով Ձեզ, ես հիա-

---

1 «Գրական թերթ», 14 սեպտեմբերի, Երևան, 1962։

ցած եմ Ձեզանով և սիրահարված եմ Ձեզ։ Ես ժողովներում և միտինգներում հանդես եմ գալիս Ձեզ անվանելով ռուսական Մարքս, խոսելով Ձեր աշխատությունների մասին, որոնք շատ քիչ են ծանոթ ինձ։ Բարի եղեք, ինձ ուղարկել մի քանի խոսք պարունակող Ձեր նամակը և, եթե կարելի է, նաև Ձեր բրոշյուրներից մեկը։ Ձեր ընկեր Բ. Ղարիբջանյան։

6 նոյեմբերի 1917 թ.»։

1917 թվականի հուլիսի 23-ին Երևանում տեղի է ունենում նահանգի սոցիալ-դեմոկրատական կոնֆերանս, որտեղ «Ընթացիկ մոմենտի և ռևոլյուցիայի հիմնական խնդիրները» թեմայով զեկուցումով հանդես է գալիս Բ. Բորյանը, շարադրելով Վ. Ի. Լենինի դիրեկտիվները։

Կոնֆերանսն ընտրում է Երևանի կոմիտե, հանձնարարում է օգոստոսին հիմնել հայերեն և ռուսերեն թերթ, սակայն այդ որոշումը մնում է անկատար։ Կոնֆերանսի մասին մամուլում հրապարակված ինֆորմացիայի մեջ ասվում է, թե նրա մասնակիցների տրամադրությունը բարձր է եղել և հույս է հայտնվում Երևանի նահանգում սոցիալ-դեմոկրատների աշխատանքի հետագա ծավալման մասին։

Սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների գործունեությունը որոշ չափով աշխուժանում է նաև Ղափանում, Կարսում, Սարիղամիշում և այլ քաղաքներում ու շրջաններում։

Ղափանի բանվորական Դեպուտատների Սովետի նախագահության 9 անդամից 5-ը բոլշևիկներ էին։ Ղափանի Սովետի նախագահ բոլշևիկ Լևոն Ղազարյանը, պարտիական բջիջի հանձնարարությամբ, 1917 թ. ուղարկվում է Թիֆլիս՝ կապ հաստատելու երկրային կենտրոնի հետ։ Թիֆլիսում Ղազարյանը հրահանգներ է ստանում Ղափանի բանվորների և գյուղացիների մեջ Վ. Ի. Լենինի աշխատությունները և պարտիայի կոչերը տարածելու մասին։ Ղափանի բոլշևիկները Սովետում որոշում են անցկացնում ընթանալ Լենինի դրոշի ներքո։

Հայաստանում Վ. Ի. Լենինի գաղափարները 1917—1918 թթ. թափանցում էին աշխատավորների մեջ մամուլի էջերից, բանվորական և գյուղացիական միտինգներում, բոլշևիկ ագիտատորների զրույցների միջոցով, մարքսիստական գրքեր տարածելով։

Հայ աշխատավորների ավելի գիտակից մասը, որը հաղորդակից էր քաղաքական կյանքին, մասնակցում էր միտինգներին ու ցույցերին, կապված էր մամուլի հետ և ստիպանաբար կողմնորոշ-

վում էր պարտիաների ու ֆրակցիաների մեջ։ Հայաստանում տարածվում էին «Պրավդա», «Կավկազսկի ռաբոչի» և «Բակինսկի ռաբոչի» թերթերը, հայ աշխատավորների մեջ մեծ հետաքրքրություն էին առաջ բերում հայատառ «Պայքար», «Սոցիալ-դեմոկրատ», «Բանվորի կոչը», «Նոր կյանք», «Նեցուկ», «Բանվորի խոսք», «Կարմիր օրեր», «Կոմունիստ», «Տեղեկատու» և շատ ուրիշ թերթեր, որոնց էջերում տպվում էին Վ. Ի. Լենինի հոդվածները կամ նրանց ոգով կազմված այլ նյութեր։

Հայ ընթերցողները 1917 թ. հունիսի 3-ին սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթում կարդացին «Ընկեր Լենինի մասին» խմբագրական հոդվածը։ Թերթը հաղորդել է, թե ռուսական բուրժուական մամուլն ինչպիսի կամպանիա է մղում Վ. Ի. Լենինի դեմ և ինչ նպատակներով։ Այնուհետև հոդվածում նշվում է, որ ռուսական բուրժուական մամուլի օրինակով հայկական բուրժուական մամուլն էլ սկսել է սրել «իր բութ ատամները Լենինի անվան վրա», որ «բուրժուազիան իր բոլոր ատելությունն ու սարսափը հեղափոխության դեմ թափում է Լենինի և լենինյանների վրա»[1]։

Ո՞վ է Լենինը, ինչո՞ւ է բուրժուազիան այդպես հարձակվում նրա վրա։ Այդ հարցը դնելով, թերթը նկարագրում է Լենինի կյանքի ուղին, բանտերը, աքսորը, տարագրությունը, ռևոլյուցիոն անխոնջ գործունեությունը, նրա հրատարակած թերթերը, պարտիայի համագումարները և Լենինի պայքարը բոլշևիզմի սկզբունքների համար։ «Լենինը չունի այսպես կոչված «սենսացիոն կյանք»,— գրել է «Պայքարը»,— նա «ամբողջապես պատկանում է հեղափոխությանը... նա մի հոգս միայն ունի, դա կուսակցությունն է»[2]։

«Պայքարի» հոդված գրողը լավ տեղյակ էր Լենինի կյանքին ու գործին, պատմում է Լենինի բնավորության այնպիսի կողմերի մասին, որոնք կարող էր գիտենալ միայն Լենինի հետ շփում ունեցողը և մոտիկից նրան ճանաչողը։ «Վլադիմիր Իլյիչը ձգտում չունի դեպի փառքը, նա թշնամի է իր անունը ռեկլամ անելուն»[3]։

Հայ բոլշևիկները թերթի էջերից խնդիր են դնում վճռականորեն հերքել բուրժուական մամուլի տարածած զրպարտանքները Լենինի մասին և ճշմարտությունն ասել ժողովրդին։ Նրանք շեշտում են, որ բուրժուական սատակները հաճախ Վ. Ի. Լենինին վերագրում են այնպիսի բաներ, որոնք նա չի ասել։ Հայ բոլշևիկները

---

[1] Տե՛ս «Պայքար» թերթը, № 39(94), 3 հունիսի 1917 թ.։

[2] «Պայքար», 3 հունիսի 1917 թ.։

[3] Նույն տեղում։

խնդրում են Վ. Ի. Լենինին, որ «գոնե այժմ իր բոլոր հոդվածները ստորագրի «Լենին» անունով»։ Խնդիր է դրվում հրատարակել Լենինի այն բոլոր հոդվածները, որ գրվել են ընդհատակի տարիներին։ «Ինքը Լենինը դժվար թե ժամանակ գտնի կամ մտածի անելու—այդպես է նրա բնավորությունը. թող ընկերները գոնե մտածեն այդ կարևոր գործն անելու»[1]։

«Պայքար»-ի հոդվածագիրը գնում է խնդիր. «Անհրաժեշտ է հրատարակել Լենինի այն հոդվածները, մանավանդ որ լույս են տեսել հին «Правда» (1912—14), «Звезда», «Просвещение» և արտասահմանի «Социал-демократ» օրգաններում ընդհանրապես 1911 թ. մինչև մեր օրերը գրածները։ Ճիշտ է այդ հոդվածների թիվը շատ-շատ է, բայց բոլորն էլ պետք է հրատարակել, որովհետև նրանց արժեքը շատ մեծ է։ Այդ հոդվածներից մեր երիտասարդ ընկերները շատ բան կսովորեն»[2]։

Այդպես էր թերթը խոսում աշխատավորների հետ։ Դա հաղվագյուտ օրինակ չէր։ 1917—1918 թթ. Անդրկովկասում հրատարակված հայկական բոլշևիկյան թերթերում և հայերեն առանձին գրքույկներով հրատարակվեցին Վ. Ի. Լենինի աշխատություններից ավելի քան քառասունը, ինչպես նաև կարևոր հոդվածներ նվիրված Լենինի կյանքին ու գործունեությանը։

Վ. Ի. Լենինի հոդվածներից 1917—1918 թվականներին հայերեն հրատարակվել են «Բաց նամակ գյուղացիական պատգամավորների համառուսական համագումարի ներկայացուցիչներին» («Պայքար», № 41), «Ինչպես վերջ տալ պատերազմին» («Բանվորի կոիվը», № 22), «Ֆինանսական անկումը և նրա դեմ կռվելու միջոցները» (նույն տեղում, № 46), «Կարելի է գնալ առաջ, վախենալով սոցիալիզմից» (№ 47), «Հեղափոխական դեմոկրատիան և հեղափոխական պրոլետարիատը» (№ 49), «Ճառ գյուղացիական համագումարում» (№ 52), «Լողունգների մասին» («Ենցուկ», № 5), «Քաղաքական կուսակցությունները Ռուսաստանում և պրոլետարիատի վերաբերմունքը» («Բանվորի խոսք», № 7), «Նամակ ազգային հարցի մասին» («Բանվոր», № 7), «Ի՞նչ պետք է լինի մեր կուսակցության անունը» («Կարմիր օրեր, № 11) և ուրիշներ։

Առանձնապես պետք է նշել Վահան Տերյանի՝ «Ինչ է ասել Լենինը գյուղացիներին» հոդվածների շարքը, որ հրապարակվեց նախ

---

[1] «Պայքար», 3 հունիսի 1917 թ.։

[2] Նույն տեղում։

«Բանվորի խոսք» թերթում (№ 2, 27 հունվարի, № 3, 16 փետրվարի, № 4, 24 փետրվարի 1918 թվականին)։ Այնուհետև այդ հոդվածները հրատարակվեցին առանձին գրքույկով, տարածվեցին Հայաստանի աշխատավորների մեջ։ Տերյանը հստակ ոճով պատմում էր Լենինի ագրագային քաղաքականության մասին, գյուղացիներին ամենից շատ հուզող հողային հարցի մասին, մի հարց, որը կարող էր լուծվել միայն ռևոլյուցիայի հաղթանակի միջոցով։

1918 թվականի հունվարին բոլշևիկյան «Բանվորի կռիվը»[1] հայերին թերթում տպվեց Վ. Ի. Լենինի «Պետություն և ռևոլյուցիա» հանճարեղ աշխատության գլուխների թարգմանությունը և մասմաս հասավ հայ բանվորներին ու գյուղացուն։

Նույն թերթում այնուհետև հրապարակվեց հոդված «Ով է Լենինը» վերնագրով[2]։ Հոդվածում անպաճույճ լեզվով, բայց պարզ, ջերմորեն հայ բանվորներին պատմվում է Վ. Ի. Լենինի կյանքի և նրա գործի մասին. «... բանվորները՝ լինեն նրանք հայ, թե ռուս, թուրք (ադրբեջանցի) թե լեզգի, պետք է ծանոթ լինեն Լենինի կյանքին, նրա քարոզած հայացքներին...»։ Հոդվածում նկարագրվում են Լենինի ռևոլյուցիոն գործունեության կարևոր էջերը, նրա պայքարը պարտիայի կառուցման համար, նրա նվիրվածությունը աշխատավոր ժողովրդի ազատագրման գործին։

Վ. Ի. Լենինի աշխատությունների լեգալ պրոպագանդով հանդես էին գալիս Երևանի բոլշևիկները։ 1918 թվականին «Խոսք» թերթում հրապարակվեց գրախոսական Վ. Ի. Լենինի «Պատերազմի և հաշտության մասին» հոդվածների ժողովածուի վերաբերյալ, որը լույս էր տեսել ռուսերեն «Պրոլետարի» հրատարակչության կողմից[3]։ Նույն թերթի հաջորդ համարներից մեկում տպվել է գրախոսական հոդված Վ. Ի. Լենինի «Պետություն և ռևոլյուցիա» գրքի մասին, որտեղ դիմակազերծ են արվում Կերենսկու և Մերեթելու ընտեսների պրովոկացիաները, որոնք «Ուզում են հղփանալ Լենինի արյունով», շեշտվում է, որ Լենինի գիրքը «մի ապտակ է ստախոս ու վաճառվող բուրժուական դեղին մամուլին»։ «Վաղուց է արդեն կարիք զգացվում, որ գրված լինի նման մի աշխատություն։ Ինչպես մի ժամանակ նույն հեղինակի «Что делать» (1902) գիրքը ագահությամբ կարդացվում և ուսումնասիրվում էր մարքսիստների կողմից, նույնպես «Պետություն և հեղափոխությունը» ամեն

1 Տե՛ս «Բանվորի կռիվը», հունվարի 25, 26, 27, 1918։

2 Տե՛ս «Բանվորի կռիվը», 11 փետրվարի 1918 թ.։

3 Տե՛ս «Խոսք», № 3, Երևան, 1918։

մի կոմունիստի համար կդառնա սեղանի գիրք»[1]։ Այդպես էին ասում Երևանի բոլշևիկները, իրենց ղեկավարի և «Խոսք» թերթի խմբագիր Արշավիր Մելիքյանի լեզվով։

Վ. Ի. Լենինի երկերն ուսումնասիրելով, դրանք տարածելով հայ աշխատավորության մեջ, բոլշևիկներն ստիպանաբար ժողովրդականացնում էին Լենինի անունը, նորանոր մասսաներ համախմբում նրա դրոշի շուրջը, այդ մասսաներին ազատելով բուրժուական նացիոնալիստների և ամեն տեսակի կեղծ սոցիալիստների ազդեցությունից։

1918 թ. սկզբներին հայկական «Կոմունիստ» թերթի առաջին էջում տպվել է Վ. Ի. Լենինի պորտրեն, որը տարածվեց հազարավոր հայ բանվորների և գյուղացիների մեջ։ Նույն թերթը իր համարներից մեկում տպել է Մաքսիմ Գորկու դիմումը ժողովրդին և աշխատավոր ինտելիգենցիային։ Այդ դիմումի մեջ ռևոլյուցիայի երգիչը դիմակալեր է անում իմպերիալիստական գիշատիչներին, որոնք հրահրելով ինտերվենցիա և քաղաքացիական պատերազմ, ուզում էին «Ռուս արյան վտակներով մարել ռուսական հեղափոխության բոցը»։ Հայ բանվորն ու գյուղացին, հայ աշխատավոր ինտելիգենցիան մայրենի լեզվով կարդում էր սիրված գրողի բոցաշունչ տողերը. «Ռուսիայի դեմ արշավի նախաձեռնողը՝ Վուդրո Վիլսոնն է։ Ամբողջ երկրագունդը լուսավորող ռուսական հեղափոխության կերոնն ամուր բռնել է Վլադիմիր Լենինը»[2]։

Ռուսաստանում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի օրերին հայ ժողովրդի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների առջև ծառացել էր նոր օրիենտացիայի հարցը՝ դեպի Սովետական Ռուսաստանը և Վ. Ի. Լենինի գլխավորած ժողովրդական Կոմիսարների Սովետը, թե՞ դեպի Անտանտայի կամ գերմանա-թուրքական իմպերիալիստների բլոկը։

Հայ աշխատավորության մեջ գործող բոլշևիկ-լենինյանները մեծ ջանքեր էին թափում պարզաբանելու Վ. Ի. Լենինի աշխատությունները, Ժողկոմսովետի դեկրետները և հերքելու բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հերյուրանքները։ Թեև ոչ բոլոր դեպքերում էր նրանց հաջողվում նվաճել մասսաներին, սակայն նրանք առանց վհատվելու շարունակում էին պայքարը։

Վ. Ի. Լենինի գլխավորած կառավարությանը ճանաչելու, նրան պաշտպանելու պատրաստակամություն հայտնեցին Ալեքսանդրա-

---

[1] Տե՛ս «Խոսք», № 3, 1919։

[2] «Կոմունիստ», № 9, 1918։

պոլում, Երևանում, Կարսում, Սարիղամիշում, Ալավերդում, Ջալալօղլում (Ստեփանավանում) և այլ քաղաքներում ու շրջաններում գործող բոլշևիկները և նրանց համակրող հաղարավոր բանվորներ, գյուղացիներ և զինվորներ։ Էրզրումում դեռևս ընդհատակի տարիներին աշխատում էր հին բոլշևիկ-լենինյան Բենիամին Սահակյանը։ Լեգալ կերպով վարելով զանազան պաշտոններ, նա Էրզրումի լաղարեթում ստեղծել էր սոցիալ-դեմոկրատական խումբակ, որն ռևոլյուցիայի օրերին ավելի ակտիվացրել էր իր գործունեությունը[1]։

Կարսի բոլշևիկները ծարավ էին Վ. Ի. Լենինի խոսքին։ 1917 թ. հոկտեմբերին ՌԿ(բ)Պ Կենտկոմին ուղարկած նամակում կազմակերպությունը խնդրում էր ուղարկել Լենինի ճառերը հողի մասին[2]։ Նույն հարցով Կարսի կայազորի զինվորների անունից նամակ է ուղարկվել «Կավկազսկի ռաբոչի» թերթի խմբագրությանը, խնդրելով ուղարկել Լենինի ճառն «Ազգարարային հարցի մասին»։

Երևանի բոլշևիկները զինվորների մեջ ելույթներ են ունենում և պաշտպանություն Լենինի գլխավորած ռևոլյուցիոն նոր կառավարության։ ՌՍԴԲՊ Երևանի կազմակերպությունը 1917 թ. նոյեմբերի 6-ին որոշում է Պողոս Մակինցյանին, Լևոն Տեր-Հովսեփյանին, Արշավիր Տեր-Ղազարյանին, Վարդան Բաբայանին և մի քանի այլ ընկերների մտցնել Երևանի բանվորական Սովետի դեպուտատների գործկոմի մեջ[3], նրանց նպատակ տալով աշխատանք տանել Սովետում մեծամասնություն նվաճելու համար։

Ալեքսանդրապոլի բոլշևիկները նոյեմբերի 10-ին կազմակերպում են քաղաքի կայազորի ժողով, որտեղ Պետրոգրադում կատարված հեղաշրջման մասին զեկուցում է Բ. Ղարիբջանյանը, նոյեմբերի 23-ին գումարվում է ընդհանուր միտինգ՝ Պ. Արվելաձեի ղեկավարությամբ։ Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տեղի են ունենում կոմիտեի նիստեր, կազմակերպվում են միտինգներ ու ժողովներ՝ նվիրված ռևոլյուցիոն իրադարձություններին։ 5000 հոգուց կազմված ժողովներից մեկի ընդունած որոշման մեջ ալեքսանդրապոլցիները ողջույն են հղում «համաշխարհային պրոլետարական ռևոլյուցիայի առաջնորդ ընկեր Լենինին, որպես քաղաքի և գյուղի շքավորության փորձված պաշտպանի»[4]։

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, դ. 1686, թ. 4—7։

[2] Նամակը տե՛ս «Իստորիչեսկի արխիվ» ժուռնալում, № 5, 1956։

[3] Որոշումը տե՛ս «Հոկտեմբերյան... ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» ժողովածուն, 1960, էջ 116։

[4] Տե՛ս «Կավկազսկի ռաբոչի», № 208, 1917։

Վ. Ի. Լենինի գլխավորած կառավարությունը ճանաչելու, նրան օժանդակելու որոշումներ են ընդունում Սարիղամիշի զինվորների և տեղական բնակիչների մի քանի ժողովներն ու միտինգները, որոնք ամենուրեք անցնում էին Ստ. Ալավերդյանի ղեկավարությամբ։ Ալավերդյանը ռևոլյուցիայի այդ պատմական օրերին հանդես է եկել որպես Վ. Ի. Լենինի հետևողական աշակերտ և հսկայական կազմակերպական ու քաղաքական գործունեություն ծավալել աշխատավորների մեջ։ Նրա գրած հոդվածների՝ «Սարիղամիշի իրադարձությունների մասին» («Կավկազսկի ռաբոչի», 9 հուլիսի), «Սահմանադիր ժողովի ընտրությունների արդյունքների մասին» (նույն տեղում, 25 նոյեմբերի), «Սովետական իշխանություն կազմակերպելու մասին նակազը» (նույն տեղում, 13 դեկտեմբերի) և այլ նյութերում հետևողականորեն անցնում է Վ. Ի. Լենինի կողմից առաջադրած քաղաքական լոզունգներն անհապաղ իրականացնելու գիծը։ Ալավերդյանը խնդիր է դնում Կովկասյան բանակային 2-րդ համագումարի պատգամավորների առաջ անպայման ճանաչել Ժողովրդական Կոմիսարների Սովետը՝ Լենինի գլխավորությամբ. «Թիֆլիսում անհապաղ կազմակերպել Համառուսաստանյան Ժողովրդական Կոմիսարների Սովետի կառավարություն», որը կառավարի Անդրկովկասի գործերը[1]։ Սարիղամիշի բոլշևիկներն ստեղծում են ռազմառևոլյուցիոն կոմիտե, որն իշխանությունը վերցնում է իր ձեռքը և բաղաքում հայտարարում Սովետական իշխանություն։ Սարիղամիշի հրետանային զորամասերի զինվորների ժողովը, 1917 թ. նոյեմբերի 30-ին լսելով Ստ. Ալավերդյանի զեկուցումը Ժողովրդական Կոմիսարների Սովետի գործունեության մասին, ընդարձակ բանաձև է ընդունում, որը ավարտվում է «Կեցցե Համառուսաստանյան Ժողովրդական Կոմիսարների Սովետը և նրա առաջնորդ Լենինը» լոզունգով[2]։

Հայաստանի գիտակից գյուղացիությունը ևս իր ձայնը միացրեց բանվորներին ու զինվորներին և ողջունեց Վ. Ի. Լենինի գլխավորած ռևոլյուցիոն կառավարությունը։ Բազմաթիվ փաստերից հիշենք երկուսը միայն. 1917 թ. նոյեմբերի 10-ին Ջալալօղլու աշխատավորների և կայազորի զինվորների միտինգը բանաձև ընդունեց, որով ողջունում էր Վ. Ի. Լենինի կառավարությանը և հայտարարում, որ «ամբողջ իշխանությունը պետք է անցնի սովետ-

---

[1] Տե՛ս «Կավկազսկի ռաբոչի», № 219, 1917։

[2] Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան...» ժողովածուն, էջ 133։

ներին»։ Նույն ոգով էր տոգորված Հաղպատի գյուղացիների ժողովը, որը տեղի է ունեցել 1918 թ. հունվարին Սիմոն Էվոյանի, Սիմոն Իսրայելյանի և Ա. Երիցյանի ղեկավարությամբ։ Ժողովը գոհունակությամբ նշում է Վ. Ի. Լենինի գլխավորած ժողկոմսովետի գործունեությունը, դինադադարի հասնելը, հողի մասին դեկրետը, բանկերի աղգայնացումը։ Հաղպատի գյուղացիները ընդունել են բանաձև, որն ավարտվում է «Կեցցե Սովետական իշխանությունը, հանձին ժողովրդական Կոմիսարների Սովետի» կոչով[1]։

Այսպիսով, 1917—1918 թթ. ռևոլյուցիոն պայքարի ամենաբարձր ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի աշխատավորների գիտակից, կազմակերպված մասը, բոլշևիկների ղեկավարությամբ, կողմնորոշվեց դեպի Վ. Ի. Լենինը և նրա գլխավորած կառավարությունը։ Հայաստանի բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն ջոկատները ողջունելով Լենինի հռչակած քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ, պայքարի դրոշ բարձրացրին, հայտարարելով, թե իրենք մերժում են բուրժուա-նացիոնալիստական հակառևոլյուցիայի ուղին և գնում են Ռուսաստանի պրոլետարիատի բռնած ռևոլյուցիոն ուղիով, որ ցույց է տալիս Վ. Ի. Լենինը։

3

ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Անդրկովկասի վարչական և քաղաքական գլխավոր կենտրոն Թիֆլիսում հայ բոլշևիկ-լենինյանների և հաղարավոր հայ աշխատավորների՝ ռուս, վրացի և այլազգի դասակարգային եղբայրների հետ միասին կատարած ռևոլյուցիոն սրբազործությունների հարուստ պատմությունից կվերցնենք առանձին հարցեր, որոնք անմիջականորեն կապված են Վ. Ի. Լենինի անվան հետ։

Ինչպես հայտնի է, Թիֆլիսում կենտրոնացված էին Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների կենտրոնական մարմինները՝ հին բանակի շտաբը և սպիտակ գեներալիտետը, խոշոր բանկիրներն ու կապիտալի մագնատները, վրացական ազնվականության վերնախավը, օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչներն ու ռազմա-քաղաքական գործակալները։

Թիֆլիսում հայ ռևոլյուցիոն գործիչների առջև՝ Կովկասի ռևոլյուցիոն շարժմանը մասնակցելու ընդհանուր խնդիրներից բացի,

---

[1] Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան...» ժողովածուն, էջ 159—160։

գրվում էին նաև առանձին խնդիրներ, կապված հայկական իրականության կոնկրետ առանձնահատկությունների հետ։

ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեն, հետագայում ստեղծված նաև Կովկասյան Երկրային Կոմիտեն հաշվի էին առնում այդ մոմենտը և Թիֆլիսում հաճախ գումարում էին «Հայ ընկերների ժողովներ», որտեղ քննվում էին հայ բանվորների, զինվորների, առաջադիմ ինտելիգենցիայի, արհեստավորների մեջ տարվելիք քաղաքական և կազմակերպական աշխատանքի հարցերը։

Բացի այդ, պետք է նկատի առնել, որ Թիֆլիսը լինելով կովկասյան հակառևոլյուցիոն ուժերի ամեն տեսակի բլոկների կենտրոնը, միաժամանակ հանդիսանում էր հայկական բուրժուական և մանրբուրժուական պարտիաների ու խմբերի հենարանը։

Բացի այդ, պետք է նկատի առնել, որ Թիֆլիսը լինելով կովկասյան հակառևոլյուցիոն ուժերի ամեն տեսակի բլոկների կենտրոնը, միաժամանակ հանդիսանում էր հայկական բուրժուական և մանրբուրժուական պարտիաների ու խմբերի հենարանը։

Թիֆլիսում էր գտնվում դաշնակցություն պարտիայի կենտրոնական բյուրոն, այնտեղ էին հրատարակվում «Հորիզոն» օրաթերթը և դաշնակների այլ օրգանները, գրքեր, ժուռնալներ, թերթիկներ։ Թիֆլիսում էր գործում Ազգային բյուրոն, իսկ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի շրջանում ի հակակշիռ բանվորա-գյուղացիական և զինվորական Սովետների, ստեղծվել էր Հայկական Ազգային Խորհուրդ, որը կազմակերպում էր ազգային գնդեր, հայ ժողովրդին մեկուսացնում հարևան ժողովուրդներից և դասակարգային պայքարի փոխարեն բորբոքում ազգային անտագոնիզմ։

Վրաստանում, մասնավորապես Թիֆլիսում, շատ ուժեղ էր մենշևիկյան կազմակերպությունը։ Եթե միայն վրացական մենշևիկյան պարտիայի շարքերում հաշվվում էր տասնյակ հազարներով անդամ, ապա ամբողջ Կովկասի բոլշևիկների շարքերում 1917 թ. հոկտեմբերին հաշվվում էր միայն 8.000 անդամ։ Մենշևիկները, դաշնակներն ու մուսավաթականները խիտ ցանցով պատել էին ամբողջ երկրամասը, իրենց ազգայնական ագիտացիայով ու պրոպագանդայով մթագնում էին աշխատավորների դասակարգային գիտակցությունը և սրում ազգայնական կրքերը, ձգտելով «ռևոլյուցիան ավարտել» բուրժուական ազգային կառավարության ստեղծումով, Անդրկովկասն ռևոլյուցիոն Ռուսաստանից անջատելով։

Այդպիսի իրադրության մեջ, կովկասյան գլխավոր կենտրոնում, հայ ռևոլյուցիոն գործիչների աշխատանքը կարևոր նշանակություն ուներ թե ընդհանուր, համակովկասյան և թե հայկական շարժման հարցերը լուծելու տեսակետից։

Վ. Ի. Լենինը դեռևս էմիգրացիայից Ռուսաստան վերադառնա-

լու օրերին անթույլատրելի համարեց մենշևիկների հետ միավորվելու տենդենցները։ Վ. Ի. Լենինը 1917 թ. մարտին գրում էր. «Իմ կարծիքով, այժմ գլխավորն այն է, որ մենք թույլ չտանք մեզ խճճվել սոցիալ-հայրենասերների... հետ հիմար «միավորիչ» փորձերի մեջ և շարունակենք մեր պայքարի աշխատանքը հետևողական-ինտերնացիոնալ ոգով»[1]։

Վ. Ի. Լենինի այս դիրեկտիվներով ղեկավարվելով, ՌՍԴԲՊ Թիֆլիսի կազմակերպության մեջ եղած բոլշևիկ լենինյանները 1917 թ. հունիս-հուլիսին վերջնականապես դուրս եկան մենշևիկների հետ «միավորյալ» կազմակերպությունից և ձևավորվեցին որպես ինքնուրույն բոլշևիկյան կազմակերպություն։ Այդ բոլշևիկ-լենինյանների շարքում էին ոչ միայն վրացի նշանավոր գործիչներ Մ. Ցիտակայան, Ֆ. Մախարաձեն, Մ. Օրախելաշվիլին, Ս. Քաֆթարաձեն, այլև հայ գործիչների մեծ խումբ։ Թիֆլիսի կազմակերպության մեջ գործող հայ հին բոլշևիկ-լենինյաններից էին՝ Ստ. Շահումյանը, որը Բաքվից հաճախ ժամանում էր Թիֆլիս, հանդես գալիս զեկուցումներով, ղեկավար դեր կատարում Թիֆլիսի կոմիտեում և մամուլում, Սարգիս Կասյանը, Դանուշ Շահվերդյանը, Ասքանազ Մռավյանը, Սարգիս Խանոյանը, Նինա Այաչալովան, Գուրգեն Հայկունին, Արշակ Աթաբեկյանը, Հմայակ Նազարեթյանը, Նուշիկ Ջավարյանը, Առաքել Օքոևը, Ասատուր Կախոյանը, Հակոբ Հակոբյանը, Ջավահիր Տեր-Պետրոսյանը, Ալեքսանդր Շահսուվարյանը, Նինա Խանոյանը, Անահիտ Եսայանը, Աշխեն Անդրիասյանը, Արտեմի Ակոպովը, Աշոտ Թումանյանը և ուրիշներ։

Թիֆլիսի կոմիտեն հաճախ գումարում էր հայ բոլշևիկների առանձին ժողովներ և քննարկում օրվա հուզող հարցերը։ 1917 թ. հունիսին հայ բոլշևիկ լենինյաններն անջատվեցին «Պայքար» «միավորիչ» թերթից և հիմնեցին իրենց «Բանվորի կռիվը» լենինյան թերթը։

Հուլիսի 2-ին խմբագրությունը գումարեց հայ բոլշևիկների ժողով, որտեղ քննարկման էր դրվել Ա. Մռավյանի զեկուցումը՝ «Քաղաքական մոմենտը և ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան» թեմայով։[2] Հայ բոլշևիկ-լենինյանները հրապարակեցին հայտարարություն մենշևիկների հետ մինչև այդ հրատարակվող «Պայքար» թերթից հեռանալու և իրենց նոր օրգանն ստեղծելու մասին, որը պետք է վարի «հետևողական ինտերնացիոնալիստական» և «լենինյան անաղարտ գիծ»։ Այդ բոլշևիկ-լենինյանների

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 323։

[2] «Բանվորի կռիվը», № 1, 1917։

հայտարարության տակ դրված են հետևյալ ստորագրությունները՝ «Խմբագրության անդամներ՝ Ս. Խանոյան, Ասք. Մռավյան, թերթին աշխատակցողներ՝ Ամիրյան (Արսեն), Անհաշտ (Մելիք Մելիքյան), Արտակ (Ստամբոլցյան), բանվոր Գարագաշ, Գուլոյան (Աբրահամ), Դուսեցի (Երեմյան Վահան), Կարինյան Արտ., Կամարի (Բեժանյան Հ.), Մամիդա (Հովհաննես Պողոսյան), Միկոյան Անաստաս, Շահումյան Ստեփան, Հակոբյան Հակոբ, Շահգելդյան Արամ, Հայկունի Գուրգեն, Ս. Շ.,[1] բանվոր Խեչո (Աս. Կախոյան), Վարդանյան Անուշավան, Սոլովյան (Հարություն), Պիեր (Պետրոս Մնացականյան) և Սիմ (Սիմակ Սահակյան)։ 14 հուլիսի 1917 թ.»[2]։ Բոլշևիկների հայտարարության տակ ստորագրած այդ բնկերները կազմակերպեցին նոր հայկական թերթ՝ «Բանվորի կռիվը» որը դարձավ լենինյան գաղափարների տրիբունա, բազմացնելով տարածեց Վ. Ի. Լենինի երկերը՝ հայ բանվորին ու գյուղացուն համախմբելով լենինյան գրոշի շուրջը։

«Պայքար» թերթի շուրջը համախմբված նշանավոր սոցիալ-դեմոկրատներից Հայկ Ազատյանը, Արշակ Զուրաբյանը, Արամայիս Երզնկյանը, Գևորգ Ղարաջյանը և մի քանի երկրորդական մարդիկ մնացին մենշևիկների շարքում, կազմելով սոցիալիստ-ինտերնացիոնալիստների խումբ։ Հայկ Ազատյանը և Արամայիս Երզնկյանը հետագայում անցան բոլշևիկների շարքը և դարձան Հայկական ՍՍՌ-ի ղեկավար գործիչներ։

Հայ. հրապարակախոս լենինյանները պրոպագանդում էին Վ. Ի. Լենինի գաղափարները և նա մղում դաշնակների, մենշևիկների և էսեռների հարձակումները լենինիզմի դեմ։ Այս տեսակետից կարևոր էին ոչ միայն հին բոլշևիկ-լենինյանների՝ Շահումյանի, Կասյանի, Մռավյանի, Խանոյանի, Կարինյանի և մյուսների ճառերը, հոդվածները, այլև նոր աճած երիտասարդ լենինյանների կրակոտ հոդվածներն ու նյութերը։ Դրանց մեջ առանձնապես աչքի էին ընկնում Անաստաս Միկոյանը, Արտակ Ստամբոլցյանը, Արամ Շահգելդյանը, Վահան Երեմյանը, Շավարշ Ամիրխանյանը և ուրիշներ։

Բազմաթիվ օրինակներից, կբերենք մեկը՝ Արտակ Ստամբոլցյանի «Դաշնակները բոլշևիկների դեմ» հոդվածը։ Ալեքսանդրապոլում Գարեգին Նժդեհը դասախոսություն էր կարդացել «բոլշևիզ-

---

[1] Այդ անվանատառերի տակ ըստ երևույթին պետք է լիներ Ալեքսանդր Շահսուվարյան կամ Ամիրխանյան Շավարշ։

[2] «Բանվորի կռիվը», № 1, 29 հունիսի 1917 թ.։

մի մասին»։ Արտակ Ստամբոլցյանը, որ ներկա էր եղել այդ «դասախոսությանը», բառ առ բառ վերլուծում է դաշնակների ստախոսև լեզվանի ճառախոսի ելույթը, ցույց տալիս, թե որքան խղճուկ են եղել նրա փաստարկները բոլշևիկների դեմ, Լենինի դեմ։ Իր հոդվածում Ստամբոլցյանը ոչ միայն գաղափարական խորությամբ ու հստակությամբ, այլև հրապարակախոսի բարձր կարողությամբ ու դիպուկ արտահայտություններով մերկացրել է դաշնակների ճառախոսին, նրա դասախոսությունը որակելով որպես «բամբասախոսություն», իսկ դասախոսին որպես «բամբասախոս»[1]։ Այսպես, քայլ առ քայլ հայ լենինյանները ժողովրդին բացատրում էին հայ իրականության մեջ գործող բուրժուական պարտիաների հակաժողովրդական քաղաքականությունը, աշխատավորներին համախմբում Վ. Ի. Լենինի առաջ քաշած լոզունգների շուրջը։

Անդրկովկասում, մասնավորապես Թիֆլիսում, պարտիաների միջև ուժեղ պայքար էր մղվում երիտասարդության վրա ազդեցություն ձեռք բերելու համար։ Հայ իրականության մեջ պայքարը գնում էր գլխավորապես դաշնակների և բոլշևիկների միջև։ Դաշնակցությունն աշխատում էր երիտասարդությանը տանել իր ետևից. դրա համար կազմակերպել էր «Աշակերտական միություն» և հրատարակում էր «Միություն» հայերեն թերթը։

1917 թվականի գարնանը Անաստաս Միկոյանը Թիֆլիսի հայկական դպրոցների աշակերտների համար կարդում է «Հինգ դասախոսություն մարքսիզմի մասին» ցիկլը։ Հանդես էին գալիս նաև ուրիշ երիտասարդ մարքսիստներ։

Բոլշևիկ-լենինյանները քննադատում էին դաշնակների ագիտացիան երիտասարդության մեջ, աշխատում էին ուսանող, զինվոր, բանվոր երիտասարդությանը համախմբել Լենինի դրոշի ներքո։ Թիֆլիսի բոլշևիկները հիմնում են «Նոր սերունդ» հայերեն մարքսիստական-երիտասարդական թերթը և «Սպարտակ» կոմունիստական երիտասարդական կազմակերպությունը։

Բոլշևիկների հին սերնդի կատարած համառ աշխատանքը և Լենինի դաղափարների տարածումը հարյուրավոր երիտասարդների համախմբեց լենինյան պարտիայի շուրջը։

1917 թվականի ռևոլյուցիոն ալիքի հետ միասին ասպարեզ եկան և լենինյան դրոշի տակ կանգնեցին Թիֆլիսում աշխատող շատ երիտասարդ բանվորներ, զինվորներ, ուսանողներ։ Ռևոլյուցիոն գործիչների այդ նոր, երիտասարդ սերունդը շատ ակտիվ աշ-

[1] Տե՛ս «Բանվորի կռիվը» թերթը, № 5, 9 հուլիսի 1917 թ.։

խատանք էր կատարում մասսաների մեջ Լենինի լոզունգները տարածելու գործում։ Այդ երիտասարդ ռևոլյուցիոն գործիչների մի մասն աշխատում էր անմիջականորեն Թիֆլիսի բոլշևիկյան պարտիական քաղաքային և շրջանային կոմիտեներում, շատերն էլ մտնում էին երիտասարդական մարքսիստ-լենինյանների «Սպարտակ» կազմակերպության մեջ։

Պարտիական հանձնարարություններով հանդես էին գալիս Հայկազ Կոստանյանը, Գեորգ Ալիխանյանը, Նապոլեոն Անդրիասյանը, Լևոն Յաղուբյանը, Սաշա Նազարյանը, Ներսիկ Ստեփանյանը, Սիրուշ Հակոբյանը, Ռուբեն Մկրտչյանը, Երվ. Ասլիբեգյանը, Արտո Ղազարյանը, Արտեմ Բաբլումյանը (Հեթում), Արմ. Հովսեփյանը, Բագրատ Հարությունյանը և ուրիշներ։

Թիֆլիսում և ամբողջ Անդրկովկասում երիտասարդ ինտերնացիոնալիստների «Սպարտակ» կազմակերպության մեջ ակտիվ ղեկավար աշխատանք էին կատարում Բորիս Զնելաձեն, Ստյոպա Վարդանյանը, Գայոս Դեդարիանին, Սաշա Ամիրբեկովը (Ամաս), Սերյոժա Ջափարիձեն, Գուրգեն Ոսկանյանը, Անդրեյ Վանյանը, Հայկ[1] և Աշխեն Թումանյանները, Գուրգեն Քալաշյանը, Սուրեն Արշակունին, Ստ. Ստեփանյանը, Լևոն Ռոտինյանը, Կարո Հայաբյանը, Յաշա Օքոևը, Ստյոպա Հակոբյանը (Ստակ), Բորիս Միրիմանյանը, Ռաֆիկ Խիթարովը, Նիկուշ Միհրաբյանը, Սերյոժա Քալանթարյանը, Դարեգին Աղաբաբովը, Գեորգ Փերիխանյանը, Արուս Հարությունյանը, Աննիկ Հովհաննիսյանը և ուրիշներ։

Դասակարգային կատաղի պայքարի արենա դուրս եկած երիտասարդները Վ. Ի. Լենինի աշխատություններին, նրա ծրագրերին, նրա կյանքին ծանոթանալով, հաստատուն կերպով կանգնեցին լենինյանների շարքերում։ Նրանք դարձան Թիֆլիսի բոլշևիկ-լենինյանների մղած համառ պայքարի ակտիվ մասնակիցներ։

Բոլշևիկ լենինյաններն աշխատում էին համախմբել հայ, վրացի, ադրբեջանցի և այլ ազգերի բանվորներին, գյուղացիներին, զինվորներին, ստեղծել ինտերնացիոնալ ռևոլյուցիոն բանակ՝ իշխանությունը գրավելու համար։

Այդ միասնական ինտերնացիոնալ գործունեությունը դրսևորվում էր բոլոր քաղաքական կամպանիաների ժամանակ։ Այսպես, օրինակ, Թիֆլիսի քաղաքային դումայի ընտրությունների ժամա-

[1] Հայկ Լազարի Թումանյանը մենշևիկների տիրապետության ժամանակ բանտարկվեց Մետեխի բերդում։ Հայրենական Մեծ պատերազմում աչքի ընկնող գործեր կատարեց։ Նա այժմ գեներալ-լեյտենանտ է։

նակ 1917 թ. հունիս-հուլիսին հայ, վրացի, ռուս բոլշևիկ-լենինյանները հանդես գալով № 8 բոլշևիկյան ցուցակով, վրացիների ռուսների և այլ ժողովուրդների ներկայացուցիչների հետ միասին, Թիֆլիսի դումայում առաջադրել էին մի խումբ հայ գործիչներ։ Դրանցից էին՝ Դանուշ Շահվերդյանը (երդվյալ հավատարմատար), Առաքել Օքոևը (բանվոր), Արշակ Աթաբեկովը (բնագետ), Սարգիս Խանոյանը (հրապարակախոս), Մինաս Մելիք-Աղայանցը (պրոֆմիության աշխատող), Հմայակ Նազարեթյանը (երդվյալ հավատարմատար), Սիրանույշ (Սուսաննա) Շահվերդյանը (մանկավարժ), Ասք. Մռավյանը (ուսուցիչ, խմբագիր), Սարգիս Տեր-Գասպարյանը (Կասյան. իրավաբան-հրապարակախոս), Հովակիմ Սոլովյանը (գրող-մանկավարժ), Գրիգոր Ղորղանյանը-Կորգանովը (զինվորական-հրապարակախոս), Գրիգոր Խառատյանը (պրոֆ. աշխատող), Հովհաննես Մայիլյանը (գրաշար բանվոր), Լևոն Յաղուբյանը (արհեստավոր), Ալեքսանդր Շահվերդյանը (երդվյալ հավատարմատար), Գրիգոր Վարդանյանը (մանկավարժ), Զավահիր Տեր-Պետրոսյանը (ուսուցչուհի), Ստեփան Ալավերդյանը (տնտեսագետ), Ներսես Ներսիսյանը (զինվորական սովետից), Աշոտ Թումանյանը (մանկավարժ), Արշակ Հարությունյանը (զինվոր), Ստեփան Կարապետյանը (ուսանող), Պապա Քալանթարյանը (գյուղատնտես) և ուրիշներ։ Բոլշևիկներին հաջողվեց դումայում գրավել 8 տեղ։

Բոլշևիկները աշխատում էին գործարաններում, հիմնարկներում, զորքի մեջ, աշխատավորների ժողովներում ու միտինգներում, օգտագործում էին ընտրական կամպանիան և պրոպագանդում լենինյան լոզունգները։

Թիֆլիսի բոլշևիկ-լենինյանները վճռականորեն դատապարտում էին Կերենսկու, Մերեթելու, Չխեիձեի և ժամանակավոր կառավարության մյուս պարագլուխների նախաձեռնությամբ կազմակերպված դավադրությունը բոլշևիկյան պարտիայի և նրա առաջնորդ Վ. Ի. Լենինի դեմ։ Մամուլում, ժողովներում, միտինգներում հայ, վրացի, ադրբեջանցի կոմունիստներն արտահայտում էին իրենց ջերմ սերը դեպի Վ. Ի. Լենինը և ավելի եռանդուն պայքար ծավալում լենինյան տակտիկայի կիրառման և սկզբունքների հաղթանակի համար։

1917 թ. հոկտեմբերի սկզբներին Թիֆլիսում տեղի ունեցած բոլշևիկների Կովկասյան երկրային առաջին համագումարում հանդես եկած Ս. Շահումյանը, Ա. Ջափարիձեն, Մ. Ցխակայան, Գ.

Կորգանովը, Ա. Մռավյանը, Ս. Քաֆթարաձեն, Ա. Միկոյանը և ուրիշներ իրենց զեկուցումներում և ճառերում պաշտպանում էին Լենինյան տակտիկան և առաջ քաշում սոցիալիստական ռևոլյուցիայի խնդիրները Անդրկովկասում։ Համագումարում ընտրված երկրային կոմիտեի կազմում էին Շահումյանը, Ջափարիձեն, Կորգանովը, Ցխակայան, Դ. Շահվերդյանը, Աթաբեկյանը, Մռավյանը, Կասյանը, Մախարաձեն, Քավթարաձեն, Մդիվանին, Ցիոլկովը, Կուզնեցովը և ուրիշներ։

Կովկասի բոլշևիկները դնալով դեպի հոկտեմբերյան մարտերը՝ մտքով Վ. Ի. Լենինի հետ էին, որը գտնվում էր ընդհատակում։ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի բոլշևիկների անունից երկրային համագումարն իր ողջույնի խոսքն ուղարկեց Վ. Ի. Լենինին՝ «Ռուսական ռևոլյուցիայի պանծալի առաջնորդին, սոցիալիստական ռևոլյուցիայի ամենաեռանդուն մարտիկին»։ Անդրկովկասի բոլշևիկները զայրույթ հայտնեցին Կերենսկու, Ծերեթելու կառավարության կողմից Վ. Ի. Լենինի դեմ սարքած պրովոկացիաների առթիվ, որոնց հետևանքով «Վ. Ի. Լենինը հարկադրված է անլեգալ դրության անցնել»։ Բոլշևիկները հույս հայտնեցին մոտիկ ապագայում ջախջախել միլյուկովների և նրանց լակեյ կերենսկիների հակառևոլյուցիոն կառավարությանը և հնարավորություն ստեղծել Լենինի համար «դուրս գալու ընդհատակից և գրավելու մեր պարտիայի առաջնորդի, ռուսական մեծ ռևոլյուցիայի առաջնորդի իր պոստը»[1]։

Թիֆլիսում ակտիվ գործունեություն էր ծավալում Կովկասյան երկրամասի բոլշևիկների զինվորական կազմակերպությունը, որի զեկավարն էր Գրիգոր Կորգանովը։ Հոկտեմբերյան զինված ապստամբության օրերին Կովկասի բոլշևիկների զինվորական կազմակերպությունը կոնֆերանս գումարեց և արտահայտելով իր լիակատար համերաշխությունը Ռուսաստանի բանվորների ու զինվորների հետ, վճռականորեն արտահայտվեց իշխանությունը գրավելու օգտին։ Զինվորական կազմակերպությունների կոնֆերանսը ընդունեց Գր. Կորգանովի կազմած հեռագիրը, որում ասված էր. «Կովկասյան երկրամասի և ռազմաճակատի սոցիալ-դեմոկրատ-բոլշևիկների զինվորական կազմակերպությունների կոնֆերենցիան հակառևոլյուցիոն բուրժուազիայի դեմ ռևոլյուցիոն պրոլետարիա-

---

[1] Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան...» ժողովածուն, էջ 85—86։

տի վճռական պայքարի այս վճռական ժամին իր ջերմագին ողջույնն է հղում Ռուսաստանի պրոլետարական ռևոլյուցիայի ամենատաղանդավոր առաջնորդին, համաշխարհային պրոլետարական ռևոլյուցիայի ամենաառանդուն մարտիկին՝ ընկեր Լենինին»[1]։

Այսպիսով, հայ ժողովրդի զավակները աչքի ընկնող դիրքեր էին գրավում Կովկասի լենինյանների շարքերում և ազնվորեն պայքարում երկրամասի աշխատավորներին ռևոլյուցիայի մեջ ներգրավելու համար։

Սահմանադիր ժողովի ընտրությունների կապակցությամբ, Կովկասի բոլշևիկները առաջադրեցին 33 թեկնածու քաղաքացիական և 14 թեկնածու զինվորական՝ ընտրական տեղամասերում ընտրվելու համար։ Որպես դեպուտատության թեկնածուներ Երկրային կոմիտեն առաջադրել էր առավել աչքի ընկած ռևոլյուցիոն գործիչներին՝ Ստ. Շահումյանին, Ա. Ջափարիձեին, Ն. Նարիմանովին, Ի. Ֆիոլետովին (Բաքվից), Մ. Ցխակայային, Ֆ. Մախարաձեին, Հ. Նազարեթյանին, Ս. Խանոյանին, Դ. Շահվերդյանին, Հ. Զարգարյանին, Արշ. Աթարբեկյանին, Ա. Կարինյանին, Ա. Մռավյանին (Թիֆլիսից), Աշ. Հովհաննիսյանին (Էջմիածնից), Վ. Տերյանին (Ախալցիխեից), Գ. Կորգանովին, Ս. Հովսեփյանին, Ա. Օկուջավային, Վ. Պետրովին (բանակի զորամասերից) և ուրիշների։

Թիֆլիսում և այլ քաղաքներում հրատարակվող բոլշևիկյան թերթերը, աշխատավորների ժողովներում ելույթ ունեցող բոլշևիկ հռետորները պատմում էին Լենինի գլխավորած ժողկոմսովետի քաղաքականության մասին, կոչ էին անում ձայն տալ բոլշևիկների (№ 5) ցուցակին, Սահմանադիր ժողովում ուղարկելով այնպիսի դեպուտատների, որոնք կպաշտպանեն ռևոլյուցիայի նվաճումները։

Հայ ռևոլյուցիոն գործիչներից շատերն աշխատում էին Վրաստանի շրջաններում։ Այսպես, օրինակ, Գևորգ Աթարբեկյանը, որ մինչև հոկտեմբերյան օրերն աշխատում էր Էջմիածնում և Ալեքսանդրապոլում, Երկրային կոմիտեի կողմից ուղարկվում է Սուխումի, որտեղ Լակոբայի, Էշբայի և Մելաձեի հետ միասին ղեկավարում էր ռևոլյուցիոն ջոկատների կազմակերպումը Աբխազիայում։

Ինչպես հայտնի է, Աբխազիայում վրացիների և աբխազների հետ ապրում են շատ հայեր։ Բոլշևիկյան կազմակերպություններ են ստեղծվում նաև շրջաններում։ Հայ բնակչության մեջ

---

[1] Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան...» ժողովածուն, էջ 110։

աշխատանքը կազմակերպելու համար այնտեղ էին ուղարկվում նաև ուրիշ աշխատողներ, որոնցից հիշատակենք Վահան Երեմյանին, Արամ Շահգելդյանին, Էդվարդ Ամատունուն, Արմենակ Քեթիկյանին, Շավարշ Ամիրխանյանին։ Արամ Շահգելդյանը խմբագրում էր «Սովխոզմսկայա պրավդա» թերթը։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի լուրն ստանալով, Աբխազիայում բոլշևիկները կազմակերպում են աշխատավորների միտինգներ, ցույցեր և դիմում կարմիրգվարդիական ջոկատների ստեղծմանը։ Այդ ջոկատներում ներգրավվում են նաև հարյուրավոր հայեր, աբխազներ, վրացիներ։ Այդ ջոկատները Գ. Աթարբեկյանի և Ն. Լակոբայի ղեկավարությամբ ապստամբվեցին և փորձեցին գրավել իշխանությունը։

Վ. Ի. Լենինի «Ամբողջ իշխանությունը Սովետներին» լոզունգը տարածվել էր Կովկասի բոլոր շրջաններում։ Ախալքալաքում բանվորների դեպուտատների Սովետի նախագահ էր ընտրվել հին ռևոլյուցիոներ, աքսորից նոր վերադարձած Վասիլ Խաչատրյանը։ Նա միաժամանակ հանդիսանում էր զինվորական դեպուտատների Սովետի անդամ[1]։ Ախալցիխեում աշխատավորների շրջանում աշխատելու համար Թիֆլիսից ժամանում է Ռուբեն Դաշտոյանը, այնտեղ գործում էին Հրաչյա Ղազազյանը, Համազասպ Ինճիկյանը և ուրիշներ[2]։

Վրաստանի բոլշևիկները լարված աշխատանք էին ծավալում գյուղում։ Վրացի և հայ գյուղացիների միացյալ ժողովներում հանդես եկող հռետորները Վ. Ի. Լենինի հոդվածների և կոչերի մասին պատմում էին վրացերեն և հայերեն լեզուներով, աշխատավորներին համախմբելով ինտերնացիոնալիզմի ոգով։ Կոջորում տեղի ունեցած աշխատավորական մի ժողովում հանդես գալով բոլշևիկ Ստ. Վարդանյանը առաջարկում է բանաձևի նախագիծ, որն արժանանում է վրացի և հայ գյուղացիների հավանությանը։ Բանաձևում ասված է, որ «Ռևոլյուցիայի միակ փրկությունն ամբողջ իշխանության անցումն է բանվ. գյուղ. և զինվ. դեպուտատների սովետների ձեռքը»[3]։

Շատ օրինակներ կարելի է բերել նաև Քութաիսիից, Բաթումիից, Ախալքալաքից և Վրաստանի այլ քաղաքներից ու շրջաններ-

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 2044, թ. 7, 10։

[2] Նույն տեղում։

[3] См. «Борьба за победу советской власти в Грузии», стр. 71.

րից, որտեղ հազարավոր վրացի բանվորների ու գյուղացիների հետ նաև հայ աշխատավորները մեծ հետաքրքրությամբ լսում էին բոլշևիկ լենինյանների ճառերը, իրենց համերաշխությունը հանդես բերում Ռուսաստանի պրոլետարիատի և գյուղացիության հետ, ողջունում Վ. Ի. Լենինի գլխավորած Սովետական կառավարությանը և նրա դեկրետները։

* * *

Անդրկովկասում իշխանության գրավման հարցը բխում էր պարտիայի 6-րդ համագումարի դիրեկտիվներից և Կենտկոմի պատմական որոշումից զինված ապստամբության մասին, որը գրել էր Վ. Ի. Լենինը։ Այդ հարցը դրել էր նաև ՌՍԴԲՊ(բ) Կովկասյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարը, 1917 թ. հոկտեմբերի սկզբներին։

Ռուսաստանի կենտրոններում Հոկտեմբերյան սոցիալիստական հեղաշրջման օրերին Վ. Ի. Լենինի կոչը «Ամբողջ իշխանությունը Սովետներին» վերաբերում էր նաև Անդրկովկասին։

Բաքվում, որտեղ բոլշևիկները Սովետում մեծ ազդեցություն ունեին, նոյեմբերի 2-ին որոշում ընդունվեց իշխանությունը գրավելու և սովետական կարգեր հռչակելու մասին։ Սովետական հայտարարվեց Սարիղամիշը, Սուխումին։ Թիֆլիսում նոյեմբերին բոլշևիկների ղեկավարությամբ զինված ելույթ ունեցան Արսենալի շրջանի բանվորներն ու զինվորները և գրավեցին Արսենալը։

Դեկտեմբերի 16-ին Վ. Ի. Լենինի զինակից Ստ. Շահումյանին Կովկասի գործերի ժամանակավոր Արտակարգ կոմիսար նշանակումով արդեն Ժողկոմսովետը որոշում ընդունեց Անդրկովկասում Սովետական իշխանություն կազմակերպելու մասին։ Անցնելով իր նոր պարտականությունների կատարմանը, Ստ. Շահումյանը դիմեց ամբողջ Կովկասի բանվորներին, գյուղացիներին, զինվորներին, հայտարարելով օրվա անհետաձգելի լոզունգը՝ «Սովետական իշխանությունը Կովկասում պետք է ստեղծել անհապաղ»[1]։

Դեկտեմբերի 10—23-ին Թիֆլիսում տեղի էր ունենում Կովկասյան բանակի զինվորական պատվիրակների 2-րդ համագումարը, որին մասնակցում էին հայ, ռուս, վրացի, ուկրաինացի և այլ ազգություններին պատկանող զինվորներ՝ ընտրված Կովկասյան ռազմաճակատի բոլոր զորամասերից։ Համագումարի պատ-

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 3, 1958, էջ 66։

դամավորներից 160-ը բոլշևիկներ էին, 100-ը էսեռներ, միայն 30 հոգի մենշևիկներ, 15 հոգի ձախ էսեռներ։ Մյուս պարտիաներն ու խմբերն ունեին աննշան թվով ներկայացուցիչներ։

Համագումարում ակտիվ ղեկավար դեր էին կատարում Ստ. Շահումյանը, որը ռևոլյուցիոն բանակի խնդիրների մասին հանդես եկավ ընդարձակ ճառով։ Համագումարի նախագահը Գրիգոր Կորգանովն էր։ Համագումարի ղեկավար մասնակիցներից էին Սուրեն Հովսեփյանը, Ստեփան Ալալերդյանը, Պիոտր Արվելաձեն, Իվան Մալիգինը, Բորիս Շերոլդաևը և ուրիշներ։

Համագումարը որոշում ընդունեց Վ. Ի. Լենինի գլխավորած Ժողովրդական Կոմիսարների Սովետը ճանաչել որպես միակ օրինական իշխանությունը և «Անդրկովկասում ստեղծել Սովետական իշխանություն»[1]։ Ընտրվեց Կովկասյան բանակի Երկրային Սովետ, որը կազմեց Կովկասյան բանակի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտե, Գրիգոր Կորգանովի նախագահությամբ։

Դեկտեմբերի 20-ին Ստ. Շահումյանը հանդես եկավ «Կովկասյան բանակի ետ քաշվելու առթիվ» կոչով և խնդիր դրեց զորքի մի մասը պահել ռազմաճակատում։ «Ռուսական զորքերի անակնկալ ետ քաշվելը չափազանց ծանր դրություն է ստեղծում Թուրքահայաստանում,— գրում էր Շահումյանը։— Մենք արդեն գիտենք այս անիծյալ պատերազմի ժամանակ հայերի կրած հարյուր հազարավոր զոհերի մասին... Ռուսական զորքերի ետ քաշվելու լուրը առաջ կբերի հարազատ վայրերից փախած, մի կողմից թուրքերի ու քրդերի, մյուս կողմից՝ հայերի շարժում։ Իմանալով իրերի դրությունն այդ դժբախտ երկրում, մենք պետք է հավատացած լինենք, որ այնտեղ մի նոր դժոխք է ստեղծվում, անմեղ խաղաղ բնակչության արյան նոր գետեր են հոսելու։ Մեր ռևոլյուցիոն բանակը չի կարող անտարբեր մնալ դեպի բնակչության բախտը»[2]։

Այսպիսով, Վ. Ի. Լենինի դիրեկտիվներից բխում էր ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում անհապաղ դնել իշխանությունը գրավելու հարցը՝ սովետական կարգեր հաստատելու համար։ Ռևոլյուցիայի ուժերն Անդրկովկասում օրըստօրե ծավալվում էին, համալրում իրենց շարքերը, տարածում իրենց ազդեցությունը։ Երևում էր ռևոլյուցիայի մոտալուտ հաղթանակի հեռանկարը։

---

[1] Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան...» ժողովածուն, էջ 150։

[2] «Կավկազսկի ռաբոչի», 20 դեկտեմբերի 1918 թ. (Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 38)։

* * *

Հակառևոլյուցիոն պարտիաներն իրենց հերթին ուժեր էին հավաքագրում հարձակման անցնելու համար։ Թիֆլիսում հակասովետական ուժերի գլխավոր համախմբողն ու ոգեշնչողը մենշևիկյան պարտիան էր, որին զուգահեռ գործում էին նրա դասակարգային դաշնակիցները՝ դաշնակները, մուսավաթականները և էսեռները։

Ռուսաստանում ռևոլյուցիայի հաղթանակից անմիջապես հետո հանդես եկավ վրացական և միջազգային մենշևիզմի պարագլուխներից մեկը՝ Նոյ Ժորդանիան, հայտարարելով, որ վրացական մենշևիկյան պարտիան «հանդես է գալիս որպես ազգային շարժման ղեկավար և բացահայտ պայքար է հայտարարում բոլոր մոսկովյան տարրերին», ապա՝ որ «Վրաստանի սոցիալ-դեմոկրատական պարտիան պետք է օժանդակի այն բոլոր ուժերին, որոնք իրենց դնում են ընդդեմ Մոսկվայի»[1]։ Նույն ոգով էին խոսում Ռամիշվիլին, Գեգեչկորին և վրացական մենշևիզմի մյուս լիդերները։ Նրանց հետ միասին գործում էին Բարաջանովն ու Խատիսովը, Ռասուլ-Զադեն և Խան-Խոյսկին։

Մենշևիկները, դաշնակներն ու մուսավաթականները Անատանտայի ռազմա-քաղաքական գործակալների խորհուրդներով և օգնությամբ ձևավորեցին հայկական, վրացական և մուսուլմանական ազգային գնդերը, նպաստելով Կովկասյան ռուսական բանակի կազմալուծմանը և թուրքական ճակատի մերկացմանը։ Նրանք ստեղծեցին Անդրկովկասյան Կոմիսարիատը, այնուհետև Անդրկովկասյան Սեյմը, կազմակերպեցին ազգային խորհուրդներ՝ ընդդեմ բանվորա-գյուղացիական և զինվորական ռևոլյուցիոն կազմակերպությունների։ Նրանք ստեղծեցին այսպես կոչված խորհուրդների երկրային կենտրոն, որը կազմված էր մենշևիկներից, էսեռներից, դաշնակներից և մուսավաթականներից՝ Ն. Ժորդանիայի ընդհանուր ղեկավարությամբ։ Բուրժուա-նացիոնալիստական պարտիաների բլոկին միացան հին բանակի գեներալները։

Այսպիսով, կազմվեց Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերի ուժեղ բլոկ, որը օտարերկրյա իմպերիալիստների աջակցությամբ և ոգեշնչումով կատաղի պայքար ծավալեց ռևոլյուցիոն բանվորա-գյուղացիական մասսաների դեմ։

---

[1] Ցիտվում է ըստ Ն. Ժորդանիայի «Բոլշևիզմ» գրքի, որ մենշևիկ էմիգրանտները հրատարակել են արտասահմանում։

Հակառևոլյուցիան անցնում էր հարձակման։ Շուտով հայտնի դարձավ, որ հակասովետական բլոկի մեջ մտնող «դաշնակիցները» գործում էին նաև իրար թիկունքում, մենշևիկները գաղտնի բանակցում էին կայսերական Գերմանիայի և օսմանյան Թուրքիայի դիվանագետների հետ, մուսավաթականները բացահայտորեն արտահայտում էին իրենց համակրանքը և օրիենտացիան դեպի Թուրքերը, իսկ դաշնակները հույսները դնելով «Եվրոպայի օգնության» վրա, պատրաստում էին պատվիրակություն ուղարկել այնտեղ։

Անդրկովկասում ստեղծվեց խոր հակասություններով լի մի բարդ իրադրություն, որի մեջ արագ կերպով փոփոխվում էր դասակարգային ուժերի հարաբերակցությունը և փոխվում էր ոչ հօգուտ ռևոլյուցիոն ուժերի։ Վ. Ի. Լենինը տեղյակ էր Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին, բայց հուսով էր, որ ռևոլյուցիոն ուժերը կաճեն, կհզորանան և վերջիվերջո հաղթանակ կտանեն հակառևոլյուցիոն բլոկի դեմ։

Վ. Ի. Լենինը Անդրկովկասի բոլշևիկներին կոչ էր անում դեպի այդ հաղթանակը։ Դրա մասին է խոսում այն փաստը, որ Լենինը դեկտեմբերի 29-ին կարգադրություն արեց պետական գանձարանից 500 միլիոն ռուբլի տրամադրել Ստ. Շահումյանին, «Կովկասի ... կոմֆեսարիատի կարիքների համար»[1]։

Այդ իրադրության մեջ Անդրկովկասի բոլշևիկները անդուլ կերպով աշխատում էին Վ. Ի. Լենինի դիրեկտիվները կենսագործելու համար։ Երկրային կոմիտեի անդամներ Շահումյանը, Օրախելաշվիլին, Ցխակայան, Ջափարիձեն, Կորգանովը, Կուլնևցովը, Սթաբեկովը, Կասյանը, Ցիրուլնիկովը և ուրիշներ երկրներ էին ունենում բանվորների, զինվորների և գյուղացիների միտինգներում, Սովետների նիստերում։ Բոլշևիկների մամուլը՝ «Կավկազսկի ռաբոչի», «Բակինսկի ռաբոչի», «Բրձոլա», «Բանվորի կոիվը» և ուրիշ թերթեր աշխատավորներին բացատրում էին ռևոլյուցիան զարգացնելու և իշխանությունը գրավելու խնդիրները, դիմակայելիս էին անում հակասովետական բլոկի դավերը Կովկասի ժողովուրդների դեմ։

Բացի ինտերնացիոնալ բնույթ կրող ընդհանուր ժողովներից, որոնց մասնակցում էին հայ, վրացի, ադրբեջանցի, ռուս և այլ ազգերի կոմունիստներն ու բոլոր աշխատավորները, հատուկ աշխատանք էր տարվում առանձին ազգերի ներկայացուցիչների հետ։

---

1 Տե՛ս «Վ. Ի. Լենինն Ադրբեջանի մասին» (ռուս.), 1959, էջ 74։

Այդպիսի միջոցառումներից էին Թիֆլիսում գործող հայ կոմունիստների մի քանի ժողովները։ 1917 թվականի դեկտեմբերին և 1918 թվականի հունվարին Թիֆլիսում տեղի ունեցան հայ կոմունիստների ժողովներ, որոնք կազմակերպվել էին Երկրային կոմիտեի կողմից։ Ժողովներից մեկում քննվել է հայկական «Բանվոր» հրատարակչական ընկերության աշխատանքի և հայատառ «Բանվորի կոիվը» թերթի հարցը։ 1918 թ. հունվարի 23-ին Հավլաբարի ձմեռային ակումբի շենքում հրավիրվում է հայ կոմունիստների ժողով, որտեղ Ստ. Շահումյանը մերկացնում է ռուսական զորքի զինաթափման և դաղանային դնդակահարության կազմակերպողներին։ Նույն ժողովում գյուղացիներին կազմակերպելու հարցի մասին զեկուցում է Ս. Խանոյանը[1]։ Հունվարի 21-ին գումարվում է Թիֆլիսի հայ ուսանողների ժողով, երիտասարդությանն ռևոլյուցիոն շարժման մեջ ներդրավելու նպատակով։

Շահումյանը ժամանելով Թիֆլիս, ընդհանուր խնդիրներով զբաղվելով հանդերձ, նաև աշխատանք էր տանում հայ բանվորներին, զինվորներին, գյուղացիներին, ուսանողներին կազմակերպելու ուղղությամբ, դիմակալրծ անելով դաշնակյան «Հորիզոնի», և մենշևիկյան «Պայքար»-ի էջերում Վ. Ի. Լենինի հասցեին տարածված հերյուրանքների հեղինակներին։

1918 թվականի հունվարի 26-ին տեղի է ունենում Թիֆլիսի հայ բոլշևիկների ժողով, որտեղ նույնպես զեկուցումով հանդես է գալիս Ստ. Շահումյանը։ Նույն օրն էլ Անդրկովկասյան Կոմիսարիատը արդեն հրաման էր արձակել Շահումյանին ձերբակալելու մասին։ Հայ բոլշևիկների ժողովը վճռական բողոք է հայտնում Կոմիսարիատի հակառևոլյուցիոն գործողությունների դեմ։

«Հայ բոլշևիկների ընդհանուր ժողովը,— ասված է բանաձևի մեջ,— բողոքելով Անդրկովկասյան Կոմիսարիատի հակահեղափոխական քայլի դեմ, հայտարարում է, որ պատրաստ է ամեն միջոցներով պաշտպանել ընկեր Շահումյանին, ամեն տեսակ ոտնձգություններից և կմղի վճռական կռիվ հանուն մենշևիկ-էսեռական-բեգական բլոկի կառավարության տապալման և հանուն Կովկասում Սովետական իշխանության հաստատման։ Կեցցե բանվորա-գյուղացիական հեղափոխությունը։ Կեցցե խորհրդային ռեսպուբլիկան Կովկասում»[2]։

---

[1] Տե՛ս «Բանվորի կռիվը» թերթը, № 14, 22 հունվարի 1918 թ.։

[2] Տե՛ս «Բանվորի կռիվը» թերթը, № 20, 28 հունվարի 1918 թ.։

«Բանվորի կոչը» թերթի համարների առաջին էջը զարդարված էր լինում խոշոր տառերով տպված լոզունգներով.

«Կեցցե Ժողովրդական Կոմիսարների խորհուրդը»

«Կեցցե Լենինը»[1]:

Այդ լոզունգները չէին իջնում Կովկասյան Երկրային կոմիտեի, Թիֆլիսի և Բաքվի կոմիտեների օրգանների՝ «Կավկազսկի ռաբոչի», «Բակինսկի ռաբոչի», «Բրձոլա» և այլ բոլշևիկյան թերթերի էջերից՝ ու նրանց հրատարակած պրոկլամացիաներից։ Հայ, վրացի, ադրբեջանցի կոմունիստները և դիտակից աշխատավորներն իրենց բախտը, իրենց ժողովուրդների բախտը կապում էին հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի հետ, Վ. Ի. Լենինի անվան հետ։

1918 թվականի հունվարին Թիֆլիսում աշխատող մի խումբ հայ կոմունիստներ, ՌԿ(բ)Պ Երկրային կոմիտեից անկախ ստեղծեցին Հայաստանի Կոմունիստական պարտիա կազմակերպությունը, որի ղեկավար գործիչներից էին Գ. Հայկունին, Գ. Վարդանյանը, Հ. Հովսեփյանը, Գ. Կարագուլյանը, Վ. Երեմյանը և ուրիշներ։ ՀԿՊ Կենտկոմի անդամ Գրիգոր Վարդանյանը Վ. Ի. Լենինին ներկայացրած զեկուցագրում հաղորդում է, որ կազմակերպությունն ստեղծվեց Թիֆլիսում, մի խումբ արևմտահայ և արևելահայ կոմունիստներից, որոնք պետք է աշխատանք տաներին հայ բնակչության մեջ, մերկացնեին դաշնակ-մենշևիկ-մուսավաթական բլոկը՝ ապագա Հայաստանի ռեսպուբլիկայի համար, որը պետք է կապված լիներ Ռուսական Սովետական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկայի հետ[2]։

Վ. Ի. Լենինին ներկայացրած զեկուցագրում հայտնվում է, որ ՀԿՊ ներկայացուցիչ Գուրգեն Հայկունին ուղարկվել է Պետրոգրադ, որտեղ նա ՌԿ(բ)Պ Կենտկոմին զեկուցել է Հայաստանի Կոմունիստական պարտիայի ստեղծման մասին, ստացել Կենտկոմի հավանությունը և 30.000 ռ. դրամ թերթ հրատարակելու համար։ Զեկուցագրում ասվում է, որ այդ կազմակերպության ստեղծման մասին տեղյակ էր Ստ. Շահումյանը, որը հավանություն էր տվել և խոստացել օգնել[3]։

Հայաստանի Կոմունիստական պարտիան Թիֆլիսում, 1918 թ. փետրվարից, սկսեց հրատարակել «Կարմիր օրեր» թերթը, որին աշխատակցում էին Գուրգեն Հայկունին, Հայկ Հովսեփյանը, Գրի-

---

1 «Բանվորի կոչը», 1918, № 11 և ուրիշ համարներ։

2 Տե՛ս ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, դ. 51, թ. 1, 10։

3 Տե՛ս ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, դ. 51, թ. 1, 10։

գոր Վարդանյանը, Վահան Երեմյանը, Արտաշես Կարինյանը։ Այդ թերթում տպվել են Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստի» հայերեն թարգմանությունը, Վ. Ի. Լենինի նամակը Շահումյանին՝ ազգային հարցի մասին, «Ի՞նչ պետք է լինի մեր կուսակցության անունը», և ուրիշ կարևոր նյութեր։ Թերթի տիրաժը Վ. Ի. Լենինին ներկայացրած զեկույցի համաձայն եղել է 1500։ Թերթն արգելվեց Անդրկովկասյան հեղափոխական կոմիտեի կողմից։

Հայաստանի Կոմունիստական պարտիան հանդես եկավ «Թուրքահայաստանի մասին» ժողկոմսովետի դեկրետի ընդունման օրերին, նա պետք է գործեր այդ դեկրետով հայ ժողովրդին տրված իրավունքների իրականացման և հայկական ռեսպուբլիկայի զեկավարման համար։

Սակայն Անդրկովկասի հակասովետական բլոկի դավաճանական քաղաքականությունը և գերմանա-թուրքական զավթիչների սկսած ինտերվենցիան խանգարեցին հայ ժողովրդին իրականացնել ժողկոմսովետի Դեկրետով նրան տրված իրավունքները։

1918 թ. հունվարի վերջերին թուրքական և գերմանական զավթիչները հարձակման անցան, գերմանական բանակը արևմուտքից ներխուժեց Սովետական Ռուսաստանի տերիտորիան, իսկ Կովկասում՝ օկուպացվեց Վրաստանը։ Թուրքական իմպերիալիզմի զինված բանդաները նորից տիրեցին Արևմտյան Հայաստանի վիլայեթներին և շարժվեցին դեպի Անդրկովկաս։

Անդրկովկասի կոմունիստների և ռևոլյուցիոն մասսաների համար ստեղծվեց նոր վտանգ։ Հակասովետական բլոկի և գերմանա-թուրքական իմպերիալիզմի դաշնակցությունը մահվան սպառնալիքի տակ դրեց ռևոլյուցիայի գործը Կովկասում, հետևաբար և հայ ժողովրդի ազատագրման գործը։

1918 թվականի սկզբներին Վ. Ի. Լենինը նամակ-դիրեկտիվ ուղարկեց Ս. Շահումյանին, Կովկասում ստեղծված սոցիալ-քաղաքական բարդ իրադրության մեջ աշխատելու խնդիրների մասին։ Վ. Ի. Լենինը գրել է.

«Թանկագին ընկեր Շահումյան։ Շատ շնորհակալ եմ նամակի համար։ Մենք հրճվանքի մեջ ենք ձեր հաստատակամ և վճռական քաղաքականությունից։ Կարողացեք դրան միացնել այն ամենազգույշ դիվանագիտությունը, որը անպայման թելադրվում է այժմյան դժվարագույն դրությամբ,— և մենք կհաղթենք»[1]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 359։

Այսպիսով, Վ. Ի. Լենինը լիովին հավանություն էր տալիս Կովկասյան Երկրային կոմիտեի այն անդամների վարած տակտիկային, որոնք Ստ. Շահումյանի գլխավորությամբ գնում էին ամբողջ Անդրկովկասում, առաջին հերթին նրա կենտրոն՝ Թիֆլիսում իշխանությունն անհապաղ գրավելու, զինված ուժի դիմելու խնդիրը։ Անդրկովկասում ռևոլյուցիոն սիտուացիայի հարցում, իշխանությունը գրավելու կամ հարմար ժամանակներին սպասելու հարցում Վ. Ի. Լենինը պաշտպանում էր «եռակի համաձայնություն» հանդես բերելու տակտիկա, հանդիմանում էր Երկրային կոմիտեին և Թիֆլիսի կոմիտեին Արսենալը մենշևիկներին հանձնելու համար։

Անդրկովկասի ռևոլյուցիոն բանվորները, գյուղացիները և զինվորները, նրանց շարքում և հայերը, տոգորված Վ. Ի. Լենինի խրախուսանքով, անձնվիրաբար շարունակում էին պայքարել թշնամու դեմ, պաշտպանելով ռևոլյուցիայի գործը։

4

ԲԱՔՎՈՒՄ։ Հայ ժողովրդի ազատագրական պայքարի բազմաթիվ մարտիկներ հանգամանքների բերումով կենտրոնացել էին Բաքվում և Արևելյան Անդրկովկասի այլ կենտրոններում, որտեղ նրանք ռևոլյուցիոն շատ սխրագործություններ կատարեցին։ Համառոտակի կանգ առնենք այդ հերոսական գրվագներից մի քանի օրինակների վրա։

Բաքվի բանվորությունը, ամբողջ բնակչությունը և քաղաքի բոլշևիկյան կազմակերպությունը այն ժամանակ ևս բազմազգ կազմ ուներ։ Ադրբեջանում ապրող մոտ կես միլիոն հայերի զգալի մասը Բաքվի բնակիչներ էին, որոնք կազմում էին Բաքվի պրոլետարիատի մի ստվար մասը։

Վ. Ի. Լենինը Բաքվի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարների ուշադրությունը հրավիրում էր ազգային հարցի վրա, պահանջելով հաշվի առնել բազմազգ բանվորների միավորման անհրաժեշտությունը։ ՌՍԴԲՊ (բ) Բաքվի Կոմիտեն, ինչպես նաև բանվորական դեպուտատների Բաքվի Սովետը կազմված էին ռուսներից, ադրբեջանցիներից, հայերից, վրացիներից, հրեաներից և ուրիշ ազգությունների աշխատավորների ներկայացուցիչներից։

1917—1918 թվականներին Բաքվի Կոմիտեն և Բաքվի Սովե-

ոը վճռական պայքար էին մղում ռևոլյուցիայի հաղթանակի համար։ Հանդիսանալով Բաքվի Կոմիտեի և Բաքվի Սովետի ղեկավարը, Ս. Շահումյանը միաժամանակ իր ուժերի զգալի մասը նվիրում էր հայ բանվորների, հայ աշխատավորների մեջ ձևավորվող կոնկրետ միջոցառումներին։

Բաքվի կազմակերպության մեջ Ս. Շահումյանի հետ միասին ղեկավար աշխատանք էին կատարում Լենինի հավատարիմ աշակերտներ Ա. Ջապարիձեն, Վ. Ֆիոլետովը, Մ. Ազիզբեկովը, Յա. Ջևինը և ուրիշներ։ Բաքվի ռևոլյուցիոն գործիչները պրոլետարական ինտերնացիոնալիզմի օրինակ էին հանդիսանում Կովկասում։

Բաքվի բոլշևիկյան Կոմիտեն և Բաքվի Սովետը ռուսերեն և ադրբեջաներեն թերթերին զուգահեռ, 1917—1918 թթ. հայերեն հրատարակում էին «Սոցիալ-դեմոկրատ», «Բանվորի խոսք», «Տեղեկատու» թերթերը, տպում էին թերթիկներ, բրոշյուրներ, հայ աշխատավորներին բացատրում նրանց ռևոլյուցիոն պարտքը, նրանց ինտերնացիոնալ խնդիրները։

Բաքվի Կոմիտեի օրգան «Սոցիալ-դեմոկրատ» թերթը, որ լույս էր տեսնում Ստ. Շահումյանի խմբագրությամբ, հանդես եկավ «Բաքվի հայ բանվորությանը» դիմումով։ «Մենք կոչ ենք անում ձեզ,— գրել է Բաքվի Կոմիտեն հայ բանվորներին ուղղված դիմումի մեջ,— բանվոր ընկերներ, գալ, կազմակերպվել մեր պարտիայի հաղթական դրոշակի տակ»[1]։ Դիմումը հիշեցնում է տաճկահայ դժբախտ եղբայրների ճակատագիրը, դատապարտում է ազգային պարտիաների կորստաբեր գործելակերպը, ցիտում է Էնգելսի խոսքերն այն մասին, թե «Հայ ժողովրդի ազատության նավը տեղը հասցնելու համար, պետք է մեծ զգուշությամբ անցնի տաճկական բռնակալության Սցիլլայի և ռուսական աբսոլյուտիզմի խարիբդայի միջով»։ Բաքվի Կոմիտեի կոչը հայտարարել է, որ «Բանվորների շահերը միատեսակ են, լինեն նրանք հայ թե ռուս, վրացի թե թուրք... Բաքվի հայ բանվորի համար դա արդեն պարզ ճշմարտություն պետք է լինի»։ Մերկացնելով ազգամիջյան ընդհարումների կազմակերպողներին և առաջ քաշելով ազգամիջյան համերաշխության լոզունգը, Բաքվի Կոմիտեն հայ բանվորներին կոչ է անում. «Մեկնեցեք ձեր ձեռքը ռուս, թուրք, վրացի ընկերներին և կազմեցեք նրանց հետ մի անբաժան եղբայրական ընտանիք... Հայ ընկերներ, մենք հրավիրում ենք ձեզ... գալ, ստվարաց-

[1] Տե՛ս «Սոցիալ-դեմոկրատ», № 1, 1917։

նելու մեր միջազգային շարքերը... Կեցցե հայ բանվորության դասակարգային գիտակցության արթնացումը»[1]։

Անդրկովկասի տարբեր շրջաններից դեպի պրոլետարական Բաքու էին ուղևորվում բազմաթիվ ռևոլյուցիոն գործիչներ։ Կովկասյան գործերի Արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանը Թիֆլիսում ենթարկվելով հետապնդման և ձերբակալման վտանգին, ընդհատակյա ճանապարհով անցավ Բաքու և հաստատվեց այնտեղ։ 1917 թվականին Թիֆլիսից Բաքու փոխադրվեցին երիտասարդ լենինյաններ Ա. Միկոյանը, Արտակ Ստամբոլցյանը, Գևորգ Ալիխանյանը և ուրիշներ։ Թիֆլիսից Բաքու տեղափոխվեց Գրիգոր Կորգանովը՝ իր գլխավորած Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի մյուս անդամների հետ միասին։

Շուշու բոլշևիկյան կազմակերպության ակտիվ աշխատողներ Փառռ Կնունյանցը (Ռիզել), Սարգիս Դանիելյանը, Սուրեն Շադունցը, Աշոտ Հովհաննիսյանը, Վարյա Կասպարովան, Ալեքսանդր Բաղդասարովը, Սամվել Ասմարովը, Միրսուջա Աղամիրովը (ադրբեջանցի) և ուրիշներ 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին տեղափոխվեցին Բաքու և մասնակցեցին այնտեղ ծավալվող ռևոլյուցիոն շարժումներին։ Ղարաբաղում մնացած կոմունիստները շարունակեցին ակտիվ աշխատանք կատարել մարզի բնակչության մեջ[2]։

Նույնը տեղի ունեցավ Գանձակի բոլշևիկների հետ։ Մի կողմից Գանձակում մուսավաթականների կողմից ձեռնարկած հալածանքներից խուսափելու և մյուս կողմից Բաքվում բորբոքվող դա-

---

[1] Տե՛ս Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 416—417։

[2] Ղարաբաղի հայ և ադրբեջանցի աշխատավորների ռևոլյուցիոն ազատագրական պայքարը գլխավորող բոլշևիկ-լենինյանների մասին սիրով պատմում է ընկ. Պ. Մ. Ալիևը իր «Ղարաբաղի բոլշևիկների գործունեությունը» (Բաքու, 1961) աշխատության մեջ։ Ընկ. Ալիևը նշում է, որ Բաքվի ընդհատակյա բոլշևիկյան Կոմիտեն 1918 թ. վերջերին և 1919 թվականին Ղարաբաղ են փոխադրում կոփված բոլշևիկ գործիչների նոր կադրեր և 1919 թվականին ձևավորվում է Ղարաբաղի մարզային բոլշևիկյան կոմիտե, որի գլուխ կանգնած էր նշանավոր ռևոլյուցիոներ Ալեքսանդր Մատուրյանը (Ռուբենին)։ Նա անցյալում եղել էր սոց. դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ղեկավարներից մեկը, սակայն 1917 թվականից բոլշևիկ-լենինյան էր։ Ալեքսանդր Մատուրյանի հետ միասին ակտիվ դեր էին կատարում Սարո Համբարձումյանը, Օշակուլի Մուսաևը, Հակոբ Կամարին, Արմենակ Ղարագյոզյանը, Նարիման Արգուլաևը, Լևոն Վարդունին (Վարդապետյան), Դերենիկ Ասկյարովը և ուրիշներ։ Ղարաբաղի բոլշևիկները համառ պայքար էին մղում ազգային երկպառակություն բորբոքողների դեմ։ Թուրքական գոր-

սակարգային կռիվների մարտերի մեջ մտնելու նպատակով, 1918 թ. ձմեռը Գանձակից Բաքու են մեկնում մի խումբ հայ բոլշևիկներ։ Դրանց թվում էին Սուրեն Հովսեփյանը, որը նոր էր վերադարձել ռազմաճակատից, Արարատ Գաբուզովը, Լևոն Հովսեփյանը, Մադաթ Մելիք-Օսիպովը և ուրիշներ։ Կոմունիստներ Պավել Վերդյանը, Գուրգեն Ստեփանյանը, Մինեյ Օգանեզովը, Խորեն Հովսեփյանը և ուրիշներ մնացին Գանձակում ընդհատակյա աշխատանքի։

Բաքու էին ժամանում արևմտյան ռազմաճակատից և Կովկասյան բանակից զորացրված հայ զինվորները, էշելոն-էշելոնի ետևից, հարյուրներով և հազարներով։ Բաքու էին ժամանում նաև հայկական կամավորական խմբերը։ Բաքուն Կովկասի ռևոլյուցիոն բերդն էր, Բաքուն թուրքական նոր արշավանքի դեմ պայքարի շտաբն էր։ Հայ ժողովրդի զավակները միանալով ռուսների, վրացիների, ադրբեջանցիների հետ, Բաքվում մարտնչում էին նաև Հայաստանում տառապող ժողովրդի համար։

* * *

Հայ աշխատավորներից շատերը մտան Բաքվում կազմակերպված Կարմիր Գվարդիայի և Բաքվի Կոմիտեին կից մարտական դրուժինայի ջոկատների մեջ և ղեկը առան ձեռքերը դեռևս 1918

ծակալները ճիգեր էին թափում Ղարաբաղի ժողովրդին շեղելու ազատագրական պայքարի ուղուց։ Բոլշևիկյան կոմիտեի հանձնարարությամբ Ղարաբաղի գյուղերն են ուղարկվում և ընակչության մեջ քաղաքական աշխատանք կատարում կոմունիստներ Անդրանիկ Ավագյանը, Հյուսի Հաջիևը, Վարդան Պետրոսյանը, Հայկ Տեր-Սարկիսովը, Սեմյոն Աֆյանը, Տիգրան Զահրամանյանը, Օջակուլի Մուսաևը, Սամվել Սամարովը և ուրիշներ (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ս. Ա. Կարապետյան, Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանում, Ստեփանակերտ, 1962, էջ 16—18)։ Ղարաբաղի մարզի աշխատավորները հաստատակամորեն գնում էին բոլշևիկ-լենինյանների հետևից։ 1920 թ. գարնանը Ղարաբաղի աշխատավորության պատվիրակությունը հատուկ նամակ է հղել Վ. Ի. Լենինին, որին հաղորդում է մարզի քաղաքական վիճակի մասին և խնդրում է Սովետական Ռուսաստանի կառավարությանը օգնություն ցույց տալ Ղարաբաղի աշխատավորությանը՝ երկրում խաղաղություն հաստատելու և ընակչության կարիքները բավարարելու համար (տե՛ս ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 461, ց. 1, գ. 3257, թ. 1—4)։ Ղարաբաղի բոլշևիկները մեծ կորուստներ ունեցան 1920 թվականի ապրիլի սկզբներին հակառևոլյուցիոն դավադիրների կազմակերպած ազդամիջյան ընդհարումների օրերին։ Շուշի քաղաքի հրկիզման-կործանման ժամանակ սպանվեց բոլշևիկների ղեկավար Ալեքսանդր Ռուբենին։ Կովկասյան բյուրոն Ղարաբաղ աշխատանքի փոխադրեց հին, կռիված լենինյաններ Մուկուզ Արզումանյանին, Միշա Մանուչարյանին, Նարի Սուլեյմանովին, Ա. Սարգսյանին և ուրիշ բոլշևիկների, միջոցառումներ կիրառեց Ղարաբաղի աշխատավորների դրությունը բարելավելու համար։

թվականի սկզբներից։ Բաքվի Կարմիր Գվարդիայի կազմակերպումն անմիջականորեն ղեկավարում էին Ա. Ի. Միկոյանը, Ի. Գաբիշևը, Ա. Բաղդասարովը (գվարդիայի կենտրոնական շտաբի պետը), Մ. Մամեդյարովը, Գ. Ստուրուան, Համիդ Սուլթանովը, Մ. Պլեշակովը և ուրիշ բոլշևիկներ։ Կարմիրգվարդիական ջոկատները մարտի էին տանում Բագրատ Ավագյանը, Արշակ Արզարյանը, Եղիա Բաղդասարյանը, Ի. Գաբիշևը, Ա. Լոպատինը և ուրիշներ։ Մարտյան կռիվներում Կարմիր Գվարդիան կարևոր դեր խաղաց մուսավաթական բանդաների ջախջախման գործում։

Գվարդիականների և դրուժիններիների մի ջոկատ, Ա. Միկոյանի գլխավորությամբ, գրոհում է բերդի դարպասների մոտ դասրանակալած մուսավաթականների դիրքերը։ Այդ գրոհի մի էպիզոդի մասին պրոֆ. Տոկարժևսկին գրել է. մարտն սկսվելուց առաջ Ա. Միկոյանը կարմիրգվարդիականներին հայտնում է. «Եթե ես սպանվեմ, ջոկատի հրամանատար կլինի Հասան Ալիխանովը, լսեցեք նրան»[1]։ Մարտի 31-ին Միկոյանի ջոկատը գրոհում է բերդը։ Մուսավաթականները կատաղի կրակ են տեղում հարձակվողների վրա։ Անաստասը ոտքից վիրավորվում է։ Մարտիկները պատասխան կրակով լռեցնում են թշնամուն և հարվածն ուղղում մուսավաթականների շտաբին։ «Միկոյանին բերեցին ոտքից վիրավոր,— գրում է այդ ժամանակ Բաքվում աշխատող կոմունիստ Մարո Թումանյանը,— վերքը կապելուց հետո նա անմիջապես վերադարձավ իր ջոկատը»։

Այդպիսի էպիզոդներ կարելի է բերել Բաքվի Կարմիր Գվարդիայի գրեթե բոլոր ջոկատների մղած մարտերից։ Հայ գվարդիականները բարձր էին պահում ռևոլյուցիոն մարտիկի պատիվը, հանդես էին բերում անձնվիրություն և քաջություն։

Հայ ժողովրդի զավակները մարտական շատ սխրագործություններ են կատարել հատկապես Բաքվի Կոմիտեին կից կազմակերպված մարտական դրուժինայի ջոկատներում։ «Մարտական դրուժինան» ստեղծվեց Ստ. Շահումյանի նախաձեռնությամբ, որպես առավել հավատարիմ, մարտական ուժ Բաքվի Կոմիտեին կից, մարտական խնդիրներ կատարելու համար։

Դրուժինան ձևավորվեց միայն կոմունիստներից։

---

1 Տե՛ս Е. А. Токаржевский, Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1957, стр. 52.

Կազմակերպման սկզբնական շրջանում դրուժինայի հրամանատարը բոլշևիկ սպա Կոնստանդին Բաբմանովն էր, որին շուտով փոխարինեց Արտավազդ Հովհաննիսյանը, իսկ կոմիսարը, Բաքվի Կոմիտեի անդամ Սերգո Մարտիկյանն էր։ Հրամանատարի օգնականն էր Գոնչարովը։ Դրուժինայի շտաբը կազմակերպական շրջանում գտնվում էր Սերգո Մարտիկյանի բնակարանում (Մոլականսկայա, № 3), որտեղ բերվում էր զենքը, զինամթերքը և բաժանվում ջոկատներին։ Եթե ձևավորման օրերին դրուժինայի մեջ հաշվվում էր 40—50 մարդ, ապա մարտյան կռիվների օրերին՝ մոտ 400 մարդ, որից ավելի քան 350-ը հայ բանվորներ և զինվորներ էին, իսկ մնացածը ռուսներ, վրացիներ, ադրբեջանցիներ, հրեաներ և այլ ժողովուրդների զավակներ։

Դրուժինայի անդամները՝ զինված, գտնվում էին զորանոցներում՝ մարտական պատրաստության վիճակում և սպասում էին Բաքվի Կոմիտեի հրամանին։ Մարտական գործողություններին մասնակցող դրուժինիկներից էին Արտակ Ստամբոլցյանը, Գևորգ Թովմասյանը (Ղարիբ), Միշա Մանուչարյանը, Արտեմ Ազամալյանը, Եղիա Հարությունյանը, Սիմոն Ժղենտին, Բոգդան Ավչյանը, Գերասիմ Մանուչարյանը, Գևորգի Ստուրուան, Մամիկոն Յուզբաշյանը, Սերյոժա Մխիթարյանը, Հովհաննես Գալուստյանը, Արամ Սարդրսյանը, Վոլոդյա Խուտուլաշվիլին, Գորոբչենկոն, Իսմայիլ Միրզոևը (ադրբեջանցի), Բաղրատ Օհանջանյանը, Ալեքսանդր Վարդանյանը և բազմաթիվ ուրիշ հայ երիտասարդներ, բանվորներ, ուսանողներ, հին կոմունիստներ։

Դրուժինայում գործում էին տակավին պատանիներ Սուրեն Շահումյանը (ծնված 1901 թվականին), Թաթուլ Մարտիկյանը (ծնված 1902 թվականին) և ուրիշներ։

Դրուժինային մասնակցում էին ռևոլյուցիոն ժողովրդի դուստրերը՝ Սաթո Մարտիկյանը, Օլգա Շատունովսկայան, Մարո Թումանյանը, Մարուսյա Կրամարենկոն, Վարսո Ալավերդյանը, Լիզա Բարսկայան և ուրիշներ։ Օլգա Շատունովսկայան դեռևս 1916 թ. բոլշևիկ էր, 1917 թ. աշխատել էր «Բակինսկի ռաբոչի» թերթում, 1918 թ.՝ Կարմիր Գվարդիայի մարտական ջոկատներում։ Սաթո Մարտիկյանը իր ամուսնու դրուժինայի զինկոմ Սերգեյ Նիկոլաևիչ Մարտիկյանի և որդու՝ դրուժինայի պատանի մարտիկ Թաթուլի հետ միասին մասնակցում էր մարտական գործերին։ Մարտիկյանի ընտանիքն ռևոլյուցիային անձնվիրաբար ծառայելու հիանալի օրինակ տվեց։

Դրուժինան մարտական գործողությունների էր դուրս գալիս ոչ միայն Բաքու քաղաքում, այլև ռազմաճակատների մերձակա քաղաքներում և շրջաններում։ Այսպես, օրինակ, դրուժինայի մարտիկների մի խումբ, Արտավազդ Հովհաննիսյանի ղեկավարությամբ, մեկնում է Կուբան և մասնակցում այնտեղ ծագած խռովությունը ճնշելուն։ Այդ ջոկատը ծանր մարտեր է մղում։ Շուտով նրան օգնության է գնում Նիկոլայ Անանչենկոյի ղեկավարած մարտիկների մի ջոկատ։ Այդ կռիվներում թշնամու գնդակից զոհվում են Լեոնիդ Բարսկին և Համո Սադաթյանը (Մարո Թումանյանի եղբայրը)։ Այդ ծանր կորուստը չի ընկճում Մարոյի արիությունը։ Նա անցել էր ռևոլյուցիոն պայքարի երկար ուղի։ Դեռևս ռուսական առաջին ռևոլյուցիայի շրջանից Մարոն ծանոթ էր Ստ. Շահումյանի հետ, մասնակցել էր ցարիզմի դեմ մղված պայքարին. 1917 թ. նա մտել էր բոլշևիկների պարտիայի մեջ։

1918 թ. մայիսին, երբ Բաքվի բոլշևիկները մի շոգենավ շաքար են ուղարկում Մոսկվա, այդ նավն ուղեկցող ջոկատի ղեկավար Բագրատ Բորյանի հետ էին նաև Մարո Թումանյանը, Արմենակ Բորյանը, Իսմայիլ Միրզոևը և ուրիշներ։ Աստրախան հասնելով, նրանք տեղեկանում են, որ Սամարան գրավված է սպիտակ չեխերի կողմից և շաքարը պահվում է Աստրախանում։

Շուտով Աստրախան է ժամանում Բաքվի դրուժինայի մի ջոկատ, 40 հոգուց բաղկացած, որը մեկնում էր Մոսկվա զենք բերելու համար։ Մարո Թումանյանը միանում է այդ ջոկատին, որի ղեկավարն էր Արտ. Հովհաննիսյանը։ Ջոկատի մեջ էին նաև Արտակ Սատամբոլցյանը, Սեղրակ Սարգսյանը, Լիզա Բարսամյանը և ուրիշներ։ Հասնելով Մոսկվա, Բաքվի դրուժինայի պատվիրակներն այցվում էին Վ. Ի. Լենինին տեսնելու ցանկությամբ, սակայն նրանց այցելում է ընկեր Օրլովը և Լենինի հանձնարարությամբ ողջույն հաղորդում, խրախուսանքի խոսքեր ասում։ Ստացած զենքը, հանդերձանքը և զինամթերքը բարձում են նավերը և ուղևորվում դեպի Բաքու։ Վերադառնալիս դրուժինայի ջոկատների ղեկավարների մեջ էր նաև Իվանով-Կավկազսկին։

Այսպես, Բաքվում Սովետական իշխանության ստեղծման և նրա պաշտպանության համար մղված մարտերում՝ Կարմիր Գվարդիայի և մարտական դրուժինայի ջոկատներում, հայ ժողովրդի զավակները պատվով էին կատարում իրենց ռևոլյուցիոն պարտքը։

* * *

Անդրկովկասում ռևոլյուցիայի հաղթանակի համար մղվող պայքարին հայ ժողովրդի մասնակցությունը ավելի ցայտուն կերպով դրսևորվեց Կովկասյան Կարմիր Բանակի *կազմակերպման և նրա մարտական գործողությունների մեջ, 1918 թվականի առաջին կեսին։ Կովկասյան Կարմիր Բանակի ստեղծումն անմիջականորեն կապված է Վ. Ի. Լենինի անվան հետ։ Այդ բանակի կազմակերպման հարցը դրել է Վ. Ի. Լենինը 1918 թ. հունվարի սկզբներին, երբ ընդունել և դրույց է ունեցել* Կովկասյան ճակատի ռազմառևոլյուցիոն կոմիտեի նախագահ և ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեի անդամ Գրիգորի Նիկոլաևիչ Կորգանովի *հետ։ Պետրոգրադից վերադառնալով, Կորգանովը Ստ. Շահումյանին,* Ա. Ջափարիձեին, Վ. Ֆիոլետովին *հաղորդում է Լենինի դիրեկտիվը, նրանց հետ միասին ձեռնամուխ է լինում* Կովկասյան Կարմիր Բանակի *կազմակերպմանը։ Այդ բանակը կարևոր դեր կատարեց Բաքվի Կոմունայի պաշտպանության գործում։*

Չի կարելի մոռանալ նաև առաջին սովետական օդաչուներին, որոնք մասնակցություն ունեցան Կովկասում ռևոլյուցիայի համար մղված մարտերին։ Հատկապես անհրաժեշտ է նշել հայ առաջին օդաչուներից մեկին— Թորոս Մանուչարյանցին *(Մանուչարովին), որը հաջողությամբ կատարում էր հրամանատարների կողմից իրեն տրված առաջադրանքները։ Նա Մոսկվա գնալով, անձամբ եղավ Վ. Ի. Լենինի մոտ։*

* * *

Արևելյան Անդրկովկասի սովետական շրջաններում, 1918 թվականին հայ, ադրբեջանցի, վրացի, ռուս, դաղստանցի և այլ ազգությունների աշխատավորների մղած ռևոլյուցիոն պայքարի մեջ բացառիկ կարևոր նշանակություն է ունեցել բոլշևիկ հրապարակախոսների, ժուռնալիստների, ագիտատոր-պրոպագանդիստների գործունեությունը, որը ծավալվում էր թերթերի էջերից, պրոկլամացիաների ու գրքերի հրատարակումով և բանավոր խոսքի միջոցով։

Այստեղ ևս հայ ժողովրդի լավագույն զավակները ցուցաբերում էին իրենց ուժերն ու եռանդը։

Բաքվի բոլշևիկների մարտական տրիբունը «Бакинский рабочий» *թերթն էր, Բաքվի Սովետի օրգան* «Известия» *ռուսերեն,* «Տեղեկագիր» *հայերեն,* «Թարիխի» *և* «Հումմեթ» *ադրբեջաներեն և*

«Кавказская Красная Армия» ռուսերեն թերթերը, Բաքվի Կոմիտեն հրատարակում էր, 1917 թվականին, «Սոցիալ-դեմոկրատ», իսկ 1918 թվականին՝ «Բանվորի խոսք» հայերեն թերթերը և այլն։ Այդ թերթերը տարածում էին Վ. Ի. Լենինի դեկրետները, հոդվածները, տպում էին Սովետական Ռուսաստանի կառավարության կարևոր որոշումները, Կովկասի ժողովուրդներին մղում էին դեպի ռևոլյուցիոն սխրագործություններ։

«Բակինսկի ռաբոչի» թերթի խմբագիրը Ասսեն Մինասի Ամիրյանն էր, որը (ծնվ. 1881 թ. հոկտ. 29-ին, Բաքվում), սովորել է Բաքվի գիմնազիայում և Կիևի համալսարանում, ինչպես ասվեց, անցյալում եղել էր հայ ազգային շարժման գործիչ, սակայն ռևոլյուցիոն պայքարի պրոցեսում հիասթափվելով այդ դաշնակների ծրագրի և գործելակերպի կորստաբեր հետևանքներից, հեռացել է նրանցից և պաշտոնապես մտել ՌՍԴԲՊ շարքերը, մինչև այդ համակրելով ս-դ. ծրագրին։ Դառնալով բոլշևիկ, Ամիրյանն ամբողջովին տոգորվում է լենինյան գաղափարներով։

1918 թ. Ամիրյանը «Բակինսկի ռաբոչի» թերթը դարձրել էր լենինիզմի գաղափարների լավագույն պրոպագանդիստ։ Թերթի գլխավոր յուրաքանչյուր համարում Ամիրյանը հանդես էր գալիս մարտական հոդվածներով։ Առանձնապես պետք է նշել Ամիրյանի այն հոդվածները, որոնց մեջ հեղինակը խոսում էր Վ. Ի. Լենինի մասին, դիմակազերծ անում բուրժուական և մանրբուրժուական մամուլի կատարած կեղծիքներն ու տարածած զրպարտությունները։ Տեղական «պաշտպանողական» թերթերը,— գրում է Ամիրյանը,— կոնտրարանդի դիմելով հայհոյում են ռուսական ռևոլյուցիայի առաջնորդ Լենինին[1]։ Ամիրյանը ծաղրում է էսեռ Սահակյանի և նրա ձայնակիցների Լենինի դեմ խոսելու ողորմելի փորձերը, նրանց խղճուկ և անիմաստ ջանքերը։ «Միակ ճշմարիտ ուղին» հոդվածում Ամիրյանը խոսում է Ռուսաստանի պրոլետարիատի ընտրած սովետական ուղու մասին։ Նա ցիտում է Վ. Ի. Լենինի խոսքերն այն մասին, թե «կամ կհաղթի պրոլետարական կարգապահությունն ու կազմակերպվածությունը, կամ մանրբուրժուական սեփականատերերի տարերքը»[2]։ Այնուհետև Ամիրյանը Լենինի մտքերը շարադրելով, խոսում է ռուսական ռևոլյուցիայի բախտի մասին, խնդիր է դնում Կովկասում լայն և խոր սոցիալական բարեփոխումներ մտցնել, ապահովել աշխատավորների հաղթանակը։

---

[1] «Բակինսկի ռաբոչիե» 1918, № 86։

[2] Նույն տեղում, 1918, № 121։

Արսեն Ամիրյանը հետևում էր Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին, Թուրքերի դեմ մղվող պատերազմը գնահատում էր որպես արդարացի, ազատագրական պատերազմ։ Նա թերթի էջերում նյութեր է տպել 1918 թ. մայիսին Սարդարաբադի մոտ և Ղարաքիլիսայի շրջանում հայ աշխատավորների կողմից Թուրքական բանդաների դեմ տված ճակատամարտերի մասին, «Հայերի խոշոր հաջողությունը» խորագրի տակ[1]։ Սարդարաբադի և Ղարաքիլիսայի մոտ հայ աշխատավորների տված հերոսամարտերը «Բակինսկի ռաբոչի»-ն դիտում էր որպես օգնություն Բաքվի կոմունային։

Այսպես, Արսեն Ամիրյանը լենինյան տիպի հրապարակախոս-ժուռնալիստ էր, շրջահայաց և խորաթափանց, սկզբունքային և մարտական ոգով տոգորված։ Նրա խմբագրած թերթի էջերից խոսում էր Բաքվի բոլշևիկյան կոմիտեն։ Նրա թերթի էջերը զարդարված էին Վ. Ի. Լենինի լոզունգներով, Լենինին հավատարիմ լինելու կոչերով։

Հայ լենինյան հրապարակախոսների հին սերնդի գործիչ «պրավդիստ» Սուրեն Գրիգորի Հովսեփյանի տաղանդը նոր ուժով փայլատակեց 1917—1918 թթ. ռևոլյուցիայի օրերին։ Հայտնի մարքսիստ-փիլիսոփա Սուրեն Հովսեփյանը Կովկասյան բանակի ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի անդամ էր և Գ. Կորգանովի, Բ. Շերոլդաևի, Ի. Մալիգինի հետ ձեռք-ձեռքի տված պայքարում էր Կարմիր Բանակի ստեղծման ու ամրապնդման համար։

Ս. Հովսեփյանը նշանակվեց Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի օրգան «Կավկազսկայա կրասնայա արմիա» թերթի խմբագիր։ 1918 թ. հունիսի վերջերից այդ թերթը միացավ Բաքվի Սովետի «Իզվեստիա» օրաթերթի հետ, Հովսեփյանը նշանակվեց այդ թերթի խմբագիր։ «Պրոսվեշչենիեում» և «Պրավդա»-ում Հովսեփյանը պրոպագանդում էր մարքսիզմ-լենինիզմի թեորիայի հարցերը, քննում էր ֆրանսիական մատերիալիստների աշխատություններն, այստեղ նա հանդես է գալիս որպես ռևոլյուցիոն պայքարի տեսաբան, իսկ Բաքվի բոլշևիկյան օրգաններում նա լուսաբանում էր սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի հարցերը, սոցիալական հեղաշրջման, քաղաքացիական պատերազմի, սովետական հայրենիքի պաշտպանության հարցերը, մերկացնում էր իմպերիալիստական պետությունների քաղաքականությունը և բուրժուական պարտիաների հակառևոլյուցիոն բլոկը։

---

[1] Տե՛ս «Բակինսկի ռաբոչի» № 109, 10 հունիսի 1918 թ.։

Թերթի էջերը լցված են Սուրեն Հովսեփյանի մարտական հոդվածներով։ Նրանք ներծծված են Վ. Ի. Լենինի աշխատություններից քաղված նյութերով։ Սուրենը գրել է առաջնորդողներ, քաղաքական պանֆլետներ, ակնարկներ, խիստ հուզիչ փոքրիկ թղթակցություններ, որոնք կրում են ռևոլյուցիայի կնիքը։ Այդ հոդվածների մեջ կա գաղափարական խորություն, դեպքերի լենինյան վերլուծություն, ռևոլյուցիոն կորով։

«Ահա նա,— կյանքը,— այդպես է սկսել իր մի հոդվածը Ն. Սուրենը,— հոսում է, փրփրում է, փոթորկում... նա չգիտի կապանքներ, չգիտի ոչ շղթաներ, ոչ մամլակներ, ոչ արգելակներ... Ահա կյանքը... նրա դեմքին պայքարի հրճվանքն է, աչքերում — սրբազան հավատը, շուրթերին—խիզախումը՝ առաջ և առաջ... նա հարազատանում է միայն հզոր փոթորիկի հետ, և մեծ օվկիանոսի ալիքների հետ. նա գիտի միայն մեկ երգ—աշխատանքի հաղթանակի երգը... մասսաների շարժումը — ահա նրա տարերքը։ Մասսաների հաղթանակը — ահա նրա ուրախությունը»[1]։

Ռուսական և հայկական բոլշևիկյան թերթերի խմբագրություններում 1918 թ. աշխատում էին նաև Ա. Կարինյանը, Ա. Միկոյանը, Հովսեփ Լաղյանը, Հովսեփ Կարախանյանը, Սարգիս Դանիելյանը, Գառնիկ Ղազարյանը, Մելիք Մելիքյանը և ուրիշ հայ հրապարակախոսներ։ Նրանք իրենց ռուս, ադրբեջանցի, վրացի, հրեա ժուռնալիստ ընկերների հետ միասին, որպես գրչի ու տպագիր խոսքի զինակիցներ, ամեն օր թերթի էջերից մասսաների մեջ էին տարածում լենինյան գաղափարները։ Հայ բոլշևիկ հրապարակախոսները 1917—1918 թվականներին աշխատելով ռևոլյուցիոն պայքարի իդեոլոգիական ճակատում, թշնամու շատ վահաններ էին ճեղքում, նրանց նիզակները ետ վանում, ջարդում, հանուն լենինյան գաղափարների տարածման ու հաղթանակի։

* * *

Վերջին հարցն ըստ պայմանական հերթականության, Բաքվի Սովետի ստեղծած իշխանության օրգանների—նախ Բաքու քաղաքի և շրջանի Ռևոլյուցիոն Պաշտպանության Կոմիտեի, այնուհետև Ժողովրդական Կոմիսարների Սովետի կազմում և նրան կից պետական-սովետական օրգանների ղեկավար պոստերում՝ հայ ժողովրդի

---

[1] Տե՛ս «Կավկազսկայա կրասնայա արմիա», № 1, 4 մայիսի 1918 թ.։

պավակների մասնակցության, նրանց կատարած դերի հարցն է։ Այդ հարցը առավել կարևոր է քննարկել սույն թեմայի ասպեկտով։

Առևելյան Անդրկովկասում բուրժուական հակառևոլյուցիայի և գեռմանա-թուրքական գործակալության դեմ պայքար կազմակերպելու համար մարտի 31-ին ստեղծվում է Ռևոլյուցիոն պաշտպանության կոմիտեն, որի կազմում մտնում էին Կովկասի գործերի Արտակարգ կոմիսար Ս. Շահումյանը, Կովկասյան բանակի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի նախագահ Գ. Կորգանովը, Բաքվի Սովետի նախագահ Ա. Ջափարիձեն և ուրիշներ։

Ռևոլյուցիոն պաշտպանության կոմիտեն դարձավ քաղաքի և նրա շրջակայքի բարձրագույն ռազմա-քաղաքական իշխանությունը։ Ռևոլյուցիոն պաշտպանության շտաբի պետ նշանակվեց նույն Գ. Կորգանովը։ Կոմիտեն հակահարված տվեց դասակարգային պայքարը ազգամիջյան կռիվներով փոխարինելու բուրժուական նացիոնալիստների փորձերին։

Մարտի 30-ին, 31-ին և ապրիլի 1-ին Բաքվում տեղի ունեցած կատաղի մարտերի մասին Ս. Շահումյանը ապրիլի 13-ին հետևյալն է հաղորդել Մոսկվա՝ ժողկոմսովետին, Վ. Ի. Լենինին.

«Կռվում էին, մի կողմից, սովետական Կարմիր Գվարդիան, մեր կողմից կազմակերպված կարմիր ինտերնացիոնալ բանակը, կարմիր նավատորմը... և հայկական ազգային զորամասերը։ Մյուս կողմից՝ մուսուլմանական վայրենի դիվիզիան, որի շարքերում բավական թվով ռուս սպաներ կան, և «մուսավաթ» պարտիայի ղեկավարած զինված մուսուլմանների բանդաները։ Երկու կողմից քաղաքային մարտերում 20 հազարից ավելի մարդ էր մասնակցում»[1]։

«Վայրենի դիվիզիան» և մուսուլմանական բանդաներն անխնա պատասխան էին տեսնում հայ բանվորների և ամբողջ բնակչության հետ ռևոլյուցիոն պայքարին նրանց մասնակցելու, Սովետական իշխանության կողմը կանգնելու համար։ Դաշնակ-նացիոնալիստներն իրենց հերթին ստեղծված իրադրությունն օգտագործում էին դեպի Ադրբեջանի աշխատավորները ատելություն բորբոքելու համար։ Հայ բնակչությունը խոշոր կորուստներ ունեցավ, խիստ տուժեց նաև մուսուլման բնակչությունը՝ նույնիսկ չքավորական տարրերից։

Շահումյանը նշել է հայ, մուսուլման և ռուս բանվորների հա-

---

[1] Ստ. Շահումյան, Նամակներ, էջ 65։

մերաշխությունը, նրանց կուռ համախմբվածությունը Կարմիր Գվարդիայի շարքերում, որոնք պաշտպանել են քաղաքը շրջակայքի գյուղերից եկող մուսավաթական բանդաների հարձակումներից։

Ապրիլի 25-ին Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունը և Բաքվի Սովետը ստեղծեցին ռևոլյուցիոն իշխանություն—Ժողովրդական Կոմիսարների Սովետ, որը հանդիսացավ ամբողջ Անդրկովկասում ռևոլյուցիայի հաղթանակի համար մղվող պայքարի շտաբը։

Ժողովրդական Կոմիսարների Սովետի առաջին ակտը, պատմական դեկլարացիան ստորագրող յոթը կոմիսարներն էին՝ Ստեփան Շահումյանը, Ալյոշա Ջապարիձեն, Գրիգոր Կորգանովը, Արտաշես Կարինյանը, Իվան Ֆիոլետովը, Նադեժդա Կոլեսնիկովան և Նարիման Նարիմանովը։

Բաքվի Ժողկոմսովետը հայտարարեց, որ նա կոչված է պայքարելու և արդեն պայքարում է ամբողջ Անդրկովկասում ու Դաղստանի մարզում Սովետական իշխանություն հաստատելու համար։ Այնուհետև Շահումյանը գրում էր, որ Բաքվի Ժողկոմսովետը հանդիսանում է Համառուսական Սովետական ռեսպուբլիկայի տեղական իշխանությունը և կենսագործելու է Վ. Ի. Լենինի գլխավորած Ժողկոմսովետի բոլոր դեկրետներն ու կարգադրությունները։ Բաքվի Ժողկոմսովետի կազմակերպած կոմիսարիատներում ու սովետական-պետական հիմնարկներում դեկավար աշխատանքի նշանակվեցին շատ հայեր, որոնք գործում էին ռուսների, ադրբեջանցիների, վրացիների և մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հետ միասին։

Բաքվի Ժողկոմսովետի նախագահ և արտաքին գործերի կոմիսար Ստ. Շահումյանի պետական գործունեության ամեն մի քայլը կապված է Վ. Ի. Լենինի անվան հետ։ Շահումյանը Վ. Ի. Լենինին էր գրում բոլոր հաջողությունների մասին, նրանից էր օգնություն խնդրում անհամար դժվարությունների դեմ պայքարելու գործում։ Շահումյանը հանդիսանում էր Վ. Ի. Լենինի հռչակած ծրագրերի անշեղ կենսագործողը Կովկասի պայմաններում, լենինյան թեորիայի ու տակտիկայի ստեղծագործական զարգացնողն ու կիրառողը։ Նա մինչև կյանքի վերջին բոպեն մնաց որպես հավատարիմ լենինյան։

Ղեկավարելով Բաքվի ժողկոմսովետի բազմակողմանի գործունեությունը, ուղղություն տալով Բաքվի կոմունիստական կազմակերպության և Բաքվի Սովետի աշխատանքներին, անձամբ զբաղվելով ռազմաճակատի գործողությունների հարցերով, Շահումյանը գլխավորում էր Կովկասի բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև Հայաստանի աշխատավորների ռևոլյուցիոն պայքարը։ Շահումյանը հետևում էր Հայաստանի կյանքին, նրա վրա կախված ապառնալիքի համար մեծ տագնապ էր ապրում։ Այս տեսակետից հետաքրքրական է Շահումյանի 1918 թ. մայիսի 28-ին Վ. Ի. Լենինին ուղարկած հեռագիրը։ Այսօր, մայիսի 28-ին,— գրել է Շահումյանը,— Թիֆլիսից ստացվել է ռադիո-հաղորդագրություն այն մասին, որ մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմը ցրվել է, Վրաստանը հայտարարվել է «անկախ պետություն», ինչպես հայտնի է նրան հետևում են նաև Հայաստանի «անկախ պետության» և Ադրբեջանի «անկախ պետության» ձևավորումը։

Շահումյանը Լենինին հաղորդում է, որ Անդրկովկասի այդ ստրոհման պայմաններում, Թուրքիան ուզում է ներկայացրել, որ իրեն կցեն մի շարք նահանգներ ու գավառներ, նրան տրամադրեն Անդրկովկասի երկաթուղու գծերը և այլն։ Շահումյանը հեռագրում ժողկոմսովետին տեղեկացրել է թուրքական իմպերիալիզմի նոր ոտնձգությունների մասին, որոնք ձևնարկվում էին Հայաստանի և Վրաստանի դեմ, վերջին հաշվով, նաև Սովետական Ռուսաստանի դեմ։

Այսպիսով, Բաքվի ժողկոմսովետի նախագահի և Կովկասյան գործերի Արտակարգ կոմիսարի պոստերում Ստ. Շահումյանն ամբողջովին նվիրված էր Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման համար մղվող պայքարին, որը կարող էր բոլոր ժողովուրդներին և հայ ժողովրդին ազատություն տալ, նոր էջ բացել նրանց պատմական բախտի մեջ։

Բաքվի ժողկոմսովետի ռազմա-ծովային գործերի կոմիսար Գերիգորի Նիկոլայի Կորգանովը Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտներից էր, Ստ. Շահումյանի և Ալ. Ջափարիձեի մարտական ընկերը։ Կորդանովը տաղանդավոր կազմակերպիչ էր, հրապարակախոս, տիրապետում էր ռազմական գիտելիքներին։ Կոմունայի շրջանում ռազմածովային կոմիսարի պաշտոնը վարելով, նա միաժամանակ հանդիսանում էր Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարը և այդ բանակի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի նախագահը։ Կորդանովի ռևոլյուցիոն ոգեշնչման գործում խոշոր նշա-

նակություն էր ունեցել նրա հանդիպումը Վ. Ի. Լենինի հետ։

«Ես շատ լավ հիշում եմ,— գրել է հին կոմունիստ Ի. Ս. Ֆրանգուլյանը,— թե ինչպես Գրիշա Կորգանովը Վ. Ի. Լենինի հետ անձամբ հանդիպում ունենալուց հետո արտասովոր հուզված էր և հիացած մեծ Լենինով։ Շուտով նա մեկնեց Բաքու, որտեղ ակտիվորեն մասնակցեց Կովկասյան Կարմիր Բանակի կազմակերպմանը, որի մասին առաջադրանք էր ստացել անձամբ Վ. Ի. Լենինից»։

Ռազմաճակատում գտնվելով և անձամբ ղեկավարելով թուրքական բանակի հարձակման դեմ Կովկասյան Կարմիր Բանակի գործողությունները, Կորգանովը 1918 թ. մայիսի 22-ին մանրամասն զեկուցագիր է ուղարկել ՌՍՖՍՌ Ժողկոմսովետին, Վ. Ի. Լենինին[1]։ Այդ զեկուցագրում Կորգանովը վերլուծել է ամբողջ Անդրկովկասում ստեղծված ռազմա-քաղաքական իրադրությունը, Հայաստանի և Վրաստանի վիճակը, պայքարի դժվարություններն ու խնդիրները։ Կորգանովի զեկուցագրում գծված է հերոսի անվեհեր կերպարը, նրա հավատը վաղվա օրվա նկատմամբ, նրա նվիրվածությունը Լենինի մեծ գործին։ Հունիսի 20-ին Կորգանովը Ս. Շահումյանի հետ միասին հեռագիր է ուղարկում Մոսկվա Վ. Ի. Լենինին և հաղորդում Ելիզավետպոլի ճակատում մղվող մարտերի, թշնամու զորքերի կազմի, կարմիր զորքերի հարձակողական գործողությունների, հետախուզության և այլ հարցերի մասին[2]։ Նույն օրը Կորգանովը Շահումյանի հետ երկրորդ հեռագիրն է ուղարկում Վ. Ի. Լենինին. այս անգամ զեկուցում է հակառակորդի հարձակման, նրա ջախջախման ու «խուճապային փախուստի» և Կարմիր Բանակի հայ մարտիկներից կազմված 16-րդ գումարտակի աչքի ընկնող գործերի մասին։ «Ջնայած զրկանքներին, կարմիրբանակայինները դիրքերում կանգնած էին արիաբար»,— գրել է Կորգանովը[3]։

Այդպես էլ Գ. Կորգանովն արիաբար կանգնած մնաց իր մարտական դիրքերում մինչև կյանքի վերջը։ Սեպտեմբերի 18-ին Գ. Կորգանովը, 32-ամյա երիտասարդ զորավարը, Կրասնովոդսկի բանտից իր մարտական ընկերների հետ միասին կազմեց վերջին երկու նամակը, որոնց մեջ բողոքում էր սև ուժերի բռնության ու սանձարձակության դեմ, ձգտելով դեպի աղատություն և ուսուցիոն պայքարի նոր խոյանքի։

---

[1] ՍԲԿՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 8 («Ս») թ. 417—419։

[2] Տե՛ս «Красный архив», 1938, № 4—5.

[3] Տե՛ս Ստ. Շահումյան, Նամակներ, էջ 102—103։

Բաքվի ժողկոմսովետին օգնություն ցույց տալու համար Վ. Ի. Լենինը 1918 թ. մայիսին Մոսկվայից Բաքու ուղարկեց Սահակ Միրզոյի Տեր-Գաբրիելյանին, որը նշանակվեց հակառևոլյուցիայի, սպեկուլյացիայի և մորոդյորության դեմ պայքարող արտակարգ հանձնաժողովի նախագահ։ Տեր-Գաբրիելյանին տրված մանդատն ստորագրել էր Վ. Ի. Լենինը։ Մանդատում ասված է. «Սույնը ներկայացնող ընկ. Տեր-Գաբրիելյանը գործուղվում է Բաքու միջոցներ ձեռք առնելու անմիջապես Բաքվից նավթը փոխադրելու Վոլգայով»[1]։ Առաջարկված էր բոլոր կազմակերպություններին լիակատար աջակցություն ցույց տալ նրան այդ գործում։ Վ. Ի. Լենինը ռազմաժողկոմին հատուկ գրություն է գրել, թե ընկեր Տեր-Գաբրիելյանը Բաքու է գնում զինված ջոկատով և դրամով, բաքվեցիներին ռազմական օգնություն ցույց տալու համար[2]։ Ժամանելով Բաքու Ս. Տեր-Գաբրիելյանը իսկույն ստանձնում է Արտակարգ հանձնաժողովի ղեկավարումը։ Հունիսի 23-ին Բաքվում գումարված միտինգում նա ելույթ է ունենում և Վ. Ի. Լենինի անունից ողջույն է հաղորդում Բաքվի ռևոլյուցիոն մարտիկներին[3]։

Բաքվի ժողկոմսովետի արդարադատության կոմիսար Արտաշես Բալասանի Կարինյանը աշխատում էր Ս. Շահումյանի, Ա. Ջապարիձեի, Ս. Տեր-Գաբրիելյանի, Ի. Ֆիոլետովի, Գ. Կորդանովի և մյուս կոմիսարների հետ, կատարելով ռևոլյուցիոն նոր օրենսդրություն ստեղծելու խնդիրները։

Բաքվի կոմունայի ժամանակամիջոցում սովետական տարբեր հիմնարկներում պատասխանատու աշխատանքներ էին կատարում նաև ուրիշ հայ գործիչներ, որոնցից կնշենք մի քանիսին. Արշակ Խաչիկը նշանակվել էր Բաքվի տպարանների կոմիսար, Ա. Սերեբրյակյանը՝ թատրոնների և արվեստի գործերի կոմիսար, Ա. Կոստանդյանը՝ պարենավորման ժողկոմի տեղակալ։ Հին բոլշևիկ Միխայիլ Աբաբեկյանը նշանակվել էր Բաքվի շրջանի պարենավորման դիրեկտորիայի նախագահ, ուժերի գերադույն լարումով կռվում էր ներքին թշնամու — սովի դեմ, աշխատելով գոնե մինիմում չափով բավարարել Բաքվի բանվորների, ռազմաճակատի զինվորների և նրանց ընտանիքների հացի կարիքը. Միխայիլ Կարագյոզյանը 1917 թ. ընտրվել էր Բաքվի կոմիտեի անդամ, իսկ կոմունայի ժամանակ նախ աշխատում էր որպես Բաքու քաղաքի

---

[1] ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 49, գ. 3, թ. 17։

[2] Նույն տեղում, թ. 21։

[3] Տե՛ս «Տեղեկատու թերթը, 1918, № 55։

վուտի և հեռագրատան կոմիսար, հետո Դաղստանի արտակարգ կոմիսարի տեղակալ և Պետրովսկ քաղաքի կոմիսար։ Շիղա Հովհաննիսյանը՝ նույնպես աշխատում էր մատակարարման դիրեկտորիայում. Աշոտ Հովհաննիսյանը Լուսավորության Գործերի Կոմիսարիատում հանդիսանում էր դպրոցական բաժնի վարիչը և ղեկավարում էր Բաքվի Սովետի կուլտուր-լուսավորական բաժինը[1]. Ամբատ Մարգարյանը աշխատում էր որպես Հաղորդակցության ճանապարհների, Ջրային տրանսպորտի և Փոստ-հեռագրական ժողկոմի տեղակալ. Ս. Ղարգարյանն աշխատում էր որպես Աշխատանքի ժողկոմի տեղակալ, միաժամանակ Բաքվի Սովետի Գործկոմի անդամ էր. Բ. Ավագյանն սկզբում Բաքվի Սովետի Գործկոմի քարտուղարն էր, իսկ Բաքվի պաշտպանության ծանր օրերին, հանդիսանում էր քաղաքի զինվորական պարետը. Աշոտ Տեր-Կարապետյանը՝ Բաքվի Սովետի Գործկոմի քարտուղարի պաստում նշանակվեց Ավագյանի փոխարեն. Վարյա Կասպարովան՝ դիսավորում էր Բաքվի ժողկոմսովետի Արտաքաղաքային հանձնաժողովը. Ալեքսանդր Բեգզադյանը աշխատում էր որպես Բաքվի նահանգի՝ պարենավորման[1] կոմիտեի նախագահ։ Բաքվի մատակարարման ծանր օրերին Բեգզադյանը Բաքվի ժողկոմսովետի առաջադրանքով ուղարկվեց Հյուսիսային Կովկաս որպես արտակարգ լիազոր՝ մատակարարման գծով։ Բեգզադյանի հետ միասին մեկնեցին նաև ուրիշ աշխատողներ, որոնցից էին Ցարո Կնունյանցը, Ավանես Գաբրիելյանը և ուրիշներ։ Կոմունայի անկումից հետո Ցարո Կնունյանցը մնաց Հյուսիսային Կովկասում՝ ընդհատակյա պարտիական աշխատանքի, մինչև քաղաքացիական կռիվների վերջը։

Այսպիսով, հայ ժողովրդի զավակներին մենք տեսանք Բաքվում Սովետական իշխանության համար մղվող պայքարի բոլոր բնագավառներում, ռազմաճակատում և թիկունքում, գաղափարական աշխատանքում և կառավարական դեկավար պաստերում։

Մենք կանգ չառանք Բաքվի Սովետի դեպուտատների վրա, որոնք բազմաքանակ էին, սովետի մոտ կեսը, սակայն այնտեղ կային ոչ միայն բոլշևիկներ, այլև էսեռներ, դաշնակներ, մենշևիկներ։ Բաքվում դաշնակները և էսեռները, որ սկզբում մասնակցում էին մուսավաթականների և թուրքերի դեմ մղվող կռվին, վճռական

---

[1] ՄԼԻ Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 4, ց. 1, գ. 24, թ. 25։

պահին դավաճանեցին ռևոլյուցիային և թիկունքից հարվածեցին Սովետներին։ Հայ ժողովուրդը և Կովկասի մյուս ժողովուրդները անենթքով են հիշում և նզովում մենշևիկ Սադովսկուն, դաշնակ Մելիք-Յոլչյանին, Խան Սահակյանին և ուրիշների, որոնք Բաքվի Սովետում գործում էին ռևոլյուցիայի դեմ. հին ոգու Ջիրիխյանին և մյուս դավաճաններին, որոնք քարոզում էին ռազմանակոտոր։

Նույնը պետք է ասել նաև կաղակ Լազր Բիշերախովի մասին։ Ինչպես հայտնի է, Արևելյան Անդրկովկասում ռևոլյուցիայի համար ստեղծված կրիտիկական պահին, 1918 թվականի հուլիսի սկզբներին, Բաքվի Կարմիր զորքերի հրամանատար նշանակվեց Բիշերախովը, որը պետք է գործեր Գ. Կորգանովի հսկողության տակ, սակայն, ինչպես պարզվեց շուտով, գործում էր իմպերիալիստների գիրեկտիվներով։ Լազր Բիշերախովը լքեց հրամանատարական պոստը, մերկացրեց ճակատը, իր ջոկատով հեռացավ մարտի դաշտից և Բաքվի դարպասները բացեց Թուրքա-մուսավաթական զավթիչների առաջ։

Անդրկովկասում 1917—1918 թվականներին ծավալված ռևոլյուցիոն-ազատագրական պայքարի մեջ նման հակասությունները չէին կարող չունենալ իրենց բացասական հետևանքները։ Խնդիրը նրանց խոր ըմբռնումն է, իրադարձությունների ճշմարիտ մեկնաբանումը։

Բաքվում ռևոլյուցիոն բանակները պարտություն կրեցին թուրքական կանոնավոր զորքերի և մուսուլմանական կորպուսի խաժամուժ հորդաների ուժերից, որոնց գլխավորում էր Նուրի փաշան։ Բաքվի վրա թուրքերի գրոհի պահին իրենց գայլային թաթերը մեկնեցին նաև անգլիական գիշատիչները։

Անդրկովկասում հայ ժողովուրդն ռևոլյուցիայի հաղթանակի համար պայքարում էր ռուս, վրացի, ադրբեջանցի ժողովուրդների հետ եղբայրական համերաշխությամբ։ Այդ համերաշխությունը հավիտյանս ցեմենտված է մարտերում մեր հերոսների թափած արյամբ, Բաքվի կոմունարների արյամբ։ Շահումյան և Ջափարիձե, Կորգանով և Ֆիոլետով, Ազիզբեկով և Զևին, Ս. Ամիրյան և Գ. Պետրով, Ավագյան և Սոլնցև, Կոստանդյան և Գաբիշև, Հովսեփյան և Մալիգին, կարելի է թվել ճակատում ընկածներին, քաղաքի բարիկադային կռիվներում զոհվածներին և ամենուրեք հայը ռուսի կողքին է, վրացու և ադրբեջանցու կողքին, ռևոլյուցիայի համար պայքարող դասակարգային եղբայրների կողքին։

* * *

Այսպիսով, հայ ժողովրդի լայն զանգվածները տոգորվեցին Հոկտեմբերին Ռուսաստանում հաղթանակած ռևոլյուցիայի հռչակած վեհ սկզբունքներով, ապրեցին ռևոլյուցիոն դաստիարակության խոր պրոցես, դուրս եկան պայքարի ընդդեմ հակառևոլյուցիոն սև ուժերի։

Անդրկովկասում 1917 թ. վերջերին և 1918 թ. առաջին կեսին ռևոլյուցիայի գլխավոր թշնամիները թուրքա-գերմանական զավթիչներն էին և տեղական ազգային դավաճանները։

Հայ ժողովրդի հիմնական մասսան ռևոլյուցիայի կողմն էր։ Այդ մասսան պայքարի գնաց ռուս, ադրբեջանցի, վրացի և այլ ազգերի աշխատավորների հետ համերաշխ, ինչպես Ադրբեջանի և Վրաստանի շրջաններում, այնպես էլ բուն Հայաստանում։

Ոչ միայն Բաքվի կոմունայի մղած հերոսամարտերում, այլև Սարդարապատի, Բաշապարանի և Ղարաքիլիսայի շրջաններում, ինչպես նաև Գողթան—Արևիքում 1918 թվականի գարնանը տեղի ունեցած արյունահեղ կռիվներում պայքարը մղվում էր ռևոլյուցիայի և հակառևոլյուցիայի միջև։ Հիրավի, թուրքական զորքերը հարձակվելով Սարդարապատի կամ Զանգեզուրի վրա, ձգտում էին գրավել ոչ միայն Արարատյան դաշտն ու Երևանը, այլև Զանգեզուրը, որպեսզի և՛ Սևանի, և՛ Արաքսի ափերով արագ շարժվեին դեպի նավթային և ռևոլյուցիոն Բաքուն։ Սարդարապատում 1918 թվականի մայիսի 22—28-ին հայ ժողովուրդը միահամուռ ուժերով անօրինակ դիմադրություն ցույց տվեց։ Դա մի ճակատամարտ էր, որը ոչ միայն Հայաստանի մայրաքաղաքը, հայ ժողովրդի այդ հատվածը փրկելու, այլև դեպի Սովետական Բաքու շարժվող թշնամու ուժերի ընթացքը ետ պահելու կամ դանդաղեցնելու նշանակություն ունեցավ։ Սարդարապատի հերոսամարտն այսպիսով, և՛ հայ ժողովրդի մի գոտեմարտ էր, և՛ ռևոլյուցիայի նվաճումները պաշտպանելու համար մղված պայքար։ Նույնը պետք է ասել նաև Ղարաքիլիսայում և Բաշապարանում մղված մարտերի մասին։

Հայ ժողովուրդը, Անդրկովկասի մյուս ժողովուրդների հետ միասին, իր ավանդը մուծեց այն մեծ պայքարում, որ մղվում էր թուրքական և գերմանական բլոկի դեմ։ Այդ փաստը ընդգծել է գերմանական գեներալ Է. Լյուդենդորֆը իր հուշագրությունների մեջ։ Այդ էր պատճառը, որ Բաթումում բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակները և գերմանական ներկայացուցիչը հա-

տուկ սրությամբ դրեցին Բաքվից հայկական զորամասերը հեռացնելու հարցը։

Այդ օրերին էլ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ազնիվ շատ գործիչներ հասկանում էին, որ միայն Հոկտեմբերյան ռևոլյուցիան, միայն Սովետական իշխանությունն է փրկության ուղի բացում ճնշված ազգերի, մասնավորապես հայ ժողովրդի համար։ Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներից շատերը, որ մինչև ռևոլյուցիան պայքարում էին բռնակալների դեմ և ժողովրդի ազատագրման ուղիներ էին որոնում, հաճախ մոլորվում էին, ընկնում դեգերումների մեջ, կատարում էին կոպիտ սխալներ և ապրում սին պատրանքներով, տեսան, որ ցարական միապետության տապալումը ուղի էր բացում նաև հայ ժողովրդի ազատագրման համար։

Նրանցից մեկը զորավար Անդրանիկ Թորոսի Օզանյանն էր (1865—1927)։ Անդրանիկն ավելի քան երեսուն տարի ակտիվ մասնակցություն է ունեցել սուլթանիզմի դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին, հերոսացել է այդ անհավասար մարտերում։ Սակայն Անդրանիկը նույնպես հավատացել է հայերի կեղծ բարեկամների խոստումներին և խորհուրդներին, ընկել մոլորությունների մեջ, կատարել սխալներ։ Ժողովրդի ազատագրության համար մղված պայքարի տարիներին գտնվելով դեգերումների մեջ, նա առաջնորդվել է մի ազնիվ նպատակով՝ ծառայել ժողովրդին, նպաստել նրա փրկության գործին։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան իր ազդեցությունը թողեց նաև Անդրանիկի վրա, որը կշռադատելով հայ ժողովրդի համար ստեղծված իրավիճակը, իր պատրաստակամությունը հայտնեց ծառայել ռևոլյուցիային։ Այդ մասին են վկայում հետևյալ փաստաթղթերը. Ստ. Շահումյանը 1918 թ. հուլիսի 17-ին Վ. Ի. Լենինին հեռագիր ուղարկեց Անդրանիկի մասին։ Այդ հեռագրում ասված է.

«Մոսկվա, Լենինին. Ջուլֆայից հայ զորավար Անդրանիկից ես ստացել եմ հետևյալ հեռագիրը՝ «Կովկասյան գործերի կոմիսարին, 14 հուլիսի։ Անառարկելիորեն ենթարկվելով Բրեստ-Լիտովսկու պայմանագրին, Նախիջևանի գավառը, ուր ներկայումս գտնվում եմ իմ ջոկատով, հայտարարում եմ ռուսական հանրապետության անբաժան մասը։ Խնդրում եմ հայտնել ում որ հարկն է, որ ես իմ ջոկատով այսօրվանից գտնվում եմ Ռուսաստանի Կենտրոնական Կառավարության տրամադրության տակ և ենթարկվում եմ նրան։ Կաշխատեմ արգելակել թուրքական զորքերի մուտքը Նախիջևանի

գավառը։ Սպասում եմ պատասխանի և կարգադրության։ № 57, Գեներալ-մայոր, Անդրանիկ»։ Հեռագրին իմ կողմից պատասխանում եմ. «Ողջունում եմ, առաջարկելով դիմանալ։ Խնդրում եմ Ձեր պատասխանը։ 17 հուլիսի։ ՇԱՀՈՒՄՅԱՆ»[1]։

Ստ. Շահումյանը այնուհետև հեռագիր ուղարկեց Անդրանիկին.

«Ձեր հեռագիրը ստացա։ Լրիվ տեքստը հաղորդեցի Մոսկվա՝ կենտրոնական կառավարությանը։ Իմ կողմից հանձին Ձեզ ողջունում եմ իսկական ժողովրդական հերոսին։ Եթե պարոնայք Քաջազնունին և մյուսները Ձեզ նման լինեին, հայ գյուղացիությունը այժմ այսպիսի ողբերգություն չէր ապրի։ Ողջույն հաղորդեցեք Ձեր դրոշի ներքո կուվող բոլոր քաջ զինվորներին և ամբողջ աշխատավոր բնակչությանը, որը կրկնակի տառապում է թե թուրքական սվինից և թե ազգային առաջնորդների դավաճանությունից։ Չնայելով ոչ մի դժվարությունների, կոչ եմ անում Ձեզ չիջեցնել ռևոլյուցիոն դրոշը։ Բաքվի պրոլետարիատը Ռուսաստանի իշխանության ուժգին աջակցությամբ հերոսական պատերազմ է մղում թուրք-բեկական բանդաների դեմ՝ Քյուրդամիրի և Աղսուի ուղղությամբ։ Երբ մենք հաղթենք թուրքերին, խաներին ու բեկերին, վրացական իշխաններին ու հայ բուրժուազիային, այն ժամանակ ամբողջ Անդրկովկասի միավորված գյուղացիները և բանվորները իրենց ընդհանուր համագումարում կհաստատեն Սովետական իշխանություն և նրից կկապվեն Ռուսաստանի Մեծ Ռեսպուբլիկայի հետ։ Ուրախ կլինեի Ձեզ անհրաժեշտ աջակցություն ցույց տալու հնարավորության համար։ Թերևս Դուք ուղիներ գտնեք կապի համար։

Կովկասի Առաջավոր Կոմիսար և Ժողովրդական Կոմիսարների Բաքվի Սովետի նախագահ Ս. Շահումյան»[2]։

Մոսկվան այդ մասին լուր ստացավ։ Բոլշևիկյան կենտրոնական թերթերը հոդվածներ զետեղեցին Անդրանիկի ռևոլյուցիոն շրջադարձի և նրա հերոսությունների մասին։

Հոդվածներից մեկը գրել էր Կոնստանտին Մալինինը, լենինյան հին գվարդիայի գործիչներից մեկը։ Ռևոլյուցիայից առաջ նա աշխատել էր Հայաստանում, տեղյակ էր հայ ազատագրական պայքարին, 1917—1918 թթ. աշխատում էր Մոսկվայում որպես հրապարակախոս, իսկ այնուհետև ՌԿ(բ)Պ Կենտկոմում, գաղափարա-

---

[1] Տե՛ս Сурен Шаумян, Бакинская Коммуна, Баку, 1927, стр. 93.

[2] «Бакинский рабочий», 20 հուլիսի 1918 թ.։ Նույնը «Գրական թերթ», 1963, № 4։

կան բնագավառի ղեկավար պոստերից մեկում։ Նա Անդրանիկին բնութագրել է որպես գյուղացիության ծոցից դուրս եկած մարտիկ, որն ասում էր, թե «այնտեղ, ուր պայքար է մղվում տերերի դեմ, այնտեղ կգործի և իմ սուրը»[1]։ «Դարձյալ Անդրանիկի մասին» խորագրով մի կարևոր հոդված հրապարակեց հին բոլշևիկ Ռուբեն Ջաթանյանը, որն Անդրանիկին բնութագրել է որպես «հուշակավոր պարտիզան», որ երկար տարիներ մարտեր է մղել օսմանյան բռնակալների դեմ[2]։ Դժբախտաբար Անդրանիկի ջոկատի միացումը Բաքվի Սովետական զորքերի հետ տեղի չունեցավ[3]։

Բաքվի կոմունան պարտվեց, բայց Անդրկովկասում ռևոլյուցիոն պայքարը չդադարեց։ Աշխատավորները դուտեղնդված հաղթանակի հավատով, իրենց կապված էին զգում Սովետական Ռուսաստանի ռևոլյուցիոն բանվորների և գյուղացիների հետ, շարունակում էին պայքարը թշնամու դեմ թե՛ ընդհատակում, թե՛ Սովետական Ռուսաստանում։

Անդրկովկասում մնացած ռևոլյուցիոն գործիչները չվախենալով օկուպանտների և տեղական հակառևոլյուցիոն բուրժուազիայի գաժան հալածանքներից, բանվորների, գյուղացիների, զինվորների մեջ ռևոլյուցիոն պայքարի նոր կրակ վառեցին։ Հայ աշխատավորությունը հավատարիմ մնաց իր ազատասիրական վեհ իդեալներին։ Նա շարունակեց պայքարն ազգային և սոցիալական ճնշման լծի դեմ։ Հաղարավոր հայ կոմունիստներ, Կարմիր զինվորներ, կոմիսարներ, Բաքվից էվակուացվելով, անցան Աստրախան և Ցարիցին, մեկնեցին Հյուսիսային Կովկաս, Մոսկվա, Պետրոգրադ, տոգորված Լենինի կոչերով, նվիրվեցին ռևոլյուցիայի նվաճումները պաշտպանելու գործին։

---

[1] «Известия», 26 июля 1918.

[2] «Вечерние известия Московского Совета», 1918, № 13.

[3] Դեպքերի հետագա զարգացումը Անդրկովկասում, Սովետական իշխանության համար ստեղծված ծանր իրադրությունը Բաքվում արգելակեց Անդրանիկի և Բաքվի Կոմունայի զինվորների միջև ստեղծված կապի հետագա զարգացմանը։ Անդրկովկասում հակառևոլյուցիոն ուժերի հաղթանակը 1918 թվականին անելանելի վիճակ ստեղծեց Անդրանիկի ջոկատի համար. մի կողմից դաշնակները և մյուս կողմից մուսավաթականները ձգտում էին զինաթափ անել նրան։ 1919 թ. Անդրանիկը հարկադրված հեռացավ դաշնակների Հայաստանից և անցավ արտասահման։ Նա դեռևս հույսը չէր կորցրել արևմտյան պետությունների օգնության հնարավորությունից։ Սակայն դանվելով օտարության մեջ, Անդրանիկը ուրախությամբ ընդունեց Հայաստանն իմպերիալիզմի լծից ազատագրելը և Սովետական ռեսպուբլիկա հռչակելը, պիտուքահայերի մեջ ապրեց և գործեց որպես Հայկական ՍՍՌ-ի բարեկամ։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԲԱՐԻԿԱԴՆԵՐԻ ՎՐԱ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԻ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, Վ. Ի. Լենինի հուչակած սկզբունքներով իրականացվող սոցիալ-քաղաքական վերափոխությունները մեծ ուժով ներգործեցին նաև հայ աշխատավորության լայն խավերի վրա, հեղաշրջեցին նրանց քաղաքական դիրքորոշումը, նրանց բազմաթիվ զավակներին մղելով պայքարող զորասյուների առաջին շարքերը։ Հայ ժողովրդի հազարավոր զավակներ Հոկտեմբերին Ռուսաստանում սկսված ռևոլյուցիայի հաղթանակի մեջ տեսան իրենց փայփայած ազատագրական գաղափարների իրականացման երաշխիքը։

Պետրոգրադում և Մոսկվայում, Մինսկում և Կիևում, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում, քաղաքացիական կռիվների Արևելյան, Արևմտյան և Հարավային ռազմաճակատներում հարյուրավոր և հազարավոր հայեր կանգնեցին Վ. Ի. Լենինի դրոշի ներքո, ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների, սովետների երկրի բոլոր ժողովուրդների ռևոլյուցիոն զավակների հետ մարտնչեցին աշխատավոր ժողովուրդների ազատագրության և նոր, սոցիալիստական հասարակարգի հիմքերը դնելու, նրա ուղիները հարթելու համար։

1. ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ ԵՎ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Ռուսաստանի երկու մայրաքաղաքներում բազմահազար ռուս, ուկրաինացի, լատիշ բանվորների, զինվորների, նավաստիների մարտակարգերում 1917—1918 թթ. հայ ժողովրդի զավակների ունեցած մասնակցության վերաբերյալ բերենք մի քանի էպիզոդներ։

Ապրիլի 3-ի պատմական օրն էր։ Ֆինլանդական կայարանում հավաքված բազմությունը դիմավորում էր հեղափոխության առաջնորդին։ Երբ երևում է Վ. Ի. Լենինը, կայարան եկած բոլշևիկները, բանվորները, զինվորները, նավաստիները հրճվանքի ալիք են բարձրացնում, «Մարսելյեզի» երգով լցնում օդը։ Պետրոգրադցիների մեջ էին 1904 թ. պարտիայի անդամ Հ. Բեգլուևը, հին բոլշևիկներ Ա. Կարինյանը, Սարգիս Լուկաշինը, ուսանողներ՝ Երեմ Բակունցը, Ա. Օհանյանը, Աղասի Վարդանյանը և ուրիշներ։

Այդ մասին Ա. Կարինյանը, Սարգիս Լուկաշինի կյանքին նվիրված մի հոդվածում, պատմում է հետևյալը. «Ես Լուկաշինին տեսա Պետրոգրադում փետրվարյան հեղափոխության օրերին։ Նա զենքը ձեռքին մասնակցում էր հեղափոխիչ մարտերին։ Տեղեկություն ստանալով, որ Վ. Ի. Լենինը գալիս է հեղափոխիչ Պետրոգրադ, մենք գնացինք Ֆինլանդական կայարանի հրապարակը և նորից տեսանք Լենինին, լսեցինք նրա բոցավառ ճառը։ Հեղափոխիչ բանվորների, նավաստիների և զինվորների այդ հսկայական մասսաների անմոռանալի դիմավորումն իրենց սիրելի առաջնորդի հետ մեզ վրա թողեց ցնցող տպավորություն...»[1]։

Ֆինլանդական կայարանում Լենինի այդ նշանավոր ճառն ունկնդրողների մեջ էին նաև հայ կին կոմունիստներ Նինա Աղաջանյանը, Արփենիկ Նաղարբեկյանը, Շուշանիկ Համալյանը, Վարդանուշ Բահաթուրյանը և ուրիշներ։

Պետրոգրադի բոլշևիկների շարքում ակտիվ աշխատողներից էին Բագրատ Բորյանը, որը 1917—1918 թթ. եղել է Պետրոգրադի կոմիտեի անդամ[2], Հայկ Ադոնցը, որն աշխատել է որպես «Պետրոգրադսկայա պրավդա» թերթի խմբագիր, Սարգիս Բաղդատյանը (Բաղդասարը) և ուրիշներ։

Սարգիս Հայկի Բաղդատյանը Պետրոգրադի կոմիտեի անդամ էր դեռևս ռեակցիայի տարիներին։ Համաշխարհային պատերազմի օրերին նրան՝ հակապատերազմական ագիտացիայի համար ձերբակալում են և որպես «պետական դավաճան» դատապարտում, աքսորում Բալագանսկ[3]։ 1917 թ. մարտին վերադառնալով աքսորից, Բաղդասարը մտնում է հեղափոխիչ պայքարի ալիքների մեջ։ Պետրոգրադի բոլշևիկները նրան ընտրում են ՌՍԴԲՊ Պետրոգրադի

---

[1] Տե՛ս «Կոմունար» թերթը (Դոնի-Ռոստով), 1959, № 67։

[2] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 245, թ. 10—11։

[3] Նույն տեղում, գ. 224, թ. 5։

կոմիտեի քարտուղար։ 29 տարեկան երիտասարդ բոլշևիկը ռևոլյուցիոն ամբողջ եռանդով նվիրվում է պարտիական աշխատանքին։ Սակայն, Բաղդասյանը Կ. Ի. Շուտկոյի և ուրիշ բոլշևիկների հետ տարվելով շուտափույթ հաղթանակի ոգևորությամբ, անտեսում են պարտիայի դիրքորոշումը ռևոլյուցիայի խաղաղ զարգացման մասին և ապրիլյան ցույցերի ժամանակ առաջ են քաշում անհապաղ ժամանակավոր կառավարությունը տապալելու լոզունգը։ «Կորշի ժամանակավոր կառավարությունը», այդպես էր գնում հարցը Բաղդասյանն իր գրած պրոկլամացիայում, որը տպագրվել և տարածվել էր Պետրոգրադում։ Քանի որ այդ լոզունգը չէր բխում պարտիայի դիրքորոշումից, «Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ ու առաջարկությամբ Կենտկոմը ուղղում է» աճապարող և առաջ վազող ընկերներին[1]։

Հետագայում, թեև Բաղդասյանը Պետրոգրադի կոմիտեի քարտուղարության կազմում չէր, սակայն շարունակում էր ակտիվորեն մասնակցել սոցիալիստական ռևոլյուցիայի մարտերին։ Նա Հուլիսյան ցույցերի ժամանակ կազմակերպում և ղեկավարում էր Պուտիլովյան գործարանի հազարավոր բանվորների և Նարվայի շրջանի զինվորների հզոր ելույթը[2]։ Հուլիսյան ցույցերին ղեկավար մասնակցություն ունենալու համար Բաղդասյանը ձերբակալվում է։ Ժամանակավոր կառավարության դատարանը Բաղդասյանին մեղադրում է «Պետական դավաճանության» մեջ։ Ազատվելով բանտից Սարգիս Բաղդասյանը շարունակում է ակտիվորեն մասնակցել ռևոլյուցիոն պայքարին։ Նա քանիցս հանդիպում է Վ. Ի. Լենինի հետ, ունկնդրում է առաջնորդի ելույթներին, իր բոլոր ուժերը նվիրում Լենինի ցուցումները կենսագործելու խնդիրներին։

1917 թվականի Հուլիսյան օրերին ժամանակավոր կառավարությունը որոնում էր Վ. Ի. Լենինին։ Բուրժուական մամուլը զրպարտանքներով էր լցված առաջնորդի հասցեին։ Մենշևիկյան կենսագործկոմի նախագահ Չխեիձեն և մինիստր Տերեթելին պահանջում էին բոլոր թերթերից շտապ հրապարակել պրովոկատորների թխած սուտ լուրերը, որոնցով Վ. Ի. Լենինը մեղադրվում էր գերմանական կառավարության օգտին լրտեսության մեջ[3]։ Ժամանակավոր կառավարության հրամանը Լենինին ձերբակալելու մա-

---

[1] Տե՛ս Վլադիմիր Իլյիչ Լենին, Կենսագրություն, Մոսկվա, 1960, էջ 307։
[2] Տե՛ս ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 224, թ. 4—5։
[3] Տե՛ս Վլադիմիր Իլյիչ Լենին, Կենսագրություն, էջ 321։

սին տարածվում է ամբողջ երկրում, նաև Երևանում. նահանգական իշխանություններն ստանում են հրաման. Վ. Ուլյանովին, երևալու դեպքում ձերբակալելու մասին։ Այդ օրերին պարտիայի Կենտկոմը պաշտպանում էր առաջնորդին յունկերական լրտեսների որոնումներից։ Լենինը Պետրոգրադում բնակարանից բնակարան էր փոխադրվում, Ելիզարովայի մոտ, հետո Սուլիմովների, այնուհետև Ալիլուևների տունը։

Կենտկոմը կարող էր դիմել միայն ամենանվիրական մարդկանց ծառայությանն առաջնորդի կյանքը նրանց վստահելու համար։ Այդպիսիներից մեկը հանդիսացավ հին բոլշևիկ Սմբատ Մարգարյանը, որն այն ժամանակ աշխատում էր Պետրոգրադի Սովետում որպես ագիտատոր, բանվորական ակումբում ղեկավարում էր կուրսեր, որտեղ բանվորների հետ պարապում էր քաղաքատնտեսություն և քաղաքական գիտելիքներ[1]։ Հուլիսյան վճռական օրերին, Վ. Ի. Լենինը ապրում է նաև Սմբատ Մարգարյանի բնակարանում, թաքնվելով միլյուկովների և չխեիձեների լրտեսների հետապնդումներից։ Մարգարյանի ծառայությունները գնահատող և նրան բնութագրող պաշտոնական փաստաթղթերում ասված է, որ «ժամանակավոր կառավարության օրով Պետրոգրադում ընկեր Լենինը ընկեր Մարգարյանի բնակարանում է թաքնվել, նա «զուտ ռևոլյուցիոն հմտությամբ կարողանում էր» թանկագին առաջնորդին իր մոտ պահել[2]։

Պետրոգրադում Վ. Ի. Լենինի կոչերով տոգորված հայ ռևոլյուցիոն գործիչները նոր սխրագործություններ կատարեցին Հոկտեմբերյան մարտերում և նրանից հետո։

Սովետների Համառուսաստանյան 2-րդ համագումարը հանդիսացավ աշխարհում առաջին սոցիալիստական ռեսպուբլիկան հիմնադրող աշխատավորական ներկայացուցչություն։ 1917 թվականի հոկտեմբերի 25-ին բացված համագումարի պատգամավորների և հրավերով մասնակցողների մեջ ռուսների, ուկրաինացիների, վրացիների, լատիշների, հրեաների, բելոռուսների և այլ ժողովուրդների պատվիրակների հետ էին նաև հայ ժողովրդի ներկայացուցիչները։ Դրանցից էր Իվան Կորոստելենկոն, որը պատգամավոր էր ընտրվել Ալեքսանդրապոլի Սովետից և իր հետ տարել

---

[1] Մկի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 4, կապ. 143, գ. 52, թ. 5—6։
[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1925, № 41։

էր Հայաստանի աշխատավորության ողջույնը՝ պատմական Համագումարին՝ նրա ղեկավար Վ. Ի. Լենինին։

Համագումարի պատգամավորների թվում էր Գրիգոր Խախանյանը, որն ընտրվել էր Մոսկվայից։ 21 տարեկան պատանի էր Գրիգորը (ծնվել է Թիֆլիսի Նահանգում 1896 թ., սովորել Մոսկվայի համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետում), 1917 թ. Մոսկվայում մտել էր ՌՍԴԲՊ մեջ և աշխատում էր երկաթուղային-ների շրջանում, կարդում, բացատրում էր Վ. Ի. Լենինի ելույթ-ները, «Պրավդա» թերթը։ Սովետների 2-րդ համագումարում Խախանյանն առաջին անգամ անձամբ տեսավ և լսեց Վ. Ի. Լենինին, բոլշևիկ դելեգատների հետ միասին քվեարկեց լենինյան դեկրետ-ների օգտին։

Սովետների 2-րդ համագումարի պատգամավոր էր և կառա-վարության առաջին կազմում ընտրվեց նաև ձախ էսեռ Պողոս Պողոս-յանը, որի լիակատար բնութագրությունը տվել է Վ. Ի. Լենինը «Ընկեր Պողոսյանի հիշատակին» մահախոսական հոդվածում[1]։ Սովետ-ների 2-րդ համագումարին որպես հյուրեր մասնակցել են նաև ուրիշ հայ ընկերներ։ Նրանցից կնշենք Եվգենիա Բանաբուրյանին (որը ակտիվ կոմունիստ էր, ընդհատակում հայտնի «Լաուրա» ծածկանունով և Հոկտեմբերյան ապստամբության օրերին աշխա-տում էր Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեում որպես քարտուղար, իսկ ԿԳԿ ընտրվելուց հետո աշխատում էր Յ. Մ. Սվերդլովի մոտ), Նի-նա Աղաջանյանին, Արիենիկ Նազարբեկյանին, Ալեքսանդրա (Շու-շանիկ) Համալյանին[2]։

Սովետական պետության հիմնադիր համագումարի պատգա-մավորների մեջ էր Սուրեն Մարտիրոսյանը (պարտիական ծածկա-նունով դեռևս ընդհատակյա տարիներից հայտնի էր որպես Վառ-լամ Ավանեսով), որը համագումարում ընտրվեց Կենտգործկոմի անդամ, նախագահության անդամ և Կենտգործկոմի քարտուղար։

1917—1923 թվականներին, այսինքն երբ Վ. Ի. Լենինը կանգ-նած էր Սովետական պետության ղեկավարի պոստում, Վ. Ավանես-ովն աշխատում էր անմիջականորեն նրա հետ, նրա ձեռքի տակ, հանդես էր գալիս որպես Լենինի հավատարիմ աշակերտներից և օգնականներից մեկը։

---

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 36, էջ 578—580։

[2] Ընկեր Ռոզա Փաշինյանը շնորհակալ աշխատանք է կատարել, գրելով «Հայ կինը ռևոլյուցիոն շարժման մեջ» թեմայով թեկնածուական դիսերտացիան, որի մեջ լուսաբանվում է հայ ժողովրդի դուստրերի ռևոլյուցիոն գործունեությունը։

Ա. Ի. Միկոյանը խոսելով Վառլամ Ավանեսովի մասին, նշել է, որ նա հանդիսանում էր Վ. Ի. Լենինի ընդունած որոշումների, նրա կարգադրությունների, ցուցումների և դիրեկտիվների վճռական անցկացնողը, Լենինի կամքի կենսագործողը։

Վառլամ Ավանեսովը Սմոլնիում, 1918 թվականի գարնանից՝ Կրեմլում, գրեթե ամեն օր լինում էր Յա. Մ. Սվերդլովի և Վ. Ի. Լենինի մոտ, նրանց ղեկավարությամբ մասնակցում սովետական կենտրոնական ապարատի կազմակերպմանն ու նրա գործունեությունը վարում էր հմտորեն։ Ավանեսովն այդ շրջանում հանդես էր գալիս որպես Կենտգործկոմի նախագահ Յա. Մ. Սվերդլովի մերձավոր զինակիցը։

Վ. Ավանեսովը իր ուժերի զգալի մասը նվիրում էր Հայաստանի նկատմամբ Սովետական Ռուսաստանի քաղաքականության կենսագործմանը, որի մասին կասվի իր տեղում։

Ավանեսովը ակտիվորեն մասնակցում էր համապարտիական աշխատանքներին, համագումարներին, Կենտկոմի պլենումներին, Մոսկվայի կազմակերպության կոնֆերանսներին։ ՌԿՊ 8-րդ համագումարում Ավանեսովն ընտրվել էր քարտուղարության անդամ և ձայներ հաշվող հանձնաժողովում[1]։ Նա հանդես է եկել ճառով Կենտկոմի կազմ ընտրելիս, թեկնածուների առաջադրման և այլ հարցերի քննարկման ժամանակ[2]։

ՌԿՊ 10-րդ համագումարում Վ. Ավանեսովը պատգամավոր էր Հայաստանի Կոմունիստական պարտիայի կողմից։ Ներպարտիական սուր պայքարի ընթացքում նա աներեր կանգնած էր Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտների շարքում, ակտիվորեն մասնակցելով օպոզիցիոն տարրերի դեմ մղվող պայքարին։

1918 թվականի վերջերից սկսած Ավանեսովը մտնում էր Համառուսական Արտակարգ Հանձնաժողովի (Չեկայի) կոլեգիայի կազմում, Ֆ. Ձերժինսկու ղեկավարությամբ մասնակցում էր հակառևոլյուցիոն տարրերի և սպեկուլյացիայի ջախջախումը կազմակերպելու գործին։ 1919 թվականն է, դենիկինյան արշավանքի օրերը։ Ավանեսովը մտցվում է մայրաքաղաքի պաշտպանության գծով ստեղծված հատուկ եռյակի կազմում և վճռական միջոցառումներ է գործադրում Վ. Ի. Լենինից ստացած առաջադրանքները կենսագործելու համար։

Ռևոլյուցիոն պայքարի պրոցեսում Վ. Ի. Լենինը մոտիկից

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 23, թ. 4, 86, 89։

[2] Նույն տեղում, էջ 79։

ծանոթանում է Ավանեսովի ընդունակություններին, առանձնապես բարձր գնահատում նրան որպես ադմինիստրատորի։ Վ. Ի. Լենինը Վ. Ավանեսովին ներգրավում է ավելի պատասխանատու աշխատանքների՝ պետական վերահսկողության ժողկոմի տեղակալ, իսկ հետո բանդյուղտնտեսության ժողկոմի տեղակալ և կոլեգիայի անդամ։

Երկիրը գտնվում էր պարենային ծանր վիճակում։ Մատակարարող հիմնարկներում տեղի էին ունենում չարաշահումներ։ Վ. Ի. Լենինի կազմած նախագծով Պաշտպանության խորհուրդը որոշում է ընդունում կազմել հանձնաժողով Ֆ. Ձերժինսկուց և Վ. Ավանեսովից, որը միջոցառումներ էր ձեռնարկելու Մատակարարման ժողկոմատի ապարատը եռանդուն կերպով «թափահարելու» համար[1]։ Այդ խնդիրը կատարվում է ճշտությամբ։ 1919 թ. վերջերին Վ. Ի. Լենինը մշակում է ՌԿՊ Կենտկոմի Քաղբյուրոյի դիրեկտիվը բանդյուղտնտեսության աշխատանքի մասին։ Ստեղծվում է հանձնաժողով Վ. Ավանեսովի մասնակցությամբ, որը կազմում է բանդյուղտնտեսության աշխատանքի մասին նախագիծ Քաղբյուրոյում քննելու համար[2]։

Վ. Ի. Լենինը գնահատում էր Ավանեսովի հմտությունը տնտեսական հարցերում և հաշվի առնում նրա կարծիքը։ Կազմելով ժողտնտխորհի մասին թեզիսների նախագիծ, Վ. Ի. Լենինն այդ նախագիծն ուղարկում է իր մերձավոր օգնականներին կարծիքի համար։ Վ. Ավանեսովին ուղարկելով թեզիսների նախագիծը, Լենինը գրել է թե խնդրում է առայժմ ոչ ոքի ցույց չտալ, կարդալ և ըստ հնարավորության անմիջապես զանգ տալ կամ գրել երկու խոսքով՝ «արդյոք ընդունելի՞ է Ձեզ համար։ Ինչ ուղղումներ կուզեիք Դուք մտցնել. խիստ կարճ»[3]։

Մի այլ նամակում Վ. Ի. Լենինը Ավանեսովին գրում է, որ «Դուք պետք է շրջաբերական կազմեք բանդյուղտնտեսության բոլոր տեղական օրգանների համար, տեղական տնտեսական խորհրդակցությունների առթիվ»[4]։

Վ. Ավանեսովը իր հերթին զեկուցագրեր, նամակներ, նախագծեր է ներկայացրել Վ. Ի. Լենինին պետական ապարատի աշխատանքի, կատարման ստուգման, կարգապահության, քաշքշուկի

---

[1] Տե՛ս «Լենինյան ժողովածու», հատ. 18, էջ 247։
[2] Տե՛ս «Լենինյան ժողովածու», հատ. 8, էջ 24—25։
[3] Տե՛ս «Լենինյան ժողովածու», հատ. 20, էջ 107։
[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 542։

դեմ պայքարելու և այլ խնդիրների մասին։ Ավանեսովը ապարատի հատակ աշխատանքի, ճշտապահության, կազմակերպվածության համար մարտնչող էր, խստապահանջ, կորուկ, պետական գործին նվիրված գործիչ։ Օրենքը և օրինականությունը Ավանեսովի համար իդեալներ էին, որոնցից ոչ մի շեղում չէր կարելի հանդուրժել։ Հենց այդ բանի համար էլ, գրել է Ա. Մյասնիկյանը, Վ. Ի. Լենինը գնահատում էր Ավանեսովին, որպես արժեքավոր աշխատողի։

1919—1923 թվականներին Վ. Ավանեսովը բանգյուղտեսչության ժողկոմի տեղակալի պարտականությունները կատարելուն զուգահեռ ներգրավվում է ավելի պատասխանատու գործունեության՝ Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդում, որի նախագահը Վ. Ի. Լենինն էր։ Ավանեսովը մտնում էր ԱՊԽ-ի նախագահության կազմում և հանդիսանում էր Վ. Ի. Լենինի տեղակալներից մեկը[1]։ ԱՊԽ-ը քննում և օպերատիվ կարգով լուծում էր երկրի տնտեսական կյանքի և սովետական շինարարության, արտադրության և բաշխման, բանակի մատակարարման և զինման, ռազմական մոբիլիզացիայի և արտադրությունը կադրերով ապահովելու հարցերը, պետական կարգապահության և սովետական ապարատի ճշգրիտ աշխատանքի հարցերը։

Վ. Ի. Լենինը ստեղծելով Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը, մշակել էր նրա գործունեության դեմոկրատական սկզբունքները։ Խորհրդի նիստերում հերթով նախագահում էին Վ. Ի. Լենինը և նրա տեղակալները՝ Ա. Դ. Ցյուրուպան, Վ. Ա. Ավանեսովը, Ա. Ա. Անդրեևը և ուրիշներ։ Արձանագրություններում նշված է, որ շատ նիստերում Վ. Ի. Լենինը մասնակցում է, սակայն նախագահել և նիստը ղեկավարել են Ավանեսովը կամ Ցյուրուպան։ Կամ եղել են նիստեր, որոնք սկզբից վարել է Վ. Ի. Լենինը, կեսից նախագահել է Ավանեսովը։

Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը հանդես էր գալիս որպես երկրի պաշտպանությունը կազմակերպող մարտական շտաբ, որի գլուխ կանգնած էր հանճարեղ ստրատեգ Վ. Ի. Լենինը։ Այդ շտաբի գործունեության մեջ ներգրավված էին Լենինի լավագույն աշակերտները, որոնք վճռականորեն կենսագործում էին Լենինի ընդունած վճիռները։ Դրանց շարքում էր Վ. Ավանեսովը։

Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի մի շարք նիստեր անցել են Վ. Ի. Լենինի բացակայությամբ, ղեկավարել են Ավանեսովը կամ Ցյուրուպան, սակայն արձանագրությունները և ըն-

---

1 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 237, 238։

դունված որոշումներն ստորագրել է Վ. Ի. Լենինը։ Առաջնորդի մեծ վստահությունը դեպի Ավանեսովն ավելի էր թեավորում աղնիվ աշխատողին և նրան մղում դեպի անձնվիրություն։

1921 թ. դեկտեմբերին Վ. Ավանեսովը ընդարձակ զեկուցագիր է ներկայացրել Վ. Ի. Լենինին և ՌԿՊ-ի կենտկոմի բոլոր անդամներին «վառելիքային ճգնաժամի պատճառների մասին»[1]։ Վ. Ի. Լենինի անունով Ավանեսովը սիստեմատիկ հաշվետվություններ և ինֆորմացիաներ էր ներկայացնում երկրի ներքին կյանքի կարևոր հարցերի մասին։ Հետաքրքրական բաղմաթիվ գրություններից կբերենք մեկ օրինակ։ Ավանեսովը կազմել էր հրահանգի նախագիծ բանվորներին և գյուղացիներին պետական ապարատի գործունեության վերահսկողության մեջ ներգրավելու մասին։ Նախագիծն ուղարկելով Վ. Ի. Լենինին, Ավանեսովը գրել է.

«Վլադիմիր Իլյիչ. եթե Դուք կուզենաք ազատ բոպեներ, խնդրում եմ նայեցեք և հայտնեցեք ինձ Ձեր կարծիքը։ Վ. Ավանեսով»[2]։

Վ. Ի. Լենինը մեծ հոգատարություն էր ցուցաբերում դեպի աշխատողները։ Տեղեկություն ստանալով Ավանեսովի առողջության վատ վիճակի մասին, Վ. Ի. Լենինն իսկույն առողջապահության ժողկոմ Սեմաշկոյին գրում է. «Ինձ հայտնում են, որ Ավանեսովը, լինելով բոլորովին վատ վիճակում, բռնադատում է իրեն։ Չէ՞ որ թոքերից մեկը չկա (?) և այլն։ Խնդրում եմ Ձեզ՝ նշանակել միանգամայն վստահելի պրոֆեսորներ և հանձնարարել նրանց, որ տան գրավոր կարծիք (և դիագնոզը, և բուժումը)»[3]։ Վ. Ի. Լենինի առաջարկությամբ ՌԿՊ Կենտկոմի Քաղբյուրոն 1922 թվականի ամառը որոշում է ընդունում Ավանեսովին արտասահման բուժման ուղարկելու մասին[4]։

Ավանեսովի մահվան առթիվ ՍՍՌՄ ժողկոմսովետը և ԱՊԽ-ը 1930 թվականի մարտի 18-ին գրել են, որ Ավանեսովը հանդիսացել է «ռևոլյուցիային ամենանվիրված և ամենաեռանդուն աշխատող ժողովրդական Կոմիսարների Սովետի և Աշխատանքի ու Պաշտպանության խորհրդի անդամ՝ Սովետական իշխանության կազմակերպման առաջին, ամենադժվարին տարիներին»[5]։

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 19, ց. 461, ց. 1, դ. 29817, թ. 1—17։
[2] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 461, ց. 1, դ. 29806, թ. 11։
[3] «Լենինյան ժողվածու», հատ. 34, էջ 332։
[4] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 461, ց. 1, դ. 28639, թ. 1—4։
[5] «Իզվեստիա», № 76, 18 մարտի 1930 թ.։

Վառում Ավանեսովին նվիրված մեր խոսքը կվերջացնենք հիշելով նրա հույզերն ու հույսերը հայ ժողովրդի մասին։ Մանրաբեռնված լինելով կենտրոնական ապարատի բազմաթիվ գործերով և տեղեկություններ ստանալով, որ Կարմիր Բանակը մոտենում է Հայաստանի սահմանին, 1920 թվականի ուշնանը Ավանեսովը գրել է. «Կարմիր արծիվները անցան Կովկասյան սպիտակ ձյունապատ լեռների գագաթները։ Ես հաստատ հավատում եմ, որ ինտերնացիոնալի հաղթական հիմնը կարթնացնի և կյանքի կկոչի Կովկասի բոլոր աշխատավորներին... մոտ է ժամը, երբ բոլոր հայ աշխատավորները, որոնք կապիտալի և իմպերիալիզմի դաժան ձեռքով վտարված են հարազատ վայրերից, նորից կվերադառնան իրենց օջախները, և դեն նետելով դարավոր ստրկության շղթաները, կմիաձուլվեն աշխարհի բոլոր աշխատավորների անբաժան ընտանիքի մեջ...»[1]։

Վ. Ավանեսովը Վ. Ի. Լենինի գործի հաղթանակի մեջ անում էր և իր ժողովրդի փրկությունը, որի համար այնպես վերապրում էր ու պայքարում։

Այսօր էլ, Կրեմլում, Վ. Ի. Լենինի թանգարանում, առաջնորդի աշխատասենյակի սեղանի վրա դրված նրան նվիրված գրքերի մեջ է «Поэзия Армении» ժողովածուն։ Առաջին էջի վրա մակագրված է՝ «Վլադիմիր Իլյիչ Լենինին։ Հայկական գործերի հանձնաժողովից։ Վ. ԱՎԱՆԵՍՈՎ»[2]։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի օրերին Սմոլնիում ծառայող զինվորների և կարմիրգվարդիականների մեջ, ինչպես նաև քաղաքում մղվող մարտերում մասնակիցների մեջ կային շատ հայ զինվորներ ու նավաստիներ։

Բնորոշ է հետևյալ օրինակը։ Արևմտյան ռազմաճակատից Պետրոգրադ փոխադրված մի զորամասում դասակի հրամանատար էր Մակար Մարտիրոսյանը։ Նա Հայրենի Մեղրու շրջանի Գուդեմնիս գյուղում լսել էր Պետրոգրադի մասին, բայց այնտեղ չէր եղել, ռևոլյուցիայի մասին էլ դաղափար չուներ։ Բայց Մակարն ուզում էր շուտ վերջանա պատերազմը, շուտ տուն վերադառնա, հող ստանա և մշակի։ Գալով մայրաքաղաք, նա մյուս զինվորների հետ լսում է բոլշևիկ ագիտատորների զրույցները և ծանոթանում Վ. Ի. Լենինի հոդվածներին՝ հողի ու պատերազմի մասին։ Հոկտեմբերի

---

[1] ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 19, ց. 1, գ. 7, թ. 1—2։

[2] Տե՛ս Կրեմլի Լենինի տուն-թանգարանը։

25-ի պատմական օրը, հազարավոր զինվորներ, նավաստիներ և բանվորներ գրոհի գնացին ձմեռային պալատի վրա։ Մակար Մարտիրոսյանը մասնակցում էր այդ գրոհին՝ իր դասակի զինվորների գլուխն անցած։ Նա հաղթողների հետ միասին մտավ Ձմեռային պալատի դարպասով, անցավ լայնարձակ դահլիճներով, տեսավ թե ինչպիսի հրաշալիքների մեջ էին ապրել «կյանքի երջանիկները», որոնց իշխանությունը խորտակվում էր հենց այդ օրը։

Նույն օրերին, բալթիկան նավաստիների հետ ռևոլյուցիոն մարտերին մասնակցում էին միջման Իվան Ստեպանովիչ Տեր-Իսակյանը (հետագայում ադմիրալ Իսակով), 2-րդ կարգի կապիտան Ա. Ն. Գարսոևը (հետագայում կոնտրադմիրալ)։ Անցնելով ռևոլյուցիոն նավաստիների կողմը, ծովային այդ սպաները խզում են բոլոր կապերը հին նավատորմի, նրա ռեակցիոն զեկավարների հետ, տոգորվում են այն մեծ գաղափարներով, որոնք դրված էին լենինյան դեկրետների և կոչերի մեջ։

Հայ ռևոլյուցիոն գործիչներից մի քանիսի անունները հանդիպում են նաև Պետրոգրադում զինված ապստամբությունն իրագործող զինվորական կազմակերպության և շտաբի զեկավարների մեջ, որոնք անմիջականորեն կատարում էին Վ. Ի. Լենինի առաջադրանքները։ Դրանցից մեկը հանդիսացել է Միխայիլ Կարապետի Տեր-Հարությունյանցը։ Նրա մանկությունն անցել է Անդրկովկասում, ռևոլյուցիայի ժամանակ ծառայել է Պետրոգրադի կայազորում, 180-րդ հետևակային գնդում որպես պրապորշչիկ և 1917 թ. սկզբներին մտել է բոլշևիկների պարտիայի մեջ։

Ռևոլյուցիայի խաղաղ զարգացման շրջանում Տեր-Հարությունյանցը աճում էր օրեցօր։ Հոկտեմբերյան ապստամբության ժամանակ նա արդեն դարձել էր Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտներից մեկը։ Վ. Ի. Լենինը 1917 թ. հոկտեմբերին իր կոնսպիրատիվ բնակարանում հանդիպում է ունենում Պետրոգրադի տարբեր շրջաններում և զորամասերում աշխատող բոլշևիկ-կազմակերպիչների հետ, նրանց հանձնարարություններ է տալիս զինված ապստամբությունը նախապատրաստելու մասին։ Կենտկոմի հոկտեմբերի 10-ի նիստի նախօրյակին Վ. Ի. Լենինի մոտ հրավիրվում են Ֆ. Ձերժինսկին, Մ. Կալինինը, Ն. Պոդվոյսկին, Մ. Կեդրովը, Մ. Կ. Տեր-Հարությունյանցը, լսում նրանց զեկույցներն ապստամբության գծով տարվող աշխատանքի մասին։ Հոկտեմ-

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 116, ց. 1, գ. 8, թ. 96—100։

քերի կեսերին Լենինը նորից հանդիպում է ունենում Զերժինսկու, Պոդվոյսկու, Նևսկու, Կեդրովի, Սուլիմովի և Մ. Կ. Տեր-Հարությունյանցի հետ։ Տեր-Հարությունյանցը զեկուցում է, որ կայազորի զինվորները պատրաստ են ապստամբության, սակայն զենք է անհրաժեշտ ոչ միայն բանվորների, այլև զինվորների համար։ Վ. Ի. Լենինը Տեր-Հարությունյանցին պատասխանում է. «Անպայման, դա այդպես է, մենք հոգ կտանենք այդ մասին»[1]։

Պետրոպավլովսկի բերդի և Կրոնվերսկի զինանոցի կոմիսար է նշանակվում Մ. Տեր-Հարությունյանցը, որին տրվում է Ռազմահեղափոխական կոմիտեի № 1 մանդատը։ Մարտական ընկերները շնորհավորում են Միխայիլ Կարպովիչին, որ նրան տրվել է № 1 մանդատը, որ նա Պետրոպավլովսկի բերդի կոմիսար է նշանակվել Վ. Ի. Լենինի համաձայնությամբ[2]։

Տեր-Հարությունյանցը ներկայանում է բերդի պարետին և լարված աշխատանք ծավալում բերդի և Կրոնվերսկի զինանոցի անձնակազմի մեջ, գումարում կոմունիստների ժողովներ, շեղոքացնում հակահեղափոխական տրամադրություններ ունեցող սպաներին։ Պարզվում է, որ Դոնից եկել են յունկերներ և կազակներ 10.000 հրացան ստանալու։ Կոմիսարը կտրականապես արգելում է զենքը դուրս տանել, յունկերների և կազակների ջոկատը հեռացվում է բերդից։ Պետրոպավլովսկի ամրոցը շուտով վերածվում է զինված ապստամբության մի հենարանի։

Հոկտեմբերի 23-ին ՌՍԿ-ի նիստում Տեր-Հարությունյանցը զեկուցում է բերդը ապստամբության նախապատրաստելու և քաղաքի կայազորներին զենք բաց թողնելու մասին։ Բերդում կոմիսար է նշանակվում նաև Բլագոնրավովը։ Նրա վրա դրվում է պարտականություն՝ ղեկավարել Պետրոպավլովսկի բերդի կայազորի մարտական գործողությունները, իսկ Տեր-Հարությունյանցին՝ Պետրոպավլովսկի բերդից և Կրոնվերսկի զինանոցից բացի, վերահսկել քաղաքի մյուս զինանոցները և այդ կայազորների բոլշևիկների հետ միասին նախապատրաստել զինված ելույթը[3]։

Հոկտեմբերի 23—25-ին Տեր Հարությունյանցը մասնակցում է գործարաններից և զորամասերից եկած ներկայացուցիչներին զենք

---

1 Տե՛ս «Петроградские большевики в Октябрьской революции» ժողովածուն, Լենինգրադ, 1957, էջ 348—349։

2 Տե՛ս «Донесения Комиссаров ВРК», М., 1957, стр. 252, նույնը նաև ՄԼԻ Լենինգրադի պարտարխիվ, ֆ. Ի—1, կապ. 51, գ. 511, թ. 4։

3 Տե՛ս «Պետրոգրադի բոլշևիկները...» նշված ժողովածուն, էջ 373։

բաց թողնելու գործին։ Առաջինը զենք է տրվում Պուտիլովի գործարանի բանվորների գվարդիայի ներկայացուցիչ Օրլովին։ Պետրոգրադում տեղի ունեցած պատմական հեղաշրջման օրերին Տեր-Հարությունյանցը պատվով է կատարում իր վրա դրված պարտականությունները։

Հոկտեմբերի 29-ին Մ. Կ. Տեր-Հարությունյանցը կանչվում է Սմոլնի Վ. Ի. Լենինի մոտ։ Նա նշանակվում է Պուլկովյան ջոկատի պետ և ուղարկվում Կերենսկու հակառևոլյուցիոն յունկերական զորամասերի դեմ կռվելու համար[1]։ Այդ առաջադրանքը կատարելուց հետո Վլադիմիր Իլյիչ Լենինը իր մոտ է կանչում Տեր-Հարությունյանցին, Ն. Կռիլենկոյին և Ն. Պոդվոյսկուն, խորհրդակցում Մոգիլյովում գտնվող Դուխոնինի զորակայանը (շտաբը) լիկվիդացնելու հարցի մասին։ Նոր նշանակված գլխավոր հրամանատար Կռիլենկոն նավաստիների մի գնդի կազմով հարձակվում է Մոգիլյովի վրա՝ Օրշայից, իսկ Տեր-Հարությունյանցը ուղարկվում է արևմտյան ռազմաճակատ և Ա. Մյասնիկյանի հետ միասին զորամասեր է առանձնացնում ու Դուխոնինի զորակայանի վրա գրոհում հարավից։ Դուխոնինի զորակայանը լիկվիդացվում է։ Վ. Ի. Լենինի առաջարկությամբ ստեղծվում է Դաշտային ռևոլյուցիոն շտաբ, որի պետ է նշանակվում Տեր-Հարությունյանցը[2]։

Մ. Կ. Տեր-Հարությունյանցը ռևոլյուցիայի զարգացման այդ վճռական օրերին մոտ երկու ամիս ղեկավարում էր Սովետական Ռուսաստանի զորքերի Դաշտային ռևոլյուցիոն շտաբի գործունեությունը[3]։ Նոյեմբերի վերջերին և դեկտեմբերին նա շտաբում հավաքագրում է ռևոլյուցիոն նվիրված զինվորականների, ցրում է շտաբի հին, հակասովետական գեներալներին ու սպաներին[4]։ Շտաբի կոմպլեկտավորումից և առաջին օրերի գործունեությունից հետո Տեր-Հարությունյանցը մեկնում է Պետրոգրադ և Վ. Ի. Լենինին զեկուցում կատարվածի մասին, ինչպես նաև հարցում անում, թե հետագայում ո՞ւմ պետք է ենթարկվի շտաբը, ո՞ւմ ներկայացնի զեկույցները. «Այդ բոլոր հարցերով անմիջապես դիմել ինձ» ասել է Լենինը[5]։

«Լենինի պահանջով ես այդ ժամանակից ամեն շաբաթ նրան

---

1 Տե՛ս «Донесения Комиссаров Петроградского ВРК», стр. 259.
2 Տե՛ս «Կրասնայա զվեզդա» թերթը, № 23, 28 հունվարի 1958 թ.։
3 Տե՛ս ЦГВИА, ф библиотека, № 2293—10, թերթ 1316։
4 Տե՛ս ЦГАОР, ф. 1235, у. 1, ч. 15, թ. 315—318, 308, 578 և այլն։
5 Տե՛ս «Կրասնայա զվեզդա», № 23, 28 հունվարի 1958 թ.։

դրում էի մանրամասն զեկուցագրեր ռազմաճակատի դրության մասին, կամավորներից գնդեր ձևավորելու մասին, շտաբի կարիքների մասին,— գրել է Տեր-Հարությունյանցը,— Վլադիմիր Իլյիչին ուղիղ հեռագրագծով զեկուցում էի այն հարցերի մասին, որոնք անհապաղ լուծում էին պահանջում և ամեն անգամ ստանում սպառիչ պատասխան»:

1918 թվականի սկզբներն էին: Ուկրաինական Ռադան գործարքի մեջ էր մտել գերմանական դիշատիչների հետ և պատերազմ սկսել ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների դեմ: Վ. Ի. Լենինը իր մոտ է կանչում Միխայիլ Կարպովիչ Տեր-Հարությունյանցին, նրա առջև դնում նոր առաջադրանք: Ահա թե ինչ է գրել Վ. Ի. Լենինը 1918 թ. հունվարի 15-ին:

«Ծովային Ռևոլյուցիոն կոմիտեին

Խնդրում եմ արտակարգ միջոցներ ձեռք առնել, որպեսզի ընկ. Տեր-Հարությունյանցի տրամադրության տակ դրվի 2000 նավաստի Ուկրաինական Ռադայի դեմ ռազմական գործողությունների համար: Լենին»: Նույն օրը Վ. Ի. Լենինը կարգադրում է Ֆինժողկոմատին Տեր-Հարությունյանցին բաց թողնել մեկ միլիոն ռուբլի գումար դաշտային շտաբի կարիքների համար[1]:

Անցան ամիսներ: 1918 թ. հունիսին Տեր-Հարությունյանցը դարձյալ հրավիրվում է Վ. Ի. Լենինի մոտ: Հարկավոր է շտապ մեկնել Կովկաս, Հայրենիք, օգնության գնալ Բաքվի Ժողկոմսովետին և Կովկասյան Կարմիր Բանակին: Տեր-Հարությունյանցի տրամադրության տակ առանձնացվում է նավաստիներից կազմված մեծ ջոկատ, որն ուղևորվում է դեպի Աստրախան-Բաքու: Սակայն կես ճանապարհին հրաման է ստացվում, շենական խորհրդարանների դեպի Մոսկվա հարձակվելու սպառնալիքի պատճառով, Տեր-Հարությունյանցի ջոկատի ուղղությունը փոխել և ուղարկել Սիզրան-Սամարայի ճակատը: Հետագայում Մ. Կ. Տեր-Հարությունյանցին բախտ է վիճակվում նորից ու նորից լինել Վ. Ի. Լենինի մոտ, լսել առաջնորդի ելույթները, ստանալ պարտիայի նոր առաջադրանքներ և աղնվորեն կատարել իր պարտքը սոցիալիստական հայրենիքի և պարտիայի առաջ[2]: Այդ պատմական օրերին Պետրո-

---

[1] «Լենինյան ժողովածու», հատ. 21, էջ 157:

[2] Մ. Կ. Տեր-Հարությունյանցը մինչև 1961 թվականն աշխատում էր Մոսկվայում որպես քաղաքատնտեսության պրոֆեսոր: Նա անհատական թոշակառու էր, վախճանվեց 1961 թվականի օգոստոսի 25-ին, որի մասին մահախոսական տպվեց «Պրավդա» թերթում (28 օգոստոսի, 1961 թ., № 241):

գրադում շատ ավելի հայ ընկերներ են գործել, սակայն այստեղ կբավարարվենք այսքանով։

Սոցիալիստական ռևոլյուցիայի մյուս կարևոր և գլխավոր օրրանը Մոսկվան էր։ Մոսկվայում հայ ժողովրդի բազմաթիվ ներկայացուցիչներ կատարել են ռևոլյուցիոն սխրագործություններ, որոնք պատիվ էին բերում այդ ռևոլյուցիոն սերնդին և շատ ուսանելի են երիտասարդության համար։ Հոկտեմբերյան զինված ապստամբության նախօրյակին Վ. Ի. Լենինը Պետրոգրադից ղեկավարում էր Մոսկվայի բոլշևիկների գործունեությունը։ «Սոցիալ-դեմոկրատ» թերթը տարածում էր Լենինի հոդվածները։ Ապստամբության օրերին ստեղծվեց Մոսկվայի ՌՈԿ-ի օրգան «Իզվեստիա» նոր թերթը։

Պարտիայի Մոսկվայի կոմիտեն այդ թերթի խմբագրությունը ուղարկեց ռևոլյուցիոն-հրապարակախոսների լավագույն կադրերի՝ Սկվորցով-Ստեպանովին, Պոկրովսկուն, Ռուբեն Քաթանյանին։ Թերթի առաջին համարը լույս տեսավ 1917 թ. նոյեմբերի 3-ին։ Հենց այդ համարում էլ տպված էր Ռ. Պ. Քաթանյանի հոդվածը՝ «Կարմիր Գվարդիա և սպիտակ գվարդիա»։

Քաթանյանը քննում է Մոսկվայում զինված ապստամբության դասերը, ցույց է տալիս Կարմիր Գվարդիայի կատարած դերը։ Բուրժուականացած մենշևիկները դեմ էին Կարմիր Գվարդիա կազմակերպելուն։ Քաթանյանը հերքում է մենշևիկների դատողությունները Կարմիր Գվարդիայի և զինվորների միջև «հակասություններ» լինելու մասին, նշում է, թե «Զինվորները և բանվորական կարմիրգվարդիականները միասին են պայքարում, միասին արյուն թափում, միասին մեռնում, միասին հաղթում։ Բանվորի զենքը և զինվորի զենքը միևնույն գործն են կատարում»[1]։

Քաթանյանը խնդիր է դնում լիովին զինաթափել բուրժուազիային և զինել ժողովրդին, որով կապահովվի ռևոլյուցիան և հաղթանակած ռևոլյուցիոն իշխանության պաշտպանությունը, որովհետև բանվորների և զինվորների թափած արյունը առմիշտ միաձուլել է շինել հագած զինվորների բանակը և բաճկոններ հագած բանվորների բանակը, որ «այդ հերոսական բանակի միասնությունը կլինի մեր հետագա հաղթանակների գրավականը»։ Մեկ այլ հոդվածում Քաթանյանն անդրադառնում է Կրեմլի շրջանում մղված մարտե-

---

1 Տե՛ս «Известия Военно-революционного Комитета», Москва, 15 ноября, № 1, 1917.

ցին, գրվատում է Մոսկվայի բարիկադային կռիվների հերոսներին։ «Երբ վրա հասավ ահավոր ժամը, երբ ժողովրդական բարօրության համար անհրաժեշտ էր տալ ամենաթանկագինը՝ կյանքը, զինվորները, նավաստիները և բանվորները ամբողջ աշխարհի առջև ցույց տվեցին, որ նրանք արժանի են ապրելու, քանի որ կարողանում են մեռնել»[1],— գրել է նա։ Ռուբեն Պավլովիչը Մոսկվայի մարտերի հերոսներին համարում է մարդիկ, որոնց ոգեշնչում էին բարձրագույն իդեալները, հանուն որոնց գնում էին դեպի մահ։

Այնուհետև Մոսկվայում տպվող ուրիշ բոլշևիկյան թերթերում համարից-համար տպվում էին Քաթանյանի կրակոտ հոդվածները Մոսկվայում ռևոլյուցիոն պայքարի մասին, անվեհեր գվարդիականների և ռևոլյուցիոն զինվորների գործերի մասին։ Ռուբեն Պավլովիչը մասնակցում էր Մոսկվայի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի նիստերին, լինում էր ՌԿ(բ)Պ Մոսկվայի կոմիտեի ժողովներում, թերթի էջերից մասսաների մեջ էր տանում Վ. Ի. Լենինի ցուցումները։ Ռևոլյուցիայի հաղթանակից հետո Ռ. Պ. Քաթանյանը աշխատում էր «Մոսկվայի Սովետի «Իզվեստիա» և ապա «Մոսսովետի երեկոյան Իզվեստիա» թերթերում, որպես խմբագրական կոլեգիայի անդամ։ 1917—1919 թվականներին նա «Քաթանյան», «Ռուկին», «Ռիմսկի», «Վիկտոր», «Պավլով», «Ռ. Կ.» ստորագրություններով «Պրավդա», «Իզվեստիա» և ուրիշ թերթերում տպագրել է բազմաթիվ հոդվածներ, պրոպագանդելով լենինյան գաղափարները նոր իշխանության, նոր սոցիալական կարգերի, նոր բանակի մասին։

Մոսկվայում աշխատելով, Քաթանյանը որպես իրավաբան մասնակցում է Վ. Ի. Լենինի դեմ կատարված տեռորիստական ակտի մասնակիցների գործի քննությանը։

1919 թվականի աշնանից Քաթանյանն աշխատում էր որպես Կարմիր Բանակի Քաղաքական վարչության պետի պաշտոնակատար, իսկ այնուհետև մոտ երկու և կես տարի ՌԿՊ Կենտրոնական կոմիտեի Ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ։ Քաթանյանը մասնակցում էր Կենտկոմի կազմբյուրոյի նիստերին, հանդես էր գալիս զեկուցումներով, նրան երբեմն հրավիրում էին Քաղբյուրոյի նիստերին, ուր սովորաբար մասնակցում էր Վլադիմիր Իլյիչը։ Պարտիայի IX համագումարի մասնակից Ռուբեն Քաթանյանը մասնակցում է նաև X համագումարին, Հայաստանի կազմակերպու-

---

1 Տե՛ս «Известия Военно-революционного Комитета», Москва, № 4, 20 նոյեմբերի 1917 թ.։

թյան մանդատով վճռական ձայնի, իսկ Մոսկվայի՝ կազմակերպությունից խորհրդակցական ձայնի իրավունքով։ Քաթանյանն ընտրվել էր համագումարի խմբագրական հանձնաժողովի կազմում։ ՌԿՊ-ի XI համագումարում Քաթանյանը նույնպես պատգամավոր էր և այս անգամ ևս ընտրվել էր համագումարի խմբագրական հանձնաժողովի անդամ։

Ներպարտիական պայքարի ընթացքում Ռ. Պ. Քաթանյանը շարունակ գտնվում էր Վ. Ի. Լենինի կողմնակիցների շարքում։ Նա հանդես էր գալիս պարտիական կազմակերպություններում, մամուլում հրապարակված հոդվածներով պրոպագանդում էր Լենինյան գծից բխող խնդիրները։

Վ. Ի. Լենինի գաղափարների պրոպագանդի գործում Ռ. Պ. Քաթանյանի խոշոր ծառայություններից մեկն էլ նրա թարգմանչական գործունեությունն է։ Երբ լույս տեսավ Վ. Ի. Լենինի «Զախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» հանճարեղ աշխատությունը, Քաթանյանը ձեռնամուխ եղավ այդ երկի հայերեն թարգմանությանը, որը լույս տեսավ և տարածվեց հայ աշխատավորների մեջ[1]։ Նույն տարիներին Քաթանյանը Գ. Հայկունու հետ միասին, հայերեն թարգմանել է նաև Մ. Գորկու «Մայրը» վեպը։ Ռ. Պ. Քաթանյանը թե պարտիայի Կենտկոմում աշխատելու տարիներին և թե հետագայում ընդմիշտ մնաց որպես հավատարիմ լենինյան[2]։

Առավել հետաքրքիր են Մոսկվայի շրջաններում հայ ժողովրդի դավակների կատարած մարտական ռևոլյուցիոն գործերը։ Նրանք հանդես էին բերում իրենց մասնակցությունը ցույցերին և դեմոնստրացիաներին, զինված ելույթներին և բարիկադային կռիվներին։ Մոսկվայում մղված զինված պայքարի կարևոր օջախներից մեկը—Զամոսկվորեչիի շրջանն էր։ Այնտեղ հոկտեմբերի 26-ին ստեղծվում է Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտե, որի կազմում մտնում էին Ի. Կոսիորը, Վ. Ֆայդիշը, Կ. Վիտկովսկին և ուրիշներ։ Պարտիայի շրջկոմը և ՌԿԿ-ն ձեռնարկում են զինված ապստամբության

---

[1] Այդ գրքի Քաթանյանի թարգմանած օրինակը տե՛ս ՄԼԻ Հայկական գիլիալի գրադարանում, որին նվիրել է հեղինակը։

[2] Քաթանյանը 1922 թ. նշանակվել էր Գերմանիայում որպես սովետական գլխավոր դեսպան, ուր աշխատակցում էր «Ռոտե Ֆանեն» թերթին և պրոպագանդում էր լենինյան գաղափարները. 1923—1936 թթ. նա աշխատում էր արդարադատության օրգաններում, այժմ անհատական թոշակառու է և ապրում է Մոսկվայում։

կազմակերպումը, ամեն օր Կարմիր Գվարդիայի շարքերն են մըտնում նորանոր մարդիկ[1]։

Զամոսկվորեչիեի շրջանի բոլշևիկյան կազմակերպության մեջ աշխատող ռուսների, լատիշների, ուկրաինացիների և ուրիշների հետ միասին մասնակցում էին նաև մի խումբ հայ ռևոլյուցիոն գործիչներ։ Դրանցից էին.

Պետրոս Գևորգի Հարությունյանցը — *ծնված 1892 թ., Գանձակում, բարձրագույն ուսումն ստացած Մոսկվայի Առևտրականտնտեսագիտական ինստիտուտում և բոլշևիկների պարտիայի շարքերն անցած 1915 թ.*, Լյուսյա Արտեմի Լիսինյանը, Պարույր Ավետի Տեր-Գրիգորյանը, Հայկանուշ Ալեքսանի Նաջարովան, Արտեմ Քագրատի Խալաթյանը, Ռոբեն Օվանեսի Աբգարյանը, Իվանով-Կավկազսկին *(Դավթյանը)*, Արտեմի Ակոպովը, Լյուդմիլա Հայրապետյանը *և ուրիշներ։*

Հոկտեմբերի վերջերին Մոսկվայում ամենուրեք բարիկադային մարտեր էին մղվում։ Կրեմլը պաշտպանվում էր յունկերների և կազակների ընտիր զորամասերով, հրետանիով, գնդացիրներով։ Դեպի Կրեմլ գրոհի էին գնում Զամոսկվորեչիեի շրջանի գվարդիականները։ Հոկտեմբերի 31-ին մարտում սպանվեց Կարմիր Գվարդիայի հրամանատար Պ. Դոբրինինը, շրջանի ՌՌԿ-ն նրա փոխարեն ռայոնի Կարմիր Գվարդիայի պետ նշանակեց Պ. Հարությունյանցին, որը Զամոսկվորեչիեի գվարդիականներին գրոհի տարավ Յու. Միշկինի հետ միասին[2]։

Հոկտեմբերի վերջերին և նոյեմբերի սկզբներին Զամոսկվորեչիեում կատաղի կռիվներ են բորբոքվում, որոնց ժամանակ բարիկադների վրա քաջաբար կռվում էր հայ ժողովրդի անվեհեր դուստր Լյուսյա Լիսինյանը, *որի մասին շատ է գրվել մամուլում և գրքերում։*

Լ. Լիսինյանը զոհվեց 1917 թ. նոյեմբերի 1-ին Օստոժենկայում մղված մարտում։ «Տներում թշնամիները դարաններ էին սարքել։ Կրակում էին կտուրներից, պատուհաններից։ Զաչատեսկի վանքի զանգակատանը յունկերները գնդացիրներ էին դրել և արճճե կարկուտ էին տեղում կարմիրգվարդիականների վրա։ Հենց այդտեղ էլ՝ Օստոժենկայում, թշնամու գնդակը խոցեց ռևոլյուցիայի փառապանծ դուստր, քսանամյա Լյուսյա Լիսինյանին...»[3]։ Կարմիրգվարդիականները խաչաձև հրացանների վրա տանում են հայ ժո-

---

[1] *Տե՛ս* «Октябрь в Замоскворечье», 1957, стр. 343—364.

[2] *Նույն տեղում, էջ 45։*

[3] *Տե՛ս «Կոմսոմոլսկայա պրավդա», 14 հուլիսի 1957 թ.։*

ղովրդի դուստր Լյուսյայի դիակը, հողին հանձնում Կարմիր հրապարակում, Կրեմլի պատի տակ։

Մոսկվայի բոլշևիկները հմուտ կոմունիստ և անվեհեր գվարդիական Պետրոս Հարությունյանցին առաջ քաշեցին Մոսկվայի Սովետի ղեկավարների շարքը, նահանգի պարենավորման կոմիսար, Մոսսովետի գործկոմի անդամ և ՌՍՖՍՌ ԿԳԿ-ի անդամ, իսկ հետո նաև Ռ(բ)Պ Մոսկվայի կոմիտեի բյուրոյի անդամ։ Պ. Հարությունյանցը 1918—1921 թթ. բազմիցս բախտ է ունեցել լսել Վ. Ի. Լենինին և հանդիպումներ ունենալ առաջնորդի հետ, նվիրված աշխատել Լենինի ցուցումները կենսագործելու համար։

Մոսկվայում հայ ռևոլյուցիոն գործիչների կատարած սխրագործությունների մասին մեր համառոտ տեսությունը չի կարող անցնել պատմական Կրասնայա Պրեսնյայի կողքով։ Ռևոլյուցիայի օրերին այդ շրջանի կարմիրգվարդիականների շարքում եղած հայերից կբերենք մեկ օրինակ — կոմունիստ Դավիթ Ավագի Տեր-Նդիազարյանին։ 1917 թ. Հարավային ռազմաճակատից վերադառնալով Մոսկվա, նա գործի անցավ Կրասնայա Պրեսնյայի բանվորական Դեպուտատների Սովետում, Մասնակցելով Մոսկվայում ռևոլյուցիոն նոր իշխանության ամրապնդման համար մղված մարտերին։ Նդիազարյանը շուտով ընտրվում է Կրասնայա Պրեսնյայի շրջանային Սովետի գործկոմի անդամ և ապա Մոսկվայի Սովետի դեպուտատ[1]։

Մոսկվայի բոլշևիկյան կազմակերպության ակտիվ գործիչներից էր նաև Ներսես Խաչատուրի Բարգամյանը։ Բաքվի բանվոր և ընդհատակում կոփված բոլշևիկը Մոսկվայում ռևոլյուցիոն մարտերի մեջ աճում և մեծ փորձ է ձեռք բերում։ Նրա համար մեծ դպրոց են հանդիսացել Մոսկվայի Սովետը, որի դեպուտատն էր ընտրվել։ Մոսկվայի Սովետում Բարգամյանը հաճախ է տեսնում Վ. Ի. Լենինին, ունկնդրում առաջնորդի զրույցներն ու ճառերը, ակտիվորեն աշխատում լենինյան դիրեկտիվները կենսագործելու բնագավառում։ Մոսկվայի կոմիտեն Ներսես Բարգամյանին նշանակում է «Դուկատ» մեծ ֆաբրիկայի դիրեկտոր, ուր աշխատեց մինչև իր կյանքի վերջը։

Մոսկվայի երկաթուղայիններն ռևոլյուցիայի ժամանակ խոշոր դեր են կատարել։ Այնտեղ Ռիբինսկի երկաթուղու վարչությունում պատասխանատու պոստում աշխատում էր Պետրոս Ստեփանի

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 1914, թ. 9։

Արարատյանը, որը բոլշևիկյան պարտիայի անդամ էր 1903 թվականից։ Հոկտեմբերյան հեղաշրջման օրերին Արարատյանը Ռիբինսկի երկաթուղում աշխատող բոլշևիկներ՝ Շիշկինի, Բլոխինի և Կազակևիչի հետ կայարանի բանվորներին տանում էին զինված կռվի, իշխանությունը գրավելուց հետո Պ. Արարատյանը նշանակվում է Ռիբինսկի երկաթուղիների կոմիսար[1]։

ՌԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար Ե. Դ. Ստասովան Պյոտր Արարատյանի մասին կազմած մի բնութագրում նշել է, որ ինչպես ընդհատակի ժամանակներից սկսած, մինչև օրերս «ես միշտ կապ եմ ունեցել ընկեր Արարատյանի հետ», «կարող եմ համարձակորեն նրան երաշխավորել որպես տոկուն, հաստատակամ պարտիականի»[2]։ Եվ իրոք, Արարատյանն աշխատում էր որպես կոմիսար, ռևոլյուցիոն Կարմիր Գվարդիայի կազմակերպիչներից, որպես ագիտատոր և պրոպագանդիստ։ Մարտերի օրերից սկսած մինչև կոմունիստական շաբաթօրյակների ժամանակ նրա գործունեության ոգեշնչման աղբյուրը Վ. Ի. Լենինի ցուցումներն էին, առաջնորդի կոչերը։

Մոսկվայի Սովետը ռևոլյուցիայի առաջին օրերից ստեղծում է Քննչական հանձնաժողով, հետո՝ Ռևոլյուցիոն տրիբունալ։ Այդ գծով աշխատող կադրերին հավաքագրում, ստուգում և հաստատման էր ներկայացնում Մոսկվայի Կոմիտեի քարտուղար Ջեմլյաչկան։ Մոսկվայի Կոմիտե է հրավիրվում իրավաբան, հին կոմունիստ Միխայել Կարապետյանը և նշանակվում Մոսսովետի քննչական հանձնաժողովում, իսկ հետո Ռևոլյուցիոն տրիբունալում, որտեղ նա հանդես էր գալիս որպես հասարակական մեղադրող, դիմակազերծ անում հակառևոլյուցիոն տեռորիստներին, դավադիրներին և սաբոտաժնիկներին[3]։

Այդ բնագավառում էր աշխատում նաև Պողոս Մակինցյանը։ Մոսկվայի պատմության հերոսական-ռևոլյուցիոն ժամանակներում նրան ուղարկեցին Արտակարգ հանձնաժողովում պատասխանատու աշխատանքի։ Հայտնի գրականագետ, թարգմանիչ, գեղագետ-էսթետ Մակինցյանը, որպես բոլշևիկ, Մոսկվայում շատ անգամ է առիթ ունեցել հանդիպելու Ձերժինսկուն, լսելու Վ. Ի. Լենինին, գործելու Լենինի աշակերտների ղեկավարությամբ։ 1919 թվականին Մակինցյանը նյութեր է հավաքում Վ. Ի. Լենինի դեմ

---

1 Տե՛ս ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 73, թ. 7։

2 Նույն տեղում։

3 Տե՛ս ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 822, թ. 6—7։

էսեռների կազմակերպած տեռորի մասին, սպիտակգվարդիական դավադրությունների մասին և կազմում Արտակարգ հանձնաժողովի կարմիր գիրքը[1], գրում նրա ընդարձակ նախաբանը և ծանոթագրությունները։

Ռևոլյուցիայի օրրան Մոսկվայում, սոցիալիստական կարգերի հաղթանակի և Սովետական պետության ամրապնդման համար մղված պայքարում Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ աճած, դաստիարակված և պետական գործիչների մեջ աչքի ընկնող տեղ է պատկանում Ա. Բ. Խալաթովին (Խալաթյանին), որը Վ. Ի. Լենինի մերձավոր օգնականներից մեկն էր, նրա աշակերտը, նրա դիրեկտիվները կենսագործող մի եռանդուն, հմուտ, նվիրված ռևոլյուցիոն գործիչ։

Արտաշես Բագրատի Խալաթովը — Խալաթյանը (1895—1937) պատանեկության տարիներին ապրել է Անդրկովկասում, 1912 թ. փոխադրվել Մոսկվա, ընդունվել Առևտրա-տնտեսագիտական ինստիտուտը, որտեղ ծանոթացել է Վ. Ի. Լենինի տնտեսագիտական աշխատություններին։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի օրերին Խալաթովը Զամոսկվորեցկի շրջանի ռևկոմի անդամ էր և ղեկավար մասնակցություն ուներ Մոսկվայի պրոլետարների բարիկադային կռիվներին։

Այնուհետև Արտ. Խալաթյանը աշխատում է որպես Մոսկվայի պարենավորման և տրանսպորտի արտակարգ կոմիսարի տեղակալ, այնուհետև Մոսկվայի քաղաքի և նահանգի պարենային կոմիսար։ Այդ պաստում աշխատելիս Խալաթովը սիստեմատիկաբար կանչվում է Վ. Ի. Լենինի մոտ, զեկուցում է կառավարությանը Մոսկվայի և նահանգի պարենավորման վիճակի և դժվարությունների մասին։ Այդ օրերից էլ սկսվում են Վ. Ի. Լենինի և Ա. Բ. Խալաթովի կոնտակտը և գրագրությունները, Լենինի առաջադրանքները և նրանց կատարման հաշվետվությունները, որ Խալաթովը ներկայացնում էր Վ. Ի. Լենինին մինչև նրա կյանքի վերջին շրջանը։

1919 թվականի սկզբներից Խալաթովը նշանակվում է Պարենավորման ժողկոմի (Ցյուրուպայի) տեղակալ և կոլեգիայի անդամ։ Վ. Ի. Լենինին ներկայացրած մի գրության մեջ նշված է, որ Ա. Բ. Խալաթովի վրա բացի պարենժողկոմի տեղակալի և կոլեգիայի ընդհանուր աշխատանքներից, նաև անձնական պատասխանատվություն է դրվել՝ ղեկավարել ընդհանուր բաշխման վարչու-

---

[1] Տե՛ս «Красная книга ВЧК-а», М., 1919.

թյունը և արդյունաբերության մատակարարման բաժինը[1]։ Խալաթովն այդ գործը կատարում էր հաջողությամբ և արժանանում Վ. Ի. Լենինի խրախուսանքին։ 1919 թ. մարտի 25-ին Աշխատանքի և Պաշտպանության խորհուրդը Վ. Ի. Լենինի նախագահությամբ քննել է մի շարք կարևոր հարցեր, որոնց մասնակցել է Արտ. Խալաթովը[2]։ Հունիսի 6-ին Վ. Ի. Լենինի նախագահությամբ ԱՊԽ-ը որոշում է կայացրել Արտ. Խալաթովին և մի շարք ուրիշ գործիչների մանդատներ տալու, նրանց իրավունքների և խնդիրների մասին[3]։

Վ. Ի. Լենինը նկատելով Խալաթովի հռանդուն, բանիմաց գործարարությունը, նրա վրա դնում է նոր, ավելի պատասխանատու պարտականություն։ ՌՍՖՍՌ Ժողկոմսովետի բլանկի վրա Ա. Բ. Խալաթովի համար պատրաստվում է վկայական, որում ասված է. «Սույնը ներկայացնող ընկ. Ա. Բ. Խալաթովը Ժողկոմսովետի ս. թ. նոյեմբերի 18-ի նիստով հաստատվել է Կարմիր Բանակի և նավատորմի Պարենային և Առաջին անհրաժեշտության առարկաների մատակարարման Գլխավոր Պետ։

Ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ Վ. Ուլյանով (Լենին)»[4]։

Ա. Բ. Խալաթովի գործունեությունն անմիջականորեն ղեկավարում էր Վ. Ի. Լենինը։ Խալաթովը հաշվետվություններ է ներկայացնում Ժողկոմսովետին և պարտիայի Կենտկոմին ու անձամբ Վ. Ի. Լենինին, մասնակցում էր կառավարության նիստերին, հանդես էր գալիս զեկուցումներով ու հաղորդումներով։

Ա. Բ. Խալաթովի առողջությունը շատ թույլ էր։ 1919 թվականի վերջերին Խալաթովին արձակուրդ է տրվում և ուղարկվում սանատորիական բուժման երեք շաբաթ ժամանակով։ Դեռ ժամկետը չլրացած, Խալաթովը որոշում է վերադառնալ Մոսկվա, վերսկսել աշխատանքը։ Տեղեկանալով այդ մասին, Վ. Ի. Լենինը 1919 թ. դեկտեմբերի 19-ին գրել է. «Ընկեր Խալաթովին։ Առաջարկվում է Ձեզ մեկ ամիս մնալ սանատորիայում լիակատար բուժման համար, որպեսզի հետո ձեռնամուխ լինեք այն դժվար աշխատանքին, որը նախատեսվում է Ձեզ համար։ ԺԿԱ-ի Նախագահ Վ. Ուլ-

---

[1] ՍՍՌՄ ՀՌԿՊԱ, ֆ. 130, ց. 3, գ. 295, թ. 122։

[2] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 461, գ. 25։

[3] Նույն տեղում, գ. 45։

[4] Տե՛ս ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 11780, (իսկականը Լենինի ստորագրությամբ)։

յանով (Լենին)»[1]։ Խալաթովը նամակ է ուղարկել Վ. Ի. Լենինին վերև բերված հրահանգի մասին, թախանձագին խնդրելով թույլատրել վերադառնա Մոսկվա, անձամբ տեսնվի նրա հետ և բացատրի իր աշխատանքի վերադառնալու անհրաժեշտությունը[2]։

Սույն թեմայի ասպեկտով առանձնապես կարևոր է քննել Հայկական ՍՍՌ-ի և Անդրկովկասի մյուս ռեսպուբլիկաների կարիքները բավարարելու մասին Վ. Ի. Լենինի դիրեկտիվների կատարման գծով Ա. Խալաթովի գործունեությունը։

1921 թվականի փետրվարի կեսերն էր։ Սովետական Հայաստանը գտնվում էր պարենային դժվարին դրության մեջ։ Մոսկվայում ՀՍՍՌ լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանը Վ. Ի. Լենինին, Ցյուրուպային և Խալաթովին ուղարկել է մի դիմում, որում ասված է. «Մեր տրանսպորտի թույլ վիճակի և վրացական կառավարության հարուցած արգելքների պատճառով Հյուսիսային Կովկասից Վրաստանի վրայով Հայաստանի համար հացի փոխադրումը արգելակվել է։ Հայաստանի հացի եղած ամբողջ պաշարը և սերմացուն կողոպտված է թուրքական օկուպացիոն զորքերի կողմից։ Հայաստանը քաղցած է, անհրաժեշտ է անմիջապես օգնություն ցույց տալ ինչպես սերմացուով, այնպես էլ հացով՝ մինչև նոր բերքը։ Ստեղծված դրությունից միակ հնարավոր ելքն է հաց գնել Մակուի խանից և Երևան փոխադրել Շայթ-Ալյատի գծով։ Խնդրում եմ Արտաքին առևտրի խորհրդին, հանձնարարել Վրաստանում արտաքին առևտրի բաժնին շուտափույթ միջոցներ ձեռք առնել հացով մատակարարելու Հայաստանի սովյալ միլիոնավոր աշխատավորությանը»[3]։ Հացի նորմաների կրճատում էր տեղի ունեցել Բաքվում, որի հետևանքով բանվորների զգալի մասը գործադուլ էր արել[4]։

1921 թվականի փետրվարի 23-ին Վ. Ի. Լենինը կանչում է Ա. Բ. Խալաթովին և լսում նրա հաղորդումն երկրի պարենի և կերի պաշարների, ծախսման չափն ավելացնելու, Բաքվի և Հայաստանի մատակարարմանն օգնելու և այլ հարցերի մասին։ Հաջորդ օրը, 1921 թ. փետրվարի 24-ին Խալաթովը այդ հարցերի մասին Վ. Ի. Լենինին ներկայացնում է նոր զեկուցագիր, որում ասված է, «Հույժ-շտապ, անձամբ Ժողկոմսովետի նախագահ Վ. Ի. Լենինին։

---

[1] Տե՛ս «Լենինյան ժողովածու», հատ. 24, էջ 320։

[2] Տե՛ս ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 461, ց. 1, գ. 6003, թ. 1։

[3] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 461, ց. 1, գ. 31727, թ. 1։

[4] «Լենինյան ժողովածու», հատ. 20, էջ 227։

Պարենժողկոմատի կոլեգիայի անդամ Ա. Բ. Խալաթովից։ Ի լրացումն երեկվա, ս. թ. փետրվարի 23-ին անձամբ Ձեզ տված տեղեկությունների...», թվարկում է պարենային ֆոնդերի ծախսման տվյալները, վերլուծում է ստեղծված վիճակը, բաշխման գործում տեղ-տեղ թույլ տրված սխալները։ Զեկուցագրում Խալաթովը Լենինին հաղորդում է Կովկասի շրջանի մատակարարման հետ կապված հարցերը, ծագած դժվարությունները։ Զեկուցագրի վերջում ասված է. «... վաղը ես Ձեզ կներկայացնեմ լրացուցիչ բացատրագիր թվերով, սկսած 1920 թ. օգոստոսի սկզբներից մինչև 1921 թվականի փետրվարի 1-ը հացի ծախսման մասին։ Կոմունիստական ողջույններով Արտ. Խալաթով»[1]։

Վ. Ի. Լենինը 1921 թ. մարտի վերջերին գրություն է ուղղել քարտուղարին՝ «Հաց Բաքվի համար (միայն մինչև ապրիլի 3-ը), հիշեցնել Խալաթովին, խիստ կարևոր է»[2]։ Ապրիլի 7-ին ստացվեց Ս. Օրջոնիկիձեի հեռագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի պարենային դժվարությունների և պահանջների մասին։ «Հայաստանում և Վրաստանում հաց բոլորովին չի տրվում։ Դրությունը անսահման ծանր է», գրում էր Օրջոնիկիձեն[3]։ Նույն օրը Վ. Ի. Լենինը այդ հեռագիրն ուղարկում է Ա. Խալաթովին հետևյալ գրությամբ. «Ընկեր Խալաթով. կարդացեք և Ձեր կարծիքի հետ վերադարձրեք։ Չի՞ կարելի մի բան անել։ Ուղիղ գծով խոսեցեք Ֆրումկինի հետ։ Լենին»[4]։ Արտ. Խալաթովը կապվում է Դոնում Պարենժողկոմի ներկայացուցիչ և Ռոստով-Դոնի երկրային ժողտնտխորհի նախագահ Ֆրումկինի հետ Հայկական ՍՍՌ-ին, Ադրբեջանին և Վրաստանին մատակարարելու հարցի մասին։ Խալաթովը շտապ միջոցներ է նշում Հայկական ՍՍՌ-ի և եղբայրական ռեսպուբլիկաների կարիքները հոգալու մասին։ Նույն օրը նա զեկուցում է Վ. Ի. Լենինին, որ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի հացի մատակարարումն ուժեղացնելու համար ձեռնարկվում են բոլոր միջոցները։ Բաքվի դրությունը բարելավվում է։ «Վրաստանի և Հայաստանի մասին տրված են լրացուցիչ ցուցումներ պլանները ժամանակին կատարելու մասին, պատասխան ստանալուն պես կհայտնվի»[5]։

---

1 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 461, ց. 1, դ. 31932։
2 «Լենինյան ժողովածու», հատ. 20, էջ 226։
3 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 2, ց. 1, դ. 18138, թ. 1։
4 «Լենինյան ժողովածու», հատ. 20, էջ 227։
5 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 2, ց. 1, դ. 18087, թ. 1։

Վ. Ի. Լենինի ունեցած գրագրությունը Խալաթովի հետ այդ հարցի շուրջը պահվում էր հատուկ թղթապանակի մեջ, որի վրա Վ. Ի. Լենինը գրել է. «Պարենամթերքներ Անդրկովկասի համար»[1]։ Մի գրությամբ Լենինը ցուցում է տալիս Պարենժողկոմի Ռոստովի ներկայացուցչին ձեռք առնել ամենավճռական միջոցներն Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի մատակարարման գծով և օրը-մեջ վերադարձնել Լենինին ու Խալաթովին»[2]։

Ապրիլի 15-ին Ա. Բ. Խալաթովը նորից տագնապային նամակով դիմում է Վ. Ի. Լենինին։ Ահա այդ նամակը. «Վլադիմիր Իլյիչ։ Կովկասում հացի հարցը չափազանց վատ է»[3]։ Վ. Ի. Լենինը խորամուխ լինելով հարցի մեջ, Ա. Բ. Խալաթովի գրության վրա նշումներ է կատարել և ժողկոմսովետը միջոցներ է ձեռնարկում Կովկասում հացի մատակարարումը կարգավորելու գծով։

Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի նիստերում 1921 թվականի ընթացքում քննված հարցերի մեջ կարևոր տեղ են բռնել Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի սովետական ռեսպուբլիկաների պարենավորման հարցերը, որոնք առաջ էին քաշվում Ա. Խալաթովի զեկուցումների և նրա մտցրած առաջարկների մեջ։ 1919—1921 թվականներին Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը 205 նիստ է ունեցել, որոնց մեծ մասին մասնակցելով, Ա. Խալաթովը կառավարությունից և անձամբ Վ. Ի. Լենինից շատ առաջադրանքներ է ստացել ու կատարել բանակի և թիկունքի մատակարարման բարդ պրոբլեմների լուծման գործում։ Այդ աշխատանքի մեջ էլ դաստիարակվում և աճում էր Խալաթովը որպես սովետական պետական գործիչ։

Վ. Ի. Լենինի և Ա. Մ. Գորկու նախաձեռնությամբ 1920 թ. ստեղծվում է Կենտրոնական Հանձնաժողով՝ գիտնականների նյութական վիճակի բարելավման գծով (ՑԵԿՈՒԲՈՒ)։ Այդ հանձնաժողովի նախագահի պարտականությունները ևս դրվում են Ա. Բ. Խալաթովի վրա։ Վ. Ի. Լենինի, Ա. Մ. Գորկու, Ա. Վ. Լունաչարսկու և ուրիշների կողմից տասնյակ գրություններ են ուղարկվել Ա. Բ. Խալաթովին գիտության և կուլտուրայի գործիչների նյութական ապահովության հարցերի շուրջը։ Ա. Մ. Գորկին իր նամակներից

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 461, ֆ. 2, ց. 1, գ. 18087։

[2] Նույն տեղում, գ. 18146։

[3] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 18226, թ. 1։

մեկում նշում է, թե Ա. Բ. Խալաթովը այդ հերոսական տարիներին հանդիսանում էր «մեր գիտնականների կերակրողը»[1]։

Հետագա տարիներին Խալաթովն անխոնջ կերպով շարունակում էր զբաղվել պետական ապարատում, կուլտուրական շինարարության գծով և գիտության ու գրականության ասպարեզում, կատարելով Լենինի պատգամները։

1920 թվականից Ա. Բ. Խալաթովն ընտրվել էր Համառուսաստանյան Կենտգործկոմի անդամ, իսկ Սովետական Միություն դարձնելուց հետո ՍՍՌՄ ԿԳԿ-ի անդամ։ Նա Մոսկվայի Սովետի Գործկոմի անդամ էր, ակտիվ կերպով մասնակցում էր Մոսկվայի պարտիական-սովետական ղեկավար աշխատանքներին։

Ա. Բ. Խալաթովը հանդիսանում էր Վ. Ի. Լենինի գաղափարների գործունյա պրոպագանդիստ, գրել է ավելի քան 60 գրքույկ և հոդվածներ, որոնք տպվել են առանձին գրքերով կամ ժուռնալներում ու ժողովածուներում։ Այդ աշխատություններից կնշենք «Լենինը և աշխատանքի արտադրողականության հարցերը», «Աշխատավարձի գծով կիրառվող քաղաքականության շուրջը», «Սոցիալիստական կուտակումների մասին», «Մեր էկոնոմիկան և տնտեսական խնայողական ռեժիմը» և այլն, որոնք ամբողջովին կառուցված են համապատասխան հարցերի մասին Վ. Ի. Լենինի գաղափարների ոգով։

Ա. Բ. Խալաթովի գրական ժառանգությունը, նրա ինտենսիվ նամակագրությունը Վ. Ի. Լենինի և Ա. Մ. Գորկու հետ, նրա բազմաթիվ արժեքավոր հոդվածները պարբերական մամուլում հարուստ նյութ են տալիս առանձին ուսումնասիրության համար։

Աշխատանքի և Պաշտպանության խորհրդում և Ժողկոմսովետում Վ. Ի. Լենինի մոտ աշխատում էր նաև Նիկոլայ Սահակյանը, որը ղեկավարում էր զինվորական մոբիլիզացիայի բաժինը։

Նիկոլայ Սահակյանը հանդիսացել է կառավարության կարևորագույն միջոցառումների ակտիվ կիրառողը երկրի պաշտպանության գծով, հանդիսացել է Վ. Ի. Լենինի լավագույն օգնականներից մեկը։ Պակաս կարևոր աշխատանք չէր կատարում մեկ ուրիշ համեստ սովետական գործիչ՝ Գրիգոր Ազրյանը, որին պարտիայի կենտկոմը նշանակել էր գլխավոր վառելիքի (Գլավտոպի) պետի պաստում։

Վ. Ի. Լենինը հաճախ անձամբ էր զբաղվում վառելիքի սովը

---

1 Տե՛ս Մ. Գորկու նամակը Ա. Բ. Խալաթովին։ Չհրապարակված։

հաղթահարելու, գործարանները, հիմնարկները, բանվորական բնակարանները, բանակի զորամասերը վառելիքով ապահովելու հարցերով։ Այդ գործում Վ. Ի. Լենինի հետ անմիջականորեն կապված աշխատում էր Գրիգոր Աղրյանը։

Աշխատանքի և Պաշտպանության խորհրդի նիստերում Գր. Աղրյանը հաճախ զեկուցումներով էր հանդես գալիս և Վ. Ի. Լենինից դիրեկտիվներ ստանում վառելիքի գծով տարվող աշխատանքներն ապահովելու համար։

Ժողկոմսովետում, Աշխատանքի և Պաշտպանության խորհրդում դրված հարցերի նախապատրաստման և քննարկման ժամանակ, Կենտկոմում, ինչպես նաև ընթացիկ աշխատանքում Վ. Ի. Լենինի հետ անմիջականորեն կապված գործում էին Լևոն Կարախանը՝ արտաքին քաղաքականության հարցերի գծով, Գ. Տեր-Հովհաննիսյանը գիտական աշխատանքի, մասնավորապես Գիտությունների ակադեմիայի ֆինանսավորման, նրա գործունեությունը ղեկավարելու գծով և ուրիշներ։

Այսպիսով, դեռևս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի օրերին և նրանից անմիջապես հետո, ինչպես Պետրոգրադում, այնպես և Մոսկվայում՝ թե՛ պարտիական և թե՛ սովետական ղեկավար պոստերում, թե՛ կարմիրգվարդիականների ու ռևոլյուցիոն զինվորների մեջ գործում էին հայ ժողովրդի բազմաթիվ ներկայացուցիչներ, իրենց լուման մուծելով մայրաքաղաքներում ռևոլյուցիայի հաղթանակի և նոր հիմնված պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման համար մղվող հերոսամարտերում։

2. ԲԵԼՈՌՈՒՍԻԱՅՈՒՄ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ

Բելոռուսիայում և Ուկրաինայում սոցիալիստական ռևոլյուցիայի համար մղված պայքարը կարևոր նշանակություն ուներ ոչ միայն բելոռուս և ուկրաինական ժողովուրդների աղատագրության համար, այլև Պետրոգրադում ու Մոսկվայում հաղթանակած սովետական կարգերը պաշտպանելու համար, Ռուսաստանի սովետական ռեսպուբլիկան ամրապնդելու համար, նրա վրա հարավից և արևմուտքից հարձակվող ինտերվենտների ու սպիտակգվարդիական բանակների սպառնալիքը լիկվիդացնելու համար։

ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն Արևմտյան և Հարավ-արևմտյան ռազմաճակատները, Բելոռուսիա և Ուկրաինա աշխատե-

ղու համար ուղարկել էր լենինյան հին գվարդիայի մարտիկների, պարտիայի փորձված և կոփված աշխատողների, որոնց թվում հայ ականավոր ռևոլյուցիոն գործիչներ Ալեքսանդր Մյասնիկյանին, Հովհաննես Ալիբեգյանին, Արշակ Ալեքսանդրյանին և ուրիշների, որոնք անմիջական կապեր են ունեցել Վ. Ի. Լենինի հետ և գործել նրա ղեկավարությամբ։ Եթե Ալ. Մյասնիկյանի գործունեությունը հիմնական գծերով լուսաբանված է հրատարակված գրքերում, ապա Հովհաննես Ալիբեգյանի և Արշակ Ալեքսանդրյանի մասին ոչինչ չի գրվել և մեր երիտասարդությունը չգիտի նրանց մասին։

Հովհաննես Ալիբեգյանը արևմտյան ռազմաճակատում և Բելոռուսիայում ռևոլյուցիայի հաղթանակի համար անձնվիրաբար պայքարող լենինյան տիպի ականավոր գործիչներից մեկն էր։ Կովկասում և Մոսկվայում ընդհատակյա աշխատանքներին մասնակցելու համար նրան հետապնդում էին ոստիկանական գործակալները։ Ալիբեգյանն աշխատում է Բութայիսիում, Մոսկվայում և 1916 թ. հաստատվում Մինսկում։

Ծանոթանալով Կ. Մարքսի և Վ. Ի. Լենինի տնտեսագիտական և փիլիսոփայական աշխատություններին, Ալիբեգյանը ռևոլյուցիայի առաջին օրերից աչքի ընկող տեղ է գրավում բոլշևիկ պրոպագանդիստների շարքում, Մինսկում հանդես է գալիս ելույթներով, հատկապես Վ. Ի. Լենինի Ապրիլյան թեզիսների շուրջը։ Մինսկի բոլշևիկյան Կոմիտեի ստեղծման մասին Ալիբեգյանը գրել է, թե ռևոլյուցիայի առաջնորդ Լենինի ցուցումներով մենք անջատվեցինք «միավորիչ» կազմակերպությունից և վճռականորեն կանգնեցինք ինքնուրույն բոլշևիկյան կազմակերպության լենինյան ուղու վրա[1]։

Ալիբեգյանը Մինսկի բոլշևիկյան առաջին Կոմիտեի ղեկավար գործիչներից է։ Նա հանդես է գալիս զեկուցումներով Վ. Ի. Լենինի տնտեսագիտական և փիլիսոփայական հայացքների մասին, մասնակցում «Զվեզդա» «Բուրեվեստնիկ», «Մոլոտ» բոլշևիկյան թերթերին։ Նրա հոդվածները պրոպագանդում էին Վ. Ի. Լենինի թեզիսները ռևոլյուցիայի մասին։ Հոկտեմբերի նախօրյակին, երբ Մյասնիկյանն առաջադրվում է բարձր պարտիական պոստում աշխատելու, Հ. Ալիբեգյանը ընտրվում է ՌՍԴՐՊ Մինսկի Կոմիտեի նախագահ, այնուհետև Բելոռուսիայի և Արևմտյան ռազ-

---

1 Տե՛ս Հ. Ալիբեգով, *Բոլշևիկների դրոշի ներքո*, տպված «В борьбе за победу Октября в Белоруссии» *հոդվածների ժողովածու, Մինսկ, 1957, էջ 50—51։*

մաճակատի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի անդամ, Վ. Ի. Լենինի հռչակած դեկրետների կենսագործման համար պայքարող մարտիկ։

Սահմանադիր ժողովի ընտրությունների նախօրյակին պարտիայի Կենտկոմը առաջադրում է հավատարիմ լենինյանների և աշքի ընկնող ռևոլյուցիոն գործիչների թեկնածությունը։ Արևմտյան մարզում Ֆ. Ձերժինսկու, Ա. Մյասնիկյանի, Կ. Լանդերի կողքին առաջադրվում է նաև Հովհաննես Ալիբեգյանը[1]։

Աշխատելով Մինսկի բոլշևիկների ղեկավարի պոստում, Ալիբեգյանը 1917 թվականի ռևոլյուցիայի օրերին մասնակցում է Մինսկում ստեղծված «Փրկության կոմիտեի» դեմ վճռական պայքարին։ Ստեղծվում է արևմտյան մարզային կառավարություն — Ժողկոմսովետ։ Հ. Ալիբեգյանը հանդիսանում է Ժողկոմսովետի ղեկավար գործիչներից մեկը։

Լեհական լեգիոնների և գերմանական օկուպացիայի դեմ պայքարի ժամանակաշրջանում, 1917 թվականի վերջերից մինչև 1918 թվականի վերջերը ընկած ժամանակամիջոցում Հովհաննես Ալիբեգյանը գտնվում էր պատասխանատու մարտական պոստում. նա աշխատում է Սմոլենսկում, Մարզային Ժողկոմսովետում որպես նախագահի տեղակալ, այնուհետև գործում է օկուպացված շրջաններում որպես պարտիայի ընդհատակյա մարզկոմի քարտուղար, մասնակցում թշնամու թիկունքում պարտիզանական շարժման ղեկավարմանը, ինչպես նաև գերմանական ու լեհական զինվորների համար նրանց լեզվով թերթ և պրոկլամացիաների հրատարակությունը կազմակերպելուն։ Գերմանական և լեհական զինվորներին հասցվում են Վ. Ի. Լենինի լոզունգները եղբայրացման մասին, լենինյան դեկրետները խաղաղության և հողի մասին։

Այստեղ իրոք մենք ունենք հսկայական աշխատանք,— գրել է Ալիբեգյանը, պարտիական յուրահատուկ աշխատանքը թշնամու գրաված մարզում պետք է համախմբեր քաղաքի և գյուղի աշխատավորների ուժերը, նրանց նախապատրաստելու զինված ապրստամբության[2]։

Հ. Ալիբեգյանը մանրամասն հաշվետվություն է ներկայացնում «ՌՍՖՍՌ Ժողկոմսովետի Նախագահ Վ. Ի. Լենինին, Արևմտյան մարզի վիճակի, սովետական օրգանների գործունեության և օկուպացիոն շրջանների մասին»[3]։

---

[1] Տե՛ս ЦГВИА, ф. 204, о. 8. գ. գործ 5, թ. 308։

[2] ՄԼԻ Բելոռուսական ֆիլիալի արխիվ, ֆ. 4, ցուց. 2, գ. 3786, թ. 206—214։

[3] Տե՛ս Բելոռուսիայի պարտարխիվ, ֆ. 35, ց. 1, գ. 44, թ. 145—147։

Օկուպացված շրջանից վերադառնալով, Ալիբեգյանը աշխատում է որպես Սմոլենսկի նահանգի պաշտպանության զինվորական կոմիսար, Կնորինի ու Մյասնիկյանի հետ միասին մասնակցում է Սմոլենսկի համալսարանի կազմակերպմանը և այնտեղ դասախոսություններ կարդում սոցիալիզմի պատմության մասին, պրոպագանդում է Վ. Ի. Լենինի ուսմունքը։ Ալիբեգյանը գործոն մասնակցություն է ունենում նաև Բելոռուսիայի Կոմպարտիայի և ԲՍՍՌ-ի կազմակերպման գործում, ներպարտիական սուր պայքարում հանդես բերելով լենինյան հաստատակամություն և սկզբունքայնություն։

Քաղաքացիական կռվից հետո փոխադրվելով Մոսկվա և աշխատելով նոր պատասխանատու պոստերում, Ալիբեգյանն ամեն անգամ տեսնելով Վ. Ի. Լենինին և լսելով նրա ելույթները, ավելի մեծ նվիրվածությամբ էր տոգորվում առաջնորդի կերպարով, նրա գաղափարներով։ Այդպես էլ Հ. Ալիբեգյանն ապրեց մինչև իր կյանքի վերջը՝ որպես հավատարիմ լենինյան[1]։

Ուկրաինայում հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար հայ ռևոլյուցիոն գործիչները պայքարում էին նույնպիսի նվիրվածությամբ, ինչպես ընդհատակյա աշխատանքում, ցարիզմի դեմ մղված դաժան մարտերում։ Հայ ռևոլյուցիոն գործիչների հանդիպում ենք Կիևում և Խարկովում, Դոնբասում և Ղրիմում, Օդեսայում և Խերսոնում։ Դրանք Վ. Ի. Լենինի կոչերով նոր հասարակարգի համար պայքարի մեջ նետված մարդիկ էին, որոնք ամենուրեք չէին խնայում իրենց արյունը աշխատավոր մարդու ազատագրության համար։

Ահա այդ գործիչներից մեկը՝ Արշակ Սիմոնի Ալեքսանդրյանը։ Ընդհատակի տարիներին դատապարտված 102 հոդվածով, ավելի քան 10 տարի գտնվելով բանտերում և Սիբիրյան տաժանակրության մեջ, Արշակը պահպանել էր իր ոգու արիությունը։ 1917 թ. վերադառնալով Սիբիրից, պարտիան նրան ուղարկում է Ուկրաինա։ Արշակն աշխատում է նախ Օդեսայում, բանվորների և նավաստիների մեջ, ապա՝ Կրեմենչուգում։ Հոկտեմբերյան ռևոլյուցիոն մարտերի օրերին Արշակը Օդեսայում մասնակցում է Կարմիր Գվարդիայի ջոկատներ կազմակերպելու գործին, իսկ այնուհետև

1 Ռևոլյուցիայից հետո Ալիբեգյանն աշխատում է Մոսկվայում, ավարտում է Կարմիր պրոֆեսուրան, Հայրենական պատերազմի սկզբից մտնում է կոմունիստական դիվիզիայի մեջ, մասնակցում Մոսկվայի պաշտպանությանը և զոհվում մարտում։

հանդիսանում էր Կարմիր Գվարդիայի ջոկատների պետը[1]։ Արշակը 1917—1918 թվականներին ակտիվ մասնակցություն է հանդես բերում քաղաքացիական կռիվներին։ Ուկրաինական սովետական ռեսպուբլիկա ստեղծելուց և Ուկրաինական Կոմպարտիայի ձևավորումից հետո, Արշակ Ալեքսանդրյանն ընտրվում է Ուկրաինայի Կոմպարտիայի Կենտկոմի անդամ, իսկ հետո նաև Կենտկոմի նախագահության անդամ[2]։

Ղրիմի մարզում դեռևս հին ժամանակներից ստեղծվել էին հայկական բնակավայրեր, որտեղ ապրում էին հաղարավոր հայեր։ Ռևոլյուցիայի շրջանում տեղական բնակիչներից առաջ քաշված և դաստիարակված հայ ռևոլյուցիոն գործիչներն, ինչպես նաև պարտիայի կողմից Ղրիմ ուղարկված բոլշևիկներն ակտիվ մասնակցություն են ունեցել Սևաստոպոլում, Սիմֆերոպոլում և մյուս քաղաքներում մղված ռևոլյուցիոն մարտերին։

Արմենուհի Հովյանը ընդհատակյա գործունեության համար 1912 թ. դատվել էր Ս. Սպանդարյանի, Ե. Ստասովայի և ուրիշների հետ և 102 հոդվածով աքսորվել Սիբիր, մշտական բնակության, ուր մնացել էր մինչև 1917 թվականի գարունը։ Սիբիրից նա վերադառնում է նախ Կովկաս, ապա մեկնում Ղրիմ։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նախօրյակին և ռևոլյուցիայի ժամանակ Արմենուհի Հովյանը գտնվում է Սևաստոպոլի բոլշևիկների շարքերում։ Նա աշխատում է Ռաղմա-Ծովային շտաբում և ակտիվորեն մասնակցում սևծովյան ռևոլյուցիոն նավաստիների մղած պայքարին։ Արմենուհին Ղրիմը թողեց միայն գերմանական օկուպացիայի ժամանակ, 1918 թվականին և ռևոլյուցիոն գործունեությունը շարունակեց Հյուսիսային Կովկասում ու Մոսկվայում։

Ղրիմում ընդհատակի տարիներին դաստիարակված ռևոլյուցիոն հայ գործիչներից շատերն այդ օրերին այլ քաղաքներից ուղարկվեցին հայրենի մարզը, աշխատանք տանելու համար։ Դրանց մեջ էին Գաբրիել Կերեմետչին, Եվգենիա Բահաթուրյանցը, Ալեքսանդրա Համալյանը։

Ղրիմի ընդհատակի աշխատողներից էր նաև Լևոն Վարդանի Օհանջանյանը, որը Բաքվի կոմունայի մասնակիցներից էր, գտնվում էր Հյուսիսային Կովկասում գործուղման մեջ, երբ կոմունան ընկավ, ստիպված մեկնում է Նովորոսիյսկ, այնտեղից Ղրիմ։ Հաս-

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 29, թ. 19։

[2] Նույն տեղում։

տասավելով Սիմֆերոպոլում, Օհանջանյանը 1919—1920 թվականներին տանում է ընդհատակյա պարտիական աշխատանք, իսկ Ղրիմում Կարմիր Բանակի մտնելուց հետո Սիմֆերոպոլում կազմակերպում է Ստ. Շահումյանի անվան ակումբ և վարում է ակումբի գործերը։

Եվ այսպես, կարելի է նաև այլ օրինակներ բերել ոչ միայն Ղրիմի, այլև Խարկովի, Օդեսայի, Դոնբասի և Ուկրաինայի այլ մարզերի աշխատավորների ռևոլյուցիոն պայքարի մեջ հայ գործիչների մասնակցության վերաբերյալ։ Սակայն սահմանափակվենք բերված օրինակներով, քանի որ մեր առջև դեռ կան հարուստ նյութեր, որոնք պատմում են Ռուսաստանի Հարավային տարբեր մարզերում հայ ժողովրդի զավակների մարտական գործերի մասին և Վ. Ի. Լենինի հետ հայ ականավոր բոլշևիկների համագործակցության մասին։

3. Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԾ ՀԱՅ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԵՋ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ

Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակ Հարավային Ռուսաստանում, հատկապես Հյուսիսային Կովկասում, Կուբանում, Դոնում, Աստրախանում, Մերձվոլգյան և այլ մարզերում ապրում էին հարյուր-հազարավոր հայ աշխատավորներ, որոնք կամ անցյալում, կամ Անդրկովկասի վրա Թուրքերի 1918 թվականի հարձակման ժամանակ գաղթել էին իրենց հայրենի բնակավայրերից։

Վ. Ի. Լենինը Հայկական Գործերի Կոմիսարիատից և պարտիական օրգաններից իմֆորմացիա ստանալով Ռուսաստանում հայ բնակչության վիճակի մասին, առաջ է քաշում երկու խնդիր՝ հայերին նյութական օգնություն ցույց տալու, սովից ու համաճարակներից փրկելու գործի կազմակերպումը և հայ աշխատավորության Սովետական իշխանության հաղթանակի համար ծավալվող պայքարի մեջ ներգրավումը։

Առաջին հարցը դրվել է Ռուսաստանում Սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո։ Դեռևս 1918 թվականի հունվարի 15-ին Վ. Ի. Լենինի նախագահությամբ Ժողկոմսովետը քննում է հայ գաղթականության վիճակի և նրան օգնություն ցույց տալու հարցը։ ԺԿՍ-ի որոշմամբ հայ գաղթականներին օգնելու համար հատկացվում է 6 միլիոն 194 հազար ռուբլի։

1918 թ. հունիսի 18-ին նորից հայերին օգնություն ցույց տալու հարցը մտցվում է Ժողկոմսովետ։ Որոշման մեջ նշված է, թե Ժողկոմսովետը լսելով Ավանեսովի հայտարարությունը հայ գաղթականներին անհապաղ օգնություն ցույց տալու մասին և նկատի ունենալով գաղթականների ծայրահեղ վիճակը, որոշվում է որոշ գումար հատկացնել հայ գաղթականներին անհապաղ օգնություն ցույց տալու համար[1]։

Հայերին օգնություն ցույց տալու գործով զբաղվում էին Ազգությունների Գործերի և Արտաքին Գործերի Ժողկոմատները և այդ նպատակով հիմնված Հայկական Գործերի Կոմիսարիատը, որի գլուխ կանգնած էին Վ. Ավանեսովը և Վ. Տերյանը։ Կոմիսարիատի կազմում ստեղծվել էին բաժիններ։ Կոմիսարիատի բաժինների մեջ առաջնակարգ տեղ էր գրավում գաղթականներին սոցիալական օգնություն ցույց տվող բաժինը, այնուհետև հրատարակչական, կուլտուր-լուսավորչական, կապի և ինֆորմացիայի, ագիտացիայի, վիճակագրական և ռազմական բաժինները, որտեղ աշխատում էին՝ Պողոս Մակինցյանը, Երվանդ Դարագաշը, Հարություն Ջառայանը, Հայկ Հովսեփյանը, Հայկազ Կոստանյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Խորեն Բորյանը, Գրիգոր Վարդանյանը և ուրիշներ։ Ստեղծվել են նաև ենթաբաժիններ, որոնք զբաղվում էին ավելի նեղ հարցերով, օրինակ, արտադպրոցական ենթաբաժին, որը գլխավորում էր Վարվառա Կարպովնա Քեշեկյանը, նախադպրոցական՝ Շողակաթ Տեր-Սահակյանը և այլն[2], Կոմիսարիատի սիստեմում ակտիվ աշխատանք էին կատարում հայ կանայք, որոնց թվում Արփենիկ Նազարբեկյանը, Նատալյա Ավշարյանը և ուրիշներ։

Հայկական Գործերի Կոմիսարիատը հայաբնակ քաղաքներում ստեղծել էր տեղական բաժիններ, ուր ուղարկում էին հատուկ ջոկատներ, որոնք զբաղվում էին գաղթականների համար սնունդ և հագուստ հայթայթելու, բնակարանով ապահովելու գործով։ Այսպիսով, Վ. Ի. Լենինի գլխավորած կառավարությունը միջազգային և ռուսաստանյան բազմազան բարդ հարցերի մեջ հոգ էր տանում նաև, որ նյութական և կուլտուրական օգնություն ցույց տրվի հայ աշխատավորությանը։

Այդ գծով Հայկական Գործերի Կոմիսարիատի հետ միասին ծավալուն աշխատանք էր տանում Հայաստանի Կոմունիստական

---

[1] Ժողկոմսովետի որոշման իսկականը տե՛ս ՀՈԿՊԱ, ֆ. 1235, ց. 93, գ. 163«», թ. 76, նույնը «Հոկտեմբերյան ռևոլյուցիան...» ժողվածուն, հայերեն, էջ 233։

[2] ՀՈԿՊԱ, ֆ. 1318, ց. 1, գ. 40, թ. 82։

պարտիան, որի ղեկավար կազմը 1918 թվականի դարնանը Թիֆլիսից փոխադրվել էր Հարավային Ռուսաստան, ապա Մոսկվա։

ՌԿ(բ)Պ Կենտկոմը օգնում էր ՀԿՊ-ին, ֆինանսավորում նրա ծախսերը։ 1919 թ. փետրվարին ՀԿԿ գործունեության մասին հաշվետու զեկուցագիր է ներկայացվում Վ. Ի. Լենինին[1]։ Նույն թվականի մարտին ՀԿՊ դելեգատ Գ. Հայկունին մասնակցում է Կոմունիստական ինտերնացիոնալի 1-ին կոնգրեսին, զեկուցագիր է ներկայացնում հայ աշխատավորության մեջ տարվող քաղաքական ագիտացիայի ու պրոպագանդայի մասին, Վ. Ի. Լենինի և կոնգրեսի ուրիշ մասնակիցների հետ միասին ստորագրում է Կոմինտերնի առաջին դեկլարացիան։ Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատվիրակները մասնակցել են նաև ՌԿ(բ)Պ 8-րդ համագումարին։ 1919 թ. օգոստոսին Վ. Ավանեսովը հաշվետվություն է ներկայացնում ՌԿՊ Կենտկոմին Հայաստանի Կոմունիստական պարտիայի հետագա աշխատանքների մասին։ Այնտեղ մատնանշված է, որ ՀԿՊ-ն հայ, մասնավորապես արևմտահայ աշխատավորությանը լենինյան դրոշի շուրջը կազմակերպելու համար գործուղել է Հայկ Հովսեփյանին Սարատով-Աստրախան, Արտաշես Կարինյանին և Վահան Երեմյանին՝ Խարկով, Կիև, Օդեսա, Գրիգոր Վարդանյանին՝ Աստրախան, Հայկազ Կոստանյանին՝ Ղրիմ և այլն։ Մի շարք քաղաքներում ստեղծվել էին պարտիական խմբեր։ ՀԿՊ գործունեությունը լուսաբանվում էր կենտրոնական մամուլում[2]։

ՌԿՊ Կենտրոնական Կոմիտեն ելնելով ազգային փոքրամասնությունների մեջ աշխատանք տանելու մասին Վ. Ի. Լենինի դիրեկտիվներից, հայ բնակչություն ունեցող մի շարք քաղաքների և մարզերի պարտիական կոմիտեներին կից ստեղծել էր հայկական սեկցիաներ հայ աշխատավորության մեջ աշխատանք տանելու նպատակով։

Այսպիսով, Հայկական Գործերի Կոմիսարիատի, Հայաստանի Կոմունիստական պարտիայի և Մարզկոմների ու քաղկոմների Հայկական սեկցիաների միջոցով 1918—1920 թվականներին լայն կազմակերպական և քաղաքական աշխատանք էր կատարվում հայ բնակչության մեջ։

1918 թվականի ապրիլի սկզբներին Վ. Ավանեսովը և Վ. Տեր-

---

[1] ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 51։

[2] Տե՛ս «Ժիզն նացիոնալնոստեյ» թերթը, № 18, 19 մայիսի 1919 թ.։

յանը Հայկական Գործերի Կոմիսարիատի անունից դիմում են ՌՍՖՍՌ ԿԳԿ-ին խնդրելով թույլատրել կոնֆիսկացնել Պետրոգրադում գտնվող հայկական շրիֆտը, վերցնել և հիմնել հայկական թերթ, «Սովետական իշխանության գաղափարները հայ բանվորների ու գյուղացիների լայն խավերի մեջ պրոպագանդելու և հայ աշխատավորական մասսաների մեջ Սովետական իշխանության օրգանների գործունեության մասին ճիշտ տեղեկություններ տալու նպատակով»[1]։ ԿԳԿ-ը բավարարում է այդ պահանջը[2]։ Հիմնվում է «Կոմունիստ» հայատառ շաբաթաթերթը, որը տպում և տարածում էր Վ. Ի. Լենինի հոդվածները, Սովետական կառավարության դեկրետները, պարտիայի լոզունգները։ Թերթի էջերում հանդես էին գալիս Տերյանը, Ավանեսովը, Մյասնիկյանը, Հովսեփյանը, Բորյանը, Կարինյանը, Հայկունին և ուրիշներ։

Հայկական Գործերի Կոմիսարիատի և Հայաստանի Կոմունիստական պարտիայի ջանքերով հայերեն հրատարակվում են Վ. Ի. Լենինի աշխատություններից՝ «Պետություն և հեղափոխություն», «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա», «Ինչ պետք է լինի մեր պարտիայի անունը», «Թեզիսներ բուրժուական և պրոլետարական դեմոկրատիայի մասին», «Երրորդ ինտերնացիոնալի տեղը պատմության մեջ», «Կարլ Մարքս (Համառոտ կենսագրությունը և մարքսիզմի շարադրությունը)» և ուրիշ աշխատություններ։ Առանձին գրքով տպվել է Վ. Ի. Լենինի կենսագրությունը և այլն։ Կոմիսարիատի և ՀԿԿ հրատարակությամբ 1918-1919 թվականներին հայերեն լույս են տեսել 60-ից ավելի անուն գրքեր։

Թերթերից և գրքերից բացի, հայերեն հրատարակվում էին նաև թռուցիկներ, թերթիկներ, պլակատներ, որոնց մեջ ցույց էր տրվում Վ. Ի. Լենինի գործի հաղթանակը, դիմակազերծ էին արվում Ռուսաստանում գործող հակառևոլյուցիոն պարտիաները և Անդրկովկասի բուրժուական նացիոնալիստները։ Հայ փախստական-աշխատավորներին ուղղված բազմաթիվ կոչերից մեկում Հայկական Գործերի Կոմիսարիատը նկարագրելով Հայաստանի վիճակը, ժողովրդի ուսերին ընկած ծանր լուծը, դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների լծի տակ ընկած բնակչության դատն վիճակը, ցույց է տալիս Սովետական իշխանության քաղաքականությունը՝ հայերին օգնելու, ազատագրելու համար. այնուհետև

---

[1] ՀՌԿՊԱ, ֆ. 1235, ց. 93, գ. 163, թ. 63։

[2] Նույն տեղում, թ. 61։

կոչում տված է, որ Հայկական Կոմիսարիատը կանչում է հայ աշխատավորներին «դեպի հեղափոխական կռիվ, դեպի խորհրդային իշխանության Կարմիր Բանակի շարքերը... գիտցեք, ընկերներ, որ միայն Կարմիր Բանակի հաղթանակով պիտի ջախջախվի ընդհանուր թշնամին և բացվի ձեր առաջ Հայաստանի վերածնման ու վերաշինության ցանկալի հեռանկարը։ Հայաստանի իշխանությունը պիտի անցնի Հայաստանի աշխատավոր մասսաների ձեռքը. բուրժուական կառավարության տեղ պիտի հաստատվի Հայաստանի խորհուրդների իշխանությունը։ Հայ փախստականներ, այդ նպատակին երթանք միասին»[1]։

Հյուսիսային Կովկասում 1918 թվականի սկզբներից հաղթում է ռևոլյուցիան և ստեղծվում է Հյուսիսային Կովկասի Սովետական ռեսպուբլիկա, որի ԿԿՆտգործկոմի նախագահն էր Ռուբինը։ ՌԿՊ Հյուսիսային Կովկասի մարզկոմի քարտուղարն էր Կրայնին։ Ռեսպուբլիկայի ղեկավար գործիչներից էին նաև Դունաևսկին, Ռոժանսկին, Վլասովը, Անժիևսկին և ուրիշ բոլշևիկներ։ Արմավիրի ճակատում մեծ սխրագործություններ է կատարել վրաց ժողովրդի զավակ կոմիսար Ասկարավան։

Հյուսիսային Կովկասի ռեսպուբլիկայում ակտիվ գործունեություն էին ծավալում այն հայ կոմունիստները, որոնց ռևոլյուցիոն պայքարի ալիքը նետել էր այնտեղ։ Հյուսիսային Կովկասի ռեսպուբլիկայում հրատարակվում էր «Կարմիր օրեր» թերթը, որի խմբագիրը Շ. Ամիրխանյանն էր, ապա շատ երիտասարդ կոմունիստ Թադևոս Մանդալյանը, իսկ քարտուղարը՝ Վարդուշ Տարախչյանը։ Հյուսիսային Կովկասի ռեսպուբլիկայի ժողովրդական Կոմիսարների Սովետում աշխատանքի էին ներգրավվել Գուրգեն Հայկունին՝ որպես Ազգությունների գործերի ժողկոմ, Վանան Երեմյանը՝ ներքին գործերի, Մարտին Սահակյանը՝ Ֆինանսների ժողկոմ, Բենիամին Սահակյանը՝ բանկի դիրեկտոր, Գևորգ Աբարբեկյանը՝ Արտակարգ հանձնաժողովի նախագահի տեղակալ[2]։ Այստեղ էին աշխատում նաև Բաքվի կոմունայի անկումից հետո Թերեքի մարզ փոխադրված շատ հայ կոմունիստներ, ինչպես Բագրատ Նայի Հարությունյանը և ուրիշներ։

1918 թ. մայիսից Երկրային Կոմիտեի որոշմամբ Պյատիգորսկ է փոխադրվում Արշակ Աբարբեկյանը, որն սկզբում աշխատում էր

---

1 Կոչը տպվել է մեծ տիրաժով, 1913 թ. օգոստոսին։

2 Տե՛ս ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 1686։

որպես օկրուգային Ֆինանսական կոմիսար և ապա օկրուգային գործկոմի նախագահ։ Այստեղից էլ Աթաբեկյանը ընտրվել է Համառուսական Սովետների 6-րդ համագումարի պատգամավոր[1]։

Կատարելով Լենինյան դեկրետը Կարմիր Բանակի կազմակերպման մասին, 1918 թ. կեսերից կոմունիստները ձեռնարկեցին հայ աշխատավորներից և դեմոբիլիզացվող զինվորներից հայկական կարմիր զորամաս ստեղծելու գործը։ 1918 թվականի աշնանը Պյատիգորսկում արդեն ձևավորվել էր հայկական կարմիր գունդ, որը ռևոլյուցիոն զինվորների կամքով կոչվում էր Վ. Ի. Լենինի անվամբ[2]։ Լենինի անվան հայկական գնդի կազմում կամավոր մտած հայ զինվորները ռուսական Կարմիր Բանակի զորամասերի մարտակարգերում մասնակցում էին սպիտակգվարդիական հակառևոլյուցիայի դեմ մղվող պայքարին[3]։

Լենինի անվան հայկական կարմիր գնդի հրամանատարն էր կոմունիստ Գևորգ Սրապյանը, որը հին բանակում ծառայել էր որպես սպա, տեղյակ էր ռազմական գործին, մասնակցել էր ընդհատակյա աշխատանքներին։ Սրապյանը հետագայում Բաքու ընդհատակյա աշխատանքի մեկնելիս սպանվում է ճանապարհին։ Լենինի անվան գնդի ստորաբաժանումներից մեկի հրամանատարը եղել է Վարդգես Տեր-Սիմոնյանը, որը ուսանող էր, մտնելով պարտիայի մեջ, մեկնել էր ռազմաճակատ և զոհվել մարտերից մեկում։ Գնդի շտաբի անդամներից մեկն էլ Վանե Երկանյանն էր, որը մարտերում հանդես է բերել քաջություն և հմտություն, իսկ հետագայում ընդհատակյա աշխատանքի ուղարկվում մենշևիկյան Վրաստան և Ախալցխեում սպանվում մենշևիկների ձեռքով։ Այդ գնդի աչքի ընկած կոմիսարներից է եղել Սրամ Մատուրյանը։

Հյուսիսային Կովկասում Լենինի անվան հայկական գնդից բացի գործում էին նաև Պետրոս Դանիելյանի մարտական ջոկատը, Արմավիրի կամավորական ջոկատը և ուրիշ կարմիր ջոկատներ, կազմված հայ զինվորներից։ Այդ ջոկատները հետագայում ձուլվեցին Կարմիր Բանակի զորամասերի մեջ և մասնակցեցին Աստրախանի հերոսական պաշտպանությանը։ Պ. Դանիելյանն Աստրախանում պատասխանատու աշխատանք էր կատարում Չեկայի օրգաններում։ Նա անձնվիրաբար գործեց և ընկավ մարտերից մե-

---

1 Տե՛ս ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 91, թ. 1—3։

2 Տե՛ս ՀՌԿՊԱ, ֆ. 1318, ց. 1, գ. 40, թ. 94։

3 Տե՛ս «Հոկտեմբերյան ռևոլյուցիան...» փաստաթղթերի ժողովածուն, էջ 253—254։

կում։ Հյուսիսային Կովկասում մղված մարտերում հերոսաբար կռվեցին և զոհվեցին Ռոզա Կասպարովան, Սուրեն Մաղաուզովը, Աղասի Շահինյանը և շատ ուրիշներ։ Իրենց մարտական ծառայություններով աչքի ընկան Ի. Ս. Ֆրանգուլյանը, Իվանով-Կավկազսկին (Դավթյանը) և ուրիշներ։

Ատրախանը — 1918—1920 թվականներին հանդիսանում էր Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար մղվող պայքարի կարևոր մի կենտրոն։ Ատրախանից Ս. Մ. Կիրովը իրագործում էր կապը ՌԿՊ Կենտկոմի և տեղական կազմակերպությունների միջև։ Ատրախանում էր գտնվում ՌԿՊ ԿԿ-ի Կավբյուրոն, որը կազմակերպում էր պայքարը Կովկասում ռևոլյուցիայի հաղթանակի համար։ Ատրախանի 1919 թվականի հերոսական պաշտպանությունը հավատ էր ներշնչում Կովկասի աշխատավորներին, որոնց թվում և հայերին, որ Սովետների հաղթանակը մոտիկ ապագայի գործ է։

1918—1920 թվականներին Ատրախանում ապրում և աշխատում էին բազմաթիվ հայ կոմունիստներ, հրամանատարական կադրեր և սովետական հիմնարկների ծառայողներ։ ՌԿՊ Ատրախանի Կոմիտեի և Ատրախանի Սովետի կազմում ընտրվել էին մի շարք աչքի ընկնող բոլշևիկներ, որոնց թվում էին Արիստովը, Անիսիմովը և ուրիշներ։

Ատրախանի Սովետի առաջին բանվոր դեպուտատներից էր նաև հնագույն բոլշևիկ Աշոտ Խումարյանը, որը և գլխավորում էր Սովետի բոլշևիկյան ֆրակցիան։ Ատրախանում սովետական կարգեր հաստատելուց հետո Խումարյանը հանդիսանում էր Սովետի գործկոմի Նախագահը և Ներքին գործերի ժողկոմը[1]։ Նա իրագործում էր կապը Բաքվի հետ։ Ստ. Շահումյանը Ատրախան Խումարյանին էր հաղորդում Բաքվի մասին զեկուցագրերը Վ. Ի. Լենինին ուղարկելու համար։ Աշոտ Խումարյանը պարտիայի Կենտկոմին, ժողկոմսովետին և անձամբ Վ. Ի. Լենինին սիստեմատիկաբար հաղորդում էր Բաքվից ստացված զեկուցագրերը։ Կոմունայի պաշտպանության դժվարին օրերին Աշ. Խումարյանը հեռագիր է ուղարկում Վ. Ի. Լենինին դեպի Բաքու թուրքական և մուսավաթական բանդաների հարձակման հետևանքով ստեղծված բարդ իրադրության մասին[2]։ Մեկ ուրիշ հեռագրում Խումարյանը Վ. Ի. Լենինին զեկուցել է

---

1 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 64, ց. 1, գ. 169, թ. 117։
2 ՀՌԿՊԱ, ֆ. 130, ց. 2, գ. 534, թ. 258։

Բիչերախովի դավաճանության հետևանքով ռազմաճակատի կապ-մալուծման մասին և այն մասին, որ Կովկասյան Կարմիր Բանակի զորքերը միահամուռ դեմ են արտահայտվում անգլիացիներին Բաքու հրավիրելուն[1]։

Ա. Խումարյանի գործունեության մեջ կարևոր տեղ ունեին հայ գաղթականությանն օգնություն ցույց տալու գծով կառավարության նշած միջոցառումների իրագործումը և հայկական «Կարմիր բանվոր» թերթի խմբագրի պարտականությունների կատարումը։ Աշոտ Խումարյանը պարտիական հմուտ հրապարակախոս էր և գրական աշխատող, իր հոդվածների մեջ հանդես էր գալիս որպես հետևողական լենինյան[2]։

Աստրախանի պարտիական-սովետական ակտիվ գործիչներից էր Հովսեփ Լազյանը, որն սկզբում աշխատում էր որպես 11-րդ բանակի օրգան «Կրասնիյ վոին» թերթի խմբագիր, նահանգական կոմիտեի և նրա նախագահության անդամ, իսկ հետո նաև նահանգական կոմիտեի նախագահ[3]։ Հովսեփ Լազյանին Աստրախանի կոմունիստներն ընտրեցին ՌԿՊ VIII համագումարի պատգամավոր։ Համագումարում Լազյանը ևս լսում է Վ. Ի. Լենինի զեկուցումները, մասնակցում քննարկվող հարցերին։

Աստրախանում ակտիվ պարտիական և սովետական աշխատանք էին կատարում Հայկ Գյուլիքևխյանը, որը 1918 թ. ակտիվ մասնակցություն էր ունեցել Գերմանական Կոմպարտիայի աշխատանքներին, 1918 թ. վերադարձել էր Մոսկվա և ուղարկվել հարավ՝ ռևոլյուցիոն աշխատանք կատարելու։ Աստրախանում նա հանդես էր գալիս զեկուցումներով, որոշ ժամանակ խմբագրում «Կրասնիյ վոին» թերթը, որպես առաջնակարգ մարքսիստ-լենինյան պրոպագանդիստ։ Նա մասնակցել է և տեղի հայատառ բոլշևիկյան «Կարմիր բանվոր» թերթին։ Հ. Գյուլիքևխյանը միաժամանակ կարմիր հրամանատարների կուրսերի պետն էր։ Աղասի Վարդանյանը ըսկզբում որպես քաղաքային-զեկավար աշխատող, այնուհետև նահանգական ֆինանսների կոմիսար և ապա արդարադատության կոմիսար. Գրիգոր Վարդանյանը և Հակոբ Ջառայանը՝ կազմակերպում էին հայ գաղթականներին ցույց տրվող օգնության գործը. Սերգո Մարտիկյանը, որ էվակուացվելով Բաքվից, այնտեղ աշխատում

---

1 ՀՌԿՊԱ, ֆ. 1235, ց. 93, գ. 258, թ. 60—64։
2 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 64, ց. 1, գ. 169, թ. 117։
3 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց.1, գ. 1057, թ. 11։

էր թերթի հրատարակությունը իրականացնելու գծով, Բոգդան Ավշյանը՝ Բաքվից էվակուացվելով Աստրախան, աշխատում էր հրկրային ժողտնտխորհում և պետական վերահսկողության գծով[1]. այստեղ աշխատում էին և Բաքվի կոմունայի պաշտպանության ակտիվ մասնակից Կարո Ղազարյանը, որպես կարմիր հրամանատարների կուրսերի պետի տեղակալ, Մնացական Թավաքալյանը և շատ ուրիշներ։

Ռոստով–Նախիջևանի հայ աշխատավորներին Վ. Ի. Լենինի դրոշի շուրջը համախմբելու համար լայն աշխատանք էր կազմակերպում ՌԿՊ Դոնի մարզային կոմիտեն։ Ինչպես հայտնի է Ռոստով-Նախիջևանի բոլշևիկների շարքում դեռևս ընդհատակյա աշխատանքներում աչքի ընկնող ակտիվություն էին հանդես բերում հայ կոմունիստներից շատերը։

1918 թվականի սկզբներին Դոնի Սովետների I համագումարում Օրջոնիկիձեի, Կովալյովի, Պետրովսկու հետ ղեկավար մասնակցություն է ունենում Սարգիս Սրապիոնյանը (Լուկաշինը), որը Պետրոգրադից վերադարձել էր հայրենի քաղաքը ռևոլյուցիոն գործունեության համար։ Մարտին, երբ ստեղծվեց Դոնի Սովետական ռեսպուբլիկա, Ս. Լուկաշինը նշանակվեց ժողտնտխորհի նախագահ և իրավաբանության ու արդարադատության կոմիսար։

Դենիկինյան բանակի կողմից Ռոստովի գրավման օրերին Ս. Լուկաշինը հանդես է բերում հաստատակամություն և խիզախություն։ Եթե սովետական աշխատողներից ոմանք խուճապահար եղան, Ս. Լուկաշինը ռազմական կոմիսար Դորոշևի և Անանյա Բերբերյանի հետ միասին կազմակերպում են Սովետական իշխանությանը հավատարիմ մնացած մարդկանց էվակուացիան դեպի Ցարիցին և այնտեղ վերսկսում աշխատանքը, այդ մասին հեռագրելով Վ. Ի. Լենինին։ Հեռագրում ասված է. «Դոնի ռեսպուբլիկայի բոլոր Սովետներին, բոլոր կոմիսարներին Վլադիկավկազից մինչև Բատայսկ, Ցարիցինից մինչև Չերսկ. Մոսկվա Ժողկոմսովետ Լենինին. ՌՍՖՍՌ ԿԳԿ-ին. Ռոստովը գրավելուց հետո Դոնի ԿԳԿ-ը էվակուացվել է Ցարիցին և վերսկսել աշխատանքը...»[2]։ Հեռագրի տակ ստորագրել են Դոնի ռեսպուբլիկայի նոր կառավարության անդամներ Դորոշևը, Լուկաշինը և ուրիշներ։ Շուտով սպի-

---

1 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 1412։

2 Տե՛ս «Борьба за власть на Дону 1917—1920», Ростов, 1957, стр. 353.

տանները գրավում են նաև Յարիցինը։ Դոնի ռեսպուբլիկայի կառավարությունը ցրվում է։

Դոնի ռեսպուբլիկայի անկումից հետո Լուկաշինը աշխատում էր Մոսկվայում, իսկ 1920 թվականի հունվարից, երբ Ռոստովն ազատագրվեց, Վ. Ի. Լենինի առաջարկով նա անմիջապես ուղարկվեց Դոնի մարզում աշխատելու։ Ս. Լուկաշինը կանգնեց Դոնի մարզի պարտիական-սովետական ղեկավար գործիչների շարքը, նա սկզբում հանդիսանում էր Դոնի գործկոմի Արտակարգ հեղափոխական դատ., աշխատում էր Դոնի Գործկոմում, իսկ 1921 թ. սկզբներից ընտրվեց ՌԿՊ Դոնի մարզկոմի քարտուղար։

Սարգիս Լուկաշինը Ռոստով-Նախիջևան վերադառնալու առաջին օրերից իր ուժերի մի մասը նվիրում է հայ աշխատավորներին լենինյան դրոշի շուրջը համախմբելու գործին։

ՌԿՊ Դոնի մարզկոմին կից ստեղծվում է Ռոստովի-Նախիջևանի Հայկական սեկցիա, որի կազմում միավորվում են մարզում աշխատող բոլոր հայ կոմունիստները։ Հայկական սեկցիան հրատարակում էր «Բանվորի կռիվ» թերթը։ Հայկական սեկցիայի նախագահը և թերթի խմբագիրը 1920 թվականի սկզբներից մինչև օգոստոս ամիսը հանդիսանում էր Նդիա Զուբարը։ Հայկական սեկցիայի գործունեությանը ղեկավար մասնակցություն են ունեցել Վասիլի Խաչատրյանը[1], Երեմ Մելիքը (Մելիք-Յոլչյան), Հայկ Մուրադյանը, Անանիա Բերբերյանը, Հայկ Նանասյանը, Լուսեղեն Բոդոնյանը, Գևորգ Ջալաշյանը և ուրիշներ։

Հայկական սեկցիայի գործունեությունն ավելի լայն ծավալելու և Սովետական իշխանության շուրջը հայ աշխատավորությանը կազմակերպելու համար պարտիայի Կենտկոմի հանձնարարությամբ տարբեր ժամկետներով Ռոստով-Նախիջևան են ժամանում և այնտեղ գործում Աշոտ Հովհաննիսյանը, Արտո Նդիազարյանը, Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, Վահան Երեմյանը և ուրիշներ։

Հայկական սեկցիայի 1920 թ. ապրիլի 4-ի ընդհանուր ժողովում քննվել է Աշոտ Հովհաննիսյանի զեկուցումը. «Մենք, այստեղ Ռուսաստանի հարավում,— ասել է զեկուցողը,— պետք է տանք առաջին նմուշը սովետական ստեղծագործության, որպեսզի վաղը վերադառնալով հայրենիք՝ ստեղծենք Խորհրդային Հայաստան»[2]։

Այսպիսով, Դոնի հայ կոմունիստների ժողովի գլխավոր գաղափարը

---

[1] Տե՛ս «Բանվորի կռիվ» թերթը, № 10, 1920։
[2] Տե՛ս «Բանվորի կռիվ», № 26, 27, 1920։

Սովետական Հայաստանի իդեան էր։ Այդ ոգով են տոգորված «Բանվորի կռիվ» թերթի նյութերը։ Թերթում հայերեն տպվել են Վ. Ի. Լենինի «Թեզիսներ ազգային-գաղութային հարցի մասին» և ուրիշ հոդվածներ[1]։ Հայկական սեկցիան կոչերով դիմում էր հայ աշխատավորներին, «Փախստական հայեր, խտացնենք կոմունիստների շարքերը»։ Թերթի էջերում սիստեմատիկ կերպով նյութեր են հրապարակվել «Կոմյաշեյկաների ստեղծման», «Կոմյաշեյդանիրում» նոր անդամներ ընդունելու մասին։

Հայկական սեկցիան ներդրավում էր հայ երիտասարդությանը։ 1920 թ. հունիսին Հայկական սեկցիայի շրջանային կոնֆերանս է գումարվել, որտեղ քննվել է Սրամ Խրխրյանի զեկուցումը դպրոցների կոմբջիջների մասին, Գ. Ջալալյանի զեկուցումը՝ Ջալթիրկոմբջիջի մասին, Մելքոն Փափազյանի զեկուցումը՝ կոմերիտմիության աշխատանքի մասին[2]։ Փափազյանը հաղորդել է, որ Ռուստով-Նախիջևանի կոմերիտմիության Հայկական սեկցիայի մեջ հաշվվում էին մինչև 80 երիտասարդ, որոնք կռվում էին ռազմաճակատում։

Ս. Լուկաշինի նախաձեռնությամբ Դոնի մարզկոմը հիմնում է «Խարիբկիթ» հայերեն թերթը, որը հրատարակվում էր Նոր-Նախիջևանի բարբառով գյուղացիական բնակչության համար։ Այդ թերթի էջերում հայ գյուղացիներին հասցվում էին Վ. Ի. Լենինի ճառերն ու զեկուցումները, ժողկոմսովետի դեկրետները և պարտիայի կոչերն ու լոզունգները։

Հայկական սեկցիաներ էին ստեղծվել նաև Մայկոպի, Արմավիրի, Եկատերինոդարի (այժմ Կրասնոդար) և այլ քաղաքների ու մարզերի կոմիտեներին կից։ Հայկական սեկցիաների ստեղծումով ՌԿՊ Կենտկոմը լուծում էր լենինյան ազգային քաղաքականության կարևոր հարցերը, հաշվի էր առնում հայ բնակչության մեջ պարտիայի գործունեության առանձնահատուկ խնդիրները։ Այդ հոդվածությունի շնորհիվ էլ հայ աշխատավորությունը Հարավային Ռուսաստանի նահանգներում փարվեց Սովետական իշխանությանը, համալրեց ռևոլյուցիոն կարմիր զորամասերի շարքերը, ռուսների, ուկրաինացիների և եղբայրական ուրիշ ժողովուրդների զավակների հետ միասին մարտական մասնակցություն ունեցավ Ռուսաստանի հարավային մարզերում ռևոլյուցիայի հաղթանակի և նոր կարգերի ամրապնդման համար։

---

1 Մշի ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 2044, թ. 7—10։

2 Տե՛ս «Բանվորի կռիվ», N 23, 27 հունիսի 1920 թ.։

4. ՀԱՅ ԱԿԱՆԱՎՈՐ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԵՎ ՀՈՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՆԵՐՈՒՄ

Սովետական Ռուսաստանի դեմ ռազմական ինտերվենցիայի առաջին օրերին, 1918 թվականի փետրվարին Վ. Ի. Լենինը գրեց ժողկոմսովետի պատմական դեկրետը՝ «Սոցիալիստական Հայրենիքը վտանգի մեջ է»[1]:

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և կառավարությունը ձեռնարկեցին Կարմիր Բանակի կազմակերպմանը: Առանձնապես կարևոր նշանակություն էր տրվում մայրաքաղաքի և Մոսկվայի պաշտպանությանը և ռազմաճակատներում ռազմական հուսալի ուժեր ունենալուն: Սովետական Ռուսաստանի զինված ուժերի կազմակերպման հարցերին նվիրված ՌԿՊ Կենտկոմի դիրեկտիվներից մեկում ասված է, որ «Բանակը—ռևոլյուցիայի հիմքն է», «Հրամանատարական կազմը—բանակի հիմքն է»[2]: Պարտիան և կառավարությունը դիմեցին Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին, Կարմիր Բանակի համալրման և ռևոլյուցիայի պաշտպանության գործի մեջ ներգրավելու նրանց բոլոր կարող ուժերը:

Վ. Ի. Լենինը հայտարարեց, որ «մենք պետք է հրամանատարներ վերցնենք միմիայն ժողովրդից»[3]: Ռուսաստանի ժողովուրդները, առաջին հերթին, ռուս ռևոլյուցիոն բանվորներն ու գյուղացիները հանդիսացան սոցիալիստական ռևոլյուցիայի պաշտպանության հենարանը, նրա զինված ուժերը համալրեցին միլիոնավոր մարտիկներով ու հրամանատարներով:

Հայ ժողովրդի զավակները այստեղ ևս անմասնակից չէին կարող մնալ: Նրանցից շատերն արժանի տեղեր գրավեցին Սովետական Ռուսաստանը թշնամիներից պաշտպանելու համար մղվող ճակատամարտերում: Մասնավորապես անհրաժեշտ է խոսել Մոսկվայի պաշտպանության մեջ, արևելյան և արևմտյան ռազմաճակատներում աչքի ընկած այն գործիչների, զորավարների և հերոսների մասին, որոնց գործունեությունն անմիջականորեն կապված է եղել Վ. Ի. Լենինի անվան հետ և ընթացել է Լենինի ղեկավարությամբ:

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 17—19:
[2] Տե՛ս «Իզվեստիա», 24 նոյեմբերի, 1918 թ.:
[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, թ. 174 (ռուս.):

Ամենից առաջ այստեղ ևս պետք է ասել Ալ. Մյասնիկյանի մասին։ Դեռևս 1918 թվականին նա մի քանի անգամ հանդիպումներ է ունենում Վ. Ի. Լենինի հետ և գործում նրա ցուցումներով։ Նշենք մի կարևոր իրադարձություն։ 1918 թվականի նոյեմբերին, Մոսկվայի Մեծ թատրոնում հավաքվել են Համառուսաստանյան Սովետների VI համագումարի պատգամավորները։ Մյասնիկյանին իրենց մոտ են կանչում Վ. Ի. Լենինը և Յա. Մ. Սվերդլովը, զրույցը գնում է այն վտանգի շուրջը, որն սպասվում էր դեպի Մոսկվա արևմուտքից թշնամու նոր հարձակման կապակցությամբ։ «Ընկեր Լենինն ու Սվերդլովը վճռում են, որ Մյասնիկյանը թողնի համագումարը, անմիջապես մեկնի արևմտյան ռազմաճակատի շտաբը», տեղեկություններ հաղորդի իրադրության մասին և ապա տեղական աշխատողների հետ միջոցներ ձեռնարկի։ Այդ մասին Ա. Մյասնիկյանը գրել է. «... Լենինը տալիս է ամենամանրամասն, մանրակրկիտ խորհուրդներ։ Նա առաջարկում է լինել զգույշ, զգոն, չգրգռել գերմանական զորքերին, միջոցներ ձեռք առնել, որ մեր գույքը չկողոպտեն. մինչև իսկ այսպիսի մանրամասնություններ,— այնպես անել, որ հեռագրական սպարատները և կայարանների զանգերը մեր ձեռքում մնան։ Դրանք այնպիսի մի իսկական տիրոջ խորհուրդներ էին, որը հիանալի կերպով հասկանում էր, թե ամենափոքր անզգուշությունն ու մեր գույքի չնչին կորուստը կանդրադառնա ավերված Սովետական Ռուսաստանի օրգանիզմի վրա»[1]։

Ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ Ա. Մյասնիկյանը ճշտությամբ կենսագործում է Վ. Ի. Լենինի տված առաջադրանքը։

1919 թվականի մարտին Կենտկոմը որոշում է Ալ. Մյասնիկյանին փոխադրել Մոսկվա պարտիական և զինվորական աշխատանքի։ Երկու տարի նա աշխատում էր Մոսկվայում, կատարելով նախ Մոսկվայի պաշտպանության օպերատիվ շտաբի պետի և Մոսկվայի Կոմիտեի զինվորական կազմակերպչի, այնուհետև ՌԿՊ Մոսկվայի Կոմիտեի քարտուղարի և այլ պարտականություններ։

Ալ. Մյասնիկյանը երկու տարի աշխատում էր Մոսկվայում անմիջականորեն Վ. Ի. Լենինի ղեկավարության ներքո, շատ հաճախ լինում էր նրա մոտ, խոսում նրա հետ անձամբ, կամ հեռախոսով, շրջագայում քաղաքի շրջանները, հանդես գալիս բանվորների և զինվորների ժողովներում, մասնակցում պարտիայի Կենտկոմի, Ժողկոմսովետի, Մոսկվայի Սովետի, Կենտգործկոմի նիս-

---

[1] «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք Ա, էջ 10։

տերին։ «Միշտ էլ,—գրել է Մյասնիկյանը,—հաջողությունների և դժվարությունների բոպեներին, մեղանից յուրաքանչյուրն անխուսափելիորեն դիմում էր նրա օգնությանը՝ գրավոր, հեռախոսով, անձամբ»։ Լենինը հավատ էր ներշնչում, հուսադրում, մղում դեպի ռևոլյուցիոն սխրագործություն։ «Լենինը մեզ ասում էր,—գրել է Մյասնիկյանը,— այժմ մեր աչքերի առաջ հրաշք է կատարվում։ Այդ հրաշքն այն է, որ քաղցած ռուս բանվորները ամբողջ աշխարհի բոլոր դիշատիչների դեմ մղվող պայքարում կփրկեն Սովետական Ռուսաստանը։ Այդ մեզ համար հրաշք կլինի, բայց այդ հրաշքը կլինի»։

1920 թվականի ապրիլին լրանում է Վ. Ի. Լենինի ծննդյան 50-ամյակը։ Վ. Ի. Լենինը չէր համաձայնվել կատարել հոբելյանական հանդիսավորություններ։ Բայց ՌԿՊ Մոսկվայի Կոմիտեն, Ալ. Մյասնիկյանի նախագահությամբ քննում է այդ հարցը և կազմակերպում Մոսկվայի Կոմիտեի նիստ, որում Ալ. Մյասնիկյանը հանդես է գալիս ներածական հակիրճ խոսքով։ Նա ասել է.

«Ընկերներ, այս երեկոն մենք կազմակերպել ենք ի պատիվ ընկեր Լենինի ծննդյան 50-ամյակին. երեկոն նվիրում ենք գլխավորապես պարտիական ընկերների հիշողություններին։ Ներկա մոմենտում, երբ մենք շարունակում ենք պայքար մղել հանուն բանվոր դասակարգի լավագույն ապագայի, այդ պայքարի մեջ մենք ուզում ենք վերհիշել անցյալի օրերը. որպես մարտիկներ, վերհիշել այն ճակատամարտերը, որոնց մեջ մարտիկները միասին էին ընթանում իրենց առաջնորդի հետ և նրա ղեկավարությամբ»[1]։

Ալ. Մյասնիկյանն այնուհետև խոսք է տալիս Ա. Մ. Գորկուն, Մ. Օլմինսկուն, Ա. Լունաչարսկուն և ուրիշների, որոնք հանդես են գալիս հուշերով՝ Իլյիչի մասին։ Զեկուցումից և հիշողություններից հետո հայտարարվում է ընդմիջում։ Ալ. Մյասնիկյանը դիմում է Վ. Ի. Լենինին, խնդրելով մասնակցել ժողովին։ Այդ մասին նա գրել է, թե իհարկե Վ. Ի. Լենինը «հրաժարվում էր և ասում, թե նա իր մասին որևէ ճառ լսել չի կամենում, բայց երբ ես հայտնեցի, թե մենք նրան հրավիրում ենք համերգային բաժնին, ուր ներկա կլինեն իր սիրելի արտիստները՝ Շորը, Կրեյնը և ուրիշներ, այն ժամանակ նա ծիծաղեց, համաձայնեց և քիչ հետո արդեն Մոսկվայի Կոմիտեի շենքի մոտ էր։ Մենք խմբովին դուրս եկանք նրան ընդառաջ, շրջապատեցինք և բերեցինք բեմ, իսկ

---

[1] Տե՛ս նիստի արձանագրությունը, ՌԿՊ Մոսկվայի Կոմիտեի արխիվում։

հավաքված մասսան, անսպասելիորեն տեսնելով Լենինին, անըսպասելորեն, որովհետև գիտեր, որ նա չի գա իր «մեծարման» երեկոյին, նրա պատվին սարքեց ամենաջերմ, բարեկամական բուռն օվացիա և ստիպեց ասել մի քանի խոսք, որոնք նա նվիրեց մեր պարտիային։ Համերգային բաժինն անցավ շատ ջերմ, ընկերական մթնոլորտում։ Ընկեր Լենինը պատմում էր իր հիշողություններն ընդհատակի, մեր պարտիայի ու հին բոլշևիկների կյանքի մասին։ Ես հիշում եմ, որ նա այդ երեկոյան առանձնապես ուրախ էր։ Ըստ երևույթին՝ նրա հիշողության մեջ հարություն էին առել նրա կյանքի ամենաուրախ օրերը, մեր պարտիայի հերոսական պատմության ամենալավագույն էջերը»[1]։

Նույն օրն Ալ. Մյասնիկյանն իր խմբագրած «Կոմունիստիչեսկի տրուդ» թերթն ամբողջովին նվիրել է Վ. Ի. Լենինին։ «Վ. Ի. Լենինը որպես թեորետիկ» իր հոդվածում Ալ. Մյասնիկյանը բազմակողմանի ընդգրկումով տվել է Վ. Ի. Լենինի թեորետիկական և պրակտիկ ռևոլյուցիոն գործունեության վերլուծությունն ու բնութագրությունը[2]։

Վ. Ի. Լենինի մասին Ալ. Մյասնիկյանը գրում էր, անդրադառնալով նաև հայ ժողովրդի կյանքում նրա դերին, բացատրելով հայ ժողովրդի վիճակի ու նրա ազատագրության հարցերը։ Ալ. Մյասնիկյանը հանդես է եկել Վ. Ի. Լենինի «Պետությունը և հեղափոխությունը» գրքին նվիրված հայերեն հատուկ հոդվածով։ Այդ աշխատությունը,—գրել է Մյասնիկյանը,—«Ռևոլյուցիայի և կոմունիզմի բանալին է», «Կապիտալ»-ից հետո մարդկային մտքի մեծագույն ստեղծագործությունը, որը հայ ընթերցողին է տրամադրվում այն ժամանակ, երբ Հայաստանը «տքնում էր հայ ու եվրոպական ենիչերիների դժնդակ լծի տակ»[3]։

1920 թվականի դարունն էր։ Լեհական սպիտակ բանակները և Վրանգելի բանդաները հարձակման էին անցել Սովետական Ռուսաստանի, Սովետական Բելոռուսիայի և Սովետական Ուկրաինայի վրա։ Արևմտյան ռազմաճակատը առաջնակարգ նշանակություն ուներ, այնտեղ պետք է վճռվեր Մոսկվայի պաշտպանության բախտը։ Վ. Ի. Լենինը ռազմաճակատ է ուղարկում պարտիայի ռազմական ակտիվոր աշխատողներին, որոնց շարքում և Ալ. Մյասնիկյանին, թողնելով նրան նաև Մոսկվայի քաղաքային և նա-

---

[1] Ա. Ֆ. Մյասնիկյան, *Իմ հանդիպումները ընկեր Լենինի հետ*, էջ 15։

[2] Տե՛ս Ա. Մյասնիկյան, *Ընտիր երկեր*, 1957, էջ 265։

[3] Նույն տեղում, էջ 272։

հանգական կոմիտեի քարտուղարի պոստում։ Արևմտյան ռազմաճակատում մղված մարտերի քաղաքական ղեկավարությունն ապահովելու գծով Ալ. Մյասնիկյանը պատվով է կատարում Վ. Ի. Լենինի առաջադրանքը։

Նվիրական խորը զգացմունքներով էր խոսում Ալ. Մյասնիկյանը Մոսկվայում Վ. Ի. Լենինի հետ աշխատելու, նրանից սովորելու մասին. «Ես անչափ երջանիկ եմ և մինչև կյանքիս վերջը կհպարտանամ,— ասում էր Ալեքսանդր Ֆեոդորովիչը,— որ եղել եմ Վ. Ի. Լենինի ժամանակակիցը, անձամբ ծանոթ եմ եղել, խոսել եմ հետը, սեղմել եմ նրա ձեռքը, մոտ եմ եկել, շրջագայել նրա հետ միասին, եղել եմ այդ հսկայի, մեր ժամանակի հանճարի հետևորդն ու փոքր աշակերտը»[1]։

Վ. Ի. Լենինի կերպարով ոգեշնչված և քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում աչքի ընկած զորահրամանատարների շարքում էին Գասպար Ոսկանյանը, Հայկ Բժշկյանը, Գրիգոր Խախանյանը և ուրիշներ։

Գասպար Կարապետի Ոսկանյանը քաղաքացիական կռիվների քաջարի հրամանատարներից մեկն է։ Կյանքի ալիքը նրան նետում է Հարավային Ռուսաստանի տարբեր մարզերն ու քաղաքները՝ Գրիգորիուպոլ, Բենդերի, Օդեսա, Քիշնև աշխատում է և ապրուստի միջոցներ հայթայթում։ 1908 թ. նա ընդունվում է Քիշնևի պահեստի գունդը որպես սան, ավարտում է գնդի դպրոցը, հետո ուղարկվում Անդրկովկաս։ Այստեղ նա սովորում է Թիֆլիսի զինվորական դպրոցում և ավարտելուց հետո 1914 թվականին պոդպորուչիկ Ոսկանյանը արդեն ավստրո-գերմանական ռազմաճակատումն էր, նախ որպես վաշտի, հետո գումարտակի հրամանատար, կռվվում է մարտերի մեջ, շորս անգամ վիրավորվում, դարձյալ շարք մտնում։

Ռևոլյուցիայի օրերին Ոսկանյանը արդեն Գեորգիևյան լրիվ ասպետ էր, կրում էր չորս շքանշան, ուներ ենթադնդապետի կոչում[2]։ Նա հակված էր դեպի ռևոլյուցիոն զինվորները, նրանց հետ միասին ողջունում է Լենինի դեկրետները հողի և հաշտության մասին։ 1918 թվականին Ոսկանյանը զորացրվելով հին բանակից, ժամանում է Մոսկվա, քաղաքի զինվորական կոմիսարի տրամադրության տակ, որտեղ նրան նշանակում են քաղաքային շրջանի Զին-

---

[1] «Հին բոլշևիկների հիշողություններ», էջ 17։

[2] Տե՛ս Մոսկվայի Քաղաքային զինվորական Կոմիսարիատ, գեներալ-լեյտենանտ Գ. Ոսկանյանի անձնական գործը։

ֆորական Կոմիսարիատի պետ։ Գասպարը ակտիվ մասնակցություն է ունենում Կարմիր Բանակի զորամասերը համալրելու, Մոսկվայի կայազորի ջոկատների մարտական-քաղաքական ուսուցումը կազմակերպելու գործին։

Ոսկանյանը մի քանի անգամ տեսնում է Վ. Ի. Լենինին և լսում նրա ճառերը։ Նրա վրա առանձնապես ուժեղ էր ազդել հունիսի 21-ին Սոկոլնիկի ակումբում Լենինի արտասանած ճառը, որի մեջ խոսվում էր հայրենի Կովկասի մասին, թուրքերի և Կովկասի հակահեղափոխական ուժերի գործարքի մասին։ Վ. Ի. Լենինը նշել էր, որ այդ օրերին Արևելյան ռազմաճակատում է որոշվում Սովետական երկրի պաշտպանության բախտը, կոչ անելով հայրենիքը պաշտպանելու մեկնել Արևելյան ռազմաճակատ։

Գասպար Ոսկանյանը շատերի հետ միասին արձագանքեց առաջնորդի կոչին և կամավոր մեկնեց Արևելյան ռազմաճակատ։ Ռազմաճակատում էլ նա մտնում է ՌԿՊ-ի շարքերը։ 1918 թ. նոյեմբերի 27-ին նրան նշանակում են պատմական 25-րդ դիվիզիայի հրամանատար, որտեղ Վ. Չապաևը բրիգադի հրամանատար էր։ Ոսկանյանը դիվիզիայի մարտիկների հետ ունեցած զրույցների ժամանակ պատմում էր Մոսկվայի մասին, Վ. Ի. Լենինի ճառերի և կոչերի մասին։ Նա բարձրացնում է դիվիզիայի մարտունակությունը, հմտորեն ղեկավարում զորամասի գործողությունները։

1919 թ. հունվարն էր։ Կատաղի կռիվներ էին տեղի ունենում կարմիր զորքերի և Ուրալի սպիտակ կազակների միջև։ Ուրալսկ քաղաքի շրջանում մղված մարտերում դիվիզիայի հրամանատար Գասպար Ոսկանյանը վիրավորվում է և փոխադրվում բուժման։ Դիվիզիայի հրամանատարի պոստում առաջադրվում է Վ. Չապաևը։

Կազդուրվելուց հետո վերադառնալով զորակայան, Ոսկանյանը նշանակվում է նոր ձևավորվող 49-րդ դիվիզիայի հրամանատար։ Շուտով այդ զորամասը մարտի է մտնում Չապաևի 25-րդ դիվիզիայի հետ կողք-կողքի։ Մարտում զոհվում է լեգենդար Չապաևը։ Գասպար Ոսկանյանը նորից նշանակվում է 25-րդ դիվիզիայի հրամանատար։ Կոլչակյան բանդաների դեմ մղված ճակատամարտերում Ոսկանյանը հանդես է բերում ռևոլյուցիոն զորահրամանատարի մեծ հմտություններ։

1919 թ. հոկտեմբերի 8-ին Գ. Կ. Ոսկանյանը նշանակվում է 4-րդ բանակի հրամանատար[1], այդ պոստից ռազմաճակատի հրա-

---

1 ՍԲԿՊԱ, ֆ. 184, ց. 3, գ. 146, թ. 20։

մանատար փոխադրված Մ. Վ. Ֆրունզեի փոխարեն։ 4-րդ բանակի հրամանատարի պաստում աշխատելու ժամանակամիջոցում (1919 թ. երկրորդ կեսին և 1920 թվականի առաջին ամիսներին) Ոսկանյանը մի քանի անգամ անձամբ դիրեկտիվներ և ցուցումներ է ստանում Վ. Ի. Լենինից և հաջողությամբ կատարում կառավարության առաջադրանքները։ Ոսկանյանի հետ ձեռք ձեռքի տված կռվում էին բանակի ռազմական խորհրդի անդամ Զուլը, շտաբի պետ Դուբովը, քաղբաժնի պետ Վոյտիկը, շտաբի կոմիսարներ՝ Բարանովը, Տարտա՛լովսկին և ուրիշներ։

1919 թ. դեկտեմբերի սկզբներին բանակը հաղթանակով ավարտում է թշնամու ջախջախումը և վերկացում ռազմաճակատի հրամանատարին Ուրալյան ֆրոնտի լիկվիդացման մասին։ Դեկտեմբերի 7-ին Վ. Ի. Լենինը դիրեկտիվ է ուղարկում 4-րդ բանակի հրամանատար Ոսկանյանին բանակի զորքերի միջոցով «Ուրալի մարզի բնակչությանն օգնություն ցույց տալու մասին»[1]։ Ոսկանյանը չդիտեր ոչ դադար, ոչ հանգիստ։ Թևավորված մեծ առաջնորդի ցուցումով, նա կարճ ժամանակում բանակի զորամասերի մի մասը վերակազմում է աշխատանքային բանակի և ուժերի մեծ լարումով աշխատում քայքայված քաղաքային տնտեսության, երկաթուղու, գյուղի վերականգնման օժանդակելու բնագավառում։ Ոսկանյանի մարտական սխրագործությունները լրացվում են նաև աշխատանքային սխրագործություններով։

Ռազմաճակատի հրամանատար Մ. Ֆրունզեն բազմաթիվ հրամաններ է հղել չորրորդ բանակի հրամանատարին և զորքերին։ 1920 թվականի հունվարի 25-ին Ֆրունզեն գրել է. «1920 թ. հունվարի 5-ին 4-րդ բանակի զորքերը, Ոսկանյանի ընդհանուր հրամանատարությամբ, գրավեցին Գուրև քաղաքը — Ուրալի կազակության վերջին հենարանը»[2]։ Մի այլ հրամանում Ֆրունզեն գրել է. «Ուրալյան ռազմաճակատը լիկվիդացված է», «սրտանց շնորհավորում եմ հերոսական 4-րդ բանակի զորքերին և նրանց փառապանծ հրամանատարությանը։ Ոչ մատակարարման պակասությունները, ոչ անապատներում և ամայի վայրերում մղվող պայքարի դժոխային պայմանները, ոչ տիֆի սարսափելի տարածումը, որը մեր շարքերից տարավ հարյուրավոր և հազարավոր աղնիվ ռազմիկների, չկանգնեցրին նրանց սրընթաց հարվածը։ Գուրևը

---

1 ՍՐԿՊԱ, ֆ. 184, գ. 149, թ. 105։

2 Տե՛ս Մ. Վ. Ֆրունզե, Ընտիր երկեր (ռուս.) հատ. 1, Մ., 1957, էջ 297։

գրավված է և կարմիր դրոշը վեհորեն նայում է Կասպից ծովի ալիքներին»[1]: Ֆրունզեի հրամանը ավարտվում է ուռա բացականչությամբ ի պատիվ 4-րդ բանակի քաջարի զորքերի և նրանց փառապանծ հրամանատար Գասպար Ոսկանյանի:

1920 թվականի հունիսի սկիզբն է: Հարավ-արևմտյան ռազմաճակատում կատաղի մարտեր են մղվում Կիև քաղաքի ազատագրման համար, որտեղ նստած էին լեհական 3-րդ բանակի զորքերը: Հեծյալ բանակի ջանքերը խորը թևանցումով գրավել Կիևը վերջանում են ապարդյուն: Այդ մասին ռազմաճակատի դեկավարությունը զեկուցում է Վ. Ի. Լենինին և Ռազմա-հեղափոխական խորհրդին[2]: Որոշվում է Կիևը ազատագրելու համար որպես գլխավոր հարվածի ուժ մարտի մեջ մտցնել 12-րդ բանակը, նրան տրված լրացուցիչ ուժերով: Հունիսի 7-ին հարավ-արևմտյան ռազմաճակատի հրամանատար Եգորովը Ռազմա-հեղափոխական խորհրդի անդամները և շտաբի պետ Պանկրատեևը ստորագրեցին հրաման՝ 12-րդ բանակի հրամանատար Մեժենինովին ետ կանչել գլխավոր հրամանատարության տրամադրության տակ, իսկ 12-րդ բանակի հրամանատար նշանակել 4-րդ բանակի հրամանատար Գասպար Ոսկանյանին[3]: Բանակի ռազմական խորհրդի անդամն էր հին բոլշևիկ Սիմոն Արալովը:

Հարավ-արևմտյան ռազմաճակատի հրամանատարությունն ամեն օր զեկուցում էր Վ. Ի. Լենինին Կիևի ազատագրման համար կատարվող աշխատանքի մասին և ստանում դիրեկտիվներ: Հարավ-արևմտյան ռազմաճակատի հրամանատարը 1920 թ. հունիսի 8-ին հրաման է հղում 12-րդ բանակի հրամանատար Ոսկանյանին. «Լեհական ռազմաճակատում ստեղծված իրադրությունը պահանջում է, որ ինչ գնով ուզում է լինի 12-րդ բանակի ճակատում հարձակում սկսել Կիևի հյուսիսային թևում»[4]: Բանակին տրամադրվում են նոր ուժեր. նշվում է, որ 13 և 14-րդ բանակները կատարում են օժանդակ առաջադրանքներ, իսկ գլխավոր հարվածը հասցնում է 12-րդ բանակը:

Կիևի էպոպեան տևեց մինչև հունիսի 11-ը: Եռօրյա հերոսամարտ էր դա, որը վերջացավ փայլուն հաջողություններով: Դենիկ-

---

1 Մ. Վ. Ֆրունզե, *Ընտիր երկեր* (ռուս.), հատ. 1, էջ 278:
2 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 3, ց. 1, գ. 1672, թ. 1, 2:
3 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 3, ց. 1, գ. 1683, թ. 1:
4 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 3, ց. 1, գ. 1686, թ. 1, 2:

ի անցման դեսանտային գործողությունների ղեկավարումը, Կիևի հյուսիսից հարձակումն ու քաղաքի թևանցումը, լեհական 3-րդ բանակի շրջապատումն ու Պիլսուդսկու սպիտակ գեներալների կապիտուլյացիան ավարտվեցին 12-րդ բանակի լիակատար հաղթանակով։ Հունիսի 11-ին ուղիղ հեռագրագծով Մոսկվա Կրեմլ Լենինին հաղորդվում է ռազմաճակատի հրամանատարի զեկույցը՝ «Այսօր Կիևը գրավվել է մեր զորքերի կողմից»[1]։ Այնուհետև Կիևից Մոսկվա Ռազմա-ռևոլյուցիոն խորհուրդ, «Պրավդա»-ի խմբագրություն էին թռչում հեռագրերը Կիևն ազատագրելու մասին։ Կիևի էպոպեայի հերոսների մեջ հիացմունքով նշվում էր Ոսկանյանը։

Սովետական կառավարությունը բարձր գնահատեց Կիևի ազատարարների սխրագործությունը։ Նրանց թվում և Գասպար Ոսկանյանը պարգևատրվեց մարտական Կարմիր դրոշի շքանշանով։

1920 թ. նոյեմբերն էր։ Ոսկանյանը Մոսկվայում սովորում էր Ռազմական Ակադեմիայի կարմիր հրամանատարների կուրսերում։ Կարմիր հրապարակում զորահանդես էր։ Ամբիոնի վրա էր Վ. Ի. Լենինը իր զինակիցների հետ։ Խրոխտ շարքերով Կարմիր հրապարակ են մտնում ռևոլյուցիոն Կարմիր զորքերը, նրանց առջևից գնում էր Գասպար Ոսկանյանը։

Գայի–Հայկ Դմիտրիի Բժշկյանի մասին շատ պատմություններ են հյուսվել։ Գայը գրքեր և հոդվածներ է գրել իր ղեկավարած մարտերի մասին։

Հայկ Բժշկյանն իր պատանեկական շրջանում դաստիարակվել է հայկական միջավայրում, սկզբից սովորել է Թավրիզի հայկական «Արամյան» դպրոցում, այնուհետև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։

Համաշխարհային պատերազմի տարիներին Գայը Թիֆլիսում մտնում է կամավորական խմբի մեջ և մեկնում ճակատ մինչև Փետրվարյան ռևոլյուցիան։

Դեռևս 1918 թվականի սկզբներին Գայը Սամարղանդում գտնված ժամանակ հայ և այլազգի երիտասարդներից կազմակերպում է կարմիրգվարդիական ջոկատ և ներկայանում քաղաքի ռևկոմին, որն այդ ջոկատն ուղարկում է Բուխարայի էմիրության դեմ կռվելու[2]։

1918 թվականի ապրիլին Գայն արձագանքելով Վ. Ի. Լենինի կանչին դեպի Արևելյան ճակատ մեկնելու և ռևոլյուցիայի նվա-

---

1 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 3, ց. 1, գ. 1712, թ. 1։

2 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. Ի, գ. 429, թ. 29։

ճումները պաշտպանելու մասին, կամովին ժամանում է Սամարա և ներկայանում Նահանգական ռևկոմին[1], որի նախագահը Վալերիան Կույբիշևն էր։ Սամարայում ստեղծվել էին կոմունիստական մարտական դրուժինաներ և բանվորական կարմիրգվարդիական ջոկատներ։ Այդ ջոկատները միացվում են մեկ ընդհանուր ջոկատի մեջ, որի հրամանատարությունը հանձնարարվում է Գային։ Սկսվում է Գայի քաջագործությունների շարանը։ 1918 թվականի կեսերին Գայն արդեն դիվիզիայի հրամանատար էր։ Գայի դիվիզիայում գնդի հրամանատար էր Միխայիլ Վելիկանովը, իսկ զինկոմ՝ Նիկոլայ Շվերնիկը։ Սեպտեմբերի 12-ին «երկաթյա դիվիզիան» ազատագրում է Սիմբիրսկը։ Գայը հեռագիր է կազմում զինվորների կողմից և ուղարկում է Վ. Ի. Լենինին, որին էսեռները վիրավորել էին։ «Թանկագին Վլադիմիր Իլյիչ։ Ձեր հարազատ քաղաքի գրավումը դա Ձեր մի վերքի պատասխանն է, իսկ մյուս վերքի պատասխանը կլինի Սամարան»[2]։

Վ. Ի. Լենինը 1-ին բանակի քաղաքական կոմիսար Վ. Կույբիշևի անունով զինվորներին պատասխանում է հեռագրով, որում ասված է. «Սիմբիրսկի՝ իմ հայրենի քաղաքի գրավումն ամենաբուժիչ, ամենալավ վիրակապն է իմ վերքերի վրա։ Ես չտեսնված կայտառություն և ուժ եմ զգում։ Շնորհավորում եմ կարմիրբանակայիններին հաղթանակի առթիվ և բոլոր աշխատավորների անունից շնորհակալություն եմ հայտնում նրանց բոլոր զոհողությունների համար»[3]։

Դիվիզիան պարգևատրվում է Կենտգործկոմի Կարմիր դրոշով։ Երկաթյա դիվիզիայի պետ Գայը զինկոմներ Լիվշիցի և Պանովի հետ հեռագիր են ուղարկում Վ. Ի. Լենինին և Կենտգործկոմին արտահայտելով իրենց շնորհակալական սրտարուխ զգացումները[4]։

Գումարվում է զինվորների և Սիմբիրսկ քաղաքի բնակիչների միտինգը։ Ընթերցվում է Վ. Ի. Լենինի հեռագիրը։ Բոլորը ցնծության մեջ են։ Բանակի ռազմական կոմիսար Վ. Կույբիշևը գրում է. «Երախտապարտ ու հուզված ամբոխով շրջապատված Գայը ջանում էր ճառ արտասանել։ Թեպետ նա սովորաբար բավական լավ էր խոսում ռուսերեն, բայց այդ ժամանակ հուզմունքից

---

1 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 429, թ. 16։
3 «Известия», № 199, от 14 сентября 1918 г.
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 102։
4 ՍՐԿՊԱ, ֆ. 157, ց. 2, գ. 154, թ. 17։

չփոթվել էր, թափահարում էր ձեռքերը և ավարտեց նրանով, որ սկսեց խոսել մայրենի լեզվով՝ հայերեն...»[1]:

Գայի հրամանատարությամբ գործող դիվիզիան հաջող մարտեր մղեց սպիտակ չեխերի, կուլչակյան զորամասերի և Դուտովի բանդաների դեմ, գրավեց Սիզրանը, Բուզուլուկը, Բելեբեյը, Օրենբուրգը, Ակտյուբինսկը և ուրիշ շատ քաղաքներ[2]:

1918 թ. դեկտեմբերին Գայը նշանակվեց 1-ին ռևոլյուցիոն բանակի հրամանատար[3]: Դենիկինի դեմ մղվող մարտերի ժամանակ Գայը Հարավային ռազմաճակատումն էր, 42-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի պոստում, իսկ լեհական ինտերվենցիայի ժամանակ, 1920 թվականին՝ Արևմտյան ռազմաճակատում, հեծյալ կորպուսի հրամանատար:

Այսպիսով, քաղաքական գործունեությունն սկսելով ցարական սատրապի դեմ տեռորիստական ակտով և գործելով որպես ժողովրդական հայդուկ-պարտիզան, Գայը սոցիալիստական ռևոլյուցիայի օրերին հանդես եկավ որպես հմուտ զորահրամանատար, որը ղեկավարում էր Վ. Ի. Լենինի դիրեկտիվներով, հենվում էր գինվորների մասսայի վրա, մարտի էր գնում նրանց հետ միասին:

Հայկ Բժշկյանի (Գայի) այդ էվոլյուցիան նրա մարքս-լենինյան դաստիարակության արդյունքն էր, Վ. Ի. Լենինի աշխատություններին տիրապետելու, Լենինի գործով առաջնորդվելու արդյունքը:

Քաղաքացիական կռիվներում աչքի ընկած զորահրամանատարների մեջ պատվավոր տեղ է պատկանում նաև Դ. Դ. Խախանյանին:

Գրիգոր Դավթի Խախանյանը, ինչպես ասվեց, որպես պատգամավոր մասնակցել էր Սովետների Համառուսաստանյան 2-րդ համագումարին: Վ. Ի. Լենինի ղեկուցումներով և ելույթներով ոգեշնչված, նա համագումարից հետո ամբողջովին նվիրվում է ռևոլյուցիայի պաշտպանության գործին: Խախանյանը մասնակցում է Պետրոգրադում և Մոսկվայում Կարմիր Գվարդիայի ջոկատների կազմակերպմանը: 1918 թվականի սկզբներից, նրան որպես կոմունիստի ուղարկում են նոր կազմակերպվող Կարմիր Բանակի զորամասերում աշխատելու:

---

1 Կույբիշևի խոսքերը ցիտվում են «Волжские партизаны» գրքի նախաբանից, Ար. Մալխասյանի «Լեգենդար Գայը» գրքույկում տրված թարգմանությամբ, էջ 21:

2 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 429, թ. 12:

3 Նույն տեղում:

Զինվորական կոմիսար Խախանյանը ռազմական ինտերվենցիայի վտանգի օրերին մեկնում է Արևելյան ռազմաճակատ։ Այստեղ նա նշանակվում է բրիգադի հրամանատար և 1918—1919 թթ. մասնակցում է Կոլչակի դեմ մղվող կռիվներին, աչքի է ընկնում հատկապես Օմսկի գրավման համար մղված մարտում, պարգևատրվելով Կարմիր դրոշի շքանշանով[1]։ 1920 թվականին Գ. Խախանյանի բրիգադը փոխադրվում է Արևմտյան ռազմաճակատ և մասնակցում է լեհական պանների լծից Բելոռուսիայի շատ քաղաքների ու շրջանների ազատագրության համար մղված կռիվներին։ Խախանյանը կրկին արժանանում է Կարմիր դրոշի շքանշանի։

Քաղաքացիական պատերազմն ավարտված է։ Խախանյանի բրիգադը փոխադրվում է Պետրոգրադ։ 1921 թ. Կրոնշտադտի խռովության օրերին Վ. Ի. Լենինի առաջադրանքով սառցաշերտի վրայով դեպի Կրոնշտադտ են շարժվում ՌԿՊ X համագումարի պատգամավորները։ Նրանց հետ միասին խռովարարների դեմ է գնում Խախանյանի բրիգադը։ Այստեղ նա կրկին դրսևորում է հրամանատարական հմտություն և Սովետական իշխանությանն անսահման նվիրվածություն։ Խախանյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի 3-րդ շքանշանով և ոսկե անվանական զենքով։

Գրիգոր Խախանյանը հետագայում, մինչև կյանքի վերջը գործում էր որպես բոլշևիկ-լենինյան, մարտական կոմիսար և բարձրաստիճան զինվորական։

Ռուսաստանում հաղթանակած Սովետական իշխանության պաշտպանության-գործում, նրա թշնամիների ջախջախման գործում ռևոլյուցիոն շատ սխրագործություններ է կատարել Գևորգ Աթարբեկյանը։ 1918 թվականին Հյուսիսային Կովկասում Աթարբեկյանն աշխատում էր որպես Արտակարգ հանձնաժողովի նախագահի տեղակալ, ապա՝ նախագահ։ Այստեղ նա կազմակերպում է սպիտակգվարդիական գեներալների և սպաների մեծ խմբի դավադրության ջախջախումը[2]։

1918 թ. վերջերին Աթարբեկյանը նշանակվում է Կասպիական-Կովկասյան ռազմաճակատի հատուկ բաժնի պետ, 1919 թվականին ուղարկվում է Մամոնտովյան ռազմաճակատում կռվող սովետական զորքերի կազմում, որպես հատուկ բաժնի պետ և ռևոլյուցիոն տրիբունալի նախագահ։ Մամոնտովի ճակատի լիկվիդացումից հետո Աթարբեկյանն աշխատում է Մոսկվայում, Հա-

---

[1] Տե՛ս Պաշտպանության մինիստրության արխիվ, գ. 1567995, թ. 1—23։
[2] Մլի ԿՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 1, թ. 10։

մառուսական Արտակարգ հանձնաժողովում որպես բաժնի պետ։ Մոսկվայում նա մասնակցում է մայրաքաղաքի պարտիական-սովետական կյանքին, ներկա է լինում Վ. Ի. Լենինի ելույթներին, ունկնդրում է առաջնորդի ճառերը, Ֆ. Է. Ձերժինսկու հետ աշխատելով, նա սովորում է ռևոլյուցիայի շահերը պաշտպանելու մասին լենինյան դիրեկտիվները։ Հետագայում էլ, ուր որ պարտիան և կառավարությունն ուղարկել է Աթաբեկյանին, նա մնացել է հավատարիմ լենինյանի, անվեհեր ռևոլյուցիոնների բարքությունը վրա։

Ս. Մ. Կիրովը, Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ա. Ֆ. Մյասնիկյանը, որ անձամբ գիտեին Գ. Ա. Աթաբեկյանին ռևոլյուցիոն համատեղ աշխատանքից, նրա մասին խոսել են որպես ամենից առաջ կայուն և փորձված լենինյանի, տեսականորեն պատրաստված, օպերատիվ աշխատանքում կոփված, ռևոլյուցիային մինչև վերջ նվիրված ընկերոջ, որը «հիանալի ադմինիստրատոր և ղեկավար էր. նախաձեռնող, գործունյա»[1]։

Ս. Մ. Կիրովը գրել է. «Առաջին անգամ Աթաբեկյանի հետ ես հանդիպել եմ 1918 թվականին, այն բանից հետո, երբ մենք դժվարագույն կորուստներ կրեցինք Հյուսիսային Կովկասում և, հետապնդվելով հակառակորդի կողմից, Աստրախանի անտառների ավազոտ տափաստաններում թաղում էինք հարյուրավոր վերստեր։ Ես նրա հետ հանդիպեցի Աստրախանում այն պահին, երբ թվում էր, թե ռևոլյուցիայի պարտությունը ամենևին չի սահմանափակվի Աստրախանի ավազուտներով և որ, հավանորեն, հակառակորդը հույս ուներ, թե դանակը կխորտակի սովետական մարմնի ավելի կենսական ու էական տեղերը։ Եվ ահա, ես պետք է ամենայն անկեղծությամբ ասեմ..., որ ավելի աղնիվ, ռևոլյուցիոն գործին ավելի նվիրված մարդ այն ժամանակ չէր կարելի հանդիպել։ Եվ հենց այն պատճառով, որ նա ամենաաղնիվ, բարիս ռևոլյուցիոն իմաստով ամենաանշահախնդիր ռևոլյուցիոն մարդն էր, և հարկավոր է ասել, որ չնայած ամբողջ դժվարությանը... Աթաբեկյանը կարողացավ իր կոմունիստական սրտի մաքրությունը պահպանել մինչև իր կյանքի վերջին օրերը։ Աստրախանի իրադարձություններից հետո մենք նրան տեսնում ենք տարբեր պաշտոններում և տարբեր տեղերում, և միշտ ու ամենուրեք չէր կարելի շնչել ընկ. Աթաբեկյանի աշխատանքի բյուրեղյա մաքրությունը»[2]։

---

1 ՄԻԻ ԿՊԱ, ֆ. 17, ց. 1, դ. 1, թ. 6։

2 «Բակինսկի ռաբոչի», № 68, 1925։

Այսպիսով, 1918—1920 թվականներին, երբ Հայաստանը գտնվում էր օտար զավթիչների և իմպերիալիզմի գործակալ դաշնակների բուրժուա-նացիոնալիստական պարտիայի տիրապետության տակ, Հայաստանից փախած կամ գաղթած հազարավոր հայ աշխատավորներ Ռուսաստանում ոչ միայն ապաստարան էին որոնում, այլև Սովետական Ռուսաստանը համարում էին իրենց հայրենիքը և նվիրվել էին նրա պաշտպանությանը։

Հայ ռևոլյուցիոն գործիչների, զորահրամանատարների և շարքային մարտիկների կատարած սխրագործությունները, շատ-շատերի թափած արյունը նորից ու նորից ցույց տվեցին հայ ժողովրդի լիակատար համերաշխությունը ռուս ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների հետ, հաստատեցին հայ աշխատավորների համակրանքը դեպի սոցիալիստական ռևոլյուցիան և նվիրվածությունը սովետական նոր կարգերին։

Հայ ժողովրդի զավակների կյանքում կատարված այդ հոգևոր հեղաշրջումը տեղի ունեցավ Վ. Ի. Լենինի գաղափարների ազդեցության տակ։ Վ. Ի. Լենինը, նրա գլխավորած պարտիան և կառավարությունը վերադաստիարակեցին հայ ռևոլյուցիոն գործիչների սերունդները, նրանց ներգրավելով նոր հասարակության հաղթանակի համար մղված պայքարի մեջ։

* * *

Առանձին ընկերների մոտ երբեմն տարակուսանք է առաջ գալիս, թե կարելի՞ է գրել այն հայ գործիչների մասին, որոնք ռևոլյուցիոն պայքարին մասնակցել են Հայաստանի սահմաններից դուրս և անմիջականորեն կապված չեն եղել հայ իրականության հետ։ Մենք գտնում ենք, որ այդպիսի տարակուսանքների հիմք չկա։

Պետրոգրադում թե Մոսկվայում, Կիևում թե Մինսկում, Բաքվում թե Թիֆլիսում հայ գործիչները մասնակցելով ռևոլյուցիայի հաղթանակի համար մղված մարտերին, միաժամանակ պայքարում էին հայ ժողովրդի ազատագրության համար։ Բոլշևիկների պարտիան—ասված է ՍՄԿՊ պատմության դասագրքում—իր մեջ էր առել Ռուսաստանի բոլոր ազգությունների աշխատավոր դասակարգերի լավագույն տարրերը, նրանցից դաստիարակել էր սոցիալիզմի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի գործին նվիրված այնպիսի ռևոլյուցիոներներ, ինչպիսիք էին Ֆ. Ա. Սերգեևը (Արտյոմը), Գ. Ի. Պետրովսկին. Վ. Յա. Զուրաբը, Ա. Գ. Շլիխտերը—

Ուկրաինա՝ Մ. Ազիզբեկովը—Ադրբեջան, Ա. Ֆ. Մյասնիկովը (Մյասնիկյան), Ս. Գ. Շահումյանը՝ Հայաստան, Պ. Ա. Ջափարիձեն, Ֆ. Ի. Մախարաձեն, Գ. Կ. Օրջոնիկիձեն, Մ. Գ. Ցիռակյան՝ Վրաստան, Պ. Ի. Սաուչկին՝ Լատվիա, Վ. Ս. Միցկյավիչյուս-Կապսուկասը՝ Լիտվա և այլն[1]։

Գոհունակությամբ պետք է նշել ծովակալ Ի. Ս. Իսակովի կողմից այդ հարցի բացատրությունը, որ նա ավել է վերջերս լույս տեսած Արմո Մալխասյանի «Սովետական բանակի հայ գործիչները» գրքի իր գրած առաջաբանում։ Իսակովը ընդգծել է, թե «Հայաստանցին Սոցիալիստական Հայրենիքի սահմանը համարում էր ոչ միայն Արաքսը, այլև այն բոլոր վայրերը, որտեղով անցնում էին Սովետական Միության սահմանագծերը»[2]։ Այնուհետև, «Կարելի՞ է արդյոք նացիոնալիզմ համարել, երբ խոսում ենք այն ժարգոնից մասին, ովքեր, ինչպես Մյասնիկյանը, իրենց ձիրքի և ընդունակությունների շնորհիվ դարձան միութենական մասշտաբի գործիչներ և նրանց ավանդը սոցիալիզմի շինարարության գործում նույնչափ հարկավոր եղավ ռուսներին, ուկրաինացիներին և բելոռուսներին, որչափ և հայերին»[3]։

Հայ ժողովրդի զավակները հաստատ համոզված էին, որ ռուսական ռևոլյուցիան ազատություն բերելով բովանդակ երկրի աշխատավորներին, արմատական շրջադարձ էր ստեղծելու նաև հայ ժողովրդի կյանքում։ Հետևաբար, Ռուսաստանում սովետական կարգերի հաղթանակի և ամրապնդման համար պայքարը միաժամանակ պայքար էր հայ ժողովրդի ազատագրման համար։ Առանց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի հաղթանակի, առանց ՌՍՖՍՌ-ի ռազմա-քաղաքական օգնության, հայ ժողովուրդը չէր կարող ազատագրվել իմպերիալիզմի ճիրաններից, չէր կարող նվաճել անկախություն և ստեղծել սովետական պետականություն։

Ուստի, Ռուսական ռևոլյուցիայի բարիկադների վրա կռվող մարտիկները միաժամանակ հանդիսանում էին Հայկական ՍՍՌ-ի ստեղծման համար պայքարող մարտիկներ։

---

[1] Տե՛ս «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի պատմություն», Մ., 1959, էջ 310։

[2] Հովհաննես Իսակով, «Առաջաբան», տե՛ս Արմո Մալխասյանի «Սովետական բանակի հայ գործիչները» գիրքը, Երևան, 1963, էջ 9,10։

[3] Նույն տեղում, էջ 10։

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՍՏԵՂԾՄԱՆ, ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

(1920—1924)

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՈՆԵՎՈԼՅՈՒՑԻՈՆԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱԽՏԻ ՄԵՋ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՍԿԻԶԲԸ

Վ. Ի. Լենինը դեռևս 1917 թ. ապրիլին, տարագրությունից վերադառնալով առաջ քաշեց Սովետական ռեսպուբլիկա ստեղծելու ծրագրային լոզունգի կոնկրետ իրականացման հարցը, որի մասին ասվեց նախորդ բաժնում։ «Ոչ թե պառլամենտական ռեսպուբլիկա,— Բ. Դ. Սովետներից դեպի դրան վերադառնալը կլիներ մի քայլ դեպի ետ,— այլ բանվորների, բատրակների և գյուղացիների դեպուտատների Սովետների ռեսպուբլիկա ամբողջ երկրում, վարից մինչև վեր»[1]։

1917 թվականի հունիսին Վ. Ի. Լենինն առաջին անգամ արտահայտել էր հայկական անկախ ռեսպուբլիկա ստեղծելու միտքը։

Հայկական անկախ ռեսպուբլիկա ստեղծելու հարցն ավելի հստակ և ուղղակի ձևակերպում ստացավ Վ. Ի. Լենինի գլխավորած ժողկոմսովետի 1917 թ. դեկտեմբերի 29-ի «Թուրքահայաստանի մասին» դեկրետում։

Համառուսական Սովետների III համագումարը 1918 թ. հունվարի 12-ին լիովին հավանություն տվեց Ժողովրդական Կոմիսարների Սովետի քաղաքականությանը «Հայաստանի ազատ ինքնորոշման» մասին։ Այսպիսով, Վ. Ի. Լենինի գլխավորած Ժողկոմսովետը 1917 թ. վերջերին և Համառուսական Սովետների III համագումարը 1918 թ. սկզբներին հռչակեցին Հայաստանի ազատ ինքնորոշման, հայկական անկախ Սովետական ռեսպուբլիկա ստեղծելու ծրագիրը։

---

[1] «Պրավդա», 7 ապրիլի 1917 թ., (Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 24, էջ 6)։

* * *

Սակայն Անդրկովկասի բուրժուական պարտիաները և նրանց հովանավորող իմպերիալիստական պետությունները ձգտում էին ճնշել աշխատավորների ռևոլյուցիոն շարժումների հետագա ծավալումը և Հայաստանում, Վրաստանում ու Ադրբեջանում հաստատել բուրժուազիայի դիկտատուրա, ստեղծել իմպերիալիստական երկրներից կախման մեջ գտնվող բուրժուական մարիոնետային ռեսպուբլիկաներ։

Վ. Ի. Լենինը սկզբից ևեթ մերժում էր բուրժուական ռեսպուբլիկա ստեղծելու ծրագիրը, քննադատում էր դաշնակների, մուսավաթականների և մենշևիկների գործելակերպը, բացասաբար էր վերաբերվում օտարերկրյա իմպերիալիստների Անդրկովկաս հրավիրելու դաշնակցական-մենշևիկյան և մուսավաթական պահանջներին, այդ քայլը համարելով դավաճանություն և ապստամբություն՝ ընդդեմ Սովետական Ռուսաստանի և տեղական աշխատավորական մասսաների։ Սակայն Կովկասյան բուրժուազիան, այդ թվում հայկական բուրժուազիան և նրա «դաշնակցություն» պարտիան գնացին հենց այդ ուղիով։

1918 թվականի մայիսի 28-ին Հայաստանը հայտարարելով «ինքնուրույն հանրապետություն», դաշնակցություն պարտիան անցավ իշխանության գլուխ, դարձավ կառավարող պարտիա։

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի անկախության անվան տակ այնտեղ ազգային բուրժուազիան դաշինքի մեջ է մտել իմպերիալիստական տերությունների հետ՝ ընդդեմ իրենց երկրների ազգային շահերի։ Համառուսական ԿԳԿ-ի նիստում 1918 թ. հուլիսի 29-ին արտասանած ճառում Լենինը շեշտեց, որ Վրաստանի անկախությունը (նույնը և վերաբերում է Հայաստանին) «վերածվեց զուտ խաբեության», որ իրականում «դա Վրաստանի օկուպացումը և լիակատար զավթումն է գերմանական իմպերիալիստների կողմից, գերմանական ավիոնների դաշինքը մենշևիկյան կառավարության հետ՝ բոլշևիկյան բանվորների ու գյուղացիների դեմ»[1]։ Այդ ելույթի մեջ Լենինը հանգամանորեն վերլուծում է Կովկասի քաղաքական վիճակը, բացահայտում հայկական և մյուս ազգերի բուրժուազիայի դավաճանությունն իրենց երկրի և ազգի շահերին։

Հայաստանում դաշնակցություն պարտիայի ստեղծած բուր-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 8։

ժուական կառավարությունը երկրում իշխում էր 1918 թվականի մայիսից մինչև 1920 թվականի նոյեմբերի վերջերը։ Այդ ժամանակամիջոցում դաշնակցությունը մերժելով Սովետական Ռուսաստանի ռևոլյուցիոն բանվորների և գյուղացիների հետ դաշնակցելու ուղին, նախընտրեց «օրիենտացիաների» մի քաղաքականություն, որն արտահայտվեց նրա դաշինքով թուրքական և գերմանական իմպերիալիստների հետ (1918 թվականին), այն ժամանակ, երբ այդ դիշատիչներն էին ներխուժել Կովկաս՝ Հայաստանին բերելով կողոպուտ, բնակչության անվերջ կոտորածներ. դաշնակների կառավարությունն այնուհետև մերձեցավ Անտանտի պետություններին՝ Անգլիայի, Ամերիկայի և Ֆրանսիայի հետ։ Հայաստանի անկախությունը խաբուսիկ ինքնագոհություն էր։

Վ. Ի. Լենինը նկատի ուներ նաև Հայաստանը և դաշնակներին, երբ Թիֆլիսի մասին խոսելով ասում էր, թե «երբ խնդիրը վերաբերում է դասակարգային շահույթներին, բուրժուազիան հայրենիքը վաճառում է և իր ժողովրդի դեմ ուղղված չարչիական գործարքներ է կնքում ամեն տեսակի օտարերկրացիների հետ»[1]։ Դաշնակները լավ գիտեին, որ իրենք չեն կարող դիմանալ աշխատավորների ռևոլյուցիոն ճնշմանը, եթե դաշինքի մեջ չմտնեն օտարերկրյա ռեակցիոն ուժերի հետ։

Վ. Ի. Լենինը վերլուծելով Ուկրաինայի և Վրաստանի օրինակը, խոսելով Թիֆլիսում հակառևոլյուցիոն ուժերի դավադրության մասին, 1918 թվականի հոկտեմբերի 22-ին ասում էր, որ ազգայնական բուրժուազիան ամենքին վաճառում է իր երկիրը. «Երեկ վաճառում էին գերմանացիներին, իսկ այժմ վաճառում են անգլիացիներին ու ֆրանսիացիներին»[2]։ 1919 թվականին Հայաստանում տեր ու տնօրինություն էին անում նախ Հասկելի և ապա Հարբորդի միսիաները, ամերիկյան իմպերիալիզմի գործակալները։ Հայաստանում տեղի էր ունենում նույնը, ինչ Կովկասի մյուս մասերում և Ուկրաինայում, որը Վ. Ի. Լենինն անվանում էր «կրկնաճուրդ»[3]։ Սակայն բուրժուա-նացիոնալիստական կառավարությունները միայն իրենց երկրների վաճառքով չէին բավարարվում։ Նրանք ակտիվորեն մասնակցում էին նաև սոցիալիստական Ռուսաստանի դեմ մղվող պատերազմին։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 13։

2 Նույն տեղում, էջ 140։

3 Նույն տեղում։

Վ. Ի. Լենինը 1919 թվականի օգոստոսի 28-ին հեռագիր ստանալով ֆիննական ինֆորմացիոն բյուրոյի մի հաղորդագրության մասին, որ 14 պետություն ուժեր են պատրաստում հարձակվել Սովետական Ռուսաստանի վրա, հեռագրի լուսանցքում նշել է արշավանքին մասնակցող պետությունները՝ Անգլիա, ԱՄՆ, Ֆրանսիա, Իտալիա, 5. Ճապոնիա, 6. Ֆինլանդիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա, 10. Լեհաստան, Ուկրաինա, Վրաստան, Ադրբեջան, 14. Հայաստան։

Այսպիսով, դաշնակցություն պատիայի լիդերներից կազմված կառավարությունը Հայաստանը մղեց Սովետական Ռուսաստանի դեմ արշավի դուրս եկած պետությունների շարքը, դրանով իսկ Հայաստանին զրկեց իր ամենառեալ պաշտպանի—Ռուսաստանի օգնությունից։

* * *

Պարտիայի VIII համագումարում ընդունված նոր ծրագրում, ինչպես նաև համագումարում տված իր զեկուցումների մեջ, Վ. Ի. Լենինը անդրադարձել է ազգային հարցին, առաջ է քաշել բուրժուական ռեսպուբլիկաների փոխարեն Սովետական Սոցիալիստական ռեսպուբլիկաներ ստեղծելու ծրագիրը, որպես նախկինում ճնշված ժողովուրդների ազգային և սոցիալական ազատագրության միակ ճիշտ ուղի, որպես այդ ազգերի ինքնորոշման և անկախության հարցի ամենանպատակահարմար լուծում։

ՌԿ(բ)Պ VIII համագումարի դիրեկտիվից և Վ. Ի. Լենինի ցուցումներից ելնելով, ՌԿ(բ)Պ Կենտկոմը և Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունները առաջ քաշեցին Ադրբեջանական, Հայկական, Վրացական բուրժուական ռեսպուբլիկաների փոխարեն Սովետական ռեսպուբլիկաներ ստեղծելու լոզունգը, մի լոզունգ, որը Հայաստանում կիրառելու մասին, ինչպես ասվեց, Վ. Ի. Լենինը որոշակի կարծիք էր հայտնել դեռևս 1917 թվականին։

Սովետական անկախ ռեսպուբլիկաներ ստեղծելու հարցի հետ սերտորեն կապված էր և համապատասխան ռեսպուբլիկաների կոմունիստական կազմակերպությունների կառուցվածքի հարցը։

Հայաստանի Կոմունիստական պարտիան, ինչպես տեսանք, իր գործունեությունը ծավալում էր Սովետական Ռուսաստանում ապրող հայ աշխատավորների մեջ, հրատարակում էր Վ. Ի. Լենինի

աշխատությունները, տպում էր թերթեր, որոնք տարածվում էին ՌՍՖՍՌ-ում, Կովկասում և Հայաստանում[1]։

Հայաստանի Կոմունիստական պարտիան Մոսկվայում գործում էր Հայկական Գործերի Կոմիսարիատի հետ միասին։ Նրա աշխատանքներին ակտիվ մասնակցում էր Հայկական գործերի Կոմիսար Վ. Ավանեսովը։

ՌԿՊ Կովկասյան Երկրային կոմիտեն մերժում էր ՀԿՊ-ն որպես ինքնուրույն կազմակերպություն մնալու անհրաժեշտությունը, Կենտկոմի առաջ հարց էր դրել վերացնել այդ կազմակերպությունը, նրա ներկայացուցիչներին թույլ չէր տալիս միջամտել տեղական պարտիական կազմակերպությունների գործունեությանը։

1919 թվականի հուլիսի 9-ին ՌԿՊ Կենտկոմի կազմբյուրոն քննում է Գ. Վարդանյանի, Գ. Հայկունու, Վ. Երեմյանի ներկայացրած նախագիծը՝ Հայաստանի Կոմունիստական պարտիայի մասին (արձանագրություն 33)։ Կենտկոմը մերժում է այդ նախագծի առաջին կետում մտցված առաջարկը, որի համաձայն Հայաստանի Կոմպարտիան պետք է գործեր անկախ Կովկասյան Երկրային կոմիտեից և անմիջականորեն դիրեկտիվներ ստանար ու հաշվետու լիներ ՌԿՊ Կենտկոմի առաջ և գտնում է, որ քանի գոյություն ունի ՌԿՊ Կովկասյան Երկրային կոմիտե, ՀԿՊ-ն ենթարկվում է նրան։

1919 թ. սեպտեմբերի 19-ին ՌԿՊ ԿԿ-ի կազմբյուրոն քննում է ՌԿՊ «Կովկասյան Երկրային կոմիտեի և ՀԿՊ-ի փոխհարաբերությունների մասին» հարցը։ Ընդունված որոշման մեջ ասված է, որ Հայաստանի Կոմունիստական պարտիա պետք է գոյություն ունենա Հայկական անկախ պետության սահմաններում[2]։

1919 թ. դեկտեմբերի 20-ին ՌԿՊ Կենտկոմի քաղբյուրոն նորից քննում է ՀԿՊ-ի գործունեության հետ կապված հարցը Վ. Ի. Լենինի մասնակցությամբ, որոշվում է լրացուցիչ ուսումնասիրություն կատարել։

1919 թ. դեկտեմբերի 20-ին ՌԿՊ Կենտկոմի քաղբյուրոն նորից քննում է Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների կառուցվածքի հարցը։ Կենտկոմը որոշում է. «Անհրաժեշտ համարել, որ Հայաստանի Կոմունիստական պարտիան գոյություն ունենա որպես տերիտորիալ կազմակերպություն՝ Հայաստանի գո-

---

1 Այդ մասին մանրամասն տե՛ս «Ժիզն նացիոնալնոստեյ» թերթում, № 18, 1919։

2 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 17, «Ս.» գ. 5293, թ. 1։

յություն ունեցող ռեսպուբլիկայի սահմաններում, ենթարկվելով ՌԿՊ Կովկասյան Երկրային կոմիտեին»[1]:

Հայաստանի Կոմունիստական պարտիան, այսպիսով, կարող էր գոյություն ունենալ և պետք է գոյություն ունենար ու գործեր Հայաստանի ռեսպուբլիկայում, գլխավորեր աշխատավորների ռևոլյուցիոն պայքարը դաշնակների ռեժիմը տապալելու համար: Սակայն ստեղծվել էր մի այնպիսի իրադրություն, որ Հայաստանի Կոմունիստական պարտիա կազմակերպությունը գլխավորապես գործում էր Սովետական Ռուսաստանում, նրա ղեկավարներ Գ. Հայկունին, Հ. Հովսեփյանը, Գ. Վարդանյանը և մյուսներն աշխատում էին Հայկական գործերի Կոմիսարիատի կենտրոնական ապարատում և նրա տեղական բաժիններում: Մինչդեռ անհրաժեշտ էր բուն Հայաստանում ծավալել լայնածավալ պարտիական աշխատանք, վերականգնել ջախջախված բոլշևիկյան կազմակերպությունները, համախմբել բանվորներին ու գյուղացիներին, գլխավորել պայքարը դաշնակների դեմ: Ստեղծված պայմաններում Հայաստանի Կոմունիստական պարտիայի հետագա գործունեությունը Սովետական Ռուսաստանի տերիտորիայում չէր համապատասխանում ՌԿ(բ)Պ Կանոնադրությամբ սահմանված կազմակերպական սկզբունքներին և նրանցից բխող խնդիրներին, ուստի Հայաստանի Կոմունիստական պարտիայի ակտիվի հիմնական մասը փոխադրվում է Հայաստան տեղական կազմակերպություններում աշխատելու, որպես պրոպագանդիստներ և կազմակերպիչներ: Անմիջականորեն խնդիր է դրվում Հայաստանի տերիտորիայում գործող պարտիական կազմակերպությունները միավորելու Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի մեջ, որպես ՌԿ(բ)Պ բաղկացուցիչ մասի:

Վ. Ի. Լենինի անմիջական մասնակցությամբ, ՌԿՊ Կենտկոմի Քաղբյուրոն 1920 թ. հունվարի 3-ին քննում է Հայաստանում կոմունիստական կազմակերպությունների աշխատանքի հարցը: Որոշման մեջ նշված է, որ ազգային ռեսպուբլիկաներում անհրաժեշտ է ունենալ ինքնուրույն կոմունիստական պարտիաներ[2]: *Այսպիսով, Վ. Ի. Լենինի անմիջական մասնակցությամբ որոշվում է ռեսպուբլիկաներում կոմունիստական պարտիաներ կազմակերպելու հարցը:*

---

[1] *Տե՛ս Մեկ ԿՊԱ, Հայաստանի Կոմպարտիայի մասին, որոշումների թղթապանակ:*

[2] *Տե՛ս* «Коммунист» *ամսագիրը, № 6, 1962, էջ 84—85:*

Հայաստանում 1920 թ. սկզբներին հաշվվում էր մինչև 1200 կոմունիստ[1]։

1920 թ. հունվարին Երևանում գումարվեց բոլշևիկների անլեգալ կոնֆերենցիա, որը միավորեց Հայաստանի պարտիական կազմակերպությունները և ընտրեց Ռեսպուբլիկական ղեկավար պարտիական կենտրոն ՌԿՊ Հայաստանի Կոմիտե (Արմենկոմ)։ Հայաստանի ռեսպուբլիկայի ներսում ձևավորվեց Հայաստանի Կոմունիստական պարտիայի ղեկավար կորիզ, որն աշխատում էր կոնֆերանսում ընտրված ՌԿՊ Հայաստանի Կոմիտեի (Արմենկոմի) ղեկավարությամբ։ Արմենկոմը, դա հենց ՀԿՊ-ի Կենտկոմն էր. կազմված Հայաստանում աշխատող անդամներից։

* * *

Վ. Ի. Լենինը խոսելով Հայաստանում սովետական կարգերի հաստատման մասին, 1920 թվականին ասում էր, որ «Սովետական իշխանության գաղափարներն ու սկզբունքները մատչելի և անմիջապես իրագործելի են ոչ միայն այն երկրներում, որոնք արդյունաբերական տեսակետից զարգացած են, ոչ միայն սոցիալական այնպիսի հենարան ունեցող երկրներում, ինչպիսին պրոլետարիատն է, այլև այնպիսի հիմք ունեցող երկրներում, ինչպիսին գյուղացիությունն է»[2]։

1920 թ. հունվարին, Դենիկինի ջախջախումից հետո, ստեղծվում է Կովկասյան ռազմաճակատ, Կարմիր Բանակը ազատագրում է Հյուսիսային Կովկասը և մոտենում Անդրկովկասի սահմաններին։ Վ. Ի. Լենինը 1920 թ. մարտի 15-ին ստանում է Կովկասյան Երկրային կոմիտեի դիմումը, որով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Դաղստանի աշխատավորները խնդրում են Սովետական Ռուսաստանին՝ ուղարկել Կարմիր Բանակի զորքերը, օգնություն ցույց տալ Սովետական իշխանության հաստատման համար իրենց մղած պայքարին[3]։

Վ. Ի. Լենինը անմիջապես արձագանքում է Անդրկովկասի ժողովուրդների խնդրանքին։ Մարտի 17-ին Կովկասյան ռազմաճա-

---

1 Տե՛ս «Պրավդա», № 90, 28 ապրիլի 1920 թ.։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 619։

3 Տե՛ս «Պայքար Սովետական իշխանության համար Վրաստանում», ժողովածու (ռուս.), էջ 548—550։

կատի Ռազմահեղափոխական խորհրդին ուղարկած դիրեկտիվի մեջ Լենինը գրում է, որ մեզ համար խիստ անհրաժեշտ է վերցնել Բաքուն, որ ամբողջ ջանքերը ուղղեք այդ խնդրի կատարմանը, այնուհետև, նախապատրաստել տեղական ամուր Սովետական իշխանություն[1]: Լենինը շեշտում է, որ նույնը վերաբերում է նաև Վրաստանին:

Տեղական Սովետական իշխանության նախապատրաստման համար աշխատում էին Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները: Հայաստանում այդ հարցը սուր դրվեց դեռ 1920 թ. հունվարին:

Հունվարյան կոնֆերենցիայի բանաձևում Հայաստանի կոմունիստները հայտարարեցին, որ Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո մարդկությունը կանգնել է երկընտրանքի առաջ՝ կամ բուրժուազիայի հետ, «Ազգերի լիգայի» ղեկավարությամբ, կամ պրոլետարիատի հետ՝ Սովետական Ռուսաստանի և Կոմունիստական Ինտերնացիոնալի ղեկավարությամբ, որոնց առաջնորդում էր Վ. Ի. Լենինը: Բանաձևում ասված է.

«Քաղաքացիական պատերազմը տիրող դասակարգերի դեմ Հայաստանում (ինչպես և Վրաստանում, և Ադրբեջանում) և այդ դասակարգերի կազմակերպած «դաշնակցական» կառավարության դեմ, դաշնակների իշխանության բռնի ռևոլյուցիոն տապալումը Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ամենաառաջին խնդիրն է: Միայն այդ ուղիով մենք կկարողանանք դնել Սովետական իշխանության ամուր հիմքը, միայն այդ ուղիով հնարավոր է մասսաներին փրկել կործանումից»[2]:

Հայաստանի կոմունիստների ամբողջ գործունեությունը 1920 թվականի սկզբներից նպատակադրված էր այդ խնդիրների կենսագործմանը:

1920 թվականի ապրիլին, երբ Ադրբեջանում հռչակվեց Սովետական իշխանություն և Կարմիր Բանակը մոտեցավ Հայաստանի սահմաններին, մայիսին, Հայաստանի աշխատավորների դասակարգային պայքարի նոր փոթորիկ բռնկվեց: Հայաստանում Մայիսյան ապստամբությունը հանդիսացավ դասակարգային պայքա-

---

[1] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 35, *թ. 480 (ընդգծումը մերն է – Ա. Մ.)*:

[2] *Տե՛ս «Հոկտեմբերյան ռևոլյուցիան...» փաստաթղթերի ժողովածուն, էջ 303—304 (ընդգծված է բնագրում)*:

ի բարձրագույն կետը։ Դեռ այդ ժամանակ ռեսպուբլիկայում հայտարարվեց Սովետական իշխանություն, սակայն այն ճնշվեց։

Մայիսյան ապստամբությունը ցույց տվեց, որ հայ ժողովրդի լայն զանգվածները, եթե առաջներում դեռ այս կամ այն չափով հավատում էին դաշնակցության պարտիայի «ազգասիրական» հավաստիացումներին, ճաշակելով դաշնակների կառավարության կիրառած քաղաքականության պտուղները, իրենց կաշվի վրա զգալով դաշնակներին օգնելու եկած իմպերիալիստական դաղութարարների կամայականություններից ստացած վերքերի ցավերը, վերջնականապես երես դարձրին թե մեկից և թե մյուսից։ Հայաստանի աշխատավորները տոգորվեցին Սովետական իշխանության մոտալուտ հաղթանակի գաղափարներով, նրա մեջ տեսնելով իրենց ազատագրման միակ ելքը։

Վ. Ի. Լենինը տեղյակ էր Հայաստանում կատարվող իրադարձություններին։ 1920 թվականի հունիսի 7-ին Ս. Օրջոնիկիձեն Լենինին գրել է, որ Հայաստանում «սկսած Մայիսի մեկից, որն անցավ Կոմունիստական պարտիայի լոզունգի տակ, բանվորագյուղացիական մասսաների առաջ ծառացավ իշխանության հարցը»[1]։ Այնուհետև. Լենինին ուղարկված այդ նամակում մանրամասն նկարագրված են Ալեքսանդրապոլում և մյուս քաղաքներում տեղի ունեցած իրադարձությունները՝ սկսած 1920 թվականի մայիսի 3-ից մինչև վերջերը։ «Կառավարությունը Երևանում ջախջախել է մեր կազմակերպությունը, բանտարկելով բոլոր ընկերներին»,—գրել է Օրջանիկիձեն։ Նամակում խոսվում է «Դահիճ Սեպուհի» արարքների մասին Ալեքսանդրապոլում և Սովետական իշխանության ճնշման մասին[2]։ Այնուհետև հայտնվում է, որ «Հայաստանում հակառևոլյուցիայի ժամանակավոր հաղթանակը խլեց մեր լավագույն հարյուրավոր ընկերների կյանքը... դաշնակների տրիբունալի վճռով մեր լավագույն ընկերներից մի քանի տասնյակ մարդ ընդակահարված են։ Ալեքսանդրապոլում և նրա շրջանում տեղի են ունենում մասսայական գնդակահարություններ։ Ամբողջ Հայաստանում այժմ իշխում է դաշնակ մաուզերիստների մտրակը։ Կենդանի մնացած ընկերները և նրանց ընտանիքները ձերբակալ-

---

[1] Տե՛ս ՄԼԻ. ԿՊԱ, ֆ. 461, ց. 1, գ. 505, թ. 1։

[2] Նույն տեղում։

ված են, Հայաստանի բանտերը լեփլեցուն են կարմիր ապստամբներով և նրանց ընտանիքներով, որոնք ենթարկվում են խոշտանգումների և կողոպտման»։ Ս. Օրջոնիկիձեն խնդրում է Վ. Ի. Լենինին՝ միջոցներ ձեռնարկել, ազդել դաշնակների կառավարության վրա՝ վերջ դնելու կամայականություններին։

Վ. Ի. Լենինն անմիջապես արձագանքեց Կովկասյան բյուրոյի պահանջին։

Մայիսի 7-ին ՌՍՖՍՌ և Վրաստանի միջև հաստատվում են դիվանագիտական հարաբերություններ, կնքվում է պայմանագիր։ Վ. Ի. Լենինը մայիսի վերջերին իր մոտ է կանչում Ս. Մ. Կիրովին, զրույց ունենում նրա հետ։ Կիրովը մայիսի 29-ին նշանակվում է ՌՍՖՍՌ լիազոր ներկայացուցիչ Վրաստանում։ Կիրովը դիրեկտիվներ է ստանում նաև Հայաստանի նկատմամբ Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը կիրառելու մասին, մասնավորապես նրան հանձնարարվում է ազդել դաշնակների կառավարության վրա՝ վերջ դնելու Մայիսյան ապստամբության մասնակիցների նկատմամբ գործադրվող տեռորիստական քայլերին։ Այդ հարցը սուր կերպով դրվում է նաև դաշնակների կառավարության Մոսկվայում գտնվող պատվիրակության առջև։

Հայաստանի կառավարության պատվիրակությունը հրավիրվել էր Մոսկվա՝ ՌՍՖՍՌ Արտաքին գործերի ժողկոմատի հետ բանակցություններ վարելու։ Այդ բանակցությունները տեղի ունեցան մայիս-հունիսին։ Այնուհետև որոշվում է բանակցությունները շարունակել Երևանում։ ՌՍՖՍՌ կառավարությունը նշանակում է դիվանագիտական միսիա։ ՌՍՖՍՌ լիազոր նշանակվեց հին բոլշևիկ-լենինյան Բորիս Լեգրանը, նրա խորհրդականն էր Ս. Տեր-Գարրիելյանը, միսիայի մամուլի և ինֆորմացիայի բաժնի վարիչն էր Աշոտ Հովհաննիսյանը։

Սովետական Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչները Վրաստանում և Հայաստանում կատարելով Վ. Ի. Լենինի դիրեկտիվները, աշխատում էին ազդել դաշնակների կառավարության վրա՝ վերջ դնելու կոմունիստների նկատմամբ կիրառվող տեռորիստական ակտերին. այնուհետև նրանք միջոցներ էին ձեռնարկում դադարեցնելու ազգամիջյան ընդհարումները և կռիվները, խաղաղ կերպով լուծելու բոլոր վիճելի հարցերը[1]։ Ամբողջ 1920 թվականի ընթացքում ինտենսիվ գրագրություն էր տեղի ունենում

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 64, ց. 1, գ. 11, թ. 8։

Վ. Ի. Լենինի, Չիչերինի, Օրջոնիկիձեի, Կիրովի միջև, որի ընթացքում շոշափվել են Հայաստանին վերաբերվող շատ հարցեր։ Բ. Լեգրանի զեկուցագրերը ՌՍՖՍՌ կառավարությանը տեղյակ էին դարձնում հայ ժողովրդի վիճակի մասին, նրա կարիքների մասին։

Վ. Ի. Լենինի դիրեկտիվի հիման վրա Ս. Կիրովը և Բ. Լեգրանը մի քանի անգամ առաջարկ են արել դաշնակների կառավարությանը՝ թույլ տալ ռուսական Կարմիր Բանակի զորամասեր ուղարկել Հայաստանի հարավային շրջանները՝ Կարս—Սարիղամիշ—Սուրմալու—Արարատ սահմանագծում տեղադրելու, թուրքական ներխուժման վտանգը կանխելու նպատակով։ Դաշնակների կառավարության արկածախնդիր քաղաքագետները մերժեցին այդ առաջարկը, երկիրը թողնելով իրենց անկազմակերպ անզոր բանակի հույսին։

Վ. Ի. Լենինը հետևում էր Անդրկովկասում տիրող ունեցող իրադարձություններին և մերկացնում ինչպես Անտանտայի, այնպես էլ թուրքական կառավարությունների նոր արշավանքի պատրաստությունները Սովետական ռեսպուբլիկաների դեմ։

1920 թ. սեպտեմբերին Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա։ Վ. Ի. Լենինը բացահայտեց թուրքական արշավանքի իսկական պատճառները և տվեց Կովկասում կատարվող իրադարձությունների վերլուծությունը։ Խոսելով Սովետական երկրի սահմանամերձ շրջաններում ստեղծված բարդ իրադրությունների մասին, Վ. Ի. Լենինը Մոսկվայի պարտկազմակերպության ակտիվի նիստում 1920 թվականի հոկտեմբերի 9-ին ասել է. «Վերջերս թուրքերը սկսեցին հարձակվել Հայաստանի վրա...»[1]։ Այնուհետև Վլադիմիր Իլյիչը բացահայտում է թուրքերի հակասովետական պլանը։ Թուրքերը հարձակվել են Հայաստանի վրա այն գավթելու, նրա վրայով անցնելու առաջ՝ նպատակ ունենալով գրավել Բաքուն և Բաթումը[2]։

Հայաստանի համար ավելի վճռական օրերին, հոկտեմբերին և նոյեմբերին, երբ թուրքերն արդեն գավթել էին Կարսը, Սարիղամիշը, Կաղզվանը, Ալեքսանդրապոլը, Սուրմալուի ամբողջ գավառը, Նախիջևանը, դրեթե անարգել շարժվում էին դեպի Երևան և սպառնում գավթել երկրի նաև մյուս շրջանները, Վ. Ի. Լենինը չթուլա-

---

[1] «Լենինյան ժողովածու», հատ. 36, էջ 131։

[2] Նույն տեղում։

ցող ուշադրությամբ հետևում էր Հայաստանին վիճակված բախտին և զբաղվում այդ հարցով։

1920 թվականի նոյեմբերի երկրորդ կեսին Վ. Ի. Լենինը հեռագրերով, ուղիղ գծով կապ էր պահպանում Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության և Կենտկոմի անդամների հետ, որոնք գտնվում էին Սովետական Ադրբեջանում և քննարկում Հայաստանում ստեղծված իրադրությունը։ Ուղիղ գծով ստանալով ինֆորմացիա թուրքերի հարձակման և Հայաստանին սպառնացող նոր վտանգների մասին, Վ. Ի. Լենինը պահանջում է կոնկրետ առաջարկներ ներկայացնել անմիջապես Քաղբյուրո մտցնելու համար[1]։ Այնուհետև Լենինն ընդգծում է լրացուցիչ մարտական ուժեր Կովկաս փոխադրելու անհրաժեշտությունը։

Հայ ժողովրդի ծանր վիճակի մասին տարբեր աղբյուրներից տեղեկություններ էին ուղարկվում Վ. Ի. Լենինին։ Հայ աշխատավորների կողմից ուղարկված դիմումների մեջ մի գլխավոր միտք կար՝ շուտափույթ օգնել հայ ժողովրդին և նրան փրկել թուրքական արշավանքից։ Միխա Ցխակայան, որ այդ օրերին աշխատում էր Կոմինտերնի գործկոմում, իր հուշագրությունների մեջ պատմում է, թե ինչպես Հայաստանի աշխատավորների կողմից Մոսկվա ուղարկված «բանաձևերը, կոչերը և դիմումները հասցնվեցին Լենինին»[2], թարգմանվեցին գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն։ Այդ դիմումների և բանաձևերի մեջ աշխատավորները դիմում էին Վ. Ի. Լենինին, ՌՍՖՍՌ կառավարությանը և Կոմունիստների գործկոմին՝ օգնություն ցույց տալ հայ ժողովրդի վճռական քայլին՝ իշխանությունն իր ձեռքը վերցնելու գործում[3]։

Այսպիսով, Վ. Ի. Լենինը զանվում էր Հայաստանում սոցիալիստական հեղաշրջում կատարելու և Հայկական Սովետական ռեսպուբլիկա ստեղծելու համար կատարվող մեծ աշխատանքների գլխավոր դեկի մոտ, ուղղություն էր տալիս այդ աշխատանքին։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմը կատարելով Վ. Ի. Լենինի դիրեկտիվները, նոյեմբերի 28-ին—29-ին Հայաստանում կազմակերպեց աշխատավորների վինված ելույթը՝ դաշնակների կառավարության դեմ, տապալեց այն և երկրի իշ-

---

[1] Տե՛ս Վ. Ի. Լենինի խոսակցությունը Ժապալենի վրա—Արտարին քաղաքականության արխիվ, 1920, ֆ. 4, թղթապանակ 312, գ. 54874 և ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 3, ց. 1, ա. 2004. թ. 1—10։

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան» ԲԵՐԸ, № 272, 1925։

[3] Նույն տեղում։

խանության դեկը վերցնելով իր ձեռքը, հռչակեց Հայկական ՍՍՌ-ն։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմը Սովետական Հայաստանի առաջին կառավարության—Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի կազմում մտցրել էր Վ. Ի. Լենինի գաղափարներով տոգորված, Լենինի գործին նվիրված ռևոլյուցիոն գործիչների՝ Ս. Կասյանին, Ա. Նուրիջանյանին, Ալ. Բեզղատյանին, Ի. Դովլաթյանին, Ա. Մռավյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին։ Ռևկոմը նոյեմբերի 29-ին հրապարակեց դեկլարացիա, որում շարադրված են Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի սոցիալական և քաղաքական ծրագրերի հիմնական սկզբունքները։ Ռևկոմը հրապարակեց կոչ. «Բոլորին, բոլորին, բոլորին»։ Այդ կոչում խոսվում էր Հայաստանի Սովետական ռեսպուբլիկա կազմելու մասին, հայ ժողովրդի համար խաղաղ կյանք նվաճելու, նորմալ աշխատանքի և նյութական բարիքների ստեղծման մասին, երկրի փլուզումը վերացնելու և ծանր վերքերը բուժելու մասին։

Ս. Օրջոնիկիձեն Վ. Ի. Լենինին սիստեմատիկաբար զեկուցում էր Հայաստանում կատարվող իրադարձությունների մասին։ Ուղիղ գծով Մոսկվայի հետ կապվելով, Օրջոնիկիձեն դեկտեմբերի սկզբներին հայտնել է. «Հաղորդեցնք Լենինին, որ Հայաստանում դեպքերը ընթանում են առանց որևէ բարդության... Երևանի բնակչությունը ցնծությամբ ընդունեց (Սովետական) իշխանության հռչակումը»[1]։

Հայկական ՍՍՌ Ռևկոմն իր կողմից և ամբողջ ժողովրդի կողմից նամակ ուղարկեց Վ. Ի. Լենինին, Հայկական Սովետական Ռեսպուբլիկա ստեղծելու մասին։

Հայաստանը Սովետական Ռեսպուբլիկա հռչակելը սիրով ողջունեց Վ. Ի. Լենինը։ ՀՍՍՌ Ռևկոմին ուղարկած պատասխան հեռագրում Լենինը 1920 թ. դեկտեմբերին գրել է.

«Երևան։ Հայաստանի Ռազմական Ռևոլյուցիոն Կոմիտեի նախագահ՝ ընկ. Կասյանին.

Հանձին Ձեզ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին։ Ձեմ կասկածում, որ Դուք կգործադրեք բոլոր ջանքերը՝ Հայաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի աշխատավորների միջև եղբայրական համերաշխություն հաստատելու համար։

Ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ՝ Լենին»[2]։

---

[1] ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 5, գ. 22, թ. 1։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 550։

Հայաստանը վերջնականապես ազատագրվեց իմպերիալիզմի ցանցից, որի մեջ նրան գցել էին հայ ժողովրդի արտաքին և ներքին թշնամիները, ձեռք բերեց անկախություն և ստեղծվեց հայ ժողովրդի ազգային նոր պետականություն, սոցիալիստական պետականություն։ Հայ ժողովուրդը ստեղծեց մի աշխատավորական իշխանություն, որը երկիրը դուրս բերեց նոր ուղու—կոմունիստական ուղու վրա, որը նրան տարավ դեպի լուսավոր ապագան։

Հայ ժողովուրդը կանգնեց ազգային վերածննդի ուղու վրա։ Այդ պատմական հաղթանակին նա հասավ Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ։

1920 թվականի դեկտեմբերի 22-ին Սովետների Համառուսական VIII համագումարում տված իր զեկուցման մեջ Վ. Ի. Լենինը նշեց Արևելքում Սովետական Ռուսաստանի կիրառած քաղաքականության խոշոր հաջողությունները 1920 թվականին. «Մենք պետք է ողջունենք Բուխարայի, Ադրբեջանի և Հայաստանի Սովետական ռեսպուբլիկաների կազմվելն ու ամրապնդվելը, որոնք վերականգնեցին ոչ միայն իրենց լիակատար անկախությունը, այլև իշխանությունը վերցրին բանվորների և գյուղացիների ձեռքը»[1]։

Հայ ժողովուրդը նվաճեց թե ազգային և թե սոցիալական ազատագրություն։

Սկսվեց նոր դարաշրջան հայ ժողովրդի կյանքում, սովետական դարաշրջան, որի դրոշի վրա փողփողում է Մեծ Լենինի կերպարը։

2. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱՍՏԵՂԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻՆ

Հայկական ՍՍՌ-ն, որպես բանվորների և գյուղացիների պետություն, ստեղծվեց ներքին և արտաքին բարդ իրադրության մեջ և կանգնած էր այնպիսի դժվարությունների առաջ, որոնք չէր կարող հաղթահարել միայն իր սեփական ուժերով, առանց ՌՍՖՍՌ-ի Վ. Ի. Լենինի գլխավորած կառավարության օգնության։

Վ. Ի. Լենինը որ հանդիսանում էր Հայկական ինքնուրույն, անկախ սովետական ռեսպուբլիկայի կազմակերպման ոգեշնչողն ու ղեկավարողը, միաժամանակ գլխավորեց պայքարն այդ ռես-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 619։

պուբլիկայի քաղաքական դրության ամրապնդման, նրա պաշտպանությունը կազմակերպելու, նրա տնտեսական և կուլտուրական նոր կյանքի սկիզբը դնելու համար։

Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ ՌՍՖՍՌ կառավարությունը և ՌԿՊ Կենտրոնական Կոմիտեն ամենից առաջ ձեռնարկում են մի շարք անհետաձգելի միջոցառումներ՝ Հայկական ՍՍՌ-ի քաղաքական վիճակն ամրապնդելու և բնակչության առաջին անհրաժեշտության կարիքները բավարարելու համար։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց անմիջապես հետո Վ. Ի. Լենինի գլխավորած Համառուսաստանյան Ժողկոմսովետը ճանաչեց Հայկական ՍՍՌ-ն, նշանակեց իր լիազոր ներկայացուցիչը՝ հանձինս Բ. Լեդրանի, իսկ Հայկական ՍՍՌ կառավարությունը Մոսկվայում հիմնեց իր լիազորությունը՝ լիազոր ներկայացուցիչ նշանակելով ՀԿՊ Կենտկոմի անդամ և ՀՍՍՌ Ռևկոմի անդամ Ս. Տեր-Գաբրիելյանին։

Սովետական Հայաստանի մայրաքաղաքի աշխատավորների միտինգը, որ գումարվել էր դեկտեմբերի 6-ին, ողջույնի հեռագիր է ուղարկում Վ. Ի. Լենինին։ Հեռագրում ասված է.

«Մոսկվա, ընկեր ԼԵՆԻՆԻՆ.

Խիտ ու կուռ շարքերով համախմբվելով կոմունիստական կարմիր դրոշների շուրջը, աշխատավորությունը հանձինս Ձեզ՝ ողջունում է Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդին, հեղափոխություն, որի ալիքները խորտակելով ու ոչնչացնելով բոլոր արգելքները, հասան հեռավոր Հայաստան։ ...Մտնելով խորհրդային հանրապետությունների պրոլետարական ընտանիքի մեջ, մենք հետևում ենք Հոկտեմբերյան հեղափոխության հերոսական օրինակին։ Ունենալով ռուս բանվորների անցյալի փորձը, և առանձին աշխատավորական Ադրբեջանի ու Ռուսաստանի օգնությունը, խորհրդային Հայաստանի երիտասարդ հանրապետությունը համարձակ և անվախ դիմում է դեպի ապագան և բնավ չի կասկածում, որ աշխատանքը վերջնականապես հաղթանակելու է կապիտալին»[1]։

Դեկտեմբերի 13-ին Վ. Ի. Լենինը ընդունում է ՀՍՍՌ Ռևկոմի պատվիրակությունը, որի կազմում մտնում էին ՀԿՊ Կենտկոմի և Ռևկոմի անդամներ Ս. Տեր-Գաբրիելյանը և Ա. Մռավյանը[2]։

---

1 Տե՛ս «Կոմունիստ» թերթը, № 3, 8 դեկտեմբերի 1920 թ., Երևան։
2 ՀՍՍՌ ՀՌԿՊԱ, ֆ. 4/114, ց.1, գ. 31, թ. 70։

«Վլադիմիր Իլյիչ, Հայաստանը Սովետական է,—ասել է Տեր-Գաբրիելյանը,—բայց նա շատ ծանր պայմաններում է գտնվում. չկա պարենն, թուրքերը տիրել են ռեսպուբլիկայի կարևոր մի մասին՝ Ալեքսանդրապոլին։ Երկաթուղին նույնպես գտնվում է նրանց ձեռքում։ Դժվարին պայմաններում է Հայաստանի Ռևկոմն սկսում իր աշխատանքները»[1]։

Վլադիմիր Իլյիչը լսելով Ռևկոմի պատվիրակության հաղորդածը, հայտնում է, որ ինքը ստացել և կարդացել է Կասյանի հեռագիրը՝ Ռևկոմի կազմի մասին, կանգ է առնում Հայաստանում եղած դժվարությունների վրա, նշում է, որ Հայաստանը ռևոլյուցիայի ճակատներից մեկն է։ «Մենք ամեն կերպ կօգնենք հայ ընկերներին, այդ ինքնըստինքյան հասկանալի է»,—ասել է Լենինը։ Հունվարի վերջում Լենինը նորից անդրադարձել է խաղաղություն ձեռք բերելու հարցին, Թուրքիայի հետ բանակցություններ վարելու, երկաթուղին աղատելու մասին, ընդգծել է, որ «մենք ինքներս դժվարին դրության մեջ ենք, բայց Սովետական Հայաստանին կօգնենք ամեն կերպ»[2]։

Վ. Ի. Լենինի հետ Հայռևկոմի անդամների հանդիպման հաջորդ օրը ՌՍՖՍՌ ժողկոմսովետը որոշում է ընդունում Սովետական Հայաստանին օգնություն ցույց տալու մասին։ Այդ որոշման մեջ ասված է.

«Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատին կենտրոնական գրասենյակի նախահաշվով որպես լրացուցիչ վարկ բաց թողնել երեք միլիարդ (3.000.000.000) ռուբլի՝ Հայաստանի Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկային նպաստ տալու համար։

Ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահ՝ Վ. ՈՒԼՅԱՆՈՎ-ԼԵՆԻՆ»[3]։

Այդ որոշումը ՀՍՍՌ-ին հատկացված գումարից երկու միլիարդ, սովետական թղթադրամ, իսկույն տրամադրվում է Ա. Մռավյանին, որը դեկտեմբերի 15-ին Մոսկվայից մեկնում է Երևան և դրամը հասցնում Հայաստանի կառավարությանը, բնակչության առաջին անհրաժեշտության կարիքները հոգալու համար։

---

1 Տե՛ս Ասք. Մռավյանի պատմածը, «Զարյա Վոստոկա» թերթում, 1925, 22/I, № 1084։

2 Նույն տեղում։

3 ՄԻ ԿՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 16518։

Դեկտեմբերի վերջերին Ս. Տեր-Գաբրիելյանը Մոսկվա ժամանած Ս. Կիրովի և Ս. Օրջոնիկիձեի հետ միասին պահանջագիր է ներկայացնում ՌՍՖՍՌ-ի կառավարությանը Հայկական ՍՍՌ-ի համար հաց, արդյունաբերական ապրանքներ և բուժանյութեր տրամադրելու, ինչպես նաև վալյուտա բաց թողնելու համար։ Այդ պահանջները ներկայացվում են Վ. Ի. Լենինին։ Ձանձնարարվում է համապատասխան ժողկոմատներին Հայաստանի պահանջները բավարարելու։

Միայն 1921 թվականի ընթացքում ՌՍՖՍՌ-ից Հայաստանին տրվում է 2.545.000 ռ. ոսկով գումար և մեծ քանակությամբ վառելանյութ, մանուֆակտուրա, պարենամթերքներ, սերմացու և ընակչության համար առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ։ Դա առաջին օգնությունն էր նոր ստեղծված Հայկական ՍՍՌ-ին՝ ոտքի կանգնելու և իր պետական ու տնտեսական շինարարությունը կազմակերպելու համար։ Հետագայում Հայաստանին տրվող նյութական օգնությունն ավելի ընդարձակվեց։

3. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԶԱՎԹԻՉՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ՎՏԱՐՈՒՄԸ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ

Հայկական ՍՍՌ-ի ամրապնդման գործում Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ կիրառված կարևոր միջոցառումներից էին այն դիվանագիտական բանակցությունները, որոնք ձեռնարկել էր ՌՍՖՍՌ-ի կառավարությունը մենշևիկյան Վրաստանի և քեմալական Թուրքիայի հետ, Հայաստանի շահերը պաշտպանելու նպատակով։

Անտանտի պետությունները հայ-վրաց ժողովուրդների եղբայրական դարավոր բարեկամության մեջ սեպ էին խրել, ստեղծելով Լոռու չեզոք գոտին, որտեղ տեր ու տնօրինություն էր անում անգլիական կոմիսարը, իսկ այնուհետև մենշևիկներին հրահրել էին դինված ուժ մտցնել այդ գոտին և զավթել Հայաստանի այդ հատվածը, փակելով երկաթուղային հաղորդակցությունն արտաքին աշխարհի հետ։

Հայկական ՍՍՌ-ի ստեղծումից հետո խնդիր դրվեց մենշևիկյան օկուպացիոն զորքը դուրս բերել Հայաստանի սահմաններից։

Գ. Կ. Օրջոնիկիձեն և Ս. Մ. Կիրովը Վ. Ի. Լենինին ներկայաց-

ցել էին զեկուցագիր Վրաստանի կառավարության հակասովետական գործերի մասին և խնդիր դրել Վրաստանում աշխատավորների զինված ելույթներին աջակցելու, մենշևիկների լուծը տապալելու մասին։ Այդ զեկուցագրում հատուկ շեշտված էր, որ մենշևիկները փակել են Հայաստանի ճանապարհը, հովանավորում են Թիֆլիսում ծվարած հայկական և այլ հակասովետական տարրերին, որոնք դավեր են նյութում Սովետական իշխանության դեմ, որ առանց Վրաստանում սովետական կարգերի հաստատման, Սովետական Հայաստանը մնում է Թուրքական քմահաճույքին ենթակա[1]։

Վ. Ի. Լենինը խորամուխ լինելով հայ-վրացական հարաբերություններին, հանձնարարում է Արտաքին գործերի ժողկոմատին պահանջել մենշևիկների կառավարությունից վերջ տալ Հայկական ՍՍՌ-ի նկատմամբ թշնամական վերաբերմունքին։ Սակայն մենշևիկները հաշվի չէին առնում ՌՍՖՍՌ-ի կառավարության բողոքները։ Վ. Ի. Լենինը ընդունում է Մոսկվայում մենշևիկյան Վրաստանի դեսպան Գ. Երասիմ Մախարաձեին և խոսում Հայաստանի նկատմամբ վրացական իշխանությունների կամայականությունների, ՌՍՖՍՌ-ից Սովետական Հայաստան պարենային գնացքների ուղարկումը արգելակելու մասին և պահանջում է վերջ դնել այդ ամենին։

Բայց մենշևիկների ագրեսիան չափ չէր ճանաչում, մանավանդ որ Հայկական ՍՍՌ-ն համարում էին թույլ և անզոր պետություն։ Վ. Ի. Լենինը հենց այդ մասին էլ ասել է Մոսկվայի սովետի պլենումում արտասանած իր ճառում։ Մենշևիկները մտածում էին, թե «ինչ է Հայաստանը, հայ գյուղացիները և այլն, ինչ է մի բայքայված Սովետական Ռեսպուբլիկա աշխարհի բոլոր միացած իմպերիալիստական տերությունների դեմ։ Առաջավոր կապիտալիստները, — դրանք աշխարհի կուլտուրական ուժերն են. դառնանք դեպի նրանց։ Այդպես են արդարացնում կապիտալիստների պաշտպանությունը կեղտոտ գործը վրացական մենշևիկները։ Վրացական մենշևիկների ձեռքին էր գտնվում հայ գյուղացիությանը միակ երկաթուղով պարենավորելու բանալին[2]։ Վ. Ի. Լենինն ընդգծում է, որ Հայաստանի ու Վրաստանի փոխհարաբերությունները, ընդհարումները «չէին կարող չհուզել մեզ»։ «Ոչ ոք համբերություն չի ունենա

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 80, ց. 14, գ. 68, թ. 1—16։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, թ. 175։

կարգալու այն հեռագրերը, հայտարարություններն ու բողոքները, որ մենք այդ առթիվ փոխանակել ենք Վրաստանի հետ»[1]։

Վ. Ի. Լենինը չթուլացնող ուշադրությամբ հետևում էր Սովետական Հայաստանի և մենշևիկյան Վրաստանի հարաբերությունները կարգավորելու գործին։ Նա քաջ տեղյակ էր, որ Հայաստանի և Վրաստանի կոմունիստները, Կովկասյան բյուրոյի ղեկավարությամբ, զինված ապստամբություն են նախապատրաստում վրացական մենշևիկյան կառավարության դեմ։ «Մենք գիտենք, որ ապստամբությունը Հայաստանում սկսվեց հենց այն շեղոք գոտում, որն ընկած էր Վրաստանի ու Հայաստանի միջև և որը Վրաստանը գրավել է Անտանտի իմպերիալիստների թույլտվությամբ»[2]։ Լենինը խոսում է հայ գյուղացիության հանդես բերած ուռուցիոն ակտիվության և սխրագործության մասին։ «Փետրվարի սկզբին,— ասում է Վլադիմիր Իլյիչը,— սարսափելի ապստամբություն պոռթկաց, որը զարմանալի արագությամբ տարածվեց և ընդգրկեց ոչ միայն հայ բնակչությանը, այլև վրացական բնակչությանը»[3]։ Վ. Ի. Լենինի ցուցումով այդ ապստամբներին օգնելու ուղարկվեցին նաև «ռուս զորքերի մի որոշ մասը»[4]։

Վ. Ի. Լենինը նշելով Վրաստանում սովետական կարգերի հաղթանակի գործում «Վրաստանի բանվորա-գյուղացիական մասսաների ակտիվ և նախաձեռնող դերը», ռուսական Կարմիր Բանակի կողմից նրանց ցույց տրվող օգնությունը, միաժամանակ բարձր էր գնահատում Ադրբեջանական և Հայկական Սովետական ռեսպուբլիկաների մասնակցությունը մենշևիկյան դիկտատուրայի տապալմանը։

Վ. Ի. Լենինը ընդգծեց, որ Վրաստանի մենշևիկյան տիրապետության դեմ ուղղված ապստամբությունն սկսվեց Հայաստանի այն շրջաններում, որոնք օկուպացվել էին մենշևիկյան զորքի կողմից[5]։ Ապստամբության դրոշը բարձրացրեց հայ գյուղացիությունը Լոռվա շեղոք գոտում։ Այնուհետև Լոռվա ապստամբներից կազմվեց առանձին գունդ, որը մտցվեց Կարմիր Բանակի դեպի Թիֆլիս հարձակվող զորախմբի մեջ։ Թիֆլիսի ուղղության զորախմբի մեջ մտցվեց նաև Հայկական հեծյալ բրիգադը իր լրիվ կազմով և զեն-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 175—176։
[2] Նույն տեղում, էջ 175։
[3] Նույն տեղում, էջ 176։
[4] Նույն տեղում, էջ 175։
[5] Նույն տեղում։

քով։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ Սովետական Հայաստանի կառավարության կողմից Վրաստանի ապստամբներին դինված օգնություն ցույց տալը միաժամանակ պետք է դիտել որպես ինքնապաշտպանություն այն ագրեսիվ գործողությունների դեմ, որոնք կատարում էր մենշևիկների կառավարությունը, Թիֆլիսում հովանավորելով դաշնակների «Փրկության Կոմիտեին», Հայաստանում Սովետական իշխանությունը տապալելու համար[1]։

Մենշևիկների դիկտատուրայի տապալումով և Վրաստանում սովետական կարգերի հաստատումով, բարեկամական հարաբերություններ հաստատվեցին Հայկական ՍՍՌ-ի և նոր ստեղծված Վրացական ՍՍՌ-ի միջև։

Վ. Ի. Լենինը շատ ջանքեր է գործ դրել Սովետական Ռուսաստանի և Թուրքիայի միջև նորմալ, բարեկամական հարաբերությունները հաստատելու ուղղությամբ։

Հայկական ՍՍՌ-ի նկատմամբ քեմալական Թուրքիայի ցուցաբերած թշնամանքի և թուրքական զորքերի գործադրած դաժանությունների, մասսայական ջարդերի ու կողոպուտի մասին Հայաստանի աշխատավորները բազմաթիվ դիմումներ էին ուղարկում Սովետական Ռուսաստանի կառավարությանը և անձամբ Վ. Ի. Լենինին, խնդրելով պաշտպանել հայ ժողովրդի իրավունքները։ Վ. Ի. Լենինին դիմում էին նաև Սովետական Ռուսաստանում ապրող հայ դաղթականները, որոնք ցավով վերապրում էին իրենց արյունակից եղբայրների կրած տառապանքները թուրքական օկուպացիայի պայմաններում։

Բազմաթիվ դիմումներից կբերինք մեկ օրինակ, Վլադիկավկազ քաղաքում հավաքված հայ աշխատավորների նամակը Վ. Ի. Լենինին. նամակում ասված է. «Մենք, փախստական հայերս, խորը ուրախության զգացումով ողջունեցինք Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում։ Մենք հավատում էինք, որ հասավ ժամանակը, երբ իր բոլոր ներքին թշնամիներին հաղթած Ռուսաստանը իր հզոր ձեռքը կմեկնի օգնելու բազմատանջ հայ աշխատավոր ժողովրդին, որը ներդրավվել է պատերազմի մեջ Քեմալի դեմ և ուժասպառ է լինում անհավասար, ծանր պայքարում... Քեմալը ուժեղ տեմպերով ավերում է Սովետական Հայաստանը, թալանում է աղքատացած գյուղացիների վերջին ունեցվածքը, վիթխարի կոնտրիբուցիաներ է դնում, ամբողջ աշխատունակ

[1] «Լենինյան ժողովածու», հատ. 35, էջ 234—235։

բնակչությանը բռնությամբ հավաքում և քշում է էրզրում՝ տաժանակիր աշխատանքի, իսկ Հայաստանի սովետական հիմնարկներին բոլորովին հաշվի չի առնում և արհամարհում է նրանց։ Իրերի նման դրությունը այլևս շարունակվել չի կարող, քանի որ սպառնում է վերջնականապես քայքայել և կործանել Սովետական Հայաստանը։ Այժմ, ինչպես և միշտ, հայերի բոլոր հայացքներն ուղղված են Ռուսաստանին... մեծ հույսով նայում ենք Ռուսաստանի Բանվորա-Գյուղացիական կառավարությանը և սպասում նրա հզոր ու վճռական քայլին, որը կարող է խելքի բերել Քեմալին և փրկել Սովետական Հայաստանը հետագա ավերումներից»[1]։

Կարելի է բերել նաև բազմաթիվ ուրիշ փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ իր կյանքի այդ դժվարին պահին հայ ժողովուրդը իր փրկությունը կապում էր Վ. Ի. Լենինի անվան հետ, Լենինին էր դիմում և նրանից սպասում երաշխիք, պաշտպանելու հայերին Թուրքերի նոր ասպատակություններից։ Եվ հայ ժողովուրդը չէր սխալվում։

1920 թվականի դեկտեմբերի կեսերին Վ. Ի. Լենինը Վ. Չիչերինին ուղղել է մի գրություն, որը մինչև այժմ չի հրապարակվել։ Վ. Ի. Լենինը Չիչերինի ուշադրությունը հրավիրում է այն հարցի վրա, թե ստացված տեղեկությունների համաձայն Թուրքիան Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններում պատրաստվում է կազմակերպել 60000 հայերի նոր կոտորած, հարկավոր է շտապ օգնություն, կանխելու այդ վտանգը։ Այնուհետև Լենինը գրում է Կարսի մասին և Բաքուն պաշտպանելու մասին, հանձնարարում է Չիչերինին ամեն բան անել կանխելու հայերի նոր կոտորածները։

Վ. Ի. Լենինի այդ դիրեկտիվների հիման վրա, ՌՍՖՍՌ Արտաքին գործերի ժողկոմատը դիվանագիտական պայքարի մեջ անդրադառնում էր ռուս-թուրքական հարաբերությունների և Հայկական ՍՍՌ-ի հարցերին, աշխատում էր նպաստավոր պայմաններ ստեղծել հայ բնակչության և ողջ ժողովրդի համար։ Թուրքական օկուպանտներն ամուր նստած էին Շիրակի դաշտում և Ալեքսանդրապոլում և չէին ուզում թողնել զավթած շրջանները։ Նրանք վկայակոչում էին դաշնակների կառավարության հետ Ալեքսանդրապոլում 1920 թ. դեկտեմբերի 2-ին կնքած պայմանագիրը։

Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ Լ. Մ. Կարախանը կազմում է ՌՍՖՍՌ կառավարության նոտայի նախագիծը, որում դրված էին Հայկական ՍՍՌ-ի և Թուրքիայի փոխհարաբերությունների հարցե-

---

[1] Տե՛ս ՀՍՍՌ ՀՈԿՊԱ, ֆ. 114, գ. 3, թ. 34։

ը, Հայաստանից բռնությամբ գրաված շրջանները վերադարձնելու, Թուրքական զորքն անմիջապես Ալեքսանդրապոլից հանելու, Հայկական ՍՍՌ-ի նկատմամբ թշնամական վերաբերմունքին վերջ դնելու և Հայաստանին վերաբերվող մի շարք այլ կենսական հարցեր[1]։ Սովետական կառավարությունը չեղյալ է հայտարարում Ալեքսանդրապոլի պայմանագիրը։

Թուրքական նացիոնալիստները չարությամբ էին ընդունում ՌՍՖՍՌ-ի միջամտությունը հայ-թուրքական հարաբերությունների գործերին։ Կովկասյան ռազմաճակատի շտաբի զեկուցագրերից մեկում բերվում են տեղեկություններ այն մասին, որ թուրքական զինվորականները 1921 թվականի փետրվարին դժգոհություն էին հայտնում «Ռուսաստանի անհամեստության» առթիվ, որ Ռուսաստանն «Առանց Անդրային տեղյակ պահելու» իր բանակներին ցուցում է տվել մտնել Հայաստան և Վրաստան[2]։

Վ. Ի. Լենինը իր ճառերից մեկում անդրադառնում է Թուրքիայի հետ տեղի ունեցող բանակցություններին, նշում թուրքական դիվանագետների խորամանկությունները[3]։ Թուրքական իշխանությունները հանձին Կարաբեքիր փաշայի, Հայկական ՍՍՌ-ի օկուպացված շրջաններում շարունակում էին խաղաղ բնակչության դաղանային ջարդերը, որից զայրացած Գ. Չիչերինը Թուրքիայի արտաքին գործերի մինիստրին ներկայացրեց բողոք, որում Կարաբեքիրի արարքները բնութագրում է որպես խուլիգանություն[4]։

Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը ուլտիմատում ներկայացրեց թուրքական զինվորական իշխանություններին Ալեքսանդրապոլի գավառից անմիջապես զորքերը դուրս բերելու մասին, հակառակ դեպքում պատերազմ կսկսվի Թուրքիայի և Սովետական Հայաստանի միջև, որը «կնշանակի պատերազմ Թուրքիայի և Ռուսաստանի միջև»[5]։

Միայն այդ վճռական միջոցառումներից և նախազգուշացումներից հետո 1921 թվականի ապրիլին հաջողվեց թուրքական զորքերը վտարել Շիրակի գավառից, Հայկական ՍՍՌ-ին վերադարձ-

---

[1] Տե՛ս ՍՍՌՄ արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. 013², ց. 7, թղթապանակ 8, գ. 1, թ. 27—48։

[2] Տե՛ս ՍԲԿՊԱ, ֆ. 33988, ց. 3, գ. 34, թ. 7։

[3] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 171։

[4] Տե՛ս «Документы внешней политики СССР» ժողովածուն, հատ. 4, էջ 50, Մ., 1960։

[5] Նույն տեղում։

նել Երևան—Թիֆլիս երկաթուղագիծը, վերջ դնել թուրքական հորդաների վայրագություններին։

Վ. Ի. Լենինը նախազգուշացնում էր սովետական մարդկանց թշնամու նոր ոտնձգություններից և պահանջում լինել զգոն, արթուն։

Վ. Ի. Լենինի անմիջական ցուցումները կատարելով Հայկական ՍՍՌ-ն և Անդրկովկասի մյուս ռեսպուբլիկաներն ստեղծեցին իրենց ազգային զինված ուժերը, որոնք ռուսական Կարմիր Բանակի հետ միասին Անդրկովկասը դարձրին սովետական անառիկ ամրոց մեր Հայրենիքի հարավում։

4. ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐՏԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ-ի ամրապնդման գծով Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ ձեռնարկված կարևոր միջոցառումներից էին ռեսպուբլիկայի պարտիական-սովետական օրգանները կադրերով ապահովելու, ազգային-սովետական շինարարությունը ծավալելու և երկրին հատուկ պայմաններին համապատասխան ճիշտ քաղաքականություն վարելու հարցերը։

Հայաստանում սովետական կարգեր հաստատելու առաջին օրերին էր դեռ, երբ Վ. Ի. Լենինի անունով ստացվել էր Կովկասյան բյուրոյի հեռախոսագիրը. «Անհրաժեշտ է շտապեցնել Մոսկվայից հայ կոմունիստների Հայաստան ուղարկելը»[1]։

Վ. Ի. Լենինն այդ հարցը մտցնում է ՌԿՊ Կենտկոմի քաղբյուրոյի նիստի քննարկմանը։ 1920 թ. դեկտեմբերի 5-ին, քաղբյուրոն որոշում է ընդունում հայ կոմունիստներին մոբիլիզացիայի ենթարկելու և Սովետական Հայաստան աշխատանքի ուղարկելու մասին։ Հանձնարարվում է կազմբյուրոյին մոբիլիզացնել առավելագույն թվով հայ կոմունիստներ, Հայաստանում աշխատելու համար։

Դեկտեմբերի 5-ին մամուլում հրապարակվում է Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի նամակը Ռուսաստանի Կոմունիստական պարտիայի բոլոր օրգաններին։ Նամակում ասված է. «Առաջարկվում է, բոլոր կուսակցական ընկերները՝ կուսակցական դիսցիպլինի կարգով անմիջապես Հայաստան մեկնեն ի տնօրինություն Հայաս-

---

1 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 16404, թ. 1։

տանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի Թախանձագին խնդրում ենք, որ Ռուսաստանի Կոմունիստական կուսակցության բոլոր կուսակցական օրգանները Հայաստանի պատասխանատու կոմունիստներին ու այն ընկերներին, որոնց նրանք անհրաժեշտ կգտնեն իրենց հետ վերցնելու, ամեն տեսակ աջակցություն ցույց տան, որ պետք եղածը տրվի ու շուտով մեկնեն Հայաստան ի տնօրինություն Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի։

Հայաստանի Կոմունիստական Կուսակցության
Կենտրոնական Կոմիտեի քարտուղար՝ Բեգզադյան»[1]։

Դա տանջված հայ աշխատավորության կանչն էր իր աղնիվ զավակներին։

Ռուսաստանում և սովետական մյուս ռեսպուբլիկաներում ռևոլյուցիայի հաղթանակի համար ակտիվորեն մարտնչած իր զավակներին հայ ժողովուրդը կանչում էր աղատագրված հայրենիքը, այնտեղ լծվելու նոր կյանքի կառուցմանը, Վ. Ի. Լենինի նշած սոցիալ-քաղաքական վերափոխումների ծրագրերի կենսագործմանը։

Դեկտեմբերի 10-ին ՌԿՊ Կենտկոմի կազմբյուրոն քննում է Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի պահանջը մի շարք հայ կոմունիստ գործիչների մոբիլիզացնելու և Հայաստան ուղարկելու համար։ Որոշում է կայացվում Հայաստան ուղարկել Ս. Լուկաշինին (Սրապիոնյանին) (Ռոստով-Դոնից), Ա. Կարինյանին (Պետրոգրադից), Դր. Տեր-Սիմոնյանին (Ռոստով-Դոնից), Պ. Մակինցյանին (Մոսկվայի արտակարգ հանձնաժողովից), Վահան Երեմյանին (Ռոստով-Դոնից), Արշակ Աթաբեկյանին (Պյատիգորսկուց) և ուրիշների։ Կազմբյուրոն հետաձգում է Ա. Մյասնիկյանի, Արարատ Մռավյանի, Մ. Տեր-Հարությունյանցի, Գայի (Հայկ Բժշկյանի), Բ. Բորյանի և մի քանի ուրիշների մոբիլիզացիան։

ՌԿՊ Կենտկոմի կազմբյուրոն 1920 թ. դեկտեմբերի 26-ին դարձյալ քննում է հայ կոմունիստների մոբիլիզացիայի հարցը և որոշում ընդունում ՀԿՊ Կենտկոմի պահանջած բոլոր ընկերներին անհապաղ ուղարկել Հայաստան։ 1920 թվականի դեկտեմբերին միայն Մոսկվայից մոբիլիզացվեց և Հայաստան ուղարկվեց 200, Հյուսիսային Կովկասից 54, Բաքվից՝ 70 աշքի ընկած հայ կոմունիստ։

ՌԿՊ Կենտկոմի Կովկասյան բյուրոն կատարելով Կենտկոմի

---

[1] Տե՛ս «Կոմունիստ» թերթը, № 167, 7 դեկտեմբերի 1920 թ.։

դիրեկտիվները և Վ. Ի. Լենինի ցուցումները, 1921 թ. մարտին որոշում ընդունեց նաև Վրաստանում աշխատող հայ կոմունիստների մի մասի մոբիլիզացիայի ուժիվ։ Որոշման մեջ ասված էր. «Բոլոր ընկերներին, առանց բացառության, առաջարկվում է երկու օրվա ընթացքում... ցուցակագրվել Հայկական ՍՍՌ միության հաշվառման բաժնում։ ՌԿՊ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահության անդամներ՝ Օրջոնիկիձե, Օրախելաշվիլի, Նազարեթյան»[1]։

1921 թվականի ընթացքում Հայաստան ուղարկվեցին մոտ 500 կոմունիստներ։ 1921 թ. ապրիլին Մոսկվայից Հայաստան ուղարկվեցին՝ Ա. Ֆ. Մյասնիկյանը որպես Հայկական ՍՍՌ Ռևկոմի նախագահ, իսկ Ռոստով-Դոնի նահանգային կոմիտեի քարտուղար Ս. Սրապիոնյանը (Լուկաշինը) որպես ՀԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար։

Ռուսաստանից և Անդրկովկասյան մյուս ռեսպուբլիկաներից Սովետական Հայաստան փոխադրված հայ գործիչներից էլ, 1921 թվականի մայիսին, վերջնականապես ձևավորվեց և հաստատվեց Հայկական ՍՍՌ կառավարության նոր կազմը՝ Ա. Մյասնիկյան (կառավարության նախագահ), Ս. Սրապիոնյան (Լուկաշին) ժողտնտխորհի նախագահ (նա միաժամանակ ՀԿՊ Կենտկոմի առաջին քարտուղարն էր), Ա. Մռավյանը՝ Արտաքին գործերի ժողկոմ, Պ. Մակինցյանը՝ Ներքին գործերի, Արամայիս Երզնկյան՝ Հողագործության, Ալ. Բեզղադյան՝ Պարենավորման և արտաքին առևտրի, Ս. Խանոյան՝ Ֆինանսների, Արտ. Կարինյան՝ Արդարադատության, Աշ. Հովհաննիսյան՝ Լուսավորության, Ս. Համբարձումյան՝ Առողջապահության, Դր. Տեր-Սիմոնյան՝ և ապա Ս. Մարդարյան՝ Փոստ-հեռագրի, Ալ. Շահվերդյան՝ Բանդյուղտնտեսության ժողկոմներ։ Արտակարգ հանձնաժողովի նախագահն էր Շ. Ամիրխանյանը, Հայաստանի արհմիությունների նախագահն էր Հ. Աղասյանը[2] և այլն։

Այսպիսով, պարտիայի Կենտկոմի կոչով Ռուսաստանից, Վրաստանից, Ադրբեջանից եկած և բուն Հայաստանում ընդհատակյա աշխատանքում աճած պարտիական գործիչներից ձևավոր-

---

[1] Տե՛ս «Պրավդա Գրուզիի» թերթը, № 17, 17 մարտի 1921 թ.։

[2] Հայկ Աղասյանը և Արամայիս Երզնկյանը, որ մինչև 1920 թ. մոնում էին մենշևիկ-ինտերնացիոնալիստների խմբի մեջ, 1920 թվականին վերջնականապես անցան ՌԿՊ-ի շարքերը, առաջնակարգ տեղ գրավելով Սովետական Հայաստանի պետական ղեկավար պոստերում։

վեց Հայկական ՍՍՌ-ի պարտիական և Սովետական ղեկավար կորիզը, որն իր ուժերն ու կարողությունները նվիրեց ռեսպուբլիկայի ամրապնդման և զարգացման համար մղվող պայքարին։

5. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՅՈՒՍ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ՆՐԱՆՑ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՏ

Սովետական Հայաստանի ողջ կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխությունների գործում վճռական նշանակություն ուներ ոչ միայն կադրերի հարցը, այլև նրանց գործունեությանը ճիշտ ուղղություն տալը, Հայաստանի կոնկրետ պայմաններում կիրառվելիք քաղաքականությունը։

Վ. Ի. Լենինի դիրեկտիվները և անմիջական ղեկավար մասնակցությունը վճռական և բախտորոշ նշանակություն ունեցան Անդրկովկասի ռեսպուբլիկաների ամրապնդման ու զարգացման գործում։

1920—1921 թվականներին Վ. Ի. Լենինը ընդունել և զրույցներ է ունեցել Կովկասյան բյուրոյի անդամների, Հայաստանի Կոմունիստական պարտիայի և Հայռևկոմի ղեկավար գործիչների հետ, Կովկասում կիրառելիք քաղաքականության հարցերի մասին։

ՌԿՊ X համագումարում, 1921 թ. մարտին, Վ. Ի. Լենինի ելույթների մեջ շարադրվեցին Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության գործունեության ծրագրային խնդիրները մեր երկրում նոր տնտեսական քաղաքականություն կիրառելու և սոցիալիստական զարգացման ուղիով ընթանալու համար։ Համագումարի աշխատանքներին մասնակցում էին Ա. Մյասնիկյանը, Ս. Սրապիոնյանը (Լուկաշինը), Հայաստանի Կոմպարտիայի պատգամավորներ Ա. Բեգզադյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ռ. Քաթանյանը, Վ. Ավանեսովը, Ա. Կարինյանը[1]։ Վ. Ի. Լենինի ելույթների և համագումարի որոշումների մեջ հստակ կերպով կանխագծվեցին սովետական բոլոր ռեսպուբլիկաների, նրանց թվում և ՀՍՍՌ-ի հետագա զարգացման խնդիրները։ Սակայն ընդհանուր խնդիրների ֆոնի վրա, Հայկական ՍՍՌ-ն և Կովկասի մյուս ռեսպուբլիկաներն ունեին նաև առանձնահատուկ խնդիրներ։

Հայաստանի և ամբողջ Կովկասի կոմունիստների գործունեու-

---

[1] ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 85, ց. 18, գ. 432, թ. 1։

թյան ծրագիրը շարադրվեց Վ. Ի. Լենինի պատմական նամակում՝ «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին», որը կազմվել է Վ. Ի. Լենինի և Հայկական ՍՍՌ Ռևկոմի նախագահ Ա. Մյասնիկյանի միջև տեղի ունեցած զրույցից անմիջապես հետո, նրա խնդրանքով: Ա. Ֆ. Մյասնիկյանն այդ մասին գրել է. «1921 թվականի ապրիլի կեսերին ես պետք է մեկնեի Սովետական Անդրկովկաս և ապա Հայաստան: Մոսկվայից մեկնելուց առաջ ես ընկեր Լենինի հետ տեսակցություն ունեցա, որի ժամանակ մենք մանրամասն զրուցեցինք այն մասին, թե ինչպես պետք է աշխատել Կովկասում, ինչ ձևով պետք է հաշվի առնել ռուսական ռևոլյուցիայի փորձը, ինչ քաղաքականություն վարել Թուրքիայի նկատմամբ: Լենինը խորհուրդ էր տալիս զգույշ և նրբանկատ լինել Արևելքի ժողովուրդների նկատմամբ, որոնք արդեն արթնանում են, որոնք լուսավորության կարիք ունեն և որոնք լուսավորվելով, իրենց մոտ կկատարեն ավելի վիթխարի հեղաշրջում, քան տեղի ունեցավ Ռուսաստանում: Մի խոսքով՝ նա այն ժամանակ շարադրում էր մեր այն գիծը, որը մենք, 1921 թվականից սկսած, անց ենք կացնում Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում: Միանգամից պարզ դարձավ, որ Արևելքում կատարվելիք աշխատանքը բավական բարդ է և պատասխանատու, և այդ պատճառով էլ ես խնդրեցի ընկեր Լենինին՝ համառոտ շարադրել իր մտքերը թղթի վրա, նամակի ձևով, որպեսզի այդ նամակը ես կարողանամ հասցնել Կովկասի ընկերներին, որ նրանք կարողանան ղեկավարվել նրանով իրենց ամենօրյա աշխատանքում: Լենինը սիրով համաձայնեց դրան: Հենց հետևյալ օրը սուրհանդակը ինձ բերեց նրա նամակը...»[1]:

Վ. Ի. Լենինը խնդիր դրեց, որ «Անդրկովկասի կոմունիստները հասկանան իրենց դրության, իրենց ռեսպուբլիկաների դրության յուրօրինակությունը, ի տարբերություն ՌՍՖՍՌ դրության ու պայմանների, հասկանան մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը»[2]:

Հայաստանի կոմունիստների առջև Վ. Ի. Լենինի նամակում խնդիր էր դրվել՝ տնտեսության բնագավառում օգտագործել երկրի ընդերքի հարստությունները, վերականգնել պղնձահանքերը,

---

[1] Ա. Ֆ. Մյասնիկյան, *Իմ հանդիպումները ընկեր Լենինի հետ*, էջ 20—21։
[2] Վ. Ի. Լենին, *Երկեր*. հատ. 32, էջ 402։

սկսել էլեկտրիֆիկացիան, «բոլոր ուժերով զարգացնել հարուստ երկրի արտադրողական ուժերը, սպիտակ ածուխը, ոռոգումը։ Ոռոգումը հատկապես կարևոր է հողագործությունն ու անասնապահությունը ինչ գնով էլ լինի բարձրացնելու համար»։ Լենինը խնդիր էր դնում զարկ տալ սպրանքափոխանակությանը, բարելավել բանվորների և գյուղացիների դրությունը։ «Ավելի դանդաղ, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ անցում դեպի սոցիալիզմ,— ահա թե ինչն է հնարավոր ու անհրաժեշտ Կովկասի ռեսպուբլիկաների համար՝ ի տարբերություն ՌՍՖՍՌ-ի»։

Վ. Ի. Լենինը նրբանկատ ընդգծում էր ազգային քաղաքականության կիրառման խնդիրները։ «Ավելի մեղմություն, զգուշություն, զիջողականություն մանր բուրժուազիայի, ինտելիգենցիայի և մանավանդ գյուղացիության նկատմամբ»[1]— ահա թե ինչ էր պահանջում Լենինը։ Այնուհետև նա հանձնարարում էր հաշվի առնել Ռուսաստանի կոմունիստների կիրառած տակտիկան, բայց այն չընդօրինակել նույնությամբ, «կիրառել 1917—1921 թվականների փորձի ոչ թե տառը, այլ ոգին, իմաստը, դասերը»[2]։

Լենինյան սույն դիրեկտիվների մեջ հանճարեղ խորաթափանցությամբ կանխագծված էին Հայկական ՍՍՌ-ի սոցիալիստական վերափոխումների, հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական նոր կյանքը կազմակերպելու, այն կոմունիստական հիմունքներով վերակառուցելու ծրագիրը, Հայաստանում լենինյան ճիշտ քաղաքականություն վարելու խնդիրները։

Վ. Ի. Լենինը Հայաստանի և Անդրկովկասի մյուս սովետական ռեսպուբլիկաների քաղաքական և տնտեսական զարգացման, նրանց պաշտպանունակությունը բարձրացնելու կարևոր պայմաններից մեկն էլ համարում էր նրանց միջև սերտ դաշինքի ստեղծումը, նրանց եղբայրական համագործակցությունը։ Լենինը հույս հայտնեց, որ այդ բարեկամական դաշինքը «կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[3]։

Հայկական, Ադրբեջանական և Վրացական սովետական ռեսպուբլիկաների եղբայրական դաշինքը ծնվեց այդ ռեսպուբլիկանների հետ միասին։ Ադրբեջանական ՍՍՌ-ն ելման դիրք և հենարան

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, թ. 403—404 (ընդգծումները մերն են— Ա. Մ.)։

2 Նույն տեղում, էջ 404։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 402։

հանդիսացավ Հայաստանի աշխատավորների և Կարմիր Բանակի համար, գրոհելու դաշնակների հակառևոլյուցիոն կառավարության դեմ։

Հայկական ՍՍՌ-ն անհրաժեշտ օգնություն ստացավ ոչ միայն ՌՍՖՍՌ-ից, այլև Վրացական և Ադրբեջանական սովետական ռեսպուբլիկաներից դաշնակների փետրվարյան խռովության և զանգեզուրյան բանդաների դեմ մղված արյունահեղ մարտերում։

Փետրվարյան հակասովետական խռովության բռնկումից հետո ՀՍՍՌ Ռևկոմի նախագահ Ս. Կասյանը Լենինին ուղարկում է զեկուցագիր դաշնակների դավադրության ծագման պայմանների ու պատճառների մասին, խնդրում է, որ «մեր դաշնակից Սովետական Ռուսաստանի Կարմիր Բանակը օգնության» հասնի Հայաստանի աշխատավոր մասսաներին[1]։

Հայաստանի կառավարության այդ դիմումը արձագանք գտավ Վ. Ի. Լենինի մոտ։

Վ. Ի. Լենինը դեռևս այդ դեպքերից շատ առաջ, 1920 թ. աշնանը Կովկասյան ռազմաճակատի Ռազմա-ռևոլյուցիոն խորհրդին տված դիրեկտիվների մեջ խնդիր էր դրել բոլոր բանդաների ամենաարագ և լիակատար լիկվիդացիայի մասին, որպես «բացարձակ համապետական կարևորություն ունեցող գործ»[2]։

Հայաստանում բանդաների դեմ պայքարում էր ժողովուրդը։ Կարմիր Բանակի զորքերը օգնության եկան Հայկական ՍՍՌ-ի աշխատավորներին այդ պայքարում, Երևանի ազատագրման գործում։

Վ. Ի. Լենինի ցուցումով Թիֆլիսում Օրջոնիկիձեն կազմակերպեց ինքնաթիռով Հայկական ՍՍՌ-ի կառավարությանը 50.000 ռ. ոսկու ուղարկումը, պաշարման մեջ գտնվող, սովից տանջվող հայ զինվորների և աշխատավորների մատակարարման գործը կազմակերպելու, թշնամու ճնշմանը դիմադրելու և նրա նկատմամբ հաղթանակ նվաճելու համար, դաշնակների կողմից բանտերը նետված հաղարավոր կոմունիստների և անպարտիական աշխատավորների ազատագրման համար։

Երևանը ազատագրվեց ապրիլի 2-ին։ Նույն օրը կոմունիստներ Վասիլ Մալխասյանի և Նապոլեոն Անդրեասյանի ստորագրությամբ, աշխատավորների անունից ռադիոգիր ուղարկվեց Վ. Ի.

---

1 Տե՛ս ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 5, գ. 44։

2 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 492, տե՛ս նաև «Լենինյան ժողովածու», 34, էջ 346։

Լենինին Հայաստանի մայրաքաղաքում Սովետական իշխանությունը վերականգնելու մասին։ Հաջորդ օրը Գ. Աթաբեկյանը Ռևկոմի անունից հեռագիր ուղարկեց Վ. Ի. Լենինին հայ աշխատավոր մասսաների ջանքերով, ռուսական Կարմիր Բանակի օգնությամբ Երևանի ազատագրմանը և դաշնակների խռովության ջախջախման մասին[1]։

Այսպիսով, Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ ձեռնարկված միջոցառումները և ՌՍՖՍՌ Կարմիր Բանակի օգնությունը ուժ տվեցին Հայկական ՍՍՌ-ին, հաղթանակով դուրս գալու հակասովետական բանդաների դեմ մղվող պայքարից, ամրապնդելու Սովետական իշխանությունը։ Վ. Ի. Լենինը խնդիր դրեց Կովկասի կոմունիստների առաջ ստեղծել ամուր ազգային Կարմիր Բանակ սովետական յուրաքանչյուր ռեսպուբլիկայում, միավորել այդ բանակները միասնական հրամանատարության ղեկավարության ներքո։ Հայկական ՍՍՌ, Վրացական ՍՍՌ և Ադրբեջանական ՍՍՌ-ի ազգային զինված ուժերը հանդիսացան ՌՍՖՍՌ Կարմիր Բանակի անբաժան միավորումները։

Սովետական Հայաստանի պաշտպանությունը դարձավ Սովետական իշխանության պաշտպանության ընդհանուր գործի անբաժան մասը, որը հանձնվեց Վ. Ի. Լենինի ստեղծած Կարմիր Բանակի հուսալի ձեռքը։

* * *

Հայ ժողովրդի պատմական բախտի մեջ կարևոր նշանակություն ունեցող հարցերից էր Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների «ավտոնոմիզացիայի» թե ինքնուրույն սուվերեն բանվորա-գյուղացիական պետություններ պահպանելու հարցը, որի շուրջը պարտիայի ղեկավար գործիչների մեջ առաջ էին եկել տարբեր կարծիքներ։

Վ. Ի. Լենինը հանդիսացավ Հայկական ՍՍՌ-ի և Անդրկովկասի մյուս ռեսպուբլիկաների սուվերեն պետականությունը պահպանելու, նրա որպես ազգային բանվորա-գյուղացիական սոցիալիստական պետություն ամրապնդելու և զարգացնելու տեսակետի հեղինակն ու պաշտպանը։

---

[1] Վ. Ի. Լենինին ուղարկված հեռագիրը տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» ժողովածուն, էջ 508—509։

1922 թվականի հունվարի 30-ից փետրվարի 4-ը Երևանում անցկացած Հայկական ՍՍՌ Սովետների առաջին համագումարը հավանություն տվեց այն սոցիալ-քաղաքական հեղաշրջմանը, որ կատարվել էր Հայաստանում սկսած 1920 թվականի նոյեմբերի 29-ից։ Համագումարը որպես հայ ժողովրդի բարձր ներկայացուցչական օրգան հաստատեց ՀՍՍՌ Կոնստիտուցիա, որով իրավականորեն ամրապնդեց Հայկական ՍՍՌ-ն որպես բանվորա-գյուղացիական պետություն, Հայաստանի բանվորների և աշխատավոր գյուղացիների դիկտատուրա[1]։

Սակայն ինչպես Սովետական Հայաստանը, այնպես էլ Սովետական Ադրբեջանը, Վրաստանը, Ուկրաինան, Բելոռուսիան ձգտում էին ավելի մերձենալ Սովետական Ռուսաստանի հետ։ Նրանցից ամեն մեկն առանձին-առանձին չէր կարող հաղթահարել տընտեսական փլուզումը և վերականգնել ավերված երկիրը, չէր կարող կազմակերպել հուսալի պաշտպանություն, և ետ մղել իմպերիալիստական պետությունների ոտնձգությունները, անհրաժեշտ էր միավորել ուժերը։ Բայց ինչպե՞ս։

1922 թվականին Ի. Վ. Ստալինը ՌԿՊ Կենտկոմի պլենումում որոշում է անցկացնում անկախ ռեսպուբլիկաները, Հայկական ՍՍՌ-ն, ինչպես նաև Ուկրաինական, Բելոռուսական, Վրացական Ադրբեջանական Սովետական ռեսպուբլիկաները «ավտոնոմիզացիա»-ի ենթարկել, այսինքն՝ մտցնել ՌՍՖՍՌ-ի կազմի մեջ որպես ավտոնոմ ռեսպուբլիկաներ։ Վ. Ի. Լենինը հիվանդության պատճառով չէր մասնակցել այդ պլենումին։ Տեղեկանալով այդ մասին, Վ. Ի. Լենինը վճռականորեն դեմ արտահայտվեց սովետական անկախ ռեսպուբլիկաները ՌՍՖՍՌ-ի մեջ մտցնելու այդ սխալ որոշմանը։

Վ. Ի. Լենինը «ավտոնոմիզացիայի հարցը» որակեց որպես «տխրահռչակ հարց»[2], դատապարտեց Ստալինի սխալը, նրա վարչարարությունները։

Վ. Ի. Լենինը առաջ քաշեց ՌՍՖՍՌ, Հայկական ՍՍՌ-ն և մյուս ռեսպուբլիկաները որպես սուվերեն իրավահավասար ռեսպուբլիկաներ պահպանելու և զարգացնելու խնդիրը։ Զարգացնելով Սովետական պետության մասին տեսությունը, Վ. Ի. Լենինը հանգեց հանճարեղ եզրակացության, առաջարկեց ստեղծել անկախ Սովե-

---

[1] Տե՛ս ՀՍՍՌ Առաջին կոնստիտուցիան, հոդված 11։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 36, էջ 699, 852—853։

տական Ռեսպուբլիկաների Միություն, որը կազմակերպվում է իրավահավասար ռեսպուբլիկաների կամավորության սկզբունքներով։ Վ. Ի. Լենինի առաջարկի հիման վրա 1922 թ. դեկտեմբերին ստեղծվեց Սովետական Միությունը, որի մեջ մտավ և Հայկական ՍՍՌ-ն։

Վ. Ի. Լենինը կանխելով Հայկական ՍՍՌ-ն և մյուս ռեսպուբլիկաները ՌՍՖՍՌ-ի մեջ մտցնելու «ավտոնոմիզմի» ծրագիրը, հակահարված տվեց մեծապետական շովինիստներին։ Լենինը 1922 թ. հոկտեմբերի 6-ին Քաղբյուրոյին ուղարկած նամակ-դիրեկտիվում գրել է. «Վելիկոռուսական շովինիզմին հայտարարում եմ ոչ թե կյանքի, այլ մահվան կռիվ»[1] (ընդգծ. մերն է — Ա. Մ.)։

Հայկական, Վրացական և Ադրբեջանական Սովետական ռեսպուբլիկաները ՍՍՌՄ-ի մեջ մտնում էին Անդրկովկասյան ֆեդերացիայի միջոցով, որն իրագործվեց գրեթե նույն ժամանակամիջոցում, երբ ստեղծվեց Սովետական Միությունը։ Անդրֆեդերացիան, սակայն, երեք սովետական ռեսպուբլիկաների ժամանակավոր դաշնակցություն էր, որի գաղափարը նույնպես տվել էր Վ. Ի. Լենինը։

Անդրկովկասի ռեսպուբլիկաների ֆեդերատիվ դաշինքը խնդիր ուներ արագ կերպով միավորել ուժերը և բուժել վերքերը, ցրել ազգային լարված մթնոլորտը և հաստատել փոխադարձ վստահության մթնոլորտ, կազմակերպել եղբայրական երեք ժողովուրդների համագործակցություն և փոխադարձ օգնություն ռազմա-քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքի բոլոր ասպարեզներում։ Դեպի այդ նպատակներն էր մղում Վ. Ի. Լենինը դնելով Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպման խնդիրը, որն իրագործվեց 1922 թվականին, Օրջոնիկիձեի, Մյասնիկյանի և Կիրովի անմիջական ջանքերով։

Մինչև ՍՍՌՄ-ի ստեղծումը, Վ. Ի. Լենինը որպես ՌՍՖՍՌ Ժողկոմսովետի և Աշխատանքի ու Պաշտպանության խորհրդի նախագահ, ղեկավարում և ուղղություն էր տալիս եղբայրական անկախ Հայկական ՍՍՌ-ի գործունեությանը, նրան ցույց տրվող օգնությանը, իսկ ՍՍՌՄ-ի ստեղծումով Վ. Ի. Լենինը դարձավ Միութենական ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ, սովետական բոլոր ռեսպուբլիկաներից, որոնց շարքում և Հայկական ՍՍՌ-ից կազմված Միության Կառավարության նախագահ։ Այդ պաստում Վ. Ի. Լենինին ընտրել էին ՍՍՌՄ Կենտգործկոմի ան-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 439։

գամները, որոնց մեջ էին իրավահավասարության հիմունքներով ներկայացված բոլոր ռեսպուբլիկաների, այդ թվում և Սովետական Հայաստանի աշխատավորության ներկայացուցիչները։

1921 թվականի ապրիլին, Ալ. Մյասնիկյանին Հայաստան ուղարկելու օրերին, Վ. Ի. Լենինի կարգադրությամբ ՌՍՖՍՌ միջոցներից բաց թողնվեց մեկ և կես միլիոն ռուբլի՝ ոսկով, որը մեծ քանակությամբ հացահատիկի և այլ մթերքների հետ միասին հատուկ գնացքով ուղարկվեց Հայաստան[1]։ Վ. Ի. Լենինը հետևում էր Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի սովետական ռեսպուբլիկաների պահանջները բավարարելուն, ստուգում էր կենտրոնական հիմնարկների գործունեությունը և պահանջում հաշիվ տալ իրեն։

Բնորոշ մի օրինակ։ Պարենժողկոմատի Դոնի Ռոստովի ներկայացուցիչ Մ. Ֆրումկինին ուղղված մի նամակում Վ. Ի. Լենինը նշում է, թե ինչպիսի կարևորություն ունի Անդրկովկասի ռեսպուբլիկաների մատակարարումը, վկայակոչում է Օրջոնիկիձեի հեռագրում մատնանշված խիստ ծանր վիճակը և ապա առաջարկում է ձեռք առնել ամենավճռական միջոցները Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի մատակարարման համար և նրանց մատակարարման ու փաստացի ուղարկածի մասին օր-մեջ ուղիղ գծով զեկուցել իրեն և Մատժողկոմատին[2]։

Կարելի է բերել տասնյակ ուրիշ փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս Վ. Ի. Լենինի հայրական հոգատարությունը Հայկական ՍՍՌ-ի նկատմամբ, հայ ժողովրդի համար խաղաղ, ստեղծագործ կյանք կազմակերպելու գործի նկատմամբ։

1921 թվականը քաղաքացիական կռիվների և Հայաստանի անջատված մասերը օկուպանտներից ազատագրելու տարի լինելուց բացի, նաև անբերրիության տարի էր, սովի տարի։ 1922 թվականի գարնան համար չկար սերմացու և հայ գյուղացիությունը մեծ կարիքի մեջ էր։ 1922 թ. հունվարին ՀՍՍՌ կառավարության նախագահ Ալ. Մյասնիկյանը Վ. Ի. Լենինին դիմում է Հայկական ՍՍՌ-ի սերմացուի կարիքի հարցով, խնդրում օգնություն կազմակերպել։ Հայկական ՍՍՌ-ի սերմացուի հարցը դրվում է Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի հունվարի 25-ի նիստում և ընդունվում համապատասխան որոշում[3]։

Հայկական ՍՍՌ-ն Միության կառավարությունից ստանում է

---

1 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 85, ց. 18, գ. 183, թ. 3։

2 ՄԼԻ Ադրբեջանի ֆիլիալի արխիվ, Լենինի ֆոնդ, գ. 53, կապ. 4, թ. 1։

3 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 19, ց. 3, գ. 286։

սերմացու, գործիքներ, վարկեր, հաղթահարում է 1921—1922 թվականների դժվարությունները։ 1922 թվականի աշնանը գումարված Հայաստանի գյուղացիական համագումարը հեռագիր ուղարկեց՝

«Մոսկվա, ԺողԿոմսովետի նախագահ ընկեր Լենինին.

Սովետական Հայաստանի առաջին գյուղատնտեսական համագումարը իր աշխատանքներն սկսելուց առաջ իր պարտքն է համարում ողջունել Ձեզ, համաշխարհային պրոլետարական ռևոլյուցիայի առաջնորդին։ Համագումարը մեծ գոհունակությամբ է, արձանագրում այն փաստը, որ համաշխարհային բուրժուազիայի լակեյներին Հայաստանից վտարելուց հետո, աղգամիջյան երկպառակությունների և Անտանտի բանսարկությունների հետևանքով Հայաստանի տանջված պրոլետարիատը և գյուղացիությունը վերջապես հնարավորություն ստացան բուժելու իրենց վերքերը և անցնելու ստեղծագործ աշխատանքի։ Համագումարը համոզված է, որ միայն Սովետական Ֆեդերատիվ Ռուսաստանի հետ համերաշխ ու լիակատար համագործակցությամբ փոքրիկ Հայաստանին կհաջողվի օգտագործել մինչև օրս թաքնված հնարավորությունները։ Այդ հեռանկարով ոգևորված, համագումարը ձեռնամուխ է լինում իր աշխատանքին և Ձեր միջոցով իր ընկերական ողջույնն է հղում ամբողջ Ռուսաստանի պրոլետարիատին ու գյուղացիությանը։

Համագումարի նախագահ, Հայաստանի ՀողԺողկոմ՝ Երզրնկյան»[1]։

Վ. Ի. Լենինի անունով երախտագիտական սրտաբուխ խոսքեր են գրված նաև Հայկական ՍՍՌ գավառային և շրջանային Սովետների, աշխատավորական ժողովների, համագումարների կողմից ընդունված նամակներում ու հեռագրերում։

Հետաքրքրական են տաճկահայ աշխատավորների համագումարները գավառներում։ Արևմտյան Հայաստանից գաղթած այդ բնակչությունը Հայկական ՍՍՌ-ի տերիտորիայում ստանում էր հող, մշտական բնակություն, տնտեսության կազմակերպում, նոր օջախ վառում Արևելյան Հայաստանում։ Բայց հայ ժողովրդի համար ծանր ժամանակներ էին 1921—1922 թվականները։ Կարիքը խեղդում էր ոչ միայն գաղթածներին, այլև տեղական բնակիչներին, որոնց տնտեսությունը նույնպես քայքայվել էր, կողոպտվել. Հարկավոր էին մեծ միջոցներ։

---

[1] Աշխատավորների նամակները Վ. Ի. Լենինին, էջ 414։

Կարելի է մեկ հատիկ փաստ ևս հիշատակել, թե ինչպես Արևմուտքի բուրժուական պետությունները խաբում և կողոպտում էին հայ ժողովրդին։ Արևմտահայերից կողոպտված հարստությունները 5 միլիոն լիրա (թուրքական դրամով) թուրքական կառավարությունը 1916 թ. պահ էր տվել Բեռլինի բանկում։ Գերմանիայի և Թուրքիայի պարտությունից հետո Անգլիան այդ դումարին տիրեց և փոխադրեց Լոնդոն։ Հայ գաղթականների ծանր վիճակը թեթևացնելու համար հարց դրվեց անգլիական իշխանությունների առաջ այդ դումարը վերադարձնել հայերին։ Այդ հարցը Մակդոնալդի կառավարության առաջ դրել էր կոնսերվատորների պարտիայի լիդեր Ստենլի Բոլդուինը։ Մակդոնալդը ձգձգում է հարցի քննարկումը։ Շուտով Մակդոնալդի կառավարությունը հեռանում է ասպարեզից և պրեմիեր է դառնում այդ նույն Բոլդուինը։

Հույսեր են առաջանում, թե նա կլուծի այն հարցը, որի ջերմեռանդ նախաձեռնողն էր մինչև կառավարության գլուխ անցնելը։ Բայց զուր հույսեր...։ Բոլդուինի կառավարությունը կտրուկ կանապես հրաժարվեց հայերին վերադարձնել նրանցից խլված դանձը և առհասարակ մերժեց հայ գաղթականությանն օգնություն ցույց տալու ամեն մի առաջարկ[1]։ Այդպես էր լուծում հայության ճակատագրային հարցերը հայ ժողովրդին «հովանավորող» ննդ Ալբիոնը՝ Անգլիան։

1922 թվականին Սովետական Ռուսաստանը ծանր կարիքի մեջ էր։ Բայց Վ. Ի. Լենինի կառավարությունը ամոքում էր հայ ժողովրդի վերքերը, մտածում նրա բախտի մասին։

1922 թվականի սեպտեմբերի վերջերին Գորկայում Վ. Ի. Լենինը ընդունեց Հայկական ՍՍՌ կառավարության նախագահին և մանրամասն զրույց ունեցավ ռեսպուբլիկայի վիճակի ու խնդիրների մասին։ Այդ զրույցի ժամանակ, ինչպես այն օրերին գրել է Ալ. Մյասնիկյանը, Վ. Ի. Լենինը «Աշխույժ հետաքրքրվում էր ամեն ինչով։ Ծիծաղում էր, սրախոսում։ Նա հարցրեց մեր Կովկասյան գործերից, ֆեդերացիայից, հարց բարձրացրեց ոռոդման, Մուղանի, բամբակի, ազգային հարաբերությունների, Թուրքիայի, ամերիկյան կոմիտեի գործունեության և բանակի մասին։ Խորհուրդ տվեց ամենալուրջ ուշադրություն դարձնել բամբակագործության վրա, խոստանալով լիակատար աջակցություն»[2]։

---

[1] Տե՛ս Նանսենի «Խարված ժողովուրդ» գիրքը, գերմաներեն, 1928, Լայպցիգ, էջ 331—334։

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», № 235, 18 հոկտեմբերի 1922 թ.։

Վ. Ի. Լենինի հետ ունեցած հանդիպման մասին մամուլին տված զրույցի մեջ Ա. Ֆ. Մյասնիկյանը հայտնել է, որ Լենինի ցուցումով անհրաժեշտ միջոցներ են տրվել Մուղանի դաշտի իրացման, Ավճալայի հիդրոէլեկտրակայանի (Զագէսի) կառուցման և Հայաստանի կարիքների համար։ «Ընկեր Մռավյանը Հայաստանի համար խոշոր արժեքի սուբսիդիա կստանա»[1]։ Զրույցի վերջում Մյասնիկյանը տեղեկացրել է, որ Անդրկովկասը արդեն Ռուսաստանից ձրի ստացել է 1. 200.000 փութ հաց, բացի այդ ստացվում է մանուֆակտուրա, մթերքներ, ոսկի։ «Ընդհանրապես ընկեր Լենինը այժմ իրեն շատ լավ է զգում,—գրում էր Մյասնիկյանը 1922 թ. հոկտեմբերի 18-ին,—անցել է աշխատանքների, ինչպես կուսակցության Կենտրոնական Կոմիտեում, նույնպես և ժողկոմների խորհրդում»[2]։

1922 թվականի դեկտեմբերին Վ. Ի. Լենինի և ՀՍՍՌ ներկայացուցիչ Ալ. Մյասնիկյանի միջև տեղի ունեցած զրույցից հետո Աշխատանքի և Պաշտպանության խորհուրդը քննարկում է «Սովյալ հայերին օգնելու հարցը»[3]։ ԱՊԽ-ի արձանագրության մեջ շեշտված է, որ հայ բնակչությունից 300.000 մարդ, որ փախել են իրենց հայրենի օջախներից և գտնվում են Սովետական Հայաստանում, հացի մեծ կարիք ունեն։ Աշխատանքի և Պաշտպանության խորհուրդը միջնորդում է պարենային ժողկոմատին անհրաժեշտ պարենամթերք հատկացնել Հայկական ՍՍՌ-ին՝ կարիքավոր հայ բնակչությանը բավարարելու համար։

Եվ այսպես, կարելի է նշել նաև շատ ուրիշ որոշումներ, որոնք ընդունվել են Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ, որոնց նախաձեռնողը Լենինն է եղել, որոնք կյանք էին տալիս արյունաքամ եղած հայ աշխատավորին։

* * *

Այսպիսով, Վ. Ի. Լենինը, մերժելով «ավտոնոմիզացիայի» սխալ տեսակետը, իրականացնելով ազգային սովետներն ռեսպուբլիկաների գաղափարը, սովետական ազատագրված ժողովուրդներին ուժ ու կորով տվեց, խրոխտ քայլերով առաջ ընթանալու սոցիալիստական հասարակարգի ուղիով։

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», № 235, 18 հոկտեմբերի 1922 թ.։

[2] Նույն տեղում։

[3] Տե՛ս ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 19, ց. 3, գ. 372։

Հայկական ՍՍՌ-ի ստեղծումով Վ. Ի. Լենինը հայ ժողովրդի բախտի համար բացեց մի արշալույս։ Հայկական ՍՍՌ-ն զարգացման լիակատար երաշխիքներ գտավ Սովետական Ռեսպուբլիկաների Միության մեջ մտնելով։ Առանց այդ Միության, Սովետական Հայաստանը թույլ էր, անկարող էր դիմանալ Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի ժանդարմ Թուրքիայի ճնշմանը և հոշոտմանը, անկարող էր հաղթահարել աներևակայելի դժվարությունները։

Վ. Ի. Լենինի հիմնադրած Սովետական Միության մեջ Հայկական ՍՍՌ-ն գտավ անշահախնդիր դաշնակիցներ, Լենինյան ազգային քաղաքականության հզոր լուսարձակը լուսավորեց հայ ժողովրդի նոր կյանքի ուղին։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ ԴԵՊԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԱՊԱԳԱՆ

1. Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Վ. Ի. Լենինը իր կյանքի վերջին շրջանում շարունակում էր անդուլ կերպով հոգ տանել ՍՍՌՄ-ի մեջ մտնող ռեսպուբլիկաների, այդ թվում և Սովետական Հայաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի կազմակերպման մասին, հայ ժողովրդի ազգային վերածննդի մասին։ Հայկական ՍՍՌ-ի, ինչպես նաև մյուս ազգային ռեսպուբլիկաների սովետական, տնտեսական և կուլտուրական շինարարության հարցերը «մշտապես գտնվում էին Լենինի տեսադաշտում»[1]։

Հայկական ՍՍՌ-ն Միութենական Ֆեդերացիայի կազմում շրջապատվեց եղբայրական ռեսպուբլիկաների հոգատարությամբ։ Պատմության ծալքերում մնաց հայ ժողովրդի մեկուսացածությունն ու անօգնականությունը, երբ նրան հալածում էին, կողոպտում, արտաքսում իր հայրենիքից։ Հայկական ՍՍՌ-ին վերաբերվող քաղաքական, ռազմա-պաշտպանական և տնտեսական հարցերը դարձան Սովետական Միության ընդհանուր հարցերի բաղկացուցիչ մասերը։ Սովետական Հայաստանն ստացավ հզոր և անհաղթելի ուժ, որի վրա կրթնած առաջ գնաց սոցիալիստական վերափոխությունների ուղիով։

Այդ փոփոխությունների հետևանքով ժողովրդի ձեռքն անցան հողը, հանքերը, գործարանները, երկաթուղիները և արտադրության այլ միջոցները, դրանք դարձան հանրային սեփականու-

---

[1] Վլադիմիր Իլյիչ Լենին, *Կենսագրություն*, էջ 542 (*ռուս. հր.*)։

թյուն, որի հիմքի վրա պայքար ծավալվեց սոցիալիզմի կառուցման համար։ Ռևոլյուցիոն հեղաշրջում կատարվեց երկրի քաղաքական կյանքում և ժողովուրդը ընտրեց իշխանության օրգաններ՝ բանվորների, գյուղացիների և զինվորների Դեպուտատների Սովետներ։ 1921 թվականին Վ. Ի. Լենինը ընտրվեց Երևանի Քաղաքային Սովետի առաջին գումարման պատվավոր դեպուտատ։

Դեռևս այն ժամանակ Հայկական ՍՍՌ-ի աշխատավորներն անհուն սիրո զգացմունքներ էին տածում դեպի Վ. Ի. Լենինը և նրա անվան հետ էին կապում իրենց բախտի մեջ կատարված շրջադարձը։ Այդ զգացմունքները լավ են արտահայտել Ռեսպուբլիկայի մայրաքաղաքի Սովետի դեպուտատները առաջնորդին ուղղած նամակում։ 1922 թվականին Երևանի Քաղաքային Սովետի առաջին սեսիայում ընդունվել է հետևյալ նամակը.

«Մոսկվա, Կրեմլ,

Երևանի Քաղսովետի պատվավոր անդամ ընկեր Լենինին.

Երևան քաղաքի բանվորների, կարմիրբանակային դեպուտատների վերընտրված Սովետն իր պատվավոր անդամին և աշխարհում առաջին պրոլետարական ռևոլյուցիայի թանկագին առաջնորդին հղում է ջերմագին ողջույն։ Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները Մեծ Սովետական Ֆեդերացիայի ընդհանուր ընտանիքում խաղաղ պայմաններում կռում են կոմունիստական հասարակության հիմքերը, նվիրվելով... քարուքանդ արված իրենց օջախների վերականգնման ստեղծարար աշխատանքներին։ Հայաստանի աշխատավորները դրա համար երախտապարտ են Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիային և առաջին հերթին համաշխարհային պրոլետարիատի դասակարգային պայքարը ղեկավարող Ձեր հանճարին... Կեցցե ռուսական պրոլետարիատը։ Կեցցե մեր մեծ ղեկավար Իլյիչը։

Սովետի Նախագահ՝ Տեր-Սիմոնյան»[1]։

Վ. Ի. Լենինի ջանքերով ստեղծված Սովետական Ռեսպուբլիկաների Միության մեջ Հայկական ՍՍՌ-ն դարձավ տառապյալ հայ ժողովրդի հանգրվանը, նրա աղատագրված Հայրենիքը, որը դեպի իրեն ձգեց իր տարագիր զավակներին և բոլոր պանդուխտներին։ Սկսվեց հայ ժողովրդի տարագիր հատվածների աստիճանական շարժումը դեպի Սովետական Հայաստան։ Դա հայ ժողովրդի կոնսոլիդացիայի սկիզբն էր, նրա ցրված մասերը մայր

---

[1] «Աշխատավորների նամակները Վ. Ի. Լենինին», էջ 435—436։

Հայրենիքում ապրող մասսայի հետ վերամիավորման սկիզբը։ Աշխարհի տարբեր մասերում դեգերող հազարավոր հայ աշխատավորներ սկսեցին շարժվել դեպի Սովետական Հայաստան, կանգնելու Լենինի դրոշի ներքո։ Նրանց համար նոր առավոտ էր բացվում և նրանք կատաղի ալեկոծումից փրկվելով, նոր ափ էին դուրս եկել։

1921 թ. մայիսին Էջմիածնի գավառում տեղավորված արևմտահայերի բազմամարդ համագումարը նամակ հղեց Վ. Ի. Լենինին, հայտնելով իր խորին երախտագիտությունը. «Երդվում ենք սուրբ աշխատանքով,—գրել են արևմտահայերը,—որ կապահովենք հակահեղափոխության ոտնձգություններից մեզ, չքավոր գյուղացիներիս և կամրապնդենք հարազատ բանվորա-գյուղացիական Հայաստանը»[1]։

1922 թվականի աշնանը, Հայկական ՍՍՌ կառավարության նախագահ Ա. Մյասնիկյանը նորից այցելեց Վ. Ի. Լենինին, նրա հիվանդության օրերին։ Մոսկվայից վերադառնալուց հետո, Հայաստանում ամենուրեք նրան տրված առաջին հարցերն էին. «Դուք տեսա՞ք ընկեր Լենինին», «Ինչպե՞ս է նրա առողջությունը»։ Ա. Մյասնիկյանի հաղորդումը այն մասին, թե «ընկեր Լենինն իրեն շատ լավ էր զգում... աշխույժ կերպով հետաքրքրվում է ամենինչով...», որ «Լենինը այժմ անցել է աշխատանքի ինչպես պարտիայի Կենտկոմում, նույնպես և Ժողկոմսովետում»[2]։

Վ. Ի. Լենինի աշխատանքի վերադառնալու կապակցությամբ 1922 թ. հոկտեմբերին Ալեքսանդրապոլի գավառի 145 գյուղերի պատգամավորներ և Քաղաքային Սովետն ու Գավառի Գործադիր Կոմիտեն հեռագրեր ուղարկեցին ՌԿՊ Կենտկոմ։ Հեռագրում ասված է, որ մենք փաշաների և բեկերի թալանից փրկված աշխատավորներս մեր ջերմ ողջույնն ենք ուղարկում համաշխարհային պրոլետարիատի ղեկավար ընկեր Լենինին։ «Մենք անհուն ուրախություն զգացինք, երբ իմացանք, որ ընկեր Լենինը անցել է աշխատանքի։ Մենք կկրկնապատկենք, կեռապատկենք մեր աշխատանքը գավառի վերականգնման գործում։ Հաղորդեցեք մեր ողջույնը մեր թանկագին Վլադիմիր Իլյիչին։

Քաղաքային սովետի նախագահ՝ Ա. Շահգելդյան»[3]։

---

1 ՀՍՍՌ ՀՌԿՊԱ, ֆ. 114, գ. 16, թ. 58։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», № 235, 18 հոկտեմբերի 1922 թ.։

3 Տե՛ս «Շիրակի առնչպար» թերթը, 11 հոկտեմբերի 1922 թ.։

Նույն բովանդակությամբ բազմաթիվ հեռագրեր են ուղարկվել Մոսկվա, իսկ նրանց պատճենները տպվել են Էջմիածնի գավառի «Կարմիր գյուղացի», Զանգեզուրի՝ «Կարմիր ռանչպար», Նոր Բայազետի «Մուրճ ու մաճ», Լոռվա գավառի «Կարմիր Լոռի» և ուրիշ թերթերում, կամ պահպանվում են արխիվներում։

Հայ ժողովուրդը Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ բարեկամությամբ տոգորված լծվել էր իր ավերված երկրի վերականգնման գործին։

Իր կյանքի վերջին օրերում Վ. Ի. Լենինը անդադրում մտածում էր պարտիայի և երկրի մասին, ձևակերպում էր իր հանճարեղ պատգամները սովետական ժողովրդին, ամբողջ աշխարհի աշխատավորներին։ Վերջին անգամ ընդունելով Սովետական Հայաստանի կառավարության նախագահին և զրուցելով նրա հետ, առաջնորդին հուզում էր հայ ժողովրդի վիճակը, նրա բախտը։ Վ. Ի. Լենինը «հարցնում էր, թե արդյո՞ք ոտքի կանգնե՞լ է ավերված Հայաստանը. ի՞նչ դրության մեջ է այնտեղ բամբակը, ոռոգումը, պարենամթերքը, բավականաչափ ամո՞ւր է արդյոք ազգային Կարմիր Բանակը. չե՞ն նեղացնում արդյոք «մանր մարդկանց...»[1]։

2. Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՄԱՀԸ. ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԻՇՏ

Հունվարի 21-ի երեկոյան ժամը 6 անց 50 րոպեին Վլադիմիր Իլյիչ Լենինի սիրտը դադարեց բաբախելուց։ Առաջնորդի մահվան բոթը անհուն վիշտ պատճառեց աշխատավոր մարդկությանը։ Լենինի աշակերտներն ու բարեկամները շտապում էին դեպի Գորկի։

Նրանց մեջ էին հայ ժողովրդի ներկայացուցիչները։ Այդ օրերին Մոսկվայում էին Ա. Ֆ. Մյասնիկյանը, Ա. Ի. Միկոյանը, Հ. Պ. Նազարեթյանը, Վ. Ա. Ավանեսովը, Ա. Բ. Խալաթովը, Ա. Բ. Կարինյանը, Ե. Չարենցը, Ս. Մ. Խանոյանը և շատ ուրիշ գործիչներ, որոնք աշխատում էին կենտրոնում կամ ժամանել էին Մոսկվա Հայաստանից ու մյուս ռեսպուբլիկաներից։ Նրանք արտահայտում էին իրենց վիշտը, իրենց ժողովրդի զգացմունքներն ու ծանր վերապրումները մեծ առաջնորդի մահվան առթիվ։

Առանձնապես հետաքրքիր է Ա. Ֆ. Մյասնիկյանի այդ օրերին կազմած օրագիրը, որում շարադրված են նրա հույզերը, խոհերը և զգացմունքները Վ. Ի. Լենինի մասին։

---

[1] Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 470—471։

Բայց օրագրում արտահայտված են ոչ միայն Մյասնիկյանի վերապրումներն ու խոհերը: Դա մի փաստաթուղթ է, որը վկայում է 1924 թ. հունվարի 21-ից մինչև 27-ի լենինյան օրերում կատարված համապարտիական նշանակություն ունեցող իրադարձությունների մասին, որոնք այդպիսի նրբանկատ և ճշմարտացի չեն նկարագրվել ոչ ոքի կողմից: Ուստի այստեղ կբերենք այդ օրագրի մի քանի հատվածներ.

«21 հունվար: Երեկո է: Պառկել և հանգստանում էի: Հանկարծ ինձ մոտ է մտնում շփոթված ու մտահոգ Կիրովը հետևյալ խոսքերով. «Իլյիչի դրությունը շատ վատ է: Կենտկոմի անդամները գնում են նրա մոտ»: Տիրեց ծանր լռություն: Ահա հեռախոսով հայտնում են, որ Լենինի առողջության վատացման հետևանքով գիշերվա ժամը երկուսին նշանակված է Կենտկոմի պլենում: Նորից ինձ մոտ է մտնում Կիրովը: Նա լաց է լինում:

«Իլյիչը չկա, ամեն ինչ վերջացած է»:

Անցնում են ճնշող րոպեները: Տեղեկությունը հայտնեց Ենուկիձեն: Վճռում ենք Մամիայի հետ միասին գնալ Ավելի մոտ: Մեր հանդիպակացարանում ապրող ընկերներին ոչինչ չենք ասում...»:

Այնուհետև օրագրում նկարագրված է Ենուկիձեի աշխատասենյակում հավաքված ընկերների խորհրդակցությունը, որտեղ ներկա են եղել Կույբիշևը, Ձերժինսկին, Ավանեսովը, Յարոսլավսկին և ուրիշներ: «Ամենակատարյալ լռություն և կենտրոնացածություն: Այժմ այլ բանի մասին խոսելու հնարավորություն և ուժ չկա: Կենտկոմին օգնելու համար կազմում են Իլյիչի թաղման պլանն ու կարգը...»: Մի նախագիծ է առաջարկում Ավանեսովը, այնուհետև Ձերժինսկին: Մշակվում են մի շարք առաջարկներ, որոնք հետո մտան թաղման կարգի մեջ:

«Ժամի 2-ն է: Գնում ենք ԿԳԿ-ի շենքը: Կենտկոմի մեծ մասը հավաքված է: Եթե ճանճը թռչի, կլսվի: Բոլորը սուզված են խոր և մռայլ մտքերի մեջ: Նույնիսկ իրար բարև չեն տալիս: Մոռացել են առօրեականի մասին: Չկա միայն Քաղբյուրոն: Ուր որ է նա կվերադառնա Գորկուց...»: Մյասնիկյանը պատմում է Քաղբյուրոյի անդամների ժամանելու մասին, այն մասին, որ նրանց գալու պահին ևս իշխում էր լռություն, բոլորը նստած են, ոմանք հենց այնպես, առանց շարժվելու, իսկ ոմանք ծխելով: Երբեմն, հազիվ շշուկներ են լսվում: Սկսվում է Կենտկոմի պլենումը, քննվում են Լենինի թաղման միջոցառումները:

«Ամեն ինչ որոշվում է այնպես, ինչպես հետո դուրս եկավ:

ՌՍՖՍՌ Սովետների համագումարը սուպ է հայտարարում և ընդհատում իր նիստերը: Մարմինը դրվում է Միությունների Տանը և նրա մոտով թույլատրվում է անցնել ժողովրդին այնքան ժամանակ, մինչև որ չի մնա վերջին անգամ Իլյիչին տեսնել ցանկացող բանվորական ոչ մի խումբ: Թաղումը Կարմիր հրապարակում: Ընտրվում է թաղման հանձնաժողով Ձերժինսկու գլխավորությամբ: Մահվան մասին տեղեկություն է ուղարկվում Կենտկոմի բացակա ընկերներին...

22 հունվարի: Գնում ենք Գորկի: Կենտկոմը և ԿԳԿ-ն լրիվ կազմով են: Պատրաստված է հատուկ գնացք...»: Մյասնիկյանը. Օրջոնիկիձեի, Կիրովի, Միկոյանի և ուրիշ ընկերների հետ մասնակցում է թաղման առթիվ լուսանկներ մշակելուն: «Թաղման հանձնաժողովի անդամներն ինչ-որ կարգադրություններ արեցին: Եկան Բուբնովը և Ունշլիխտը: Առաջինը գրեց Ռազմա-ռևոլյուցիոն խորհրդի հրամանի տեքստը Իլյիչի մահվան առթիվ: Ինչ-որ ուղղումներով հավանություն տվեցին: Համաձայնեցրին քարտուղարության հետ... Մարերի փոխանակություն ենք ունենում: Կոնֆերանսից հետո այժմ մեզ ավելի մեծ չափով է հարկավոր միասնությունը[1]: Պետք է փոխհատուցել հեռացած Իլյիչի կորուստը: Լիովին չի կարելի: Հնարավոր է մասամբ: Կոչեն ֆրակցիաները: Այդ մահը մեզ բոլորիս պետք է միավորի: Իսկ մոլի ֆրակցիոներներին պետք է մինչև վերջ ջարդել: Այնպիսի մարդիկ, ինչպիսին Ռադեկն է, եթե նա ուշքի չգա, մերկացնել... Նա անհանգիստ և անսկզբունք մարդ է: Քաղաքականապես գոռողացել է: Եվ մենք բոլորս համաձայնության ենք գալիս, որ որոշ ժամանակ այդ ընկերոջը այսպես ասած, պետք է կապել սոսկ հացի ու ջրի: Այն ժամանակ կխելոքանա: Իսկ Տրոցկի՞ն: Մենք ծիծաղում ենք, թե նա ինչպես դավաճանեց յուրայիններին[2]: Նրանց թողեց բախտի քմահաճույքին: Տրոցկին իմացել էր Իլյիչի մահվան մասին: Թիֆլիսից հաղորդագրով հարցնում էր՝ վերադառնա՞ արդյոք, ինքը պատրաստ է. բայց կարող է ելույթ ունենալ միայն փակ շենքերում: Քաղբյուրոն պատասխանեց, թե լավ կլինի, որ Տրոցկին շարունակի իր ճանապարհորդությունը, ավարտի բուժման կուրսը: Նա այդպես էլ վճռեց և խոստացավ, եթե հաջողվի, ժամկետից շուտ վերադառնալ գործի:

Գնացինք կայարան: Գնացքում մութ է: Այստեղ ու այնտեղ

---

[1] Նկատի ունի ՌԿՊ 13-րդ կոնֆերանսը, որը տեղի էր ունեցել 1924 թ. հունվարի 16—18-ին:

[2] Նկատի ունի օպոզիցիայի կոմունիստներին:

լսվում են խոսակցություններ պարտիայի կամ այս կամ այն ընկերոջ կյանքի ռևոլյուցիոն դրվագների մասին։ Մենք Գորկիում ենք, այսուհետև այդ պատմական անկյունում։ Ուղղակի մտնում ենք այն սենյակը, որտեղ սեղանի վրա պառկած է Իլյիչը։ Կենտկոմը և ԿԳԿ-ն խմբվել են նրա մոտ։ Տասնյակ բոպեներ և ամբողջ ժամեր լուռ կանգնած ենք նրա մոտ։ Որքան խոհեր ու մտքեր։ Հուշերն այդպես էլ հոսում են... Չէ՞ որ դա մի ամբողջ դարաշրջան է, մեր հերոսական էպոպեան։ Մեր լավագույն պատմությունը։

Ինքնունակաև թվականներ։ «Իսկրա»։ 1905 թվական։ Ռեակցիա։ Լենա։ Պատերազմ։ Կերենսկինա։ Հոկտեմբեր։ Սովետական իշխանություն։ Եվ շարունակ Լենին, Լենին և Լենին։ Ահա նա պառկած է մեռած։ Անհավատալի է։ Դեմքն այնպես թարմ է։ Ձախ կողմից դեմքի վրա պահպանվել է բնորոշ ժպիտը։ Սա ի՞նչ է։ Երա՞զ, թե՞ իրականություն։ Նորից մտքեր ու խոհեր։

Դուրս ենք գալիս մյուս սենյակը։ Ամբողջ կահավորությունը և խոսակցությունները վկայում են մահվան մասին։ Բժիշկները հերձման միջոցով պարզել են, որ ուղեղը բազմաթիվ խոր ու բազմազան ծալքեր ունի։ Հիվանդությունը անուշադրության մատնված սկլերոզն է։ Օրգանիզմը պահպանված էր։ Նա զորեղ էր։

Գիշերն անց ենք կացնում Գորկիում։ Սենյակներում։ Աթոռների և բազմոցների վրա։ Ոմանք ննջում են օրվա հուզմունքներից և խոհերից, հոգնածությունից։ Վերևում, Իլյիչի մոտ գտնվող սենյակում, պառկում է Կիրովը, մի անպարտիական միրուքավոր գյուղացի զրուցում է Նադեժդա Կոնստանտինովնայի հետ։ Նա սկսում է սփոփել նրան։ Դա նրա վրա ոչ մի տպավորություն չի թողնում։ Գյուղացին տեսնում է, որ դա անմիտ է։ Հետո նա փոխում է ֆրոնտը, և ասում է. «Ախ, նա վաղաժամ մեռավ։ Հողը տվեց։ Բայց պետք է այն վերջնականապես ապահովել մուժիկների համար։ Գոնե մի հինգ տարի էլ ապրեր»։

Ներքևում բույսերի մեջ թաղված մեծ դահլիճ է։ Այնտեղ կա նաև տոնածառ։ Այն պատրաստել են «Ծննդյան տոնի» համար։ Այնտեղ են նաև Իլյիչի սայլակի ավտոմատները։ Ամենուրեք լռություն է և տխրություն։

Կան բազմաթիվ ընկերներ։ Ժամանում են պատվիրակություններ նահանգներից, մարզերից և ռեսպուբլիկաներից։ Մարմնի մոտ հերթապահություն է՝ պատվավոր պահակություն։ Ես կրկին պահակ եմ կանգնած մարմնի մոտ։ Դիակը արդեն կարմիր դագաղի

մեջ է։ Կրծքին ԿԳԿ-ի նշանն է և Կարմիր Դրոշի շքանշանը։ Դա արդեն իրողություն է։ Իլյիչը մեռել է, նա դագաղի մեջ է։

23 հունվարի։ Առավոտ։ Դագաղը դուրս են բերում։ Գնում ենք կայարան։ Թվում է, թե հեռավորությունը 2 վերստ է։ Բազմաթիվ գյուղացիներ, գեղջկուհիներ ու երեխաներ են դուրս թափվել հարևան գյուղերից։ Սկսվեց թաղումը։ Մենք փոխեփոխ տանում ենք դագաղը։ Կայարան։ Մացնում ենք վագոն։ Նստում ենք գնացք։ Այն մեկնում է։ Ճանապարհին ամենուրեք գյուղացիները լուռ ու վշտահար ուղեկցում են նրան։

Մոսկվա։ Նրա ռևոլյուցիոն զավակները դիմավորում են առաջնորդին։ Դագաղը դուրս են բերում։ Շատերը լաց են լինում։ Լաց են լինում մեքենավարը, նրա օգնականը և գնացքի ուրիշ մարդիկ։ Դագաղը նորից տանում ենք Մոսկվայի փողոցներով։ Այստեղ են պարտիայի, շրջանների և կազմակերպությունների գրեթե բոլոր ներկայացուցիչները։ Քաշ է գալիս գունատ, դողահար և ծեր Կլարա Ցետկինը։ Նա դառնագին լաց է լինում։ Ամենուրեք ահագին թվով ժողովուրդ, բանվորներ, գյուղացիներ։ Կատարյալ կարգ ու կանոն։ Դագաղը մացնում են Միությունների տունը և գնում այնտեղ։

24 հունվարի։ Ամբողջը օրը շարքերով և խմբերով գալիս են դեպի Միությունների տունը։ Սուգը համաժողովրդական է։ Բոլորն էլ ողում են մահը։ ՌՍՖՍՌ Սովետների համագումարում մահվան մասին հայտարարելիս լսվեցին բացականչություններ, հեկեկոց, լաց և հառաչանքներ։ Չնայած խիստ ցրտին, ամբողջ Մոսկվան պատրաստվում և գնում է խոնարհվելու»։

Ա. Ֆ. Մյասնիկյանն օրագրի հաջորդ էջերում պատմում է Օրջոնիկիձեի, Միկոյանի, Կիրովի, Վորոշիլովի և ուրիշների հետ ունեցած զրույցների և ներպարտիական պայքարի այլ խնդիրների մասին։

«26 հունվարի։ Երեկ հերթապահում էի դագաղի մոտ։ Մեծ թվով ժողովուրդ է անցնում։ Ժամացույցով հաշվում եմ՝ բոպեում մոտ 200 կամ 225 մարդ։ Լաց են լինում։ Տեղի են ունենում հիստերիաներ։ Հասակավորների ձեռքերի վրա գտնվող երեխաները նայում են Լենինին։ Հոյակապ տեսարան է։ Այսօր երեկոյան բացվում է Միության (Սովետների) II համագումարը։ Թատրոնը լեփ լեցուն է։ Նախագահության ընտրությունները հետաձգված են։ Միայն ճառեր են արտասանում Լենինի մասին։ Շատ հռետորներ վատ

են խոսում—դժվար է և ծանր... Ժողովի առանցքը դարձավ Կրուպսկայայի ելույթը։ Նա ամբողջովին սգի մեջ է։ Ձայնը թույլ է հընչում։ Բայց խոսքերն այնպես սրտաբուխ են, անկեղծ, պարզ ու հասարակ, որ հուզում են ամբողջ դահլիճը։ Մենք լաց ենք լինում։ Նա խոսում է աշխատավորների նկատմամբ Լենինի անսահման սիրո մասին և խնդրում է պահպանել առաջնորդի այդ պատգամը։ Ճառերից հետո համագումարը փակում է նիստը և ամբողջովին մեկնում է դեպի դագաղը։

27 հունվարի։ Իլյիչի թաղումն է։ Ժամը 7-ին մենք արդեն Միությունների Տանն ենք։ Հավաքվել էին ամբողջ Կենտկոմը. ԿԳԿ-ն, բոլոր ամենահին բոլշևիկները, գալիս են ԿԳԿ-ի անդամները և համագումարի պատգամավորները։ Պատվո պահակները փոխարինում են միմյանց։ Լուսանկարչական ապարատները շրխկում են։ Հնչում է երաժշտությունը։ Իլյիչի դեմքը փոքր ինչ փոխվել է։ Այն սպիտակել է։ Վերջին անգամ կանգնած եմ Լենինի բաց մարմնի մոտ։ Պատրաստվում ենք դուրս բերելու։ Ժամը 9½ է։ Դագաղը դուրս են բերում, ծածկելով կափարիչով։ Ժողովուրդը և զորքը փողոցում են։ Սոսկալի ցուրտ է։ Կողք-կողքի գնում ենք ես, Կիրովը։

Մինչև Կարմիր հրապարակը հեռու չէ։ Շրջաններից շարժվում է թաղման թափորը։ Բոլոր տների բոլոր պատուհանները լցված են Իլյիչին դիտողներով և հրաժեշտ տվողներով։ Դագաղը դնում են Սվերդլովի դերեզմանի դիմաց գտնվող բարձր ամբիոնի վրա։ Իլյիչի համար պատրաստված է դամբարան՝ Սվերդլովի առջև։ Դամբարանը լավն է և հարմար։ Այնտեղ մաքուր և հանգիստ է։ Էլեկտրական փոքրիկ վառարանները ջերմատիճանն այնտեղ բարձրացնում են մինչև զրո։ Մոտ կես ժամ Միկոյանի հետ նստեցինք այնտեղ և զրուցեցինք ռևոլյուցիոն անցյալի մասին։

Հրապարակում մեծ թվով ժողովուրդ կա։ Թափորներն անցնում են։ Հոյակապ տեսարան է։ Նրանք անցնում են մինչև ժամը 18-ը, 19-ը։ Եթե Միությունների Տանը Իլյիչին այցելել 700.000 մարդ, ապա հրապարակով և նրա մոտով անցավ դրանից ոչ պակաս թվով մարդ։ Արդյոք երբևիցե եղել է նման թաղում։ Կարծում եմ, որ ոչ։ Ահա ձեզ Իլյիչը, նրա մեծությունը, նրա հմայքը, նրա նշանակությունը։

Ուղիղ ժամը 16-ին լսվում են հրաժեշտի սալյուտները, և դագաղը իջեցնում են դամբարան։ Թաղումն ավարտվեց։ Ես գնում եմ «տուն»...

Իսկ մասսաները, մեծ և ծանր մասսաները, այդ սառնամանիքին, այդ սոսկալի ցրտին, առջևում հսկայական դրոշակներով ու պլակատներով գնում, շտապում են դեպի Իլյիչը։

Ավլուն, ձգտում, կամք։

Մեծ է Իլյիչը։ Հզոր է Սովետական իշխանությունը։

Կեցցե Լենինը»։

Հայկական ՍՍՌ-ի մեկ ուրիշ ներկայացուցիչ՝ Ա. Բ. Կարինյանը, այդ օրերին լինում էր Միությունների Տանը, սգավոր Մոսկվայի փողոցներում ու հրապարակներում, տեսնում ժողովրդի վիշտը, գրի առնում իր տպավորությունները։ «Լենինը և աշխատավորական Մոսկվան» վերնագրով ընդարձակ հոդված-հեռագիր է կազմել նա այդ օրերին և ուղարկել Անդրկովկասի մամուլին։ Կարինյանը գրել է. «...Հսկայական ժողովրդական այն հոսանքը, որ գալիս է Մոսկվայի զանազան ծայրերից, գործարաններից և արհեստանոցներից, հեռավոր բանվորական կվարտալներից և խուլ փողոցներից... «հասարակ» բանվոր ժողովուրդը և «մուժիկային», ռանչպարական Ռուսիան չի հավատում, չի ուզում հավատալ, որ իր «աննկուն» և «Մեծ Կոմանդարմը» հեռացել է ընդմիշտ...

Օր և գիշեր, երկու օր և գիշեր այդպես մինչև կիրակի օրը գալիս են ու գալիս... գալիս են մեծ և լայնատարած Մոսկվայի զանազան ծայրերից հաղարավոր և հարյուր-հաղարավոր խմբերը... լուռ երևում են կեսգիշերին, ժամը 12-ին, մեկին, երեքին, առավոտ 5-ին և վեցին, և այսպես անվերջ երկար շարքերը մեծ ժողովրդական հոսանքի։

...Ցուրտ է, սառնամանիք։ Երկինքը մռայլ, ինչպես միշտ լինում է հյուսիսում՝ ամպամած և թանձր մառախուղով ծածկված։ Փողոցներում վառված են խարույկներ — այդքան սոսկալի է այս տարվա ձմեռը։ Եվ չնայած դրան, ժամերով սպասում է «Միությունների Տան» շեմքի մոտ տխուր ժողովուրդը այն մոմենտին, երբ կկարողանա ներս մտնել իր «Մեծ Կոմանդարմին» վերջին հրաժեշտը տալու—Մի վայրկյան գոնե դիտելու նրա դեմքը...։

Ու տարօրինակ չի թվում դրանից հետո այն, որ Մոսկվայի խոշոր գործարաններից մեկի բանվորները պահանջեն՝ չհանձնել հողին Լենինի մարմինը, գործադրել գիտական բոլոր միջոցները՝ նրա դեմքը և մարմինը անվթար պահելու և հնարավորություն ստեղծել Ռուսիայի և երկրագնդի համայն բանվորության համար միշտ զգալ Լենինի մոտիկությունը և ներկայությունը։

Եվ մեկուկես օրվա ընթացքում, կերտված քարե մավզոլեյը

կարծես հենց այդ բանվորների և դրանց միլիոնավոր մյուս ընկերակիցների ցանկությունը բավարարելու համար այնպես է կազմված, որ ամեն ոք դեռ երկար ժամանակ կարող լինի նորից և նորից տեսնել Լենինին ու «զգա» նրա ներկայությունը»[1]։

Մոսկվայում գտնվող Հայկական ՍՍՌ-ի պետական գործիչներից՝ հին բոլշևիկ-լենինյան Ս. Խանդայանը նկարագրել է դագաղում պառկած Լենինի դիմագծերը և Մոսկվայի աշխատավորների հուզկանքները։ «Քաղաքն իրարանցման մեջ է,—գրել է նա,—անցնում են շարքեր անվերջ ու անհատ... լալիս են պղնձե փողերը...»։ Այնուհետև նա Միությունների Տանն է, Սյունաղարդ դահլիճում, այնտեղ ուր ննջում էր Վ. Ի. Լենինը, «միլիոնավոր զանգվածների մեծ վարպետը, մեծ մարդարեն, մեծ ռևոլյուցիոները... դագաղը մեծ հրամանատարի, լայն ճակատը, սառած դեմքը սառը տարբությամբ ընդունում է այցելուներին...»[2]։

Այդ այցելուների մեջ էին աշխարհի բազմացեղ և բազմալեզու շատ ժողովուրդների ներկայացուցիչներ, նրանց շարքերում էին հայ ժողովրդի տասնյակ զավակներ։

3. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԴՈՒՄԸ

Հայկական ՍՍՌ աշխատավորները ցնցվել, ալեկոծվել էին։ Երևանը սև ու կարմիր էր հագել։

Հունվարի 22-ին Երևանում տեղի ունեցավ Քաղաքային Սովետի, պարտիական և պրոֆմիութենական ակտիվի սգո նիստ։ Սերգո Մարտիկյանը կարդում է բանաձև-երդում լենինյան պատգամներին հավատարիմ մնալու մասին։

Վ. Ի. Լենինի թաղման օրը, հունվարի 27-ին Երևանի ամբողջ ժողովուրդը փողոց էր դուրս եկել կուռ, մարտական շարքերով։ Երևան էին ժամանել գավառների ներկայացուցիչները։ Բազմամարդ ժողովներ և միտինգներ են տեղի ունեցել քաղաքի տարբեր թաղամասերում, հրապարակներում, փողոցներում, որտեղ հանդես են եկել ռեսպուբլիկայի պետական գործիչները։

Հայկական ՍՍՌ պարտիական և պետական ղեկավար մարմինները կատարելով ռեսպուբլիկայի աշխատավորների ցանկու-

---

[1] «Կոմունիստ», Բաքու, 6 փետրվարի 1924 թ.։

[2] Մի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 17, ց. 1, գ. 4, թ. 64—66։

թյունները, մի շարք որոշումներ ընդունեցին Վ. Ի. Լենինի հիշատակը հավերժացնելու մասին։

Աշխատավորների դեպուտատների Երևանի Սովետը 1924 թ. հունվարի 24-ին որոշեց Երևանի պարետային վարչության շենքի առջևի հրապարակը անվանել Լենինի հրապարակ։ Որոշվեց վերակառուցել քաղաքի այդ մասը, այն դարձնել բարեկարգ, լայն հրապարակ, քաղաքի գլխավոր կենտրոն։

ՀԿՊ Կենտկոմը, ՀՍՍՌ Կգկ-ի Նախագահությունը, ՀՍՍՌ ԺԿՍ-ը և Հայ արհմիությունների խորհուրդը միացյալ որոշում ընդունեցին՝ «...Վլադիմիր Իլյիչ Ուլյանով — Ն. Լենինի հիշատակի հավերժացման համար Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանի կենտրոն Լենինի հրապարակում կանգնեցնել նրա արձանը»։ Թող ներկա և գալիք սերունդները,— ասված է որոշման մեջ,— ընկեր Լենինի կյանքը և նրա մեծ գործը օրինակ դարձնեն և նրանով ոգևորվեն[1]։ Այդ որոշման տակ դրված են Աշ. Հովհաննիսյանի, Հ. Աղամյանի, Ս. Մռավյանի և Հ. Գասպարյանի ստորագրությունները։

1921 թվականի հունվարի 30-ին հրապարակվեց կառավարական հեռագիր ուղղված Ալեքսանդրապոլի կոմիտեին և գավգործկոմին։ Հեռագրում ասված է. «Կենտգործկոմի և ԺողկոմխորՀի նախագահության որոշումով Ալեքսանդրապոլի անունը փոխվում է Լենինականի։ Հայտնեցեք բանվորներին և աշխատավորական մասսաներին, որ իրենց հեղափոխական գործերով նրանք պետք է քաղաքի հռչակը հավասարազոր պահեն Լենինի անվանը։ Կեցցե ընդմիշտ Լենինականը»[2]։

Երևանի և Լենինականի օրինակով Հայաստանի շրջաններում և գյուղերում աղատագրված հայ աշխատավորներն ըստ արժանվույն հատուցում էին մեծ ուսուցչին և առաջնորդին, հավերժացնում նրա հիշատակը։

Վ. Ի. Լենինի մահվան բոթը խոր տպավորություն թողեց գաղութահայ աշխատավորների վրա։ Ամերիկահայ առաջադիմական կազմակերպությունները, մամուլի օրգանները, աշխատավորները տարբեր ձևերով իրենց խոր ցավակցությունը հայտնեցին Լենինի մահվան առթիվ, այն մարդու, որը հայ ժողովրդին տվեց Հայկա-

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան» թերթը, № 23, 29 հունվարի 1929 թ.։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստան» թերթը, № 24, 30 հունվարի 1924 թ.։

կան Սովետական Ռեսպուբլիկա, մի հենարան, մի հանդրվան միլիոնավոր հալածված ու բաղմատանջ հայերի համար։

Այսպիսով, Վ. Ի. Լենինի կորստյան սուգը հայ աշխատավորների համար դարձավ համաժողովրդական և համազգային սուգ։

Սակայն Լենինի պարտիան կանչում էր սովետական բոլոր ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդին, բարձր պահել լենինյան դրոշը, ավելի սերտորեն համախմբվել նրա շուրջը։ Եվ երբ ՌԿՊ Կենտկոմը հրապարակեց հայտնի լենինյան կոչը պարտիայի շարքերը համալրելու մասին, հազարավոր հայ աշխատավորներ մտան Լենինի պարտիայի շարքերը, նվիրվեցին Լենինի գործին։

Ականավոր լենինյան Սարգիս Լուկաշինը «Իլյիչի պատգամները Անդրկովկասի ռեսպուբլիկաների աշխատավորներին» հոդվածով է հանդես եկել, որի մեջ շարադրել է Լենինի ցուցումներն ու դիրեկտիվները։ Ս. Լուկաշինը նշել է, թե Լենինն ինչպիսի խնդիր է դրել Անդրկովկասի ժողովուրդների առաջ, հատկապես բանվորների և գյուղացիների դաշինքն ամրապնդելու, ժողովուրդների բարեկամությունը զոդելու, ազգային ճիշտ քաղաքականությունը կիրառելու, էլեկտրիֆիկացիան և ոռոգումը զարգացնելու, տնտեսությունը բարձրացնելու գծով։

Հայ ժողովուրդը, նրա զավակների մի ամբողջ սերունդ—լենինյանների սերունդը երդվում էր հավատարիմ մնալ ռևոլյուցիայի գործին, անդուլ կերպով աշխատել և կատարել լենինյան պատգամները։

Հայաստանի Կոմունիստական պարտիան—Լենինի մեծ պարտիայի մարտական ջոկատներից մեկը, 1924 թ. հունվարի 25-ին կոչով դիմեց Հայաստանի բանվորներին և գյուղացիներին։ Այդ կոչում պարտիան ասում էր.

«Հայաստանի բանվորներ և գյուղացիներ...

Մեռավ ընկեր Լենինը, Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության ամենամեծ ղեկավարը և հանճարեղ առաջնորդը, ուսուցիչը...

Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Միության, այլև ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները ընկ. Լենինի մահվան առթիվ արցունք չէ, որ պիտի թափեն. ընկեր Լենինի հիշատակը մեզնից արցունք չի ուզում — այլ սրբազան երդում՝ անդավաճան կերպով շարունակելու համառ, անողոք կռիվ աշխատավոր մարդկության արյունը ծծող զազրելի կապիտալիստական ռեժիմի դեմ։

Հայաստանի բանվորներ և գյուղացիներ, համերաշխ, կուռ ձևր շարքերում այսօր հզորագին թող թնդա, հավերժ հիշատակ անմահ Լենինի անվանը»[1]:

4. ԱՌԱՋՆՈՐԴԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՍՐՏՈՒՄ

Վ. Ի. Լենինի կյանքը և գործունեությունը ոգեշնչել է հայ կուլտուրայի լավագույն գործիչներին: Վ. Ի. Լենինի գործունեության տարբեր էտապներում հայ կուլտուրայի շատ գործիչներ ձգտում էին տեսնել Լենինին, մասնակցել լենինյան գվարդիայի պայքարին, իրենց ստեղծագործություններում կերտել մեծ առաջնորդի կերպարը: Այստեղ համառոտակի կհիշատակենք մի քանի օրինակներ, իսկ թեման առանձին ուսումնասիրության հարց է[2]:

Վ. Ի. Լենինի և հայ կուլտուրայի գործիչների միջև անմիջական կապեր են հաստատվել դեռևս արտասահմանում, տարագրության մեջ և ապա ռևոլյուցիոն Ռուսաստանում: Այդ գործիչներից էին Ալեքսեյ Ջևիլիգյանը (Ջևիլիգովը), որը նամակագրություն ուներ Վ. Ի. Լենինի հետ, նրան հոդվածներ է պատվիրել և ստացել է մի շարք նամակներ, որոնք վերաբերվում են մարքսիզմի կարևորագույն հարցերի մասին իր հոդվածների տպագրելուն ու տարածելուն և գրաքննության հարուցած արգելքներին: Փարիզում հայ երգիչ Տիգրան Նալբանդյանը 1910 թվականին այցելել է Վ. Ի. Լենինին և հրավիրել իր համերգին: Լենինը լսել է Նալբանդյանի համերգները և բարձր գնահատել նրա տաղանդը:

Վ. Ի. Լենինի կերպարը ոգևորել է ականավոր քանդակագործ Հակոբ Գյուրջյանին: Դեռևս Փարիզում նա անձամբ ծանոթանում է Մ. Գորկու հետ և նրա միջոցով Լենինի հետ: Լենինը այցելում է Գյուրջյանի արվեստանոցը: Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Գյուրջյանը Սովետական Ռուսաստանումն էր, շատ անգամ հանդիպել է Վ. Ի. Լենինին, շրջագայել նրա հետ, լուսանկարվել, աշխատում էր քանդակել Լենինին:

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի օրերից սկսած Վ. Ի. Լենինի գործունեությունը ստեղծագործական նոր խիզախումների ոգեշնչեց հայ գրականության և արվեստի շատ գործիչների: Վահան Տեր-յանը լենինյան գաղափարների ազդեցության տակ վերափոխվեց և դար-

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 27 հունվարի 1924 թ.:

[2] Տե՛ս «Սովետական գրականություն» ամսագրի 1962 թ. N 4-ում մեր հոդվածը «Վ. Ի. Լենինը և հայ կուլտուրայի գործիչները»:

ձավ արյունաբորբ արևածագի, ռևոլյուցիոն փոթորիկների երգիչ, դարձավ լենինյան գաղափարների պրոպագանդիստ, իր նուրբ ճաշակը և լեզվական-գրական խոշոր տաղանդը ի սպաս դնելով Լենինի երկերը հայերեն թարգմանելու ու տարածելու գործին։ Վ. Ի. Լենինի կերպարը մարտի մղեց և ստեղծագործական խիզախումների ոգեշնչեց դրող-մարտիկ և կոմիսար Ալեքսանդր Վերմիշևին։ Սպիտակգվարդիականների դեմ մղված մարտերին մասնակցելով, Վերմիշևը միաժամանակ դրամատիկական մի շարք գործեր է գրում, դրանք ուղարկում Վ. Ի. Լենինին ծանոթանալու և գնահատելու, պրոլետարական նոր թատրոնի կառուցմանն օժանդակելու համար։ Առանձնապես կարևոր է Վերմիշևի «Կարմիր ճրշմարտություն» դրաման, որը կարդացել է Վ. Ի. Լենինը և հանձնարարել բեմադրել «բուն ժողովրդական մասսաների մեջ»։

Վ. Ի. Լենինը կարդում և դրական կարծիք է հայտնում Մարիետա Շաղինյանի մի շարք ակնարկների մասին, որոնք պատկերում էին Հայաստանի ու Անդրկովկասի կյանքը 1917—1918 թվականներին և «Պերեմենա» վեպի մասին։ Այնուհետև Շահինյանը դրեց «Ուլյանովների ընտանիքը» պատմա-գեղարվեստական աշխատությունը, որում իր տաղանդի ամբողջ ուժով պատկերում է Վ. Ի. Լենինի ծնողների և Ուլյանովների ամբողջ ընտանիքի պատմությունը։

Պատմագրության տեսակետից հետաքրքիր է 1921 թվականին Ալեքսանդրապոլ քաղաքում, թուրքական օկուպացիոն ռեժիմի պայմաններում անլեգալ տպված «Լենին» պոեմը, որի հեղինակը ընդհատակյա կոմունիստ Արշալույս Արշարունին էր։ Հետագայում Արշարունին աշխատում էր Կրեմլում, բազմիցս տեսնում և ունկընդրում Լենինին։ Նա որոշում է ոչ ոքի ցույց չտալ իր պոեմը. «Ոչ, Լենինի մասին պետք է գրվի իսկական պոեմ» որոշում է երիտասարդ կոմունիստը։

Վ. Ի. Լենինի մասին առաջին իսկական պոեմը գրեց Եղիշե Չարենցը։ 1921 թվականն է։ Չարենցը Մոսկվայումն էր, ուր դումարվել էր ՌՍՖՍՌ Սովետների համագումարը։ Ստանալով հրավիրատոմս, Չարենցը գնում է մեծ թատրոն համագումարի նիստին։ Համագումարում ճառով հանդես է գալիս Վ. Ի. Լենինը։ Ինչպիսի երջանկություն։

Ե. Չարենցի վառ երևակայությունը Լենինի մասին մարմնանում է նրան տեսնելով և լսելով։ Չարենցի պատկերացումներն Իլյիչի մասին ավելի ուժեղ, հստակ և արտահայտիչ են դառնում,

Խանդավառ պոեմը Հայաստան է վերադառնում ամբողջովին տոգորված Վ. Ի. Լենինի կերպարով։ Մեկը-մյուսի ետևից Չարենցը հյուսում է իր երկերը՝ «Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին», «Լենին քեռին», «Լենինն ու Ային», «Ես և Իլյիչը», «Կոմունարների պատը Փարիզում», «Մաճկալ Սաքոյի պատմությունը» և այլ գործեր, որոնց մեջ գեղարվեստական բարձր կատարելությամբ ու քաղաքական նպատակասլացությամբ, պոետական վիթխարի տաղանդի ամբողջ ուժով և խորությամբ կերտում է Լենինի կերպարը։

Վ. Ի. Լենինի կյանքն ու գործունեությունը, նրա կերպարը դարձավ սովետահայ գրողների և արվեստագետների ստեղծագործական մտահղացումների նվիրական թեման։ Լենինի կերպարով տոգորվեցին ոչ միայն երիտասարդ, նոր աճող ստեղծագործողները, այլև հայ դասական կուլտուրայի շատ գործիչներ, ավագ սերնդի տաղանդավոր գրողներ, արվեստագետներ, գիտնականներ։

Սովետական Հայաստանի գրողներն ստեղծեցին տաղանդավոր երկեր, որոնց մեջ պատկերված է մեծ Լենինի նկարագիրը։ Գիտնականներն ստեղծեցին աշխատություններ, որոնք ցույց են տալիս Լենինի գործունեությունը, նրա դերը։ Սովետահայ կերպարվեստագետներն ստեղծեցին Լենինին պատկերող կտավներ։

Վ. Ի. Լենինի կերպարը հայ ժողովրդի սրտում հիանալի պատկերվեց ժողովրդական ստեղծագործության մեջ։ «Լենին փաշա» հայկական ժողովրդավեպը Առաջնորդի մասին գեղարվեստական լավագույն ստեղծագործություններից մեկն է, որի մեջ ժողովուրդը գունեղ պատկերներով և անսահման երախտագիտությամբ մեծարում է հարազատ Իլյիչին։

Երևան քաղաքը Սովետական Հայաստանի սիրտն է։

Լենինի հրապարակը ռեսպուբլիկայի մայրաքաղաքի սիրտն է։

Հրապարակի կենտրոնում, ինչպես հայ ժողովրդի սրտում, վեհորեն խոյացել է Լենինի կերպարը։

5. ԼԵՆԻՆԻ ԴՐՈՇՈՎ ԴԵՊԻ ԿՈՄՈՒՆԻԶՄ

Վ. Ի. Լենինի պատգամները հանդիսացան Հայկական ՍՍՌ և Սովետական մյուս ռեսպուբլիկաների ժողովուրդների աշխատանքի ու պայքարի ուղեցույցը։ Ավելի քան 40 տարի է անցել, որ Հայկական ՍՍՌ աշխատավորությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ լենինյան դրոշի հովանու ներքո առաջ է ընթա-

նում սոցիալիստական վերափոխումների ուղիով և կառուցում է իր նոր կյանքը։

Սովետական Միությունում և նրա անբաժան մասը կազմող Սովետական Հայաստանում այդ ժամանակամիջոցում կատարված սոցիալ-քաղաքական ռևոլյուցիոն վերափոխությունները միաժամանակ նշանավորեցին արմատական շրջադարձ հայ ժողովրդի պատմական բախտի մեջ։

Ինչպես հայտնի է, Հայկական Սովետական Ռեսպուբլիկան դաշնակների բուրժուական հանրապետությունից ժառանգություն ստացավ ոչ թե ամբողջ Հայաստանի տերիտորիան, որի անկախության և լիակատար ազատագրման սկզբունքները հռչակել էր Վ. Ի. Լենինը[1], այլ միայն նախկին Երևանի նահանգի մի մասը։ Ալեքսանդրապոլը թուրքերից ազատագրվելուց, Լոռվա չեղոք գոտին մենշևիկներից և Զանգեզուրը Նժդեհի հրոսակախմբերից ազատագրվելուց և Սովետական Հայաստանին միացնելուց հետո միայն Հայկական ՍՍՌ-ի տերիտորիան կազմեց 30.000 քառ. կիլոմետր։

Վիճակագրական հաշվարկումների համաձայն Հայաստանի հանրապետությունից 1920 թվականի պատերազմների հետևանքով արտագաղթ է եղել մոտ 100 հազար բնակչություն, առանց դրան, Հայկական հանրապետության բնակչությունը 1918 թվականին կազմել է 1.206.730 մարդ. սակայն դաշնակցության տիրապետության տարիներին սովամահ է եղել և կռիվների հետևանքով կոտորվել 432.529 շունչ։ Հայկական ՍՍՌ կազմակերպման շրջանում բուրժուական հանրապետությունից մնացած բնակչությունը կազմում էր 774.201 մարդ[2]։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից առաջ թուրքական բարբարոսների հետապնդումներից փախած ավելի քան մեկուկես միլիոն հայեր բնակություն հաստատեցին արտասահմանյան երկրներում։ Բախտը չժպտաց տարագիր հայերին։ Նրանց բաժին ընկավ օտարականի կյանքի դառնությունը, ազգային և սոցիալական ճնշման ծանր լուծը։ Այսօր էլ միլիոնավոր սփյուռքահայ աշխատավորներ տառապում են շահագործման լծի տակ, օտարության մեջ։

Այլ բախտ վիճակվեց հաղթանակած սովետական կարգերում

---

1 Տե՛ս «Рабочий путь» թերթի, 1917 թ. հոկտեմբերի 9-ի և 10-ի համարներում տպված հոդվածը (Երկեր, հատ. 26, էջ 58—59)։

2 Պ. Արեյյան, Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջանում, Երևան, 1931, էջ 74—75, 77։

ապրող հայերին։ Նրանց ջերմացրեց Լենինյան ազգային քաղաքականությունը։ Սովետական իշխանությունը կանխեց հայ բնակչության հետագա կորուստները և դաղթը, վերջ դրեց կոտորածներին և այլասերմանը։ Սովետական Հայաստանը դարձավ վերածնվող հայության բնօրրանը, որտեղ, մի կողմից բնական աճման և մյուս կողմից ազգահավաքման ճանապարհով, աճեց հայ ժողովուրդը։ 1962 թվականին Սովետական Հայաստանի բնակչությունը արդեն կազմում էր երկու միլիոն, իսկ սովետական մյուս ռեսպուբլիկաներում ապրող հայերի հետ միասին մոտ 3 միլիոն[1]։

Հիմնովին հեղաշրջվեց ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքը։ Սովետական Հայաստանում պետական իշխանությունը պատկանում է աշխատավորներին։ Սովետական պետությունը երկրի արտադրության միջոցները, հողը, ընդերքի հարստությունները, գործարաններն ու ֆաբրիկաները դարձրեց համաժողովրդական ունեցվածք։ Բանվորները, գյուղացիները և ինտելիգենցիան Լենինյան պարտիայի ղեկավարությամբ լծվեցին տնտեսական շինարարության գործին և ամբողջովին վերափոխեցին երկրի դեմքը, փոխեցին ժողովրդի կյանքը։

Հայկական ՍՍՌ-ում մինչև 1960 թվականը կառուցվեց և շահագործման հանձնվեց 500 գործարան, ֆաբրիկա և խոշոր արդյունաբերական ձեռնարկություն[2]։ Կապիտալ ներդրումները պետական և կոոպերատիվ ձեռնարկություններում կազմեցին 15 միլիարդ 540 միլիոն ռուբլի[3]։ Կատարելով Վ. Ի. Լենինի պատգամը երկրի համատարած էլեկտրիֆիկացիայի մասին, Հայաստանում սովետական կարգերի 40 տարիներում կառուցվել է 30 ջրաէլեկտրակայան և արտադրվում է տարեկան 2,7 միլիարդ կիլովատժամ էլեկտրաէներգիա, որը մեկ և կես անգամ ավելի է, քան ցարական անծայրածիր Ռուսաստանում արտադրվում էր 1913 թվականին։ Սովետական Հայաստանի յուրաքանչյուր բնակչին ներկայումս ավելի շատ էլեկտրաէներգիա է հասնում, քան Ճապոնիայում և Իտալիայում, իսկ Թուրքիայի համեմատությամբ այն գերազանցում է 15 անգամ, շահական Իրանի համեմատությամբ՝ 41 անգամ[4]։

---

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան» թերթը, 4 փետրվարի 1960 թ.։

[2] Տե՛ս «Սովետական Հայաստանի 40 տարին» ժողովածուն, Երևան, 1961, էջ 69։

[3] «Սովետական Հայաստանի 40 տարին» ժողովածուն, Երևան, 1961, էջ 67։

[4] Տե՛ս «Советская власть за 40 лет», Статистический сборник, Ереван, 1960, стр. 30.

Սովետական Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատում են հարյուր հազարավոր բանվորներ, ինժեներներ, տեխնիկ և ծառայող, որոնք 1960 թվականին երկրին տվին 70 անգամ ավելի արտադրանք, քան Հայաստանում արտադրվում էր ռևոլյուցիայից առաջ ամենաբարձր մակարդակի տարում, 1913 թվականին։ Հայաստանը, որ անցյալում բնակչության կարիքները հիմնականում բավարարում էր նահապետական տնտեսության տնայնագործական արտադրությամբ կամ ներմուծում արդյունաբերական տեսակետից զարգացած երկրներից, 1960 թվականին Եվրոպայի, Աֆրիկայի և Ասիայի 37 երկրներ արտահանել է մեքենաներ և սարքավորումներ։ Սովետական Հայաստանը դարձել է առաջնակարգ ինդուստրիայի երկիր։

Հայ ժողովրդի պատմական բախտի մեջ տեղի ունեցած շրջադարձը ակնառու կերպով արտահայտվում է գյուղում կատարված փոփոխությունների մեջ։ Մասնավոր հողատիրության վերացումը, կալվածատերերի և կուլակների լիկվիդացիան, անհատական-աղքատիկ տնտեսաձևից հանրային արտադրության անցումը, որտեղ լայնորեն գործադրվում է մեքենայական աշխատանքը, հայկական գյուղը դուրս բերեցին արխաիկ, պրիմիտիվ վիճակից, խավարից և աղքատությունից։ Հետևելով Վ. Ի. Լենինի իմաստուն պատգամին, որ ռոռգումը կվերստեղծի երկիրը, կվերածնի այն, կթաղի անցյալը, Սովետական Հայաստանի ժողովուրդը 40 տարվա ընթացքում կառուցեց տասնյակ ջրանցքներ, ոռոգելի հողերի տարածությունը հասցրեց ավելի քան 240 հազար հեկտարի, որը չորս անգամ գերազանցեց 1919 թվականին եղածից։

Հայաստանի գյուղատնտեսության մեջ 1960 թվականին գործում էր մոտ 4000 հատ տրակտոր և ավելի քան 1200 կոմբայն. ինչպես նաև հազարավոր ավտոներ և ուրիշ մեքենաներ։ Ռեսպուբլիկայի բոլոր կոլտնտեսություններն ու սովխոզներն էլեկտրաֆիկացիա են ստանում և այն լայնորեն գործադրում արտադրական աշխատանքներում և կենցաղում։ Գյուղերում վերացվեց ճանապարհազրկությունը։ Գյուղի բնակչության հիմնական մասսան դուրս եկավ հին, հողային խավար, հաճախ գետնափոր տնակներից ու խրճիթներից և ապրում է նորակառույց, լուսավոր բնակարաններում։ Հայ գյուղացու կենցաղը հեղաշրջվել է, նահապետական հետամնացությունը թողնվել է պատմության ծալքերում։

Հայ ժողովրդի պատմական բախտի մեջ կատարված հեղաշրջման մյուս ցուցանիշը կուլտուրական ռևոլյուցիան է, որը թա-

փանցել է Հայկական ՍՍՌ կյանքի բոլոր բնագավառները։ 1960 թ. Հայաստանում գործում էր 1219 մասնագիտական դպրոց, որտեղ սովորում էր 320 հազար երեխա, ինչպես նաև 11 բարձրագույն դպրոց և 38 տեխնիկում։ Բարձրագույն դպրոցներում և տեխնիկումներում սովորում են 35.000 երիտասարդներ։ Հայաստանի գիտությունների ակադեմիայի և մյուս գիտահետազոտական հիմնարկների ցանցում հաշվվում է 4326 գիտական աշխատողներ[1]։ Սովետական Հայաստանում նոր կյանքի կոչված հին ինտելիգենցիայի կադրերի կողքին աճեցին բազմահազար նորերը, ավելի քան 22.000 ուսուցիչներ, 4500 բժիշկներ, բազմահազար ճարտարապետներ, գյուղատնտեսական մասնագետներ, գրողներ, արվեստի բազմազան ճյուղերի աշխատողներ։

Սովետահայ ինտելիգենցիան դարձել է մի ստվար բանակ, որը տոգորված է լենինիզմի գաղափարներով և անդուլ կերպով աշխատում է լենինյան պատգամները կյանքում մարմնավորելու համար։ Ինտելիգենցիայի հետ միասին բուռն կուլտուրական կյանքով են ապրում բանվորներն ու գյուղացիները։ Փոխվել է նրանց հոգևոր նկարագիրը, նրանց ապրելակերպը, կենցաղը, արտաքին տեսքը։ Սովետական Հայաստանում սոցիալիզմի պարարտ հողի վրա աճել է մի սերունդ, որը ընթանում է քաղաքակրթության առաջամարտիկների շարքերում։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հայ ժողովուրդը թիկունքում և ռազմաճակատում անձնազոհ կերպով մասնակցեց այն մեծ պայքարին, որ սովետական ժողովուրդները մղում էին հանուն մարդկության փրկության՝ ֆաշիստական բարբարոսներից։ Ավելի քան 400 հազար հայ զինվոր էր կռվում ռազմաճակատում, 60 հայ զորավարներ՝ մարշալներ, ծովակալներ և գեներալներ, Սովետական Բանակի շարքում մարտի էին տանում դիվիզիաներ և բանակներ, ռազմանավեր և ավիոէսկադրիլիաներ։ 66.802 հայ զինվոր պարգևատրվեց շքանշանով, իսկ 106 հոգի արժանացավ Սովետական Միության հերոսի կոչման՝ մարտերում ցուցաբերած արիության և հերոսության համար։ Հայ ռազմիկները, Սովետական Բանակի մարտակարգերում կտրեցին և անցան Եվրոպայի և Ասիայի 10 պետությունների սահմանները և մայրաքաղաքները։ Եթե անցյալում, հայ ժողովրդի ներկայացուցիչները գնում էին

---

[1] Տե՛ս «Սովետական Հայաստանի 40 տարին» ժողովածուն, էջ 50։

Բեռլին, Վիեննա և այլ քաղաքներ օգնության աղերսանքներով, դա էր վիճակվել հայ ժողովրդին, ապա Հայկական ՍՍՌ-ի զավակները, 1945 թվականին Սովետական Բանակի շարքերում, գնացին այդ երկրները որպես ազատարարներ:

Լենինյան պատգամների իրականացումը կյանքում և հայ ժողովրդի պատմական բախտի մեջ կատարված շրջադարձը այդպես փոխեց հայի վիճակը հասարակության մեջ, քաղաքակիրթ ազգերի շարքում:

* * *

Սովետական Միության բոլոր ժողովուրդների, նրանց թվում և հայ ժողովրդի զարգացման ու ծաղկման համար նոր հեռանկարներ են ուրվագծված ՍՄԿՊ նոր Ծրագրում, ընդունված լենինյան պարտիայի XXII համագումարում:

Սովետական Միությունը թևակոխել է կոմունիզմի ծավալուն կառուցման շրջանը: Կոմունիզմը ոչ թե հեռանկարային, այլ վաղվա օրվա խնդիր է, որի համար համաժողովրդական պայքար են ծավալել սոցիալիստական ազգերը: Հայկական ՍՍՌ-ի ժողովուրդն իր արժանի ավանդն է դնում կոմունիզմի կառուցման գործում:

ՍՄԿՊ XXII համագումարի որոշումները և պարտիայի նոր Ծրագիրը նոր հարված հասցրին ժամանակակից կապիտալիզմի դաղափարախոսներին, որոնք զրպարտիչ հերյուրանքներ են տարածում սովետական երկրում «ազգերը միաձուլելու» մասին: ՍՄԿՊ Ծրագիրը նշեց ՍՍՌ-ում ազգային հարաբերությունների զարգացման նոր էտապ, որը նշանավորվում է ազգերի հետագա մերձեցմամբ և համերաշխությամբ, ինտերնացիոնալ համախմբվածությամբ և լիակատար իրավահավասարությամբ: ՍՄԿՊ Կենտկոմը համագումարին ներկայացրած հաշվետու զեկուցման մեջ նշեց.

«Պարտիան առաջիկայում ևս կապահովի ՍՍՌՄ ժողովուրդների լեզուների ազատ զարգացումը, թույլ չտալով ոչ մի սահմանափակություն, արտոնություն կամ հարկադրանք այս կամ այն լեզվի գործածության հարցում: ՍՍՌՄ յուրաքանչյուր քաղաքացի օգտվում է և կօգտվի իր երեխաներին ցանկացած լեզվով սովորեցնելու ազատությունից: Մեկ մտա ոչ մի արգելակ չկա ազգային լեզուների զարգացման համար: Բայց դրանց զարգացումը

պետք է տանի ոչ թե դեպի ազգային միջնորմների ուժեղացում, այլ ազգերի և նրանց լեզուների մերձեցում»[1]։

Այնուհետև Կենտկոմն ընդգծեց, որ «սոցիալիստական ազգերի զարգացումը իր արտահայտությունն է գտնում նաև ՍՍՌՄ ժողովուրդների ազգային պետականության կատարելագործման մեջ»։ «Կոմունիզմի ծավալուն կառուցման ընթացքում ձեռք կբերվի ազգերի լիակատար միասնությունը։ Բայց այն բանից հետո էլ, երբ կոմունիզմը հիմնականում կառուցված կլինի, դեռ վաղաժամ կլինի ազգարարել ազգերի միաձուլումը։ Լենինը, ինչպես հայտնի է, մատնանշում էր, որ պետական ու ազգային հարաբերությունները դեռ երկար գոյություն կունենան սոցիալիզմի հաղթանակից հետո բոլոր երկրներում»[2]։

Ուղեցույց ունենալով ՍՄԿՊ XXII համագումարի պատմական որոշումները, ՍՄԿՊ Ծրագիրը որպես կոմունիզմի կառուցման ծրագիր, հայ ժողովուրդը, սովետական եղբայրական ժողովուրդների հետ ձեռք ձեռքի տված անշեղորեն առաջ է ընթանում Լենինի պատգամների կենսագործման ուղիով, առաջ է ընթանում դեպի կոմունիստական ապագան։

---

1 «Պրավդա», 19 հոկտեմբերի 1961 թ.։

2 Նույն տեղում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Նախաբան 5

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐՆ ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (1890—1916)

Գլուխ 1.— Վ. Ի. Լենինը ցարական Ռուսաստանում ճնշված ազգերի ազատագրման ուղիների մասին . . . . . .

1. Ցարական Ռուսաստանը «ժողովուրդների բանտ», սուլթանական Թուրքիան «բանտի մեջ բանտ» 15
2. Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակը ցարական և սուլթանական բռնապետությունների լծի տակ . . 17
3. Հայ ժողովրդի ազատագրման հարցի լենինյան դիրքորոշումը 31

Գլուխ 2.— Հայ ժողովրդի ռևոլյուցիոն ազատագրական պայքարը միապետական կարգերի դեմ 48

1. Հայ ականավոր մարքսիստները համառուսական ռևոլյուցիոն շարժման զենկավարների շարքում . . . 49
2. Հայաստանի լենինյան ս. դ. կազմակերպությունները ցարիզմի դեմ աշխատավորների ազատագրական պայքարի կազմակերպիչներ 83
3. Ռուսական առաջին ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրական պայքարի վերելքը 112
4. Աշխատավորների դասակարգային պայքարում կոփված հայ ռևոլյուցիոն մարտիկների նոր սխրագործություններն Անդրկովկասում և Ռուսաստանում 142
5. Հայ ռևոլյուցիոն գործիչներն արտասահմանում, տարագրության մեջ 155

Գլուխ 3.— Հայկական բուրժուական պարտիաների և մանրբուրժուական կազմակերպությունների գործունեության քննադատությունը . 180

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒՍԻՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1917—1920)

Գլուխ 4.— Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ իմպերիալիստական պետությունների քշնամական քաղաքականության մերկացումը 209

Գլուխ 5.— Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը և Հայաստանի ազատագրման լենինյան քաղաքականությունը 233

Գլուխ 6.— Հայ աշխատավորության մասնակցությունը Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար մղված մարտերին 1917—1918 թթ. 248

Գլուխ 7.— Հոկտեմբերյան ռևոլյուցիայի բարիկադների վրա և քաղաքացիական կռիվների դիրքերում 300

1. Պետրոգրադում և Մոսկվայում 300

2. Բելոռուսիայում և Ուկրաինայում 326

3. Վ. Ի. Լենինի հոդվածությունը գաղթած հայ աշխատավորների նկատմամբ և նրանց ներգրավումը ռևոլյուցիոն պայքարի մեջ Ռուսաստանի մարզերում . . . 331

4. Հայ ականավոր ռևոլյուցիոն գործիչները և զորահրամանատարները քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում 342

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՍՏԵՂԾՄԱՆ, ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ (1920—1924)

Գլուխ 8.— Ռևոլյուցիայի հաղթանակը Հայաստանում և արմատական շրջադարձը հայ ժողովրդի պատմական բախտի մեջ

1. Հայկական ՍՍՌ-ի ստեղծումը և հայ ժողովրդի ազգային վերածննդի սկիզբը 359

2. Առաջին օգնությունը նորաստեղծ Հայկական Սովետական Ռեսպուբլիկային 372

3. Հայկական ՍՍՌ-ի պաշտպանությունը և օտարերկրյա զավթիչների ու նրանց գործակալների վտարումը Ռեսպուբլիկայի սահմաններից 375

4. Հոդվածությունը Սովետական Հայաստանի պարտիական և սովետական օրգանների ամրապնդման մասին . . 381

5. Հայկական ՍՍՌ-ի և Անդրկովկասի մյուս ռեսպուբլիկաների սոցիալիստական զարգացման լենինյան ծրագիրը, նրանց եղբայրական համագործակցությունը Սովետական Միության ժողովուրդների հետ 384

Գլուխ 9.— Վ. Ի. Լենինի պատգամների իրականացումը և հայ ժողովրդի առաջընթացը դեպի կոմունիստական ապագան . . .

1. Վ. Ի. Լենինի հոդվածարությունը հայ ժողովրդի վերամիավորման և բարօրության նկատմամբ 396
2. Վ. Ի. Լենինի մահը. համաժողովրդական վիշտ . . 399
3. Հայ ժողովրդի երդումը 406
4. Առաջնորդի կերպարը հայ ժողովրդի սրտում . . 409
5. Լենինի դրոշով դեպի կոմունիզմ 411

ԱՐԱՄԱՅԻՍ ՆԱՎԱՍԱՐԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
АРАМАИС НАВАСАРДОВИЧ МНАЦАКАНЯН

Վ. Ի. Լենինը և նայ ժողովրդի ազատագրական պայքարը

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի նանձնարարությամբ

Հրատ. խմբագիր՝ Ա. Հ. Շաղզամյան
Նկարիչ. ձևավորումը՝ Հ. Կ. Մնացականյանի
Տեխն. խմբագիր՝ Մ. Ն. Կափլանյան
Սրբագրիչ՝ Ս. Կ. Զաքարյան

ՎՏ 05257 ԽՀԽ 770 Պատվեր 1373 Հրատ. 2159 Տիրաժ 2500

Հանձնված է արտադրության 25/VII 1963 թ.
Ստորագրված է տպագրության 17/IX 1963 թ.
Թուղթ՝ 60×92 1/16, Տպագրական 26,37 մամ.=հրատ. 21,85 մամ.։
Գինը կազմով՝ 1 ռ. 50 կ.։

Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220028610

S. II
28610